



ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
(ՄԱՆԻՎԱԼ)

ՄԱՆԻՎԱԼ(2009)25

ՓՈԽԱԴԱՐՁ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

22 սեպտեմբերի, 2009թ.

Հայաստանը ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ է: Սույն գնահատումն իրականացվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից, և հաշվետվությունը ՄԱՆԻՎԱԼ-ը հաստատել է որպես երրորդ փուլի փոխադարձ գնահատում՝ 30-րդ լիագումար նիստում (Ստրասբուրգ, 21-24 Սեպտեմբեր, 2009):

© [2009] Հանցավորության Հիմնախնդիրների Եվրոպական Կոմիտե (ՀՀԵԿ) / Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների հանձնախումբ (ՄԱՆԻՎԱԼ) և ԱՄՀ:
Բոլոր իրավունքները պաշտպանված են: Վերարտադրությունը թույլատրվում է պայմանով, որ նշվի աղբյուրը, եթե այլ բան նախատեսված չէ: Այս հրապարակման որևէ մաս չի կարող առևտրային նպատակներով թարգմանվել, վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ որևէ եղանակով՝ էլեկտրոնային (CD-սկավառակ, Ինտերնետ կամ այլ) կամ մեխանիկական, ներառյալ պատճենահանումը, ձայնագրումը կամ տեղեկատվության պահպանման կամ վերականգնման համակարգը առանց Եվրոպայի Խորհրդի, Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության, ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության (F-67075 Strasbourg or dghl.moneyval@coe.int) նախօրոք գրավոր թույլտվության:

Հապավումներ 7
Նախաբան 8
Համառոտ ակնարկ 9
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
1.1. Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի մասին 16
1.2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ընդհանուր իրավիճակը 17
1.3. Ֆինանսական ոլորտի ընդհանուր վերլուծություն 21
1.4. ՆՈՖԳՏՄ ոլորտի ընդհանուր վերլուծություն 24
1.5. Իրավաբանական անձանց և կազմավորումների նկատմամբ տարածվող առևտրային օրենքների և մեխանիզմների ընդհանուր վերլուծություն 32
1.6. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ռազմավարության ընդհանուր վերլուծություն 35
2. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 46
2.1. Փողերի լվացման քրեականացումը (Հ.1 և 2) 46
2.1.1. Նկարագրություն և վերլուծություն 46
2.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 57
2.1.3. Համապատասխանությունը թիվ 1 և 2 հանձնարարականներին ... 57
2.2. Ահաբեկչության ֆինանսավորման քրեականացումը (ՀՀ.II) 57
2.2.1. Նկարագրություն և վերլուծություն 57
2.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 63
2.2.3. Համապատասխանությունը II Հատուկ հանձնարարականին 63
2.3. Հանցավոր ճանապարհով ստացված եկամտի բռնագրավումը, սառեցումը և առգրավումը (Հ.3) 64
2.3.1. Նկարագրություն և վերլուծություն 64
2.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 72
2.3.3. Համապատասխանությունը թիվ 3 հանձնարարականին 73
2.4. Ահաբեկչության ֆինանսավորման նպատակով օգտագործվող միջոցների սառեցումը (ՀՀ.III) 73
2.4.1. Նկարագրություն և վերլուծություն 73
2.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 79
2.4.3. Համապատասխանությունը III հատուկ հանձնարարականին 80
2.5. Ֆինանսական հետախուզության մարմինը, դրա գործառույթները (Հ.26) .. 81
2.5.1. Նկարագրություն և վերլուծություն 81
2.5.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 101
2.5.3. Համապատասխանությունը թիվ 26 հանձնարարականին 101
2.6. Իրավապահ, քրեական հետապնդման և այլ իրավասու մարմինները. հանցագործությունների քննության և քրեական հետապնդման, ինչպես նաև բռնագրավման և սառեցման հարաբերությունները կարգավորող դաշտը (Հ.27 և 28) 102
2.6.1. Նկարագրություն և վերլուծություն 102
2.6.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 116
2.6.3. Համապատասխանությունը թիվ 27 և 28 հանձնարարականներին 117
2.7. Անդրսահմանային հայտարարագրումը կամ բացահայտումը (ՀՀ.IX) 117
2.7.1. Նկարագրություն և վերլուծություն 117
2.7.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 125
2.7.3. Համապատասխանությունը IX հատուկ հանձնարարականին 126
3. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 126
3.1. Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը 126

3.2. Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը, ներառյալ հավելյալ կամ նվազեցված միջոցառումները (Հ.5-ից մինչև 8) 127
3.2.1. Նկարագրություն և վերլուծություն 127
3.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 150
3.2.3. Համապատասխանությունը թիվ 5-ից մինչև թիվ 8 հանձնարարականներին 151
3.3. Երրորդ անձինք և ներկայացված բիզնեսը (Հ.9) 151
3.3.1. Նկարագրություն և վերլուծություն 151
3.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 153
3.3.3. Համապատասխանությունը թիվ 9 հանձնարարականին 154
3.4. Ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիությունը (Հ.4) 154
3.4.1. Նկարագրություն և վերլուծություն 154
3.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ. 161
3.4.3. Համապատասխանությունը թիվ 4 հանձնարարականին 162
3.5. Տեղեկատվության պահպանումը և դրամական փոխանցումների վերաբերյալ կանոնները (Հ.10 և ՀՀ.VII) 162
3.5.1. Նկարագրություն և վերլուծություն 162
3.5.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 167
3.5.3. Համապատասխանությունը թիվ 10 հանձնարարականին և VII հատուկ հանձնարարականին 167
3.6. Գործարքների և հարաբերությունների մոնիտորինգը (Հ.11 և 21) 168
3.6.1. Նկարագրություն և վերլուծություն 168
3.6.2. Առաջարկություններ. 172
3.6.3. Համապատասխանությունը թիվ 11 և 21 հանձնարարականներին 172
3.7. Կասկածելի գործարքների մասին և այլ հաշվետվությունները (Հ.13-14, 19, 25 և ՀՀ.IV) 173
3.7.1. Նկարագրություն և վերլուծություն 173
3.7.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 182
3.7.3. Համապատասխանությունը թիվ 13, 14, 19 և 25 հանձնարարականներին (չափորոշիչ 25.2), ինչպես նաև IV հատուկ հանձնարարականին 182
3.8. Ներքին հսկողության մեխանիզմները, համապատասխանությունը, աուդիտը և օտարերկրյա մասնաճյուղերը (Հ.15 և 22) 182
3.8.1. Նկարագրություն և վերլուծություն 182
3.8.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 189
3.8.3. Համապատասխանությունը թիվ 15 և 22 հանձնարարականներին 190
3.9. Կեղծ բանկերը (Հ.18) 190
3.9.1. Նկարագրություն և վերլուծություն 190
3.9.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 191
3.9.3. Համապատասխանությունը թիվ 18 հանձնարարականին 191
3.10. Վերահսկողության և հսկողության համակարգը. իրավասու մարմինները և ԻԿԿ-ները: Դերը, գործառույթները, պարտականությունները և իրավասությունները (ներառյալ՝ պատժամիջոցները) (Հ. 23, 29, 17 և 25) 191
3.10.1. Նկարագրություն և վերլուծություն 191
3.10.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 219
3.10.3. Համապատասխանությունը թիվ 17, 23, 25 և 29 հանձնարարականներին 220
3.11. Փողի կամ արժեքների փոխանցման ծառայությունները (ՀՀ.VI) 220
3.11.1. Նկարագրություն և վերլուծություն (համառոտագիր) 220
3.11.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 224
3.11.3. Համապատասխանությունը VI հատուկ հանձնարարականին ... 224

4. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 224
4.1. Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը և տեղեկատվության պահպանումը (Հ.12) 224
4.1.1. Նկարագրություն և վերլուծություն 224
4.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 234
4.1.3. Համապատասխանությունը թիվ 12 հանձնարարականին 236
4.2. Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունները (Հ.16) 237
4.2.1. Նկարագրություն և վերլուծություն 237
4.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 245
4.2.3. Համապատասխանությունը թիվ 16 հանձնարարականին 247
4.3. Կարգավորումը, վերահսկողությունը և մոնիտորինգը (Հ.24-25) 247
4.3.1. Նկարագրություն և վերլուծություն 247
4.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 253
4.3.3. Համապատասխանությունը թիվ 24 և 25 հանձնարարականներին (չափորոշիչ 25.1, ՆՈՖԳՏՄ-ներ) 254
4.4. Ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակներ և մասնագիտություններ. գործարքների իրականացման ժամանակակից և ապահով մեթոդները (Հ.20) 255
4.4.1. Նկարագրություն և վերլուծություն 255
4.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 257
4.4.3. Համապատասխանությունը թիվ 20 հանձնարարականին 257
5. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 258
5.1. Իրավաբանական անձինք. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիությունը (Հ.33) 258
5.1.1. Նկարագրություն և վերլուծություն 258
5.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 262
5.1.3. Համապատասխանությունը թիվ 33 հանձնարարականին 262
5.2. Իրավաբանական կազմավորումները. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիությունը (Հ.34) 263
5.2.1. Նկարագրություն և վերլուծություն 263
5.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 263
5.2.3. Համապատասխանությունը թիվ 34 հանձնարարականին 263
5.3. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները (ՀՀ.VIII) 263
5.3.1. Նկարագրություն և վերլուծություն 263
5.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 271
5.3.3. Համապատասխանությունը VIII հատուկ հանձնարարականին 272
6. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 273
6.1. Ներպետական համագործակցությունը և համակարգումը (Հ.31) 273
6.1.1. Նկարագրություն և վերլուծություն 273
6.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 276
6.1.3. Համապատասխանությունը թիվ 31 հանձնարարականին 276
6.2. Կոնվենցիաները և ՄԱԿ-ի հատուկ բանաձևերը (Հ.35 և ՀՀ.I) 276
6.2.1. Նկարագրություն և վերլուծություն 276
6.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 279
6.2.3. Համապատասխանությունը թիվ 35 հանձնարարականին և I հատուկ հանձնարարականին 280
6.3. Փոխադարձ իրավական օգնությունը (Հ.36-38, ՀՀ.V) 281
6.3.1. Նկարագրություն և վերլուծություն 281
6.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 289

6.3.3. Համապատասխանությունը թիվ 36 - 38 հանձնարարականներին և V հատուկ հանձնարարականին 290
6.4. Անձի հանձնումը (Հ.37, 39, ՀՀ.V) 292
6.4.1. Նկարագրություն և վերլուծություն 292
6.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 295
6.4.3. Համապատասխանությունը թիվ 37 և 39 հանձնարարականներին, ինչպես նաև V հատուկ հանձնարարականին . 295
6.5. Միջազգային համագործակցության այլ ձևերը (Հ.40 և ՀՀ.V) 296
6.5.1. Նկարագրություն և վերլուծություն 296
6.5.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 302
6.5.3. Համապատասխանությունը թիվ 40 հանձնարարականին և V հատուկ հանձնարարականին 302
7. ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 302
7.1. Ռեսուրսներ և վիճակագրություն 302
7.1.1. Նկարագրություն և վերլուծություն 302
7.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ 305
7.1.3. Համապատասխանություն թիվ 30 և 32 հանձնարարականներին 305

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՎՄԸ	Ապահովագրություն վերահսկողների միջազգային ընկերակցություն
ԱՖ	Ահաբեկչության ֆինանսավորում
ԲԲԳՕ	«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք
ԲԳՕ	«Բանկային գաղտնիքի մասին» օրենք
ԲՀՍ	Բազելյան հիմնարար սկզբունքներ
ԴՖՎ	ԱՄՀ-ի դրամավարկային և ֆինանսական համակարգերի վարչություն
ԸԾՄ	Ընկերություններին ծառայություններ մատուցող
ԻԿԿ	Ինքնակարգավորվող կազմակերպություն
ԻՊՄ	Իրավապահ մարմիններ
ԻՎ	ԱՄՀ-ի իրավաբանական վարչություն
ԿԳՀ	Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՊՈՒ	Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն
ՃՔՀ	Ճանաչիր քո հաճախորդին
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԱԽԲ	Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձև
ՆՇԳՀ	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություն
ՆՈՖԳՏՄ	Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ
ՇՆՉԿ	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն
ՈԿԿ	Ոչ կառավարական կազմակերպություն
ՌՈՍԿ	Ստանդարտների և կանոնների պահպանության մասին զեկույց
ՎՀԿ	Վճարահաշվարկային կազմակերպություններ
ՎՀՀ	Վճարահաշվարկային համակարգեր
ՓԻՕ	Փոխադարձ իրավական օգնություն
ՓԼ	Փողերի լվացում
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՔԱՈՒԱ	Քաղաքական ազդեցություն ունեցող անձ
ՔԴՕ	Քրեական դատավարության օրենսգիրք
ՔՕ	Քրեական օրենսգիրք
ՕՀԳՕ	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենք
ՖԱԹՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն
ՖՀ	Ֆինանսական հաստատություն
ՖՀՄ	Ֆինանսական հետախուզության մարմին
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ՖՈԳԾ	Ֆինանսական ոլորտի գնահատման ծրագիր
ՖՏՏՄ	ՖԱԹՖ-ի տիպի տարածաշրջանային մարմին

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանում փողերի լվացման (ՓԼ) և ահաբեկչության ֆինանսավորման (ԱՖ) դեմ պայքարի ռեժիմի սույն գնահատումը հիմնված է Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) 2003 թվականի Քառասուն հանձնարարականների և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՖԱԹՖ-ի 2001 թ. Ինը հատուկ հանձնարարականների վրա: Սույն գնահատումը պատրաստելիս կիրառվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2004 թ. մեթոդաբանությունը: Գնահատող թիմը հաշվի է առել իշխանությունների տրամադրած բոլոր նյութերը, 2009 թ. փետրվարի 23-ից մարտի 10-ը տևած այցի շրջանակներում ստացված տեղեկությունները և հետագայում իշխանությունների տրամադրած և հիմնավորվող այլ տեղեկությունները: Այցի շրջանակներում գնահատող թիմը հանդիպումներ է ունեցել տվյալ ոլորտին առնչվող պետական բոլոր մարմինների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ցուցակը զետեղված է գնահատման մանրամասն հաշվետվության 1-ին հավելվածում:

Գնահատումն իրականացնողների թիմը կազմված է եղել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աշխատակիցներից և ԱՄՀ-ի վերահսկողության ներքո գործող երկու փորձագետներից: Գնահատող թիմն ունեցել է հետևյալ կազմը. Ջուզեպե Լոմբարդո (ԻՎ, թիմի ղեկավար), Ֆրանցիսկո Ֆիգերոա (ԻՎ) և Գաբրիելե Դանքեր և Լիզա Կելարթ-Քորթնի (ԻՎ խորհրդատուներ): Գնահատողներն ուսումնասիրել են կառուցակարգային դաշտը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող օրենքները, իրավական այլ ակտերը, ուղեցույցները և այլ պահանջները, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների և Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների (ՆՈՖԳՏՄ) միջոցով իրականացվող փողերի լվացումը (ՓԼ) և ահաբեկչության ֆինանսավորումը (ԱՖ) խափանելու և պատժելու համար առկա կանոնակարգիչ և այլ համակարգերը: Գնահատողները նաև ուսումնասիրել են վերոհիշյալ համակարգերի կարողունակությունը, ներդրվածությունը և արդյունավետությունը:

Սույն հաշվետվությունում ամփոփ ներկայացվում են գնահատող առաքելության այցի ժամանակ կամ դրան անմիջապես հաջորդած ժամանակահատվածում Հայաստանում առկա՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մեխանիզմները: Վերջիններիս նկարագրությունից և վերլուծությունից զատ ներկայացվում են Հայաստանի կողմից ՖԱԹՖ-ի 40+9 հանձնարարականների կատարման մակարդակի գնահատականներ (տես Աղյուսակ 1), ինչպես նաև համակարգում հնարավոր որոշակի բարելավումների վերաբերյալ առաջարկություններ (տես Աղյուսակ 2):

Գնահատողները ցանկանում են իրենց երախտագիտությունը հայտնել հայաստանյան իշխանություններին առաքելության գործունեության ողջ ընթացքում ցուցաբերված օժանդակության և համագործակցության, ինչպես նաև կազմակերպական աշխատանքների բարձր մակարդակն ապահովելու համար:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հիմնական բացահայտումները

1. Հայաստանը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում համեմատաբար կարճ ժամանակահատվածում զգալի առաջընթաց է արձանագրել, մասնավորապես՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005 թվականին ընդունված առաջին օրենքի փոխարեն 2008 թվականին ընդունելով առավել համապարփակ օրենք: Անհրաժեշտ է ապահովել նոր օրենքի արդյունավետ կատարումը, հատկապես ՆՈՖԳՏՄ-ների կողմից: Իշխանությունները դեռ չեն իրականացրել ՓԼ և ԱՖ ոլորտում Հայաստանում առկա ռիսկերի և վտանգների համակարգային գնահատում, որը կծառայեցվեր ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կուռ ռեժիմի մշակմանը և ներդրմանը:

2. Հայաստանի ֆինանսական համակարգը դեռևս փոքր է: Համակարգում գերակշռում է բանկերի մասնաբաժինը: Բանկային համակարգի ընդհանուր ակտիվներին է բաժին ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 91 տոկոսը: Բանկերի մեծ մասի սեփականատերերը Հայաստանի ռեզիդենտներ են, սակայն համակարգում էական չափերի է հասնում նաև օտարերկրյա սեփականատերերի ներկայությունը: Ոչ բանկային ֆինանսական ոլորտը ֆինանսական միջնորդության մեջ մեծ դերակատարում չունի:

3. ՓԼ «տրոհման» փուլում կամ եկամուտների լվացման նպատակով ֆինանսական համակարգն օգտագործելու ռիսկը մեծ չէ (չնայած որ ֆինանսական որոշ գործիքներ, օրինակ՝ ըստ ներկայացնողի արժեթղթերը, առաջացնում են ՓԼ մեջ օգտագործվելու ռիսկ): Հայաստանն ըստ երևույթին ավելի խոցելի է ՓԼ «ինտեգրման» փուլի նկատմամբ՝ հաշվի առնելով տնտեսության մեջ կանխիկի լայն գործածությունը, արտերկրից փոխանցումների զգալի ծավալը, եկամտաբեր հանցագործությունների հարաբերական մակարդակը և որոշակի ոլորտներում, օրինակ՝ անշարժ գույքի բնագավառում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համարժեք մեխանիզմների բացակայությունը:

4. Չնայած որ Հայաստանում ստեղծվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պատասխանատու տարբեր մարմինների միջև համագործակցության խթանման մեխանիզմ՝ ի դեմս Միջգերատեսչական հանձնաժողովի, և առկա է ՓԼ և ԱՖ դեմ պայքարելու լուրջ քաղաքական կամք, անհրաժեշտ է Հայաստանում ավելի շատ ուշադրություն դարձնել վերոհիշյալ խոցելի կետերով պայմանավորված՝ ՓԼ ռիսկի ընդհանրական գնահատմանը:

5. ԱՖ ռիսկը խիստ ցածր է:

6. Ֆինանսական հետախուզության մարմինը՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կառուցվածքում, երիտասարդ, սակայն շատ գիտակ և ակտիվ ՖՀՄ է: Այնուհանդերձ, ՖԴԿ-ն ապահովված չէ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» նոր օրենքով (հետայսու՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք) իր վրա դրված պարտականությունները հավուր պատշաճի կատարելու համար անհրաժեշտ բավարար հաստիքներով:

7. Փողերի լվացման հանցագործությունը քրեականացված է՝ ընդհանուր առմամբ միջազգային ստանդարտին համահունչ: Ահաբեկչության հանցագործության առնչությամբ հայտնաբերվել են տեխնիկական մի շարք թերություններ: Առգրավման և բռնագրավման վերաբերյալ իրավական դաշտը լրացուցիչ կատարելագործման կարիք ունի, հատկապես նախորդող հանցագործությունների մասով: Հայաստանը պետք է վերանայի ՄԱԿ-ի

անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի կապակցությամբ իր կողմից ձեռնարկված միջոցառումները, քանի որ առկա մեխանիզմը բավարար չէ:

8. Վիեննայի, Պալերմոյի և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիաները Հայաստանի կողմից վավերացվել են, և դրանց դրույթներից շատերի, թեև ոչ բոլորի պահանջներն արդեն կատարվում են:

9. Հայաստանի ֆինանսական համակարգում գործող ֆինանսական հաստատությունների մասով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումներն ընդգրկուն են, նախատեսում են ռիսկայնության վրա հիմնված բաղկացուցիչներ և բավական մոտ են ՖԱԹՖ-ի հանձնարարականներին: Այնուամենայնիվ, կատարման գործընթացը նոր-նոր է ծավալվում բոլոր, հատկապես ոչ բանկային ոլորտներում: Վերահսկող մարմիններն ընդհանուր առմամբ իրականացնում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեղերում (տեսչական) ստուգումներ, որոնց հիմնական ուղղությունը կարգավորման համակարգի պահանջների կատարումը պարզելն է:

Իրավական համակարգերը և հարակից կառուցակարգային մեխանիզմները

10. Փողերի լվացման մասին Հայաստանի քրեաիրավական նորմերն ըստ էության հիմնավոր են և արտացոլում են ՖԱԹՖ-ի ստանդարտից բխող չափորոշիչներից շատերը: Չնայած մեղադրական որոշ դատավճիռների առկայությանը, դատավճռի միջոցով մինչ օրս հնարավոր չի եղել համոզվել, որ փողերի լվացումը կարող է քրեական հետապնդման ենթարկվել որպես ինքնուրույն առանձին հանցագործություն՝ նախորդող հանցագործության համար մեղադրական դատավճռի բացակայության պայմաններում: Հայաստանի օրենսդրության համաձայն իրավաբանական անձինք ենթակա չեն քրեական պատասխանատվության: ՓԼ գործերով քրեական քննությունների, հետապնդումների և մեղադրական դատավճիռների թվաքանակը ցածր է եկամտաբեր հիմնական նախորդող հանցագործությունների քրեական քննությունների, հետապնդումների և մեղադրական դատավճիռների թվաքանակի համեմատ: Գույքի՝ հանցավոր ճանապարհով ստացված լինելու փաստը հաստատելիս դատարանների կողմից կիրառվող ապացուցման ստանդարտի մասով դեռևս առկա են որոշակի մարտահրավերներ:

11. Ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ քրեաիրավական նորմերն ընդհանուր առմամբ համահունչ են Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիային: Այնուհանդերձ, գործող նորմերն անհրաժեշտ է փոփոխել, որպեսզի դրանք տարածվեն բոլոր ինը Կոնվենցիաների և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունների նկատմամբ և «միջոցներ» հասկացությունը ներառեն Կոնվենցիայում սահմանված իմաստով: Ավելին, ԱՖ մասին քրեաիրավական նորմը համահունչ չէ ՖԱԹՖ-ի II Հատուկ հանձնարարականին, քանի որ իր մեջ չի ներառում այն իրավիճակները, որոնցում գույքը կամ միջոցները տրամադրվում են անհատ ահաբեկիչներին կամ ահաբեկչական կազմակերպություններին՝ չունենալով ահաբեկչական կոնկրետ գործողություններ կատարելու նպատակով միջոցներն օգտագործելու մասին տեղեկացվածություն կամ մտադրություն:

12. Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և նախորդող հանցագործությունների կատարմանն առնչվող գույքի բռնագրավման մասին դրույթները համապատասխանում են միջազգային ստանդարտի մի քանի, թեև՝ ոչ բոլոր չափորոշիչներին: Ուշադրության արժանի է հատկապես այն հանգամանքը, որ ՖԱԹՖ-ի կողմից նախատեսված հանցագործությունների ոչ բոլոր տեսակների նկատմամբ է հնարավոր տարածել բռնագրավում: Ֆինանսական գաղտնիքը Հայաստանում կարգավորվում է մի շարք տարբեր նորմերով, որոնք ներդաշնակեցված չեն և

պրակտիկայում մեկնաբանվում են հնարավորինս նեղ իմաստով: Այդ հանգամանքն անորոշություն է առաջացնում իրավական համակարգի կիրառման հարցում և սահմանափակում է այն գույքը հայտնաբերելու և հետապնդելու՝ իրավապահ մարմինների հնարավորությունը, որը բռնագրավման ենթակա է կամ կարող է այդպիսին դառնալ, հատկապես երբ դա տեղի է ունենում կասկածյալի նույնականացումից առաջ, կամ երբ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է ոչ թե կասկածյալին, այլ՝ ուրիշ որևէ անձի: Բռնագրավման և առգրավման մասին դրույթներն ըստ երևույթին արդյունավետորեն չեն կատարվում:

13. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար Հայաստանի կողմից կիրառվող սառեցման մեխանիզմը թերի է. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսվում է ահաբեկիչների հետ կապված միջոցների սառեցումը միայն սահմանափակ ժամկետով, որից հետո կոնկրետ հանցագործության հատկանիշներով պետք է հարուցվի քրեական գործ, այդ թվում՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևով սահմանված անձանց դեպքում:

Կանխարգելիչ միջոցներ. ֆինանսական հաստատությունները

14. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանվում են կանխարգելման հիմնական պարտավորությունները ֆինանսական հաստատությունների համար, որոնք ընդհանուր առմամբ համահունչ են ՖԱԹՖ-ի հանձնարարականներին: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական նորմերը ներդրվում են ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող միակ մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ընդունած կանոնակարգող իրավական ակտերում զետեղված մանրակրկիտ պահանջների միջոցով: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի լրացուցիչ պարտավորություններ են նախատեսվում այլ՝ կոնկրետ ոլորտների վերաբերյալ օրենքներով: Եվ օրենքները, և դրանց կատարումն ապահովող կանոնակարգերն պարտադիր իրավաբանական ուժ ունեն, և դրանց չկատարման համար նախատեսված են որոշակի պատժամիջոցներ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» կիրառելի օրենքով և ֆինանսական ոլորտի մասին օրենքներով ամրագրված դրույթներին համապատասխան: Կանխարգելիչ միջոցների իրագործումը բարելավելու նպատակով ՀՀ ԿԲ-ն ՖԴԿ-ի միջոցով ընդունում է ֆինանսական հաստատությունների համար նախատեսված ուղեցույցներ:

15. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը և այլ իրավական ակտերը տարածվում են բոլոր ֆինանսական հաստատությունների և գործունեության տեսակների նկատմամբ՝ «ֆինանսական հաստատություն» հասկացությանը ՖԱԹՖ-ի տված սահմանման իմաստով, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մանրակրկիտ պահանջներ են նախատեսում ֆինանսական հատվածի համար, ներառյալ, ի թիվս այլ պահանջների, ՀՊՈՒ պահանջներ, այդ թվում նաև ՔԱՈՒԱ համար, տեղեկատվության պահպանման, թղթակցային բանկային հարաբերությունների վերաբերյալ պահանջներ, անսովոր, մեծ և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու, ներքին հսկողության, համապատասխանության կառավարման մեխանիզմների և վերապատրաստման մասին պահանջներ: Այնուամենայնիվ, առկա են մի շարք ոլորտներ, որոնցում պահանջները չեն համապատասխանում ՖԱԹՖ-ի հանձնարարականներին: Դրանք պայմանավորված են, մասնավորապես, հետևյալ գործոններով. ըստ ներկայացնողի բանկային գրքույկների կամ ըստ ներկայացնողի այլ արժեթղթերի միջոցով կամ դրանց օգտագործմամբ գործարար հարաբերություն հաստատելու արգելք սահմանված չէ: Բացի այդ, ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր սահմանված չեն այն պայմանների մասով, որոնցում հաճախորդին կարող է թույլատրվել նախքան ՀՊՈՒ ստուգումն օգտվել գործարար հարաբերությունից: Ավելին, ներկայումս չի պահանջվում առկա հաճախորդների նկատմամբ ՀՊՈՒ միջոցառումներ իրականացնել էականության և ռիսկայնության հիման վրա: Երրորդ

անձանց և «ներկայացված» բիզնեսի վերաբերյալ պահանջներ ընդհանրապես չկան: Ի վերջո, համապատասխանության կառավարման մեխանիզմների և ներքին ծրագրերի ու հսկողության հետ կապված միջոցները թերի են:

16. Կանխարգելիչ/կարգավորիչ պահանջների կատարման վիճակը տարբեր ֆինանսական հաստատություններում տարբեր է. վիճակը մի փոքր ավելի բարվոք է, օրինակ, բանկային ոլորտում, ի տարբերություն կարևոր և ռիսկային այլ ոլորտների (այն է՝ արժեթղթեր, ապահովագրություն, արտարժույթի փոխանակման կետեր և դրամական փոխանցումներ իրականացնողներ): «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսվում են ռիսկայնության վրա հիմնված բաղկացուցիչներ ՀՊՈՒ նպատակների համար: Ապագայում կարելի է ռիսկայնության վրա հիմնված ընթացակարգերն ամրապնդել կոնկրետ ոլորտային ուղեցույցներով, ինչպես նաև իրավական ակտերով թույլատրել ՀՊՈՒ պարզեցված ռեժիմի բարեփոխումներ: Պետք է նաև վերանայել «ներկայացված» բիզնեսի և երրորդ անձանց վերաբերյալ ՀՊՈՒ պահանջները՝ նախատեսելու առավել ընդգրկուն միջոցառումներ: Միանշանակորեն սահմանված է ՓԼ և ԱՖ կասկածների մասին հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը, սակայն կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների մակարդակը շատ ցածր է և հիմնականում սահմանափակվում է բանկային համակարգով:

17. ՀՀ ԿԲ-ն, ի դեմս ֆինանսական վերահսկողության վարչության (ՖՎՎ), ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարումը վերահսկող և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանխարգելիչ պահանջների կիրարկման համար պատասխանատու միասնական վերահսկողական մարմինն է: ՀՀ ԿԲ-ն լայն լիազորություններ ունի՝ վերահսկելու և ստուգելու իր իրավասության դաշտում գործող ֆինանսական հաստատություններին, ինչպես նաև՝ պատժամիջոցներ կիրառելու պահանջների չկատարման դեպքում: Պրակտիկայում ՀՀ ԿԲ-ն կիրառել է վարչական պատիժներ, այդ թվում՝ տուգանքներ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրա կատարումն ապահովող այլ իրավական ակտերի պահանջների չկատարման համար: ՖՎՎ-ն ներդրել է վերահսկողության բավական ընդգրկուն համակարգ. այնուհանդերձ, վերջինս կարելի էր կատարելագործել՝ թարմացնելով վերահսկողության գործիքները, այդ թվում՝ տեղերում ստուգումների ձեռնարկը և հարակից ընթացակարգերը, որպեսզի դրանցում արտացոլվեն ռիսկայնության վրա հիմնված բաղկացուցիչները և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2008 թվականի օրենքի պահանջները:

18. Վերահսկողության նշված գործընթացը բարելավելու նպատակով կարելի էր նաև ներդնել ռիսկայնության վրա հիմնված լրացուցիչ գործընթացներ և թարմացնել վերահսկողության ձեռնարկը/ընթացակարգերը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2008 թվականի օրենքին և դրա կատարումն ապահովող այլ իրավական ակտերին համապատասխան: Հայաստանյան իշխանություններն ընդունում են, որ վերահսկողության ձեռնարկները և ընթացակարգերն անհրաժեշտ է թարմացնել՝ վերահսկողության մեջ ռիսկայնության վրա հիմնված մոտեցմանը և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2008 թվականի օրենքին համապատասխան (օրինակ՝ վարկային կազմակերպությունների, արժեթղթերի, ապահովագրության, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումների ծառայությունների ոլորտների համար):

Կանխարգելիչ միջոցներ. Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակները և մասնագիտությունները

19. Բոլոր ՆՈՖԳՏՄ-ները, ՖԱԹՖ-ի սահմանման մեջ տրված նկարագրությանը համահունչ, ներառված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքում՝ որպես հաշվետվություն տրամադրող անձինք: ՆՈՖԳՏՄ-ների մասով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով

նախատեսված կանխարգելիչ միջոցները նման են ֆինանսական հաստատությունների համար նախատեսվածներին, սակայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջներին ի լրումն ֆինանսական հաստատությունների համար սահմանված լրացուցիչ կանոնակարգերը, կանոնները և ուղենիշները կիրառելի չեն ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Ուստի, ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանված կանխարգելիչ միջոցների իրավական ռեժիմն էականորեն թերի է: Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց (ՔԱՈՒԱ) կամ բարձր ռիսկային որևէ այլ հաճախորդի կամ գործարար գործարքի հետ առնչվելու վերաբերյալ որևէ պարտավորություն սահմանված չէ: Չկան իրավական կամ կարգավորիչ միջոցներ, որոնք կկանխեին խաղատան սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան օպերատոր լինելը:

20. ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ կանխարգելիչ միջոցների իրագործումն անբավարար է ՆՈՖԳՏՄ ողջ ոլորտում. մինչ օրս որևէ ՆՈՖԳՏՄ կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացրած չկա: Մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ, ներառյալ՝ անկախ իրավաբանները և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունները, թանկարժեք մետաղների դիլերները, թանկարժեք քարերի դիլերները, անկախ հաշվապահները և հաշվապահական ընկերությունները, չեն լիցենզավորվում և չեն վերահսկվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների կատարման մասով: Ավելին, մնացած ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանված լիցենզավորման և մոնիտորինգի ռեժիմում ուշադրություն չի դարձվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի խնդիրներին, իսկ որոշ դեպքերում, օրինակ՝ փաստաբանների պարագայում, վերահսկողության կամ մոնիտորինգի համակարգն իսպառ բացակայում է: Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ ունեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարումը բարելավելու համար անհրաժեշտ նվազագույն ռեսուրսներ, իսկ որոշ դեպքերում՝ նաև սահմանափակ տեխնիկական հմտություններ: Տրաստների և ընկերություններին ծառայություններ մատուցողների (ՏԸԾՄ) ոլորտը Հայաստանում ձևավորված չէ, չնայած որ ՏԸԾՄ-ների նկատմամբ տարածվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը:

21. Առկա պահանջների և պարտավորությունների կատարման արդյունավետությունն ըստ էության նվազագույն մակարդակի վրա է. ՆՈՖԳՏՄ-ներն ընդհանուր առմամբ խիստ սահմանափակ տեղեկացվածություն և պատկերացումներ ունեն սեփական պարտավորությունների մասին, ընդ որում՝ պրակտիկայում վերջիններիս կատարման մասին խոսող փաստերը շատ քիչ են:

Իրավաբանական անձինք և կազմավորումները, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները

22. Հայաստանում ներդրվել են որոշակի մեխանիզմներ, որոնք ապահովում են իրավաբանական անձանց իրական շահառուների մասին տեղեկությունների ստացումը և պահպանությունը: Այնուհանդերձ, նշված մեխանիզմները միայն վերջին շրջանում ներդնելու պատճառով հնարավոր չեղավ պարզել, թե արդյոք դրանք արդեն արդյունավետորեն կիրառվում են: Հայաստանյան օրենսդրությամբ նախատեսված չեն տրաստերը և իրավաբանական կազմավորումների այլ ձևերը: Ավելին, Հայաստանը չի ստորագրել Տրաստերի նկատմամբ կիրառելի օրենքների և տրաստերի ճանաչման մասին Հաագայի կոնվենցիան:

23. Հայաստանում գործող և ներպետական, և օտարերկրյա ՇՆՉԿ-ները պարտավոր են գրանցվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում (Պետական ռեգիստր): ՇՆՉԿ-ները կարող են ստեղծվել բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների կամ այլ

հասարակական կազմակերպությունների ձևով. գնահատման պահին Պետական ռեգիստրում գրանցված էին ավելի քան 5,500 ՇՆՉԿ-ներ: Չնայած որ կիրառելի օրենքների ուսումնասիրության արդյունքում իշխանություններն ԱՖ նպատակով ՇՆՉԿ-ների չարաշահման հնարավոր խոցելի կետեր չեն բացահայտել, իշխանություններին առաջարկվում է աշխատել այս ոլորտի հետ և վերջինիս շրջանակներում իրականացնել ուսումնասիրություններ:

Ազգային և միջազգային համագործակցությունը

24. Ֆինանսական հանցավորության դեմ պայքարի լայն լիազորություններով օժտված ազգային մարմնի ստեղծման շնորհիվ ազգային համագործակցության համակարգը և գործունեությունը վերջին մի քանի տարիներին էապես բարելավվել են: Այդ մարմինը՝ Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը (Միջգերատեսչական հանձնաժողով), պետական իրավասու մարմինների միջև համագործակցության և համակարգման հիմնական հարթակն է: Միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ներկայացված են իրավասու բոլոր պատկան մարմինները, չնայած որ ֆինանսական հաստատությունների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իմաստով վերահսկողության ենթակա գործունեության այլ տեսակների հետ խորհրդակցությունները պասիվ են. հանձնաժողովում պաշտոնապես ներկայացված է միայն Հայաստանի բանկերի միությունը:

25. Միջգերատեսչական հանձնաժողովի լիազորությունների շրջանակը ներառում է, ի մասնավորի, ՓԼ և ԱՖ դեմ պայքարի քաղաքականության քննարկումը և երաշխավորությունների ներկայացումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացվող քաղաքականությունների և ծրագրերի արդյունավետության վերահսկումը և գնահատումը, միտումների և մեթոդաբանության մասին տեղեկությունների փոխանակումը և կրթական ծրագրերը: Այնուհանդերձ, Միջգերատեսչական հանձնաժողովը չի իրականացրել Հայաստանում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի վերլուծություն՝ պարզելու համար խոցելի կետերը, ռիսկի ենթակա ոլորտները կամ եկամտաբեր նախորդող հանցագործությունների այն տեսակները, որոնք կատարվում են Հայաստանում: Նմանօրինակ գնահատումը կարող է հիմք դառնալ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարությունը հստակեցնելու և արդեն իսկ կատարված աշխատանքներն էլ ավելի խորացնելու համար:

26. Բացի այդ, կան նաև համագործակցության ֆորմալ մեխանիզմներ՝ ՓԼ և ԱՖ վերաբերյալ փոխըմբռնման երկկողմ հուշագրերի (ՓՀ-ներ) տեսքով, որոնք կնքվել են, մի կողմից, ֆինանսական հետախուզության մարմնի՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի, և մյուս կողմից՝ ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, պետական եկամուտների կոմիտեի և գլխավոր դատախազության հետ: Բոլոր ՓՀ-ներով նախատեսվում են համագործակցության միևնույն պայմանները, այդ թվում՝ ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման, ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերաբերյալ համատեղ քննարկումների, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնների, ուղենիշների և մեթոդաբանական այլ նյութերի մշակման գործում փոխօգնության, դեպքերի վիճակագրության վարման և տիպաբանությունների մշակման համատեղ գործունեության, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում վերապատրաստման, կրթության և խորհրդատվության համատեղ ծրագրերի իրագործման մասին:

27. Փոխադարձ իրավական օգնության (ՓԻՕ) և անձանց հանձնման վերաբերյալ իրավական դաշտը լիարժեք է, և ՓԻՕ տրամադրման գործընթացում չկան անհամաչափ կամ անհարկի սահմանափակող պայմաններ: Չնայած որ օրենքով նման պահանջ

սահմանված չէ, պրակտիկայում Հայաստանը ՓԻՕ որևէ տեսակ տրամադրում է միայն կրկնակի քրեականացման դեպքում: Դա նաև նշանակում է, որ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դրույթների առնչությամբ արձանագրված թերությունները կարող են ազդել փոխադարձ իրավական օգնություն ցուցաբերելու՝ Հայաստանի կարողության վրա, եթե հարցումը վերաբերի, օրինակ, իրավաբանական անձի: Նույնապես, ՓԻՕ տրամադրման վրա կարող են ազդել կանխարգելիչ միջոցների (այդ թվում՝ առգրավման, սառեցման և հետապնդման), բռնագրավման և ֆինանսական գաղտնիքի առնչությամբ նշված սահմանափակումները: ՓԼ և ԱՖ հանցագործությունների համար Հայաստանի օրենսդրությունը նախատեսում է անձանց հանձնման հնարավորություն: Հայաստանը ՓԼ կամ ԱՖ կապակցությամբ ՓԻՕ, այդ թվում՝ անձի հանձնման հարցում չի ստացել կամ ներկայացրել:

Այլ խնդիրներ

28. Համապարփակ և բովանդակալից վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում հնարավոր չեղավ ըստ էության գնահատել բոլոր ոլորտներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցառումների արդյունավետության մակարդակը: Բացի այդ, ներկայումս զգացվում է լրացուցիչ կադրային ռեսուրսների կարիքը, հատկապես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերահսկողության ոլորտում և ՖԴԿ-ում, ինչպես նաև իրավապահ մարմինների, հատկապես ԱԱԾ-ի աշխատակիցների համար ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով վերապատրաստումներ կազմակերպելու անհրաժեշտությունը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի մասին

29. Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող, լեռնային պետություն է Հարավային Կովկասում: Պետության տարածքը 29,800 քառակուսի կիլոմետր է: Հայաստանը սահմանակից է Վրաստանին հյուսիսում, Իրանին հարավում, Թուրքիային արևմուտքում և Ադրբեջանին հարավում և արևելքում:

30. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության[1] համաձայն, Նախագահը պետության գլուխն է: Գործադիր իշխանությունը վերապահված է կառավարությանը: Օրենսդիր իշխանությունը վերապահված է խորհրդարանին: Միապալատ խորհրդարանը (Ազգային ժողովը) կազմված է 131 պատգամավորից: Ազգային ժողովի պատգամավորներն ընտրվում են քառամյա ժամկետով:

31. Հայաստանն անդամակցում է Միավորված ազգերի կազմակերպությանը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը, Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, Եվրոպայի խորհրդին, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Համաշխարհային բանկին, Արժույթի միջազգային հիմնադրամին և միջազգային այլ կազմակերպությունների:

32. Հայաստանի պաշտոնական արժույթը հայկական դրամն է:

33. Հայաստանի բնակչությունը 3,231,900 է (2008 թ. հաշվարկային տվյալներով): Պետությունը շատ ուրբանիզացված է. բնակչության ընդհանուր թվի 64 տոկոսը բնակվում է մեծ կամ փոքր քաղաքներում: Բնակչությունը կենտրոնացած է գետավազանների հովտային շրջաններում, մասնավորապես՝ Հրազդան գետի ափերին, որտեղ և գտնվում է մայրաքաղաք Երևանը՝ Հայաստանի խոշորագույն քաղաքը: Հայաստանի պաշտոնական պետական լեզուն հայերենն է:

34. Հայաստանը մեծ սփյուռք ունի. որոշ գնահատականների համաձայն, Հայաստանից դուրս ապրում է մոտ 9 միլիոն հայ: Հայկական համայնքներ կան ողջ աշխարհում, ընդ որում՝ ամենամեծ համայնքները գտնվում են Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իրանում և Լիբանանում:

35. Հայաստանի համախառն ազգային արդյունքը 2006 թվականին կազմել է 6.6 միլիարդ ԱՄՆ դոլար (մեկ շնչի հաշվով 2,501 դոլար), իսկ 2007-ին՝ 9.5 միլիարդ դոլար (մեկ շնչի հաշվով 2,939 դոլար): Տնտեսության տարեկան աճը 2005, 2006 և 2007 թվականներին կազմել է մոտ 11-13-ական տոկոս:

36. Խորհրդային Միության փլուզումից ի վեր, սկսած 1991 թվականից, Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել տնտեսական բազմաթիվ բարեփոխումների իրականացման հարցում, ներառյալ մասնավորեցումը, գների բարեփոխումները և հարկաբյուջետային շրջահայաց քաղաքականությունները: 1994 թվականի դրությամբ Հայաստանի կառավարությունը սկսել էր իրականացնել տնտեսության ազատականացման հավակնոտ ծրագիր, որի արդյունքում տնտեսական աճի դրական ցուցանիշ էր արձանագրվում: Վերջին տարիներին տնտեսության աճի միջին տեմպը գերազանցել է 13%-

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է (1995 թ. հուլիսի 5) և փոփոխությունների ենթարկվել (2005 թ. նոյեմբերի 27) ազգային հանրաքվեներով:

ը: Պետությունը կարողացել է կրճատել աղքատությունը, էապես նվազեցնել գնաճը, կայունացնել ազգային արժույթը և մասնավորեցնել փոքր և միջին ձեռնարկությունների մեծ մասը: Նախկին խորհրդային՝ կենտրոնական պլանավորման համակարգի պայմաններում Հայաստանում ստեղծվել էր ժամանակակից արդյունաբերական ոլորտ, որը հաստոցներ, տեքստիլեղեն և արդյունաբերական այլ ապրանքներ էր մատակարարում խորհրդային այլ հանրապետություններին՝ փոխարենը նրանցից ստանալով հումք և էներգակիրներ: Ժամանակի ընթացքում Հայաստանն անցում է կատարել փոքրամասշտաբ գյուղատնտեսության՝ օտարվելով խորհրդային դարաշրջանի գյուղարդյունաբերական խոշոր համալիրներից:

37. Հայաստանի բնական պաշարները ներառում են պղինձը, մոլիբդենը, ցինկը, ոսկին, պեռլիտը (թեթև հանքանյութ, որն օգտագործվում է բետոնի և սվաղի մեջ) և գրանիտը: Պետությունը չունի նավթի, բնական գազի և ածխի հանքային պաշարներ, և ստիպված է այդ էներգակիրները ներմուծել:

38. Արտահանվող կարևորագույն ոլորտներից է ադամանդագործությունը: Ադամանդները ներմուծվում են այլ պետություններից (օրինակ՝ Ռուսաստանից) և մշակվում Հայաստանի ադամանդագործական արդյունաբերության կողմից, որից հետո արտահանվում են: Ներկայումս Հայաստանը տարեկան աշխարհի շուկաներ է արտահանում մոտ 250 միլիոն ԱՄՆ դոլարի զարդեղեն և թանկարժեք քարեր, որի շնորհիվ տեղ է զբաղեցնում ադամանդներ վերամշակող պետությունների առաջին տասնյակում:

39. Հայաստանը մեծ ստվերային տնտեսություն ունի, որի մեծությունը ոչ պաշտոնական գնահատականների համաձայն հասնում է ՀՆԱ-ի առնվազն մեկ երրորդին, և որը ֆորմալ ֆինանսական հատվածի ծառայություններից չի օգտվում: Ստվերային տնտեսության մեջ գործող ձեռնարկությունները և անհատները գործարքները կատարում են բացառապես կանխիկով, մասամբ հարկերից խուսափելու նպատակով: Զգալի չափերի են հասնում արտերկրից փոխանցումները, որոնք թերևս կարող են կազմել անվանական ՀՆԱ-ի մեկ քառորդը: Դրանցով ֆինանսավորվում են ներդրումները և անշարժ գույքի ծախսերը, որի հետևանքով նվազում է ֆինանսական հատվածից ֆինանսավորում ներգրավելու անհրաժեշտությունը:

1.2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ընդհանուր իրավիճակը

40. Չնայած որ Հայաստանը փողերի լվացման առումով էական մտահոգությունների տեղիք տվող պետություն չի համարվում,[2] եկամտաբեր հանցագործությունների առկայության մասին վկայող բազմաթիվ ապացույցներ կան: Պայմանավորված իր աշխարհագրական դիրքով՝ գտնվելով Կովկասում, Հայաստանը կարող է դառնալ թմրադեղերի և այլ թրաֆիքինգի (հատկապես մարդկանց թրաֆիքինգի) տարանցման ուղի: Ողջ Հայաստանում շարունակում է լուրջ խնդիր մնալ կոռուպցիան:[3] «Թրանսփարենսի ինտերնեշնլ» կազմակերպության կողմից հրապարակվող՝ կոռուպցիոն ընկալման համաթվի

[2] Աղբյուրը. Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի կողմից կոնգրեսին ներկայացվող՝ «Թմրադեղերի միջազգային հսկողության ռազմավարության 2008 թ. զեկույց» (2008 International Narcotics Control Strategy Report (INCSR)):

[3] Աղբյուրը. Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի կողմից կոնգրեսին ներկայացվող՝ «Թմրադեղերի միջազգային հսկողության ռազմավարության 2008 թ. զեկույց» (2008 International Narcotics Control Strategy Report (INCSR)):

2008 թ. գնահատականներում Հայաստանը զբաղեցնում է 109-րդ հորիզոնականը (180 պետությունների շարքում):[4]

41. Ավելին, երկրի տնտեսությունը բնութագրվում է կանխիկով կատարվող գործառնությունների մեծ ծավալով, ինչը մարտահրավեր է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների իրականացման ճանապարհին: Բացի այդ, բարձր է նաև դրամական փոխանցումների մակարդակը, քանի որ Հայաստանի տնտեսությունը մեծ չափով կախված է արտերկրից կատարվող դրամական փոխանցումներից, որոնց բաժին է ընկնում ՀՆԱ-ի մոտ 14%-ը:[5] Այդ փոխանցումների մոտ 40%-ը ստացվում է սեզոնային աշխատանքային միգրանտներից, որոնց ճնշող մեծամասնությունը գտնվում է Ռուսաստանում: Փոխանցումների աղբյուր է նաև Արևմտյան Եվրոպայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում հաստատված մեծաթիվ հայկական Սփյուռքը:

42. Պարզվել է, որ 2005-2008 թթ. (2008 թ. առաջին 9 ամիսների կտրվածքով) հանցավոր միջոցների հիմնական աղբյուրների շարքում են եղել հետևյալ հանցագործությունները.

1) Հարկերը և այլ պարտադիր վճարումները վճարելուց խուսափելը և հարակից հանցագործությունները (ՔՕ-ի 205-րդ հոդված),

2) Կողոպուտը և գողությունը (ՔՕ-ի 176-րդ և 177-րդ հոդվածներ),

3) Խարդախությունը (ՔՕ-ի 178-րդ հոդված),

4) Յուրացնելը և վատնելը, շորթումը (ՔՕ-ի 179-րդ և 182-րդ հոդվածներ),

5) Ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրությունը (ՔՕ-ի 188-րդ և 189-րդ հոդվածներ),

6) Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, կաշառք ստանալը և կաշառք տալը (ՔՕ-ի 308-րդ, 311-րդ և 312-րդ հոդվածներ):

43. Հետևյալ աղյուսակում բերված են փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Հանցատեսակ	2005			2006			2007			2008 (առաջին 9 ամիսներ)		
	1[6]	2[7]	3[8]	1	2	3	1	2	3	1	2	3
Հոդված 175 Ավազակություն	106	61	2	94	52	2	76	38	3	111	48	-
Հոդված 176 Կողոպուտ	161	109		171	102	-	123	68	2	157	69	-
Հոդված 177	246	1962	11	3090	185	15	271	146	13	2204	1011	-

[4] Աղբյուրը. «Թրանսփարենսի ինտերնեշնլ» կազմակերպության կողմից հրապարակվող՝ Կոռուպցիոն ընկալման համաթվի 2008 թ. գնահատական (Transparency International 2008 Corruption Perceptions Index) http://www.transparency.org/news_room/in_focus/2008/cpi2008

[5] ՀՆԱ-ի 2006-2008 թթ. տվյալների և ֆիզիկական անձանց ոչ առևտրային փոխանցումների մասին տվյալների համաձայն:

[6] Արձանագրված հանցագործությունների թիվ
[7] Բացահայտված հանցագործությունների թիվ
[8] Օտարերկրյա քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների թիվ

Գողություն	3				3		2	5				
Հոդված 178 Խարդախություն	466	346	5	416	321	10	432	335	8	257	167	-
Հոդված 179 Յուրացնելը կամ վատնելը	123	88	-	78	52	-	69	43	-	63	30	-
Հոդված 182 Շորթում	15	15	-	12	10	1	19	14	-	35	29	-
Հոդված 188 Ապօրինի ձեռնարկա-տիրություն	23	17	-	48	37	1	16	14	1	37	15	-
Հոդված 188.1 Առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացում	3	3	-	17	15	-	5	5	-	10	4	-
Հոդված 189 Կեղծ ձեռնարկա-տիրություն	23	12	-	13	7	-	9	4	-	18	-	-
Հոդված 200 Առևտրային կաշառք	3	2	-	1	-	-	-	-	-	7	2	-
Հոդված 202 Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը	60	9	-	52	2	1	57	6	1	59	1	-
Հոդված 203 Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը	3	3	-	4	2	-	2	2	-	-	-	-
Հոդված 205 Հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները վճարելուց խուսափելը	21	11	-	50	40	1	59	32	2	104	33	2
Հոդված 215 Մաքսա-նենգությունը	50	31	15	62	45	28	77	53	12	39	15	6
Հոդված 216 Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը	15	15	-	25	23	-	17	17	-	17	16	-
Հոդված 235 Զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը,	264	236	8	211	191	4	204	175	2	189	161	2

փոխադրելը կամ կրելը												
Հոդված 266 Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով	76	57	3	162	122	10	235	175	3	170	101	-
Հոդված 308 Պաշտոնեական լիազո-րությունները չարաշահելը	26	21	-	22	15	-	21	14	-	51	17	-
Հոդված 311 Կաշառք ստանալը	7	5	-	14	10	-	5	3	-	46	10	-
Հոդված 312 Կաշառք տալը	1	1	-	3	3	-	2	1	-	3	-	-

44. Նախորդող հանցագործությունների գործերով քննությունների, քրեական հետապնդումների և կայացված մեղադրական դատավճիռների թվաքանակի համեմատ բավական ցածր է ՓԼ գործերով քննությունների և քրեական հետապնդումների թիվը: Դա վկայում է այն մասին, որ իրավապահ մարմինները հակված են ավելի շատ ուշադրություն դարձնել ոչ թե ՓԼ, այլև՝ այդ հանցագործությունների դեմ պայքարին:

ՓԼ հատկանիշներով հարուցված քրեական գործերի մասին վիճակագրական տվյալներ							
Տարի	Հարուց-ված գործեր	Կասեց-ված գործեր	Կարճված գործեր	Արդարաց-ման դատա-վճիռներ	Առգրավված (կալանք դրված) գույք	Մեղա-դրական դատա-վճիռներ	Տուգանքներ
2005	5	1	1				
2006	4	2				1	400,000 դրամի տուգանք
2007	3		3	1			
2008	6		1		40,000 եվրո և 31,650,000 դրամ		
2009 (15/02 դրությամբ)	4					1	4,600,000 դրամի բռնագրավում

45. Իշխանությունները նշել են, որ փողերի լվացման հանցագործությունների կամ կասկածվող գործերի վերլուծությունը վկայում է, որ փողերի լվացման առավել տարածված սխեմաները հետևյալներն են.

- Հարկերը վճարելուց խուսափելը, երբ ֆիզիկական անձանց միջոցով կատարվում են գործարար նպատակի ծառայող միջոցների մեծ գումարների փոխանցումներ՝ փորձելով թաքցնել համապատասխան ընկերության փաստացի հոսքերը և այդկերպ խուսափել հարկային պարտավորությունների կատարումից,
- Մասնատված գործարքներ, որոնց նպատակը միջոցների աղբյուրը և փաստացի շահառուներին թաքցնելն է:

46. Ինչ վերաբերում է ՓԼ գործունեության մեջ օգտագործվող ֆինանսական հաստատությունների կամ ՆՈՖԳՏՄ-ների տեսակներին կամ գործարար գործունեության այլ տեսակներին, իշխանությունները նշել են, որ փողերի լվացման սխեմաները հիմնականում ի կատար են ածվում բանկային համակարգի միջոցով: Այնուհանդերձ, առաքելության այցի ժամանակ որպես անօրինական ճանապարհով ստացված եկամուտների լվացման շահութաբեր ուղիներ մատնանշվեցին նաև անշարժ գույքի ոլորտը և դրան հարակից գործառնությունները:

47. Իշխանությունն համաձայնվեցին, որ ԱՖ ռիսկը Հայաստանում ցածր է. Հանրապետության տարածքում չեն արձանագրվել ահաբեկչության ֆինանսավորման դեպքեր, փորձեր կամ կասկածներ:

1.3. Ֆինանսական ոլորտի ընդհանուր վերլուծություն

48. Ֆինանսական համակարգը Հայաստանում բաղկացած է 22 բանկերից (380 մասնաճյուղերով հանդերձ), 25 վարկային կազմակերպություններից (48 մասնաճյուղերով), 10 արժեթղթերի/ներդրումային ընկերություններից, 11 ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից, 5 ապահովագրական բրոքերային ընկերություններից, դրամական փոխանցումներ իրականացնող 11 կազմակերպություններից, արտարժույթի փոխանակման 288 կետեր (ներառյալ մասնաճյուղերը) և արտարժույթի 2 դիլեր-բրոքերներ:

49. Ֆինանսական համակարգը դեռևս փոքր է: Համակարգում գերակշռում է բանկերի մասնաբաժինը: Բանկային համակարգի ընդհանուր ակտիվներին է բաժին ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 91 տոկոսը: Բանկերի մեծ մասի սեփականատերերը Հայաստանի ռեզիդենտներ են, սակայն համակարգում էական չափերի է հասնում նաև օտարերկրյա սեփականատերերի ներկայությունը: Ոչ բանկային ֆինանսական ոլորտը ֆինանսական միջնորդության մեջ մեծ դերակատարում չունի:

50. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական և կարգավորիչ դաշտը ներդրվում և վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից, որը Հայաստանում ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող միասնական մարմինն է: ՀՀ ԿԲ-ն նաև կարգավորում և վերահսկում է 71 գրավատներ և 1 Կենտրոնական դեպոզիտարիա: ՀՀ ԿԲ-ն պատասխանատու է Հայաստանի ֆինանսական համակարգում գործելու ցանկություն ունեցող բոլոր ֆինանսական հաստատությունների լիցենզավորման, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների կատարման վերահսկման համար:

51. Հետևյալ աղյուսակում արտացոլված են Հայաստանում գործող ֆինանսական հաստատությունների յուրաքանչյուր տեսակի ցուցանիշները:

Վիճակագրական աղյուսակ 1. Ֆինանսական համակարգի կառուցվածքը, 31 դեկտեմբեր, 2008 թ.:

	Հաստատությունների թվաքանակը	Ընդհանուր ակտիվներ (միլիոն $)	Գործունեությունը թույլատրողը/գրանցողը և վերահսկողը.
Բանկեր	22	$3,330	ՀՀ ԿԲ

Վարկային կազմակերպություններ	25	$217	ՀՀ ԿԲ
Արժեթղթերի/ներդրումային ընկերություններ	10	$25.2	ՀՀ ԿԲ
Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններ	11	$38.1	ՀՀ ԿԲ
Ապահովագրական բրոքերային ընկերություններ	5	$0.8	ՀՀ ԿԲ
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	11	$13.4	ՀՀ ԿԲ
Արտարժույթի փոխանակման կետեր	288	$1.5	ՀՀ ԿԲ
Արտարժույթի փոխանակման դիլեր-բրոքերներ	2	$0.2	ՀՀ ԿԲ
Կենտրոնական դեպոզիտարիա	1	$0.55	ՀՀ ԿԲ
Գրավատներ	71	$15.6	ՀՀ ԿԲ

* Տվյալները տրամադրել են ՀՀ ԿԲ-ի կողմից:

52. Հետևյալ աղյուսակում ներկայացված են ֆինանսական հաստատությունների այն տեսակները, որոնց թույլատրված ֆինանսական գործունեության տեսակները ներառված են ՖԱԹՖ-ի 40+9 հանձնարարականներում նախատեսված՝ «ֆինանսական հաստատություններ» եզրույթի սահմանման մեջ:

Վիճակագրական աղյուսակ 3. Ֆինանսական գործունեությունը, ըստ ֆինանսական հաստատության տեսակի

Ֆինանսական գործունեության տեսակը (տես 40 հանձնարարականների եզրույթների բացատրական բառարանը)	Ֆինանսական հաստատության որ տեսակն է իրականացնում տվյալ գործունեությունը	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կարգավորող և վերահսկող մարմինը
1. Ավանդների և վերադարձման ենթակա այլ միջոցների ընդունում հանրությունից (ներառում է մասնավոր բանկերը)	1. Բանկեր	1. ՀՀ ԿԲ
2. Վարկավորում (ներառում է սպառողական վարկերը, հիփոթեքային վարկերը, ֆակտորինգը՝ հետադարձ պահանջի իրավունքով կամ առանց դրա, ինչպես նաև առևտրային գործարքների ֆինանսավորումը (այդ թվում՝ բռնագանձումը)	1. Բանկեր 2. Վարկային կազմակերպություններ 3. Գրավատներ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ 3. ՀՀ ԿԲ

3. Ֆինանսական լիզինգ (չի ներառում սպառողական ապրանքների կապակցությամբ իրականացվող ֆինանսական լիզինգը)	1. Բանկեր 2. Վարկային կազմակերպություններ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ
4. Փողի կամ արժեքների փոխանցում (տարածվում է և ֆորմալ, և ոչ ֆորմալ հատվածների ֆինանսական գործունեության, օրինակ՝ դրամական փոխանցումների այլընտրանքային գործունեության նկատմամբ, սակայն չի տարածվում այն ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ֆինանսական հաստատություններին տրամադրում են բացառապես միջոցների փոխանցման համար անհրաժեշտ՝ հաղորդագրությունների համակարգեր կամ օժանդակ այլ համակարգեր)	1. Բանկեր 2. Դրամական փոխանցումներ իրականացնողներ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ
5. Վճարային միջոցների (օրինակ՝ կրեդիտ և դեբետ քարտեր, չեկեր, ճանապարհորդական չեկեր, վճարման հանձնարարականներ և բանկային չեկեր, էլեկտրոնային փող) թողարկում և կառավարում	1. Բանկեր	1. ՀՀ ԿԲ
6. Ֆինանսական երաշխիքներ և պարտավորություններ	1. Բանկեր 2. Վարկային կազմակերպություններ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ
7. Առևտուր, որի առարկաներն են հանդիսանում. (ա) Փողի շուկայի գործիքներ (չեկեր, մուրհակներ, ավանդային սերտիֆիկատներ, ածանցյալներ և այլն), (բ) Արտաժույթ, (գ) Գործիքների արտարժույթ, տոկոսագումար և ինդեքս, (դ) Փոխանցվող արժեթղթեր, (ե) Ապրանքների ֆյուչերսներ	1. Բանկեր 2. Արժեթղթերի/ ներդրումային ընկերություններ 3. Արտարժույթի փոխանակման կետեր (միայն (բ)) 4. Արտարժույթի փոխանակման դիլեր-բրոքերներ (միայն (բ)) 5. Վարկային կազմակերպություններ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ 3. ՀՀ ԿԲ 4. ՀՀ ԿԲ 5. ՀՀ ԿԲ
8. Մասնակցություն արժեթղթերի թողարկումներին և վերջիններիս առնչվող ֆինանսական ծառայությունների մատուցմանը	1. Բանկեր 2. Արժեթղթերի/ ներդրումային ընկերություններ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ
9. Անհատական և կոլեկտիվ պորտֆելների կառավարում	1. Բանկեր (միայն անհատական պորտֆելի կառավարում) 2. Արժեթղթերի/ ներդրումային ընկերություններ (միայն անհատական պորտֆելի կառավարում)	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ
10. Կանխիկի կամ իրացվելի արժեթղթերի անվտանգ պահպանում և կառավարում այլ անձանց անունից	1. Բանկեր 2. Արժեթղթերի/ ներդրումային ընկերություններ 3. Վարկային կազմակերպություններ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ 3. ՀՀ ԿԲ
11. Այլ անձանց անունից միջոցների կամ փողի	1. Բանկեր 2. Վարկային	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ

այլ ներդրումներ, կառավարում կամ տնօրինում	կազմակերպություններ	
12. Կյանքի ապահովագրություն և ներդրումների հետ կապված այլ ապահովագրություն (տարածվում է թե ապահովագրական գործ կազմակերպողների, թե ապահովագրական միջնորդների (գործակալներ և բրոքերներ) նկատմամբ): **Ծանոթագրություն. Հայաստանում կյանքի ապահովագրություն չի կազմակերպվում և չի իրականացվում:**	1. Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններ 2. Ապահովագրական միջնորդներ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ
13. Փողի և արժույթի փոխանակում	1. Բանկեր 2. Արտարժույթի փոխանակման կետեր 3. Վարկային կազմակերպություններ	1. ՀՀ ԿԲ 2. ՀՀ ԿԲ 3. ՀՀ ԿԲ

* Տվյալները տրամադրել են ՀՀ ԿԲ-ի կողմից:

1.4. ՆՈՖԳՏՄ ոլորտի ընդհանուր վերլուծություն

53. ՖԱԹՖ-ի հանձնարարականների եզրույթների բացատրական բառարանում թվարկված բոլոր ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ տարածվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Նշված օրենքով սահմանվում են ՆՈՖԳՏՄ-ների հետևյալ տեսակները. «ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք (անշարժ գույքի գործակալները), նոտարները, փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր աուդիտորները և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, թանկարժեք մետաղների դիլերները, թանկարժեք քարերի դիլերները, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատները, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք, հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք»:

54. ՆՈՖԳՏՄ-ների տեսակների մեծ մասը Հայաստանի Հանրապետությունում ներկա է, բացառությամբ հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց ծառայություններ մատուցող անձանց (իրավաբանական անձանց կազմավորում, անվանական տնօրեններ, անվանատերեր, մասնագիտական հավատարմագրային կառավարչություններ, գործարար հասցեներ և այլն): Օրենքը որևէ կերպ չի արգելում գործունեության այդ տեսակները, սակայն չի ձևավորվել պահանջարկ դրանց ստեղծման նկատմամբ, և չեն հայտնաբերվել Հայաստանում դրանց գործունեության մասին վկայող որևէ ապացույցներ:

55. Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են մոլեխաղերի 131 հաստատություններ, որոնցից 14-ը խաղատներ են, 117-ը՝ շահումով խաղ կազմակերպողներ, որոնց բաժին է ընկնում Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 6.6%-ը:[9] Բոլոր այդ անձինք լիցենզավորվում և վերահսկվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ

[9] Հիմնված է ՀՆԱ-ի 12.07 միլիարդ ԱՄՆ դոլարի հաշվարկային գնահատականի (https:/www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/AM/html) և խղատների և շահումով խաղերի ոլորտի տարեկան շրջանառության մոտ 8 միլիոն ԱՄՆ դոլարի տարեկան շրջանառության՝ ՀՀ իշխանությունների տրամադրած ցուցանիշի վրա:

կառավարության թիվ 895 որոշման համաձայն: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքից զատ, խաղատների նկատմամբ տարածվում են նաև «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի դրույթները:

56. Անշարժ գույքի գործակալները զբաղվում են և բնակելի, և առևտրային անշարժ գույքի ոլորտներով: Նրանց թիվը 215-ն է:[10] Անշարժ գույքի գործակալները լիցենզավորվում և վերահսկվում են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (Կադաստր) կողմից: Գնահատում իրականացնողները ոլորտի ներկայացուցիչների և պետական իրավասու մարմինների կողմից տեղեկացվեցին, որ անշարժ գույքի գործարքների 10 տոկոսից պակաս մասն է կատարվում անշարժ գույքի գործակալների միջոցով, քանի որ մեծամասնությունը մասնավոր գործարքներ են, չնայած որ վերջիններս նույնպես ենթակա են նոտարական հաստատման, ապա՝ նաև Կադաստրում գրանցման: Վերջինս իրականացնում է գույքային իրավունքների գրանցումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն:

57. Կան 30 աուդիտորներ, որոնցից 26-ն աուդիտորական ընկերություններ, 4-ը՝ անկախ աուդիտորներ: Նրանք բոլորը լիցենզավորվում և վերահսկվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքից զատ, աուդիտորական մասնագիտական գործունեության նկատմամբ տարածվում են նաև «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթները:

58. Ինչ վերաբերում է իրավաբանական ծառայություններից, ապա ցանկացած անձ, անկախ մասնագիտական որակավորումից, գիտելիքներից կամ բնութագրից, կարող է հանդես գալ որպես ներկայացուցիչ կամ իրականացնել խորհրդատվություն քաղաքացիական և վարչական վարույթում, եթե նա ունի դատարանում գործը վարելու՝ նոտարական կարգով ձևակերպված լիազորություն (քաղաքացիական դատավարության օրենսգրքի (Քաղ.ԴՕ) 40-րդ հոդված և վարչական դատավարության օրենսգրքի (ՎԴՕ) 21-րդ հոդված): Բացի այդ, Քաղ.ԴՕ-ի համաձայն, ցանկացած անձ կարող է հանդես գալ որպես քրեական դատավարության մասնակիցների (օրինակ՝ տուժողների, քաղաքացիական հայցվորի և այլն) ներկայացուցիչ, բացառությամբ կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության, որի մենաշնորհը վերապահված է փաստաբաններին: Պարզ չէ, թե արդյոք վերոհիշյալ ծառայությունները չեն ներառում որպես խորհրդատու հանդես գալը կամ իրավաբանական ծառայություններ մատուցելը, օրինակ՝ անշարժ գույքի գործարքի շրջանակներում կամ ընկերության ստեղծման գործընթացում, եթե դրանք չեն հանգում դատարանում որպես ներկայացուցիչ հանդես գալուն:

59. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը տարածվում է միայն փաստաբանների նկատմամբ: Փաստաբանները «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն գրանցվում են Փաստաբանների պալատում և առաջնորդվում Փաստաբանի վարքագծի կանոնագրքով և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ: Այնուհանդերձ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը Պալատին իրավունք չի վերապահում վերահսկողական որևէ գործունեություն իրականացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում: Հայաստանում իրավաբանական ծառայությունների մատուցման (ներառյալ դատարանում ներկայացուցչության) բացառիկ իրավունքը վերապահված չէ փաստաբաններին. նման ծառայություններ կարող է մատուցել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

[10] 2009 թ. ապրիլի դրությամբ:

60. Նոտարները, որոնց թիվը ներկայումս 70 է, լիցենզավորվում և վերահսկվում են ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Նրանց նկատմամբ նաև տարածվում են «Նոտարիատի մասին» օրենքի դրույթները: Նոտարները Նոտարական պալատի անդամներ են, և պալատի նոտարական էթիկայի կանոնագիրքը տարածվում է պալատի բոլոր անդամների նկատմամբ:

61. Թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների թվաքանակը հայտնի չէ, և չկա իրավասու որևէ մարմնի կամ ինքնակարգավորվող կազմակերպության (ԻԿԿ) կողմից մոնիտորինգի կամ համապատասխանության ապահովման որևէ համակարգ: Հայաստանի Հանրապետությունում կա ոսկու հանքարդյունաբերություն, չնայած որ վերջինիս ծավալը հնարավոր չէ պարզել, ինչպես նաև ադամանդների վերամշակման արդյունաբերություն: Հայաստանից տարեկան արտահանվող զարդեղենի և թանկարժեք քարերի մոտավոր արժեքը 250 միլիոն ԱՄՆ դոլար է: Այդ ցուցանիշով Հայաստանը տեղ է զբաղեցնում ադամանդներ վերամշակող պետությունների առաջին տասնյակում:[11] Հայաստանը միացել է Քիմբերլեյ գործընթացին,[12] որի նպատակը «կոնֆլիկտային» ադամանդների ապօրինի շրջանառությունը կանխելն է: Հայաստանը պարտավորվել է 2002 թ. հունվարի 1-ից ադամանդի հումքի առևտուր իրականացնել միայն Քիմբերլեյ գործընթացի մասնակից պետությունների հետ, այսինքն՝ փոխադրվող ցանկացած անմշակ ադամանդ պետք է ունենա «Քիմբերլեյ» վկայագիր՝ թողարկված արտահանման պետության կողմից, անկախ այն հանգամանքից, թե վերջինս ինքը ներմուծել է, թե արտահանում է ադամանդը:

62. Ավելին, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը վերջերս հայտարարել է, որ մայրաքաղաք Երևանում կստեղծվի ոսկերչության և ադամանդագործության ազգային բորսա:[13]

63. Մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ, որոնց նկատմամբ տարածվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջները, այն է՝ անկախ իրավաբանները և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունները, անկախ հաշվապահները և հաշվապահական ընկերությունները, թանկարժեք մետաղների դիլերները, թանկարժեք քարերի դիլերները, ներկայումս չեն լիցենզավորվում և չեն վերահսկվում, քանի որ օրենքների կամ այլ իրավական ակտերի տեսքով չեն նախատեսվում լիցենզավորման մասին դրույթներ:

ՆՈՖԳՏՄ	Գործունեությունը՝ ըստ Հայաստանի Հանրապետության օրենքների	Լիցենզավորված անձանց թիվը	Վերահսկող մարմինը
Նոտարներ	• Գործարքների վավերացում (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն), • Ժառանգական գույքի	70	Արդարադատության նախարարություն

[11] *Ակնագործություն և ոսկեգործություն,* Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն http://www.mineconomy.am/en/37

[12] Հայաստանի Հանրապետության կառավարության 19.12.2002 թիվ 2081-Ն որոշումը «Քիմբերլեյ գործընթացին ՀՀ կառավարության միանալու մասին»:

[13] *The World Federation of Diamond Bourses supports Armenian initiative to establish diamond Bourse.* DIB Limited, July 6 2009. http://www.wfdb.com/index.php?option=com_content&task=view&id=178

	պահպանության համար միջոցների ձեռնարկում, • Ժառանգության իրավունքի վկայագրերի տրամադրում, • Ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագրերի տրամադրում, • Ներկայացվող փաստաթղթի պայմանների հաստատում, • Ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումների, հայտարարությունների կամ այլ փաստաթղթերի փոխանցում այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների, • Դրամական գումարի կամ արժեթղթերի դեպոզիտ ընդունում, պահպանում, հանձնում կամ վերադարձում • Փաստաթղթերի ի պահ ընդունում, • Ապացույցների ապահովում, • Ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրության վավերացում, • Իրավական օգնություն, • Պարզաբանում կամ իրավական եզրակացություն, • Գործարքների կամ իրավական այլ փաստաթղթերի նախագծերի կազմում, • Իրավական և այլ նոտարական ծառայություններ:		
Փաստաբաններ	• Խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը, նրանց	855	Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ

	իրավունքների և պարտավորությունների, դատական համակարգի՝ վստահորդի իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ, • Իրավաբանական փաստաթղթերի ուսումնասիրում և կազմում, • Իրավաբանական ներկայացուցչություն, ներառյալ դատական ներկայացուցչություն, • Քրեական գործերով պաշտպանություն, • Իրավաբանական օգնության ցուցաբերում, բացառությամբ երբ դա արգելված է օրենքով, • Քաղաքացիական և վարչական իրավախախտումների գործերով դատավարությունում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչություն:		
Իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետներ	• ՀՀ օրենքներով գործունեության կոնկրետ տեսակներ նախատեսված չեն:	Հայտնի չէ	Չկա
Անկախ աուդիտորներ և աուդիտորական ընկերություններ	• Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության անկախ ստուգում, որի արդյունքում տրամադրվում է աուդիտորական եզրակացություն, • Հաշվապահական հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կազմում, • Հաշվապահական հաշվառման, տնտեսագիտության, ֆինանսների և աուդիտի գծով	29[14]	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

[14] Նրանցից 24-ն իրավաբանական անձինք են, 5-ը՝ ֆիզիկական:

	ուսուցանում, • Ակտիվների և պարտավորությունների գնահատում, • Հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների պլանավորում ու հաշվարկում, • Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, • Հաշվապահական, տնտեսագիտական, ֆինանսական, հարկային, կառավարչական և իրավաբանական խորհրդատվություն, • Գործարար (բիզնես) պլանի կազմում, • Հաշվապահական հաշվառմանը, աուդիտորական գործունեությանը, ֆինանսներին, տնտեսագիտությանը, հարկերին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին առնչվող գործունեության հետ կապված մասնագիտական փորձաքննության իրականացում, • Հաշվապահական հաշվառմանը, աուդիտորական գործունեությանը, ֆինանսներին, հարկերին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին առնչվող գործունեության հետ կապված հետազոտություններ/ հրատարակություն:		
Անկախ հաշվապահներ և հաշվապահական ընկերություններ	• Հաշվապահական հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կազմում, • Տնտեսագիտության, ֆինանսների և աուդիտի ոլորտներում հաշվապահական հաշվառման ուսուցանում, • Ակտիվների և	Հայտնի չէ	Չկա

	պարտավորությունների գնահատում, • Հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների պլանավորում ու հաշվարկում, • Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, • Հաշվապահական, տնտեսագիտական, ֆինանսական, հարկային, կառավարչական և իրավաբանական խորհրդատվություն, • Գործարար (բիզնես) պլանի կազմում, • Հաշվապահական հաշվառմանը, աուդիտորական գործունեությանը, ֆինանսներին, հարկերին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին առնչվող գործունեության հետ կապված մասնագիտական փորձաքննության իրականացում, • Հաշվապահական հաշվառմանը, աուդիտորական գործունեությանը, ֆինանսներին, հարկերին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին առնչվող գործունեության հետ կապված հետազոտություններ/ հրատարակություն, • Սխալների և բացթողումների ընդգծում, • Հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների կազմման պահանջների խախտումների բացահայտում, • Կոնկրետ խնդիրների վերլուծություն, • Սխալների և բացթողումների վերացում, համապատասխան դեպքերում՝ պայմանագրերով նախատեսված կարգով կամ ըստ		

	անհրաժեշտության:		
Շահումով խաղ կազմակերպող անձինք և խաղատներ, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք	• Շահումով խաղի իրականացման համար սարքավորումների տեղադրում ու շահագործում կամ շահումով խաղին խաղացողների մասնակցության համար այլ կերպ հնարավորության ստեղծում:	131[15]	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
Անշարժ գույքի գործակալներ/ գործա-կալություններ	• Անշարժ գույքի շուկայի գործարքների առևտրային միջնորդություն, • Անշարժ գույքի գործարքների վերաբերյալ խորհրդատվություն, • Անշարժ գույքի շուկայի և գների ուսումնասիրություն և դրանց վերաբերյալ խորհրդատվություն, • Անշարժ գույքի հրապարակային աճուրդների կազմակերպում և իրականացում, • Այլ վճարովի ծառայություններ անշարժ գույքի շուկայում:	215[16]	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
Տրաստներ, իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցողներ	• Օրենքներով և այլ իրավական ակտերով որևէ գործունեություն նկարագրված չէ:	Չկա	Չկա
Թանկարժեք մետաղների դիլերներ, թանկարժեք քարերի դիլերներ	• Թանկարժեք մետաղների մանրածախ և մեծածախ առուվաճառք, • Թանկարժեք մետաղների հարգադրոշմում, • Թանկարժեք մետաղների հարգորոշում, • Թանկարժեք մետաղների զտարկում, • Բանկային ոսկու և	Հայտնի չէ	Չկա

[15] Նրանցից 24-ն իրավաբանական անձինք են, 5-ը՝ ֆիզիկական:

[16] 2009 թ. ապրիլի դրությամբ:

	ստանդարտացված ձուլակտորների արտադրություն:		

1.5. Իրավաբանական անձանց և կազմավորումների նկատմամբ տարածվող առևտրային օրենքների և մեխանիզմների ընդհանուր վերլուծություն

64. Քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածով «իրավաբանական անձի» հասկացությունը սահմանվում է որպես «այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող»:

65. Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանվում են իրավաբանական անձի երկու տեսակները՝ առևտրային և ոչ առևտրային: Առևտրային իրավաբանական անձինք իրենց գործունեությունը ծավալում են հիմնականում շահույթ ստանալու նպատակով, մինչդեռ ոչ առևտրային իրավաբանական անձինք չունեն շահույթ ստանալու նպատակ և ստացված շահույթը չեն բաշխում մասնակիցների միջև, այլ՝ կարող են առևտրային գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է իրենց ոչ առևտրային նպատակների իրականացմանը և համապատասխանում այդ նպատակներին: Բացի այդ, «Հիմնադրամների մասին» օրենքով նախատեսվում է հիմնադրամների ստեղծման հնարավորությունը:

66. Քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և 56-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Հիմնադրամների մասին» օրենքի 3-րդ հոդվածով՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 3-րդ հոդվածի հետ միասին վերցված, նախատեսվում է, որ իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է Պետական ռեգիստրում նրա գրանցման պահից: Պետական ռեգիստրում առկա բոլոր տեղեկությունները հասանելի են հանրությանը «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն:

67. Պետական ռեգիստրը տեղեկություններ է վարում բոլոր իրավաբանական անձանց ղեկավարության վերաբերյալ:

68. Հայաստանի օրենսդրությամբ արգելված չէ անվանական հիմնադիրներ կամ անվանական տնօրեններ ունենալը: Այնուհանդերձ, անվանատերերը թույլատրված են և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով, և «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով, որոնցով նրանք սահմանվում են որպես «անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը»: Այնուհանդերձ, կառավարության որոշման համաձայն, որպես անվանատեր հանդես գալու իրավունքը վերապահված է միայն մասնագիտացված միջնորդներին, որոնք «ՓԻ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն պարտավոր են ձեռք բերել, ստուգել և պահպանել տեղեկություններ իրական շահառուների մասին:

69. Բաժնետիրական ընկերություններն իրավաբանական անձի միակ տեսակն են, որն իրավունք ունի բաժնետոմսեր թողարկել: «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 39-րդ հոդվածով պահանջվում է բաժնետոմսերի հավաստագիր թողարկել բաժնետիրոջ անունով, որն ըստ էության արգելում է ըստ ներկայացնողի բաժնետոմսերի թողարկումը: Ըստ ներկայացնողի բաժնետոմսերը Հայաստանի օրենսդրությամբ կարծես

թույլատրված չեն, և իշխանությունների տրամադրած տեղեկությունների համաձայն դրանք պրակտիկայում ևս գոյություն չունեն:

Առևտրային կազմակերպությունները.

70. Առևտրային ընկերությունները կարող են ստեղծվել (ա) տնտեսական ընկերակցությունների, (բ) տնտեսական ընկերությունների կամ (գ) առևտրային կոոպերատիվների ձևով:

71. Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ձևով: Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով: Ցանկացած տնտեսական ընկերակցության և ընկերության կապիտալը բաժանված է իրենց հիմնադիրների բաժնեմասերի: Ընկերակցության կամ ընկերության որևէ ձևի ստեղծման համար պահանջվում է առնվազն մեկ հիմնադիր: Տնտեսական ընկերությունների հիմնադիրներ և վստահության վրա հիմնված ընկերակցության մասնակից ավանդատուներ (բայց ոչ՝ լիակատար ընկերներ) կարող են լինել նաև իրավաբանական անձինք, մինչդեռ լիակատար ընկերակցության մասնակիցներ և վստահության վրա հիմնված ընկերակցության ընկերներ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք և առևտրային կազմակերպությունները:

72. Ընկերակցությունների ձևերից յուրաքանչյուրի կառավարումն իրականացվում է բացառապես լիակատար ընկերների կողմից: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կառավարման ձևը որոշվում է մասնակիցների ժողովի կողմից, ընդ որում՝ կառավարման մարմնի կազմում պետք է լինի առնվազն մեկ անձ: Բաժնետիրական ընկերությունները և կոոպերատիվների բոլոր ձևերը կառավարվում են բաժնետերերի կամ անդամների ընդհանուր ժողովի կողմից, ովքեր իրավասու են ընտրել տնօրենների խորհուրդ: Հայաստանի օրենսդրությամբ թույլատրվում են կորպորատիվ տնօրենները:

Ոչ առևտրային կազմակերպությունները.

73. Ոչ առևտրային կազմակերպություններն են (1) հասարակական կազմակերպությունները, (2) հիմնադրամները, (3) իրավաբանական անձանց միությունները և (4) ոչ առևտրային կոոպերատիվները:

74. Հասարակական կազմակերպությունները քաղաքացիների կամավոր միավորումներ են, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար: Հասարակական կազմակերպությունների նկատմամբ տարածվում են քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր դրույթները, ինչպես նաև 122-րդ հոդվածը: Իրավաբանական անձանց միությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքի 125-127-րդ հոդվածներով: Նրանք ստեղծվում են առևտրային կազմակերպությունների կողմից իրենց ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով:

Հիմնադրամները.

75. Հիմնադրամները կարգավորվում են «Հիմնադրամների մասին» օրենքով, ինչպես նաև քաղաքացիական օրենսգրքի 123-րդ և 124-րդ հոդվածներով:

76. Քաղաքացիական օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն, հիմնադրամ է համարվում «քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ»: «Հիմնադրամների մասին» օրենքի 3-րդ հոդվածով նաև նախատեսվում է, որ հիմնադրամը համարվում է ոչ առևտրային կազմակերպություն, իրավաբանական անձ, և ունի հիմնադրի գույքից առանձնացված գույք:

77. Հիմնադրամ կարող է ստեղծվել մեկ անձի, այդ թվում՝ ցանկացած իրավաբանական անձի կողմից, գրավոր որոշմամբ կամ կտակի հիման վրա, կամ երկու կամ ավելի հիմնադիրների կողմից՝ գրավոր պայմանագրով:

78. «Հիմնադրամների մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, հիմնադրամը կարող է ունենալ հնարավոր և փաստացի շահառուներ: Շահառուներն այն անձինք են, որոնց օգտին կատարվել են որոշակի վճարումներ, մատուցվել ծառայություններ կամ նրանց փոխանցվել հիմնադրամի գույքի որոշ մասը: Մինչև վերջերս «Հիմնադրամների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետը պարունակում էր նորմ, որով հիմնադրամի հիմնադիրներին արգելվում էր լինել շահառուներ: Այնուհանդերձ, 2007 թ. փետրվարին այդ դրույթը փոփոխվեց, ներկայումս հիմնադիրները կարող են լինել հիմնադրամի շահառուներ: Պետական ռեգիստրի ներկայացուցիչները նշեցին, որ օրենքի այդ փոփոխության արդյունքում հիմնադրամների գրանցումների թիվը չի ավելացել:

79. Չնայած որ չի պահանջվում հիմնադրամի կանոնադրության մեջ նշել շահառուների անունները կամ նրանց մասին այլ տեղեկություններ, կանոնադրությունը պետք է պարունակի շահառուների խմբերի ընդհանուր նկարագրություն: Բացի այդ, հաշվի առնելով, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.2-րդ հոդվածով 2008 թվականից ի վեր պահանջվում է Պետական ռեգիստր ներկայացնել հիմնադրամի շահառուների անունները:

80. «Հիմնադրամների մասին» օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, հիմնադրամը պետք է ունենա առնվազն հետևյալ մարմինները. հոգաբարձուների խորհուրդ (հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինն է, որի քանակական կազմը չի կարող պակաս լինել 3 անդամից) և հիմնադրամի կառավարիչը կամ գործադիր տնօրենը (իրականացնում է հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումը): Հիմնադրամի հիմնադիրները կարող են ստանձնել հիմնադրամի խորհրդի անդամի կամ կառավարչի լիազորությունները: Այնուհանդերձ, հիմնադրամի շահառուների փոփոխության դեպքում ցանկացած պարագայում պահանջվում է դատարանի որոշում: Հիմնադրամներին չի թույլատրվում բաժնետոմսեր թողարկել:

81. 2009 թ. մարտի 2-ի դրությամբ Հայաստանում գրանցված էր մոտ 56,000 իրավաբանական անձ, որոնց մոտ 80%-ն առևտրային կազմակերպություններ էին, և միայն մոտ 20%-ն էին հիմնադրամներ կամ ոչ առևտրային կազմակերպություններ:

Լիակատար ընկերա-կցություն	Վստահության վրա հիմնված ընկերա-կցություն	Սահմանափակ պատասխանա-տվությամբ ընկերություն	Լրացուցիչ պատասխանա-տվությամբ ընկերություն	Բաժնե-տիրական ընկերություն	Առևտրային կոոպերատիվ	Հիմնադրամ (2007 թ. դրությամբ)
1175	8	38.975	Չկան	4139	5063	273

1.6. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ռազմավարության ընդհանուր վերլուծություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարությունները և գերակայությունները

82. Չնայած որ ՀՀ կառավարությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարություն որպես այդպիսին չի հրապարակել, դրևորվել է քաղաքական կամք և ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը (Միջգերատեսչական հանձնաժողով): Միջգերատեսչական հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ Նախագահի կողմից: Հանձնաժողովի լիազորությունները հիմնականում վերաբերում են ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարին և դրանց մակարդակի իջեցմանը, այդ թվում, սակայն ոչ միայն, ՓԼ և ԱՖ դեմ պայքարը: Միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ներկայացված են ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ոլորտներին առնչվող ներպետական բոլոր իրավասու մարմինները:

83. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության իշխանությունների հիմնական նպատակներն են.

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացնել միասնական համագործակցային ազգային քաղաքականություն,
- Միջազգային ստանդարտներին համահունչ ձևավորել կիրարկելի և արդյունավետ իրավական դաշտ,
- Ապահովել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հավասար և ոչ խտրական իրավական պահանջների կիրառությունը պետական իրավասու մարմինների և մասնավոր հատվածի կողմից,
- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում պետական իրավասու մարմինների և մասնավոր հատվածի գործունեությունը և կարողությունները զարգացնելու նպատակով իրականացնել կրթություն և ուսուցանում:

84. Ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածներն ընդհանուր առմամբ պասիվորեն են մասնակցել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ ռազմավարության մշակմանը: Չնայած որ պայքարի ռեժիմի որոշ բաղադրիչների շուրջ ծավալվում են խորհրդակցություններ, Միջգերատեսչական հանձնաժողովում ներկայացվածությունը և քաղաքականության մշակման գործընթացում ներգրավվածությունը սահմանափակվում է բանկային համակարգի ներկայացուցչությամբ՝ ի դեմս Հայաստանի բանկերի միության:

85. Իշխանությունները գնահատողներին հայտնեցին, որ հիմնական խնդիրներն են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կարգավորող նորմատիվային իրավական ակտերի լիարժեք կիրարկման ապահովումը, ֆինանսական հաստատությունների ներսում ՓԼ/ԱՖ կանխարգելման՝ ռիսկայնության վրա հիմնված քաղաքականության ձևավորումը, ոչ ֆինանսական հաստատությունների և հասարակայնության լայն խավերի շրջանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հիմնախնդիրների մասին իրազեկվածության ապահովումը, ինչպես նաև ՓԼ/ԱՖ գործերը քննելու և լուծելու՝ իրավապահ և դատական մարմինների կարողությունների զարգացումը:

86. Հայաստանի Հանրապետությունում ներկայումս դիտարկվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մի շարք նշանակալից ծրագրեր և նախաձեռնություններ ապագայի կտրվածքով, ներառյալ, ի թիվս այլոց, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միասնական տեղեկատվական համակարգի ձևավորումը, ֆինանսական միջնորդության հատվածի ընդլայնման և կանխիկով գործարքների սահմանափակման ճանապարհով ՓԼ ռիսկերի կրճատումը, ՓԼ/ԱՖ ոլորտում ներպետական տիպաբանությունների ձևակերպումը և այդ տեղեկությունների տարածումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի բոլոր մասնակիցներին, արդյունավետ վերահսկողության միջոցով ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգերի ձևավորումը ֆինանսական հաստատությունների ներսում, ՓԼ/ԱՖ կանխարգելման մեխանիզմների վերաբերյալ ոչ ֆինանսական հաստատությունների հասարակայնության լայն խավերի իրազեկվածության բարձրացումը և նմանօրինակ մեխանիզմների կիրառությունը, միջազգային հետաքննական մարմինների լավագույն պրակտիկայի հիման վրա ՖԴԿ-ի վերլուծական կարողությունների կատարելագործումը և ՓԼ/ԱՖ գործերը քննելու և լուծելու՝ իրավապահ և դատական մարմինների կարողությունների և մեխանիզմների զարգացումը, կայացումը և արդյունավետ գործնական կիրառությունը:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կառուցակարգային համակարգը

<u>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային համակարգումը</u>

87. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հիմնախնդիրների քննարկման հիմնական հարթակը Հայաստանի Հանրապետությունում Միջգերատեսչական հանձնաժողովն է:[17] Հանձնաժողովը և խորհրդակցական, և քաղաքականություն մշակող մարմին է, որի նիստերը գումարվում են տարին առնվազն երկու անգամ: Հանձնաժողովի կազմում ներկայացված են կարգավորող մարմինները, նախարարությունները (մասնավորապես՝ արդարադատության և ֆինանսների), իրավապահ մարմինները, մասնավոր հատվածը, թեպետ միայն Բանկերի միության ներկայացվածությամբ, սակայն անդամների թվում չկան տարբեր մասնագիտական ոլորտների ներկայացուցիչներ: Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահը ՀՀ ԿԲ-ի նախագահն է:

88. Միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը հիմնականում ուղղված է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում տարբեր պետական մարմինների համագործակցությանը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ռազմավարական հիմնախնդիրներին, ուսումնական ծրագրերի անհրաժեշտությանը և անդամների կողմից արծարծվող հարցերին: Հանձնաժողովին օժանդակում է աշխատանքային խումբը, որը քննարկում է ընթացիկ խնդիրները, եզրակացություններ ներկայացնում առաջ քաշվող թեմաների վերաբերյալ և մշակում Հանձնաժողովի որոշումների կատարման ընթացակարգերը: Հանձնաժողովի աշխատանքը որպես քարտուղար համակարգում է ՖԴԿ-ն:

89. Հանձնաժողովը քաղաքականության որոշումների և արդյունքների մասով հաշվետու է ՀՀ Նախագահին:

<u>Նախարարությունները</u>

[17] Ստեղծվել է Նախագահի 2002 թ. մարտի 21-ի ՆԿ-1075 կարգադրությամբ և գործում է Միջգերատեսչական հանձնաժողովի կանոնակարգի համաձայն:

Ֆինանսների նախարարություն

90. Ֆինանսների նախարարությունը (ՖՆ) մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը պետական եկամուտների ձևավորման և պետական միջոցների կառավարման մասով: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՖՆ հիմնական գործառույթները ներառում են անդամությունը Միջգերատեսչական հանձնաժողովին, աուդիտորական մասնավոր ընկերությունների, աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, ինչպես նաև շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների լիցենզավորումը և գործունեության վերահսկողությունը:

Արդարադատության նախարարություն

91. Արդարադատության նախարարության (ԱՆ) կազմի մեջ են մտնում կառուցվածքային այնպիսի ստորաբաժանումներ, ինչպիսիք են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը և Քրեակատարողական ծառայությունը: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ԱՆ հիմնական լիազորությունները և նպատակները ներառում են անդամությունը Միջգերատեսչական հանձնաժողովին, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում օրենսդրական բոլոր նախաձեռնությունների քննարկումների կազմակերպումը:

92. Բացի այդ, ԱՆ-ն իրավասու է անցկացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող բոլոր գերատեսչական նորմատիվային ակտերի (օրինակ՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունվող նորմատիվային կանոնակարգերի) իրավական փորձաքննությունը և պետական գրանցումը: ԱՆ-ն նաև նշանակում է նոտարներին և վերահսկում նրանց գործունեությունը: ԱՆ-ն նաև օժտված է ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը վերահսկելու գործառույթներով:

Արտաքին գործերի նախարարություն

93. Արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ), ՀՀ Նախագահի ընդհանուր ուղղորդման ներքո, մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունն արտաքին գործերի բնագավառում, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է հյուպատոսական ծառայությունները:

94. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին ԱԳՆ-ի մասնակցությունը ներառում է անդամությունը Միջգերատեսչական հանձնաժողովին, որից զատ ԱԳՆ-ն համակարգում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ միջազգային պայմանագրերի կնքումը և իմպլեմենտացումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գործող միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամության համակարգումը, ինչպես նաև ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի՝ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված և պարտադիր կատարման ենթակա բանաձևերի կանոնավոր կերպով ներկայացումն իրավասու մարմիններին:

95. ՖԴԿ-ն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կարգով խորհրդակցում է ԱԳՆ-ի հետ այն պետությունների կամ տարածքների ցանկի առնչությամբ, որոնցում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները ներդրված չեն կամ հավուր պատշաճի չեն կիրառվում:

Քրեական դատավարության և օպերատիվ մարմինները

Ֆինանսական դիտարկումների կենտրոնը

96. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ)[18] Հայաստանի Հանրապետության ֆինանսական հետախուզության մարմինն է, որը գործում է որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի կենտրոնական մարմին: ՖԴԿ-ի կանոնադրությունը, որը հաստատվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից[19], սահմանում է ՖԴԿ-ի նպատակները և գործառույթները, կառուցվածքը, ֆինանսավորումը և ՖԴԿ-ին առնչվող այլ խնդիրներ: ՖԴԿ-ն դարձել է «Էգմոնտ» խմբի անդամ 2007 թվականին:

97. ՖԴԿ-ն գործում է եռամյա ռազմավարական ծրագրերի շրջափուլով. ընթացիկ ռազմավարական ծրագրով հստակորեն նախատեսված են ՖԴԿ-ի նպատակները, որոնք ՓԼ և ԱՖ դեմ պայքարի բնագավառում հիմնականում առնչվում են ՖԴԿ-ի կառուցակարգային և գործառնական կարողությունների զարգացմանը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հանրային իրազեկության բարձրացմանը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներպետական և միջազգային համագործակցության ամրապնդմանը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում օրենսդրական պահանջների ոչ խտրական կիրառության ապահովումը:

Իրավապահ մարմինները

Ազգային անվտանգության ծառայությունը

98. Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունն ազգային անվտանգության բնագավառում և ղեկավարում է ազգային անվտանգության մարմինների գործունեությունը: Ծառայությունը կազմված է կենտրոնական ապարատից, մարզային մարմիններից, սահմանապահ ուժերից, ուսուցման կենտրոններից, հատուկ նշանակության միավորներից և այլ ստորաբաժանումներից: ՖԴԿ-ի և ԱԱԾ-ի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր:

99. Ազգային անվտանգության ծառայությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարին ներգրավված է հետևյալ կերպ.

- Ծառայության պետի տեղակալը Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ է,
- Ծառայությունը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 8-րդ հոդվածով լիազորված է օպերատիվ-հետախուզական գործառույթներ կատարել, որը նշանակում է, որ Ծառայությունը կարող է գործ ունենալ նաև ՓԼ/ԱՖ գործերի հետ,
- Ծառայությունը ՔԴՕ-ի 56-րդ հոդվածի համաձայն նաև հետաքննության մարմին է, որը կարող է ներգրավված լինել նաև ՓԼ/ԱՖ գործերի քննությանը,
- Քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն, ՔՕ-ի 190-րդ և 217.1-րդ հոդվածներով նախատեսված՝ համապատասխանաբար ՓԼ և ԱՖ հանցագործությունների նախաքննությունն իրականացնում են ԱԱԾ-ի քննիչները:

[18] Ստեղծվել է 2004 թ. դեկտեմբերի 14-ին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին ՀՀ նախկին օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

[19] 2005 թ. մարտի 3-ի թիվ 97-Ա որոշում:

Ոստիկանությունը

100. Ոստիկանությունը, որն իր իրավասությունների համաձայն մշակում և իշրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը հանցավորության և իրավախախտումների դեմ պայքարի ոլորտում, ապահավում է հասարակական կարգը և անվտանգությունը: Ոստիկանությունն իր լիազորություններն իրականացնում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի համաձայն: Ոստիկանությունը կազմված է կենտրոնական ապարատից և վերջինիս կառուցվածքային ստորաբաժանումներից, Երևան քաղաքի ոստիկանության բաժիններից, մարզային ոստիկանության բաժիններից և բաժանմունքներից:

101. Ոստիկանությունն այլ մարմինների նման անդամակցում է Միջգերատեսչական հանձնաժողովին և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 8-րդ հոդվածով լիազորված է օպերատիվ-հետախուզական գործառույթներ կատարել. ուստի, ոստիկանությունը նույնպես կարող է առնչություն ունենալ ՓԼ/ԱՖ գործերին: Բացի այդ, ոստիկանությունը ՔԴՕ-ի 56-րդ հոդվածի համաձայն նաև հետաքննության մարմին է, որը կարող է ներգրավված լինել նաև ՓԼ/ԱՖ գործերի քննությանը:

102. Ոստիկանությունը և ՖԴԿ-ն կնքել են փոխըմբռնման հուշագիր (ՓՀ), որով կարգավորվում են ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ոլորտում այդ մարմինների պարտավորությունները:

Դատախազությունը

103. ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որի մեջ մտնում է գլխավոր դատախազությունը, զինվորական կենտրոնական դատախազությունը, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազությունները, կայազորների զինվորական դատախազությունները:

«Դատախազության մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, դատախազությունը.

- հարուցում է քրեական հետապնդում,
- հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ,
- դատարանում պաշտպանում է մեղադրանքը,
- պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան,
- բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,
- հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

104. Դատախազությունը ներգրավված է ՓԼ/ԱՖ դեմ պայքարին՝ անդամակցելով Միջգերատեսչական հանձնաժողովին, իրականացնելով հսկողություն ՓԼ/ԱՖ գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, և դատարանում պաշտպանելով քրեական մեղադրանքը ՓԼ/ԱՖ հետ կապված հանցագործությունների գործերով: Բացի այդ, դատախազությունը և ՖԴԿ-ն կնքել են ՓՀ, որով կարգավորվում են ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ոլորտում այդ մարմինների պարտավորությունները:

Պետական եկամուտների կոմիտե

105. Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) մաքսային ծառայությունը կարևոր դեր կարող է խաղալ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների, այդ թվում՝ սահմանների հսկողության և, մասնավորապես, կանխիկի կամ «ըստ ներկայացնողի» (վճարային) գործիքների անդրսահմանային տեղափոխման կապակցությամբ միջոցներ ձեռնարկելու առումներով:

106. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային մարմինները 2008 թ. հունիսին միավորվեցին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կազմում: ՊԵԿ-ը պետական եկամուտների (հարկեր, մաքսատուրքեր և այլն) հավաքագրման վարչարարության և հսկողության պատասխանատուն է: ՊԵԿ-ը հանդիսանում է նաև իրավապահ մարմին, որը կարող է իր համապատասխան ստորաբաժանումների միջոցով զբաղվել օպերատիվ-հետախուզական գործունեությամբ, հետաքննությամբ և նախաքննությամբ: ՊԵԿ-ը ներգրավված է ՓԼ/ԱՖ դեմ պայքարին՝ անդամակցելով Միջգերատեսչական հանձնաժողովին ի դեմս թե հարկային, թե մաքսային բնագավառների ներկայացուցիչների: ՊԵԿ-ն ունի ակտիվ ՓՀ ՖԴԿ-ի հետ, որի նպատակը տեղեկատվության փոխանակման հեշտացումն է և կողմերի պարտավորությունների կարգավորումը:

107. ՓԼ, ԱՖ կամ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի աշխատանքային խմբեր կամ հանձնաժողովներ:

108. ՀՀ Նախագահի 2004 թ. հունիսի 1 թիվ ՆՀ-100-Ն հրամանագրով ստեղծվել է ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ: Խորհուրդն ի պաշտոնե նախագահում է ՀՀ վարչապետը: Խորհրդի անդամ են կոռուպցիայի դեմ պայքարի մեջ ներգրավված բոլոր գերատեսչությունների ղեկավարները: Բացի այդ, Խորհրդին կից գործում է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով:

Ֆինանսական ոլորտի մարմինները

Կենտրոնական բանկը

109. «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ ԿԲ-ն լիցենզավորում է բոլոր ֆինանսական հաստատությունները (ներառյալ բանկեր, վարկային կազմակերպություններ, արժութային գործառնություններ իրականացնող դիլերներ-բրոքերներ, արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ, դրամական (փողի) փոխանցումներ իրականացնողներ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված կարգով ներդրումային ծառայություններ մատուցողներ, կարգավորվող շուկայի արժեթղթերի Կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական (ներառյալ վերաապահովագրական) ընկերություններ և ապահովագրական (ներառյալ վերաապահովագրական) բրոքերներ, գրավատներ), կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը:

110. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի լիազոր մարմինը ՀՀ ԿԲ-ն է: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննում է իրավաբանական վարչության (որը պատասխանատու է ֆինանսական հաստատությունների լիցենզավորման համար) և ֆինանսական վերահսկողության (որը պատասխանատու է ֆինանսական հաստատությունների վերահսկողության համար) առաջարկությունները լիցենզավորման և վերահսկողության գործողությունների, այդ թվում՝

պատժամիջոցների վերաբերյալ, որի արդյունքների հիման վրա ՀՀ ԿԲ-ի խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում:

111. Ավելին, կենտրոնացված պահառուի, կենտրոնացված ռեեստրավարի և հրապարակային առուվաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորի գործառույթները ՀՀ-ում վերապահված են Կենտրոնական դեպոզիտարիային, որը «ՓԻ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն համարվում է հաշվետվություն տրամադրող անձ: ՀՀ-ում արժեթղթերի շուկան կարգավորվում է ֆոնդային բորսայի կողմից: Ֆոնդային բորսային մասնակցելու իրավունք ունեն միայն ներդրումային ծառայությունները մատուցող անձինք:

ՆՈՖԳՏՄ-ներ և այլ խնդիրներ

Ֆինանսների նախարարություն

112. ՖՆ-ն համապատասխան վարչությունների միջոցով իրականացնում է շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, անհատ աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց լիցենզավորումը և վերահսկողությունը:

Արդարադատության նախարարություն

113. Նոտարներին նշանակում և նրանց գործունեությունը վերահսկում է ԱՆ-ն:

Անշարժ գույքի կադաստր

114. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն լիազորված է՝ լիցենզավորելու անշարժ գույքի գործակալներին և գործակալություններին և վերահսկելու նրանց գործունեությունը:

ՀՀ փաստաբանների պալատ

115. Պալատն իրականացնում է հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող փաստաբանների մասնագիտական որակավորումը: Պալատի գործունեությունը կարգավորվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով:

Այլ ՆՈՖԳՏՄ-ներ

116. Հետևյալ ՆՈՖԳՏՄ-ների համար ՀՀ օրենքներով նախատեսված չեն լիցենզավորման կամ վերահսկողության հատուկ ընթացակարգեր.

- Իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք,
- Հաշվապահական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք,
- Թանկարժեք մետաղների/քարերի դիլերներ:

Ձեռնարկությունների և այլ իրավաբանական անձանց ռեգիստրը

117. ՀՀ-ում բոլոր իրավաբանական անձինք[20] պարտավոր են գրանցվել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Վերջինս կազմված է կենտրոնական մարմնից և մարզային ստորաբաժանումներից:

<u>Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններին առնչվող մեխանիզմները</u>

118. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, հասարակական միավորումների, հիմնադրամների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց միությունների պետական գրանցումն իրականացնում է պետական ռեգիստրի կենտրոնական մարմինը: « մասին» օրենքի 18-րդ հոդվածի, «Հիմնադրամների մասին» օրենքի 38-րդ հոդվածի և «Բարեգործության մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող վերոհիշյալ կազմակերպությունների լիցենզավորումն իրականացնում է լիազորված մարմինը՝ արդարադատության նախարարությունը: Բացի այդ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող բոլոր կազմակերպությունները պարտավոր են իրենց ֆինանսական շրջանառության մասին հաշվետվություններ ներկայացնել հարկային մարմիններին:

Այլ գերատեսչություններ և մարմիններ

119. Ֆինանսական հաստատությունների ոլորտին առնչվող ինքնակարգավորման մարմիններն են.

- Հայաստանի Հանրապետության բանկերի միությունը, որի նախագահը Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ է,
- Վարկային կազմակերպությունների միությունը,
- Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիան,
- Արժեթղթերի Կենտրոնական դեպոզիտարիան,
- Ֆոնդային բորսան:

Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառությունը

120. Հայաստանում դեռևս չի իրականացվել ֆինանսական և այլ ոլորտներում առկա ՓԼ և ԱՖ ռիսկերի և վտանգների համակարգային գնահատում, սակայն ֆինանսական հաստատությունների համար ընդունվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարը կանոնակարգող իրավական ակտեր, որոնք ներառում են ռիսկայնության վրա հիմնված բաղկացուցիչներ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության համար, այդ թվում՝ հավելյալ պատշաճ ուսումնասիրություն ավելի բարձր ռիսկային ոլորտների և հաճախորդի ուսումնասիրության նվազեցված կամ պարզեցված միջոցառումներ ցածր ռիսկային ոլորտների համար: Իշխանությունները, մասնավորապես՝ ՀՀ ԿԲ-ն, վերջերս ընդունել են ֆինանսական

[20] Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական կազմավորումների գոյություն ունեցող միակ կազմակերպաիրավական ձևն իրավաբանական անձն է: Ստացվում է, որ ցանկացած իրավաբանական կազմավորում պետք է նախքան գործունեություն ծավալելը գրանցվի որպես իրավաբանական անձ:

ոլորտում կանխարգելիչ միջոցների իրականացման՝ ռիսկայնության վրա հիմնված մոտեցում: Այնուհանդերձ, վերահսկողության գործիքները, այդ թվում՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների վերահսկողության ընթացակարգերը չեն թարմացվել՝ արտացոլելու ռիսկայնության վրա հիմնված նոր մոտեցումը և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2008 թ. օրենքի պահանջները: Ավելին, չնայած որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսվում է որոշ հոդվածների չկիրառությունը 10-ից պակաս աշխատակից ունեցող ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի կիրառության շրջանակի այդօրինակ սահմանափակումը հիմնավորելու համար ՓԼ/ԱՖ ռիսկերի ֆորմալ ոլորտային ուսումնասիրություններ չեն անցկացվել: Հիմնական հիմնավորումն, ըստ երևույթին, հաստատությունների հարաբերական մեծությունն է (ըստ ակտիվների մեծության):

ԱՄՀ/ՀԲ նախորդ գնահատումից կամ փոխադարձ գնահատումից ի վեր արձանագրված առաջընթացը

121. 2004 թ. հուլիսի 9-ին ՄԱՆԻՎԱԼ-ի լիագումար նիստում հաստատվեցին ՀՀ գնահատման 1-ին և 2-րդ փուլի հաշվետվությունները: Այն ժամանակ Հայաստանը գնահատվեց ՖԱԹՖ-ի 2002 թ. մեթոդաբանության հիման վրա: Հաշվետվության մեջ ներկայացված դիտարկումների կապակցությամբ Հայաստանը ներկայացրեց Առաջընթացի մասին հաշվետվություն, ինչպես նաև կոնկրետ խնդիրների մասով՝ Համապատասխանության մասին հաշվետվություն: Միջոցներ ձեռնարկվեցին գնահատման հաշվետվության մեջ արված առաջարկությունների գործնական իրագործման, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ընդհանուր ռեժիմը միջազգային ստանդարտներին համահունչ ընդհանուր առմամբ կատարելագործելու ուղղությամբ: Հայաստանյան իշխանություններն ըստ էության անդրադարձել են նախորդ գնահատման մեջ արված առաջարկություններին: Հետևյալ աղյուսակում արտացոլված են իրավիճակը շտկելու ուղղությամբ իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները:

Հիմքը	Առաջարկությունը	Ձեռնարկված միջոցառումները
Փողերի լվացման քրեական հանցագործության շրջանակը (ՖԱԹՖ 4-6)	Վավերացնել Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1999 թ. միջազգային կոնվենցիան և Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, խուզարկության, առգրավման և բռնագրավման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի 1990 թ. կոնվենցիան:	ՀՀ-ն 2004 թ. մարտի 3-ին վավերացրել է Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1999 թ. միջազգային կոնվենցիան: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, խուզարկության, առգրավման և բռնագրավման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի 1990 թ. կոնվենցիան վավերացվել է 2003 թ. հոկտեմբերի 8-ին:
Կանխարգելիչ միջոցներ և բռնագրավում (ՖԱԹՖ 7)	Ընդունել դրույթներ, որոնք հնարավորություն կընձեռեն առգրավել և բռնագրավել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները, գույքը և կատարման մեջ օգտագործելու համար նախատեսված գործիքները: Դիտարկել այնպիսի դրույթներ ընդունելու նպատակահարմարությունը, որոնց համաձայն բռնագրավումը պարտադիր կդառնա հանցագործությունների որոշակի տեսակների, այդ թվում՝ փողերի լվացման և, թերևս, թմրադեղերի թրաֆիքինգի և բարձր եկամտաբերությամբ այլ	ՔԴՕ-ի 233-րդ հոդվածում 2006 թ. նոյեմբերի 28-ին կատարվել է փոփոխություն. որպես պարտադիր դատավարական գործողություն՝ նախատեսվել է փողերի լվացման և նախորդող հանցագործությունների գործերի առնչությամբ գույքի վրա կալանք դնելու ինստիտուտը: Նույն տարվա ընթացքում փոփոխություններ են կատարվել ՔՕ-ի 55-րդ հոդվածում և 190-րդ հոդվածի սանկցիայում, որոնցով որպես պարտադիր պատիժ նախատեսվել է փողերի լվացման հանցագործությունից ստացված գույքի բռնագրավումը:

	հանցագործությունների դեպքում:	
Հաճախորդի նույնականացման և տեղեկատվության պահպանման կանոնները (ՖԱԹՖ 10-13)	Բոլոր միջնորդների համար սահմանել դրույթներ նախատեսված նվազագույն շեմից բարձր գումարով միանգամյա գործարքներ կատարող հաճախորդների նույնականացման և տեղեկատվության պահպանման մասին: Արժեղթերի ոլորտում հաճախորդի նույնականացման մասին հստակ դրույթներ սահմանել:	Խորհրդարանի կողմից 2008 թ. մայիսի 26-ին ընդունված՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ և 20-րդ հոդվածներով հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց համար սահմանվում են հաճախորդի հետ որևէ գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կնքելու ժամանակ հաճախորդի նույնականացման և տեղեկատվության պահպանման վերաբերյալ մանրակրկիտ նորմեր: Այդ դրույթները տարածվում են արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների նկատմամբ:
Ֆինանսական հաստատությունների կողմից հավելյալ ուսումնասիրություններ (ՖԱԹՖ 14-19)	Բոլոր միջնորդների համար սահմանել հաշիվների և գործարքների անընդհատ մոնիտորինգի իրականացման վերաբերյալ դրույթներ: Բոլոր միջնորդների համար ներդնել կասկածելի գործարքների և գործարար հարաբերության մասին պարտադիր տեղեկացման և հաշվետվության ներկայացման ռեժիմ:	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք 15-րդ և 16-րդ հոդվածներով նախատեսվում են անընդհատ ընթացիկ մոնիտորինգի և հաճախորդների հավելյալ ուսումնասիրության պահանջներ: Օրենքի 4-6-րդ հոդվածներով նախատեսվում է հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից կասկածելի գործարքների մասին պարտադիր տեղեկացումը և հաշվետվության ներկայացումը:
ՓԼ պայքարի բավարար միջոցներ չձեռնարկող պետությունների հետ հարաբերվելու միջոցները (ՖԱԹՖ 20-21)	Դիտարկել սահմանված կարգը վերանայելու նպատակահարմարությունը՝ բոլոր միջնորդներին տրամադրելով տեղեկատվություն այն մասին, թե որ պետությունները կամ տարածքները պետք է համարվեն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համատեքստում չհամագործակցողներ:	Նշված առաջարկությունն ի կատար է ածվել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն, որով նախատեսվում է լիազոր մարմնի պարտավորությունը, համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնի հետ և հիմք ընդունելով ՓԼ և ԱՖ դեմ պայքարով զբաղվող միջազգային կազմակերպությունների հրապարակած տվյալները, սահմանելու և թարմացնելու այն պետությունների կամ տարածքների ցանկը, որոնք չեն կիրառում կամ ոչ պատշաճ են կիրառում ՓԼ և ԱՖ դեմ պայքարի պահանջները: Հաշվի առնելով վերոհիշյալ պահանջը, ՖԴԿ-ն 2008 թ. հուլիսի 4-ին ՀՀ-ի տարածքում գործող բոլոր ֆինանսական հաստատություններին ուղարկել է ՖԱԹՖ-ի 2008 թվականի փետրվարի 28-ի հայտարարության վերաբերյալ ծանուցումը՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել վերոհիշյալ հայտարարության մեջ նշված ռիսկերի առնչությամբ:
Վարչական համագործակցություն, կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում (ՖԱԹՖ 32)	Ներդնել ԿԳՀ ռեժիմ, որը հնարավորություն է ընձեռում միջազգային մակարդակով տեղեկատվություն փոխանակել կասկածելի գործարքների, անձանց և կորպորացիաների վերաբերյալ:	ՖԴԿ-ն 2007 թվականից ի վեր «Էգմոնտ» խմբի անդամ է, որը ՖԴԿ-ին հնարավորություն է ընձեռում ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ տեղեկատվություն փոխանակել կասկածելի գործարքների, անձանց և կազմակերպությունների վերաբերյալ: Այս առնչությամբ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսվում է, որ լիազոր մարմինը (ՖԴԿ-ն), փոխադարձության հիման վրա, սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, փոխանակում է տեղեկատվություն (այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող) ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ, որոնք երկկողմ համաձայնագրերի կամ միջազգային կառույցներում անդամակցությունից բխող պարտավորությունների հիման վրա ապահովում են տեղեկատվության համարժեք

		գաղտնիություն և այդ տեղեկատվությունն օգտագործում են միայն ՓԼ և ԱՖ դեմ պայքարի նպատակներով:
Ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ 8 հատուկ հանձնարարականներ		
II. Ահաբեկչության ֆինանսավորման և հարակից ՓԼ քրեականացումը	Որպես առանձին հանցատեսակ նախատեսել ահաբեկչության ֆինանսավորումը:	ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը 2004 թ. դեկտեմբերի 14-ին փոփոխվել է՝ նախատեսելով ահաբեկչության ֆինանսավորման հանցակազմը:
III. Ահաբեկչական միջոցների սառեցումը և առգրավումը	Ընդունել համապարփակ նորմատիվային ակտ, որով կնախատեսվի ահաբեկչության ֆինանսավորման հետ առնչություն ունենալու մեջ կասկածվող միջոցների անհապաղ սառեցման մեխանիզմ:	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսվում է ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ֆինանսական միջոցների սառեցումը: ՔՕ-ի 55-րդ հոդվածի 5-րդ մասով և 217.1-րդ հոդվածի սանկցիայով նախատեսվում է ֆինանսական միջոցների բռնագրավումը:
IV. Ահաբեկչության հետ առնչվող կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրումը	Բոլոր միջնորդների համար սահմանել ահաբեկչության ֆինանսավորման հետ առնչվող կասկածելի գործարքների և գործունեության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման պարտադիր ռեժիմ:	Ահաբեկչության ֆինանսավորման հետ առնչվող կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման պարտադիր պահանջը պարտադիր է հաշվետվություն տրամադրող անձանց համար «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:
VI. Դրամական փոխանցումների այլընտրանքային գործունեությունը	Սահմանել մեծ չափի դրամական կամ այլ միջոցներ փոխանակող կամ փոխանցող հաճախորդների նույնականացման պարտավորություն (առնվազն այն գործարքների դեպքում, որոնք գերազանցում են 15,000 եվրոյի համարժեքը):	Հաճախորդի նույնականացման պահանջները նախատեսված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածով: Բացի այդ, 18-րդ հոդվածով նախատեսվում են ֆինանսական հաստատության՝ դրամական փոխանցումների հետ կապված պարտավորությունները:
Իրավապահ աշխատանք և քրեական հետապնդում	Ստեղծել Ֆինանսական հետախուզության մարմին (ՖՀՄ) և ապահովել դրա գործառնականությունը: ՖՀՄ-ն պետք է պատշաճ կերպով ապահովված լինի ռեսուրսներով և կարողանա համապատասխան տեղեկատվությունը փոխանակել ազգային իրավապահ մարմինների, ինչպես նաև օտարերկրյա ՖՀՄ-ների հետ:	Ֆինանսական հետախուզության ազգային մարմինը ՀՀ-ում ԿԲ-ի ՖԴԿ-ն է: Վերջինս ստեղծվել է 2004 թ. դեկտեմբերի 14-ին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին նախորդ օրենքի և ՖԴԿ-ի կանոնադրության համաձայն: ՖԴԿ-ի իրավասությունները և իրավապահ մարմինների և նմանատիպ միջազգային կառույցների հետ տեղեկատվություն փոխանակելու գործառույթները նախատեսված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով:
Իրավապահ աշխատանք և քրեական հետապնդում	Պետք է սկսել իրագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի խնդիրներով զբաղվող մարմինների համապարփակ ուսուցման ռազմավարություն:	Փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում համապարփակ ուսուցում կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկվել են հետևյալ միջոցները. 1. Միջգերատեսչական հանձնաժողովը 2006 թ. մարտի 28-ի նիստում հաստատել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ուսուցման/վերապատրաստման ազգային ռազմավարության ծրագիրը, որը ներառում է իրավապահ մարմինների և դատախազության աշխատակիցների ուսուցումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում, 2. Հայաստանյան իշխանությունները մասնակցել են ՄԱԿ-ի Թմրադեղերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) և ԱՄՀ-ի կազմակերպած մի շարք ուսուցողական ծրագրերի: Տարբեր մարմինների ներկայացուցիչներից կազմված ուսուցանողների խումբ է ձևավորվել: 3. Ուսուցանողների նշված խումբն իրականացրել է իրավապահ մարմինների և դատախազության աշխատակիցների ուսուցման կարիքների գնահատում և ՓԼ/ԱՖ դեմ պայքարին նվիրված ուսուցողական դասընթացներ կազմակերպել նրանց համար:
Իրավապահ աշխատանք և քրեական	Իրականացնել քննչական լրացուցիչ միջոցառումների, այդ թվում՝ քննչական հատուկ հնարքներ,	Իրավապահ մարմիններն իրավասու են, այդ թվում՝ նաև ՓԼ/ԱՖ գործեր քննելիս, կատարել քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ

հետապնդում	ինչպիսին են, օրինակ, հսկվող առաքումները:	մասով նախատեսված բոլոր քննչական գործողությունները: Իրավապահ մարմինները (նրանք, որոնք իրավասու են օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնել) իրավասու են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ և 18-րդ հոդվածներով նախատեսված կարգով կատարել հսկիչ գնումներ:
Իրավապահ աշխատանք և քրեական հետապնդում	Համապատասխան բոլոր իրավապահ մարմինները և Գլխավոր դատախազությունը պետք է անդրադառնան ֆինանսական բնույթի գործերի քննությունների կարևորության խնդրին:	ՓԼ/ԱՖ գործեր հետաքննելու հարցում իրավապահ մարմինների և ՀՀ գլխավոր դատախազության զգուշավորությունը հաստատվել է քննությունների շրջանակում ծագող խնդիրների բարձր մակարդակով տեղի ունեցած, մասնավորապես՝ Միջգերատեսչական հանձնաժողովի քննարկումներում: Ավելին, ՀՀ գլխավոր դատախազի 2005 թ. փետրվարի 8-ի թիվ 2/1-1-05 շրջաբերականով բոլոր իրավապահ մարմինների ուշադրությունը հրավիրվել է քննվող ֆինանսական գործերի շրջանակներում փողերի լվացման հանցագործությունների բացահայտմանը և վերլուծությանը, ինչպես նաև դրանց առնչությամբ քրեական հետապնդման հարուցմանը:

2. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Օրենքները և այլ իրավական ակտերը

2.1. Փողերի լվացման քրեականացումը (Հ.1 և 2)

2.1.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

122. Հայաստանում փողերի լվացումը քրեականացվել է ՔՕ-ի 190-րդ հոդվածով: Տվյալ հանցագործությունն առաջին անգամ նախատեսվել է 2003 թվականին, սակայն 2006 թվականին փողերի լվացման սահմանումը ենթարկվել է փոփոխության: Նորմի կարևորագույն փոփոխությունն այն էր, որ «բոլոր հանցագործությունների» մոտեցումից անցում կատարվեց «ցանկի» մոտեցման, որի շրջանակում սահմանվում են փողերի լվացմանը նախորդող հանցագործությունները:

123. Հոդվածի առաջին մասով սահմանվում է փողերի լվացման հասարակ հանցագործությունը, իսկ երկրորդ և երրորդ մասերով՝ առավել ծանր սանկցիաներ ծանրացուցիչ հանգամանքների համար:

124. ՔՕ-ի 190(1)-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի օրենսդրության համաձայն փողերի լվացում է «հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)»:

125. ՔՕ-ի 190(1)-րդ հոդվածով նախատեսված գործողությունները կարող են պատժվել ազատազրկմամբ՝ մինչև չորս տարի ժամկետով, գույքի բռնագրավմամբ: 190-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվում են առավել ծանր պատիժներ ծանրացուցիչ հանգամանքների համար:

Փողերի լվացման քրեականացումը (չ. 1.1՝ հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը).

126. Հայաստանը ստորագրել և վավերացրել է և *Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան* («Պալերմոյի կոնվենցիա»), և *Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան* («Վիեննայի կոնվենցիա»):

127. Հայաստանում փողերի լվացման հանցակազմի առաջին հատվածը վերաբերում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկմանը (կոնվերտացմանը) կամ փոխանցմանը, իսկ երկրորդով քրեականացվում է այդ գույքը թաքցնելը կամ քողարկելը: Երրորդ հատվածով քրեականացվում է նման գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը, եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում:

128. Ուստի, Հայաստանում փողերի լվացման հանցակազմը ներառում է փողերի լվացման հանցագործությունների՝ Պալերմոյի և Վիեննայի կոնվենցիաներով նախատեսված բոլոր օբյեկտիվ տարրերը:

Լվացվող գույքը (չ. 1.2).

129. ՔՕ-ի 190-րդ հոդվածով «հանցավոր ճանապարհով ստացված գույք» եզրույթը սահմանվում է միջազգային ստանդարտին համահունչ և ներառելում է «ցանկացած գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտներ, որոնք ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել են» նախորդող հանցագործության կատարման արդյունքում:

Գույքի՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու փաստն ապացուցելը (չ. 1.2.1).

130. ՔՕ-ի 190-րդ հոդվածով անձի վերաբերյալ մեղադրական դատավճռի առկայությունը եկամտի անօրինական ծագումն ապացուցելու համար պարտադիր նախապայման չէ: Այնուամենայնիվ, իշխանությունների հետ քննարկումներից տպավորություն առաջացավ, որ ընդհուպ մինչև վերջերս ընդհանուր ընկալումն այնպիսին էր, որ նախորդող հանցագործության համար անձի նկատմամբ մեղադրական դատավճռի առկայությունը պարտադիր նախապայման էր՝ ապացուցելու համար, որ եկամուտը ստացվել է նախորդող հանցագործությունից: Թե Գլխավոր դատախազության, թե դատական համակարգի ներկայացուցիչները նշեցին, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով վերապատրաստումներ անցնելուց հետո ընդհանուր ընկալումն արդեն փոխվել է, և որ անձին փողերի լվացման համար միայն դատապարտելու համար ներկայումս այլևս չի պահանջվում նախորդող հանցագործության մասով մեղադրական դատավճռի կամ զուգահեռ իրականացվող վարույթի առկայություն, չնայած որ դեռ շատ վաղ է՝ պարզելու համար, թե արդյոք դատարանները կընդունեն այս նոր մոտեցումը:

131. Իշխանությունները ներկայացրեցին մեկ դատական գործ, որի շրջանակներում դատավարությունը վերաբերել էր միայն փողերի լվացման հանցագործությանը, և որի արդյունքում կայացվել էր մեղադրական դատավճիռ: Այնուհանդերձ, այդ գործը (Հայաստանի Հանրապետությունն ընդդեմ Վահան Սուրենի Մադաթյանի, գործ համար 1/11-2006) միանշանակ չէ, քանի որ այդ գործով ամբաստանյալը նախկինում մեկ այլ դատավարության շրջանակում դատապարտվել էր նախորդող հանցագործության (ծառերի ապօրինի հատում) համար: Իշխանությունների ներկայացրած մեկ այլ դատական գործի պարագայում (Հայաստանի Հանրապետությունն ընդդեմ Վոլոդյա Ծատուրի Ղուկասյանի, գործ համար ԵԱԴԴ/0041/0/08) զուգահեռ մեղադրանք էր ներկայացվել և նախորդող հանցագործության (առևտրային կաշառք), և փողերի լվացման հանցագործության համար, և անձը երկու մեղադրանքով էլ դատապարտվել էր: Այսպիսով, մինչ օրս առկա դատական պրակտիկայում փողերի լվացման համար մեղադրական դատավճիռ կայացվել է նախորդող հանցագործության համար կայացվող մեղադրական դատավճռի հիման վրա կամ դրա հետ միաժամանակ:

132. Իշխանությունները գնահատողներին տեղեկացրեցին նաև այն մասին, որ ներկայումս նախաքննության փուլում է միմիայն փողերի լվացման հատկանիշով հարուցված մեկ քրեական գործ, որը շուտով կավարտվի և կուղարկվի դատարան: Ակնկալվում է, որ այս գործի շնորհիվ կհստակեցվի դատարանի դիրքորոշումն այն հարցում, թե արդյոք միմիայն փողերի լվացման հոդվածով կարելի է ներկայացնել մեղադրանք՝ նախորդող հանցագործության համար մեղադրական դատավճռի կամ քննվող ընթացիկ գործի բացակայության պայմաններում:

133. Իշխանությունները նշեցին, որ գույքի՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու փաստն ապացուցելու համար կիրառելի ստանդարտը «ողջամիտ կասկածի փարատման» ստանդարտն է: Դա նշանակում է, որ դատախազը պետք է ապացուցի նախորդող հանցագործության որոշակի հանգամանքներ, *օրինակ*, որ կատարված գործողությունները հավասարազոր են եղել նախատեսված հանցագործության, որ նախորդող հանցագործությունը կատարվել է որոշակի ժամկետում, հանցագործության սուբյեկտի ինքնությունը և նախորդող հանցագործությունից ստացված գույքի տեսակները: Գնահատողները դա ապացուցման բավական խիստ ստանդարտ են համարում:

Նախորդող հանցագործությունների շրջանակը (չ. 1.3).

134. Նախորդող հանցագործությունների շրջանակը Հայաստանում ներառում է նախորդող հանցագործությունների՝ ՖԱԹՖ-ի կողմից նախատեսված բոլոր տեսակները՝ ինչպես կներկայացվի ստորև: Բացի այդ, ՔՕ-ի 205-րդ և 206-րդ հոդվածներով քրեականացված է նաև հարկերը վճարելուց խուսափելը, որը Հայաստանի օրենսդրության համաձայն նույնպես փողերի լվացմանը նախորդող հանցագործություն է:

Նախորդող հանցագործությունը	**Օրենքի նորմը**
Մասնակցությունը հանցավոր խմբի մեջ և ավազակությունը	ՔՕ-ի 222-րդ, 223-րդ և 224-րդ հոդվածներ:
Ահաբեկչությունը, ներառյալ ահաբեկչության ֆինանսավորումը	ՔՕ-ի 217-րդ, 388-րդ, 389-րդ հոդվածներ:
Մարդկանց թրաֆիքինգը և միգրանտների անօրինական սահմանահատումներ կազմակերպելը	ՔՕ-ի 132-րդ, 132.1-րդ և 168-րդ հոդվածներ:
Սեռական շահագործումը, այդ թվում՝	ՔՕ-ի 132-րդ, 132.1-րդ, 166-րդ, 261-րդ և

անչափահասի սեռական շահագործումը	262-րդ հոդվածներ:
Թմրադեղերի և հոգեմետ նյութերի անօրինական շրջանառությունը	ՔՕ-ի 215-րդ, 266-րդ հոդվածներ:
Զենքի անօրինական շրջանառությունը	ՔՕ-ի 215-րդ, 235-րդ հոդվածներ:
Գողացված և այլ ապրանքների անօրինական շրջանառությունը	ՔՕ-ի 216-րդ հոդված:
Կոռուպցիան և կաշառք տալը և ստանալը	ՔՕ-ի 200-րդ, 201-րդ, 311-րդ, 312-րդ և 313-րդ հոդվածներ:
Խարդախությունը	ՔՕ-ի 178-րդ, 184-րդ, 194-րդ և 212-րդ հոդվածներ:
Կեղծ փող պատրաստելը	ՔՕ-ի 202-րդ և 203-րդ հոդվածներ:
Կեղծ ապրանքներ պատրաստելը և իրացնելը	ՔՕ-ի 197-րդ, 207-րդ հոդվածներ:
Բնապահպանական հանցագործությունները	ՔՕ-ի 281-րդ, 284-րդ, 286-րդ, 287-րդ, 288-րդ, 289-րդ, 291-րդ, 292-րդ, 295-րդ, 297-րդ և 298-րդ հոդվածներ:
Սպանությունը, ծանր մարմնական վնասվածք պատճառել	ՔՕ-ի 104-րդ, 112-րդ, 113-րդ, 117-րդ հոդվածներ:
Առևանգելը, ազատությունից ապօրինի զրկելը և պատանդ վերցնելը	ՔՕ-ի 131-րդ, 132-րդ, 133-րդ, 134-րդ և 218-րդ հոդվածներ:
Կողոպուտը կամ գողությունը	ՔՕ-ի 175-181-րդ, 234-րդ, 235-րդ, 238-րդ, 269-րդ, 383-րդ հոդվածներ:
Մաքսանենգությունը	ՔՕ-ի 215-րդ հոդված:
Շորթումը	ՔՕ-ի 182-րդ հոդված:
Թմրամիջոցներ հափշտակելը կամ շորթելը	ՔՕ-ի 269-րդ հոդված:
Ծովահենությունը	ՔՕ-ի 220-րդ, 221-րդ հոդվածներ:
Ինսայդերական գործարքները և շուկայի շահարկումը	ՔՕ-ի 195-րդ, 199-րդ և 214-րդ հոդվածներ:

«Նվազագույն շեմի» մոտեցումը նախորդող հանցագործությունների նկատմամբ (չ. 1.4).

135. Փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների սահմանման համար Հայաստանում 2006 թվականից կիրառվում է «ցանկի» մոտեցումը: Ինչպես նշվեց, ցանկը ներառում է նախորդող հանցագործությունների՝ ՖԱԹՖ-ի կողմից նախատեսված բոլոր տեսակները:

Մեկ այլ երկրի տարածքում կատարված նախորդող հանցագործությունները (չ. 1.5).

136. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, փողերի լվացումը պատժելի է նույնիսկ այն դեպքում, երբ նախորդող հանցագործությունը կատարվել է արտերկրում, եթե նախորդող հանցագործությունը քրեականացված է նաև Հայաստանում: ՔՕ-ի 14-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում սկսված, շարունակված կամ ավարտված բոլոր հանցագործությունների, ինչպես նաև այլ պետության տարածքում հանցավոր գործունեություն իրականացրած անձանց հետ հանցակցությամբ կատարված բոլոր գործողությունների նկատմամբ: Նշված հոդվածով նաև նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների տարածքում անձի կողմից հանցանք կատարելու դեպքում նրա պատասխանատվությունը վրա է հասնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե անձը քրեական պատասխանատվության է կանչվել Հայաստանի Հանրապետության տարածքում: Այսինքն, եթե Հայաստանի

Հանրապետության տարածքում է կատարվել հանցավոր գործունեության միայն մեկ մասը (օրինակ՝ միայն լվացման գործողությունը), ապա կիրառելի է Հայաստանի օրենսդրությունը: Ուստի, եթե լվացման գործունեության մեկ մասը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա փողերի լվացման մասին նորմերը կիրառելի են նաև այլ պետությունների տարածքում կատարված նախորդող հանցագործությունների նկատմամբ:

137. Բացի այդ, ՔՕ-ի 15-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով անգամ այն դեպքում, երբ հանցանքի որևէ մասը չի կատարվել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ պայմանով, որ նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ: Ուստի, Հայաստանը համապատասխանում է այս չափորոշիչին:

Սեփական հանցավոր միջոցների լվացումը (չ. 1.6).

138. ՔՕ-ի 190-րդ օրենսգրքով քրեականացվում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը, թաքցնելը կամ քողարկելը, ինչպես նաև հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նախորդող հանցագործությունը կատարվել է փողը լվացողի, թե որևէ երրորդ անձի կողմից: Ուստի, սեփական հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքի լվացումը քրեականացված է փողերի լվացում հանդիսացող բոլոր գործողությունների մասով: Դա հաստատվեց *Հայաստանն ընդդեմ Գրիգորյանի* գործով (1/11-2006), որի շրջանակներում դատարանը մեղադրյալներին մեղավոր ճանաչեց և նախորդող հանցագործության, և փողերի լվացման հանցագործության մեջ: Գլխավոր դատախազության ներկայացուցիչները նշեցին, որ գնահատող առաքելության այցի ժամանակ դատարանում քննվում էր սեփական հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքի լվացմանն առնչվող ևս մեկ գործ: Դա հաստատվեց նաև իշխանությունների տրամադրած աղյուսակով, որում նշված է փողերի լվացման՝ քննվող կամ դատարաններում գտնվող բոլոր գործերի կարգավիճակը: Ուստի, Հայաստանը համապատասխանում է այս չափորոշչին:

Հանցակցության տեսակները (չ. 1.7).

139. Հանցակցության տեսակները սահմանված են ՔՕ-ի Ընդհանուր մասով և կիրառելի են բոլոր քրեական հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացման նկատմամբ:

140. ՔՕ-ի 33-րդ հոդվածով նախատեսվում է, որ հանցագործության համար սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում ոչ միայն ավարտված հանցագործության, այլ նաև՝ հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար: ՔՕ-ի 34-րդ հոդվածի համաձայն, հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով: 35-րդ հոդվածով նախատեսվում է, որ հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով: Հանցագործությունն ավարտին հասցնելուց

կամովին հրաժարված անձը և հանցանքի կատարումը կանխած անձը ենթակա չեն քրեական պատասխանատվության:

141. ՔՕ-ի 38-րդ հոդվածով նախատեսվում են հանցակիցների մի շարք տեսակներ, ներառյալ կազմակերպիչը (անձ, ով կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը, ինչպես նաև ստեղծել է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն կամ ղեկավարել է դրանք), դրդիչը (անձ, ով կատարողին դրդել է հանցանք կատարել համոզելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ այլ եղանակով) և օժանդակողը (անձ, ով հանցագործությունը կատարողին օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները):

142. ՔՕ-ի 39-րդ հոդվածով նախատեսվում է, որ հանցակիցների բոլոր տեսակների համար պատասխանատվության առավելագույն չափը նույնն է, ինչ կատարողի համար, ընդ որում՝ դատարանի կողմից հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը:

143. ՖԱԹՖ-ի ստանդարտով պահանջվում է, որպեսզի պետությունները քրեականացնեն փողերի լվացման հանցանք գործելու նպատակով հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր համաձայնության գալը: Նախադեպային իրավունքի համակարգ ունեցող պետություններում հայտնի՝ «հանցավոր համաձայնության գալու» ընդհանուր երևույթը քրեականացված չէ Հայաստանի օրենսդրությամբ, որն ունի քաղաքացիական իրավունքի համակարգ: Հայաստանյան օրենսդրությամբ քրեականացվում է «հանցագործության նախապատրաստությունը» (ՔՕ-ի 35-րդ հոդված, ինչպես ներկայացվեց վերևում), չնայած որ իշխանությունները հաստատեցին, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար պետք է կատարված լինի առնվազն նշված հոդվածով նախատեսված նախապատրաստական գործողություն: Ուստի, զուտ համաձայնության գալը («հանցավոր համաձայնության գալը») չի համարվի «նախապատրաստության» հանցագործություն:

144. Այնուամենայնիվ, ՔՕ-ի 223-րդ հոդվածով քրեականացվում է «հանցավոր համագործակցություն ստեղծելը», իսկ 41-րդ հոդվածով «կազմակերպված խումբ» է համարվում «այնպիսի անձանց կայուն խումբը, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար»:

Լրացուցիչ տարրը. այն դեպքում, երբ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը ձեռք է բերվել մեկ այլ՝ երկրորդ երկրի տարածքում կատարված գործողություններից, որոնք երկրորդ երկրի տարածքում հանցագործություններ չեն, սակայն կհամարվեին նախորդող հանցագործություններ, եթե կատարված լինեին առաջին երկրի տարածքում, ապա դա համարվու՞մ է արդյոք փողերի լվացման հանցագործություն (չ. 1.8).

145. Արտերկրում կատարված որոշակի ծանր հանցագործությունների համար, որոնք նախատեսված են ՔՕ-ի 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով անկախ հանցանքը կատարելու վայրի պետության քրեական օրենսգրքով այդ արարքը նախատեսված լինելուց կամ չլինելուց: Այդ հանցագործությունների ցանկը ներառում է, ի թիվս այլ հանցագործությունների, միջազգային

ահաբեկչությունը, ագրեսիվ պատերազմը, ցեղասպանությունը և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումները:

Ֆիզիկական անձանց պատասխանատվությունը (չ. 2.1).

146. ՔՕ-ի 190-րդ հոդվածի ձևակերպմամբ նախատեսվում է, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկման կամ փոխանցման գործողություններն իրավախախտը պետք է կատարի՝ նպատակ ունենալով թաքցնել կամ խեղաթյուրել գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից: Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված այլ գործողությունների համար չի պահանջվում ապացուցել նպատակի կոնկրետ տարրի առկայությունը:

147. ՔՕ-ի 28-րդ հոդվածով նախատեսվում է, որ ցանկացած հանցագործության պարագայում պահանջվում է, որպեսզի հանցագործը գործած լինի դիտավորությամբ, բացառությամբ երբ ուղղակիորեն նախատեսված է, որ այս կամ այն գործողությունը կարող է կատարվել անզգուշությամբ: 29-րդ հոդվածով «ուղղակի դիտավորությունը» (եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը) տարբերակվում է «անուղղակի դիտավորությունից» (եթե անձը չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք): Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված բոլոր արարքների համար պահանջվում է, որպեսզի անձը գործած լինի ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:

148. Ինչ վերաբերում է փողերի լվացման հանցանքը գործելու հետ առնչվող գույքին, ապա «փոխարկելու, փոխանցելու, թաքցնելու կամ ծագումը խեղաթյուրելու» արարքների դեպքում ՔՕ-ի 190-րդ հոդվածով պահանջվում է, որպեսզի փողերի լվացման հանցանքը գործող անձն իմացած լինի, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում: Ինչ վերաբերում է «ձեռք բերելուն, տիրապետելուն կամ օգտագործելուն», ապա անձը գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելու մասին պետք է իմացած լինի գույքի ստացման պահին:

149. Ուստի, ՔՕ-ի 190-րդ հոդվածը համապատասխանում է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով նախատեսված՝ հանցավոր դիտավորության պահանջին:

ՓԼ հանցագործության սուբյեկտիվ տարրը (չ. 2.2).

150. Չնայած որ քրեական օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված չէ, որ ՓԼ հանցագործության սուբյեկտիվ տարրը կարող է բխեցվել օբյեկտիվ փաստական հանգամանքներից, Հայաստանը, ինչպես հաստատեցին նաև իշխանությունների ներկայացուցիչները, հենվում է դատական համակարգի կողմից ապացույցների ազատ գնահատման սկզբունքի վրա (ամրագրված է ՔԴՕ-ի 25-րդ հոդվածում), որը դատավորին թույլ է տալիս նման եզրակացության հանգել:

151. Ուստի, նշված սկզբունքի համաձայն, ցանկացած հանցագործության դիտավորության տարրը կարող է բխեցվել փաստական հանգամանքներից՝ ինչպես և պահանջվում է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով:

Իրավաբանական անձանց պատասխանատվությունը (չ. 2.3.), իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու դեպքում չպետք է բացառվի զուգահեռ քրեական, քաղաքացիական կամ վարչական վարույթների հնարավորությունը (չ. 2.4).

152. Հայաստանի օրենսդրությամբ ներկայումս չի նախատեսվում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը:

153. Չնայած իշխանությունների այն պնդմանը, թե հայաստանյան քրեական օրենսդրության երկու սկզբունքների, այն է՝ «անձնական պատասխանատվության» և «*չկա հանցանք առանց մեղքի*» (լատ.՝ *nullum crimen sine culpa*) սկզբունքների առկայությամբ բացառվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, գնահատողները չկարողացան որևէ կերպ հավաստիանալ, որ դրանք հայաստանյան իրավունքի հիմնարար սկզբունքներ են, քանի որ դա չի հաստատվում Հայաստանի Սահմանադրության որևէ նորմով կամ այդ մասին Վճռաբեկ դատարանի որևէ որոշմամբ:

154. Իշխանությունների վերոհիշյալ մեկնաբանությունը ցանկացած պարագայում համոզիչ չի թվում, քանի որ կառավարության կողմից ներկայումս կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում դիտարկվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը սահմանող օրենքի նախագիծ: Իշխանությունները նաև ընդունեցին, որ քննարկվում է վերոհիշյալ ինստիտուտը փողերի լվացման (սակայն ոչ՝ ահաբեկչության ֆինանսավորման) հանցագործությունների համար ներդնելու հնարավորությունը:

155. Փողերի լվացման մեջ ներգրավված իրավաբանական անձինք, այնուամենայնիվ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն ենթարկվում են վարչական պատասխանատվության: Պատժամիջոցները կարող են ներառել տուգանքներ, իրավաբանական անձի լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում, կասեցում կամ դադարեցում, ինչպես նաև իրավաբանական անձին լուծարելու պահանջով հայցի ներկայացում դատարան:

Պատիժները ՓԼ համար (չ. 2.5).

156. Փողերի լվացման մեջ մեղավոր անձինք ՔՕ-ի 190-րդ հոդվածի համաձայն կարող են պատժվել ազատազրկմամբ՝ մինչև չորս տարի ժամկետով՝ ՔՕ-ի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի բռնագրավմամբ:[21] Բռնագրավումը պարտադիր պատիժ է փողերի լվացման համար:

157. Ծանրացուցիչ հանգամանքներում, այսինքն, եթե հանցագործության գումարը գերազանցում է հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը: Գնահատող առաքելության այցի ժամանակ նվազագույն աշխատավարձը 1,000 դրամ էր, այսինքն՝ տուգանքի շեմը կազմում էր 5,000,000 դրամ (մոտ 16,367 ԱՄՆ դոլար կամ 12,835 եվրո): Եթե հանցավոր արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, ապա պատժի չափը կարող է ավելացվել՝ հասնելով չորսից ութ տարի ժամկետով ազատազրկման՝ ՔՕ-ի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի բռնագրավմամբ:

158. Առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում, այսինքն, եթե հանցագործության գումարը գերազանցում է հանցագործության պահին Հայաստանի

[21] ՓԼ հանցագործությունների համար սահմանված պատիժները 2009 թ. հունիսի 10-ի դրությամբ փոփոխվել էին: Հասարակ ՓԼ-ն այժմ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ համապատասխան գույքի բռնագրավմամբ: Ծանրացուցիչ տեսակները պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի կամ վեցից տասներկու տարի ժամկետով, կախված հանցագործության ծանրությունից, համապատասխան գույքի բռնագրավմամբ:

Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը (մոտ 32,730 ԱՄՆ դոլար կամ 25,700 եվրո), կամ եթե հանցանքը կատարվել է կազմակերպված խմբի կողմից կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով, պատիժը կարող է հասնել մինչև անգամ վեցից տասներկու տարվա ազատազրկման՝ համապատասխան գույքի բռնագրավմամբ:

159. Փողերի լվացման համար նախատեսված պատիժները, ըստ երևույթին, համահունչ են հայաստանյան օրենսդրության հիման վրա այլ ֆինանսական հանցագործությունների նկատմամբ կիրառվող պատիժներին: Խարդախությունը, օրինակ, կարող է պատժվել ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ տուգանքով (ՔՕ-ի 178-րդ հոդված), յուրացնելը՝ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ տուգանքով (ՔՕ-ի 179-րդ հոդված), չարաշահումն արժեթղթեր թողարկելիս՝ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ տուգանքով (ՔՕ-ի 204-րդ հոդված), իսկ շորթումը՝ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով, կամ տուգանքով (ՔՕ-ի 182-րդ հոդված):

160. ՔՕ-ի 190-րդ հոդվածի համաձայն փողերի լվացման նկատմամբ կիրառելի՝ օրենքով սահմանված պատիժները ըստ երևույթին համաչափ են և կարող են տարհամոզիչ լինել: Այնուհանդերձ, դժվար է եզրակացության հանգել առ այն, թե արդյոք դրանք արդյունավետ են, քանի որ ՓԼ հանցակազմի սահմանումից ի վեր ՓԼ մեղադրանքով ընդամենը երկու անգամ է կայացվել մեղադրական դատավճիռ, և երկուսից ոչ մեկի դեպքում դատարանը մեղադրյալի նկատմամբ չի նշանակել ազատազրկման պատիժ: Առաջին գործով կիրառվել է ընդամենը 400,000 դրամի (մոտ 1,040 եվրո կամ 1,308 ԱՄՆ դոլար) տուգանք, ընդ որում՝ մեղադրյալը համաներման հիման վրա ազատվել է տուգանքի վճարումից: Երկրորդ գործով դատարանը նշանակել է 300,000 դրամի (մոտ 780 եվրո կամ 980 ԱՄՆ դոլար) տուգանք և լվացված գույքի բռնագրավում՝ 4,600,000 դրամի (մոտ 12,000 եվրո կամ 12,040 ԱՄՆ դոլար) չափով:

Վիճակագրությունը և արդյունավետությունը

Վիճակագրությունը

161. Հարուցված և դատարան ուղարկված քրեական գործերի մասին վիճակագրությունը կենտրոնացված կարգով վարում է ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնը: Համապատասխան իրավապահ մարմիններից պահանջվում է նաև պարբերաբար ՖԴԿ-ին տրամադրել վիճակագրական տվյալներ ՓԼ/ԱՖ քրեական գործերով իրականացված քննությունների մասին՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2009 թ. հունվարի 27-ի թիվ 23-Ն որոշմամբ սահմանված կարգով:

162. 2005 թվականից ի վեր հարուցվել է մոտ 15,000 քրեական գործ նախորդող հանցագործությունների հատկանիշներով, որոնց մեծ մասն առնչվել է «Գողություն», «Խարդախություն», «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով» և «Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը» հանցագործություններին:

Հանցատեսակ	Քրեական գործերի թիվը

	2005	2006	2007	2008
Մարդուն առևանգելը (131-րդ հոդված)	22	26	25	27
Մարդու թրաֆիքինգը և միգրանտների անօրինական սահմանահատումներ կազմակերպելը (132-րդ հոդված)	11	13	8	15
Կեղծ փող պատրաստելը (202-րդ հոդված)	52	44	44	70
Կեղծ ալկոհոլային խմիչքներ պատրաստելը (207-րդ հոդված)	16	13	15	10
Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և զենքի ապօրինի շրջանառությունը (215-րդ հոդված)	50	62	77	69
Ավազակությունը (175-րդ հոդված)	103	90	75	122
Կողոպուտը (176-րդ հոդված)	152	147	94	171
Գողությունը (177-րդ հոդված)	1998	2489	2148	2573
Խարդախությունը (178-րդ հոդված)	445	380	412	384
Յուրացնելը (179-րդ հոդված)	119	75	68	75
Շորթումը (182-րդ հոդված)	15	10	16	19
Ապօրինի ձեռնարկատիրությունը (188-րդ հոդված)	23	46	15	13
Առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացումը (188.1-րդ հոդված)	0	0	0	3
Կեղծ ձեռնարկատիրությունը (189-րդ հոդված)	23	13	8	3
Առևտրային կաշառքը (200-րդ հոդված)	3	1	0	9
Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը (203-րդ հոդված)	3	4	2	0
Հարկերից խուսափելը (205-րդ հոդված)	21	48	53	16
Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը (216-րդ հոդված)	15	22	15	16
Զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (235-րդ հոդված)	212	190	184	214
Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով (266-րդ հոդված)	76	161	235	282
Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (308-րդ հոդված)	26	22	21	60
Կաշառք ստանալը (311-րդ հոդված)	7	14	5	49
Կաշառք տալը (312-րդ հոդված)	1	3	2	10

163. 2005 թվականից մինչև 2009 թ. փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում փողերի լվացման հատկանիշներով հարուցվել է 22 քրեական գործով, ընդ որում՝ դրանցից երեքը կասեցվել են (մեկը 2005 թվականին, մյուս երկուսը՝ 2006-ին): Մնացած 19 գործերից 5-ը կարճվել են, 10-ը՝ ուղարկվել դատարան, մեկով կայացվել է արդարացման դատավճիռ, 2-ով՝ մեղադրական դատավճիռ, և մեկ գործ փոխանցվել է այլ պետության: Հարուցված 22 գործերից 12-ը քննվել են ԱԱԾ-ի կողմից, 6-ը՝ Գլխավոր դատախազության Քննչական վարչության, 2-ը՝ ոստիկանության, և 2-ը՝ մարզային դատախազությունների կողմից: 22 քրեական գործերից 7-ը հարուցվել են ՖԴԿ-ի տրամադրած տեղեկությունների հիման վրա (մեկ գործ 2005-ին, երկու գործ 2006-ին, երկու գործ 2007-ին և երկու գործ 2008-ին):

164. Տրամադրված վիճակագրական տվյալներից չի երևում, թե քանի գործով են իրավապահ մարմիններն իրականացրել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ՓԼ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ, ապա՝ որոշել չհարուցել քրեական գործ:

ՓԼ հատկանիշներով հարուցված քրեական գործերի վիճակագրական տվյալներ							
Տարի	Հարուց-ված գործեր	Կասեց-ված գործեր	Կարճված գործեր	Արդարաց-ման դատա-վճիռներ	Առգրավված գույք	Մեղա-դրական դատա-վճիռ	Տուգանքներ
2005	5	1	1				
2006	4	2				1	400,000 դրամի տուգանք
2007	3		3	1			
2008	6		1		40,000 եվրո և 31,650,000 դրամ		
2009 (15/02 դրությամբ)	4					1	4,600,000 դրամի բռնագրավում

Արդյունավետությունը.

165. Չնայած որ փողերի լվացման մասին քրեաիրավական նորմը հիմնականում համապատասխանում է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաների սուբյեկտիվ տարրերին, հարցեր կարող են առաջ քաշվել դրա արդյունավետ իրագործման վերաբերյալ:

166. Հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակի և ՓԼ մեղադրանքով կայացված մեղադրական դատավճիռների թվաքանակի համադրությունը Հայաստանի չափերի պետության համար ողջամիտ է, հատկապես եթե հաշվի առնենք, որ մինչև վերջերս պահանջվում էր նախորդող հանցագործության համար մեղադրական դատավճռի առկայությունը:

167. Այնուհանդերձ, նախորդող հանցագործությունների հատկանիշներով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակի համեմատությամբ, որը 2005 թվականից ի վեր հասնում է մոտ 15,000-ի, ինչպես ներկայացված է վերոհիշյալ աղյուսակում, փողերի լվացման հատկանիշներով հարուցված քրեական գործերի թիվը՝ 22, ըստ երևույթին բավական ցածր է: Չնայած որ գնահատողները գիտակցում են, որ նախորդող այդ հանցագործություններից շատերը, թերևս, մանր հանցագործություններ են եղել, այս համեմատության արդյունքում հարցեր են ծագում փողերի լվացման վերաբերյալ նորմերի արդյունավետ իրագործման առնչությամբ:

168. Բացի այդ, գնահատողները չկարողացանպարզել, թե արդյոք ՓԼ հանցակազմի իրագործումն արդյունավետ է, քանի որ հարուցված և հետապնդվող քրեական գործերի մոտ 80%-ը դեռ ավարտված չէ կամ կասեցվել է կամ կարճվել:

2.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Իրականացնել պատշաճ նախաձեռնություններ (օրինակ՝ իրազեկության բարձրացում կամ ուսուցում) փողերի լվացման գործերի քննության, քրեական հետապնդման և դատական գործընթացին մասնակից բոլոր իրավասու մարմինների համար, որպեսզի. (1) պարզվի, թե ինչ խոչընդոտներ կան ՓԼ քրեական հետապնդման ճանապարհին, օրինակ՝ թե միայն փողերի լվացման համար մեղադրական դատավճիռ ստանալուն որքանով է խոչընդոտում գույքի՝ նախորդող կոնկրետ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար կիրառվող ապացուցման չափանիշը, և (2) շարունակել բարձրացնել իրազեկությունը ՓԼ վերաբերյալ օրենսդրական պահանջների մասին,
- Փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ և նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը:

2.1.3. Համապատասխանությունը թիվ 1 և 2 հանձնարարականներին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.1	Հիմնականում համապատասխանում է	• Դեռևս պարզ չէ, թե արդյոք նախորդող հանցագործության համար կայացված մեղադրական դատավճռի առկայությունը պարտադիր պահանջ է գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելն ապացուցելու համար: • ՓԼ քրեական գործերի սակավաթվությունը եկամտաբեր հանցագործությունների հատկանիշներով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվի համեմատ, ինչպես նաև գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար դատարանների կողմից կիրառվող ապացուցման բարձր չափանիշը վկայում են ՓԼ վերաբերյալ քրեաիրավական նորմի կիրառման արդյունավետության խնդրի առկայության մասին:
Հ.2	Հիմնականում համապատասխանում է	• Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսված չէ: • Մեղադրական դատավճիռների սահմանափակ թվի պատճառով գնահատողները չկարողացան պարզել, թե արդյոք պատիժները կիրառվում են արդյունավետորեն:

2.2. Ահաբեկչության ֆինանսավորման քրեականացումը (ՀՀ.II)

2.2.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

169. Ահաբեկչության ֆինանսավորումը քրեականացված է ՔՕ-ի 217.1-րդ հոդվածով: Համապատասխան նորմն առաջին անգամ ներդրվեց 2004 թվականին և փոփոխության ենթարկվեց 2008-ին: Առաքելության այցի դրությամբ դեռևս չկային ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով հարուցված կամ քննված քրեական գործեր, ուստի՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից այս նորմի վերաբերյալ քննարկումները հաստատող դատական պրակտիկա փաստացի չկա:

170. Հայաստանը 2004 թ. մարտի 16-ին վավերացրել է Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիան («ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիա») և

միացել ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված բոլոր ինը համաձայնագրերին:

Ահաբեկչության ֆինանսավորման քրեականացումը (չ. II.1).

171. ՔՕ-ի 217.1-րդ հոդվածով նախատեսվում է, որ ահաբեկչության ֆինանսավորումն ուղղակի կամ անուղղակի ֆինանսական միջոցների տրամադրումը կամ հավաքագրումն է այնպիսի հանցավոր մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն, կամ այնպիսի գիտակցությամբ, որ դրանք կօգտագործվեն ամբողջովին կամ մասամբ ահաբեկչության կատարման համար ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից, և որ ահաբեկչության ֆինանսավորումը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ հանցավոր գործունեության հետ կապված գույքի բռնագրավմամբ:

172. ՔՕ-ով չեն նախատեսվում «ահաբեկչական կազմակերպություն» կամ «անհատ ահաբեկիչ» հասկացությունների սահմանումներ: Այնուամենայնիվ, իշխանությունները նշեցին, որ ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի նկատմամբ կիրառելի է «ահաբեկիչ» եզրույթի՝ «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված սահմանումը: Օրենքի 5-րդ հոդվածով «ահաբեկիչ» հասկացությունը սահմանվում է որպես «ահաբեկչական գործողություն, ահաբեկչական գործողության նախապատրաստում կամ դրա կատարման փորձ կատարած անձ»:

173. Եթե հանցանքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից, ապա պատիժը կարող է հասցվել ազատազրկման՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

174. ՖԱԹՖ-ի II հատուկ հանձնարարականով պահանջվում է, որպեսզի ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների սուբյեկտների շրջանակը ներառի այն անձանց, ովքեր գիտակցաբար որևէ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրում կամ ստանում են միջոցներ՝ դիտավորությամբ, գիտակցելով, որ դրանք կօգտագործվեն ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված ահաբեկչական գործողություններ կատարելու համար, կամ ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից:

<u>ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով սահմանված ահաբեկչական գործողությունների ֆինանսավորումը.</u>

175. «Ահաբեկչությունը» ՔՕ-ի 217-րդ հոդվածով սահմանվում է որպես «պայթյուն, հրկիզում կամ մարդկային զոհերի, զգալի գույքային վնաս պատճառելու կամ հանրորեն վտանգավոր այլ հետևանքների առաջացման վտանգ ստեղծող այլ գործողություններ կատարելը կամ կատարելու սպառնալիքը, եթե դրանք կատարվել են հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությանն ահաբեկելու կամ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման վրա ներգործելու կամ հանցավորի ապօրինի այլ պահանջը կատարելու նպատակով»:

176. ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, «ահաբեկչական գործողություններ» հասկացությունը ներառում է. (1) այն հանցագործությունները, որոնք սահմանված են ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով, և (2) ցանկացած այլ գործողություն, որ նպատակ ունի մահ կամ ծանր մարմնական վնաս պատճառել քաղաքացիական կամ որևէ այլ անձի, ով զինված ընդհարման իրավիճակում ակտիվորեն չի մասնակցում պատերազմական գործողություններին, երբ այդ գործողության նպատակը՝ հաշվի առնելով

դրա բնույթը կամ համատեքստը, բնակչությանն ահաբեկելն է կամ կառավարությանը կամ որևէ միջազգային կազմակերպության ստիպելը, որ նրանք կատարեն որոշակի գործողություն կամ ձեռնպահ մնան դրա կատարումից:

177. Ինչ վերաբերում է ահաբեկչության ընդհանուր հանցակազմին, ապա ՔՕ-ի 217-րդ հոդվածի շրջանակը, կարծես, ներառում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված սահմանման բոլոր բաղադրիչները՝ բացի մեկից: Չնայած որ ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված սահմանումը ներառում է նաև միջազգային կազմակերպությանն ահաբեկելու նպատակ հետապնդող գործողությունները, ՔՕ-ի 217-րդ հոդվածն ընդհանրապես չի անդրադառնում միջազգային կազմակերպություններին:

178. ՔՕ-ի 217-րդ հոդվածը չի պարունակում ուղղակի հղում ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված հանցագործություններին: Այս կապակցությամբ միջազգային ստանդարտի պահանջը կատարելու նպատակով անհրաժեշտ է ահաբեկչության ընդհանուր հանցակազմի սահմանումը բավականաչափ ընդլայնել, որպեսզի այն ներառի ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված բոլոր հանցագործությունները: Այնուամենայնիվ, ՔՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված՝ ահաբեկչության ընդհանուր հանցակազմի սահմանման մեջ պահանջվում է հատուկ մտադրության առկայություն, այսինքն՝ արարքը պետք է կատարված լինի «հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությանն ահաբեկելու կամ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման վրա ներգործելու կամ հանցավորի ապօրինի այլ պահանջը կատարելու նպատակով», մինչդեռ ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված հանցակազմերի մեծ մասի դեպքում այդ մտադրության առկայությունը չի պահանջվում:[22]

179. Բացի այդ, ՔՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված սահմանման մեջ պահանջվում է նաև գույքային վնաս պատճառելը կամ հանրորեն վտանգավոր այլ հետևանքների առաջացման վտանգ ստեղծելը կամ նման սպառնալիք գործադրելը, կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված հանցագործություններից մեկի դեպքում չի պահանջվում, որպեսզի գործողությունը վնաս պատճառի կամ վտանգավոր հետևանքներ ունենա կամ գործադրի դրանց սպառնալիքը: Միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիայի համաձայն, միջուկային նյութը խարդախությամբ ձեռք բերելն ինքնին ահաբեկչական հանցագործություն է՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք հանցագործն օգտագործում է կամ սպառնում օգտագործել այդ նյութը հանրության կամ որևէ պետության դեմ:

180. Ուստի, ահաբեկչության հանցակազմի շրջանակը ներկայումս չի ներառում ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով սահմանված բոլոր «ահաբեկչական գործողությունները»:

<u>Անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության ֆինանսավորումն ըստ II հատուկ հանձնարարականի.</u>

[22] Նմանօրինակ մտադրության առկայությունը պահանջվում է միայն Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների դեպքում, այսինքն, հանցագործը պետք է արարքը կատարի՝ մտադրություն ունենալով «ստիպել որևէ երրորդ անձի … կատարելու որևէ գործողություն կամ ձեռնպահ մնալու դրա կատարումից՝ որպես պատանդի ազատ արձակման ուղղակի կամ անուղղակի նախապայման…»:

181. Ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպության ֆինանսավորումը ՔՕ-ի 217.1-րդ հոդվածով քրեականացվում է միայն այն դեպքում, եթե ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են այնպիսի հանցավոր մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն, կամ այնպիսի գիտակցությամբ, որ դրանք կօգտագործվեն ահաբեկչության կատարման համար: Այսինքն, սահմանումը չի ներառում ահաբեկչին ընդհանուր առմամբ ֆինանսավորելու (օրինակ՝ նրա ընթացիկ կենսագործունեությունը ֆինանսավորելու) կամ ահաբեկչական կազմակերպությանն ընդհանուր առմամբ ֆինանսավորելու նպատակով ֆինանսական միջոցների տրամադրումը կամ հավաքագրումը: Դա հաստատվեց նաև իշխանությունների հետ քննարկումներում: Ուստի, ահաբեկչության ֆինանսավորման մասին դրույթն այս մասով II հատուկ հանձնարարականի ոչ բոլոր պահանջներն է արտացոլում:

182. Ինչ վերաբերում է քրեական հանցագործություններին ընդհանրապես, ապա ՔՕ-ի 29-րդ հոդվածով տարբերակվում են դիտավորության երկու ձևերը՝ «ուղղակի դիտավորությունը» (եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը) և «անուղղակի դիտավորությունը» (եթե անձը չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք): Ուստի, ահաբեկչության ֆինանսավորման արարք կատարողը պետք է ֆինանսական միջոցներ տրամադրելիս կամ հավաքագրելիս գործի ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Բացի այդ, նա պետք է դիտավորություն ունեցած լինի կամ գիտակցած լինի, որ ֆինանսական միջոցները կօգտագործվեն ահաբեկչության կատարման համար: Միջազգային ստանդարտով պահանջվում է, որպեսզի ահաբեկչության ֆինանսավորման հանցագործություն կատարողը գործած լինի դիտավորությամբ՝ ունենալով մտադրություն, որպեսզի ֆինանսական միջոցներն օգտագործվեն, կամ ունենալով գիտակցություն, որ դրանք նախատեսվում է օգտագործել ահաբեկչություն ֆինանսավորելու համար: Ուստի, Հայաստանի օրենսդրությունը համապատասխանում է II.1(ա) չափորոշչի այս պահանջի միջազգային ստանդարտին:

<u>Միջոցները.</u>

183. Չնայած որ ԱՖ մասին դրույթի ձևակերպման մեջ տարբերակված չեն «օրինական» և «անօրինական» աղբյուրներից ստացված միջոցները (և հետևաբար, ներառում է թե օրինական, թե անօրինական աղբյուրներից ստացված միջոցները), «ֆինանսական միջոցներ» հասկացությունն օրենքով սահմանված չէ: ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի 3-րդ մասով, սակայն, սահմանվում է «ահաբեկչության ֆինանսավորման առարկա» հասկացությունը՝ որպես «ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված *գույքը*, այդ թվում՝ ՔՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված արարքների ֆինանսավորման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքը, ինչպես նաև ահաբեկչության կատարման համար նախատեսված և դատապարտյալի սեփականությունը հանդիսացող հանցագործության գործիքները, իսկ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքը»: «Գույք» եզրույթի սահմանումն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իր հերթին ներառում է ՖԱԹՖ-ի ստանդարտով սահմանված բոլոր միջոցները:

184. Իշխանությունները հաստատեցին, որ 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթները («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա») միմյանց չեն համապատասխանում օրենքի տեքստը ձևակերպելու սխալի պատճառով: Այնուհանդերձ, նրանք պնդեցին, որ ահաբեկչության ֆինանսավորման դրույթի՝ 1-ին մասով նախատեսված շրջանակը մեկնաբանելիս, միևնույն է, կիրառելի կլինի «ահաբեկչության ֆինանսավորման առարկայի» շրջանակը: Այս խնդրի կապակցությամբ դատական

պրակտիկայի բացակայության պայմաններում, սակայն, նշված տեսակետը դատարանների կողմից դեռևս չի հաստատվել: Ուստի, որպեսզի ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը տարածվի ՖԱԹՖ-ի ստանդարտով նախատեսված բոլոր «միջոցների» նկատմամբ, և որպեսզի բացառվի իշխանությունների մեկնաբանությունը որևէ կերպ հարցականի տակ դնելու հնարավորությունը, գնահատողները կարևոր են համարում ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում գործածված եզրույթների ներդաշնակեցումը:

185. ՔՕ-ի 217.1-րդ հոդվածով նախատեսվում է, որ ահաբեկչության ֆինանսավորման հանցանքը կատարված է համարվում այն ժամանակ, երբ անձը տրամադրում կամ հավաքագրում է ֆինանսական միջոցներ ահաբեկչության կատարմանն օժանդակելու մտադրությամբ: Այս հոդվածի ձևակերպմամբ չի պահանջվում, որպեսզի ֆինանսական միջոցները փաստացի օգտագործված լինեն ահաբեկչական գործողության կամ դրա փորձի մեջ, կամ որպեսզի հավաքագրված/տրամադրված ֆինանսական միջոցները կապված լինեն թվարկմամբ նախատեսված կոնկրետ ահաբեկչական գործողության հետ: Գլխավոր դատախազության ներկայացուցիչները հաստատեցին, որ ՔՕ-ի 217.1-րդ հոդվածով չի պահանջվում, որպեսզի կատարված լինի կոնկրետ գործողություն կամ փորձ: Անձին ահաբեկչության ֆինանսավորման համար քրեական հետապնդման ենթարկելու համար բավարար է ֆինանսական միջոցների հավաքագրումը կամ տրամադրումը՝ մտադրությամբ կամ գիտակցությամբ հանդերձ:

<u>Հանցակցության տեսակներն ըստ ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի 2(5)-րդ հոդվածի.</u>

186. ՔՕ-ի ընդհանուր մասի դրույթները, որոնցով սահմանվում են հանցակցության տեսակները, կիրառելի են բոլոր հանցագործությունների, այդ թվում՝ ահաբեկչության ֆինանսավորման նկատմամբ: Ինչպես մանրամասնորեն ներկայացվեց 1-ին հանձնարարականի 7-րդ տարրի կապակցությամբ, ՔՕ-ի 33-րդ հոդվածով քրեականացվում է հանցափորձը, իսկ ՔՕ-ի 38-րդ հոդվածով նախատեսվում են հանցակիցների մի շարք տեսակներ, ներառյալ կազմակերպիչը՝ անձը, ով կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը, կամ ստեղծել կամ ղեկավարել է կազմակերպված խումբ հանցանք կատարելու նպատակով: Ուստի, ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի 2(5)-րդ հոդվածով նախատեսված հանցակցության բոլոր տեսակները նախատեսված են Հայաստանի օրենսդրությամբ:

Փողերի լվացմանը նախորդող հանցագործություն (չ. II.2).

187. Ահաբեկչության ֆինանսավորումը ՔՕ-ի 190-րդ հոդվածում ներառված է թվարկվող հանցագործությունների ցանկի մեջ, ուստի՝ ըստ Հայաստանի օրենսդրության, ահաբեկչության ֆինանսավորումը փողերի լվացմանը նախորդող հանցագործություն է:

Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության ընդդատություն (չ. II.3).

188. ՔՕ-ի 217.1-րդ հոդվածով որպես քրեական հանցագործություն է նախատեսվում ֆինանսական միջոցների տրամադրումը կամ հավաքագրումը՝ այնպիսի մտադրությամբ, որ դրանք օգտագործվելու են ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների կողմից: 217.1-րդ հոդվածով Հայաստանում գտնվող ահաբեկիչների և ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորումը չի տարբերակվում արտերկրում գտնվողների ֆինանսավորումից:

189. Բացի այդ, ՔՕ-ի 14-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի քրեական օրենսդրությունը տարածվում է Հայաստանում կատարված ցանկացած հանցանքի նկատմամբ: Եթե «տրամադրումը կամ հավաքագրումը» տեղի են ունենում Հայաստանում,

ապա ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը կիրառելի է նույնիսկ այն դեպքերում, երբ շահառուն գտնվում է Հայաստանից դուրս:

190. Ավելին, Հայաստանի քաղաքացիների և Հայաստանում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից արտերկրում կատարված ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունները պատժվում են Հայաստանի քրեական օրենսդրության համաձայն, եթե արարքը քրեական հանցագործություն է այն պետությունում, որի տարածքում դա կատարվել է: Ուստի, ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունը Հայաստանի քրեական օրենսդրությամբ ենթակա է հետապնդման անկախ այն հանգամանքից, թե արդյոք ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձը գտնվում է ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության գտնվելու վայրի երկրում կամ ահաբեկչական գործողության կատարման վայրի երկրում:

ԱՖ հանցագործության սուբյեկտիվ տարրը (չ. 2.2-ի կիրառությունը Հ.2-ի շրջանակում).

191. ՔԴՕ-ի 25-րդ հոդվածով նախատեսվում է քրեական գործերով ապացույցների ազատ գնահատման ընդհանուր սկզբունքի կիրառությունը: Այդ սկզբունքի համաձայն, դատավորը պարտավորված չեն հավաքված ապացույցները գնահատելիս առաջնորդվել որոշակի խիստ կանոններով, այլ՝ կարող են որոշումներ կայացնել իրենց ներքին համոզմամբ: Ուստի, ելնելով այդ սկզբունքից, ցանկացած հանցագործության դիտավորության տարրը կարող է բխեցվել փաստական հանգամանքներից:

Իրավաբանական անձանց պատասխանատվությունը (չ. 2.3-ի և չ. 2.4-ի կիրառությունը Հ.2-ի շրջանակում).

192. Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, սակայն կան վարչական պատիժներ: Թիվ 2 հանձնարարականի 2-րդ և 3-րդ տարրերի կապակցությամբ իրականացված մանրակրկիտ վերլուծությունը կիրառելի է նաև ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության նկատմամբ:

Պատիժներն ԱՖ համար (չ. 2.5-ի կիրառությունը Հ.2-ի շրջանակում).

193. Ահաբեկչության ֆինանսավորումը ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի համաձայն պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ հանցավոր գործունեության հետ կապված գույքի բռնագրավմամբ: Եթե հանցանքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից, ապա կիրառելի պատիժը կարող է հասցվել ազատազրկման՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

194. Ահաբեկչության ֆինանսավորման համար սահմանված պատիժները, ըստ երևույթին, համաչափ են և կարող են տարհամոզիչ լինել: Այնուամենայնիվ, դատական պրակտիկայի բացակայության պարագայում անհնար է եզրակացնել, թե արդյոք դրանք նաև արդյունավետ են:

Արդյունավետությունը.

195. Առաքելության այցի դրությամբ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հետաքննություններ, նախաքննություններ կամ քրեական հետապնդման դեպքեր չէին արձանագրվել:

2.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Փոփոխել ՔՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված՝ «ահաբեկչության» սահմանումը, որպեսզի այն (1) ներառի ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը համաձայնագրերում և արձանագրություններով նախատեսված ահաբեկչության բոլոր հանցագործությունները, և (2) ներառի հղում «միջազգային կազմակերպություններ» հասկացությանը՝ ինչպես պահանջվում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածով,

- Փոփոխել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը, որպեսզի դրա նորմը տարածվի բոլոր այն իրավիճակների նկատմամբ, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից օգտագործման համար ընդհանրապես, երբ բացակայում է ֆինանսական միջոցները կամ գույքն ահաբեկչության կոնկրետ գործողություն կատարելու մեջ օգտագործելու մտադրությունը կամ իմացությունը,

- Ներդաշնակեցնել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթները («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա»), որպեսզի հստակեցվի, որ ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը տարածվում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված բոլոր «միջոցների» նկատմամբ,

- Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ նախատեսելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը:

2.2.3. Համապատասխանությունը II Հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
ՀՀ.II	**Մասամբ համապատասխանում է**	• ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի համաձայն, ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորումը չի քրեականացվում այն իրավիճակներում, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են՝ չունենալով մտադրություն կամ իմացություն, որ գույքը կամ ֆինանսական միջոցներն օգտագործվելու են ահաբեկչական կոնկրետ գործողություն կատարելու համար՝ ինչպես պահանջվում է ՀՀ.II-ով: • Հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթների անհամապատասխանության պատճառով («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա») պարզ չէ, թե արդյոք ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը կիրառելի է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով սահմանված բոլոր «միջոցների» նկատմամբ: • ԱՖ մասին դրույթի մեջ օգտագործված՝ «ահաբեկչության» սահմանումը չի պարունակում հղում «միջազգային կազմակերպություններին»՝ ինչպես պահանջվում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով: • ՔՕ-ի 217-րդ հոդվածով («ահաբեկչություն») պահանջվող դիտավորության տարրն անհարկիորեն սահմանափակում է ԱՖ մասին դրույթի կիրառությունն ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված ահաբեկչական հանցագործությունների մեծ մասի նկատմամբ: • Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն գոյություն չունի:

2.3. Հանցավոր ճանապարհով ստացված եկամտի բռնագրավումը, սառեցումը և առգրավումը (Հ.3)

2.3.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

196. Կախված հանցագործության տեսակից՝ գույքի բռնագրավումը նախատեսվում է Հայաստանի օրենսդրության տարբեր դրույթներով: Նախորդող հանցագործությունների պարագայում գույքի բռնագրավումը նախատեսված է ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով՝ 55(1)-րդ հոդվածի համադրությամբ: ՓԼ հանցագործությունների պարագայում գույքը կարող է բռնագրավվել ՔՕ-ի 55(4)-րդ հոդվածի համաձայն, իսկ ԱՖ հանցագործությունների պարագայում՝ ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածին համապատասխան:

197. Բոլոր նախորդող հանցագործությունների, ինչպես նաև ՓԼ և ԱՖ հանցագործությունների դեպքում կիրառելի են ՔԴՕ-ի 233-րդ հոդվածով նախատեսված առգրավման միջոցները:

198. Ինչպես ներկայացված է սույն հաշվետվությունում թիվ 27 և 28 հանձնարարականների առնչությամբ, ՔԴՕ-ի 225-228-րդ հոդվածներով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-30-րդ հոդվածներով նախատեսվում են այն գույքը հայտնաբերելու և հետապնդելու լրացուցիչ իրավասություններ, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման, կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու մեջ:

ՓԼ, ԱՖ կամ այլ նախորդող հանցագործությունների հետ առնչվող գույքի, այդ թվում՝ համարժեք այլ գույքի բռնագրավումը (չ. 3.1), հանցավոր ճանապարհով ստացված եկամտից ստացված գույքի բռնագրավումը (չ. 3.1.1-ը՝ չ. 3.1-ի կիրառությամբ).

199. Բռնագրավումը ՔՕ-ի 55(1)-րդ հոդվածով սահմանվում է որպես «դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության»:

200. ՔՕ-ի 55-րդ հոդվածը բաղկացած է բռնագրավման մասին երեք առանձին դրույթներից. 55(3)-րդ հոդվածով նախատեսված է բռնագրավման ընդհանուր նորմը, որը սակավաթիվ բացառություններով կիրառելի է բոլոր ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների նկատմամբ: 55(4)-րդ և 55(5)-րդ հոդվածներով նախատեսվում են բռնագրավման այն դրույթները, որոնք բացառապես կիրառելի են համապատասխանաբար ՓԼ և ԱՖ հանցագործությունների նկատմամբ:

201. ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով նախատեսվում է, որ «գույքի բռնագրավումը կարող է նշանակվել ... ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում», բացառությամբ 55(4)-րդ և 55(5)-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, որոնք վերաբերում են ՓԼ և ԱՖ դեպքերին, որոնց նկատմամբ կիրառելի են 55(4)-րդ և 55(5)-րդ հոդվածներով նախատեսված և ստորև ներկայացված՝ բռնագրավման մասին հատուկ դրույթները:

202. ՓԼ հանցագործության վերաբերյալ 55(4)-րդ հոդվածով նախատեսվում է, որ «հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած

կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է»: Չնայած որ ՔՕ-ի 55(4)-րդ հոդվածի ձևակերպումից կարող է տպավորություն առաջանալ, թե նորմը կիրառելի է ոչ միայն ՓԼ, այլ նաև՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ առաջացրած բոլոր հանցագործությունների նկատմամբ, իշխանությունների հետ քննարկումներում բազմիցս նշվեց, որ տվյալ նորմի շրջանակը սահմանափակվում է միայն ՓԼ-ով, և որ այն չի կարող կիրառվել նախորդող հանցագործությանն առնչվող գույքը բռնագրավելու համար:

203. ՔՕ-ի 55(5)-րդ հոդվածով նախատեսվում է, որ «ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի, այդ թվում՝ սույն օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված արարքների ֆինանսավորման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի չհայտնաբերման դեպքում այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է»:

204. Բոլոր երեք դեպքերում բռնագրավումը մեղադրական դատավճռի հիման վրա կիրառվող պատժատեսակ է: Այնուամենայնիվ, բռնագրավումը, որ ՓԼ և ԱՖ համար կայացվող մեղադրական դատավճիռների դեպքում պարտադիր է, 55(3)-րդ հոդվածի համատեքստում հայեցողական պատիժ է՝ ինչպես ներկայացվեց վերը:

<u>Փողերի լվացման հանցագործությանն առնչվող գույքը.</u>

205. ՔՕ-ի 55(4)-րդ հոդվածով նախատեսվում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ՓԼ հանցավոր արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի պարտադիր բռնագրավումը:

206. Վերոհիշյալ նորմը նաև նախատեսում է, որ այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից: Այսինքն, տվյալ նորմով թույլատրվում է նաև երրորդ անձի օտարված գույքի բռնագրավումը: Իշխանությունները հստակեցրեցին, որ դրույթը տարածվում է այն գույքի վրա, որի նկատմամբ դատապարտյալն ունի սեփականության իրավունք, ինչպես նաև նրա կողմից տիրապետվող գույքի և երրորդ անձի սեփականությունը հանդիսացող կամ նրա կողմից տիրապետվող ցանկացած գույքի վրա: Բարեխիղճ երրորդ անձինք պաշտպանված են բռնագրավումից ստորև ներկայացված կարգով:

207. Այսպիսով, ՔՕ-ի 55(4)-րդ հոդվածով թույլատրվում է ՓԼ հանցագործության արդյունքում ստացված եկամտի, ինչպես նաև ՓԼ հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների բռնագրավումը: Չնայած որ ՔՕ-ի 55(4)-րդ հոդվածում ուղղակիորեն չի նշվում լվացված գույքի մասին, *Հայաստանի Հանրապետությունն ընդդեմ Ղուկասյանի* (ԵԱԴԴ/0041/01/08) գործով

դատարանը ՔՕ-ի 55(4)-րդ հոդվածի համաձայն բռնագրավում տարածեց նախորդող հանցագործությունից ստացված եկամտի՝ որպես ՓԼ հանցագործության առարկայի նկատմամբ:

Ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության կատարմանն առնչվող գույքը.

208. ՔՕ-ի 55(5)-րդ հոդվածով նախատեսվում է, որ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի, այդ թվում՝ սույն օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված արարքների ֆինանսավորման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի չհայտնաբերման դեպքում այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է:

209. Ինչպես ՓԼ հետ կապված գույքի բռնագրավման դեպքում, ԱՖ հետ կապված գույքը նույնպես կարող է բռնագրավվել՝ անկախ դրա՝ դատապարտյալի կամ երրորդ անձի կողմից տիրապետելու հանգամանքից:

210. Ուստի, 55(5)-րդ հոդվածը տարածվում է և ԱՖ հանցագործության առարկայի, և հանցագործության կատարումից ստացված եկամտի, հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների նկատմամբ:

Նախորդող հանցագործությանն առնչվող գույքը.

211. Ինչպես նշվեց, չնայած որ ՔՕ-ի 55(4)-րդ հոդվածի ձևակերպումից կարող է տպավորություն առաջանալ, թե նորմը կիրառելի է ոչ միայն ՓԼ, այլ նաև՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ առաջացրած բոլոր հանցագործությունների նկատմամբ, իշխանությունների հետ քննարկումներում նշվեց, որ տվյալ նորմի շրջանակը սահմանափակվում է միայն ՓԼ-ով, և որ այն չի կարող կիրառվել նախորդող հանցագործությանն առնչվող գույքը բռնագրավելու համար:

212. Այնուհանդերձ, ՓԼ-ից և ԱՖ-ից զատ այլ հանցագործությունների մասով ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով նախատեսված՝ բռնագրավման ընդհանուր նորմով նախատեսվում է, որ գույքի բռնագրավումը կարող է նշանակվել «շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար» ՔՕ-ի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ ՓԼ և ԱՖ դեպքերի:

213. Բացի այդ, ՔՕ-ի 55(1)-րդ հոդվածով նախատեսվում է, որ դատապարտյալի սեփականությունը համարվող ողջ գույքը կարող է բռնագրավվել, չնայած որ անձնական օգտագործման որոշ իրեր, օրինակ՝ օգտագործվող կենցաղային իրերը, մասնագիտական կրթության համար անհրաժեշտ գրքերը և հաշմանդամների տեղաշարժման համար նախատեսված պարագաները ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 3-րդ բաժնի համաձայն ենթակա չեն բռնագրավման: Դատապարտյալին պատկանող բոլոր այլ իրերը, այդ թվում՝ նախորդող հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, նախորդող հանցագործության կատարման արդյունքում ստացված եկամուտները և այդ գույքին համարժեք այլ գույքը ենթակա են բռնագրավման:

214. ՔՕ-ի 19(4)-րդ և 19(5)-րդ հոդվածի համաձայն, «ծանր հանցագործություններ» են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսված առավելագույն պատիժը հինգից տաս տարի է, իսկ «առանձնապես ծանր հանցագործություններ» են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսված է ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում: ՔՕ-ի 190-րդ հոդվածով սահմանված նախորդող հանցագործությունների մեծ մասը չի համարվում «ծանր» կամ «առանձնապես ծանր» հանցագործություն: Մասնավորապես, ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով չի թույլատրվում այն եկամուտների բռնագրավումը, որոնք ստացվել են սեռական շահագործման հետ կապված որոշակի հանցագործություններից (մասնավորապես՝ «պոռնկության մեջ ներգրավելու» և «պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու» հանցագործություններից), զենքի ապօրինի շրջանառության հասարակ ձևից, գողացված կամ այլ ապրանքների անօրինական շրջանառությունից, խարդախության և կոռուպցիայի և կաշառքի հետ կապված մի շարք հանցագործություններից, կեղծ ապրանքներ պատրաստելու հանցագործությունից, բնապահպանական հանցագործությունների մեծ մասից, գողության կամ կողոպուտի հետ կապված բազմաթիվ հանցագործություններից և շորթման հասարակ ձևից:

215. ՔՕ-ի 55(1)-րդ հոդվածը կիրառելի է միայն դատապարտյալի սեփականությունը համարվող գույքի նկատմամբ, ընդ որում՝ նախորդող հանցագործությունների վերոհիշյալ սահմանափակ շրջանակի կապակցությամբ միայն:

216. Այսպիսով, հաշվի առնելով, որ ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածի շրջանակը նախորդող ոչ բոլոր հանցագործությունների նկատմամբ է տարածվում, Հայաստանի օրենսդրությամբ թույլատրվում է միայն որոշ, բայց ոչ՝ բոլոր նախորդող հանցագործությունների կատարումից ստացված եկամտի կամ դրանց կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների նկատմամբ:

Բռնագրավման ենթակա գույքի տնօրինումը կանխելու նպատակով կիրառվող կանխարգելիչ միջոցները (չ. 3.2).

217. ՔԴՕ-ի 233(1)-րդ հոդվածով նախատեսվող ընդհանուր նորմով թույլատրվում է քրեական գործի շրջանակներում գույքի վրա կալանք դնելը քաղաքացիական հայցը և դատական ծախսերն ապահովելու համար: Գույքի վրա կալանք դնել կարելի է միայն այն դեպքում, եթե. (1) կալանադրման ենթակա գույքը կարող է թաքցվել, փչացվել կամ սպառվել, (2) բավարար հիմքեր կան՝ ենթադրելու, որ մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել գույքը, և (3) գույքը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման: Կալանք դրվում է և կասկածյալի գույքի, և այն անձանց գույքի վրա, որոնց վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ում մոտ է գտնվում կամ ում է պատկանում գույքը:

218. ՔՕ-ի 233(1)-րդ հոդվածում հղում է արվում այն գույքին, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման: Ուստի, 3.1. չափորոշչի մեջ նշված ողջ գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման, նույնպես կարող է կալանադրվել:

219. ՔԴՕ-ի 233(1.1.)-րդ հոդվածով, սակայն, նախատեսվում է, որ մի շարք հանցագործությունների, այդ թվում՝ ՓԼ, ԱՖ և նախորդող հանցագործությունների՝ ՖԱԹՖ-ի նախատեսած բոլոր տեսակների հատկանիշներով գործերի քննության ընթացքում քրեական հետապնդում իրականացնող մարմինը գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել բռնագրավման ենթակա գույքը: Նշված դրույթով

թույլատրվում է թվարկված հանցագործությունների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ամբողջ գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ հանցագործությունների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների վրա կալանք դնել այն հայտնաբերելուց հետո անհապաղ: Գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից: Ի տարբերություն 3.1. չափորոշչի շրջանակներում քննարկված՝ բռնագրավման մասին դրույթների, ՔԴՕ-ի 233(1.1.)-րդ հոդվածով փաստորեն չի թույլատրվում կալանք դնել ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործության կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք այլ օրինական գույքի վրա:

220. Գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կայացվում է ոչ թե դատարանի, այլև՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, որը ՓԼ և ԱՖ պարագայում ԱԱԾ-ն է, որն այդ որոշումը կայացնում է քրեական գործի հարուցումից հետո ցանկացած պահի, դատախազության վերահսկողության ներքո, ՔԴՕ-ի 55-րդ հոդվածով սահմանված կարգով՝ վերոհիշյալ 233(1.1.)-րդ հոդվածի համադրությամբ:

221. Հայաստանի Հանրապետության ՔԴՕ-ով նախատեսված չէ բանկային հաշիվների սահմանափակման առանձին իրավասություն: Ուստի, բանկային հաշիվներն ապահովվում են այնպես, ինչպես ցանկացած այլ գույք, այսինքն՝ ՔԴՕ-ի 233-րդ հոդվածի համաձայն կայացված՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշմամբ: Ի լրումն ՔԴՕ-ի 233-րդ հոդվածի, ՔԴՕ-ի 13-րդ հոդվածով նախատեսվում է «գույքի անձեռնմխելիությունը», այսինքն՝ «անձանց բանկային ավանդների և այլ գույքի վրա կալանք» դնելը քրեական գործի հարուցումից հետո: Այս միջոցը կարող է կիրառվել նույնիսկ առանց դատարանի որոշման՝ հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշմամբ:

222. Հայաստանի Հանրապետության ՔԴՕ-ով նախատեսվում են ՓԼ և ԱՖ գործերի քննության երեք փուլեր՝ գործի հարուցումը, հետաքննությունը և նախաքննությունը:

223. ՔԴՕ-ի 182-րդ հոդվածի համաձայն, քրեական գործ հարուցվում է միայն քրեական գործ հարուցելու «հիմքերի» կամ «առիթի» առկայության դեպքում:

224. Սույն հաշվետվության մեջ թիվ 27 հանձնարարականի կապակցությամբ մանրամասնորեն ներկայացվում են ՓԼ գործերի տարբեր փուլերը, այդ թվում՝ հարուցման, հետաքննության և նախաքննության տարբերությունները:

225. ՔԴՕ-ի 233(3)-րդ հոդվածով նախատեսվում է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ պետք է նշվի կալանքի ենթակա գույքը: 235-րդ հոդվածով նախատեսվում է, որ քննիչը կամ դատախազը սեփականատիրոջը կամ տիրապետողին ստորագրությամբ հանձնում են գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը և պահանջում հանձնել այն: Այդ պահանջը կամովին կատարելուց հրաժարվելու դեպքում, կամ եթե հիմքեր կան՝ կասկածելու, որ գույքը չի հանձնվի կալանք դնելու մասին որոշման համաձայն, դատախազը դիմում է դատարան՝ ստանալու խուզարկության օրդեր, որը կնպաստի գույքի վրա կալանք դնելու մասին որոշման հարկադիր կարգով կատարումը: Գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատախազին, սակայն ներկայացված բողոքը չի կասեցնում համապատասխան որոշման ի կատար ածելը:

226. Լրացուցիչ իրավասություններ են նախատեսված «Ոստիկանության մասին» օրենքով: Վերջինիս 20-րդ հոդվածում նշվում է, որ ոստիկանությունն իրավունք ունի «մուտք գործելու

... արտադրության և այլ ձեռնարկատիրական գործունեության նպատակով զբաղեցված տարածքներ ... և ... կատարել զննություն, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների զննություն, և առգրավել հանցագործության հետ ուղղակիորեն առնչվող հումքի և արտադրանքի նմուշներ»: 19-րդ հոդվածով ոստիկանությանն իրավունք է վերապահվում ստուգել երկաթուղային, օդային, ջրային տրանսպորտի ուղևորների ձեռքի իրերը և ուղեբեռները և առգրավել այն իրերը, որոնց տեղափոխումն արգելված է: 23-րդ հոդվածով նաև թույլատրվում է զննել զենքի առևտրի կամ պահպանության վայրերը և առգրավել և ոչնչացնել շրջանառությունն արգելված զենքը:

Կանխարգելիչ միջոցների կիրառությունն առանց կողմի գիտության (չ. 3.3).

227. Քրեական դատավարության օրենսգրքի 233(2)-րդ հոդվածով նախատեսվում է, որ գույքի վրա կալանք դնելը կատարվում է հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշման հիման վրա: Գույքի վրա կալանք դնելու համար ՔԴՕ-ի 233-րդ հոդվածով չի պահանջվում դատարանի որոշում: Գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը շարունակում է գործել այնքան ժամանակ, մինչև գործի դադարեցումը կամ դատարանի կողմից մեղադրական դատավճռի կայացումը: Ուստի, այս միջոցը կարող է կիրառվել առանց շահագրգիռ կողմերի գիտության և առանց նրանց նախապես այդ ծանուցելու: Հետևաբար, Հայաստանը համապատասխանում է այս չափորոշչին:

Բռնագրավման ենթակա գույքի հայտնաբերումը և հետապնդումը (չ. 3.4).

228. Եվ ՔԴՕ-ով, և ՕՀԳՕ-ով նախատեսվում են մի շարք միջոցներ, որոնց օգնությամբ հնարավոր է հայտնաբերել և հետապնդել այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման: Ֆինանսական հաստատությունների կողմից տնօրինվող գաղտնի տեղեկությունների հասանելիության վերաբերյալ լրացուցիչ դրույթներ են նախատեսված «Բանկային գաղտնիքի մասին» և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքներով:

229. ՕՀԳՕ-ով նախատեսված միջոցների շարքն են դասվում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդակցության վերահսկումը, անձի կամ տարածքի ներքին դիտումը տեխնիկական սարքերի օգնությամբ, ապրանքների և ծառայությունների հսկիչ գնումը և վերահսկելի մատակարարումը, ինչպես նաև ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը:

230. ՔԴՕ-ով նախատեսվում է նաև ապացույցների և փաստաթղթերի առգրավումը, ինչպես նաև խուզարկության մասին որոշումների կայացումը դատարանների կողմից: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց վերևում և կնշվի ստորև՝ թիվ 28 հանձնարարականին առնչվող բաժիններում, ՔԴՕ-ի հիման վրա կիրառվող քննչական գործողությունները թույլատրվում են միայն քրեական գործի հարուցումից հետո: Նախքան քրեական գործ հարուցելը թույլատրվում է ձեռնարկել ՕՀԳՕ-ով նախատեսված միջոցները (քննարկվում է ստորև՝ թիվ 27 հանձնարարականին առնչվող բաժնում):

231. Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների՝ իրավասու մարմինների կողմից ստացման վերաբերյալ դրույթների վերլուծության համար հարկ է ուսումնասիրել թիվ 4 հանձնարարականը և դրա կապակցությամբ սույն հաշվետվությունում արծարծված խնդիրները: Մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության վերաբերյալ դրույթների վերլուծության համար հարկ է ուսումնասիրել թիվ 26 և 28 հանձնարարականները և դրանց կապակցությամբ սույն հաշվետվությունում արծարծված խնդիրները:

Բարեխիղճ երրորդ անձանց պաշտպանությունը (չ. 3.5).

232. Թե ՔԴՕ-ի 233 (1.1.)-րդ հոդվածով նախատեսված՝ գույքի վրա կալանք դնելու միջոցները, թե ՔՕ-ի 55(4)-րդ և 55(5)-րդ հոդվածներով նախատեսված բռնագրավումը հնարավոր են՝ անկախ տվյալ գույքի՝ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից: Այնուամենայնիվ, նախորդող հանցագործությունների մասով 55(3)-րդ հոդվածով չի թույլատրվում դատապարտյալի գույքի բռնագրավումն այն դեպքում, երբ գույքը հանդիսանում է որևէ երրորդ անձի սեփականությունը կամ տիրապետվում է երրորդ անձի կողմից. հետևաբար, բարեխիղճ երրորդ անձանց պաշտպանությունը նախատեսված չէ:

233. Ինչ վերաբերում է բռնագրավմանը, ապա 55(6)-րդ հոդվածով ուղղակիորեն նախատեսվում է, որ բռնագրավման ենթակա չէ բարեխիղճ երրորդ անձի գույքը, ընդ որում՝ «բարեխիղճ երրորդ անձ» է հանդիսանում այն անձը, որը գույքն այլ անձի հանձնելիս չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցավոր նպատակներով:

234. Հետևաբար, օրենսդրության նորմերը համապատասխանում են այս չափորոշչին:

Գործողություններն անվավեր ճանաչելու իրավասությունը (չ. 3.6).

235. ՔԴՕ-ի մեջ չկա կոնկրետ դրույթ, որը դատարանին կամ դատախազին թույլ կտար կանխել կամ անվավեր ճանաչել պայմանագրային կամ այլ գործողություններն այն դեպքերում, երբ դրանց մասնակցող անձինք իմացել են կամ պետք է իմանային, որ այդ գործողությունների արդյունքում սահմանափակում են բռնագրավման ենթակա գույքը ստանալու՝ պետական մարմինների հնարավորությունը: Այնուամենայնիվ, գործարքը կարող է անվավեր ճանաչվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի համաձայն, եթե այն կնքվել է խաբեության ազդեցության ներքո կամ մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ: Ուստի, Հայաստանի օրենսդրությունը համապատասխանում է այս չափորոշչին:

Լրացուցիչ տարրեր (Հ.3). օրենքով նախատեսվու՞մ է արդյոք. ա) այն կազմակերպությունների գույքը բռնագրավելու հնարավորությունը, որոնք իրենց բնույթով ճանաչվում են հիմնականում քրեական կազմակերպություններ, բ) քաղաքացիական բռնագրավում, և գ) գույքի այնպիսի բռնագրավում, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը (չ. 3.7).

236. Հայաստանի օրենսդրությամբ չի նախատեսվում քաղաքացիական բռնագրավում կամ գույքի այնպիսի բռնագրավում, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը: Նմանապես, օրենքով չի թույլատրվում քրեական կազմակերպությունների գույքի բռնագրավումը, բացառությամբ այն հանցագործության հետ ուղղակիորեն կապված կազմակերպությունների պարագայում, որոնց համար կայացվել է մեղադրական դատավճիռը:

Արդյունավետությունը և վիճակագրությունը (Հ.32)

237. Առգրավումների և բռնագրավումների մասին վիճակագրական տվյալները վարում է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը:

238. Այդ վիճակագրության համաձայն, Հայաստանում 2005 թվականից ի վեր ՓԼ հատկանիշներով հարուցված երեք գործերով առգրավված գույքի ընդհանուր արժեքը

կազմում է 40,000 եվրո, 15,000,000 դրամ (մոտ 49,155 ԱՄՆ դոլար կամ 39,200 եվրո) և 16,650,000 դրամ (մոտ 54,560 ԱՄՆ դոլար կամ 43,600 եվրո): Առաջին գործի շրջանակում առգրավման մասին որոշումը բեկանվել է, և 40,000 եվրո արժողությամբ գույքը վերադարձվել է: Մյուս երկու գործերով դատավարությունները դեռևս շարունակվում են:

239. Մեկ այլ գործով ՓԼ համար մեղադրական դատավճռի կայացումից հետո բռնագրավվել է 4,600,000 դրամ (մոտ 12,000 եվրո կամ 12,040 ԱՄՆ դոլար) արժողությամբ գույք:

Տարի	Քանի քրեական գործի շրջանակներում է գույք առգրավվել	Առգրավված գույքի ընդհանուր արժեքը	Քանի գործի շրջանակներում է գույք բռնագրավվել	Բռնագրավված գույքի ընդհանուր արժեքը
2005	-	-	-	-
2006	-	-	-	-
2007	-	-	-	-
2008	3	40,000 եվրո և 31,650,000 դրամ	-	Դատավա-րություններն ընթացքի մեջ են
2009 (2009 թ. փետրվարի 15-ի դրությամբ)	-	-	1	4,600,000 դրամ

240. 2005 թվականից ի վեր նախորդող հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է մոտ 15,000 քրեական գործ, որոնցից 121-ով բռնագրավված գույքի ընդհանուր արժեքը կազմել է մոտ 500,000,000 դրամ (մոտ 1.3 միլիոն եվրո կամ 1.6 միլիոն ԱՄՆ դոլար):

241. Չնայած որ իրավական դաշտում նախատեսվում է լվացված գույքի, ՓԼ և ԱՖ հանցագործություններից, ինչպես նաև որոշ նախորդող հանցագործություններից ստացված եկամուտների, օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների առգրավվման և բռնագրավման հնարավորությունը, գնահատողները վերոհիշյալ վիճակագրական տվյալների հիման վրա լրջորեն հարցականի տակ են դնում առկա հնարավորությունների կիրառության արդյունավետությունը պրակտիկայում և ՓԼ և այլ գործերի համատեքստում:

242. Մասնավորապես, պարզ չէ, թե ինչու են իշխանությունները ՓԼ հատկանիշներով հարուցված 22 գործերից միայն երեքի պարագայում որոշել առգրավվել գույքը կամ գործիքները, կամ թե ինչու է միայն մեկ գործի պարագայում իրականացվել գույքի բռնագրավում:

243. Դիտարկելով նախորդող հանցագործությունների հատկանիշներով քննված գործերի ընդհանուր թվաքանակը և դրանց վարույթներում բռնագրավված գույքի ընդհանուր արժեքը, տպավորություն է առաջանում, որ իրավապահ մարմինները ծանոթ են ՔՕ-ի և ՔԴՕ-ի՝ առգրավման և բռնագրավման մասին դրույթներին և կիրառում են վերջիններս այլ, բայց ոչ՝ ՓԼ գործերի համատեքստում: Հետևապես, պարզ չէ, թե ՓԼ գործերի պարագայում

առգրավման միջոցներն ինչու են մինչ օրս կիրառվել միայն սահմանափակ թվով գործերի շրջանակում:

2.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով չնախատեսված բոլոր նախորդող հանցագործությունների վերաբերյալ պետք է սահմանել համապատասխան նորմեր, որոնք հնարավորություն կընձեռեն բռնագրավել հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտները կամ հանցագործությունների կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև այդ գույքին համարժեք այլ՝ օրինական ծագում ունեցող գույքը,

- ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածը պետք է փոփոխել՝ թույլատրելու գույքի բռնագրավումն անկախ դրա՝ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից,

- Միջոցներ ձեռնարկել՝ նախատեսելու ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ դրանց կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք օրինական ծագում ունեցող գույքի առգրավման հնարավորությունը,

- ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմինները հնարավորություն ունենան արդյունավետորեն հայտնաբերել և հետապնդել այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու մեջ, այդ թվում՝ նաև այն դեպքերում, որոնցում դեռևս չկա կոնկրետ «կասկածյալ»,

- Իրավապահ մարմինները պետք է ՓԼ և ԱՖ հետաքննությունների/նախաքննությունների համատեքստում ապահովեն կանխարգելիչ միջոցների արդյունավետ իրագործումն այն գույքի նկատմամբ, որը կարող է ենթակա դառնալ բռնագրավման,

- Հայաստանյան իշխանությունները պետք է վերանայեն բռնագրավման նկատմամբ իրենց մոտեցումը՝ նպատակ հետապնդելով ավելացնել բռնագրավման գործողությունների թիվը և խրախուսել բռնագրավման մասին դրույթների առավել հաճախակի կիրառությունը,

- Իշխանությունները պետք է դիտարկեն քրեահրավական դաշտի գնահատման նպատակահարմարությունը՝ պարզելու համար, թե արդյոք ճիշտ կլինի ներդնել քաղաքացիական բռնագրավման ինստիտուտ կամ գույքի այնպիսի բռնագրավման ինստիտուտ, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը, կամ՝ քրեական կազմակերպությունների գույքի բռնագրավման ինստիտուտը՝ չսահմանափակվելով միայն այն կազմակերպություններով, որոնք ուղղակիորեն կապված են մեղադրական դատավճռի հիմքում ընկած հանցագործությունների հետ:

2.3.3. Համապատասխանությունը թիվ 3 հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.3	Մասամբ համապատասխանում է	• Բռնագրավման մասին դրույթները տարածվում են ՖԱԹՖ-ի նախատեսած նախորդող հանցագործությունների մի մասի, սակայն ոչ բոլորի նկատմամբ: • ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով չի թույլատրվում դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսացող կամ նրանց կողմից տիրապետվող գույքի բռնագրավումը: • ՔԴՕ-ի 233 (1.1.)-րդ հոդվածով չի նախատեսվում ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ դրանց կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք գույքի առգրավման հնարավորությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն սահմանափակում են իրավապահ մարմինների կարողությունը՝ արդյունավետորեն հայտնաբերելու և հետապնդելու այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման, հատկապես նախքան կոնկրետ կասկածյալի ի հայտ գալը, կամ երբ անհրաժեշտ տվյալները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի: • Բռնագրավման մասին դրույթները և կանխարգելիչ միջոցներն ըստ երևույթին արդյունավետորեն չեն իրագործվում այն գույքի նկատմամբ, որը կարող է ենթակա դառնալ բռնագրավման:

2.4. Ահաբեկչության ֆինանսավորման նպատակով օգտագործվող միջոցների սառեցումը (ՀՀ.III)

2.4.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

244. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի նորմերը նպատակաուղղված են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի կատարմանը: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն, «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի ... կատարման նպատակով լիազոր մարմինը պետք է հրապարակի ահաբեկչության հետ կապված անձանց ցանկեր և ապահովի դրանցում ներառված, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված այլ անձանց ֆինանսական միջոցների անմիջապես սառեցումը»: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3(11)-րդ հոդվածով նախատեսվում է, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով «լիազոր մարմինը» ՀՀ ԿԲ-ն է: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10.2-րդ հոդվածով, 10.1(18)-ի համադրությամբ, նախատեսվում է նաև, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված՝ ցանկերը հրապարակելու ՀՀ ԿԲ-ի լիազորությունը վերապահված է ՖԴԿ-ին:

245. Օրենքը չի սահմանում «միջոցներ» եզրույթը: Ուստի, պարզ չէ, թե որքանով է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածը ներառում «ցանկացած տեսակի ֆինանսական գույքը՝ նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ, անկախ դրա ձեռքբերման եղանակից, ինչպես նաև ցանկացած, ներառյալ էլեկտրոնային կամ թվային տեսքով իրավական փաստաթղթերը և գործիքները, որոնք հավաստում են այդ միջոցների կամ այլ գույքի (ոչ սպառիչ թվարկմամբ ներառում է բանկային վարկերը, ճանապարհորդական չեկերը, բանկային չեկերը, վճարման հաճնարարականները, բաժնետոմսերը, արժեթղթերը, պարտատոմսերը, մուրհակները, ակրեդիտիվները)

նկատմամբ իրավունքը կամ շահը, ինչպես նաև այդ միջոցներից կամ այլ գույքից ստացվող կամ դրանց նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, դիվիդենտները (շահութաբաժիններ) կամ այլ եկամուտները կամ արժեքը»: Իշխանությունները նշեցին, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածը պարզապես տարածվում է ֆինանսական միջոցների, բայց ոչ՝ այնպիսի գույքի նկատմամբ, ինչպիսին է, օրինակ, անշարժ գույքը կամ տնտեսական այլ ռեսուրսները:

246. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դաշտում գործող և այդ կապակցությամբ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները կրող անձանցից են մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ, օրինակ՝ «անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմինը»՝ անշարժ գույքի առուվաճառքի գործարքների մասով, ի թիվս այլ գործարքների: Ուստի, տպավորություն է առաջանում, որ նախատեսված անձանց գույքը սառեցնելու պարտավորությունը կարող է կիրառելի լինել նաև անշարժ գույքի նկատմամբ: Իշխանությունների հետ քննարկումներում նշվեց, որ չնայած որ տեսականորեն այդ պարտավորությունը գոյություն ունի, պարզ չէ, թե պրակտիկայում, եթե առաջանա նման դեպք, ինչպես կարող է իրականացվել այդպիսի գույքի սառեցումը: Մեկ այլ օրինակ է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը, որի նկատմամբ նույնպես տարածվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դրույթները. այնուամենայնիվ, պարզ չէ, թե 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմներն ինչպես կարող են կիրառելի լինել գործունեության այն տեսակների կամ այն ընկերությունների նկատմամբ, որոնց վերաբերյալ կպարզվի, որ դրանք տիրապետվում/վերահսկվում են նախատեսված ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից:

247. «Ահաբեկչության հետ կապված անձ» հասկացությունը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3(23)-րդ հոդվածով սահմանվում է որպես «ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ներառվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հրապարակած անձանց և կազմակերպությունների կամ լիազոր մարմնի ներկայացրած ցանկերում, ինչպես նաև ահաբեկչության մեջ կասկածվող, մեղադրվող կամ դատապարտված անձինք»: «Ֆինանսական միջոցների սառեցումն» օրենքի 3(29)-րդ հոդվածով սահմանվում է որպես «սույն օրենքով սահմանված կարգով ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք»:

248. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25(3)-րդ հոդվածի համաձայն, ֆինանսական միջոցների սառեցումը կարող է նախաձեռնվել ուղղակիորեն հաշվետվություն տրամադրող անձի կողմից (համընկնման դեպքում նրանք պարտավոր են սառեցնել) կամ կատարվել ՀՀ ԿԲ-ի խորհրդի որոշմամբ (ՖԴԿ-ի ներկայացմամբ): Ֆինանսական միջոցները սառեցվում են 5-օրյա ժամկետով: Երբ սառեցման մասին որոշումն ուղղակիորեն կայացվել է հաշվետվություն տրամադրող անձի կողմից, ապա վերջինս պարտավոր է ՖԴԿ-ին ներկայացնել կասկածելի գործարքի հաշվետվություն (ԿԳՀ): Նախքան վերոհիշյալ 5-օրյա ժամկետի ավարտը ՀՀ ԿԲ-ի խորհուրդը կարող է իր նախաձեռնությամբ կամ հաշվետվություն տրամադրող անձի միջնորդությամբ վերացնել սառեցման մասին որոշումը:

249. ՖԴԿ-ն պարտավոր է 5-օրյա ժամկետում որոշում կայացնել կամ քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու մասին կամ սառեցման որոշումը վերացնելու մասին: Սահմանված ժամկետում որոշում չկայացնելու դեպքում սառեցման մասին որոշումը համարվում է վերացված: Քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու պահից սառեցման ժամկետը համարվում է 10 օրով երկարաձգված: Եթե քրեական հետապնդման մարմինները 10-օրյա ժամկետի ընթացքում որոշում են կայացնում ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին, ապա գույքի վրա կարող է կալանք դրվել ՔԴՕ-ի 233-րդ հոդվածով սահմանված

կարգով: Հակառակ պարագայում, սառեցման մասին որոշումն ինքնաբերաբար վերանում է 10-օրյա ժամկետի ավարտից հետո:

Գույքի սառեցումն Անվտանգության խորհրդի S/Res/1267 բանաձևի համաձայն (չ. III.1).

250. Չնայած որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածը նպատակաուղղված է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևի կատարմանը, 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման միջոցը զուտ ժամանակավոր բնույթ ունի: Իշխանությունները նշեցին, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևի համաձայն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդից ստացվող ցանկերի համատեքստում նույնպես սառեցումը կարող է շարունակվել միայն ներպետական մակարդակով քրեական գործի հարուցման հիման վրա և կգործի մինչև գործով վարույթի ավարտը: Այս մոտեցումը խնդրահարույց է, քանի որ ներպետական մակարդակով սառեցման մասին որոշման կայացումը վերապահված է հայաստանյան դատարանների հայեցողությանը, մինչդեռ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևով միանշանակորեն նախատեսվում է, որ նախատեսված անհատների կամ կազմակերպությունների գույքի սառեցման հարցում պետություններին որևէ հայեցողություն վերապահված չէ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմը ներպետական վարույթի հետ կապակցելու՝ Հայաստանի որդեգրած մոտեցման հետևանք է նաև այն, որ սառեցում կարող է նախաձեռնվել միայն այն դեպքում, եթե իրավասու մարմինները բավարարում են քրեաիրավական վարույթի շրջանակներում սառեցում կիրառելու համար ներպետական օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

251. Բացի այդ, հաշվի առնելով, որ ներպետական վարույթի հարուցումը կախված է կասկածյալի հայտնաբերումից, որն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության դեպքում կարող է միայն ֆիզիկական անձ լինել, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված հնարավորությունները կիրառելի չեն կարող լինել նաև ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից նախատեսված իրավաբանական անձանց նկատմամբ: Հայաստանի օրենսդրությամբ չի նախատեսվում որևէ այլ ընթացակարգ կամ մեխանիզմ, որը համարժեքորեն կբավարարի ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևի պահանջները:

Գույքի սառեցումն Անվտանգության խորհրդի S/Res/1373 բանաձևի համաձայն (չ. III.2).

252. Ինչպես նշվեց, չնայած այն հանգամանքին, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածը ՀՀ ԿԲ-ին լիազորություն է վերապահում՝ նախատեսելու ահաբեկչության հետ կապված անձանց և ներկայացնելու նրանց ցանկերը, այդ լիազորությունը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն վերապահվել է ՖԴԿ-ին:

253. Իշխանությունները նշեցին, որ պրակտիկայում երբևէ անհրաժեշտ չի համարվել ազգային մակարդակով ստացվող օպերատիվ կամ այլ տեղեկությունների հիման վրա որևէ մեկին նախատեսել որպես ահաբեկիչ կամ ահաբեկչական կազմակերպություն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1373 բանաձևի համաձայն: Իշխանությունները նաև նշեցին, որ Հայաստանը երկու անգամ այլ վայրերից ստացել է ցանկեր՝ նախատեսված անհատների և կազմակերպությունների գույքը սառեցնելու հարցումներով հանդերձ (ԱՄՆ-ի OFAC-ի ցանկերը և ԵՄ կանոնակարգերն ահաբեկչության հետ կապված անձանց և խմբերի մասին): ՖԴԿ-ն, խորհրդակցելով Միջգերատեսչական հանձնաժողովի հետ, քննել է հարցումները և որոշել չընդունել այդ նախատեսումները: Ուստի, ցանկերը չեն ուղարկվել Հայաստանում գործող ֆինանսական հաստատություններին կամ ՆՈՖԳՏՄ-ներին: Այնուամենայնիվ, ՖԴԿ-ի ներկայացուցիչները նշեցին, որ վերոհիշյալ երկու դեպքերում էլ ցանկերում ներառված անհատների անուններն ավելացվել են ՖԴԿ-ի տվյալների բազային, որի արդյունքում

ավտոմատաբար ստուգվում և դրանց համադրվում են հաշվետվություն տրամադրող անձանց տրամադրած ԿԳՀ-ները և ՆՇԳՀ-ները («նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություններ»), և համընկնման դեպքում ՖԴԿ-ն անմիջապես սառեցնում է կատարված գործարքը: Իշխանությունների կողմից վերոհիշյալ դեպքերի նկատմամբ որդեգրած մոտեցումը ոչ ամբողջովին է հասկանալի. մի կողմից, OFAC-ի և ԵՄ-ի ցանկերով նախատեսված անունները ԿԳՀ-ների իմաստով պահպանվել են, այսինքն՝ այդ անձանց միջոցները կառեցվեն, եթե նրանցից մեկի վերաբերյալ ԿԳՀ ստացվի: Մյուս կողմից, անունները չեն ուղարկվել հաստատություններին՝ բացառելով համընկնող անունները գտնելու, այդ կերպ կասկած առաջացնելու և կոնկրետ անվանը հանդիպելու դեպքում ԿԳՀ ներկայացնելու հնարավորությունը:

254. Հայաստանը չի սահմանել այլ պետություններից ստացվող ցանկերի ստուգման ֆորմալ ընթացակարգեր:

Այլ պետությունների ձեռնարկած սառեցման գործողությունները (չ. III.3).

255. Հայաստանը երբևէ չի ստացել այլ երկրների սառեցման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված սառեցման գործողությունները կիրառելու մասի հարցումներ: Նման հարցում ստանալու դեպքում ՖԴԿ-ն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի հիման վրա իրավասու է գույքը սառեցնել 15-օրյա ժամկետով: Նշված ժամկետի ավարտից հետո սառեցումը կարող է շարունակվել միայն ԱՖ հատկանիշներով քրեական գործ հարուցելու դեպքում:

Չ. III.1-III.3 չափորոշիչների տարածումը նախատեսված անձանց կողմից վերահսկվող միջոցների կամ գույքի նկատմամբ (չ. III.4).

256. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսվում է ցանկերում «ներառված, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված այլ անձանց ֆինանսական միջոցների» սառեցումը: Նորմի մեջ ուղղակի հղում չի արվում համատեղ կարգով նրանց պատկանող գույքին, և պարզ չէ, թե արդյոք սառեցման մեխանիզմը կարող է կիրառվել ոչ միայն այդ անձանց իրավաբանորեն պատկանող, այլ նաև՝ նրանց կողմից պարզապես վերահսկվող միջոցների նկատմամբ:

257. Ինչպես քննարկվեց ընդհանուր վերլուծության մեջ, «ֆինանսական միջոցներ» հասկացությունն օրենքով սահմանված չէ, և պարզ չէ, թե որքանով է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածը ներառում ՖԱԹՖ-ի ստանդարտով սահմանված բոլոր միջոցները և այլ գույքը: Չնայած որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դաշտում գործող և այդ կապակցությամբ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները կրող անձանցից են մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ, պարզ չէ, թե ինչպես կարող է պրակտիկայում իրականացվել նման գույքի սառեցումը: Իշխանությունները նշեցին, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածը տարածվում է միայն ֆինանսական միջոցների, բայց ոչ՝ այնպիսի գույքի նկատմամբ, ինչպիսին է, օրինակ, անշարժ գույքը կամ տնտեսական այլ ռեսուրսները:

Ֆինանսական հատվածի տեղեկացումը (չ. III.5).

258. Ինչպես նշվեց ընդհանուր վերլուծության մեջ, չնայած որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն ՀՀ ԿԲ-ն է պարտավոր «ներկայացնել» «ահաբեկչության հետ կապված անձանց» ցանկերը, պրակտիկայում այդ լիազորությունը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի ուժով վերապահված է ՖԴԿ-ին:

259. Իշխանությունները նշեցին, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևի համաձայն հրապարակված ցանկերն ուղարկվում են ֆինանսական հաստատություններին, ինչպես նաև ՆՈՖԳՏՄ-ների վերահսկող մարմիններին թղթային տարբերակով՝ ֆինանսական հաստատություններին և ՆՈՖԳՏՄ-ներին կարգադրելով անմիջապես սառեցնել ցանկում ներառված անհատների կամ կազմակերպությունների պատկանող միջոցները: Ֆինանսական հաստատություններից և ՆՈՖԳՏՄ-ների վերահսկող մարմիններից մի քանիսը, սակայն ոչ բոլորը, հաստատեցին նման գրավոր ծանուցումների ստացման փաստը:

260. Բացի այդ, ՖԴԿ-ն նաև ծանուցում է ՖԴԿ-ի կայքէջի թարմացման մասին՝ հաշվետվություն տրամադրող անձանց հիշեցնելով նախատեսված անձանց և կազմակերպություններին պատկանող միջոցները սառեցնելու իրենց պարտավորության մասին, և տրամադրելով ուղղակի հղումը ՄԱԿ-ի համապատասխան կայքէջին:

261. Ինչ վերաբերում է ՀՀ ԿԲ-ի՝ որպես լիազոր մարմնի կողմից կատարված նախատեսումներին, ապա իշխանությունները նշեցին, որ չնայած պրակտիկայում նման նախատեսումների բացակայությանը, կարիք առաջանալու դեպքում նախատեսումների մասին տեղեկացումը կիրականացվի շրջաբերական նամակների միջոցով:

Ֆինանսական հաստատությունների ուղղորդումը (չ. III.6).

262. ՖԴԿ-ն չի ընդունել ֆորմալ ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն սառեցման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ:

Ցանկերից հանելու հարցումները և ցանկերից հանված անձանց միջոցների «ապասառեցումը» (չ. III.7), պատահաբար սառեցման մեխանիզմի ազդեցության տակ ընկած անձանց միջոցների «ապասառեցման» ընթացակարգերը (չ. III.8).

263. Իշխանությունները չեն ընդունել որևէ ուղեցույց կամ ընթացակարգ, որով կնախատեսվեր, թե ինչպես կարող են ՀՀ ԿԲ-ի կողմից «ահաբեկչության հետ կապված անձանց» ցանկում ներառված անձինք կամ կազմակերպությունները բողոքարկել համապատասխան որոշումը և դիմել ցանկից իրենց հանելու համար, եթե առաջանա նման իրավիճակ: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևի համաձայն ցանկում ներառված անձինք և կազմակերպությունները կարող են ցանկից իրենց դուրսբերման համար դիմել ուղղակիորեն Միավորված ազգերի կազմակերպությանը:

264. Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման գործողությունները կախված են ներպետական մակարդակով քրեական գործի հարուցումից, իսկ դրանց տևողությունը սահմանափակված է քրեական գործի վարույթի տևողությամբ, առգրավման մասին որոշումը վերանում է անձի մեղավոր չլինելը պարզելուն պես՝ նույնիսկ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կամ ՀՀ ԿԲ-ի կողմից նախատեսված անձանց կամ կազմակերպությունների պարագայում: Իշխանությունները հաստատեցին, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի համաձայն նախատեսված անձանց կամ կազմակերպությունների առնչությամբ ձեռնարկված սառեցման գործողությունները կարող են վերացվել ներպետական ընթացակարգերով: Դա կիրառելի է և այն դիմողների դեպքում, որոնք նշում են, որ իրենք պատահաբար են ընկել սառեցման մեխանիզմի ազդեցության տակ, և այն անձանց դեպքում, ովքեր բողոքարկում են կիրառված միջոցի հիմնավորվածությունը:

265. Գույքն առգրավելուց հետո անձը կարող է կայացված որոշումը բողոքարկել դատախազին:

Սառեցված միջոցների օգտագործումը ծախսերի դիմաց վճարելու և այլ նպատակներով (չ. III.9).

266. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսվում է, որ անձն իրավունք ունի դատական կարգով լիազոր մարմնից պահանջելու իր սառեցված ֆինանսական միջոցների հաշվին կատարել իր ընտանեկան, բժշկական և այլ անձնական նպատակներով վճարումներ: Այդպիսի վճարումների վերաբերյալ դատական կարգով որոշում կայացվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված կարգով, եթե տվյալ անձի անունն ընդգրկված է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 բանաձևի համաձայն սահմանված ցանկում:

Սառեցման մասին որոշումների վերանայումը (չ. III.10).

267. Ինչպես ներկայացվեց նախորդ բաժիններում, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն կիրառված սառեցման միջոցառումները կարող են երկարաձգվել ներպետական մակարդակով քրեական գործ հարուցելու ճանապարհով: Սառեցման առաջին 5 օրերի ընթացքում, երբ լիազոր մարմինը պետք է որոշում կայացնի կոնկրետ գործով քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու մասին, սառեցման մասին որոշումը չի կարող այդ որոշումը վերացնելու նպատակով բողոքարկվել այն անձի կամ կազմակերպության կողմից, որի միջոցները կամ այլ գույքը սառեցվել են: Նույնը վերաբերում է գործով քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելուն հաջորդած 10-օրյա ժամկետին: Այնուամենայնիվ, այն պահից, երբ քրեական հետապնդման մարմինները ՔԴՕ-ի 233-րդ հոդվածով սահմանված կարգով որոշում կկայացնեն գույքի վրա կալանք դնելու մասին, անձը կարող է կալանք դնելու մասին որոշումը բողոքարկել դատախազին, ապա նաև՝ նախաքննության դատարանին՝ ՔԴՕ-ի 290-րդ հոդվածով սահմանված կարգով:

Սառեցումը, առգրավումը և բռնագրավումն այլ հանգամանքներում (չ. 3.1-3.4-ի և 3.6-ի կիրառությունը Հ.3-ի շրջանակում, չ. III.11)

268. Ինչպես ներկայացվեց վերը՝ ընդհանուր վերլուծությանը նվիրված բաժնում, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կամ ՀՀ ԿԲ-ի՝ որպես լիազոր մարմնի կողմից նախատեսված անձանց, այլ նաև՝ ներպետական այն վարույթների նկատմամբ, որոնցով առկա է «կասկածյալ, մեղադրյալ կամ դատապարտյալ»: Բացի այդ, կիրառելի են ՔՕ-ի 55(5)-րդ հոդվածով և ՔԴՕ-ի 233-րդ հոդվածով նախատեսված՝ կալանադրման և բռնագրավման միջոցառումները: Վերջիններս մանրակրկիտ կերպով վերլուծված են սույն հաշվետվությունում՝ թիվ 3 հանձնարարականին նվիրված բաժնում:

Երրորդ անձանց իրավունքների պաշտպանությունը (չ. III.12).

269. Բռնագրավման կապակցությամբ երրորդ անձանց իրավունքների պաշտպանությունը նախատեսված է ՔՕ-ի 55(7)-րդ հոդվածով, որի համաձայն բարեխիղճ երրորդ անձանց պատկանող կամ նրանց կողմից տիրապետվող գույքն ուղղակիորեն ազատված է բռնագրավումից, ընդ որում, «բարեխիղճ երրորդ անձ» է հանդիսանում այն անձը, որը գույքն այլ անձի հանձնելիս չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով:

270. Քրեական վարույթի շրջանակից դուրս գոյություն չունեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն սառեցման սկզբնական գործընթացի մեջ հայտնված բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հատուկ կամ պատշաճ դրույթներ:

III Հատուկ հանձնարարականից բխող պարտավորությունների կատարումը (չ. III.13).

271. Իշխանությունները նշեցին, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի պահանջների կատարումը դիտարկվում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իմաստով ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ստուգումներ անցկացնելիս ֆինանսական հաստատություններից պահանջվում է ներկայացնել սառեցման միջոցառումների հետ կապված իրենց ներքին ընթացակարգերը, որից հետո նրանց հրահանգվում է վերացնել հայտնաբերված թերությունները:

272. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի ցանկացած խախտում կարող է պատժվել օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված կարգով:

2.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Հայաստանը պետք է վերանայի «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմները, որոնք նպատակաուղղված են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի, ինչպես նաև ՀՀ.III-ի պահանջների կատարմանը: Մասնավորապես, Հայաստանի օրենսդրությամբ պետք է նախատեսել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված՝ նախատեսման և սառեցման պարտավորությունների կատարումը բոլոր դեպքերում՝ անկախ այն հանգամանքից, թե հնարավոր է արդյոք քրեական գործ կամ քրեական հետապնդում հարուցել ահաբեկչական հանցագործության հատկանիշներով: Պետք է նախատեսել անժամկետ սառեցման մեխանիզմ, որը հնարավոր կլինի կիրառել՝ անկախ ներպետական մակարդակով քրեական գործի հարուցումից կամ դրա արդյունքից, միաժամանակ նաև բացառելով սառեցման հարցում հայեցողությունը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ցանկերի հետ համընկնող անունների հայտնաբերման դեպքում,

- Ներդնել մեխանիզմ, որով այլ պետությունների սառեցման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված սառեցման գործողությունները Հայաստանում կգործեն ներկայումս օրենքով սահմանված 15-օրյա ժամկետի ավարտից հետո: Սառեցման մեխանիզմները պետք է բոլոր փուլերում կիրառելի լինեն նախատեսված անձի կամ կազմակերպության համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի, ինչպես նաև այն միջոցների նկատմամբ, որոնք նախատեսված անձին կամ կազմակերպությանը չեն պատկանում սեփականության իրավունքով, սակայն վերահսկվում են նրանց կողմից,

- Սառեցման մեխանիզմները պետք է տարածվեն ոչ միայն ֆինանսական միջոցների, այլ նաև՝ ֆինանսական գույքի և ցանկացած տեսակի գույքի նկատմամբ, ինչպես նախատեսված է ՖԱԹՖ-ի ստանդարտով և III Հատուկ հանձնարարականի Բացատրական մեկնաբանությամբ,

- ՖԴԿ-ն պետք է ընդունի ֆորմալ ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1373 բանաձևի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի

25-րդ հոդվածի համաձայն սառեցման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ,

- ՖԴԿ-ն պետք է ընդունի ուղեցույց կամ ընթացակարգ, որով կնախատեսվի, թե ինչպես կարող են ՀՀ ԿԲ-ի կողմից «ահաբեկչության հետ կապված անձանց» ցանկում ներառված անձինք կամ կազմակերպությունները բողոքարկել համապատասխան որոշումը և դիմել ցանկից իրենց հանելու համար, եթե առաջանա նման իրավիճակ,

- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով պետք է նախատեսել սառեցման սկզբնական գործընթացի մեջ հայտնված բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթներ:

2.4.3. Համապատասխանությունը III հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
ՀՀ.III	Չի համապատասխանում	• «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմները համահունչ չեն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերից բխող սառեցման պարտավորություններին և չեն համապատասխանում ՀՀ.III-ին, քանի որ այդ մեխանիզմների կիրառությունը կախված է ներպետական մակարդակով քրեական գործի հարուցումից, ընդ որում՝ մեղադրական դատավճռի բացակայության պայմաններում դրանք ունենում են զուտ ժամանակավոր բնույթ: • Հայաստանում չկա մեխանիզմ, որը հնարավորություն կընձեռեր այլ պետությունների սառեցման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված սառեցման գործողությունների ժամկետը երկարաձգել ներկայումս օրենքով սահմանված սկզբնական 15-օրյա ժամկետի ավարտից հետո: • Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության բացակայության պայմաններում իրավաբանական անձանց միջոցները և այլ գույքը չեն կարող սառեցված մնալ սկզբնական 15-օրյա ժամկետի ավարտից հետո: • Սառեցման մեխանիզմները կիրառելի չեն միջոցներից զատ այլ ֆինանսական գույքի և այլ գույքի նկատմամբ: • Սառեցման մեխանիզմները ոչ բոլոր դեպքերում են կիրառելի նախատեսված անձի կամ կազմակերպության համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի, ինչպես նաև այն միջոցների նկատմամբ, որոնք նախատեսված անձին կամ կազմակերպությանը չեն պատկանում սեփականության իրավունքով, սակայն վերահսկվում են նրանց կողմից: • Չկան ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1373 բանաձևի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն սառեցման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ: • Չկա ուղեցույց կամ ընթացակարգ, որով կնախատեսվեր, թե ինչպես կարող են ՀՀ ԿԲ-ի կողմից «ահաբեկչության հետ կապված անձանց» ցանկում ներառված անձինք կամ կազմակերպությունները բողոքարկել համապատասխան որոշումը և դիմել ցանկից իրենց հանելու համար, եթե առաջանա նման իրավիճակ: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով չեն նախատեսվում սառեցման սկզբնական գործընթացի մեջ հայտնված բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթներ:

2.5. Ֆինանսական հետախուզության մարմինը, դրա գործառույթները (Հ.26)

2.5.1. Նկարագրություն և վերլուծություն

ՖՀՄ-ի՝ որպես ազգային կենտրոնի ստեղծումը (չ. 26.1), տեղեկությունների տեղաբաշխումը (չ. 26.5).

273. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է 2008 թ. հունիսի 21-ին, ՀՕ-80-Ն, հետայսու՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք) նախատեսվում է «փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազոր մարմինը» (10-րդ հոդված): «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսվում է, որ այդ լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է (ՀՀ ԿԲ): «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ ԿԲ-ի նպատակներից է նաև «փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը» (5-րդ հոդվածի 1(դ) մաս):

274. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածում թվարկված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում լիազոր մարմնի տարբեր գործառույթները, որոնք կատարվում են ՀՀ ԿԲ-ում գործող պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի («ՖԴԿ») կողմից:[23] Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի (ինչպես

[23] «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում են լիազոր մարմնի հետևյալ գործառույթները, որոնք կատարում է ՖԴԿ-ն.

- Հաշվետվություն տրամադրող անձանցից հաշվետվությունների, պետական մարմիններից ու կազմակերպություններից տեղեկությունների ստացումը,
- Ստացված հաշվետվությունների և այլ տեղեկությունների վերլուծությունը,
- Քրեական հետապնդում իրականացնող մարմիններին հաղորդման ուղարկումը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,
- Հաշվետվություն տրամադրող անձանցից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի նպատակներից բխող այլ տեղեկություններ, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելը, բացառությամբ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի,
- Պետական, այդ թվում՝ վերահսկող և քրեական հետապնդման մարմիններից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի նպատակներից բխող տեղեկություններ, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելը,
- Օրենքով սահմանված դեպքերում հաշվետվություն տրամադրող անձանց կողմից հաշվետվությունների սխալ կամ թերի լրացման կամ չներկայացման, ինչպես նաև ներքին իրավական ակտերում առկա թերությունների դեպքում դրանք շտկելու հանձնարարականներ տալը,
- Անձանց նույնականացման համար անհրաժեշտ տվյալների կամ տիպաբանությունների տրամադրումը հաշվետվություն տրամադրող անձանց, որոնց հիման վրա հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են կասեցնել այդ անուններին (անվանումներին) կամ տիպաբանություններին համընկնող գործարար հարաբերությունները կամ գործարքները կամ մերժել դրանց իրականացումը,
- Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից տրամադրված հաշվետվությունների վերաբերյալ լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով հաշվետվություն տրամադրող անձանց պարբերաբար տեղեկատվություն (հետադարձ կապ) տրամադրելը,
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով ուսուցում իրականացնելը և այլ մարմինների կողմից իրականացվող ուսուցումը համակարգելը, ինչպես նաև 22-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ֆինանսական հաստատությունների ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներին որակավորում տալը,
- Իր իրավական ակտերով սահմանված կարգով սույն օրենքով սահմանված գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ հրապարակելը,
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին հանրային իրազեկում իրականացնելը,

(continued)

նաև ՖԴԿ-ի կանոնադրության) համաձայն, այդ գործառույթները պետք է իրականացվեն ուղղակիորեն ՖԴԿ-ի կողմից, բացառությամբ որոշ `դեպքերի, որոնցում լիազոր մարմնի գործառույթները վերապահվում են կամ նրա «կառավարման բարձրագույն մարմնին», կամ իրավասու ստորաբաժանումներին:[24] «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ՀՀ ԿԲ-ի կառավարման բարձրագույն մարմինը ՀՀ ԿԲ-ի խորհուրդն է:

275. Որպեսզի պարզվի Հ.26-ով նախատեսված սահմանմանը ՖԴԿ-ի համապատասխանությունը, այսինքն, թե արդյոք այն հանդես է գալիս որպես ԿԳՀ-ներ և ՓԼ կամ ԱՖ գործունեության կասկածների վերաբերյալ այլ տեղեկություններ ձեռք բերող, վերլուծող և տրամադրող (հետայսու՝ «ՖՀՄ-ի բուն գործառույթներ») ազգային կենտրոն: Հարկ է նշել, որ ի թիվս տարբեր գործառույթների, որոնց իրականացումն օրենքով ուղղակիորեն վերապահված է ՖԴԿ-ին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածով մասնավորապես նախատեսվում է «հաշվետվություն տրամադրող անձանցից հաշվետվությունների, պետական մարմիններից ու կազմակերպություններից տեղեկությունների **ստացումը**» (1(1)-ին ենթակետ), «ստացված հաշվետվությունների և այլ տեղեկությունների **վերլուծությունը**» (1(2)-րդ ենթակետ) և «քրեական հետապնդում իրականացնող մարմիններին հաղորդման **ուղարկումը**» այն դեպքում, եթե հաշվետվություն տրամադրող անձանցից ստացված հաշվետվության կամ այլ տեղեկությունների հիման վրա կատարված վերլուծության արդյունքում ՖԴԿ-ն գալիս է եզրակացության, որ առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածներ (համապատասխանաբար 10-րդ հոդվածի 1(3)-րդ ենթակետ և 13-րդ հոդվածի 3-րդ մաս): Ինչպես նշվեց, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով լիազոր մարմնին վերապահված այդ գործառույթների և լիազորությունների կատարումը վերապահված է ուղղակիորեն ՖԴԿ-ն, որն էլ, ըստ այդմ, Հայաստանի Հանրապետության ՖՀՄ-ն է:

276. ՖԴԿ-ն ստեղծվել է 2005 թվականին «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» առաջին օրենքի (ընդունվել էր Հայաստանի Հանրապետության կողմից 14.12.2004 թ., որը սակայն դադարեց գործել 2008 թվականին, երբ ընդունվեց «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր օրենքը) 10-րդ հոդվածի համաձայն: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նախկին օրենքի 10-րդ հոդվածի


- Սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով միջազգային կազմակերպությունների և ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ համագործակցության համաձայնագրեր կնքելը, տեղեկատվություն (այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող) փոխանակելը,
- Սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ և գործառույթներ:

[24] «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, լիազոր մարմնի հետևյալ գործառույթները փոխանցվել են ՀՀ ԿԲ-ի խորհրդին և իրականացվում են նրա իրավասու ստորաբաժանումների միջոցով.

- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում սույն օրենքով սահմանված իրավական ակտերի ընդունումը, ուղեցույցների հաստատումը, տիպաբանությունների հրապարակումը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով հաշվետվություն տրամադրող անձանց, վերահսկող և այլ մարմինների ու կազմակերպությունների հետ,
- Սույն օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողությանն օժանդակումը,
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից ներքին աուդիտի իրականացման դեպքերն ու հաճախականությունը սահմանելը, արտաքին աուդիտի իրականացում պահանջելը,
- Ֆինանսական հաստատությունների և իրավաբանական անձանց նկատմամբ սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը, ինչպես նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված դեպքերում հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ պատասխանատվություն կիրառելու միջնորդություն ներկայացնելը:

համաձայն ՖԴԿ-ն ստեղծվել է որպես ՀՀ ԿԲ-ի առանձնացված ստորաբաժանում: ՖԴԿ-ն կազմված է ղեկավարից, ղեկավարի տեղակալից, գործավար-օգնականից և երեք բաժիններից՝ օրենսդրության ներդրման և միջազգային կապերի բաժին (5 աշխատատեղ), վերլուծությունների բաժին (3 աշխատատեղ) և տեղեկատվական համակարգերի ներդրման և զարգացման բաժին (3 աշխատատեղ):

277. ՖԴԿ-ի կառուցվածքը հետևյալն է.



278. ՖԴԿ-ի գործառույթները և կազմակերպական կառուցվածքը մանրամասնեցված են ՀՀ ԿԲ-ի խորհրդի 03.03.2005 թ. թիվ 97Ա որոշմամբ հաստատված կանոնադրությամբ: Հաշվետվություններ և տեղեկություններ ստանալու, վերլուծելու և վերլուծության արդյունքում քրեական հետապնդման իրավասու մարմիններին ՓԼ/ԱՖ մասին հաղորդումներ ներկայացնելու պարտավորությունները կրկին անգամ սահմանելուց բացի Կանոնադրության մեջ վերլուծվում և նկարագրվում է համապատասխան գործառույթների բովանդակությունը, և նախատեսվում են ՖԱԹՖ-ի հանձնարարականներին առնչվող տարաբնույթ այլ գործառույթներ, որոնցից են, օրինակ, տեղեկությունների փոխանակումը և համագործակցությունն այլ պետական մարմինների և օտարերկրյա ՖՀՄ-ների հետ, պետական մարմինների և հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների ուսուցանումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և տվյալների բազայի ձևավորումը: Չնայած որ այդ՝ այլ գործառույթները (լիովին կամ մասամբ) կատարվում են «ՀՀ ԿԲ-ի այլ ստորաբաժանումների օժանդակության հիման վրա» (Կանոնադրության 5.2-րդ կետ), ՖՀՄ-ի բուն՝ Հ.26-ով նախատեսված պարտավորությունները վերապահված են բացառապես ՖԴԿ-ին:

279. ՖԴԿ-ն է կրում նաև կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու գործընթաց նախաձեռնելու պարտավորությունը («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդված): ՖԴԿ-ն լիազորված է «հրապարակել ահաբեկչության հետ կապված անձանց ցանկեր» և նախաձեռնել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված սառեցման մեխանիզմի գործողությունը: Չնայած որ «ահաբեկիչների ցանկեր հրապարակելու» լիազորությունը վերապահված է ՀՀ ԿԲ-ին՝ որպես լիազոր մարմնի, և չկա

այն ՖԴԿ-ին վերապահող կոնկրետ նորմ, ՖԴԿ-ն միանշանակորեն համոզված է, որ այդ լիազորությունը բխում է օրենքի այն դրույթից, որի համաձայն լիազոր մարմնին վերապահված այն լիազորությունները, որոնք չեն փոխանցվում ՀՀ ԿԲ-ի խորհրդին, ինքնաբերաբար փոխանցվում են ՖԴԿ-ին: Համապատասխան հոդվածի 18-րդ մասում նշվում է, որ լիազոր մարմինը կատարում է «սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ և գործառույթներ» (ընդ որում, այդ դրույթն այն դրույթների շարքում չէ, որոնցով լիազոր մարմնի լիազորությունները փոխանցվում են ՀՀ ԿԲ-ի խորհրդին), ուստի՝ ցանկը «հրապարակելու» լիազորությունը վերապահված է ՖԴԿ-ին (օրենքի 25-րդ հոդվածի ուժով՝ 10-րդ հոդվածի 18-րդ մասի համադրությամբ): Այնուհանդերձ, չնայած որ ՖԴԿ-ն օժտված է գործարք կասեցնելու/գործարար հարաբերություն դադարեցնելու ընթացակարգ և սառեցման մեխանիզմի գործողությունը նախաձեռնելու լիազորությամբ, ահաբեկչության հետ կապված անձանց պարագայում երկու դեպքերում էլ համապատասխան որոշումը կայացնում է ՀՀ ԿԲ-ի խորհուրդը (10-րդ հոդվածի 1(12) ենթակետ և 3-րդ մաս):

280. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, որով կարգավորվում են գործարքների մասին տեղեկացման պահանջները, ՖԴԿ-ն հաշվետվություն տրամադրող անձանցից ստանում է 3 տեսակի հաշվետվություններ.

ա. Գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը (մոտ 55,000 դոլար). հաշվետվություն տրամադրող բոլոր անձանցից, բացառությամբ փաստաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անկախ աուդիտորների և աուդիտորական ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների,

բ. Անշարժ գույքի հետ կապված գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը (մոտ 130,000 դոլար. այս, ինչպես նաև վերոհիշյալ ա) կետի ներքո նշված հաշվետվություններն հետայսու կանվանվեն «նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություններ»՝ ՆՇԳՀ-ներ),

գ. Կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ՝ անկախ գումարի չափից:

281. Բացի այդ, ՖԴԿ-ն կարող է ՓԼ կամ ԱՖ առնչվող տեղեկություններ ստանալ այլ պետական մարմիններից և կազմակերպություններից:

282. Հաշվետվություն տրամադրող անձանց (բոլոր ֆինանսական հաշվետվությունների, նոտարների մեծ մասի և անշարժ գույքի գործարքների մասով՝ պետական կադաստրի) հաշվետվությունների մեծ մասը ստացվում է էլեկտրոնային տեսքով՝ հաշվետվություն տրամադրող անձանց ՀՀ ԿԲ-ին միացնող ապահով գծի միջոցով («CBA Net» ցանց + TR20/50): «ՖԴԿ-ի ներքին ընթացակարգերի ձեռնարկով» մանրամասնորեն նախատեսվում են տեղեկությունների մշակման պարտականությունները և ընթացակարգերը (այդ թվում՝ այլ պետական մարմիններից կամ օտարերկրյա ՖՀՄ-ներից ստացվող տեղեկությունների մասով)՝ տեղեկությունների ստացման պահից մինչև գործով որոշման կայացումը, այն է՝ գործի վերաբերյալ հաղորդում ներկայացնելը քրեական հետապնդման մարմիններին (ԱԱԾ-ին), ներառումը «մոնիտորինգի» ցանկում, լրացուցիչ վերլուծության անհրաժեշտության դեպքում գործի հետագա վերլուծության դադարեցումը կամ գործի բացումը: Այս ձեռնարկից զատ, կա ևս մեկ ձեռնարկ (ընդունվել է ՀՀ ԿԲ-ի նախագահի 2007 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1/38 ԾՕՀ որոշմամբ), որը վերաբերում է կոնկրետ այն գործողություններին, որոնք ՖԴԿ-ն ձեռնարկում է «կասկածելի գործարքների դեպքերի վերլուծության ընթացքում և արդյունքում», որով ներդրվել է ռիսկայնության վրա հիմնված մոտեցումը՝ ուղղված ԿԳՀ-ների մշակման և վերլուծության մեջ առաջնահերթությունների որոշմանը:

283. Ստացվող տեղեկությունների վերլուծության գործընթացը բնորոշվում է հետևյալ քայլերի հերթականությամբ.

- Նախնական վերլուծություն,
- Գործ բացելու մասին/գործ բացելու հիմքերի բացակայության մասին որոշում: Գործ հարուցվում է հետևյալ դեպքերում.
- Ստացվող տեղեկությունները համընկնում են ահաբեկիչների ցանկի (ՖԴԿ-ի կողմից վարվող ներքին ցանկի) և մոնիտորինգի ցանկի (պարունակում է տեղեկություններ ռիսկային համարվող սուբյեկտների/անձանց/գործարքների մասին) հետ: Նշված ցանկերը պահպանվում են ՖԴԿ-ի տվյալների բազայում,
- Երբ տեղեկությունները համընկնում են կասկածելի և/կամ բարձր ռիսկային գործարքների չափորոշիչների/տիպաբանությունների հետ (դրանք տվյալների բազայում ալգորիթմների տեսքով ներդրված չափորոշիչներ են, որոնց հիման վրա ծրագիրն ավտոմատաբար կարմիր գույնով ընդգծում է համապատասխան դեպքերը),
- ԿԳՀ-ի հիման վրա, կամ
- Այլ հիմքերով.
- Վերլուծություն (ներառյալ տակտիկական վերլուծություն, որը ներառում է բացված յուրաքանչյուր գործի վերաբերյալ վերլուծական տեղեկանքի կազմումը),

  Գործի վերլուծության ամփոփում, որը կարող է հանգել. i) իրավապահ մարմիններին հաղորդման ներկայացմանը, ii) գործի ներառմանը մոնիտորինգի ցանկում, կամ iii) գործի հետագա վերլուծության կասեցմանը:

284. Վերլուծության ընթացակարգի հիմնական առանձնահատկություններն են. ՀՀ ԿԲ-ի ցանցով/ՖԴԿ-ի էլեկտրոնային փոստով/թղթային տեսքով ստացված տեղեկությունների ուսումնասիրություն, թղթային տեսքով ստացված տեղեկությունների մուտքագրում ՖԴԿ-ի տվյալների բազայի մեջ, էլեկտրոնային տեսքով ստացված տեղեկությունների վերհանում քաղվածքների (ՆՇԳՀ-ների) տեսքով: ԿԳՀ-ների (և էլեկտրոնային, և թղթային տեսքով ստացված ԿԳՀ-ների) պարագայում դրանք ուղարկվում են ՖԴԿ-ի ղեկավարին «համապատասխան ցուցում» (այդ թվում՝ գործ բացելու մասին ցուցում) ստանալու նպատակով, ահաբեկիչների ցանկերի և մոնիտորինգի ցանկի մուտքագրում ՖԴԿ-ի տվյալների բազայի մեջ, ստացված տվյալների կանոնավոր ստուգում/համընկնումների ստուգում ահաբեկիչների ցանկերի և մոնիտորինգի ցանկի համեմատությամբ, ՖԴԿ-ի տվյալների պարբերական վերանայում՝ հիմնվելով կասկածելի և/կամ բարձր ռիսկային գործարքների չափորոշիչների/տիպաբանությունների վրա: Վերլուծությունն անհրաժեշտության դեպքում հիմնավորվում է հաշվետվություն տրամադրող անձանցից կամ այլ պետական մարմիններից ստացվող լրացուցիչ տեղեկություններով (վերջինիս վերաբերյալ լրացուցիչ մանրամասները տես ստորև՝ սույն բաժնում):

285. ՖԴԿ-ն նաև իրականացնում է «ռազմավարական վերլուծություն»՝ հիմնականում ստացված ՆՇԳՀ-ների հիման վրա, որի նպատակը ռիսկերի տիպաբանությունների և փողի հոսքերի բացահայտումն է: Այս վերլուծությունը ներառում է նաև յուրաքանչյուր տարի ուսումնասիրված բոլոր դեպքերի մասին համառոտ տեղեկանքների և կասկածելի և/կամ բարձր ռիսկային դեպքերի չափորոշիչների/տիպաբանության ամփոփ նկարագրի կազմումը:

Ֆինանսական հաստատությունների ուղղորդումը ԿԳՀ-ներ ներկայացնելու կարգի վերաբերյալ (չ. 26.2).

286. Ինչ վերաբերում է հաշվետվություններ ներկայացնելու կարգին, ինչպես նաև հաշվետվությունների ձևի և ներկայացման ընթացակարգի վերաբերյալ պահանջներին, ապա դրանք նախատեսված են ուղղակիորեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և մանրամասնեցված են ՀՀ ԿԲ-ի խորհրդի որոշումներով (միայն ֆինանսական հաստատությունների մասով): Ուստի, այդ պատասխանատվությունն ուղղակիորեն դրված է ոչ թե ՖԴԿ-ի, այլև՝ Հ.26-ով թույլատրված «այլ իրավասու մարմնի» վրա: ՖԴԿ-ն նշեց, որ կասկածելի գործարքների մասին հաշվետվություններ ներկայացնելու պարտավորության և, մասնավորապես, հաշվետվություն ներկայացնելու կարգի վերաբերյալ այն հաշվետվություն տրամադրող անձանց ուղղորդել է կամ ուսուցման ծրագրերի, կամ բանավոր խոսակցությունների շրջանակում:

287. ԿԳՀ-ների ներկայացման կանոնները, ինչպես նաև ԿԳՀ-ների բովանդակության առումով հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց ներկայացվող պահանջները նախատեսված են ուղղակիորեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով (7-րդ հոդված)՝ բավական հստակորեն և մանրամասնորեն (հոդվածով պահանջվում են հաճախորդի, լիազորված անձի, իրական շահառուի տվյալները՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար կատարված տարբերակմամբ, ինչպես նաև գործարքի առարկայի նկարագրությունը, գործարքի արժեքը և կասկածի հիմքը, ինչպես նաև հաշվետվություն ներկայացնելու ձևին առնչվող որոշ ընթացակարգային կանոններ):[25] Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում է նաև, որ «հաշվետվության տրամադրման կարգը, ժամկետները և ձևերը» սահմանում է լիազոր մարմինը՝ նորմատիվ իրավական ակտերով (7-րդ հոդվածի 6-րդ մաս): Այդ պարտավորությունը կրում է ՀՀ ԿԲ-ի խորհուրդը (որը 10-րդ հոդվածի 1(7)-րդ ենթակետի և 3-րդ մասի համաձայն կրում է օրենքով նախատեսված «իրավական ակտերի և ուղեցույցների» ընդունման պարտավորությունը):

288. Տարբեր ձևեր կան i) բանկերի, վարկային կազմակերպությունների և ֆինանսական միջնորդների, ii) ապահովագրական ընկերությունների և iii) բոլոր ՆՈՖԳՏՄ-ների համար,

---

[25] Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում է, որ հաշվետվության մեջ պետք է նշված լինեն.
- o Հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի, կասկածելի գործարքի դեպքում՝ նաև իրական շահառուի տվյալները, ներառյալ՝
  - ▪ Ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսանալու դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը,
  - ▪ Իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի համարը, իսկ ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվության ներկայացման դեպքում՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարը,
  - ▪ Ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվության ներկայացման դեպքում՝ նաև հաճախորդի բանկային հաշվի համարը
- o Գործարքի առարկայի նկարագրությունը,
- o Գործարքի գինը (արժեքը),
- o Գործարքի կնքման ամսաթիվը:

2. Կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի մասին հաշվետվության մեջ նշվում են նաև գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի համարելու հիմքը, չափանիշը, նկարագրությունը, ինչպես նաև գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցված, մերժված լինելու կամ ահաբեկչության հետ կապված անձանց եկամուտները սառեցված լինելու հանգամանքը:

3. Սույն հոդվածով սահմանված հաշվետվությունները պետք է ներկայացվեն հերթական համարով, հաշվետվություն տրամադրող անձի պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ (թղթային տարբերակները՝ նաև կնքված՝ կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության մեջ նշվում է հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը լիազոր մարմնում:

բացառությամբ թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների, ինչպես նաև արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների: Իրավաբանների, նոտարների, անշարժ գույքի գործակալների, անկախ հաշվապահների և անկախ աուդիտորների հաշվետվությունների ձևերը հաստատվել են 2009 թ. հունվարի 27-ին, սակայն ուժի մեջ մտել են միայն մարտի 12-ին (գնահատող առաքելության այցից անմիջապես հետո):

289. Եթե կոնկրետ պահանջ սահմանված չէ (ինչպես սահմանված է, օրինակ, ՆՈՖԳՏՄ-ների կամ կադաստրի պարագայում), հաշվետվության ձևը կիրառելի է բոլոր ԿԳՀ-ների, ՆՇԳՀ-ների և գործարքի/գործարար հարաբերության կասեցման համար: ՀՀ ԿԲ-ն 2008 թ. հուլիսի 31-ի թիվ 231-Ն որոշմամբ հաստատել է ֆինանսական հաստատությունների կողմից ԿԳՀ-ների տրամադրման ձևի վերջին տարբերակը, որը ներառում է նաև ձևերի լրացման և տրամադրման կարգը, ինչպես նաև տեղեկությունների տրամադրման ժամկետները:

290. Սահմանված ժամկետի համաձայն, ՆՇԳՀ-ն պետք է ներկայացվի ՖԴԿ-ին գործարքը կնքելուց հետո եռօրյա ժամկետում, իսկ ԿԳՀ-ն՝ միևնույն աշխատանքային օրը կամ, եթե դա հնարավոր չէ (կարգով սահմանված դեպքերում)՝ նախքան հաջորդ աշխատանքային օրվա կեսօրը:

291. Ինչպես նշվեց, հաշվետվություն տրամադրող անձանց հաշվետվությունների մեծ մասը ՖԴԿ-ն ստանում է էլեկտրոնային տեսքով՝ հաշվետվություն տրամադրող անձանց ՀՀ ԿԲ-ին միացնող ապահով գծի միջոցով («CBA Net» ցանց + TR20/50): Բանկերը և այլ ֆինանսական հաստատությունները հաստատեցին, որ իրենք իսկապես հաշվետվությունները տրամադրում են ՖԴԿ-ին՝ օգտվելով ՀՀ ԿԲ-ի ապահով գծից, և որ իրենք օգտագործում են ՖԴԿ-ի տրամադրած ծրագիրը: Բոլոր այն ՆՈՖԳՏՄ-ները, որոնց գնահատող թիմը հանդիպեց, նշեցին, որ իրենք ՖԴԿ-ից ստացել են փաթեթ, որը ներառում է նաև հաշվետվությունների ձևերը: Այնուհանդերձ, բացառությամբ բանկերի, մյուս ֆինանսական հաստատությունները դեռևս ոչ մի ԿԳՀ չեն տրամադրել (բացառությամբ մեկ ԿԳՀ-ի, որը տրամադրել է փոխանակման կետը), և տրամադրում են միայն ՆՇԳՀ-ներ՝ 20 կամ 50 միլիոն դրամի շեմը գերազանցելու դեպքում:

ՖՀՄ-ի կողմից տեղեկությունների ժամանակին ստացումը (չ. 26.3).

292. Ֆինանսական, վարչական և իրավակիրառ տեղեկությունները ՖԴԿ-ն ստանում է հիմնականում անուղղակիորեն՝ իրավասու մարմինների գրավոր հարցումների հիման վրա: ՖԴԿ-ի՝ տեղեկություններ պահանջելու իրավասությունը և հարցվողների՝ այն տրամադրելու համապատասխան պարտավորությունը սահմանված են օրենքի 10-րդ հոդվածի 1(5)-րդ ենթակետով և 13-րդ հոդվածի 5-րդ մասով. առաջինով ՖԴԿ-ին իրավունք է վերապահվում պետական մարմիններից պահանջել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքից բխող տեղեկություններ (այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ), իսկ երկրորդով սահմանվում է, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն նման տեղեկություններ պահանջելու դեպքում պետական, այդ թվում՝ վերահսկող և իրավապահ մարմինները, պարտավոր են այդ տեղեկատվությունը լիազոր մարմնին տրամադրել 10-օրյա ժամկետում: ՖԴԿ-ն կարող է հարցման մեջ նշել տրամադրման այլ ժամկետ (ավելի կարճ ժամկետ այն դեպքերում, որոնցում պահանջվում է ավելի արագ պատասխան), սակայն հարցումը ստացող պետական մարմինն իրավասու է, ի հակադրություն վերոհիշյալի, հետաձգել տեղեկությունների տրամադրումը, չնայած որ այդ դեպքում պետական մարմինը ստիպված կլինի հիմնավորել իր կարծիքը:

293. ՖԴԿ-ն փոխըմբռնման հուշագրեր է կնքել գլխավոր դատախազության, ԱԱԾ-ի, ոստիկանության և պետական եկամուտների կոմիտեի հետ, որոնցում նույնպես նշվում է այդ

մարմինների՝ տեղեկություններ տրամադրելու պարտավորությունն այն դեպքում, եթե «հարցումը հիմնավորված է ՓԼ/ԱՖ հանցանքի կապակցությամբ վերլուծություն կատարելու անհրաժեշտությամբ»: Գլխավոր դատախազության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն, օրինակ, այդ տեղեկությունները ներառում են նաև «հետաքննության կամ նախաքննության գաղտնիք համարվող տեղեկությունները», մինչդեռ պետական եկամուտների կոմիտեի դեպքում տեղեկությունները ներառում են «օպերատիվ տվյալները և նախաքննության գաղտնիք կազմող տեղեկությունները»:

294. Ուստի, ՖԴԿ-ն գրավոր հարցումների միջոցով կարող է ստանալ հետևյալ մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկությունները.

- Գլխավոր դատախազություն,
- ԱԱԾ,
- Ոստիկանություն,
- Պետական եկամուտների կոմիտե,
- Պետական կադաստր,
- Իրավաբանական անձանց պետական ռեգիստր:

295. Ստորև բերված են ստորագրված փոխըմբռնման հուշագրերի շրջանակում ՖԴԿ-ի կողմից ներպետական մակարդակով այլ իրավասու մարմինների հետ փոխանակված տեղեկությունների և ներկայացված հաղորդումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

ՖԴԿ-ի հետ ներպետական մակարդակով փոխանակված տեղեկությունների վիճակագրությունը

Մարմինը	*2007 թ.*		*2008 թ.*		*2009 (01.04.2009 թ. դրությամբ)*	
	ՖԴԿ-ի ուղարկած	ՖԴԿ-ի ստացած	ՖԴԿ-ի ուղարկած	ՖԴԿ-ի ստացած	ՖԴԿ-ի ուղարկած	ՖԴԿ-ի ստացած
Գլխավոր դատախազություն	5	5	4	5	0	2
Ազգային անվտանգության ծառայություն	1	3	9	12	2	6
Ոստիկանություն	2	3	6	2	1	1
Պետական եկամուտների կոմիտե	4	2	4	2	1	1

296. ՀՀ ԿԲ-ի ֆինանսական վերահսկողության վարչության (ՖՎՎ) միջև համաձայնագրով նախատեսվում է վերահսկողության արդյունքում ստացված և ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող տեղեկությունների փոխանակումը, ինչպես նաև ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը ՖԴԿ-ի և ՖՎՎ-ի միջև: Այդ տեղեկությունները փոխանակվում են վերահսկողության թե պլանավորման, թե անցկացման, թե արդյունքների ամփոփման փուլերում: Նշված համաձայնագրով նաև նախատեսվում է, որ ՖՎՎ-ն տեղեկությունները տրամադրում է կամ ՖԴԿ-ի հարցման հիման վրա, որի դեպքում ՖԴԿ-ի հարցման մեջ պետք է «հիմնավորված լինի ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող գործարքի կապակցությամբ գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը», կամ սեփական

նախաձեռնությամբ, եթե վերահսկողության գործառույթների իրականացման արդյունքում բացահայտվում են «կասկածելի գործարքի հայտանիշներ»: Համաձայնագրով նաև նախատեսվում են «համատեղ քննարկումներ» ՖԴԿ-ի և ՖՎՎ-ի միջև՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող կասկածելի գործարքների վերաբերյալ»՝ ուղղված «կասկածելի գործարքների բացահայտմանը և դրանց հանգամանքների պարզաբանմանը»: ՖԴԿ-ն նշեց, որ այդ քննարկումները վերաբերում են ոչ թե ստացվող ԿԳՀ-ներին, այլ՝ «բարձր ռիսկային գործարքներին»:

Հաշվետվություն տրամադրող անձանցից ստացվող լրացուցիչ տեղեկությունները (չ. 26.4).

297. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով (10-րդ հոդվածի 1(4) ենթակետով հստակորեն սահմանվում է ՖԴԿ-ի իրավասությունը՝ հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջելու «սույն օրենքի (այսինքն՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի) նպատակներից բխող այլ տեղեկություններ»: Չնայած որ վերոհիշյալ հոդվածի իմաստով ֆինանսական հաստատություններ համարվող հաշվետվություն տրամադրող անձինք չեն կարող ՖԴԿ-ին հակադրվել՝ հիմնվելով ֆինանսական գաղտնիքի մասին օրենսդրության վրա, նախատեսված է բացառություն (կատարելով հղում 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերին) նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անկախ աուդիտորների և աուդիտորական ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների համար: Այդ դեպքերի համար 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ նրանք պարտավոր են տեղեկությունները ներկայացնել «միայն այն դեպքերում, որոնք չեն հակասում նրանց գործունեությունը կարգավորող օրենքներով սահմանված գաղտնիքի պահպանման պահանջին»:[26] Հաշվետվություն տրամադրող անձանց այդ տեսակների դեպքում ավելի բարդ է պարզել, թե արդյոք իրավաբանորեն նրանք 4-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպման հիման վրա իրավասու են մասնագիտական գաղտնիքի փաստարկով հրաժարվել ՖԴԿ-ին լրացուցիչ տեղեկություններ տրամադրելուց:

298. Գնահատողներին հասանելի օրենքների և ՆՈՖԳՏՄ-ների հետ հանդիպումների ընթացքում ստացված տեղեկությունների հիման վրա պարզվեց, որ մասնագիտական գաղտնիք նախատեսված է առնվազն փաստաբանների, նոտարների, հաշվապահների և աուդիտորների պարագայում: Գործունեության այդ տեսակները կարգավորող օրենքների մեջ ուղղակիորեն նշվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքից բխող պահանջները: Այդ օրենքներով նախատեսվում է, որ կարգավորվող սուբյեկտները պարտավոր են պահպանել այդ պահանջները: Այդ օրենքները, սակայն, միայն ընդհանուր առմամբ են հղում անում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքով նախատեսված» պարտավորություններին (փաստաբանների, նոտարների, աուդիտորների և հաշվապահների պարագայում): Միայն նոտարների դեպքում է սահմանված օրենքի կոնկրետ նորմ («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մաս), որով նոտարին թույլատրվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն տեղեկություններ տրամադրել ՀՀ ԿԲ-ին:

299. «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածում նշվում է, որ փաստաբանը պարտավոր է «չհրապարակել փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ օրենքով

[26] Այդ դրույթով նաև նախատեսվում է, որ «Ոչ ֆինանսական այդ հաստատությունների կամ անձանց նկատմամբ օրենքով սահմանված գաղտնիքի պահպանման պահանջը կարող է կիրառվել միայն այնպիսի տեղեկատվության դեպքում, որը հայտնի է դարձել հիշյալ հաստատություններին կամ անձանց՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունները կատարելիս»: Տվյալ նորմի նպատակն է պաշտպանությունը սահմանափակել միայն այն տեղեկատվությամբ, որը ՆՈՖԳՏՄ-ներին հայտնի է դարձել օրինական ճանապարհով:

նախատեսված դեպքերի»: «Փաստաբանական գաղտնիքը» օրենքի 25-րդ հոդվածով սահմանվում է որպես «այն տեղեկությունը, որը վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն, և որոնք հայտնի չեն հանրությանը»: Ավելին, փաստաբանը կարող է բացահայտել տեղեկությունները, եթե «առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն»: Չնայած որ «Փաստաբանության մասին» օրենքը պարունակում է կոնկրետ դրույթ (19(7)-րդ հոդված), որով փաստաբանից պահանջվում է «կատարել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականությունները», այդ դրույթը չի անդրադառնում այն հարցին, թե արդյոք դա ներառում է ՖԴԿ-ի իրավասությունը՝ ստանալու լրացուցիչ տեղեկություններ: Հաշվի առնելով համապատասխան օրենքներում գաղտնիքի վերաբերյալ նորմերի վրա հղումը, կարելի է պնդել, որ լրացուցիչ տեղեկությունները ենթակա չեն տրամադրման, եթե ՓԼ հանցագործությունը «ծանր» չէ (այսինքն՝ ՓԼ հանցագործության հասարակ ձևի համար):

300. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով նոտարներից ուղղակիորեն պահանջվում է (23(6)-րդ հոդված) կատարել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջները, սակայն, ինչպես նշվեց, 5-րդ հոդվածի 9-րդ մասով նոտարին թույլատրվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված տեղեկություններ տրամադրել ՀՀ ԿԲ-ին:

301. Ինչ վերաբերում է աուդիտորի մասնագիտությանը, ապա «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 18-րդ հոդվածով նախատեսվում է գաղտնիության մասին դրույթ, որի համաձայն աուդիտորներից պահանջվում է պահպանել իրենց պարտականությունների կատարման ընթացքում ստացված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների կատարման դեպքի:

302. Ինչ վերաբերում է հաշվապահներին, ապա «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 5.3-րդ հոդվածի համաձայն, «կազմակերպության հաշվապահական հաշվառումը վարվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների պահպանմամբ»: «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 18-րդ հոդվածով նաև նախատեսվում է, որ «սկզբնական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար կազմված հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը համարվում է առևտրային գաղտնիք, որին կարելի է ծանոթանալ կազմակերպության ղեկավարի թույլտվությամբ՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով»: Պարզ չէ, թե արդյոք «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունները գերակայում են գաղտնիքի մասին դրույթների նկատմամբ, և թե արդյոք դրանցով թույլատրում է լրացուցիչ տեղեկությունների տրամադրումը:

303. ՆՈՖԳՏՄ-ների կողմից չնշվեցին խնդիրներ ոչ գաղտնիության պահանջների կատարման կապակցությամբ, ոչ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով համապատասխան օրենքից բխող գաղտնիության պահանջներից բացառություն կատարելու կարողության կապակցությամբ: Առաքելությանը հանդիպած բոլոր ՆՈՖԳՏՄ-ներն այդ դրույթը մեկնաբանում են հետևյալ կերպ. գաղտնիության պահանջից իրենք ազատվում են, քանի որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված են հաշվետվություններ տրամադրելու և այլ պարտավորություններ: Այնուհանդերձ, ՆՈՖԳՏՄ-

ներից ոչ մեկը դեռևս չի տրամադրել ԿԳՀ. ուստի, գաղտնիության խնդիրը պրակտիկայում որևէ կերպ չի փորձարկվել: Նրանք բոլորը նշեցին, որ իրենց պատկերացմամբ, համապատասխան նորմերով թույլատրվում է գաղտնիության պահանջից բացառություն կատարել, եթե անհրաժեշտ է որոշակի տեղեկություններ տրամադրել իրավասու մարմնին: Նրանք նաև նշեցին, որ հասկանում են դրա իմաստը և նպատակը: ՖԴԿ-ն համարում է, որ կարող են դժվարություններ ծագել մասնագիտական գաղտնիքի մասին դրույթներով պաշտպանվող ՆՈՖԳՏՄ-ներից լրացուցիչ տեղեկություններ ստանալու հարցում:

304. Օրենքով չի պահանջվում, որպեսզի անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները կապված լինեն ստացված կոնկրետ ԿԳՀ-ի հետ կամ սահմանափակվեն կոնկրետ ԿԳՀ տրամադրած հաշվետվություն տրամադրող անձի հետ: Այնուամենայնիվ, համապատասխան նորմերի պրակտիկ կիրառությունը ցույց է տալիս, որ եթե լրացուցիչ տեղեկություններն առնչվում են կոնկրետ ԿԳՀ-ի (կամ ՆՇԳՀ-ի), ապա ՖԴԿ-ն այն պահանջում է կոնկրետ հաշվետվություն տրամադրած անձից, մինչդեռ այլ դեպքերում (օրինակ, երբ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները չեն բխում հաշվետվություն տրամադրող անձանց տրամադրած հաշվետվությունից, կամ եթե հաշվետվության հետ կապված տեղեկությունները վերաբերում են ոչ թե հաշվետվություն տրամադրած անձին, այլ՝ որևէ այլ անձի) տեղեկությունները, որպես կանոն, ՖԴԿ-ի անունից պահանջում է ՀՀ ԿԲ-ի ՖՎՎ-ն:

Գործառնական անկախությունը (չ. 26.6).

305. Չնայած որ ՖԴԿ-ն գործում է ՀՀ ԿԲ-ում, և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերոհիշյալ տարբեր լիազորություններ ուղղակիորեն վերապահված են ՀՀ ԿԲ-ին՝ որպես «լիազոր մարմնի», ՖԴԿ-ն որոշակի կարգավիճակ և ինքնուրույնություն է ստանում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն, որով այն նախատեսվում է որպես «պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում»: Ավելին, օրենքն ուղղակիորեն ՖԴԿ-ին է վերապահում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն ստացվող տեղեկությունները ստանալու, վերլուծելու և տարածելու՝ ՖՀՄ-ի բուն գործառույթները, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պարտականություններ կատարելու լիազորությունը: ՖԴԿ-ի՝ որպես ՀՀ ԿԲ-ի ներսում առանձին կառույցի ինքնուրույնության մասին է վկայում նաև այն փաստը, որ ՖԴԿ-ն (ի տարբերություն ՀՀ ԿԲ-ի այլ վարչությունների) ունի առանձին կանոնադրություն. առանձին կանոնադրություն ՀՀ ԿԲ-ում ունի միայն Ներքին աուդիտի ստորաբաժանումը: Այս հանգամանքը ևս գալիս է հաստատելու, որ ՖԴԿ-ի բացառիկ իրավասությանն են վերապահված ՖՀՄ-ի բուն գործառույթները՝ ըստ Հ.26-ի, ինչպես նաև ըստ «ՖՀՄ»-ի՝ «Էգմոնտ» խմբի հաստատած սահմանման: ՖԴԿ-ն նաև ունի առանձին բյուջե:

306. Ինչ վերաբերում է ՖԴԿ-ի կողմից ՖՀՄ-ի բուն գործառույթների անկախ կատարմանը, ապա հարկ է նշել, որ դրանցից է որոշումն այն մասին, թե արդյոք օրենքի համաձայն ստացված տեղեկությունները պետք է հաղորդել քրեական հետապնդում իրականացնող իրավասու մարմիններին, եթե ՖԴԿ-ն այդ տեղեկությունների վերլուծության հիման վրա

գալիս է եզրակացության, որ «առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածներ»,[27] կամ, եթե այդ կասկածները վերլուծությամբ չեն հիմնավորվել, ապա՝ փակել գործը կամ պահել այն «ներքին մոնիտորինգի ցանկում»: Ինչպես արդեն նշվեց, տեղեկությունների ստացման և վերլուծության, գործի մասին իրավասու մարմիններին հաղորդում ներկայացնելու և գործը փակելու կամ ներքին մոնիտորինգի ցանկերում պահպանելու ընթացակարգերը ոչ միայն մանրամասնորեն կարգավորվում են կոնկրետ ձեռնարկով, այլ նաև՝ մշակված են այնպես, որպեսզի բացառեն անհարկի միջամտության/ազդեցության ռիսկը:

307. ՀՀ ԿԲ-ի խորհրդի դերակատարումը սահմանափակվում է ՖԴԿ-ի ռազմավարության, տարեկան ծրագրի և բյուջեի հաստատմամբ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն ՖԴԿ-ի առաջարկով գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշման կայացմամբ, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու/դադարեցնելու մասին որոշման հաստատման իրավասությամբ (24-րդ հոդված), ինչպես նաև 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմների շրջանակում որոշումների կայացմամբ: ՖԴԿ-ն գնահատող առաքելությանը տեղեկացրեց, որ մինչև օրս յուրաքանչյուր անգամ, երբ ՖԴԿ-ն ՀՀ ԿԲ-ի խորհրդին առաջարկել է կիրառել թվարկված միջոցներից մեկնումեկը, խորհուրդը բոլոր դեպքերում հաստատել է ՖԴԿ-ի առաջարկները: Ի վերջո, ՖԴԿ-ն եռամսյակը մեկ հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ ԿԲ-ին (և տարին մեկ անգամ հրապարակում իր գործունեության մասին հաշվետվությունը):

308. Ի տարբերություն ՀՀ ԿԲ-ի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ովքեր նշանակվում և հեռացվում են ՀՀ ԿԲ-ի նախագահի որոշմամբ, ՖԴԿ-ի ղեկավարի նշանակման/հեռացման իրավասությունը վերապահված է ՀՀ ԿԲ-ի խորհրդին. այդկերպ երաշխավորվում է որոշման կայացումը կոլեգիալ կարգով: ՖԴԿ-ն իր աշխատակիցներին աշխատանքի ընդունելու առումով նույնպես առաջնորդվում է այլ ընթացակարգերով (մանրամասն վերլուծությունը ներկայացված է թիվ 30 հանձնարարականի առնչությամբ): ՖԴԿ-ի բյուջեն ՀՀ ԿԲ-ի բյուջեի մեջ այլ կարգավիճակ ունի, քանզի (որպես բացառություն ՀՀ ԿԲ-ի բյուջեի կազմման/բաշխման գործընթացից) ՖԴԿ-ի բյուջեն կազմվում և հաստատվում է որպես առանձին ծախսային տող ՀՀ ԿԲ-ի ընդհանուր բյուջեում: Դա նշանակում է, որ ՖԴԿ-ի ղեկավարը ներկայացնում է ՖԴԿ-ի հաջորդ տարվա բյուջեն (որոշ ծախսերի խմբերի ներքին բաշխմամբ), որն առանց փոփոխությունների ներառվում է ՀՀ ԿԲ-ի բյուջեի մեջ: ՀՀ ԿԲ-ի բյուջեի բաշխման գործընթացը վերահսկող բյուջետային հանձնաժողովն իրավասու չէ փոփոխել ՖԴԿ-ի բյուջեն, սակայն կարող է դրա լրացուցիչ հիմնավորման վերաբերյալ առաջարկություն ներկայացնել: Նման առաջարկություն ստանալու դեպքում ՖԴԿ-ի ղեկավարը հիմնավորում է բյուջետային ծախսերը Կենտրոնական բանկի խորհրդի առջև: Այնուհետ, ՀՀ ԿԲ-ի ընդհանուր բյուջեի հաստատմամբ ավտոմատաբար, որպես դրա մաս, հաստատված է համարվում նաև ՖԴԿ-ի բյուջեն:

309. Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ ՖԴԿ-ի նկատմամբ ՀՀ ԿԲ-ի խորհրդի դերակատարումը չի նսեմացնում ՖԴԿ-ի գործառնական անկախությունը և

[27] Տես «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը: Տես նաև ՖԴԿ-ի կանոնադրության 2.3.3.(գ) կետը և ՖԴԿ-ի ներքին ընթացակարգերի ձեռնարկը, որում նշվում է, որ ՖԴԿ-ի ղեկավարը հրահանգում է Վերլուծությունների բաժնի ղեկավարին (ով այդ կապակցությամբ հրահանգները տալիս է գործը վերլուծող մասնագետին) պատրաստել հաղորդում՝ ուղղված իրավապահ մարմնին (5-րդ գլուխ, 5.2. հոդված). այդ հաղորդումը հաստատվում է ՖԴԿ-ի 3 բաժինների ղեկավարների և ՖԴԿ-ի ղեկավարի տեղակալի կողմից, ապա՝ հաստատվում ՖԴԿ-ի ղեկավարի կողմից (6-րդ գլխի 1-ին հոդված):

ինքնուրույնությունը, չի ազդում ՖԴԿ-ի գործունեության վրա և չի միջամտում այդ գործունեությանը:

310. Դիտարկելով ՖԴԿ-ի կազմակերպական կառուցվածքը և լիազորություններն ըստ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի, կարելի է ըստ էության եզրակացնել, որ ՖԴԿ-ն ունի բավարար գործառնական անկախություն և ինքնուրույնություն: Այնուհանդերձ, հարկ է հիշատակել, որ ՖԴԿ-ի 2005 թվականին հաստատված կանոնադրությունը դեռևս փոփոխությունների չի ենթարկվել[28]՝ արտացոլելու «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր օրենքով ուղղակիորեն ՖԴԿ-ին վերապահված լիազորությունների ավելի լայն շրջանակը: Կանոնադրության համաձայն, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված լիազորությունների մի մասը պետք է իրականացվի ՀՀ ԿԲ-ի այլ ստորաբաժանումների օժանդակությամբ:[29] Դրանցից է հաշվետվություն տրամադրող անձանց ուսուցումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի այլ իրավասու մարմինների հետ ներպետական համագործակցությունը և համագործակցությունն օտարերկրյա ՖՀՄ-ների հետ (չնայած որ վերջինս սահմանափակվում է միայն օտարերկրյա ՖՀՄ-ների հետ համագործակցության հայեցակարգերի մշակմամբ, համագործակցության համաձայնագրերի նախապատրաստմամբ, դրանց համաձայնեցման և կնքման գործընթացի համակարգմամբ, մինչդեռ ներպետական իրավասու մարմինների և օտարերկրյա ՖՀՄ-ների հետ տեղեկատվության փոխանակումն իրականացվում է բացառապես ՖԴԿ-ի կողմից՝ ՖԴԿ-ի կանոնադրության 2.3.4. կետի համաձայն): Չնայած որ վերոհիշյալ լիազորությունները կարող են նաև ուղղակիորեն չառնչվել ՖՀՄ-ի՝ Հ.26-ով նախատեսված բուն գործառույթներին, դրանք, այնուամենայնիվ, առնչվում են ՖՀՄ-ի վերաբերյալ ՖԱԹՖ-ի այլ հանձնարարականներին և կարող են նպաստել, որպեսզի ՖՀՄ-ն հավուր պատշաճի ինքնուրույն հարաբերություններ հաստատի համապատասխան գործընկեր կառույցների հետ թե ներպետական, թե միջազգային մակարդակներով: Այն փաստը, որ նշված լիազորությունների կատարման մեջ ՖԴԿ-ն կարող է հենվել ՀՀ ԿԲ-ի այլ ստորաբաժանումների օժանդակության վրա, ինքնին խնդիր չէ (ՖԴԿ-ի և ՀՀ ԿԲ-ի փոխկապվածությունը պայմանավորված է ՖԴԿ-ի՝ ՀՀ ԿԲ-ում գործելու հանգամանքով), բացառությամբ նրա, որ ՖԴԿ-ն հաստիքների սահմանափակ թվի պատճառով ավելի հավանական է, որ ՖԴԿ-ն նշված այլ լիազորություններն արդյունավետորեն կատարելու

---

[28] 2009 թվականի սեպտեմբերի 17-ին իշխանությունները գնահատող թիմին տեղեկացրեցին, որ ՀՀ ԿԲ-ի խորհուրդը հաստատել է ՖԴԿ-ի նոր կանոնադրությունը:

[29] ՖԴԿ-ի կանոնադրության համաձայն, ՖԴԿ-ն հետևյալ ոլորտներում հենվում է ՀՀ ԿԲ-ի այլ ստորաբաժանումների օժանդակության վրա.
ա) ՓԼ և ԱՖ դեմ պայքարի տեղեկատվական բազաների ձևավորում և զարգացում (2.3. կետ),
բ) համապատասխան իրավասու մարմինների և լիազոր մարմնի միջև ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ոլորտում արդյունավետ համագործակցության մեթոդների, համագործակցության համաձայնագրերի մշակումը, համաձայնեցումը, դրանց կնքման և հետագա փոխգործակցության աշխատանքների համակարգումը (2.3.3.բ. կետ),
գ) օտարերկրյա ՖՀՄ-ների հետ համագործակցության հայեցակարգերի մշակումը, համագործակցության համաձայնագրերի նախապատրաստումը, դրանց համաձայնեցման և կնքման գործընթացի համակարգումը (2.3.4.բ կետ),
դ) ՓԼ և ԱՖ դեմ պայքարի օրենսդրության, նորմատիվ և այլ իրավական ակտերի մշակմանն ուղղված աշխատանքների իրականացումը (2.3.5.բ կետ),
ե) ՓԼ և ԱՖ դեմ պայքարի միջազգային և ներպետական ստանդարտներին լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրող անձանց և դրանց հաճախորդների գործունեության համապատասխանության դիտանցումը, անհրաժեշտության դեպքում ՀՀ կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների, պետական այլ մարմինների հետ համատեղ ստուգումների իրականացումը (2.3.6.գ կետ), և
զ) ՓԼ և ԱՖ դեմ պայքարի բնագավառում խորհրդատվության և ուսուցման իրականացում (2.3.7. կետ):

համար ստիպված կլինի մեծ չափով օգտվել ՀՀ ԿԲ-ի (հատկապես ՖՎՎ-ի) օժանդակությունից:

ՖՀՄ-ում պահվող տեղեկատվության պաշտպանությունը (չ. 26.7).

311. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսվում է, որ ՖԴԿ-ի կողմից «օրենքի նպատակներից ելնելով տեղեկատվության ստացման և վերլուծության ընթացքում» այդ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի միայն ՖԴԿ-ի աշխատակիցներին: 10-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսվում է, որ ՖԴԿ-ի այն աշխատակիցները, որոնց «հասանելի է ստացվող և պահպանվող տեղեկատվությունը, օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված կարգով պահպանում են գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունն իրենց պարտականությունների կատարման ընթացքում և դրանց դադարումից հետո, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրա անօրինական հրապարակման համար»: Նույն մասով նաև նախատեսվում է, որ «այդպիսի տեղեկատվությունը կարող է օգտագործվել միայն սույն օրենքի նպատակներով»: ՖԴԿ-ի գրասենյակային տարածքը հասանելի է միայն ՖԴԿ-ի աշխատակիցներին՝ մուտքի հատուկ քարտով (էլեկտրոնային բանալի):

312. ՖԴԿ-ի կողմից պահպանվող ողջ տեղեկատվությունը դասակարգվում է և պաշտպանվում ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերով և տեղեկատվությունը «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի համաձայն որպես «պետական գաղտնիք» կամ «գաղտնի տեղեկատվություն» դասակարգելու վերաբերյալ համապատասխան օրենսդրական նորմերով: Թղթային տեսքով պահպանվող տեղեկատվությունը մասամբ պահվում է ՖԴԿ-ի գրասենյակում, որը հասանելի է միայն ՖԴԿ-ի աշխատակիցներին, մասամբ՝ ՀՀ ԿԲ-ի արխիվի առանձին բաժնում, ուր մուտք գործելու իրավունք ունեն միայն սահմանափակ թվով աշխատակիցներ՝ ՀՀ ԿԲ-ի կանոններով նախատեսված գաղտնիության պահանջներին համապատասխան: Տվյալների բազայում պահպանվող տեղեկատվությունը հասանելի է միայն ՖԴԿ-ի՝ այդ նպատակով լիազորված աշխատակիցներին: Սերվերից օգտվողների ցանկը, նրանց լիազորությունների շրջանակը և տեղեկատվության անվտանգությանն առնչվող այլ գրառումները համարվում են գաղտնի և հասանելի են միայն այդ նպատակով լիազորված աշխատակիցներին: Տվյալներից օգտվելու յուրաքանչյուր դեպք ենթարկվում է մոնիտորինգի և կանոնակարգվում հատուկ ընթացակարգերով, որոնց համաձայն պահանջվում է գրավոր հաստատում էլեկտրոնային ռեգիստրներում: Վերջիններս հասանելի են միայն տեղեկատվության անվտանգության և սերվերների (համակարգի) ադմինիստրատորներին, ընդ որում՝ միայն ընթերցելու թույլտվությամբ:

313. Ցանցի անվտանգությունն ապահովելու համար ՖԴԿ-ն կիրառում է առանձին դոմեյնի համակարգ, որով կառավարվում և մոնիտորինգի է ենթարկվում «FMC» ցանցում տեղեկատվության օգտագործումը համապատասխան լիազորություններ ունեցող օգտագործողների կողմից: «FMC» ցանցն «արտաքին աշխարհի» հետ տեղեկություններ փոխանակում է ֆիզիկապես առանձնացված թվային կապուղիների միջոցով: Հաղորդակցության այս համակարգի ծրագրային ապահովումն իրականացվում է ցանցի շահագործման հուսալի և ժամանակակից համակարգով («Lotus Domino» համակարգ): Համակարգի գործունեությունը տարածվում է Հայաստանում գործող բոլոր ֆինանսական հաստատությունների, այն է՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական/վերաապահովագրական ընկերությունների և արժույթի դիլերների նկատմամբ: Համակարգի սպասարկման կենտրոնը գտնվում է ՀՀ կենտրոնական բանկում և շահագործվում է առանձին ստորաբաժանման բարձրակարգ մասնագետների կողմից:

314. Չնայած որ ՖԴԿ-ի կողմից էլեկտրոնային ձևով պահպանվող տեղեկատվությունից կարող են օգտվել միայն ՖԴԿ-ի աշխատակիցները, տեղեկատվական տեխնոլոգիաների

պահպանության/անվտանգության հարցերով զբաղվում են ՀՀ ԿԲ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները: Այնուամենայնիվ, այդ տեղեկատվությունը պահպանող սերվերներից օգտվելու համար պահանջվում է գաղտնաբառերի կրկնակի ներմուծում (գաղտնաբառերից մեկը հայտնի է միայն ՖԴԿ-ի այդ նպատակով լիազորված աշխատակցին): ՖԴԿ-ի տվյալների բազան կրող սերվերը (ներառյալ պահուստային մեքենան) գտնվում է ՀՀ ԿԲ-ի սերվերների հետ միևնույն սենյակում, որի մուտքը նույնպես պաշտպանված է գաղտնաբառի վրա հիմնված համակարգով:

Տարեկան հաշվետվությունների հրապարակումը (չ. 26.8).

315. Օրենքի 10-րդ հոդվածի 1(15)-րդ մասի համաձայն, ՖԴԿ-ն «իր իրավական ակտերով սահմանված կարգով սույն օրենքով սահմանված գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ» է հրապարակում: Մինչ օրս ՖԴԿ-ն հրապարակել է միայն 2007 թվականի իր տարեկան հաշվետվությունը: Գնահատող առաքելության այցի ժամանակ վերջնականացվում էր 2008 թվականի տարեկան հաշվետվությունը: Չնայած որ 2007 թվականի տարեկան հաշվետվությունը պարունակում է որոշ տեղեկություններ ՖԴԿ-ի գործունեության մասին, այն չի ներառում ոչ վիճակագրական տվյալներ, ոչ տվյալներ միտումների մասին:

Անդամակցությունն «էգմոնտ» խմբին (չ. 26.9).

316. ՖԴԿ-ն «էգմոնտ» խմբի 2007 թ. մարտի 29-ի լիագումար նիստում ստացել է «էգմոնտ» խմբի անդամի կարգավիճակ:

ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ «էգմոնտ» խմբի սկզբունքները (չ. 26.10).

317. Որպես «էգմոնտ» խմբի անդամ, ՖԴԿ-ն առաջնորդվում է 2001 թ. հունիսի 13-ին Հաագայում ընդունված՝ ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ «էգմոնտ» խմբի սկզբունքներով: Վերջիններս նաև դրվել են ՖԴԿ-ի կողմից մինչ օրս ստորագրված ՓՀ-ների հիմքում (գնահատող առաքելության այցի դրությամբ ստորագրված էին ՓՀ-ներ Բելառուսի, Վրաստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի հետ): Տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ ստացված հարցումների պատահական ընտրանքի ուսումնասիրությամբ՝ համադրելով ՖԴԿ-ի ստացած հարցումները և հարցում կատարող ՖՀՄ-ներին տրամադրված պատասխանները, ցույց տվեց, որ տեղեկատվությունը տրամադրելու համար միջինը պահանջվել է 7 օր և 3-4 շաբաթ (եթե հարցման հիման վրա անհրաժեշտություն է ծագել՝ ստանալու ՖԴԿ-ում չպահպանվող տեղեկատվություն): Միջազգային համագործակցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են Հ.40-ի վերլուծության մեջ:

ՖՀՄ-ի ռեսուրսների համարժեքությունը (չ. 30.1).

318. ՖՀՄ-ի հաստիքների ընդհանուր թիվը ներկայումս 16 է (ներառյալ ղեկավարը, նրա տեղակալը, գործավար-օգականը և մեկ պայմանագրային աշխատող): Օրենսդրության ներդրման և միջազգային կապերի բաժնում կա 5 հաստիք, վերլուծությունների բաժնում՝ 3-ը, իսկ տեղեկատվական համակարգերի ներդրման և զարգացման բաժնում՝ 4-ը: Մեկ հաստիք թափուր է: Բացի այդ, ՖԴԿ-ն ներկայումս դիտարկում է հաստիքների թիվը երկուսով ավելացնելու հնարավորությունը: Գնահատողները համարում են, որ ՖԴԿ-ի աշխատակիցների թիվը բավարար չէ, հատկապես հաշվի առնելով նոր օրենքի համաձայն ՖԴԿ-ին վերապահված լիազորությունների շրջանակի ընդլայնումը և հաշվետվությունների

ծավալի հավանական աճը (ԿԳՀ-ների ծավալն առայժմ ցածր է) «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր օրենքի լիարժեք կատարման արդյունքում, այդ թվում՝ ՆՈՖԳՏՄ-ների կողմից:

319. ՖԴԿ-ին հատկացված բյուջեն մինչ օրս բավարար է եղել ՖԴԿ-ի կողմից իր գործառույթները հավուր պատշաճի իրականացնելու համար: ՖԴԿ-ի 2005, 2006, 2007 և 2008 թվականների բյուջեն և 2009 թ. բյուջեի նախահաշիվը ներկայացված են ստորև՝ ըստ տարիների:

ՖԴԿ-ի բյուջետային ծախսերը	2005	2006	2007	2008	2009
		Հազար դրամ	Հազար դրամ	Հազար դրամ	Հազար դրամ
Գործառնական ծախսեր (բաժանորդագրություն տեղեկատվական բազաների, միջազգային կազմակերպություններին անդամակցելու հետ կապված ծախսեր)		5,180.0	7,080.0	1,440.0	12,985.0
Վարչական ծախսեր (աշխատակիցներ գործուղումներ, ներկայացուցչական ծախսեր, գրականություն և գրասենյակային պարագաներ, բացառությամբ աշխատավարձերի և պարգևավճարների)		11,430.6	16,001.2	16,456.2	26,328.6
Հիմնական միջոցների ձեռքբերում (գրասենյակային սարքավորումներ, համակարգիչներ, ծրագրային ապահովում, բացառությամբ կապիտալ ներդրումների և նախագծային շինարարության ծախսերի)		19,897.0	18,371.0	4,211.0	9,050.0
Ընթացիկ ծախսեր (խորհրդաժողովներ, խորհրդակցություններ, տարածաշրջանային աշխատանքային հանդիպումներ, իրավական ակտերի թարգմանություն)		-	-	4,000.0	12,400.0
Վարձատրության ծախսեր (աշխատավարձեր, պարգևավճարներ, սոցիալական ապահովության և այլ ծախսեր)		31,412.70	50,661.72	61,853.77	74,224.52
Ընդամենը		67,920.30	92,113.92	87,960.97	134,988.12

320. Լրացուցիչ բյուջե կարող է պահանջվել ՖԴԿ-ի հաստիքների թիվն ավելացնելու, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանց լրացուցիչ ուսուցումների, հատկապես կասկածելի գործարքների հայտնաբերման թեմայով անցկացվելիք ուսուցումների (բոլոր անձանց և, մասնավորապես, ֆինանսական հաստատությունների համար) և ՆՈՖԳՏՄ-ների իրազեկության բարձրացման աշխատանքների համար:

321. ՖԴԿ-ն ներկայումս ապահովված է իր գործառույթները հավուր պատշաճի կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսներով (համակարգիչներ, տպիչներ և այլն):

ՖՀՄ մարմինների անաչառությունը (չ. 30.2).

322. ՖԴԿ-ի բարձր հեղինակությունը և գործառնականությունն ապահովելու նպատակով ՖԴԿ-ի աշխատակիցների մասնագիտական և բարոյական հատկանիշների և համապատասխան հմտություններին առնչվող մի շարք պահանջներ են սահմանված ՀՀ աշխատանքային օրենսգրքով և յուրաքանչյուր աշխատատեղի նկարագրով: ՖԴԿ-ն ունի վարքագծի կանոնագիրք, որով սահմանվում են ՖԴԿ-ի աշխատակիցների մասնագիտական գործունեության և էթիկայի ստանդարտները:

323. ՖԴԿ-ի աշխատակիցների նշանակումը և ազատումը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի ներքին ընթացակարգերով: ՖԴԿ-ում առկա յուրաքանչյուր թափուր տեղ լրացվում է մրցութային կարգով: ՖԴԿ-ի կանոնադրության համաձայն, ՀՀ ԿԲ-ի խորհուրդը սահմանում է ՖԴԿ-ի աշխատակիցների թվաքանակը, նրանց ներկայացվող պահանջները և աշխատատեղերի նկարագրությունները: Ընտրության գործընթացը բաղկացած է հարցազրույցից, որն անցկացնում է ՖԴԿ-ի ղեկավարը (կամ նրան փոխարինող անձը), ՖԴԿ-ի համապատասխան բաժնի պետը և կադրային վարչության պետը (կամ նրան փոխարինող անձը), ով պատասխանատու է կազմակերպական հարցերի համար: Նախաորակավորված հավակնորդներն այնուհետ մասնակցում են գրավոր քննության, որը կազմակերպվում է ՖԴԿ-ի կողմից հրապարակվող և պարբերաբար թարմացվող հարցաշարի հիման վրա: Քննական թերթերն անանուն կարգով ստուգվում են ՖԴԿ-ի և ՀՀ ԿԲ-ի այլ՝ թափուր տեղին առնչվող վարչությունների աշխատակիցներից (որոնք նշանակվում են ՖԴԿ-ի կողմից՝ կադրային վարչության միջոցով) կազմված ժամանակավոր հանձնաժողովների կողմից: Քննական թերթերի գնահատումն իրականացվում է գնահատման սահմանված համակարգով: Գնահատումից հետո կադրային վարչությունը հաշվարկում է յուրաքանչյուր հավակնորդի միջին գնահատականը, և արդյունքները ներկայացվում են ՀՀ ԿԲ-ի խորհրդի հաստատմանը (սա բացառություն է, որը նախատեսված է միայն ՖԴԿ-ի համար՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով, քանի որ ՀՀ ԿԲ-ի այլ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներին աշխատանքի ընդունելու լիազորությունը վերապահված է ՀՀ ԿԲ-ի նախագահին): Նախքան ՀՀ ԿԲ-ի խորհրդում խնդրի քննարկումը, ՀՀ ԿԲ-ի ներքին անվտանգության վարչությունն իր գաղտնի ընթացակարգերի համաձայն իրականացնում է հավակնորդների ստուգում: ՀՀ ԿԲ-ի խորհրդում գրավոր քննության արդյունքների քննարկման ընթացքում ՖԴԿ-ի ղեկավարը ներկայացնում է իր հիմնավորված կարծիքը նախընտրելի թեկնածության վերաբերյալ, որի հիման վրա խորհուրդը որոշում է կայացնում ընտրված հավակնորդին աշխատանքի ընդունելու վերաբերյալ:

324. ՖԴԿ-ի աշխատակիցների՝ որպես ՀՀ ԿԲ-ի աշխատակիցների նկատմամբ տարածվում են «Կենտրոնական բանկի մասին» օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված գաղտնիության պահանջները (որոնց համաձայն Կենտրոնական բանկի աշխատակիցները չեն կարող հրապարակել կամ այլ կերպ տարածել ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև օգտագործել նման տեղեկությունները շահադիտական նպատակներով): Ի լրումն այս դրույթի, կոնկրետ նորմ է սահմանված «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով (10-րդ հոդվածի 8-րդ մաս), որի համաձայն ՖԴԿ-ի այն աշխատակիցները, որոնց հասանելի է ստացվող և պահպանվող տեղեկատվությունը, օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված կարգով պահպանել գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունն իրենց պարտականությունների կատարման ընթացքում և դրանց դադարումից հետո, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրա անօրինական հրապարակման համար: Գաղտնիության այդ պահանջները խախտելու համար նախատեսված են համապատասխան պատիժներ:

ՖԴԿ-ի աշխատակիցների վերապատրաստումը (չ. 30.3).

325. ՖԴԿ-ի բոլոր աշխատակիցները վերապատրաստվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով: ՖԴԿ-ի աշխատակիցները միջինը կիսամյակը մեկ անգամ մասնակցում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հիմնախնդիրներին նվիրված ներքին և արտաքին վերապատրաստումների: Վերապատրաստումը մեծ մասամբ անցկացվում է միջազգային կազմակերպությունների և դոնորների կազմակերպած միջոցառումների համատեքստում: ՖԴԿ-ի աշխատակիցները մասնակցել են նաև ՀՀ ԿԲ-ի կամ ՖԴԿ-ի կազմակերպած ներքին վերապատրաստումների (ՖԴԿ-ն պարբերաբար կազմակերպում է վերապատրաստումներ, երբ աշխատակիցներից մեկն արտերկրում մասնակցել է վերապատրաստումների, ինչպես նաև՝ տիպաբանությունների և հաշվետվություն տրամադրող անձանց ուղեցույցների մշակման առթիվ):

Վիճակագրությունը (Հ.32-ի կիրառությունը ՖՀՄ-ի նկատմամբ).

326. ՖԴԿ-ն վիճակագրական տվյալներ է վարում ԿԳՀ-ների և նվազագույն շեմը գերազանցող գործարքների հաշվետվությունների, իրավասու մարմիններին փոխանցված գործերի և օտարերկրյա ՖՀՄ-ների հետ միջազգային համագործակցության մասին: Վերջինս քննարկվում է ստորև՝ Հ.40-ի շրջանակներում: Հետևյալ աղյուսակում ներկայացված է ԿԳՀ-ների և նվազագույն շեմը գերազանցող գործարքների հաշվետվությունների թվի բացվածքն ըստ ֆինանսական հաստատության տեսակի, ՆՈՖԳՏՄ-ի կամ ԿԳՀ տրամադրող այլ գործունեության տեսակի կամ անձի՝ և ՓԼ, և ԱՖ մասով:

Հաշվետվություն տրամադրող անձինք	2006 թ. ՖԴԿ-ին տրամադրված հաշվետվությունները		2007 թ. ՖԴԿ-ին տրամադրված հաշվետվությունները		2008 թ. ՖԴԿ-ին տրամադրված հաշվետվությունները	
	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվե-տվություններ	Կասկածելի գործարքի հաշվե-տվություններ	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվե-տվություններ	Կասկածելի գործարքի հաշվե-տվություններ	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվե-տվություններ	Կասկածելի գործարքի հաշվե-տվություններ
Բանկեր	52,006	27	74,090	27	89,588	36
Վարկային կազմակեր-պություններ	112	-	382	-	498	-
Արտարժույթի առուվաճառք իրականացնողներ	-	-	-	-	-	1
Արտարժույթի դիլեր-բրոքերներ	386	-	269	-	71	
Դրամական (փողի) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք	-	-	-	-	-	-
«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված կարգով ներդրումային ծառայություններ մատուցողներ	739	-	976	-	250	-
Կարգավորվող շուկայի արժեթղթերի Կենտրոնական դեպոզիտարիա	-	-	-	-	-	-
Ապահովագրական (ներառյալ վերա-ապահովագրական) ընկերություններ	16	-	69	-	167	-

Ապահովագրական (ներառյալ վերա-ապահովագրական) բրոքերներ	-	-	-	-	-	-
Գրավատներ	-	-	2	-	-	-
Ռիելտորներ (անշարժ գույքի գործակալներ)	-	-	-	-	-	-
Նոտարներ	148	-	1,546	-	1,232	-
Փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք	-	-	-	-	-	-
Անկախ աուդիտորներ և աուդիտորական ընկերություններ	-	-	-	-	-	-
Անկախ հաշվապահներ և հաշվապահական ընկերություններ	-	-	-	-	-	-
Թանկարժեք մետաղների դիլերներ	-	-	-	-	-	-
Թանկարժեք քարերի դիլերներ	-	-	-	-	-	-
Արվեստի գործերի դիլերներ	-	-	-	-	-	-
Սակարկությունների կազմակերպիչներ	-	-	-	-	-	-
Շահումով խաղ կազմակերպող անձինք և խաղատներ	-	-	-	-	-	-
Վիճակախաղ կազմակերպող անձինք	-	-	1	-	-	-
Ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք	-	-	-	-	-	-
Հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք	-	-	-	-	-	-
Վարկային բյուրոներ	-	-	-	-	-	-
Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին	-	-	390	-	1,546	-

Իրավաբանական անձանց պետական գրանցումը կատարող մարմին (պետական ռեգիստր)	-	-	-	-	-	-
Բարեգործական կազմակեր-պություններ	1	-	5	-	5	-
Ընդամենը	**53,408**	**27**	**77,730**	**27**	**93,357**	**37**

327. Հետևյալ աղյուսակում ներկայացված է ՖԴԿ-ի կողմից վերլուծված գործերի բացվածքը, ներառյալ իրավապահ մարմիններին փոխանցված և դրանց հիման վրա վերջիններիս կողմից հարուցված քրեական գործերը (աղյուսակ 1), ինչպես նաև՝ տվյալների բացվածքն առ այն, թե գործերից քանիսն են ի հայտ եկել ԿԳՀ-ների, նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվությունների կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների վերլուծության հիման վրա (աղյուսակ 2):

Աղյուսակ 1

Կարգավիճակը	2005	2006	2007	2008	2009 (առ 15/02)
ՖԴԿ-ի կողմից վերլուծված գործեր/դրվագներ	6	6	35	46	12
Իրավապահ մարմիններին փոխանցված գործեր	1	2	11	11	0
Իրավապահ մարմինների կողմից հարուցված քրեական գործեր	5	4	3	6	4

328. 2005-2009 թթ. (առ 2009 թ. փետրվարի 15-ը) հարուցված 22 քրեական գործերից 7-ը հարուցվել է ՖԴԿ-ի կողմից քրեական հետապնդման իրավասու մարմիններին ներկայացված հաղորդումների հիման վրա (մասնավորապես՝ 1 գործ 2005-ին, 2-ը 2006-ին, 2-ը 2007-ին, և 2-ը 2008-ին):

Աղյուսակ 2

ՖԴԿ-ի կողմից վերլուծված գործերի/դրվագների բացվածքը					
	2005	2006	2007	2008	2009 (առ 15/02)
ՖԴԿ-ի կողմից վերլուծված գործեր/դրվագներ	6	6	35	46	12
ԿԳՀ-ների հիման վրա նախաձեռնված գործեր	0	5	9	18	1
ՆՇԳՀ-ների հիման վրա սեփական նախաձեռնությամբ նախաձեռնված գործեր	0	0	6	22	2

Այլ մարմինների և/կամ գործընկեր կազմակերպությունների հարցումների կամ ծանուցումների հիման վրա նախաձեռնված գործեր	6	1	20	6	9

Արդյունավետությունը

329. ՖԴԿ-ի արդյունավետության վրա կարող է ազդել ՖԴԿ-ի հաստիքների (հատկապես վերլուծությունների բաժնի հաստիքների) սակավաթվությունը՝ ՖԴԿ-ի կողմից ստացվող տեղեկությունների և օրենքով ՖԴԿ-ին վերապահված լիազորությունների ծավալի համեմատ, հատկապես երբ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից օրենքի պահանջների լիարժեք կատարման արդյունքում աճի ԿԳՀ-ների թիվը: Արդյունավետության խնդիրներ են ծագում ՆՇԳՀ-ների վերլուծությամբ զբաղվող աշխատակիցների թվի անբավարարության պատճառով, որի մասին է վկայում նաև ՖԴԿ-ի կողմից ներպետական այլ իրավասու մարմիններին ներկայացված՝ տեղեկություններ տրամադրելու հարցումների սակավաթվությունը (մասնավորապես՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրին և Պետական կադաստրի կոմիտեին մինչ օրս ոչ մի հարցում չի ներկայացվել):

2.5.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Փոփոխել ՖԴԿ-ի կանոնադրությունը՝ արտացոլելու «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր օրենքով նախատեսված՝ ՖԴԿ-ի նոր լիազորությունները,
- Ավելացնել հաստիքների թիվը, հատկապես վերլուծությունների բաժնում,
- Դիտարկել ՆՇԳՀ-ների վերլուծությամբ զբաղվող հատուկ ստորաբաժանում (կամ վերլուծության բաժնի կազմում ենթաբաժին) ստեղծելու նպատակահարմարությունը,
- Բարձրացնել մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված ՆՈՖԳՏՄ-ների (հատկապես իրավաբանների, հաշվապահների և աուդիտորների) իրազեկությունը՝ նրանց պարզաբանելով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության շրջանակը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում փոփոխել օրենքի տեքստը՝ երաշխավորելու, որպեսզի մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը չնսեմացնեն լրացուցիչ տեղեկություններ պահանջելու՝ ՖԴԿ-ի կարողությունը,
- Թանկարժեք մետաղների և քարերի դիլերների (ինչպես նաև արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների) համար մշակել ուղեցույցներ և հաշվետվությունների ձևեր:

2.5.3. Համապատասխանությունը թիվ 26 հանձնարարականին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.2.5-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.26	Հիմնականում համապատասխանում է	• «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և մասնագիտական գաղտնիքի մասին (իրավաբանների, հաշվապահների և աուդիտորների պարագայում) նորմերի փոխհարաբերության պարզ չլինելը կարող է ազդել լրացուցիչ տեղեկություններ պահանջելու՝ ՖԴԿ-ի կարողության վրա: • Թանկարժեք մետաղների և քարերի դիլերների կողմից հաշվետվությունների ներկայացման կարգի վերաբերյալ ուղեցույցներ չկան:

		• ՖԴԿ-ի հաստիքների անբավարարությունն ազդում է ՖԴԿ-ի կողմից իր պարտականությունների կատարման արդյունավետության վրա, հատկապես ֆինանսական վերլուծության մասով, ինչպես նաև՝ կարող է ազդել ՖԴԿ-ի գործառնական անկախության վրա:

2.6. Իրավապահ, քրեական հետապնդման և այլ իրավասու մարմինները. հանցագործությունների քննության և քրեական հետապնդման, ինչպես նաև բռնագրավման և սառեցման հարաբերությունները կարգավորող դաշտը (Հ.27 և 28)

2.6.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

330. Հայաստանի Հանրապետության ՔԴՕ-ով նախատեսվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննության երեք փուլեր՝ գործի հարուցումը, հետաքննությունը և նախաքննությունը: Կախված գործի վարույթի այս կամ այն փուլում գտնվելուց, քննչական գործողություններ իրականացնելու իրավասությամբ օժտված են տարբեր մարմիններ: ՔԴՕ-ով նախատեսվող կիրառելի նորմերը ներկայացված են ստորև:

331. Հարկ է սկզբից ևեթ հիշատակել, որ ՔԴՕ-ով նախատեսված և ստորև ներկայացված քննչական գործողությունները կարող են կատարվել միայն գործ հարուցելուց հետո:

332. Նախքան քրեական գործի հարուցումն իրավասու մարմինների կողմից կարող են ձեռնարկվել միայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով («ՕՀԳՕ») նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (ՕՀԳՕ-ի 8-րդ հոդված):

ՓԼ/ԱՖ գործերի քննությունն ապահովող իրավասու մարմինների լիազորումը (չ. 27.1).

333. ՔԴՕ-ի 56-րդ հոդվածի համաձայն, քրեական գործ հարուցելու, հետևաբար՝ նաև ՓԼ կամ ԱՖ հատկանիշներով գործի հետաքննություն իրականացնելու իրավասությամբ օժտված մարմիններն են ոստիկանությունը, ԱԱԾ-ն և այլ մարմիններ, ինչպիսիք են, օրինակ, հարկային և մաքսային ծառայությունները, եթե գործը ծագում է նրանց իրավասության դաշտում գտնվող նախորդող հանցագործության համադրությամբ: Հարուցման մասին որոշում կայացնելուց հետո, ՔԴՕ-ի 190-րդ հոդվածի համաձայն, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննությունն անցկացնելու իրավասությունը վերապահված է ԱԱԾ-ին:

334. Գործի հարուցումից հետո դատախազը վերահսկողություն է իրականացնում գործը քննող մարմնի գործունեության նկատմամբ:

335. ՔԴՕ-ի նորմերով գործընթացը կարգավորվում է հետևյալ կերպ:

<u>Քրեական գործի հարուցումը:</u>

336. ՓԼ կամ ԱՖ գործերի քննության առաջին քայլը ՔԴՕ-ի 175-րդ հոդվածի համաձայն քրեական գործի հարուցումն է, որի արդյունքում գործն անցնում է նախաքննության փուլ: ՔԴՕ-ի 175-րդ հոդվածի համաձայն, գործ կարող է հարուցել դատախազը, քննիչը կամ իրավասու իրավապահ մարմինը՝ գործ հարուցելու համար նախատեսված «առիթների և հիմքերի» առկայության դեպքում:

337. ՔԴՕ-ի 176-րդ հոդվածի համաձայն, քրեական գործ հարուցելու «առիթներն» են հանցագործությունների մասին հաղորդումների, լրատվության միջոցների հաղորդումների ստացումն իրավասու մարմնի կողմից, կամ վերջինիս կողմից հանցագործության մասին տվյալների հայտնաբերումը: Օրենքով չի հստակեցվում քրեական գործ հարուցելու «առիթներ» հասկացության իմաստը: Այնուհանդերձ, իշխանությունները նշեցին, որ ակադեմիական մեկնաբանության համաձայն, վերոհիշյալ հասկացության իմաստով պահանջվում է, որպեսզի ՔԴՕ-ի 176-րդ հոդվածում թվարկված՝ գործի հարուցման օբյեկտիվ «առիթներից» բացի գոյություն ունենա նաև հանցանք կատարված լինելու մասին համապատասխան իրավասու մարմնի համոզմունքը կամ սուբյեկտիվ կարծիքը:

338. Երբ իրավասու մարմինը պարզել է գործ հարուցելու «առիթների և հիմքերի» առկայությունը, այն ՔԴՕ-ի 57(3)-րդ և 181-րդ հոդվածների համաձայն ունի երեք տարբերակ. հարուցել քրեական գործ և այն ուղարկել իրավասու մարմնին հանցագործությունը քննելու համար (ՓԼ և ԱՖ դեպքում դա ԱԱԾ-ն է), գործը դատախազության միջոցով ուղարկել ԱԱԾ-ին՝ գործ հարուցելու կամ չհարուցելու մասին որոշման կայացման նպատակով, կամ մերժել քրեական գործի հարուցումը:

339. Թե գործի հարուցումը մերժելու, թե գործ հարուցելու մասին որոշում կայացնելու դեպքում ՔԴՕ-ի 57(3)-րդ հոդվածով պահանջվում է որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին՝ որոշման օրինականությունը և ՔԴՕ-ի 175-րդ և 182-րդ հոդվածներին դրա համապատասխանությունը ստուգելու նպատակով: Դատախազը, մասնավորապես, ստուգում է քրեական գործ հարուցելու «առիթների և հիմքերի», ինչպես նաև՝ որոշման մեջ քննվելիք հանցագործության մասին նշման առկայությունը: Ուստի, չնայած որ գործ հարուցելու կամ չհարուցելու մասին որոշում կայացնելու իրավասությունը վերապահված է համապատասխան իրավասու մարմնին, այն ցանկացած պարագայում վերանայվում է դատախազի կողմից:

340. Եթե դատախազը եզրակացնում է, որ գործի հարուցման մերժումը հիմնավորված չէ, քանի որ առկա են գործ հարուցելու առիթներ և հիմքեր, նա իրավասու է ՔԴՕ-ի 53(1)-րդ հոդվածի համաձայն որոշում կայացնել քրեական գործ հարուցելու մասին: Միաժամանակ, այն դեպքերում, որոնցում հիմնավորված չէ քրեական գործի հարուցումը, դատախազը կարող է բեկանել հետաքննության մարմնի որոշումը և որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

341. Գործ չհարուցելու մասին դատախազի որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել հանցագործության մասին հաղորդում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից: ՔԴՕ-ի 185(5)-րդ հոդվածի համաձայն, դատարանը կամ վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

342. Գործ հարուցելու մասին որոշումը կարող է կայացվել փաստի առթիվ, այսինքն՝ կասկածյալ կարող է ի հայտ բերված չլինել կամ, կասկածյալի հայտնաբերման առթիվ, ընդ որում՝ «կասկածյալ» եզրույթը սահմանված է ՔԴՕ-ի 62-րդ հոդվածով որպես անձ, «որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով» կամ «որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված»:

Հետաքննության փուլը (ոչ պարտադիր փուլ)

343. Եթե փաստի առթիվ հարուցվել է գործ, ապա այն կարող է անցնել մինչդատական վարույթի երկրորդ՝ հետաքննության փուլ, որի ընթացքում իրավասու մարմինն ունի 10 օր կասկածյալի ի հայտ բերելու համար: Այդ 10 օրերի ընթացքում վարվող հետաքննությունը

համարվում է քննության սկզբնական փուլը, ուստի՝ այդ փուլում արդեն կարող են իրականացվել ՔԴՕ-ով նախատեսված՝ գույքի և միջոցների վրա կալանք դնելու իրավասությունները: ՔԴՕ-ի 197-րդ հոդվածով նախատեսվում է, որ հետաքննությունն ավարտվում է ամենաուշը 10-օրյա ժամկետում, որից հետո գործն ուղարկվում է ԱԱԾ-ին, նույնիսկ եթե գործով ի հայտ չի բերվել կասկածյալ: Եթե 10-օրյա ժամկետը լրանալուց առաջ հայտնաբերվում է կասկածյալ, ապա գործն անմիջապես պետք է ուղարկվի ԱԱԾ նախաքննության համար:

344. ՔԴՕ-ի 56-րդ հոդվածի համաձայն, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հետաքննությունը կարող է իրականացվել ոստիկանության, ԱԱԾ-ի և հետաքննության այլ մարմինների, օրինակ՝ հարկային և մաքսային ծառայությունների կողմից, եթե գործն առաջացել է նրանց իրավասությանը վերապահված նախորդող հանցագործությունների համադրությամբ: Թվարկված բոլոր մարմիններն ունեն հետաքննության հատուկ ծառայություններ:

345. ՔԴՕ-ի 57-րդ հոդվածով հետաքննության բոլոր մարմիններին վերապահվում են ՕՀԳՕ-ով և ՔԴՕ-ով նախատեսված միջոցառումներն իրականացնելու լիազորությունը:

Քրեական գործի նախաքննությունը

346. Գործընթացի երրորդ փուլը պաշտոնական նախաքննությունն է: Գործի՝ նախաքննության փուլ թևակոխելուց հետո փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունները քննելու բացառիկ իրավասությունը ՔԴՕ-ի 190-րդ հոդվածի համաձայն վերապահված է ԱԱԾ-ին: Նախքան 2007 թվականը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունները քննելու լիազորությունը վերապահված էր ՀՀ ոստիկանությանը:

347. Չնայած որ նախաքննությունն իրականացնելու լիազորությունը վերապահված է ԱԱԾ-ին ՔԴՕ-ի 53-րդ հոդվածի համաձայն դատախազությունն իրավասու է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերով հանձնարարություններ տալ և վերահսկել ԱԱԾ-ին, այդ թվում՝ նախապատրաստելու գործի նյութեր, իրականացնելու քննչական գործողություններ, ներառյալ ՕՀԳՕ-ով նախատեսված միջոցառումներ, ձևավորել քննչական խումբ, վերացնել քննության մարմնի կայացրած որոշումները, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությունից և քննիչներին հրահանգներ տալ լրացուցիչ քննչական գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ:

348. Գործը դատարան ուղարկելու բացառիկ իրավասությունը վերապահված է դատախազին:

349. Երբ քննչական մարմինների կողմից զուգահեռաբար իրականացվող մի քանի քննությունները միավորվում են մեկ նախաքննության մեջ, կամ երբ կոնկրետ հանցագործության քննությամբ պարզվում է, որ այն վերաբերում է մեկ այլ մարմնի իրավասությանը, դատախազն իրավասու որոշել, թե որ մարմինն է իրավասու՝ տվյալ գործով իրականացնելու նախաքննությունը:

350. Իշխանությունները գնահատողներին տեղեկացրեցին, որ ներկայումս մշակվում է նոր ՔԴՕ, որով կվերացվի «հետաքննության» և «նախաքննության» տարբերակումը, և դատախազին կվերապահվի քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում նախաձեռնելու բացառիկ իրավասությունը: Ակնկալվում է, որ նոր ՔԴՕ-ն ուժի մեջ կմտնի 2009 թվականի տարեվերջին:

Կասկածյալների ծերբակալություն կամ գույքի առգրավումը հետաձգելու հնարավորությունը (չ. 27.2).

351. Չնայած որ ՔԴՕ-ն չի ներառում կոնկրետ նորմեր կասկածյալների ծերբակալությունը կամ գույքի առգրավումը հետաձգելու կամ չիրականացնելու իրավասության վերաբերյալ, իրավապահ մարմինները նշեցին, որ իրենք կարող են նման գործողություններ կատարել ՔԴՕ-ի 53-րդ, 55-րդ և 57-րդ հոդվածներով նախատեսված ընդհանուր նորմերի հիման վրա, և որ պրակտիկայում իրենք դա բազմիցս արել են:

Լրացուցիչ տարրը. քննչական հատուկ հնարքներ կիրառելու հնարավորությունը (չ. 27.3), Լրացուցիչ տարրը. քննչական հատուկ հնարքների կիրառությունը ՓԼ/ԱՖ գործերով (չ. 27.4).

352. ՕՀԳՕ-ով նախատեսված է քննչական հատուկ հնարքների լայն տեսականի: ՕՀԳՕ-ի 14-րդ հոդվածով նախատեսված որոշ միջոցառումներ իրականացնելու համար պահանջվում է դատարանի որոշում, այսինքն՝ դրանք ՕՀԳՕ-ի 34-րդ հոդվածով նախատեսված կարգով ենթակա են դատական վերահսկողության: Կան նաև այնպիսի միջոցառումներ, որոնք կարող են անկացվել օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա՝ ՕՀԳՕ-ի 36-րդ հոդվածի համաձայն: ՕՀԳՕ-ի 35-րդ հոդվածով ուղղակիորեն նախատեսվում է, որ դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ ՔԴՕ-ով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, սակայն նրա կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները:

353. Ինչ վերաբերում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերին, ապա ՕՀԳՕ-ով նախատեսված միջոցառումները կարող են իրականացվել թե նախքան քրեական գործի հարուցումը (ՔԴՕ-ի 57-րդ հոդված), թե քրեական գործ հարուցելուց հետո (ՔԴՕ-ի 55-րդ հոդված): Այնուհանդերձ, հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող ոչ բոլոր մարմիններն են իրավասու իրականացնել վերոհիշյալ բոլոր միջոցառումները:

354. ՕՀԳՕ-ի 14-րդ հոդվածով նախատեսված միջոցառումներից փողերի լվացման հետաքննության կամ նախաքննության ընթացքում կարող են ձեռնարկվել հետևյալները.

- Օպերատիվ հարցում, որը «կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով»,

- Օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց և փաստերի մասին օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում,

- Այն ապրանքների և ծառայությունների վերահսկելի մատակարարումը և գնումը հանցագործության մասնակիցներին պարզելու նպատակով, որոնց ազատ իրացումն արգելված է, կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է,

- Անձանց հետևելը բաց տարածությունում կամ հասարակական վայրերում՝ հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև դիտման

արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց,

- Բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելը, դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Այս միջոցառման իրականացման համար պահանջվում է դատարանի որոշում՝ ՕՀԳՕ-ի 34-րդ հոդվածի համաձայն,

- Անձի նույնացումը՝ նրա ինքնությունը պարզելն արտաքին նշանների, մատնահետքերի և քրեագիտական այլ հետքերի հիման վրա,

- Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը՝ դրանց արտաքին զննումը, հատկանիշների և այլ տեղեկությունների բացահայտումը հատուկ և այլ տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը: Այս միջոցառումը չի կարող իրականացվել հարկային և մաքսային մարմինների կողմից,

- Հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումը, ներառյալ հեռախոսային խոսակցության ձայնագրումը, հեռախոսահամարի պարզումը և տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները և անհրաժեշտ այլ տվյալներ հավաքելը: Այս միջոցառման իրականացման համար պահանջվում է դատարանի որոշում՝ ՕՀԳՕ-ի 34-րդ հոդվածի համաձայն: Այս միջոցառումը չի կարող իրականացվել հարկային և մաքսային մարմինների կողմից,

- Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը, հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը: Այս միջոցառման իրականացման համար պահանջվում է դատարանի որոշում՝ ՕՀԳՕ-ի 34-րդ հոդվածի համաձայն: Այս միջոցառումը չի կարող իրականացվել հարկային և մաքսային մարմինների կողմից,

- Օպերատիվ ներդրումը՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց գաղտնի ներդրումն ՕՀԳՕ-ի համաձայն: ՕՀԳՕ-ի համաձայն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք ՕՀԳՕ-ի 13-րդ հոդվածի համաձայն ազատված են քրեական պատասխանատվությունից,

- Բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումը, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումն առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները: Այս միջոցառման իրականացման համար պահանջվում է դատարանի որոշում՝ ՕՀԳՕ-ի 34-րդ հոդվածի համաձայն: Այս միջոցառումը չի կարող իրականացվել հարկային և մաքսային մարմինների կողմից: ՕՀԳՕ-ի 14-րդ հոդվածի և ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի փոխհարաբերությունը, այդ թվում՝ երկու նորմերի պահանջների հակասությունը մանրամասնորեն նկարագրված և վերլուծված են սույն հաշվետվության տեքստում՝ թիվ 3 և 4 հանձնարարականներին նվիրված բաժիններում:

355. Իրավապահ մարմինների հետ քննարկումներում նշվեց, որ վերոհիշյալ լիազորություններից մի քանիսն օգտագործվել և ներկայումս էլ օգտագործվում են փողերի լվացման գործերի համատեքստում:

356. ՕՀԳՕ-ի 40-րդ հոդվածի համաձայն, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել ՕՀԳՕ-ով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ:

Լրացուցիչ տարրը. քննչական մասնագիտացած խմբերը և այլ երկրների համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ իրականացվող քննություններ (չ. 27.5).

357. Հայաստանում ԱԱԾ-ի կառուցվածքում ստեղծվել է ֆինանսական հանցագործությունների քննության ուղղությամբ մասնագիտացած խումբ: Վերջինիս կազմում կան ֆինանսական քննիչներ, ընդհանուր քննիչներ և օպերատիվ աշխատակիցներ: Խմբի աշխատանքը համակարգում է Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանումը:

358. Գնահատողներին հանդիպած իրավապահ մարմինների աշխատակիցները նշեցին, որ ՕՀԳՕ-ով նախատեսված միջոցառումներ նախկինում իրականացվել են այլ երկրների իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ, սակայն դրանք չեն եղել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման գործերի համատեքստում:

Լրացուցիչ տարրերը. ՓԼ և ԱՖ միտումների վերանայումն իրավապահ մարմինների կողմից (չ. 27.6).

359. ՓԼ և ԱՖ դեմ պայքարի մեթոդները, հնարքները և միտումները կանոնավոր կերպով վերանայվում են միջգերատեսչական հարթության վրա՝ Միջգերատեսչական հանձնաժողովի միջոցով: Արդյունքում ձեռք բերվող տեղեկությունները, վերլուծությունները և ուսումնասիրությունները տրամադրվում են ՖԴԿ-ին և հետաքննության բոլոր մարմիններին: Գնահատողներին հանդիպած բոլոր իրավասու մարմինները հաստատեցին տիպաբանությունների մասին տեղեկությունների ստացումը Միջգերատեսչական հանձնաժողովից: Հայտնաբերվող տիպաբանությունները քննարկվում են նաև ՖԴԿ-ի կողմից անցկացվող աշխատանքային հանդիպումների և սեմինարների ընթացքում:

Փաստաթղթեր և տեղեկություններ ներկայացնելը և խուզարկություններ անցկացնելը պարտադրելու կարողությունը (չ. 28.1).

<u>Փաստաթղթեր և տեղեկություններ ներկայացնելու պարտադրումը.</u>

360. «Ոստիկանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի համաձայն, ոստիկանությունն իրավասու է քննվող քրեական գործերի առնչությամբ քաղաքացիներին և պաշտոնատար անձանց հրավիրելու ոստիկանություն հարցաքննության նպատակով: Ծանուցման մեջ կարող են նաև նշված լինել ոստիկանության բաժին ներկայացման ենթակա նյութերը: Ծանուցման պահանջը չկատարելու կամ ոչ համարժեքորեն կատարելու դեպքում անձինք և պահանջվող նյութերը կարող են հարկադրաբար բերման ենթարկվել ոստիկանություն:

361. Բացի այդ, ՔԴՕ-ի մի շարք նորմեր անդրադառնում են փաստաթղթերի ներկայացումը պարտադրելու խնդրին: Մասնավորապես, ՔԴՕ-ի 59(2.3.)-րդ, 77 (6.3.)-րդ և 79 (5.4.)-րդ հոդվածներով նախատեսվում է, որ քրեական գործով տուժողը, ինչպես նաև տուժողի, հայցվորի, կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցիչները պարտավոր են իրավապահ մարմինների պահանջով նրանց ներկայացնել իրենց մոտ եղած առարկաները և

փաստաթղթերը: Այնուամենայնիվ, այդ դրույթներով չի նախատեսվում այլ անձանց, այդ թվում՝ վկաների և կոնկրետ գործին առնչվող տեղեկություններ տիրապետող այլ անձանց մոտ եղած փաստաթղթերը և տեղեկությունները ներկայացնելու պարտադրումը:

362. Ներկայանալու ծանուցման և առգրավման մասին որոշման բացակայության պարագայում ՔԴՕ-ի նորմերը բավականաչափ ընդգրկուն չեն, որպեսզի իրավապահ մարմիններին կամ դատարաններին հնարավորություն ընձեռեն բոլոր գործերով պարտադրել ներկայացնելու փաստաթղթեր և տեղեկություններ:

Անձանց և հիմնությունների խուզարկությունը փաստաթղթեր և տեղեկություններ հայտնաբերելու նպատակով.

363. ՔԴՕ-ի 225-րդ հոդվածով նախատեսվում է, որ շինությունները, այլ տեղերը կամ անձինք խուզարկվում են, եթե բավարար հիմքեր կան՝ ենթադրելու, որ այնտեղ կամ այդ անձանց մոտ գտնվում են առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են վերցվել, քանի որ դրանք կարող են նշանակություն ունենալ գործի համար: Բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ: ՔԴՕ-ի 225-րդ հոդվածի համաձայն իրականացվող խուզարկությունները կարող են կատարվել միայն քրեական գործ հարուցելուց հետո:

Փաստաթղթերի և տեղեկությունների առգրավումը և պահպանումը.

364. ՔԴՕ-ի 226-րդ հոդվածով նախատեսվում է գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ և փաստաթղթեր առգրավելու իրավասությունը, եթե ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում: Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ իրավաբանական և ֆիզիկական անձինք իրավունք չունեն հրաժարվել քննիչին հանձնելու այն առարկաները, փաստաթղթերը կամ դրանց պատճենները, որոնք պահանջվել են նրա կողմից: Փաստաթղթեր կամ առարկաներ առգրավելու մասին որոշումը կայացնում է քննիչը: Չի պահանջվում դատարանի որոշում կամ դատախազի թույլտվություն: Այս միջոցառումը կարող է ձեռնարկվել միայն քրեական գործ հարուցելուց հետո:

365. Լրացուցիչ որոշ իրավասություններ նախատեսված են «Ոստիկանության մասին» օրենքով: Վերջինիս 12-րդ հոդվածում նշվում է, որ ոստիկանությունն իրավունք ունի «մուտք գործելու ... արտադրության և այլ ձեռնարկատիրական գործունեության նպատակով զբաղեցված տարածքներ ... և ... կատարել զննություն, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների զննություն, և առգրավել հանցագործության հետ ուղղակիորեն առնչվող հումքի և արտադրանքի նմուշներ»: 19-րդ հոդվածով ոստիկանությանն իրավունք է վերապահվում ստուգել երկաթուղային, օդային, ջրային տրանսպորտի ուղևորների ձեռքի իրերը և ուղեբեռները և առգրավել այն իրերը, որոնց տեղափոխումն արգելված է: 23-րդ հոդվածով նաև թույլատրվում է զննել զենքի առևտրի կամ պահպանության վայրերը և առգրավել և ոչնչացնել շրջանառությունն արգելված զենքը:

366. Բանկային գաղտնիքով պաշտպանված փաստաթղթերի և տեղեկությունների ստացման վերաբերյալ տես թիվ 4 հանձնարարականի առնչությամբ ներկայացված վերլուծությունը:

367. Մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններն իրավապահ մարմինները կարող են ստանալ երկու եղանակներով:

368. Նախ, իրավապահ մարմիններն իրավասու են այդ տեղեկությունները պահանջել ուղղակիորեն նոտարից, հաշվապահից, փաստաբանից կամ աուդիտորից՝ ՔԴՕ-ի 172-րդ

հոդվածի հիման վրա, որով նախատեսվում է, որ «անձինք, որոնց քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է ... հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող վկայակոչելով ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց»: Այնուհանդերձ, իրավապահ մարմինները կարող են նման առաջարկ կատարել միայն այն դեպքում, երբ պահանջվող տեղեկություններն «անհրաժեշտ» են համարվում քրեական վարույթն իրականացնելու համար, ընդ որում՝ տեղեկություններ տրամադրելու հարցումը ստացող անձինք իրավունք ունեն նախապես ստանալ նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող պարզաբանում: Իշխանությունները հստակեցրեցին, որ «անհրաժեշտություն» հասկացությունն օրենքով սահմանված չէ, սակայն քրեական գործի շրջանակներում քննչական մարմինը «ներքին համոզման կամ բարոյական վստահության» հիման վրա որոշում է «անհրաժեշտության» առկայությունը: Բացառությամբ նոտարական գաղտնիք համարվող տեղեկությունների, դատարանի որոշում նման դեպքերում չի պահանջվում:

369. Երկրորդ, ինչպես նշվեց սույն հաշվետվության շրջանակներում 26.4. չափորոշչի վերաբերյալ, իրավապահ մարմինները կարող են համապատասխան տեղեկությունները ստանալ ՖԴԿ-ի միջոցով: Այնուհանդերձ, չնայած որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն ԴՖԿ-ն իրավասու է ստանալ մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գաղտնիության պաշտպանությունից օգտվող տարբեր մասնագիտությունները կարգավորող օրենքներում պարզաբանված չէ, թե ինչ ծավալով և ինչ պայմաններով են այդ տեղեկությունները տրամադրվում:

Վկաներից ցուցմունքներ վերցնելու իրավասությունը (չ. 28.2).

370. ՔԴՕ-ի 55-րդ հոդվածով նախատեսվում է, որ քննչական մարմինն իրավասու է հրավիրել և հարցաքննել կասկածյալին, մեղադրյալին, տուժողին և վկային: Ի լրումն, ՔԴՕ-ի 112-րդ հոդվածով նախատեսվում է, որ «վկայի ցուցմունքները» մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են: Ուստի, կարելի է եզրակացնել, որ նույնիսկ այդ մասին կոնկրետ նորմի բացակայության պայմաններում քննչական մարմինները, այդ թվում՝ ԱԱԾ-ն, իրավասու են վկաներից ցուցմունքներ վերցնել:

371. Բացի այդ, ՕՀԳՕ-ի 14(1)-րդ հոդվածով նախատեսվում է օպերատիվ հարցման ինստիտուտը, որը «կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով»: Տվյալ միջոցառումը կարող է ձեռնարկվել թե հետաքննության, թե նախաքննության փուլերում, ինչպես նաև՝ նախքան քրեական գործի հարուցումը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառման ձևով:

Իրավապահ մարմինների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քննչական կամ քրեական հետապնդման մարմինների ռեսուրսների համարժեքությունը (չ. 30.1.).

Ոստիկանությունը

372. Ոստիկանության կառուցվածքը, ֆինանսավորումը, գործունեության նպատակները և ոստիկանների իրավունքներն ու պարտավորությունն ամրագրված են «Ոստիկանության մասին» օրենքում:

373. 2005 թվականին Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության կազմում ստեղծվել է ոստիկանության հատուկ ստորաբաժանում, որը քննում է ֆինանսական, այդ թվում՝ ՓԼ և ԱՖ հանցագործությունները: Նշված ստորաբաժանումը համալրված է ութ մասնագետներով: Գնահատողներին տրամադրվել է ՀՀ ոստիկանության կազմակերպական կառուցվածքը, որում այս ստորաբաժանումն արտացոլված է:

374. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունները քննելու իրավասությունն ԱԱԾ-ին վերապահելու մասին 2007 թվականին կայացված որոշման հետևանքով վերոհիշյալ ստորաբաժանման հաստիքների թիվը չկրճատվեց, քանի որ ոստիկանությունը նախկինի պես ակտիվորեն ներգրավված է այս հանցագործությունների դեմ պայքարում: Ոստիկանության ներկայացուցիչները նշեցին, որ փողերի լվացման քննության ոլորտում ԱԱԾ-ի հետ համագործակցությունը շատ արդյունավետ է և բարեհաջող, և որ ոստիկանությունը՝ շնորհիվ այս ոլորտում իր ունեցած մասնագիտական բարձր կարողությունների, ԱԱԾ-ի կողմից մշտապես ներգրավվում է նման գործերի քննությանը:

375. Ոստիկանության համապատասխան ստորաբաժանման բյուջեն հատկացվում է ոստիկանության ընդհանուր բյուջեից: Ոստիկանության ներկայացուցիչները նշեցին, որ իրենց կարծիքով իրենց կադրային և տեխնիկական ռեսուրսները բավարար են հետաքննությունը լիարժեքորեն և արդյունավետորեն իրականացնելու և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննությանն օժանդակելու տեսակետից:

Դատախազությունը

376. Դատախազության կառուցվածքը և կադրային, տեխնիկական ու ֆինանսական ռեսուրսներին ներկայացվող պահանջներն ամրագրված են «Դատախազության մասին» օրենքով:

377. Գլխավոր դատախազությունում կա առանձին վարչություն, որը պատասխանատու է ԱԱԾ-ի կողմից քննվող բոլոր, այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի վերահսկողության համար: Վարչությունում աշխատում է երեք դատախազ և երեք օժանդակ աշխատակից: Գնահատողներին տրամադրվել է Գլխավոր դատախազության կազմակերպական կառուցվածքը, որում արտացոլված է նաև վերոհիշյալ վարչությունը:

378. Գլխավոր դատախազության ներկայացուցիչները նշեցին, որ չնայած տվյալ վարչության դատախազների աշխատանքի խիստ ծանրաբեռնված բնույթին, վարչությունն ունի բավարար տեխնիկական և այլ ռեսուրսներ: Ցանկացած պահին Գլխավոր դատախազից կարող են պահանջվել լրացուցիչ կադրային ռեսուրսներ, և նման պահանջը կբավարարվի: Գնահատող առաքելության այցի ժամանակ վարչությունը վերահսկում էր ԱԱԾ-ի կողմից քննվող 50 գործեր, որոնց թվում կային նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործեր:

379. Վարչության բյուջեն հատկացվում է Գլխավոր դատախազության ընդհանուր բյուջեից: Գլխավոր դատախազության ներկայացուցիչները նշեցին, որ փողերի լվացման հատկանիշներով քննվող գործերի թվի աճի պարագայում վարչությունը կդիմի Գլխավոր

դատախազին՝ միմիայն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործերով զբաղվող առանձին ստորաբաժանում ստեղծելու խնդրանքով:

380. Գլխավոր դատախազությունում են աշխատում Հայաստանի Հանրապետության բոլոր 330 դատախազները:

Ազգային անվտանգության ծառայությունը

381. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կառուցվածքը, ինչպես նաև կադրային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներին ներկայացվող պահանջներն ամրագրված են «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում:

382. ԱԱԾ-ում կա փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերով զբաղվող երկու առանձին վարչություն՝ հետաքննության վարչությունը և նախաքննության վարչությունը: Հետաքննության վարչությունում աշխատում է 5, իսկ նախաքննության վարչությունում՝ 3 մասնագետ: Երկու վարչությունների ներկայացուցիչները նշեցին, որ կադրային և տեխնիկական ռեսուրսները բավարար են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հետ կապված իրենց պարտականությունները կատարելու համար: Երկու վարչությունների բյուջեները հատկացվում են ԱԱԾ-ի ընդհանուր բյուջեի շրջանակում:

Պետական եկամուտների կոմիտեն

383. 2008 թվականի հունիսից Հայաստանի Հանրապետության հարկային պետական ծառայությունը և մաքսային պետական կոմիտեն միավորվել են Պետական եկամուտների կոմիտեի կազմում:

384. Հարկային ծառայություն. հարկային ծառայության կառուցվածքը և ֆինանսավորումը, ինչպես նաև հարկային ծառայողների նպատակները, իրավունքները և պարտավորությունները նախատեսված են «Հարկային ծառայության մասին» օրենքով: Ինչպես և ԱԱԾ-ի պարագայում, հարկային ծառայությունում ևս գործում են երկու վարչություններ, որոնց լիազորություններն առնչվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հարկային և մաքսային հանցագործություններին. դրանք են հետաքննության վարչությունը (12 մասնագետով) և նախաքննության վարչությունը (22 մասնագետով): Իշխանությունները վստահություն հայտնեցին առ այն, որ նշված երկու վարչություններն ապահովված են բավարար թվով համակարգիչներով և անհրաժեշտ այլ գրասենյակային սարքավորումներով: Վարչությունների բյուջեն հատկացվում է հարկային մարմնի ընդհանուր բյուջեի շրջանակում: Այնուհանդերձ, հարկային ծառայությունում ստեղծվել է նաև զարգացման հատուկ հիմնադրամ, որի հաշվին ֆինանսավորվում են նաև օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումներ:

385. Մաքսային ծառայություն. մաքսային ծառայության կառուցվածքը և կադրային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներին ներկայացվող պահանջներն ամրագրված են «Մաքսային ծառայության մասին» օրենքում: Մաքսային մարմնի կազմում նույնպես գործում են հետաքննության և նախաքննության առանձին վարչություններ՝ յուրաքանչյուրը 4-ական աշխատակցով: Վարչությունների բյուջեն հատկացվում է մաքսային մարմնի ընդհանուր բյուջեի շրջանակում: Մաքսային մարմնի ներկայացուցիչները նշեցին, որ երկու վարչություններն ապահովված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրենց գործառույթները կատարելու համար անհրաժեշտ բավարար տեխնիկական և կադրային ռեսուրսներով:

Իրավասու մարմինների անաչառությունը (չ. 30.2.).

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը

386. «Դատախազության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանվում են դատախազի պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները: Դատախազ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով:

387. Կրթությանը ներկայացվող պահանջներից զատ, հավակնորդները խստորեն քննվում են հատուկ հանձնաժողովի կողմից, որը ստուգում է հավակնորդի՝ դատախազ դառնալու համար անհրաժեշտ հմտությունները և որակավորումը: Աշխատանքի ընդունվելուց հետո անձը մասնակցում է Դատախազների դպրոցում կազմակերպվող չորսից վեց ամիս ժամկետ տևողությամբ վերապատրաստման դասընթացի:

388. Անձի բնութագրի ստուգումներ են իրականացվում ոստիկանության տեղեկատվական բազաների հիման վրա՝ համոզվելու, որ անձի դեմ քննվող գործեր կամ նրա դեմ կայացված դատավճիռներ չկան: Հայաստանի դատախազները պարտավոր են կատարել Վարքագծի կանոնագրքի պահանջները:

Ազգային անվտանգության ծառայությունը

389. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի և ԱԱԾ-ի իրավական ակտերի դրույթների համաձայն, ՓԼ/ԱՖ հանցագործություններով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, հետաքննություն և նախաքննություն կատարող աշխատակիցները պետք է համապատասխանեն արհեստավարժության բարձր չափանիշների և ունենան բարձրագույն կրթություն, տիրապետեն օտար լեզվի, անցած լինեն հատուկ ֆիզիկական ուսուցում, վերապատրաստված լինեն Ազգային անվտանգության ծառայության կրթական կենտրոնում, տիրապետեն զենքի օգտագործման հմտությունների և համակարգչային գիտելիքների:

390. ԱԱԾ-ն նոր աշխատակիցների աշխատանքի ընդունելուց առաջ իրականացնում է անձի բնութագրի մանրակրկիտ ստուգումներ:

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն

391. Ոստիկանության աշխատակիցներին ներկայացվող պահանջներն ամրագրված են «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով: Վերջինիս 11-րդ հոդվածով նախատեսվում է, որ ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն, տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները: Նախատեսված են նաև այն դեպքերը, որոնցում անձը չի կարող ծառայության անցնել ոստիկանությունում:

392. Ոստիկանության ներկայացուցիչները նշեցին, որ նոր աշխատակիցների աշխատանքի ընդունելիս ստացվում են ոստիկանության ստուգման տվյալներ, օպերատիվ ստուգումների տվյալներ և տեղեկություններ Ինտերպոլից անձի վերաբերյալ, և անցկացվում են մի շարք հարցազրույցներ՝ համոզվելու անձի անաչառության, հմտությունների և արհեստավարժության բարձր մակարդակի մեջ:

Պետական եկամուտների կոմիտե

393. Հարկային ծառայություն. «Հարկային ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, հարկային մարմնում հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունի հայերենին տիրապետող, պետական հավատարմագրում ստացած բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտած՝ պետական հավատարմագրում ստացած մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

394. Հարկային ծառայողների գործունեության սահմանափակումները նախատեսված են օրենքի 13-րդ հոդվածով, որոնցից է, օրինակ, այն, որ հարկային ծառայողն իրավունք չունի զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Բացի այդ, օրենքի 20-րդ հոդվածով նախատեսվում է, որ յուրաքանչյուր տարի հարկային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման: Օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, հարկային ծառայողի պարտականությունները ներառում են պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո:

395. Հարկային ծառայողները պարտավոր են իրենց ծառայության ընթացքում հարկային ծառայողի վարքագծի կանոններով, որոնցով բոլոր ծառայողներից պահանջվում է արհեստավարժության, հմտությունների և անաչառության բարձր մակարդակ:

396. Մաքսային ծառայություն. «Մաքսային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունի միայն բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող և վերադաս մաքսային մարմնի հաստատած համապատասխան պաշտոնի նկարագրի պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

397. Բոլոր մաքսային ծառայողները պարտավոր են առաջնորդվել վարքագծի կանոններով, որոնցով մաքսային ծառայողներից պահանջվում է աշխատանքային էթիկան հիմնվում է այնպիսի բարոյական չափանիշների վրա, ինչպիսիք են անաչառությունը, անկողմնակալությունը և արդարացի վերաբերմունքը, օրինապահությունը և կարգապահությունը, գիտակից և համբերատար գործելակերպը: Վարքագծի կանոնների համաձայն, մաքսային ծառայողները պարտավոր են իրենց աշխատանքը կատարել ջանասիրաբար և արհեստավարժ կերպով:

Իրավասու մարմինների աշխատակիցների վերապատրաստումը (չ. 30.3.).

Դատախազություն

398. Դատախազության աշխատակիցների համար պարբերաբար իրականացվում է վերապատրաստում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով՝ սեմինարների, ուսուցման դասընթացների և միջազգային տարաբնույթ ժողովների նրանց մասնակցության միջոցով. հայ դատախազները 2007 թվականին մասնակցել են «Ահաբեկչության և

ծայրահեղականության այլ դրսևորումների ֆինանսավորման դեմ պայքարին» նվիրված համագործակցության ծրագրի քննարկումներին Մինսկում, «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և քրեական հետապնդման» թեմայով Թբիլիսիում անցկացված՝ Հարավային Կովկասի միջազգային աշխատանքային հանդիպմանը, ինչպես նաև «Կոռուպցիայի, ՓԼ և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի խնդիրների շուրջ համագործակցության խորացման» թեմայով սեմինարին Բուխարեստում: 2008 թվականին հայ դատախազներն Իտալիայի Սիրակուզ քաղաքում մասնակցել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տիպաբանությունների թեմայով ԱՄՀ-ի կազմակերպած աշխատանքային հանդիպմանը:

399. Բացի այդ, դատախազների դպրոցի ունկնդիրներին դասախոսություններ են մատուցվել հետևյալ թեմաներով. «Ահաբեկչության և ահաբեկչության ֆինանսավորման քրեաիրավական առանձնահատկությունները», «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացումը (փողերի լվացումը). հանցագործության քրեաիրավական վերլուծություն»:

Ազգային անվտանգության ծառայություն

400. Հետաքննության վարչության աշխատակիցները մասնակցել են ՖԴԿ-ի կազմակերպած վերապատրաստման որոշ դասընթացների 2008 թվականին, մասնավորապես՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով: Նախաքննության վարչության աշխատակիցները, սակայն, որևէ վերապատրաստում չեն անցել և չեն մասնակցել որևէ սեմինարների կամ ուսուցողական դասընթացների, որը զարմանալի է՝ հաշվի առնելով, որ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննության բացառիկ իրավասությունը վերապահված է ԱԱԾ-ին:

Ոստիկանություն

401. Քննչական հատուկ ստորաբաժանման բոլոր ութ աշխատակիցներն ունեն իրավաբանական բարձրագույն կրթություն և օպերատիվ միջոցառումների և հնարքների հարուստ պրակտիկ փորձ: 2005-2008 թվականներին բոլոր ութ աշխատակիցները մասնակցել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով 40-օրյա վերապատրաստման դասընթացի, որը կազմակերպվել էր Եգիպտոսի ոստիկանության վերապատրաստման կենտրոնի կողմից: Բացի այդ, նրանցից մի քանիսը մասնակցել են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով ուսուցանողների ուսուցանման» սեմինարին, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի թմրադեղերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից 2008 թվականին Միացյալ Թագավորությունում: 2006-2008 թվականներին ոստիկանության ներկայացուցիչները մասնակցել են նաև Հայաստանի ՖԴԿ-ի անցկացրած մի շարք սեմինարների: Ոստիկանությունում ծառայության անցնելու ընդհանուր պահանջները սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով:

Պետական եկամուտների կոմիտե

402. Հարկային ծառայություն. երկու վարչությունների աշխատակիցների մեծ մասն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն: 2007 թվականից ի վեր հարկային ծառայողները մասնակցել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով դատախազության կազմակերպած երկու ուսումնական դասընթացների: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով երկու այլ սեմինար կազմակերպել է ՖԴԿ-ն, որոնց մասնակցել են ներպետական մի շարք իրավասու մարմինների, այդ թվում՝ հարկային ծառայության ներկայացուցիչները: Բացի այդ, հարկային ծառայության ներկայացուցիչները մասնակցել են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով ուսուցանողների ուսուցանման» սեմինարին, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի թմրադեղերի և

հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից 2008 թվականին Միացյալ Թագավորությունում: Հարկային ծառայությունում աշխատանքի անցնելու համար ներկայացվող կրթական պահանջներն ամրագրված են «Հարկային ծառայության մասին» օրենքում:

403. Մաքսային ծառայություն. մաքսային ծառայության հետաքննիչները մասնակցել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով ՖԴԿ-ի կազմակերպած ուսումնական դասընթացներին: Վերջիններիս շրջանակներում տրամադրված նյութերն այնուհետ տարածվել են հետաքննության և նախաքննության վարչությունների բոլոր աշխատակիցներին: Այնուհանդերձ, մաքսային ծառայության ներկայացուցիչները նշեցին, որ համապատասխան ծառայողներին չէր խանգարի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով լրացուցիչ վերապատրաստումը:

Լրացուցիչ տարրը. դատավորների կրթությունը և վերապատրաստումը (չ. 30.4.).

404. Դատավորները և դատարանների աշխատակիցները վերապատրաստվում են Դատական դպրոցում: Դպրոցում պարբերաբար կազմակերպվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության առանձնահատկություններին և կիրառության խնդիրներին, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կոնկրետ միջոցառումներին, օրինակ՝ գույքի վրա կալանք դնելուն և բռնագրավմանը նվիրված դասախոսություններ: 2008 թվականին, օրինակ, Դատական դպրոցի ուսումնական ծրագրով ՓԼ/ԱՖ դեմ պայքարին հատկացված էր 10 ակադեմիական ժամ: 2008 թվականին Դատական դպրոցում ընթացիկ վերապատրաստումների են մասնակցել 25 դատավորներ: Դատարանների ներկայացուցիչները նշեցին, որ վերջնանպատակը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում մասնագիտացող դատավորներ ունենալն է:

405. Բացի այդ, դատարանների ներկայացուցիչները մասնակցել են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով ուսուցանողների ուսուցանման» սեմինարին, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի թմրադեղերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից 2008 թվականին Միացյալ Թագավորությունում:

Վիճակագրությունը (Հ.32-ի կիրառությունը).

406. ՓԼ գործեր հարուցելու իրավասությամբ օժտված տարբեր մարմինների կողմից ԱԱԾ-ին ուղարկված ՓԼ գործերի թվաքանակի վերաբերյալ լիարժեք և ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում դժվար է գնահատել ՓԼ գործերի քննության առումով իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը: Ստորև «իրավապահ մարմինների կողմից ուղարկված գործեր» սյունակում ներկայացված թվային տվյալները տարբեր իրավասու մարմինների հետ հարցազրույցների հիման վրա տրված մոտավոր գնահատականներ են:

	ՖՀՄ-ի կողմից ԱԱԾ-ին փոխանցված գործեր	ՓԼ գործեր հարուցելու իրավասությամբ օժտված իրավապահ մարմինների կողմից ուղարկված գործեր	Հարուցված գործեր
2006	3	1 (ոստիկանություն)	4 (ուղարկված բոլոր

			գործերի 100%-ը)
2007	11	1 (ոստիկանություն)	3 (ուղարկված բոլոր գործերի մոտ 25%-ը)
2008	11	14 (12 ԱԱԾ, 1 մաքսային, 1 հարկային)	6 (ուղարկված բոլոր գործերի մոտ 24%-ը)
2009 (առ 15/02)	0		4

Արդյունավետությունը.

407. ՓԼ գործեր հարուցելու իրավասությամբ օժտված տարբեր մարմինների կողմից ԱԱԾ-ին ուղարկված ՓԼ գործերի թվաքանակի վերաբերյալ լիարժեք և ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում դժվար է գնահատել ՓԼ գործերի քննության առումով իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը: Ինչ վերաբերում է կոնկրետ ԱԱԾ-ին՝ որպես ՓԼ և ԱՖ քննություններ իրականացնելու իրավասությամբ օժտված մարմնի, ապա հարկ է նշել, որ ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցների համար ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստումների բացակայությունը և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերի կապակցությամբ արծարծված հիմնախնդիրներն ազդում են ՓԼ և ԱՖ գործերի քննության արդյունավետության վրա:

2.6.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- ՔԴՕ-ում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ նախատեսելու ՓԼ և ԱՖ գործերով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացում պարտադրելու՝ իրավապահ մարմինների կամ դատարանների ընդհանուր իրավասությունը, այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ տեղեկություններ են պահանջվում ոչ թե տուժողից, հայցվորից, կասկածյալից կամ մեղադրյալից, այլև՝ վկայից կամ այլ անձանցից:

- ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, իսկ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման մասով դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմիններին արդյունավետ հնարավորություն ընձեռվի՝ ստանալու և պարտադրելու ներկայացնել տեղեկություններ, գործարքների փաստաթղթեր, հաշիվների փաստաթղթեր և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված այլ փաստաթղթեր և տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:

- ԱԱԾ-ի քննչական վարչության, ինչպես նաև մաքսային ծառայության հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցները պետք է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստում անցնեն, որպեսզի ապահովվի ՓԼ/ԱՖ գործերի քննության արդյունավետությունը:

2.6.3. Համապատասխանությունը թիվ 27 և 28 հանձնարարականներին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.2.6-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.27	Հիմնականում համապատասխանում է	• ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցների համար ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստումների բացակայությունը և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման կապակցությամբ արծարծված իրավական և արդյունավետության հիմնախնդիրներն ազդում են ՓԼ և ԱՖ գործերի քննության արդյունավետության վրա:
Հ.28	Մասամբ համապատասխանում է	• Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման կապակցությամբ արծարծված իրավական և արդյունավետության հիմնախնդիրներն ազդում են Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու՝ իրավապահ մ արմինների կարողության վրա, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի: • Ներկայանալու ծանուցման և առգրավման մասին որոշման բացակայության պարագայում ՔԴՕ-ի նորմերը բավականաչափ ընդգրկուն չեն, որպեսզի իրավապահ մարմիններին կամ դատարաններին հնարավորություն ընձեռեն բոլոր գործերով պարտադրել ներկայացնելու փաստաթղթեր և տեղեկություններ: • ԱԱԾ-ին ուղարկված կամ իրավապահ մարմինների կողմից հարուցված ՓԼ գործերի թվաքանակի, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից կայացված՝ գործի հարուցումը մերժելու մասին որոշումների թվաքանակի վերաբերյալ լիարժեք և ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում դժվար է գնահատել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը:

2.7. Անդրսահմանային հայտարարագրումը կամ բացահայտումը (ՀՀ.IX)

2.7.1. Նկարագրություն և վերլուծություն

Արժույթի անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման մոնիտորինգի մեխանիզմները (չ. IX.1).

408. Արժույթի և արժութային այլ արժեքների անդրսահմանային տեղափոխման հայտարարագրման վերաբերյալ պահանջները սահմանվում են ՀՀ ԿԲ-ի խորհրդի 2005 թ. հուլիսի 29-ի «Արժութային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգը հաստատելու մասին» թիվ 386-Ն որոշմամբ («Արժույթի հայտարարագրման կարգ»):

409. Արժույթի հայտարարագրման կարգի համաձայն, հայտարարագիրը պետք է պարունակի ճշգրիտ տեղեկություններ արժույթի կամ վճարային արժեթղթերի և տեղափոխման միջոցների մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և մաքսազերծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Վճարային արժեթղթերը սահմանված են քաղաքացիական օրենսգրքի 153-րդ հոդվածով, որի համաձայն արժեթղթերի շարքն են դասվում, ի թիվս այլոց, բանկային գրքույկները, բանկային սերտիֆիկատները, պարտատոմսերը, չեկերը. ըստ երևույթին, այդ սահմանումը ներառում է նաև «ըստ ներկայացնողի (վճարային) գործիքները»՝ ՖԱԹՖ-ի սահմանման իմաստով: Արժույթի հայտարարագրման կարգով նախատեսվում են արժույթի և վճարային արժեթղթերի նվազագույն շեմի գումարները, ինչպես նաև այդ գումարներին և ապրանքներին առնչվող հայտարարագրման պահանջները: Բացի այդ, պահանջներ են սահմանված «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ

երկուղային համակարգի կիրառման կարգի» և «Ավտոմոբիլային տրանսպորտով ՀՀ մաքսային սահմանով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուղային համակարգի կիրառման կարգի» հավելվածներում («Ձևեր»):

410. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների և ինկասացիոն կազմակերպությունների, արտահանել 5 միլիոն դրամը (գնահատման պահի դրությամբ՝ 13,000 ԱՄՆ դոլարը) չգերազանցող արժույթ կամ վճարային արժեթղթեր և համարժեք կանխիկ արտարժույթ՝ արտահայտված թղթադրամների և մետաղադրամների տեսքով, ինչպես նաև վճարային արժեթղթեր (անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման արտագնա հոսք): Նվազագույն այդ շեմը գերազանցելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամի և արտարժույթի արտահանումն իրականացվում է անկանխիկ եղանակով (այսինքն՝ բանկային փոխանցմամբ), իսկ վճարային արժեթղթերի արտահանումը՝ գրավոր մաքսային հայտարարագրի լրացմամբ, Արժույթի հայտարարագրման կարգի 2.1 կետի համաձայն: Այնուհանդերձ, ըստ փաստացի օգտագործվող մաքսային հայտարագրերի (Հայաստանի Հանրապետության մաքսային կոմիտեի ՄՀ-1 տեղեկանք՝ «Արգելքներ և սահմանափակումներ»), 5 միլիոն դրամը չգերազանցող արժեքով կանխիկի արտահանումը ցանկացած արժույթով թույլատրելի է, ընդ որում՝ որևէ նշում չկա վճարային արժեթղթերի մասին:

411. Առանց հայտարարագրի ներմուծման (անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման ներգնա հոսք) թույլատրված առավելագույն սահմանը 15,000 եվրոյին համարժեք կանխիկ դրամն է և վճարային արժեթղթերը: Այդ շեմը գերազանցելու դեպքում կանխիկի և վճարային արժեթղթերի ներմուծումն իրականացվում է գրավոր մաքսային հայտարարագրի լրացմամբ, Արժույթի հայտարարագրման կարգի 2.2 կետի համաձայն: Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուղային համակարգի կիրառման կարգի» և «Ավտոմոբիլային տրանսպորտով ՀՀ մաքսային սահմանով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուղային համակարգի կիրառման կարգի» հավելվածներում զետեղված ձևերի համաձայն, հայտարարագրման ենթակա են 15,000 եվրոյի համարժեքը գերազանցող վճարային արժեթղթերը և կանխիկ դրամը՝ արտահայտված թղթադրամների և մետաղադրամների տեսքով: Այնուհանդերձ, «Ձևի» համար պահանջվող տվյալներն արտացոլված չեն փաստացի օգտագործվող մաքսային հայտարագրերի (Հայաստանի Հանրապետության մաքսային կոմիտեի ՄՀ-1 տեղեկանք՝ «Արգելքներ և սահմանափակումներ») մեջ, որով պահանջվում է մաքսային հայտարարագիր լրացնել այն դեպքում, երբ «ցանկացած արժույթով ներմուծվող կանխիկը գերազանցում է 15,000 եվրոյի համարժեքը», ընդ որում՝ օգտագործվող հայտարարագրում որևէ նշում չկա որևէ տեսակի վճարային արժեթղթերի մասին:

412. Արժույթի և վճարային այլ արժեթղթերի ներգնա փոխադրմանը ներկայացվող վերոհիշյալ պահանջները կիրառելի են նաև փոստային փոխադրման կամ բեռների փոխադրման դեպքում, չնայած որ փոստային կամ բեռնային արտագնա փոխադրումների պարագայում նման պահանջ չկա (Արժույթի հայտարարագրման կարգի 2.3(8) կետ):

413. Իշխանությունները տեղեկացրեցին, որ ընթացիկ տարվա կտրվածքով ստացվել է նվազագույն շեմի գումարը գերազանցող գումարների վեց հայտարարագիր, որոնց ընդհանուր արժեքը մի փոքր գերազանցում է 148,000 ԱՄՆ դոլարը, ընդ որում՝ հայտարարագրերից երկուսի գումարը 100 տոկոսով գերազանցել է հայտարարագրման ենթակա նվազագույն շեմը: Բոլոր հայտարարագրերը վերաբերել են ներմուծմանը, ընդ

որում՝ բոլորը հայտարարագրվել են ցամաքային տրանսպորտի սահմանահատման մեկ մաքսակետում: Ոչ մի հայտարագիր չի ներկայացվել միջազգային օդանավակայանների մաքսակետերում:

	Հայտարարագրերի կառուցվածքը	
1. ժամանում	21,000 դոլար	Մեղրու մաքսակետ
2. ժամանում	36,000 դոլար	Մեղրու մաքսակետ
3. ժամանում	34,000 դոլար	Մեղրու մաքսակետ
4. ժամանում	20,000 դոլար	Մեղրու մաքսակետ
5. ժամանում	20,000 դոլար	Մեղրու մաքսակետ
6. ժամանում	17,000 դոլար	Մեղրու մաքսակետ
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ 148,000 դոլար

414. Նախորդ տարվա ընթացքում հայտարարագրեր չեն ստացվել. իշխանությունները կարծիք հայտնեցին, որ դա պայմանավորված է եղել հայտարարագրման պահանջների վերաբերյալ հանրության նվազ իրազեկվածությամբ: Հայտարարագրերի սակավաթվությունը և այն փաստը, որ միջազգային օդային մաքսակետերում որևէ հայտարարագիր չի ներկայացվել, տվյալների հավաքագրման մակարդակի, հայտարարագրելու մասին հանրության իրազեկության և պահանջվող հայտարարագրերի նկատմամբ իշխանությունների մոնիտորինգի առումով մտահոգության տեղիք են տալիս: Գնահատողները տեղեկացվեցին, որ մաքսային ծառայությունը սկսել է հայտարարագրման պահանջների վերաբերյալ իրազեկության բարձրացման նախաձեռնություններ իրականացնել (ներառյալ գրքույկի տարածումը):

Արժույթի ծագման և օգտագործման մասին տեղեկություններ պահանջելը (չ. IX.2).

415. Կեղծ հայտարարագիր հայտնաբերելու կամ հայտարարագիր չներկայացնելու դեպքում արժույթի կամ ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների ծագման և օգտագործման մտադրության մասին տեղափոխողից տեղեկություններ պահանջելու և ստանալու իրավասությունը նախատեսված է մաքսային օրենսգրքի 133-րդ հոդվածով: Վերջինս նախատեսում է մաքսային մարմինների ընդհանուր իրավասությունը՝ պահանջելու հայտարարագրման ենթակա տեղեկություններ (ինչպես արժույթի անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման ներգնա և արտագնա հոսքերի և վճարային արժեթղթերի՝ սահմանված շեմը գերազանցող գումարների դեպքում): Նույն հոդվածի համաձայն, «մաքսային օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում մաքսային մարմիններն իրավունք ունեն պահանջել այլ տեղեկություններ և փաստաթղթեր»: Բացի այդ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով («ՕՀԳՕ») (8-րդ և 14-րդ հոդվածներ) մաքսային ծառայությանը վերապահված է «օպերատիվ հարցումներ» կատարելու և «օպերատիվ տեղեկություններ ձեռք բերելու» («մաքսանենգության և այլ հանցագործությունների բացահայտման նպատակով») ընդհանուր իրավասությունը:

Արժույթի շարժի սահմանափակումը (չ. IX.3).

416. Մաքսային մարմիններն իրավասու չեն կասեցնել կամ սահմանափակել արժույթի շարժն այն դեպքերում, երբ առկա է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկած (քանի որ այդ հանցագործությունների առնչությամբ նրանք օժտված չեն «հետաքննության մարմնի» իրավասություններով, որոնք սահմանափակված են միայն մաքսանենգության դեպքերով): Որպես մաքսանենգությանն առնչվող հանցագործությունների «հետաքննության մարմին»՝ մաքսային մարմիններն այդ իրավասությունից օգտվում են կեղծ հայտարարագրի դեպքում՝ՔԴՕ-ի նորմերին համապատասխան:

Համապատասխան դեպքերում արժույթի վերաբերյալ տեղեկությունների և նույնականացման տվյալների պահպանումն իրավասու մարմինների կողմից (չ. IX.4).

417. Ուղևորների նույնականացման տվյալները և կանխիկի կամ վճարային արժեթղթերի՝ սահմանված շեմը գերազանցող գումարի արձանագրման պարտավորությունը նախատեսված է Արժույթի հայտարարագրման կարգի 2-րդ հոդվածով: Այդ տեղեկությունները ներառում են, ի թիվս այլ տեղեկությունների, ուղևորի անունը, քաղաքացիությունը, անձնագրային տվյալները և արժույթի կամ վճարային արժեթղթերի գումարը:

418. ՖԴԿ-ի և Պետական եկամուտների կոմիտեի միջև կնքված փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է տեղեկությունների և տվյալների հաղորդում ՖԴԿ-ին: Պահանջվում է նաև պահպանել 15,000 դոլար կամ եվրո արժեքը գերազանցող արժույթի ներմուծման կամ վճարային արժեթղթերի ներմուծման և արտահանման դեպքում ուղևորի/հայտարարագրողի մասին տվյալները, արժույթի կամ վճարային արժեթղթերի կամ արժութային այլ արժեքների ներմուծման կամ արտահանման իրավական պահանջների խախտումների մասին տվյալները, ինչպես նաև արժույթի ներմուծման կամ արտահանման այն դեպքերի մասին տվյալները, որոնք պետական եկամուտների կոմիտեի կարծիքով ՓԼ կամ ԱՖ տեսակետից կասկածելի են:

419. Իշխանությունները տեղեկացրեցին գնահատողներին, որ կենտրոնական տվյալների շտեմարանում՝ և թղթային ձևով, և տվյալների էլեկտրոնային բազայում պահպանվում են տեղեկություններ մաքսային օրենսդրությամբ նախատեսված բոլոր հայտարարագրերի, այդ թվում՝ արժույթին և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքներին առնչվող հայտարարագրերի մասին: Բացի այդ, փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է նաև, որ պահպանվում են արժույթի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների՝ սահմանված նվազագույն շեմը գերազանցող գումարների չհայտարարագրման դեպքերի բացահայտմանը և կեղծ հայտարարագրերին առնչվող տեղեկությունները, ինչպես նաև այն դեպքերի վերաբերյալ տեղեկությունները, որոնցում առկա է ՓԼ կամ ԱՖ կասկած: ՀՀ կառավարության 2006 թ. մարտի 9-ի «պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» որոշման համաձայն, տեղեկությունները պահպանվում են առնվազն հինգ տարի ժամկետով:

Տեղեկությունների հասանելիությունը ՖՀՄ-ին (չ. IX.5).

420. Մաքսային մարմնի կողմից ստացվող տեղեկությունները պաշտոնապես փոխանակվում են ՖԴԿ-ի հետ փոխըմբռնման հուշագրով նախատեսված տեղեկացման պարտավորությունների շրջանակում: Փոխըմբռնման հուշագրի 5-րդ կետի համաձայն, մաքսային ծառայությունը պարտավոր է եռամսյակը մեկ ՖԴԿ-ին տեղեկացնել 15,000 եվրոն գերազանցող արժողությամբ արժույթի կամ վճարային արժեթղթերի ներմուծման, ինչպես նաև 5 միլիոն դրամը գերազանցող արժողությամբ արժույթի կամ վճարային արժեթղթերի արտահանման մասին, ամիսը մեկ անգամ՝ արժույթի կամ վճարային արժեթղթերի ներմուծման կամ արտահանման իրավական պահանջների խախտումների մասին, և չորս օրվա ընթացքում՝ ՓԼ կամ ԱՖ տեսակետից կասկածելի համարվող արժույթի կամ վճարային արժեթղթերի ներմուծման կամ արտահանման դեպքերի մասին: Տեղեկացումների մեջ պետք է նշված լինի ուղևորի կամ ուղարկողի (փոստային առաքման դեպքում) լրիվ անունը, քաղաքացիությունը, նույնականացման անձնական տվյալները, արժույթի տեսակը և գումարը, տրանսպորտային միջոցը, ներմուծման կամ արտահանման հանգամանքը, առաքման և ստացման պետությունները, ինչպես նաև կարևոր այլ տեղեկություններ: Իշխանությունները տրամադրեցին միայն կասկածելի գործարքների մասին ՖԴԿ-ի տեղեկացման վիճակագրական տվյալները. 2008 թ. մայիսից մինչև 2009 թ. մարտ ընկած

ժամանակահատվածում ներկայացված է կասկածելի գործարքի 4 հաշվետվություն (որոնցից մեկի վերաբերյալ արդյունքում հաղորդում է ներկայացվել դատախազություն և պետական եկամուտների կոմիտե):

Ներմուծման/ արտահանման կասկածելի գործարքի մասին հաշվետվության տրամադրման ամսաթիվը	ՖԴԿ-ի արձագանքի (հետադարձ կապի) ամսաթիվը	Խնդրո առարկան	Ձեռնարկված միջոցառումները
22 մայիս, 2008 թ.	13 հունիս, 2008 թ.	ՓԼ կասկած	ՓԼ դեպքի վարկածը հերքվել է վերլուծությունների արդյունքում
25 սեպտեմբեր, 2008 թ.	11 նոյեմբեր, 2008 թ.	ՓԼ կասկած	ՓԼ դեպքի վարկածը հերքվել է վերլուծությունների արդյունքում
14 ապրիլ, 2009 թ.	30 ապրիլ, 2009 թ.	ՓԼ կասկած	ՓԼ դեպքի վարկածը հերքվել է վերլուծությունների արդյունքում
13 մարտ, 2009 թ.	22 ապրիլ, 2009 թ.	ՓԼ կասկած	Հաղորդում է ներկայացվել դատախազություն և պետական եկամուտների կոմիտե

Ներպետական համագործակցությունը մաքսային, սահմանապահ և այլ հարակից մարմինների միջև (չ. IX.6).

421. Առկա են ներպետական համագործակցության մի շարք ֆորմալ մեխանիզմներ: Պետական եկամուտների կոմիտեն ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովում (Միջգերատեսչական հանձնաժողով), ընդ որում՝ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներից մեկը մաքսային ծառայությունից է: Միջգերատեսչական հանձնաժողովը կառավարական բազմակողմ հարթակ է, որը լիազորված է, ինչպես արդեն ներկայացվել է սույն հաշվետվությունում թիվ 31 հանձնարարականի հիման վրա կատարված վերլուծության մեջ, ի թիվս այլ լիազորությունների, մշակել քաղաքականություն, նպաստել ՓԼ և ԱՖ միտումների, մեթոդաբանությունների և արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը հանձնաժողովի անդամների միջև, որի կազմում ներկայացված են իրավասու տարբեր մարմիններ:

422. Բացի այդ, ՖԴԿ-ի և պետական եկամուտների միջև կնքված փոխըմբռնման երկկողմ հուշագրով նախատեսված են համագործակցության և տեղեկատվության փոխանակման մեխանիզմներ: ՓՀ 2-րդ հոդվածով նախատեսված են, մասնավորապես, համագործակցության հետևյալ ոլորտները.

- ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում,
- ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերաբերյալ համատեղ քննարկումներ,
- Արժութային արժեքների փոխադրման (ներմուծում կամ արտահանում) նկատմամբ հսկողություն,
- Փոխօգնություն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնների, ուղեցույցների և այլ մեթոդաբանական նյութերի մշակման գործում,

- Գործերի վիճակագրության վարման և տիպաբանությունների մշակման ուղղությամբ համատեղ գործունեություն,

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ ուսուցման, վերապատրաստման և խորհրդատվության համատեղ ծրագրերի իրագործում:

Իրավասու մարմինների միջազգային համագործակցությունն արժույթի անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման կապակցությամբ (չ. IX.7).

423. Գնահատման դրությամբ 14 ՓՀ-ներ էին կնքված այլ պետությունների (Թուրքմենստան, Ուկրաինա, Տաջիկստան, Ղազախստան, Ռումինիա, Բուլղարիա, Լիբանան, Հունաստան, Լատվիա, Եգիպտոս, Իրանի Իսլամական Հանրապետություն, Սիրիա, Իտալիա և Վրաստան) համապատասխան մարմինների հետ:

424. Իշխանությունները նշեցին, որ ՓՀ-ի բացակայության դեպքում համագործակցությունը ծավալվում է ԱՊՀ-ի կոնվենցիայի հիման վրա կամ դիվանագիտական ուղիներով ուղարկվող հարցումների միջոցով:

Կեղծ հայտարարագրեր ներկայացնելու/կեղծ բացահայտումներ կատարելու դեպքում կիրառվող պատժամիջոցները (չ. 17.1-17.4-ի կիրառությունը Հ.17-ի շրջանակում, չ. IX.8)

425. Արժույթի հայտարարագրման կարգի 2.4 կետի համաձայն, կարգով սահմանված գումարը գերազանցող արժութային արժեքներ արտահանելը կամ ներմուծելն առանց գրավոր մաքսային հայտարարագիր լրացնելու, կամ կարգով սահմանված հայտարարագրման ենթակա տեղեկությունները թերի լրացնելը կամ կեղծելը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության: Քաղաքացիաիրավական պատիժները նախատեսված են մաքսային օրենսգրքի 37-րդ գլխով, որով ամրագրվում է, որ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որ դրա համար նախատեսված է պատասխանատվություն:

426. Մաքսային օրենսգրքի 37-րդ գլխով նախատեսված պատժամիջոցները կիրառելի են մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտող ցանկացած անձի նկատմամբ (189-րդ հոդվածի 2-րդ մաս): Պատժամիջոցները ներառում են, ի թիվս այլոց, հետևյալները.

- Մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածի համաձայն, մաքսային մարմնի պահանջով «ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը», անհրաժեշտ փաստաթղթերը մաքսային մարմնի պահանջով չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում 50,000 դրամի չափով (130 ԱՄՆ դոլար),

- Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը, ինչպես նաև հայտարարագրումը ոչ իրենց անվանմամբ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով (մաքսային օրենսգրքի 203-րդ հոդված),

- Մաքսային օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն, մաքսային մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջը դիտավորյալ չկատարելն առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ 10,000 դրամի չափով (26 ԱՄՆ դոլար):

427. «Ապրանքներ» եզրույթը սահմանված է մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածով, որի համաձայն այն ներառում է նաև «արժույթը և արժութային արժեքները», որոնք «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ներառում են «արժութային արժեքներ համարվող գույքի տեսակները», այդ թվում՝ արտարժույթը, ՀՀ արժույթը և վճարային արժեթղթերը:

428. Իշխանությունները տեղեկացրեցին գնահատողներին, որ մաքսային ծառայությունը բացահայտել է հայտարարագրման պահանջի հինգ խախտում, որոնց արդյունքում կիրառվել է մեկ վարչական պատիժ, երեք գործեր ուղարկվել են իրավասու մարմիններին, իսկ մեկով վարչական վարույթը կասեցվել է: Նշված խախտումներից երկուսը հայտնաբերվել են ցամաքային տրանսպորտի սահմանահատման երկու կետերում, երեքը՝ մայրաքաղաք Երևանի միջազգային օդանավակայանում:

429. Օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցների մեծ մասը չափազանց մեղմ է: Վիճակագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել, թե արդյոք պատիժներն արդյունավետ են, համաչափ և տարհամոզիչ:

ՓԼ կամ ԱՖ նպատակով արժույթի անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման դեպքում կիրառվող պատժամիջոցները (չ. 17.1-17.4-ի կիրառությունը Հ.17-ի շրջանակում, չ. IX.9).

430. ՓԼ կամ ԱՖ նպատակով արժույթի կամ վճարային արժեթղթերի անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման դեպքում կիրառելի կոնկրետ պատժամիջոցներ նախատեսված չեն, բացառությամբ IX.8 չափորոշչի կապակցությամբ վերը նշված պատժամիջոցների: ՔՕ-ով նախատեսված և սույն հաշվետվությունում քննարկված քրեաիրավական պատժամիջոցներ են կիրառելի այն ֆիզիկական անձանց նկատմամբ, ովքեր չեն կատարում ՓԼ կամ ԱՖ դեմ պայքարի պահանջները:

ՓԼ/ԱՖ առնչվող արժույթի բռնագրավումը (չ. 3.1-3.6-ի կիրառությունը Հ.3-ի շրջանակում, չ. IX.10).

431. Մաքսային մարմինն իրավասու է բռնագրավել կանխիկիկը դրա չհայտարարագրման կամ, մաքսային օրենսգրքի 212-րդ հոդվածի հիման վրա, կեղծ հայտարարագրման պարագայում, որով նախատեսվում է, որ «մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները ... ենթակա են վերցման»: ՓԼ կամ ԱՖ առնչվող արժույթը կամ ըստ ներկայացնողի (վճարային) այլ գործիքներն առգրավելու կամ հետաքննելու իրավասություն մաքսային մարմնին վերապահված չէ, և նման դեպքերում այն պարտավոր է դիմել իրավասու մարմիններին համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու խնդրանքով, ինչպես նաև՝ կասկածելի գործարքի հաշվետվություն ուղարկել ՖԴԿ:

Արժույթի բռնագրավումը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերի համաձայն (չ. III.1-III.10-ի կիրառությունը ՀՀ.III-ի շրջանակում, չ. IX.11).

432. ՀՀ.III-ով և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով նախատեսված սառեցման պահանջները հնարավոր չէ կիրառել ԱՖ-ին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում իրականացնող անձանց նկատմամբ: Այդպիսի դեպքերում ՔԴՕ-ով նախատեսված

միջոցառումները (որոնք նկարագրված են սույն հաշվետվությունում ՀՀ.III-ին նվիրված բաժնում) ձեռնարկելու իրավասությունը վերապահված է ոչ թե մաքսային մարմնին, այլև՝ ԱԱԾ-ին:

Թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի անսովոր անդրսահմանային շարժի մասին օտարերկրյա իրավասու մարմինների ծանուցումը (չ. IX.12).

433. Չնայած որ ՀՀ մաքսային մարմինն օրենքների կամ այլ իրավական ակտերի համաձայն ֆորմալ առումով պարտավոր չէ ոսկու, թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի անսովոր անդրսահմանային շարժ բացահայտելու դեպքում ծանուցել դրանց ծագման և/կամ ուղևորման երկրների իրավասու մարմիններին, այնուհանդերձ, մաքսային մարմինը գնահատողներին տեղեկացրեց, որ նման դեպքերում ծանուցումն ուղարկվում է սովորական ընթացակարգով՝ կամ ՓՀ-ով նախատեսված ուղիներով, կամ ԱՊՀ-ի կոնվենցիայի հիման վրա հարցում ուղարկելու միջոցով: Կասկածի առաջացման դեպքում դա արվում է ՖԴԿ-ի ֆորմալ ուղիներով ԿԳՀ տրամադրելուց հետո:

Տեղեկությունների պատշաճ օգտագործման երաշխիքները (չ. IX.13).

434. Մաքսային փաստաթղթերի, ներառյալ հայտարարագրերի պահպանության և արխիվացման երաշխիքները և ընթացակարգերն ամրագրված են մաքսային ընթացակարգերում, որոնցով նախատեսվում է, մասնավորապես, արխիվացում երեք ամսվա պարբերականությամբ, պահպանություն 5 տարի ժամկետով, ինչպես նաև հայտարարագրերի և կից փաստաթղթերի պահպանություն միաժամանակ և էլեկտրոնային, և թղթային տվյալների բազաներում: Մաքսային մարմինը հանդիպումների ընթացքում գնահատողներին տեղեկացրեց, որ նշված տեղեկությունների և տվյալների բազաների օգտագործումն իրականացվում է խիստ պայմաններում, ներառյալ դրանց սահմանափակ հասանելիությունը՝ միայն այդ նպատակով լիազորված բարձրաստիճան պաշտոնյաներին: Արխիվացման և պահպանման ընթացակարգը սահմանված է «Արխիվային գործի մասին» օրենքով:

Լրացուցիչ տարրը. ՀՀ.IX Հատուկ հանձնարարականի Լավագույն փորձի փաստաթղթով նախատեսված մեխանիզմների ներդրումը (չ. IX.15).

435. Մաքսային մարմնի հետ քննարկումներում պարզ դարձավ, որ նրանք ծանոթ չեն ՀՀ.IX Հատուկ հանձնարարականի Լավագույն փորձի փաստաթղթին. այնուամենայնիվ, Լավագույն փորձի փաստաթղթում զետեղված գործոններից մի քանիսն ապահովված են, այդ թվում, մասնավորապես, անձի, ուղեբեռի կամ տրանսպորտային միջոցի զննությունը, միջազգային և ներպետական համագործակցությունը և հայտարարագրման ենթակա սահմանաչափերը: Լավագույն փորձի փաստաթղթի տարրերի կիրառությունը սահմանափակ է, քանի որ մաքսային մարմնին վերապահված չէ քրեաիրավական կարգով կանխիկ կամ վճարային արժեթղթեր առգրավելու իրավասություն (բացառությամբ չհայտարարագրման կամ կեղծ հայտարարագրման դեպքերի):

Լրացուցիչ տարրը. տվյալների համակարգչային շտեմարանի գործառույթը և հասանելիությունն իրավասու մարմիններին (չ. IX.15).

436. Արժույթի կամ վճարային արժեթղթերի անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման կապակցությամբ ստացվող տեղեկությունները և փաստաթղթերը պահպանվում են և էլեկտրոնային, և թղթային տվյալների շտեմարաններում և հասանելի են ՖԴԿ-ին մաքսային մարմնի՝ ՓՀ-ով նախատեսված տեղեկություններ տրամադրելու պարտավորությանը համապատասխան: Տվյալների միտումները կամ վերլուծությունները

կարող են ներկայացվել Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին: Մաքսային մարմինը գնահատողներին տեղեկացրեց, որ մաքսային ծառայությունում ստեղծվել է առանձին վարչություն, որը վիճակագրական նպատակների համար վերլուծում է հավաքագրվող այնպիսի տվյալներ, ինչպիսիք են, օրինակ, մաքսատուրքի գումարները կամ հայտարարագրերի թվաքանակը:

Արդյունավետությունը.

437. Մաքսային մարմնի կողմից ստացվող հայտարարագրերի սակավաթվությունը վկայում է հայտարարագրման պահանջների մասին հանրության ոչ բավարար տեղեկացվածության, ինչպես նաև անցակետերում, այդ թվում՝ ՀՀ հիմնական միջազգային օդանավակայանում մաքսային մարմնի կողմից հայտարարագրերի ոչ բավարար մոնիտորինգի մասին: Փաստացի օգտագործվող հայտարարագրերի պարզությունը կարող է հանգեցնել վճարային արժեթղթերի չհայտարարագրման կամ դրանց հայտարարագրման պահանջների ոչ բավարար ընկալման:

438. Հայտնաբերված խախտումների սակավաթվությունը վկայում է այն մասին, որ թերևս անհրաժեշտ կլինի համակարգված միջոցառումներ իրականացնել՝ ապահովելու հայտարարագրման կանոնների լիարժեք կատարումը: Այցի ժամանակ գնահատողներն իշխանությունների կողմից տեղեկացվեցին, որ տվյալների վերլուծությունը չի կենտրոնացել ՓԼ կամ ԱՖ վերլուծության ուղղությամբ, և հայտարարագրերի և խախտումների սակավաթվության պարագայում հարցականի տակ է դրվում նման վերլուծության արդյունավետությունը:

2.7.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

439. Իշխանությունները պետք է դիտարկեն հետևյալ միջոցառումները ձեռնարկելու նպատակահարմարությունը.

- Հայտարարագրման պահանջները տարածել փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա փոխադրումների նկատմամբ,
- Մաքսային մարմիններին իրավասություն վերապահել՝ կասեցնելու կամ սահմանափակելու արժույթի շարժը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում,
- Խստացնել պատժամիջոցները,
- Ներդնել ՀՀ.III-ով և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով նախատեսված սառեցման պահանջներն այն անձանց դեպքում, որոնք իրականացնում են ԱՖ-ին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում,
- Բարձրացնել հանրության իրազեկությունը սահմանված շեմը գերազանցող գումարով կանխիկի և վճարային արժեթղթերի ներմուծումը և արտահանումը հայտարարագրելու անհրաժեշտության մասին,
- Ճշգրտել օգտագործվող հայտարարագրերում ներմուծման և արտահանման հայտարարագրման պահանջների բացատրությունները, որպեսզի դրանք միանշանակորեն տարածվեն նաև վճարային արժեթղթերի նկատմամբ,

- Հայտարարագրումը խրախուսելու նպատակով բարձրացնել գործող պատժամիջոցների արդյունավետությունը և նախատեսել կոնկրետ պատժամիջոցներ ՓԼ և ԱՖ համար,

- Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսել մաքսային մարմնի իրավասությունը՝ պահանջելու տեղեկություններ արժույթի կամ վճարային արժեթղթերի ծագման և օգտագործման մտադրության մասին,

- Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսել ոսկու, թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի անսովոր անդրսահմանային շարժի մասին այլ երկրների իրավասու մարմինների ծանուցումը,

- Հայտարարագրման պահանջների հիման վրա հավաքագրված տեղեկությունները վերլուծելու միջոցով ձևավորել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օպերատիվ տվյալներ:

2.7.3. Համապատասխանությունը IX հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.2.7-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
ՀՀ.IX	**Մասամբ համապատասխանում է**	ա) Հայտարարագրման պահանջները չեն տարածվում փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա փոխադրումների նկատմամբ: • Նախատեսված չէ ՓԼ կամ ԱՖ կասկածի առկայության դեպքում արժույթի շարժը կասեցնելու կամ սահմանափակելու իրավասությունը: • Բռնագրավման և առգրավման՝ մաքսային մարմնի իրավասությունները սահմանափակ են: • ՀՀ.III-ով և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով նախատեսված սառեցման պահանջները կիրառելի չեն այն անձանց դեպքում, որոնք իրականացնում են ԱՖ-ին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում: • Օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցների մեծ մասը չափազանց մեղմ է: Վիճակագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել, թե արդյոք պատիժներն արդյունավետ են, համաչափ և տարհամոզիչ: • Առկա են արդյունավետության հիմնախնդիրներ:

3. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը և տեղեկատվության պահպանումը

3.1. Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը

440. Հայաստանում ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը հիմնականում ներառում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը: Չնայած որ և օրենքով, և կանոնակարգով ֆինանսական հաստատությունների վրա դրվում են փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը կանխելու հետ կապված հստակ և ուղղակի պարտավորություններ, իշխանությունները դեռևս չեն իրականացրել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման՝ ֆինանսական հաստատությունների վրա ազդող հնարավոր ռիսկերի համակարգված

ուսումնասիրություն կամ գնահատում, որը կարող էր որպես հիմք ծառայել ֆինանսական համակարգում հավելյալ և/կամ նվազեցված միջոցառումներ կիրառել: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական և վերահսկողական դաշտը որպես այդպիսին մշակվել է՝ հաշվի չառնելով ՓԼ/ԱՖ ռիսկերի մակարդակը: Չնայած դրան, օրենքը ֆինանսական հաստատություններին թույլատրում է հաճախորդների պատշաճ ուսումնասիրության պարտավորությունների հանդեպ կիրառել ռիսկի նկատմամբ զգայունության մոտեցումներ:

441. Հայաստանյան իշխանությունների և գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունների պաշտոնատար անձանց հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանց պատկերացմամբ ՓԼ և ԱՖ ռիսկը ցածր է: Այնուհանդերձ, իշխանությունները և պաշտոնատար անձինք կարծիք հայտնեցին, որ, ինչպես և հարևան պետություններում, ֆինանսական հաստատություններին սպառնացող ռիսկի հիմնական աղբյուրներն են խարդախ գործունեությունը (և ներքին, և արտաքին), թմրադեղերի ապօրինի շրջանառությունը և այլ հանցագործությունները (կեղծ արժույթ և ապրանքներ պատրաստելը և իրացնելը), որոնցից ստացվում են անօրինական եկամուտներ, որոնք էլ կարող են ուղղվել ֆինանսական համակարգ կամ փոխարկվել գույքի:

442. Հայաստանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռեժիմի վրա կարող է ազդել նաև այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին տնտեսության՝ գլխավորապես կանխիկի վրա հիմնված լինելու հանգամանքն է: Վերջինիս նպաստում է նաև հայկական մեծ Սփյուռքի առկայությունը (առանձնապես մեծաթիվ են Ռուսաստանի և ԱՄՆ-ի հայկական համայնքները), որի ներկայացուցիչներից ֆորմալ և ոչ ֆորմալ ուղիներով կանխիկ արժույթ է ներհոսում Հայաստան: Ֆորմալ փոխանցումները ստացվում են լիցենզավորված և կարգավորվող ֆինանսական հաստատությունների (բանկեր և դրամական փոխանցումներ իրականացնողներ) միջոցով կատարվող փոխանցումների տեսքով, մինչդեռ ոչ ֆորմալ փոխանցումները կատարվում են այլ (չլիցենզավորվող և չկարգավորվող) համակարգերով՝ կանխիկի տեսքով: Դրամական այդ հոսքերի մի մասը կարծես նպաստում է անշարժ գույքի շինարարության ոլորտի արագընթաց աճին, որում պահանջարկի հիմնական աղբյուրն արտերկրի հայերն են:

443. Ահաբեկչության ֆինանսավորումը չի համարվում լուրջ վտանգ ֆինանսական հաստատությունների համար:

3.2. Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը, ներառյալ հավելյալ կամ նվազեցված միջոցառումները (Հ.5-ից մինչև 8)

3.2.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

444. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ և Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույց:

445. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումների իրավական դաշտը, ներառյալ հաճախորդների պատշաճ ուսումնասիրության (ՀՊՈՒ) պահանջները, կազմված է հիմնականում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքից: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված կանխարգելիչ միջոցառումների ռեժիմը լրացվում է նաև «լիազոր մարմնի կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերով և ուղեցույցներով», որոնք ՀՀ ԿԲ-ն ընդունում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև «հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով», որոնք ՓԼ և

ԱՖ կանխարգելման նպատակով պարտադիր պետք է ընդունվեն բոլոր ֆինանսական հաստատությունների և 10-ից ավելի աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների կողմից («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ և 3(6)-րդ հոդվածներ):

446. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 11-րդ հոդվածով հստակորեն նախատեսվում է լիազոր մարմնի (այսինքն՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի) լիազորությունը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 1(11)-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1(7) և 2 մասերի համաձայն, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համադրությամբ, ընդունելու «նորմատիվ իրավական ակտեր», որոնցով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով ուղղակիորեն ամրագրված պահանջներից զատ կսահմանվեն նաև «նվազագույն պահանջներ» ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող մի շարք ոլորտներում,[30] այդ թվում՝ «հաճախորդի նույնականացման, պատշաճ (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության, տեղեկությունների հաշվառման, հավաքագրման ու թարմացման նվազագույն կանոնները» (11-րդ հոդվածի 1(2) մաս): Բացի այդ, լիազոր մարմինը (ՀՀ ԿԲ-ի խորհուրդը) լիազորված է նաև ընդունելու և հաշվետվություն տրամադրող անձանց ներկայացնելու «սույն օրենքի, դրա հիման վրա ընդունվող նորմատիվ իրավական ակտերի կիրառության ընթացակարգերը պարզաբանող ուղեցույցներ, այդ թվում՝ հրապարակվում են տիպաբանություններ» (11-րդ հոդվածի 2-րդ մաս):

447. Ավելին, «նորմատիվ, ներքին և անհատական բնույթի իրավական ակտեր» ընդունելու և «փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» կազմակերպման ու կարգավորման՝ ՀՀ ԿԲ-ի իրավասությունը հստակորեն վերապահված է

---

[30] Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս. լիազոր մարմնի կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը սահմանում են՝

1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կառավարման մարմինների, այդ թվում՝ ներքին դիտարկումների մարմնի գործառույթների և դրանց իրականացման կարգի նվազագույն պահանջները.
2. Ֆինանսական հաստատությունների կողմից հաճախորդի նույնականացման, պատշաճ (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության, տեղեկությունների հաշվառման, հավաքագրման ու թարմացման նվազագույն կանոնները.
3. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից փաստաթղթերի (տեղեկությունների) հաշվառմանն ու պահպանմանը ներկայացվող նվազագույն կանոնները.
4. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների ներքին իրավական ակտերի հաստատման ու փոփոխման կարգը, ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն չափանիշները.
5. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների գործունեության աուդիտին ներկայացվող նվազագույն կանոնները.
6. Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգը և օրինակելի ձևը.
7. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր կամ ցածր ռիսկի չափանիշներն ու դրանց որոշման կարգը.
8. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) մասին հաշվետվություն տրամադրող անձանց կողմից լիազոր մարմնին տեղեկությունների ներկայացման ձևերը, ժամկետները և կարգը.
9. Ֆինանսական հաստատությունների կողմից գործարքների (գործարար հարաբերությունների) կասկածելիության որոշման և այդ կապակցությամբ լիազոր մարմնին հաշվետվության տրամադրման հարցի քննարկման նվազագույն կանոնները.
10. Ֆինանսական հաստատությունների՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ընտրության, ուսուցման, որակավորման նվազագույն կանոնները.
11. Պետական մարմիններից հավաքագրվող վիճակագրության բովանդակությունը, տրամադրման կարգը, ձևերը և ժամկետները.
12. Սույն օրենքով սահմանված այլ հարցեր:

ՀՀ ԿԲ-ին «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի համաձայն (2-րդ հոդված և 5-րդ հոդվածի 1(դ) մաս):

448. ՀՀ ԿԲ-ն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ընդունել է ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը և «Գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» 2008 թ. սեպտեմբերի 9-ի թիվ 269 Ն որոշումը (հետայսու՝ «Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ») և «Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցը» (հետայսու՝ «ՌՀՄ ուղեցույց»):

449. Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը սույն գնահատման իմաստով ՖԱԹՖ-ի ստանդարտի համաձայն համարվում է «իրավական այլ ակտ», քանի որ այն ընդունելու համար հիմք ծառայած իրավասությունը կարող է համարվել «օրինաստեղծ մարմնի կողմից պատվիրակված» իրավասություն, և այդ «իրավական այլ ակտի» պահանջների չկատարման համար նախատեսված են պատժամիջոցներ: ՌՀՄ ուղեցույցը կարող է համարվել «պարտադիր կատարման ենթակա այլ միջոց», քանի որ այն ընդունվել է լիազոր մարմնի կողմից և նախատեսում է պարտադիր կատարման ենթակա պահանջներ և վերջիններիս չկատարման դեպքում կիրառելի պատժամիջոցներ:

450. Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով սահմանվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տարբեր առանձնահատկություններին առնչվող կանոններ և չափանիշներ,[31] այդ թվում՝ հաճախորդի նույնականացման նվազագույն կանոնները և հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ և պարզեցված) ուսումնասիրության նվազագույն կանոնները:

451. Ի վերջո, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածով պահանջվում է, որպեսզի հաշվետվություն տրամադրող այն անձինք, որոնք ֆինանսական հաստատություններ են (կամ 10-ից ավելի աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ներ), ընդունեն ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված «ներքին ակտեր» («կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ»): Այդ ակտերը, որոնք սահմանում են նաև ՀՊՈՒ-ին առնչվող

[31] Կանոնակարգի 1-ին գլխի 2-րդ կետ. «Սույն կանոնակարգը սահմանում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (հետայսու՝ ՓԼ/ԱՖ) կանխարգելման ոլորտում՝
ա) ֆինանսական հաստատությունների կառավարման մարմինների, ինչպես նաև ներքին դիտարկումների մարմնի գործառույթների և դրանց իրականացման կարգի նվազագույն պահանջները.
բ) ներքին իրավական ակտերի հաստատման և փոփոխման կարգը, ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն չափանիշները.
գ) ՓԼ/ԱՖ բարձր և ցածր ռիսկի չափանիշներն ու դրանց որոշման կարգը.
դ) հաճախորդի նույնականացման նվազագույն կանոնները.
ե) հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ և պարզեցված) ուսումնասիրության նվազագույն կանոնները.
զ) ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից փաստաթղթերի (տեղեկատվության) հավաքագրման, հաշվառման ու թարմացման նվազագույն կանոնները.
է) ֆինանսական հաստատությունների կողմից գործարքների կասկածելիության որոշման և այդ կապակացությամբ լիազոր մարմնին հաշվետվության տրամադրման հարցի քննարկման նվազագույն կանոնները.
ը) ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների գործունեության աուդիտին ներկայացվող կանոնները.
թ) ֆինանսական հաստատությունների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ընտրության, ուսուցման, որակավորման նվազագույն կանոնները:»

պահանջներ,[32] վերանայվում են լիազոր մարմնի կողմից, որն իրավասու է հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջել նաև փոփոխություններ կատարել ներկայացված ակտերում: Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից վերոհիշյալ ակտերի չընդունումն առաջացնում է պատասխանատվության միջոցներ (օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն): Բացի այդ, պատասխանատվություն առաջացնում է նաև այդ ներքին իրավական ակտերի պահանջների չկատարումը. 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ «իրենց գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ՝ այդ օրենսդրությամբ սահմանված կարգով», առաջացնում է ոչ միայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների խախտումը, այլ նաև՝ «սույն օրենքի *(այսինքն՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի)* հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների» խախտումը ֆինանսական հաստատությունների կողմից:

452. Ֆինանսական հաստատությունների ընդունած և հրապարակած ներքին իրավական ակտերը սույն գնահատման իմաստով չեն համարվում «պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներ», քանի որ դրանք չեն ընդունվել իրավասու մարմնի կողմից:

«Ֆինանսական հաստատության» ընդգրկումը

453. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետն ընդգրկում է Հայաստանի ֆինանսական հատվածի բազմաթիվ ֆինանսական հաստատություններ, որոնց թվարկումը հիմնականում համապատասխանում է ՖԱԹՖ-ի «Մասնագիտական

---

[32] Օրենքի 21-րդ հոդվածով նախատեսվում է.

1) Հաշվետվություն տրամադրող անձինք պետք է ունենան փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտեր (կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ): Սույն մասով նախատեսված ներքին իրավական ակտերը պետք է սահմանեն առնվազն՝
   ա) այն ներքին ընթացակարգերը, որոնք պետք է իրականացվեն հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկատվության պահպանման նպատակով.
   բ) հաճախորդի պատշաճ և հավելյալ ուսումնասիրության նպատակով պահանջվող փաստաթղթերի և այլ տեղեկությունների ցանկը.
   գ) ներքին իրավական ակտով նախատեսված ընթացակարգերի և պահանջների պահպանման նկատմամբ ներքին աուդիտի իրականացման կարգն ու պայմանները՝ ներքին աուդիտի անցկացման՝ օրենքով սահմանված պահանջի դեպքում.
   դ) ներքին դիտարկումների մարմնի գործունեության ներքին ընթացակարգը.
   ե) կասկածելի և այլ գործարքների (գործարար հարաբերությունների) մասին տեղեկատվության հավաքագրման, գրանցման և պահպանման ընթացակարգերը.
   զ) կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) կասեցման (իրականացման մերժման), ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման ներքին ընթացակարգերը.
   է) ներքին դիտարկումների մարմնի կամ սույն օրենքով սահմանված գործառույթներ իրականացնող այլ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ուսուցման և վերապատրաստման պահանջները՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության, այլ իրավական ակտերի (հատկապես հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտականությունների մասով), ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման առկա ռիսկերի և տիպաբանությունների վերաբերյալ.
   ը) գործարար հարաբերությունը կամ գործարքը կասկածելի համարելու չափանիշները.
   թ) լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու ներքին ընթացակարգը.
   ժ) սույն օրենքով, լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ պահանջների կիրառությունն ապահովող ներքին ընթացակարգերը:
2) Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ներքին իրավական ակտերից մեկական օրինակ հաշվետվություն տրամադրող անձինք դրանց հաստատման, ինչպես նաև դրանցում լրացումներ և փոփոխություններ կատարելու դեպքում մեկշաբաթյա ժամկետում տրամադրում են լիազոր մարմնին: Լիազոր մարմնի պահանջով հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ներքին իրավական ակտերում»:

եզրույթների բացատրական բառարանում» թվարկված ֆինանսական հաստատությունների ցանկին: Հայաստանի պարագայում ֆինանսական հաստատությունների (այսինքն՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և այլն) կողմից իրականացվող գործունեության տեսակներ են համարվում ֆինանսական լիզինգը, ֆինանսական երաշխիքները և պարտավորությունները, անհատական և կոլեկտիվ պորտֆելների կառավարումը, փողի շուկայի գործիքների առևտուրը, ապրանքների ֆյուչերսների առևտուրը և կանխիկի կամ իրացվելի արժեթղթերի անվտանգ պահպանում և կառավարում այլ անձանց անունից:

Անանուն հաշիվների արգելքը (չ. 5.1).

454. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով ուղղակիորեն արգելվում է բացել, սպասարկել կամ տրամադրել անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, ինչպես նաև այլ վճարային փաստաթղթեր: Նույն արգելքը տարածվում է նաև միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվների նկատմամբ: Այնուհանդերձ, նախքան «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2008 թ. օրենքի ընդունումը ՀՀ ԿԲ-ն պատժել էր ֆինանսական հաստատություններից մեկին «անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, ինչպես նաև միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ բացելու և սպասարկելու» համար (պատժամիջոցը նշանակվել էր «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նախկին՝ 2004 թ. օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն):

455. Իշխանությունները նշեցին, որ այդ փաստը բացահայտելուց հետո ՀՀ ԿԲ-ի ֆինանսական վերահսկողության վարչությունը համակարգված միջոցառումներ էր նախաձեռնել՝ բացառելու համակարգում նմանատիպ այլ հաշիվների գոյությունը: Ի թիվս այդ միջոցառումների, լրացուցիչ ուսումնասիրություններ էին անցկացվել բանկերի մեծ մասում, այդ թվում՝ անցկացվել էր համակարգչային ծրագրերի և փաստաթղթերի ներկայացուցչական ընտրանքի ստուգում: Իշխանությունները պնդում են, որ այդ համակարգված միջոցառումների արդյունքում այլևս բացառվում է Հայաստանի ֆինանսական համակարգում անանուն այլ հաշիվների գոյությունը: 2006-2008 թթ. ժամանակահատվածում ստուվել է 14 բանկ: Չնայած որ ռիսկը կարող է նվազագույն լինել, ստուգումների շրջափուլն ավարտելուց առաջ չի կարելի իսպառ բացառելայլ բանկերում անանուն կամ մտացածին հաշիվների սպասարկման/վարման հնարավորությունը:

456. Հարկ է նաև հիշատակել, որ «ըստ ներկայացնողի» ֆինանսական գործիքները, ներառյալ ըստ ներկայացնողի ավանդային սերտիֆիկատները և ըստ ներկայացնողի բանկային վկայագրերը («բանկային գրքույկներ» կամ «բանկային ավանդային սերտիֆիկատներ», քաղաքացիական օրենսգրքի 148-րդ հոդված) թույլատրվում և կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով (հոդվածներ 153—161), ինչպես նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով: Բանկային գրքույկն առնչվում է «բանկային ավանդին» (902-րդ հոդված. սա տարբերվում է «բանկային հաշվից», որը կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքի 912-րդ հոդվածով): Բանկային ավանդի պարագայում 911-րդ հոդվածով նախատեսվում է հետևյալը. «Քաղաքացու հետ բանկային ավանդի պայմանագիր կնքելը և նրա ավանդի հաշվին դրամական միջոցներ մուծելը հավաստվում են բանկային գրքույկով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: *Բանկային ավանդի պայմանագրով կարող է տրամադրվել անվանական կամ **ըստ ներկայացնողի բանկային գրքույկ***»:[33] Իշխանությունները պնդեցին, որ նման գրքույկները տրամադրվում են ըստ

[33] Քաղաքացիական օրենսգրքի 911-րդ հոդվածի համաձայն, բանկային գրքույկում պետք է նշվեն և բանկի կողմից հավաստվեն բանկի, իսկ եթե ավանդը ներդրված է բանկի մասնաճյուղում, ապա նաև համապատասխան

(continued)

կոնկրետ հաշվեհամարի (այսինքն, քաղաքացիական օրենսգրքի համաձայն, ավանդային հաշվի), որի հաշվետերը պարտադիր ենթարկվում է ՀՊՈՒ-ի:

457. Ավանդային սերտիֆիկատի դեպքում (որը տարբերվում է բանկային վկայագրից) պարզ չէ, թե արդյոք նման սերտիֆիկատը կապակցված է կոնկրետ հաշվի հետ:

458. Իշխանությունները հղում կատարեցին ՀՀ ԿԲ-ի խորհրդի 501 Ն որոշմանը (ուժի մեջ է մտել 2006 թ. հոկտեմբերի 26-ին[34]), որով նախատեսվում է, որ բանկային (դեպոզիտային) սերտիֆիկատը պետք է պարունակի «բանկային (դեպոզիտային) սերտիֆիկատի սեփականատիրոջ անունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ ֆիզիկական անձի համար, և անվանումը, գրանցման տվյալները՝ իրավաբանական անձի համարը»: Այնուհանդերձ, այդ որոշումը կիրառելի է միայն «անվանական» տեսակի սերտիֆիկատների նկատմամբ (տես որոշման 3(ե) կետը՝ «բանկային (դեպոզիտային) սերտիֆիկատի տեսակը՝ անվանական»), և դրանով չի պահանջվում նշում կատարել կոնկրետ բանկային հաշվի մասին:

459. Ի վերջո, ըստ ներկայացնողի բանկային վկայագրերից և ավանդային սերտիֆիկատներից զատ, գոյություն ունեն նաև չեկային գրքույկներ,[35] որոնք կարող են լինել ըստ ներկայացնողի: Դրանք չեկային գրքույկներ են, որոնք տրամադրվել են իրավաբանական անձի կոնկրետ բանկային հաշվի հիման վրա: Ցանկացած անձ, ով տիրապետում է չեկը (հավուր պատշաճի ստորագրված այն իրավաբանական անձի ներկայացուցիչ լիազորված անձի կողմից, որի անունով բացվել է հաշիվը), կարող է կանխիկացնել այն:

460. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, բանկերը կարող են նշված գործիքները/պրոդուկտներն առաջարկել իրենց հաճախորդներին, սակայն օրենքով ֆինանսական հաստատություններից պահանջվում է այդ գործիքները/պրոդուկտները համարել բարձր ռիսկային և դրանց հետ գործ ունենալիս կիրառել հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրություն: Հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերը նկարագրված են ստորև՝ չ.5.8-ի շրջանակում, և ներառում են գործարքների հավելյալ մոնիտորինգ և գործարար հարաբերությունների պարբերական վերանայում:

461. Վերոհիշյալ գործիքները՝ որպես փոխանցելի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքներ, վերածվում են փաստացի օրինական վճարամիջոցի, որի պատճառով դժվարանում է նույնականացնել իրական փաստացի շահառուին (հատկապես երբ այդ գործիքները կանխիկացումից առաջ մի քանի անգամ ձեռքից ձեռք են փոխանցվում). ուստի, դրանց պարագայում ավելի մեծ է ՓԼ և ԱՖ մեջ կիրառության ռիսկը՝ անանուն հաշիվների նման: Անանունության և փոխանցելիության ռեժիմը որպես այդպիսին լուրջ մարտահրավեր է «հաճախորդի» հետ գործարար հարաբերությունների ողջ ընթացքում ֆինանսական

մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը, ավանդի հաշվի համարը, ինչպես նաև հաշվում մուտքագրված և հաշվից դուրս գրված դրամական միջոցների բոլոր գումարները և բանկային գրքույկը՝ բանկ ներկայացնելու պահին հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը:

[34] «Բանկային ավանդ մուծելը հավաստող փաստաթղթերի ցանկը և բանկային ավանդ մուծելը հավաստող փաստաթղթերի, բանկային գրքույկի, բանկային (դեպոզիտային) սերտիֆիկատի վավերապայմանները»:

[35] Չեկը քաղաքացիական օրենսգրքի 155-րդ հոդվածով սահմանվում է որպես «արժեթուղթ, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարել դրանում նշված գումարը»:

հաստատության կողմից հաճախորդի անընդհատ պատշաճ ուսումնասիրության իրականացման ճանապարհին:

Երբ է պահանջվում ՀՊՈՒ կատարել (է. 5.2).

462. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է հաճախորդի նույնականացում կատարելու՝ հաշվետվություն տրամադրող անձանց պարտավորությունը: Նշվում է, որ «հաճախորդի» հետ որևէ «գործարար հարաբերություն» կարող է հաստատվել կամ «միանգամյա գործարք» կնքվել միայն հաշվետվություն տրամադրող անձանց կողմից նույնականացման համար սահմանված փաստաթղթերը (տեղեկությունները) ստանալուց և դրանց իսկությունն ստուգելուց հետո: 3(10)-րդ հոդվածով «գործարար հարաբերությունը» սահմանվում է որպես «հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով»: 3-րդ հոդվածի 9-րդ մասով «միանգամյա գործարքը» սահմանվում է որպես «գործարք, որի արդյունքում հաճախորդի և հաշվետվություն տրամադրող անձի միջև պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում (գործարար հարաբերություն չի հաստատվում)»: 3-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսվում է, որ «հաճախորդ» է համարվում «հաշվետվություն տրամադրող անձի հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձը, ինչպես նաև այն անձը, որն առաջարկում է հաշվետվություն տրամադրող անձին կնքել միանգամյա գործարք կամ մատուցել գործարքի կատարմանն ուղղված այլ ծառայություններ»: Պարզ չէ, թե արդյոք վերոհիշյալ սահմանման մեջ մտնում են ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող պայմանագրերը կամ ծառայությունները, որոնք սովորաբար «պարբերական ծառայություններ» չեն (օրինակ՝ անվտանգ պահատեղերը):

463. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձինք պետք է նույնականացնեն իրենց հաճախորդներին և ստուգեն նրանց ինքնությունը՝ իրավասու աղբյուրներից ստացված արժանահավատ փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության հիման վրա, եթե՝

- Հաստատվում են գործարար հարաբերություններ.
- Կատարվում է միանգամյա գործարք, այդ թվում՝ ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկին համարժեք դրամը կամ արտարժույթը (գնահատող առաքելության այցի դրությամբ այդ ցուցանիշը հավասար էր մոտ 1,000 եվրոյի՝ ՖԱԹՖ-ի ստանդարտին համահունչ), եթե խստացնող այլ դրույթ սահմանված չէ այլ իրավական ակտերով.
- Կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկատվության հավաստիության կամ ամբողջականության մասին.
- Կասկածներ են առաջանում փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:

464. Ուստի, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված՝ նույնականացման/ստուգման պահանջների կիրառելի են այնպիսի հանգամանքներում, որոնք համընկնում են Հ.5-ով նախատեսվածներին, բացառությամբ միանգամյա

գործարքների համար սահմանված մեկ նվազագույն շեմի, որը կիրառելի է թե ներպետական, թե միջազգային գործարքների նկատմամբ:

Նույնականացման միջոցառումները և ստուգման աղբյուրները (չ. 5.3).

465. Ինչպես նշվեց, օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է հաճախորդներին նույնականացնելու և նրանց ինքնությունը ստուգելու պարտավորությունը, որը կիրառելի է՝ անկախ հաճախորդի մշտական կամ միանգամյա լինելու հանգամանքից, և անկախ նրա՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելու փաստից: 2-րդ մասով պահանջվում է այդ գործընթացն իրականացնել «իրավասու աղբյուրներից», այսինքն՝ կառավարական աղբյուրներից «ստացված արժանահավատ փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության հիման վրա»: 3-րդ մասում նշվում է, որ հաշվետվություն տրամադրող անձինք հաճախորդներին նույնականացնելիս և ինքնությունը ստուգելիս պետք է ապահովեն հետևյալը.

- Ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթղթի, ինչպես նաև բացառապես լուսանկարով՝ պետական համապատասխան իրավասու մարմնի տված այլ վավեր պաշտոնական փաստաթղթերի (անձնագիր, զինվորական գրքույկ, սոցիալական ապահովության քարտ) հիման վրա պահանջվող տեղեկատվությունն առնվազն պետք է ներառի անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրը, ծննդյան ամսաթիվը, վայրը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ.

- Իրավաբանական անձանց համար պահանջվող տեղեկատվությունը պետք է առնվազն ներառի իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

Իրավաբանական անձ կամ իրավաբանական կազմավորում հանդիսացող հաճախորդների նույնականացումը (չ. 5.4).

466. Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների վերաբերյալ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ եթե հաճախորդի կողմից հանդես է գալիս «լիազորված անձ», ապա հաշվետվություն տրամադրող անձը, նույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է նաև նույնականացնել այդ անձին, ստուգել նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 16-րդ մասով «լիազորված անձ» հասկացությանը տրվում է բավական ընդգրկուն սահմանում, որը ներառում է «հաճախորդի անունից հանդես եկող անձի»՝ ՖԱԹՖ-ի 5.4(ա) հանձնարարականում նշված հասկացությունը՝ որպես «հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողություններ իրականացնելու լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի տված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձը, ինչպես նաև այն անձը, որը չունի լիազորագիր, սակայն փաստացի հանդես է գալիս հաճախորդի անունից կամ հանձնարարությամբ, կամ հաճախորդի հաշվին կամ հօգուտ հաճախորդի կատարում է փաստացի գործողություններ»: Իրավաբանական անձի կարգավիճակի ստուգումն իրականացվում է վերը նկարագրված կարգով՝ պահանջելով պետական գրանցման վկայականը, որով հաստատվում է իրավաբանական անձի գոյությունը, հասցեն,

տնօրենների անունները և իրավաբանական անձի անունից հանդես գալու համար լիազորված անձանց անունները:

467. Հայաստանում չկան կոնկրետ իրավական նորմեր տրաստների կամ նմանատիպ այլ իրավաբանական կազմավորումների վերաբերյալ: Այնուհանդերձ, նորմերի բացակայությունը դեռևս չի բացառում օտարերկրյա հավատարմագրային կառավարիչների (օտարերկրյա տրաստի դեպքում) կողմից հաշվի բացումը/գործարար հարաբերությունների հաստատումը: Բանկերի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ այդպիսի գործարար հարաբերությունները հաստատվում են այնպես, ինչպես ֆիզիկական անձի հետ՝ հավատարմագրային կառավարչի նույնականացման մասով, և ինչպես իրավաբանական անձի հետ՝ տրաստի կամ իրավաբանական մասով, որի շրջանակում պահանջվում է շահառուների կամ վերահսկողություն իրականացնող ֆիզիկական անձանց նույնականացում: Այնուհանդերձ, ֆինանսական հաստատություններից ոչ մեկը երբևէ չի հայտնվել նման իրավիճակում:

Իրական շահառուների նույնականացումը (չ. 5.5, 5.5.1 և 5.5.2).

468. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի պարզելու իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում, նույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան, նույնականացնի ու ստուգի նրա ինքնությունը: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ մասով «իրական շահառուն» սահմանվում է որպես «գործարար հարաբերության կամ գործարքի կողմ չհանդիսացող ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է և (կամ) որն իրականում տիրապետում և (կամ) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից գործարքը կատարվում է: Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի (գործարար հարաբերության) նկատմամբ և (կամ) ի շահ որի իրականացվում է գործարար հարաբերությունը կամ գործարքը»: Սահմանմամբ նաև նախատեսվում են որոշ դեպքեր, որոնցում իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել ֆիզիկական անձը:[36]

469. Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 7-րդ գլխի 30-րդ կետով հաշվետվություն տրամադրող անձանցից նաև պահանջվում է գործարար հարաբերություն հաստատելուց կամ միանգամյա գործարք կատարելուց առաջ, բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում, պարզել իրական շահառուի առկայությունը հաճախորդի (լիազորված անձի) հայտարարության («Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարություն») հիման վրա: Լրացնելով այդ հայտարարության ձևը՝ հաճախորդը հաստատում է իրական շահառուի առկայությունը կամ բացակայությունը: Նշված ձևը պահանջվում է հաստատված հարաբերությունների դեպքում, երբ հաշվի տիրոջ հետ հարաբերությունների ընթացքում ի հայտ է գալիս իրական շահառու կամ տեղի է ունենում իրական շահառուի փոփոխություն:

---

[36] Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝

ա. քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, հետայսու՝ բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել դրա որոշումները,

բ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ,

գ. գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

470. Նույն գլխի 31-րդ կետով պահանջվում է հաճախորդի նույնականացման ընթացքում ձեռք բերված տեղեկությունների ստուգումը հաճախորդին սպասարկող ստորաբաժանման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ ներքին դիտարկումների մարմնի կամ այլ ստորաբաժանումների կողմից: Նույնականացման միջոցառումները և իրական շահառուների ստուգման ընթացակարգերը, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասով, իրականացվում են 5.3 և 5.4 չափորոշիչների վերոհիշյալ նկարագրության համաձայն: Այդ ստուգումը կարող է չներառել նույնականացնող բոլոր տեղեկությունների ստուգումը, սակայն պետք է բավարար լինի հաճախորդի իրական ինքնությունը պարզելու համար: Այդ նպատակով ֆինանսական հաստատության կողմից կարող են օգտագործվել ինչպես փաստաթղթային, այնպես էլ ոչ փաստաթղթային ստուգման մեթոդներ:

471. Ինչպես նշվեց, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է նույնականացնել նաև հաճախորդի անունից հանդես եկող անձին: Բացի այդ, Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 5-րդ գլխի (որը նվիրված է բարձր ռիսկի չափանիշներին և դրանց որոշման կարգին) 24-րդ կետում նշվում է, որ բարձր ռիսկի չափանիշ կարող է համարվել այն իրավիճակը, որում «իրավաբանական անձի կառուցվածքը կամ կառավարումն առանց հիմնավոր պատճառի բարդ է»:

Տեղեկությունները գործարար հարաբերության նպատակի և բնույթի մասին (չ. 5.6).

472. Հաշվի հարաբերություն հաստատելու ժամանակ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին հաշվետվություն տրամադրող անձանցից տեղեկություններ ստանալու պահանջը զետեղված է Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 5-րդ գլխի 25-րդ կետում, որով ֆինանսական հաստատությունից պահանջվում է համադրել հաճախորդի միանգամյա գործարքների բնույթը և նպատակը: Չնայած որ այս պահանջը նախատեսված է, որպեսզի կիրառվի միայն հաճախորդների պատշաճ ուսումնասիրության գործընթացում բարձր ռիսկի չափանիշների հետ գործ ունենալիս, Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցի 2-րդ բաժնի 1-ին գլխի 7-րդ կետի 4-րդ մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է նաև ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն հաճախորդի նյութական վիճակը և առևտրային գործունեությունը, ներառյալ՝ գործարքների ակնկալվող շրջանակը և բնույթը հասկանալու համար:

Գործարար հարաբերության անընդհատ պատշաճ ուսումնասիրությունը (չ. 5.7, 5.7.1 և 5.7.2).

473. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն: Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում հաշվետվություն տրամադրող անձինք պետք է իրականացնեն հաճախորդի հետ գործարքների մոնիթորինգ, որպեսզի հավաստիանան հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկատվության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ եկամուտների աղբյուրի իսկության հարցում: Այնուամենայնիվ, ֆինանսական հաստատությունների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ լրացուցիչ ուղղորդում/ուղեցույցներ են անհրաժեշտ՝ ապահովելու համար անընդհատ պատշաճ ուսումնասիրության կատարման գործընթացի ընկալումը հաստատությունների կողմից և նշված գործընթացի արդյունավետ իրականացումը:

474. Բացի այդ, Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցի 2-րդ բաժնի 7(4) կետով ֆինանսական հաստատություններից պահանջվում է ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն հաճախորդի նյութական վիճակը և առևտրային

գործունեությունը, ներառյալ՝ գործարքների ակնկալվող շրջանակը և բնույթը հասկանալու համար:

475. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է թարմացնել գործարար հարաբերության շրջանակում հաճախորդի նույնականացման համար ստացված տեղեկատվությունը, ընդ որում՝ թարմացման հաճախականությունը որոշում է ինքը՝ հաշվետվություն տրամադրող անձը: Այնուհանդերձ, ներկայումս սահմանված պահանջը հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը թարմացնելու հաճախականության մասով չափազանց ընդհանրական է համարվում:

Ռիսկ. հավելյալ պատշաճ ուսումնասիրությունն ավելի բարձր ռիսկային հաճախորդների մասով (չ. 5.8) և ռիսկի հիման վրա որոշվող ՀՊՈՒ միջոցառումների շրջանակի համապատասխանությունն ուղեցույցներին (չ. 5.12).

476. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասում նշվում է, որ «բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում» հաշվետվություն տրամադրող անձը պետք է ձեռնարկի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ռիսկերին համարժեք միջոցներ: Այնուհետ, նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսվում է, որ բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում ֆինանսական հաստատությունը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 25-րդ մասով «բարձր ռիսկի չափանիշը» սահմանվում է որպես «սույն օրենքով, լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշներ, որոնք վկայում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող և նրանց հետ փոխկապակցված անձինք, ըստ ներկայացնողի արժեթղթերը, այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկային գրքույկները, օֆշորային տարածքները»: Բարձր ռիսկի չափանիշների մանրամասները և դրանց որոշման կանոններն ամրագրված են Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 5-րդ գլխում: Վերջինիս համաձայն, բարձր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները.

- օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) իրավաբանական անձ կամ բնակվող ֆիզիկական անձ հաճախորդը.
- հաճախորդի գործարար հարաբերության կամ միանգամյա գործարքի կապն այնպիսի պետությունների (տարածքների) հետ, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից հրապարակված այն երկրների հետ, որոնց նկատմամբ կիրառվում են պատժամիջոցներ.
- հաճախորդի բնակվելը (գտնվելը) սույն կետի 2-րդ ենթակետում նշված պետություններում (տարածքներում).
- բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները.
- ըստ ներկայացնողի արժեթղթերը (այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկերը), որոնք շրջանառվում են գործարար հարաբերության ընթացքում կամ հանդիսանում են միանգամյա գործարքի առարկա.

- այն դեպքերը, երբ առաջանում են նույնականացման համար նախկինում ձեռք բերված տվյալների ճշգրտության և համարժեքության վերաբերյալ կասկածներ, այդ թվում՝ իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված.

- այն դեպքերը, երբ հայտնի է դառնում, որ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը կամ գործարքի կատարումը մերժվել է այլ ֆինանսական հաստատության կողմից.

- այն դեպքերը, երբ առկա է կանխիկ դրամի մեծածավալ շրջանառություն իրականացնող հաճախորդ, գործարար հարաբերություն կամ միանգամյա գործարք.

- հաճախորդները, որոնց հաշիվներով իրականացվում են միջոցների հաճախակի և անբացատրելի շարժեր դեպի տարբեր ֆինանսական հաստատություններ.

- քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների, նրանց հետ փոխկապակցված անձանց հետ գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը.

- սահմանափակ թվով հատուկ կատեգորիայի հաճախորդների համար անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը.

- առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ միանգամյա գործարքի կատարումն էլեկտրոնային եղանակով կամ թղթակցության կարգով (առանց առերես շփման հարաբերությունները).

- այնպիսի հաշվով կամ միջոցով գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը, որոնցով 6 ամսից ավելի որևէ գործարք չի կատարվել.

- թղթակցային բանկային հարաբերությունները.

- հաճախորդի վարկավորումը, երբ տրամադրվող վարկերն ապահովված են լինում նույն հաստատությունում ներդրված ավանդով:

477. ՌՀՄ ուղեցույցի 2-րդ բաժնի 8(3) կետով նույնպես նախատեսվում է, որ ֆինանսական հաստատությունները պետք է պատշաճ ուսումնասիրության առավել խիստ մոտեցում կիրառեն բարձր ռիսկային խմբերի նկատմամբ: 9-րդ կետով ֆինանսական հաստատություններից պահանջվում է ձեռնարկել պատշաճ միջոցառումներ և իրականացնել հսկողություն՝ նվազեցնելու այն հաճախորդների պոտենցիալ ՓԼ/ԱՖ ռիսկերը, որոնք տվյալ ֆինանսական հաստատության կողմից կիրառվող ռիսկերի վրա հիմնված մոտեցման արդյունքում ճանաչվել են որպես բարձր ռիսկային: Այդ միջոցառումները և հսկողությունը կարող են ներառել.

1) ֆինանսական հաստատության բարձր ռիսկային հաճախորդների և գործարքների վերաբերյալ իրազեկության բարձր աստիճանի ապահովումը,
2) «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի խորացված աստիճանի կիրառությունը կամ
3) գործարքների խորացված մոնիտորինգը,
4) մշտական հսկողության խորացված աստիճանը և գործարար հարաբերությունների հաճախակի դիտանցումը/անընդհատ ուսումնասիրությունը:

Ռիսկ. ՀՊՈՒ նվազեցված/պարզեցված միջոցառումների կիրառությունը համապատասխան դեպքերում (չ. 5.9) և ռիսկի հիման վրա որոշվող ՀՊՈՒ միջոցառումների շրջանակի համապատասխանությունն ուղեցույցներին (չ. 5.12).

478. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանց հնարավորություն է ընձեռվում ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացնել հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն՝ հաճախորդին կամ իրական շահառուին նույնականացնելիս կամ նրա ինքնությունը ստուգելիս: «Ցածր ռիսկի չափանիշ» հասկացությունը նույն օրենքի 3-րդ հոդվածի 26-րդ մասով սահմանված է որպես «սույն օրենքով կամ լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշներ, որոնք վկայում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները, պետական մարմինները կամ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունները»: Ցածր ռիսկի չափանիշներին անդրադառնում է նաև Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 6-րդ գլուխը, որի համաձայն ցածր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները.
- պետական մարմինները.
- տեղական ինքնակառավարման մարմինները.
- պետության կողմից հիմնադրված կազմակերպությունները.
- Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջե կատարվող վճարումները.
- հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումները:

479. Այնուհանդերձ, իշխանությունները դեռևս չեն ընդունել ուղեցույցներ կամ ուղենիշներ, որոնք ֆինանսական հաստատություններին կօգնեին պարզել, թե ինչպես է անհրաժեշտ գնահատել ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ֆինանսական հաստատության նկատմամբ արդյունավետ վերահսկողության հանգամանքը:

480. Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 8-րդ գլխի 37-րդ կետով նախատեսվում է նաև, որ հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը ֆիզիկական անձանց համար նվազագույնը ներառում է հետևյալ տեղեկությունների պարզումը և հաշվառումը. անունը, ազգանունը, հաշվի համարը՝ առկայության դեպքում, և անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Կանոնակարգի 38-րդ կետով նախատեսվում է, որ հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունն իրավաբանական անձանց համար նվազագույնը ներառում է հետևյալ տեղեկությունների պարզումը և հաշվառումը. իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը և բանկային հաշիվները տնօրինելու իրավասություն ունեցող անձին նույնականացնող տեղեկությունները:

481. ՌՀՄ ուղեցույցի 2-րդ բաժնի 8(2) կետով նաև նախատեսվում է, որ ֆինանսական հաստատությունների կողմից յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ կիրառվող ՀՊՈՒ մոտեցումները կարող են լինել հետևյալը.

ա. պատշաճ ուսումնասիրության ստանդարտ մոտեցում, որը կիրառվում է բոլոր հաճախորդների նկատմամբ,

բ. ավելի մեղմ մոտեցում ցածր ռիսկային խմբերի նկատմամբ, օրինակ՝

- ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց միջոցների ձևավորման հիմնական աղբյուրն աշխատավարձն է, կենսաթոշակը կամ հայտնի աղբյուրից ստացվող սոցիալական նպաստը, երբ տվյալ գործարքի բնութագիրն էապես չի տարբերվում հաշվով սովորաբար կատարվող գործարքների բնութագրերից,

- հաճախորդները, որոնց ինքնության և իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը հանրորեն հասանելի է, և որոնց գործունեության նկատմամբ պետական մարմինների կողմից իրականացվում է վերահսկողություն,

- առանձին գործարքների նկատմամբ, որոնց իրականացման համար պահանջվում են աննշան գումարով միջոցներ (օր.՝ կոմունալ վճարումները, ապահովագրավճարները և այլն):

Ռիսկ. ՀՊՈՒ նվազեցված/պարզեցված միջոցառումների կիրառությունը մեկ այլ երկրի ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների նկատմամբ (չ. 5.10).

482. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և Կանոնակարգով նախատեսվում են ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում ՀՊՈՒ պարզեցված միջոցառումների կիրառության պահանջները: Այնուհանդերձ, մեկ այլ երկրի ռեզիդենտ հանդիսացող հաճախորդները համարվում են բարձր ռիսկային և ենթակա են ՀՊՈՒ հավելյալ միջոցառումների: Ուստի, նրանց նկատմամբ կիրառելի չեն ՀՊՈՒ նվազեցված/պարզեցված միջոցառումները:

Ռիսկ. ՀՊՈՒ նվազեցված/պարզեցված միջոցառումների կիրառելիության բացառումը ՓԼ/ԱՖ կասկածի կամ ավելի բարձր ռիսկի այլ կոնկրետ սցենարների առկայության դեպքում (չ. 5.11).

483. Ինչպես քննարկվեց վերևում, ՀՊՈՒ պարզեցված միջոցառումները թույլատրելի չեն տվյալ չափորոշչի շրջանակում նշված հանգամանքներում, քանի որ նման դեպքերը համարվում են բարձր ռիսկի չափանիշներ, որոնց նկատմամբ պահանջվում է իրականացնել ՀՊՈՒ հավելյալ միջոցառումներ:

Ինքնության ստուգման ժամկետները՝ ընդհանուր կանոնը (չ. 5.13) և ինքնության ստուգման ժամկետը՝ բացառիկ հանգամանքների պարագան (չ. 5.14 և 5.14.1).

484. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասն անդրադառնում է հաճախորդի ինքնության ստուգման ժամկետին՝ նախատեսելով, որ հաճախորդի հետ որևէ գործարար հարաբերություն կարող է հաստատվել կամ միանգամյա գործարք կնքվել միայն հաշվետվություն տրամադրող անձանց կողմից նույնականացման համար սահմանված փաստաթղթերը (տեղեկությունները) ստանալուց և դրանց իսկությունն ստուգելուց հետո: Այնուհանդերձ, հաշվետվություն տրամադրող անձինք կարող են ձեռք բերել նույնականացման համար պահանջվող տեղեկությունները և ստուգել դրանց իսկությունը նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ ժամկետում, եթե արդյունավետորեն կանխարգելված է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը, և դա անհրաժեշտ է բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:

Չնայած որ իրավական պահանջով նախատեսվում է «ողջամիտ ժամկետ», վերջինս ոչ ամբողջովին է արտացոլում ՖԱԹՖ-ի ստանդարտը, որով ֆինանսական հաստատությանը թույլատրվում է ինքնության ստուգումն ավարտել գործարար հարաբերության հաստատումից հետո՝ պայմանով, որ դա «տեղի կունենա հնարավորինս շուտ՝ ողջամիտ ժամկետում»: Իշխանություններն անհողդողդ կերպով պնդեցին, որ Հայաստանի իրավական պրակտիկայում «ողջամիտ ժամկետ» եզրույթը (որն օգտագործվում է նաև այլ օրենքներում) ընկալվում և կիրառվում է որպես «հնարավորինս շուտ՝ ողջամիտ ժամկետում»:

485. Ֆինանսական հաստատություններից չի պահանջվում ընդունել ռիսկի կառավարման ընթացակարգեր՝ կարգավորելու այն պայմանները, որոնց պահպանմամբ հաճախորդին կարող է թույլատրվել օգտագործել գործարար հարաբերությունը նախքան սույն չափորոշչով պահանջվող ստուգումն ավարտին հասցնելը:

Նախքան գործարար հարաբերությունը սկսելը ՀՊՈՒ-ն չավարտելը (չ. 5.15) և գործարար հարաբերությունը սկսելուց հետո ՀՊՈՒ-ն չավարտելը (չ. 5.16).

486. Այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձինք ի վիճակի չեն կիրառել ՀՊՈՒ պահանջվող միջոցառումները, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նրանցից պահանջվում է մերժել գործարար հարաբերության կամ գործարքի իրականացումը՝ չհաստատել կամ չիրականացնել գործարար հարաբերություն կամ չկնքել գործարք կամ դադարեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքի կատարումը, կամ եթե հնարավոր չի լինում կատարել հաճախորդների նույնականացումը: Նույն հոդվածի 6-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձից պահանջվում է գործարար հարաբերության կամ գործարքի իրականացումը մերժելու դեպքում քննարկել կասկածելի գործարքի մասին լիազոր մարմին հաշվետվություն ներկայացնելու հարցը:

ՀՊՈՒ պահանջների տարածումն առկա հաճախորդների նկատմամբ (չ. 5.17).

487. Ֆինանսական հաստատություններից չի պահանջվում ՀՊՈՒ միջոցառումներ իրականացնել առկա հաճախորդների նկատմամբ՝ էականության և ռիսկայնության հիման վրա, և անհրաժեշտության դեպքում իրականացնել նմանատիպ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություն:

ՀՊՈՒ պահանջների տարածումն անանուն հաշիվներ ունեցող առկա հաճախորդների նկատմամբ (չ. 5.18).

488. Չնայած որ անանուն հաշիվները կամ մտացածին անուններով հաշիվներն արգելվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով (իսկ ավելի վաղ շրջանում՝ նաև նախկին օրենքի 16-րդ հոդվածով), առկա են ՀՀ ԿԲ-ի կողմից կիրառված պատժամիջոցներով հիմնավորվող տվյալներ առ այն, որ առնվազն մեկ ֆինանսական հաստատություն բացել և վարել էր նմանատիպ հաշիվներ: Չնայած որ ռիսկը կարող է նվազագույն լինել, ստուգումների շրջափուլն ավարտելուց առաջ չի կարելի իսպառ բացառելայլ բանկերում անանուն կամ մտացածին հաշիվների սպասարկման/վարման հնարավորությունը: Բացի այդ, բանկերը կարող են տրամադրել ըստ ներկայացնողի բանկային գրքույկներ կամ բանկային ավանդային սերտիֆիկատներ: Գնահատողների այցելած բանկային հաստատությունների պաշտոնատար անձինք այս խնդրի կապակցությամբ նշեցին, որ իրենք չեն բացել, սպասարկել կամ տեսել անանուն հաշիվներ կամ ըստ ներկայացնողի բանկային գրքույկներ/ավանդային սերտիֆիկատներ:

Արդյունավետության վերլուծություն.

489. ՀՊՈՒ-ն Հայաստանում իրականացվում է գործարար հարաբերությունը հաստատելու պահին: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով սահմանվում են հաճախորդների նույնականացման պահանջները: Ֆինանսական հաստատություններն ապագա հաճախորդներից պրակտիկայում ձեռք են բերում նույնականացման բավարար տվյալներ, տեղեկություններ և փաստաթղթեր, որպեսզի համարժեքորեն իրականացնեն պահանջվող պատշաճ ուսումնասիրությունները: Փաստաթղթերը ձեռք բերելուց հետո ֆինանսական հաստատությունները ստուգում են նույնականացման այդ տեղեկությունները: Ֆինանսական հաստատությունների պաշտոնատար անձանց հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանց մեծ մասը հիմք է ընդունում փաստաթղթերի բնօրինակները/պաշտոնական փաստաթղթերը և/կամ սահմանված կարգով հավաստագրված փաստաթղթերը, ներառյալ անձնագրերը, զինվորական գրքույկները, սոցիալական ապահովության քարտերը, պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը/հիմնադիր պայմանագիրը, հարկ վճարողի հերթական համարը և լիազորված անձանց լիազորագիրը: Խիստ սակավաթիվ էին այն բանկերը, որոնք փաստաթղթերը ստուգում էին անկախ աղբյուրների, օրինակ՝ «Ռեորլդ-Չեք» բազայի միջոցով: Ֆինանսական հաստատությունները նաև նշեցին, որ ստուգվում է նաև ստորագրելու համար լիազորված անձանց ինքնությունը (ըստ ցանկի, եթե այդպիսի անձինք մի քանիսն են):

490. Իրավաբանական անձանց պարագայում գործարար հարաբերություն հաստատելուց առաջ վերոհիշյալ փաստաթղթերից զատ պրակտիկայում պահանջվում և ձեռք են բերվում նաև հետևյալ փաստաթղթերը. (i) ընկերության գրանցված անվանումը և օգտագործվող ֆիրմային անվանումները, (ii) ընթացիկ գրանցման լիարժեք հասցեն, ռեզիդենտության պետությունը (օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում), (iii) հեռախոսի, ֆաքսի համարները և էլեկտրոնային փոստի հասցեն, (iv) հիմնադրման վայրը և ամսաթիվը, (v) ընկերության գրանցման համարը, (vi) հարկային ռեզիդենտությունը, (vii) գործարար գործունեությունը, (viii) խմբի անունը և հասցեն, եթե այդպիսին կա, (ix) տեղեկություններ իրականացվող գործարար գործունեության բնույթի և մակարդակի մասին, (x) տեղեկություններ միջոցների ծագման մասին, (xi) տեղեկություններ հարստության կամ եկամուտների աղբյուրի մասին, և (xii) բաժնետերերի ցուցակը:

491. Ֆինանսական հաստատություններից պահանջվում է նաև նույնականացնել իրական շահառուներին: Դա արվում է՝ լրացնելով հավելված (ստանդարտ ձև), որում ապագա հաճախորդը հայտարարում է իրական շահառուի անունը (առկայության դեպքում) կամ իրական շահառուի բացակայության մասին: Այդ ձևը ստորագրվում է ապագա հաճախորդի կողմից և պահպանվում հաճախորդի նույնականացման փաստաթղթային փաթեթում: Ինչ վերաբերում է սեփական անունից կամ մեկ այլ անձի անունից հանդես եկող ապագա հաճախորդներին, ապա ֆինանսական հաստատությունները պրակտիկայում իրենք են ուղղում հարցը և գրի առնում պատասխանը:

492. Գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին տեղեկատվությունը, որը նույնպես ձեռք է բերվում հարցազրույցի ընթացքում և պահպանվում դիմումի հետ միասին, ներառում է տեղեկատվություն միջոցների ծագման և աղբյուրի մասին: Արժեթղթերի ոլորտում դիմումը ներառում է նաև տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս պարզել ռիսկի ընդունելի մակարդակը և ապագա հաճախորդին առաջարկվելիք ներդրումային պրոդուկտները: Ինչ վերաբերում է գործարար հարաբերությունների անընդհատ պատշաճ ուսումնասիրությանը, ապա ներկայումս սահմանված պահանջը չափազանց ընդհանրական է, եթե հաշվի առնենք, որ դրանով յուրաքանչյուր ֆինանսական հաստատության թույլատրվում է որոշել իր կողմից հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման հաճախականությունը: Իշխանությունները նշեցին, որ ֆինանսական հաստատությունները պետք է տարին

առնվազն մեկ անգամ թարմացնեն իրենց հաճախորդների վերաբերյալ տվյալները: Այդ պնդումը հաստատվեց գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունների մեծ մասի կողմից, որոնց պաշտոնատար անձինք նշեցին, որ իրենց ներքին կանոնակարգերով պահանջվում է հաճախորդների մասին տվյալները թարմացնել առնվազն տարին մեկ անգամ: Ուստի, ֆինանսական հաստատությունների հետևողական և արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով իշխանությունները պետք է դիտարկեն հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետներ սահմանելու հարցում լրացուցիչ ուղեցույցներ տրամադրելու նպատակահարմարությունը: Բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում հավելյալ ՀՊՈՒ իրականացման խնդիրները մանրամասնորեն կարգավորված են և օրենքներով, և այլ իրավական ակտերով: Օրենքում և այլ իրավական ակտերում դա արվում է օրինակների հիման վրա: Պրակտիկայում, սակայն, ֆինանսական հաստատությունները հղում են անում այդ օրինակներին, և հաճախորդների նույնականացման գործընթացում ռիսկերի վրա հիմնված մոտեցում որդեգրելու փոխարեն հավելյալ պատշաճ ուսումնասիրություն իրականացվում է միայն այդ օրինակների առկայության դեպքում:

493. Օրենքը ֆինանսական հաստատություններին թույլատրում է նաև կիրառել պարզեցված/նվազեցված միջոցառումներ, և հաստատություններից շատերը հենց այդպես էլ վարվում են: Այնուհանդերձ, նշված միջոցառումների կիրառության առնչությամբ անհրաժեշտ են լրացուցիչ ուղեցույցներ/վերապատրաստումներ: Պրակտիկայում ֆինանսական հաստատություններն իրենց հաճախորդներին ներկայումս դասակարգում են ըստ հետևյալ խմբերի. 1) բարձր ռիսկային համարվող հաճախորդներ (որպես հիմք կիրառելով Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում նշված չափանիշները/օրինակները), և 2) ցածր ռիսկային համարվող հաճախորդներ՝ կրկին կիրառելով Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում նշված՝ ցածր ռիսկի չափանիշները, որոնց վերաբերյալ իշխանությունները նշեցին, որ դրանց ցանկը սպառիչ է:

494. Ինչպես նշվեց, հաճախորդի ինքնության ստուգումը, ներառյալ իրական շահառուների առկայության/բացակայության հավաստագրումը, իրականացվում է նախքան գործարար հարաբերություն հաստատելը կամ հաճախորդին որևէ գործարք կատարել թույլատրելը: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական դաշտը ֆինանսական հաստատություններին թույլ տալիս է հաճախորդի և իրական շահառուների ինքնության ստուգումն ավարտել գործարար հարաբերության հաստատումից հետո, սակայն գնահատողների այցելած ֆինանսական հաստատություններից ոչ մեկն այդ տարբերակը չէր ընտրել: Պրակտիկայում ստուգումն անցկացվում է նախքան հարաբերությունը սկսելը:

495. Ինչ վերաբերում է նախքան գործարար հարաբերություն հաստատելը ֆինանսական հաստատությունների կողմից ՀՊՈՒ-ն չավարտելուն, ապա ֆինանսական հաստատությունների պաշտոնատար անձինք նշեցին, որ եթե ՀՊՈՒ-ն չի ավարտվում, ապա հարաբերությունը չի հաստատվում, և որ իրենք նման դեպքերում դիտարկում են ԿԳՀ լրացնելու և ՖԴԿ-ին ներկայացնելու նպատակահարմարությունը: ՀՊՈՒ պահանջներն առկա հաճախորդների նկատմամբ տարածելու կոնկրետ պահանջներ ֆինանսական հաստատությունների համար սահմանված չեն: Բանկերի պաշտոնատար անձանց հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ բանկերից մեկում առկա ոչ բոլոր հաճախորդների համար է ՀՊՈՒ իրականացվել նոր օրենքի պահանջներին համապատասխան: Գնահատողների հետ հանդիպման ժամանակ բանկերից մեկն առկա հաճախորդների տեղեկությունները թարմացնելու նպատակով նոր էր նամակ ուղարկել հաճախորդներին: Առկա հաճախորդների վերաբերյալ պահպանվող տեղեկությունների՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2008 թ. օրենքի նոր պահանջներին համապատասխանությունն ապահովելու հարցում հետևողականություն, որպես այդպիսին, չկա:

496. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից այլ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների՝ ֆինանսական հաստատությունների կողմից կատարումն ապահովող կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընդհանուր մակարդակը հարցականի տակ է դրվում՝ հաշվի առնելով իշխանությունների կողմից տրամադրված ստուգումների հաշվետվությունների (քաղվածքների) վերլուծությունը գնահատողների կողմից (մեկ (1) բանկի, մեկ (1) վարկային կազմակերպության, մեկ (1) ապահովագրական ընկերության և երեք (3) արտարժույթի փոխանակման կետերի մասով): Բանկի, վարկային կազմակերպության և ապահովագրական ընկերության վերաբերյալ քաղվածքների վերլուծությամբ բացահայտվեց, որ ՀՀ ԿԲ-ի վերահսկողների այցելած և ստուգած ֆինանսական հաստատություններում հայտնաբերվել են բազմաթիվ էական թերություններ, ներառյալ՝ ֆիզիկական և իրավաբանական ոչ ռեզիդենտ անձանց հետ գործ ունենալիս ՀՊՈՒ միջոցառումների բացակայությունը, ինչպես նաև առանց առերես շփման և նոր տեխնոլոգիաների հիման վրա հաճախորդի հետ գործ ունենալիս համարժեք միջոցառումների բացակայությունը: Այդ արդյունքների հիման վրա գնահատողները հարցականի տակ են առնում ֆինանսական հաստատությունների կողմից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների համարժեք կատարման (կանխարգելիչ միջոցառումների) ընդհանուր արդյունավետությունը:

Օտարերկրյա ՔԱՈՒԱ-ներ. նույնականացման պահանջները (չ. 6.1).

497. «Քաղաքական ազդեցություն ունեցող անձ» եզրույթը սահմանված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 20-րդ կետով՝ որպես «անձ, որն օտարերկրյա պետությունում կամ տարածքում իրականացնում է կամ իրականացրել է բարձրաստիճան մակարդակով պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառույթներ, մասնավորապես՝

- պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
- խորհրդարանի անդամները
- գերագույն դատարանների, սահմանադրական դատարանների անդամները կամ այլ բարձր դատական ատյանների անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքների,
- աուդիտորների դատարանների անդամները կամ կենտրոնական բանկերի խորհուրդների անդամները,
- դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,
- քաղաքական կուսակցությունների ակնառու գործիչները,
- պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունների վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները:

498. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսվում են հաճախորդների նույնականացման պահանջները հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ. այդ պահանջների իմաստով ՔԱՈՒԱ-ները համարվում են «բարձր ռիսկային»

խումբ, և հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են ձեռնարկել ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ռիսկերին համարժեք միջոցներ՝ ունենալով ներքին իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարման ընթացակարգեր՝ պարզելու համար, թե արդյոք հաճախորդը հանդիսանում է ՔԱՈՒԱ կամ նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ փոխկապակցված այլ անձ, կամ առկա է բարձր ռիսկի այլ չափանիշ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 17-րդ կետով նախատեսվում է «փոխկապակցված անձի» սահմանումը՝ հղում անելով հաշվետվություն տրամադրող կոնկրետ անձի գործունեությունը կարգավորող օրենքներով նախատեսված սահմանմանը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սահմանմանը:

499. Ավելին, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգ») 5-րդ գլխի 22-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանվում են «բարձր ռիսկի չափանիշները և դրանց որոշման կարգը», մասնավորապես՝ «քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների, նրանց հետ փոխկապակցված անձանց հետո գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը»: Նույն գլխի 27-րդ կետով նախատեսվում է, որ անձի՝ քաղաքական ազդեցություն ունենալու փաստը որոշելու նպատակով ֆինանսական հաստատությունը կարող է իրականացնել հետևյալ գործողությունները. 1) հնարավոր հաճախորդներից տեղեկությունների հարցում կամ հաճախորդների ու նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեության բնույթի վերաբերյալ տվյալների ստացում, և 2) հրապարակային տեղեկատվության ուսումնասիրում և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ առկա մասնավոր տվյալների բազաների (Ռիսքլդ-Չեք և այլն) օգտագործում:

Օտարերկրյա ՔԱՈՒԱ-ներ. ռիսկի կառավարում (չ. 6.2, 6.2.1).

500. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 8(1) մասի համաձայն ֆինանսական հաստատությունները պարտավոր են բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացնել հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրություն: Դա նշանակում է, որ ֆինանսական հաստատությունը պետք է նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ հաճախորդի նույնականացման և ստուգման ընթացակարգերը կիրառելուց զատ ՔԱՈՒԱ-ի առկայության դեպքում նաև ստանա ավագ ղեկավարության հավանությունը՝ i) հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, ii) որպես ՔԱՈՒԱ ճանաչված հաճախորդի հետ գործարար հարաբերությունը շարունակելու համար, և iii) երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն եղել է կամ դառնում է ՔԱՈՒԱ:

Օտարերկրյա ՔԱՈՒԱ-ներ. հարստության և միջոցների աղբյուրները պարզելու պահանջները (չ. 6.3).

501. Օրենքի 15-րդ հոդվածի 8(2) մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է նաև ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ՔԱՈՒԱ հաճախորդի կամ իրական շահառուի եկամուտների (ունեցվածքի) և ֆինանսական միջոցների աղբյուրը պարզելու համար:

Օտարերկրյա ՔԱՈՒԱ-ներ. անընդհատ մոնիտորինգ (չ. 6.4).

502. Ի լրումն հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրություն կատարելու՝ վերը նկարագրված պարտավորությանը, ֆինանսական հաստատություններից օրենքի 15-րդ

հոդվածի 8(3) մասով պահանջվում է նաև իրականացնել գործարար հարաբերությունների ընթացիկ հավելյալ ուսումնասիրություն:

Արդյունավետության վերլուծություն.

503. Հաշվետվություն տրամադրող գրեթե բոլոր անձինք, որոնց գնահատողներն այցելեցին, ՔԱՈՒԱ-ների հասկացության և նրանց նույնականացնելու անհրաժեշտության մասին տեղեկացված լինելու տպավորություն թողեցին: Այցելած հաստատություններից միայն մեկը նշեց, որ իր հաճախորդների թվում կա ՔԱՈՒԱ, և նկարագրեց «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորություններին համապատասխան իրականացված հավելյալ ՀՊՈՒ-ն: Գնահատողների այցելած հաշվետվություն տրամադրող բոլոր անձինք ՔԱՈՒԱ-ներին համարեցին բարձր ռիսկային անձինք և հղում արեցին «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգով նախատեսված՝ բարձր ռիսկի չափանիշներին: Այնուհանդերձ, որոշ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի ընկերություններից մեկը և դրամական փոխանցումներ իրականացնողները տեղյակ չէին ՔԱՈՒԱ-ի հետ գործարար հարաբերություն հաստատելիս օրենքով պահանջվող՝ հավելյալ ընթացիկ մոնիտորինգի ընթացակարգերին: Հաշվետվություն տրամադրող վերոհիշյալ անձանց հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանք ուշադրություն են դարձնում նաև ներպետական ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերություններին, չնայած որ պարտավորությունը սահմանված է օտարերկրյա ՔԱՈՒԱ-ների մասով:

Ներպետական ՔԱՈՒԱ-ներ. պահանջները (լրացուցիչ տարրը՝ չ. 6.5).

504. Ներկայումս գործող պահանջները չեն տարածվում երկրի ներսում բարձր պետական պաշտոններ զբաղեցնող ՔԱՈՒԱ-ների նկատմամբ:

Ներպետական ՔԱՈՒԱ-ներ. Մերիդայի կոնվենցիայի վավերացումը (լրացուցիչ տարրը՝ չ. 6.6).

505. Հայաստանը ստորագրել և վավերացրել է Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիան (Մերիդայի կոնվենցիա) համապատասխանաբար 2005 թ. մայիսի 19-ին և 2007 թ. մարտի 8-ին: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թ. ապրիլի 7-ին:

Անդրսահմանային թղթակցային հաշիվները և նմանատիպ այլ հարաբերությունները. ներածություն

Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ:

Հարցվող հաստատության մասին տեղեկություններ հավաքելու պահանջը (չ. 7.1), հարցվող հաստատության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հսկողական մեխանիզմների գնահատումը (չ. 7.2), հաստատվող թղթակցային հարաբերությունների հաստատումը (չ. 7.3), յուրաքանչյուր հաստատության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների փաստաթղթավորումը (չ. 7.4), տարանցիկ հաշիվները (չ. 7.5).

506. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված է ֆինանսական հաստատությունների պարտավորությունը՝ իրենց ներքին իրավական ակտերով սահմանելու օտարերկրյա բանկերի թղթակցային հաշիվների բացման և վարման կարգը, ինչպես նաև օտարերկրյա բանկերում իրենց թղթակցային հաշիվների բացման և վարման առանձնահատկությունները, որպեսզի հավաստիանան, որ իրենք թղթակցային

հարաբերություններ չեն հաստատել կեղծ բանկերի կամ այն բանկերի հետ, որոնք թույլատրում են կեղծ բանկերի կողմից իրենց հաշիվների օգտագործումը:

507. Նույն հոդվածի պահանջի համաձայն, օտարերկրյա բանկերի հետ թղթակցային հարաբերությունների դեպքում բանկերը պետք է՝

- հավաքեն նորմատիվ և ներքին իրավական ակտերով սահմանված բավարար տեղեկատվություն, որպեսզի ամբողջությամբ պարզեն թղթակից բանկի գործունեության բնույթը և հիմք ընդունելով հրապարակային ու ներքին իրավական ակտերով սահմանված այլ արժանահավատ տեղեկատվությունը՝ գնահատեն թղթակից բանկի գործարար համբավն ու դրա նկատմամբ իրականացվող վերահսկողության որակը, ներառյալ՝ այն, թե արդյոք այդ բանկը ներգրավված է եղել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման քրեական հետապնդման կամ որևէ այլ վարույթի մեջ.

- իրենց ներքին իրավական ակտերով սահմանված կարգով գնահատեն թղթակից բանկի կողմից իրականացվող՝ ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ներքին ընթացակարգերը.

- թղթակցային հարաբերություն հաստատելուց առաջ ստանան ավագ ղեկավարության հավանությունը.

- փաստաթղթավորեն թղթակից բանկերից յուրաքանչյուրի համապատասխան գործառույթները:

508. Ինչպես նշվեց, օրենքով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է գնահատել հարցվող բանկի ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ներքին ընթացակարգերը: Իշխանությունները նշեցին, որ չնայած այդ մասին հստակ դրույթի բացակայությանը, վերոհիշյալ պահանջի համաձայն ֆինանսական հաստատությունները պարտավոր են պարզել ներքին ընթացակարգերի և հսկողական մեխանիզմների համարժեքությունը և արդյունավետությունը:

509. Ինչ վերաբերում է «տարանցիկ» հաշիվներին, ապա բանկերը պետք է համոզված լինեն, որ հաճախորդը (հարցվող բանկը) նույնականացրել է իր այն հաճախորդներին, որոնք ուղղակիորեն կարող են օգտվել իր (թղթակից բանկի) հաշիվներից, ՀՊՈՒ բոլոր միջոցառումներն իրականացրել այդ հաճախորդների նկատմամբ, շարունակաբար իրականացնում է նրանց անընդհատ մոնիտորինգ, և կարող է թղթակից բանկի հարցման հիման վրա տրամադրել իր (հարցվողի) հաճախորդի նույնականացման պատշաճ տեղեկություններ:

510. Հաշվի առնելով, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգի 22-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն թղթակցային բանկային հարաբերությունները համարվում են «բարձր ռիսկի չափանիշներ», դրանց նկատմամբ տարածվում են նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգի 8-րդ գլխի 34-րդ կետով սահմանված՝ հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումները: 34-րդ կետի համաձայն, ֆինանսական հաստատությունը նվազագույնը՝

- առավել ամբողջական ու խորացված ստուգում է հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելիս պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) իսկությունը, ինչպես օրինակ, պահանջում է հիմնավորող այլ փաստաթղթեր (տեղեկություններ).

- պահանջում է հաճախորդի ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկություններ.

- տվյալների բազաներով կատարում է հաճախորդի, գործարար հարաբերության և գործարքի վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.

- հաշվետվություն տրամադրող այլ անձանց կամ այլ, այդ թվում՝ օտարերկրյա գործընկերներին հարցումներ է կատարում՝ ճշտելու հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների վերաբերյալ տեղեկությունները.

- ձեռնարկում է այլ միջոցներ՝ հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների ու գործարքների վերաբերյալ իրական ու ամբողջական պատկերացում կազմելու համար:

Արդյունավետության վերլուծություն.

511. Հայաստանում թղթակցային հարաբերությունները կիրառելի են միայն բանկերի պարագայում: Գնահատողների այցելած բանկերի պաշտոնատար անձանց հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ հիմնականում նրանք են հանդես գալիս «հարցվող ֆինանսական հաստատության» դերում՝ արտերկրում ստեղծված հաստատությունների հետ հարաբերություններում, և որ այդ հարաբերությունները կարգավորվում են մեկ պայմանագրով, որն արտացոլում է միմյանց հանդեպ կողմերի պարտավորությունները և պարտականությունները: Բանկերից մեկի (աշխարհի բազմաթիվ պետություններում ներկայացված օտարերկրյա բանկ) պաշտոնատար անձանցից մեկը նշեց, որ իր հաստատության պարագայում թղթակցային բանկային հարաբերությունները հաստատվում են բանկային խմբի մակարդակով՝ Հայաստանի, Եվրոպական դիրեկտիվների և ԱՄՆ-ի «Պատրիոտ» օրենքի պահանջների պահպանմամբ: Այլ բանկերի պաշտոնատար անձինք նշեցին նաև, որ թղթակցային հարաբերություններ հաստատելիս հարցվողից պահանջվում և թղթակցին տրամադրվում են բազմաթիվ փաստաթղթեր, մինչդեռ իրենց տրամադրվում են սակավաթիվ փաստաթղթեր, և իրենք ստիպված են լինում սահմանված պահանջները բավարարելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները ստանալ հրապարակային աղբյուրներից, օրինակ՝ ինտերնետից:

Առաջավոր տեխնոլոգիաների չարաշահումը ՓԼ/ԱՖ մեջ (չ. 8.1).

512. Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ:

513. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է իրենց ներքին իրավական ակտերով (ինչպես նկարագրված է Հ.5-ի վերլուծության մեջ) նախատեսել և կիրառել նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ ՓԼ կամ ԱՖ ռիսկերին հակազդելու համապատասխան միջոցներ:

Առանց առերես շփման գործարար հարաբերությունների ռիսկերը (չ. 8.2 և 8.2.1).

514. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է նաև հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ ընթացիկ ուսումնասիրություն իրականացնելիս իր ներքին իրավական ակտերով (որոնք ներառում են կանխարգելիչ միջոցառումների իրականացման քաղաքականությունը)

սահմանված կարգով նախատեսել առանց առերես շփման գործարար հարաբերությունների կամ գործարքների հետ պայմանավորված բոլոր ռիսկերի կանխարգելման մեխանիզմները: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգի 22-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն, ֆինանսական հաստատությունները պարտավոր են բարձր ռիսկի չափանիշներ համարել առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ միանգամյա գործարքի կատարումն էլեկտրոնային եղանակով կամ թղթակցության կարգով: Օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում ֆինանսական հաստատությունը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն՝ վերը նկարագրված կարգով:

515. Հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացնել հավելյալ ՀՊՈՒ միջոցառումներ: Հաշվի առնելով, որ առանց առերես շփման հաճախորդները համարվում են բարձր ռիսկային, նրանց նկատմամբ կիրառելի են հավելյալ ՀՊՈՒ միջոցառումներ: Հավելյալ ՀՊՈՒ միջոցառումներից զատ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգի 26-րդ կետով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է նաև նվազագույնն իրականացնել հետևյալ լրացուցիչ միջոցառումները. հաշվարկները կատարել միայն անկանխիկ ձևով՝ բացառությամբ վճարային տերմինալների, բանկոմատների միջոցով իրականացվող կանխիկ վճարումների, և պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, ինչպիսիք են՝ պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

Արդյունավետության վերլուծություն.

516. Այցի շրջանակներում գնահատողների հանդիպած ֆինանսական հաստատությունների պաշտոնատար անձինք նշեցին, որ հնարավոր չէ ինտերնետով հաշվի հարաբերություն հաստատել, քանի որ բոլորի կողմից պահանջվում է դիմողի հետ անձնական հարցազրույց: Չնայած որ օրենքով կամ այլ իրավական ակտերով անձանցից (դիմողներից) չի պահանջվում հաշիվ հաստատելիս/բացելիս ներկա գտնվել, գնահատողների այցելած բոլոր հաստատությունները, բացառությամբ մեկի, նշեցին, որ իրենց ընդհանուր քաղաքականությամբ պահանջվում է անձի ֆիզիկական ներկայությունը գործարար հարաբերություն հաստատելիս համապատասխան փաստաթղթերը ստորագրելու համար: Իրավաբանական անձանց պարագայում պահանջվում է նաև լիազորված անձի ներկայությունը: Հարաբերությունը հաստատելուց հետո թույլատրվում է առանց առերես շփման գործառնություններ, օրինակ՝ էլեկտրոնային բանկային գործարքներ կատարել՝ օգտագործելով անհատական նույնականացման ծածկագիր և գաղտնաբառ: Ինչ վերաբերում է այլ նոր տեխնոլոգիաների, օրինակ՝ դեբետ և կրեդիտ քարտերի և կանխավճարված քարտերի օգտագործմանը, պաշտոնատար անձինք նշեցին, որ դրանց թողարկման պահին նույնպես հաճախորդի ներկայությունը պարտադիր է:

517. Այցի շրջանակներում գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունների հետ հանդիպումներում բացահայտվեց մեկ դեպք, երբ հաշիվների հետ կապված գործարար հարաբերությունները բացվել և հաստատվել էին առանց առերես շփման կատարվող գործընթացով՝ էլեկտրոնային փոստով և ֆաքսիմիլային կապով, իսկ հաճախորդի ստուգումը կատարվել էր՝ համապատասխանեցնելով ներկայացված փաստաթղթերի վրա դրված ստորագրությունները: Այդ հարաբերությունների մեծ մասը ոչ ռեզիդենտների (արտերկրում բնակվող օտարերկրացիների) հետ էին: Նշված հաստատության պաշտոնատար անձանց հետ լրացուցիչ խոսակցություններից պարզ դարձավ, որ հաստատությունը չունի հաստատված ներքին իրավական ակտեր, գործարար հարաբերություններ հաստատելիս օգտագործում է կանխիկ միջոցներ, չի ապահովում ներքին աուդիտի համարժեք ընդգրկում, վերապատրաստումներ կամ աշխատակիցների ընտրության ընթացակարգեր, և ընդհանուր առմամբ թերի է տեղեկացված «ՓԼ/ԱՖ դեմ

պայքարի մասին» վերանայված օրենքին և այլ իրավական ակտերին: Տվյալ իրադրությունը/հաստատությունը որպես այդպիսին կարող է համակարգում/ոլորտում ստեղծել անհարկի ռիսկեր և ՓԼ և ԱՖ նպատակների համար չարաշահման հնարավորություն:

3.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

Իշխանություններին առաջարկվում է.

- Արգելել ըստ ներկայացնողի բանկային գրքույկները և ավանդային սերտիֆիկատները, ինչպես նաև ըստ ներկայացնողի այլ արժեթղթերը՝ ուժը կորցրած ճանաչելով/փոփոխելով համապատասխան հոդվածները քաղաքացիական օրենսգրքում և բոլոր այլ իրավական ակտերում, որոնցով նախատեսվում կամ կարգավորվում են ըստ ներկայացնողի (վճարային) գործիքները:

- Ֆինանսական հաստատությունների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետների մասով՝ ապահովելու հետևողական և արդյունավետ իրագործումը:

- Ներդնել լրացուցիչ ուղեցույցներ՝ մասնավորեցնելով այն ողջամիտ ժամկետը, որը ֆինանսական հաստատությունները պետք է պահպանեն գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում նույնականացման տեղեկություններ ձեռք բերելիս և այդ տեղեկությունների իսկությունը ստուգելիս:

- Ֆինանսական հաստատությունների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը:

- Ֆինանսական հաստատությունների համար սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ:

- Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից իրավական ակտերով ՀՊՈՒ միջոցառումների մասով նախատեսված պարտավորությունների առավել արդյունավետ կատարումը ֆինանսական հաստատությունների կողմից՝ վերապատրաստումների կամ իրազեկության բարձրացման այլ նախաձեռնությունների միջոցով:

- Ֆինանսական հաստատությունների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ/իրականացնել լրացուցիչ վերապատրաստումներ ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերություն հաստատելիս օրենքով պահանջվող՝ հավելյալ անընդհատ մոնիտորինգի ընթացակարգերի վերաբերյալ:

- Իրավական ակտերով կամ ուղեցույցներով նախատեսել գործարար հարաբերություն հաստատելիս անձի ֆիզիկապես ներկա լինելու պահանջը: Բացի այդ, ի հավելումն ներկայումս սահմանված երկու լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրել Հաճախորդների պատշաճ ուսումնասիրության մասին Բազելյան կոմիտեի փաստաթղթի 2.2.6 բաժինը՝ նվիրված «Առանց առերես շփման հաճախորդներին»,

որով նախատեսվում են ռիսկը մեղմելու լրացուցիչ միջոցառումներ, որոնք ֆինանսական հաստատությունները կարող են դիտարկել առանց առերես շփման հաճախորդների հետ գործարար հարաբերություններ հաստատելիս:

3.2.3. Համապատասխանությունը թիվ 5-ից մինչև թիվ 8 հանձնարարականներին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.5	Մասամբ համապատասխանում է	• Ըստ ներկայացնողի (վճարային) ֆինանսական գործիքների առկայությունը, որոնք որոշ դեպքերում նմանվում են անանուն հաշիվների: • Ֆինանսական հաստատություններից չի պահանջվում. • Ընդունել ռիսկերի արդյունավետ կառավարման ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, և • ՀՊՈՒ միջոցառումներն էականության և ռիսկի հիման վրա կիրառել առկա հաճախորդների նկատմամբ և համապատասխան պարբերականությամբ իրականացնել առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություններ: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից այլ իրավական ակտերով նախատեսված պարտավորությունների ոչ բավարար/ոչ արդյունավետ կատարումը ֆինանսական հաստատությունների (հատկապես վարկային կազմակերպությունների և ոչ բանկային այլ ֆինանսական հաստատությունների) կողմից:
Հ.6	Հիմնականում համապատասխանում է	• Գնահատողների հանդիպած ֆինանսական հաստատությունների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի ընկերություններ և դրամական փոխանցումներ իրականացնողների) ոչ բավարար տեղեկացվածությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերություն հաստատելիս ՀՊՈՒ (հավելյալ) կիրառելի միջոցառումների մասին:
Հ.7	Համապատասխանում է	
Հ.8	Հիմնականում համապատասխանում է	• Արժեթղթերի ընկերություններից մեկում ապահովված չեն առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելու և բացելու դեպքում կիրառելի միջոցառումները:

3.3. Երրորդ անձինք և ներկայացված բիզնեսը (Հ.9)

3.3.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք

ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրեր երրորդ անձից անմիջապես ստանալու պահանջը (չ. 9.1), նույնականացման տվյալների ստացումը երրորդ անձանցից (չ. 9.2), երրորդ անձանց գործունեության կարգավորումը և վերահսկողությունը (Հ.23-ի, Հ.24-ի և Հ.29-ի կիրառությունը, չ. 9.3), ՖԱՓՖ-ի հանձնարարականների համարժեք կիրառությունը (չ. 9.4), ՀՊՈՒ-ի վերջնական պատասխանատվությունը (չ. 9.5).

518. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանց ընդհանուր առմամբ թույլատրվում է հաշվետվություն տրամադրող այլ անձանց, մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց կողմից հաճախորդի նույնականացման և

տեղեկությունների իսկության ստուգման արդյունքում ստացված տվյալներն օգտագործել «որպես հիմք» «հաճախորդի նույնականացման և տեղեկությունների իսկության ստուգման ժամանակ»: Այնուհանդերձ, օրենքով կամ այլ իրավական ակտերով կամ ուղեցույցներով մանրամասնեցված չէ ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրեր երրորդ անձանց միջոցով կատարելու հնարավորությունը: Երրորդ անձանց միջոցով կատարելու պայմանների/ընթացակարգերի որոշումն օրենքը թողնում է ֆինանսական հաստատություններին՝ սահմանելով, որ դա կարող է արվել «միայն հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով»:

519. Օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասում նշված «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չէ և չի համապատասխանում սուբյեկտների այն շրջանակին, որոնց տրամադրած տվյալները ՖԱԹՖ-ի սահմանման համաձայն կարող են օգտագործվել ՀՊՈՒ գործընթացի մեջ: Հայաստանյան սահմանումը չափազանց ընդգրկուն է, քանզի ներառում է երրորդ անձի ներկայացնելու իրավասություն ունեցող ցանկացած անձի, մինչդեռ «միջնորդներ» և «երրորդ անձինք» եզրույթների՝ Հ.9-ի իմաստով ՖԱԹՖ-ի տված սահմանմամբ (տես ՖԱԹՖ-ի հանձնարարականների եզրույթների բացատրական բառարան) պահանջվում է, որպեսզի այդ սուբյեկտները լինեն ֆինանսական հաստատություններ կամ ՆՈՖԳՏՄ-ներ, որոնք վերահսկվում են և համապատասխանում են 9.1-9.4 չափորոշիչներին (տես «երրորդ անձ» եզրույթի սահմանումը): Չնայած որ ՖԱԹՖ-ի հանձնարարականների եզրույթների բացատրական բառարանի համաձայն «միջնորդներ» եզրույթը ներառում է նաև «այլ հուսալի անձանց կամ կազմակերպություններին», սահմանման պահանջի համաձայն այդ անձինք/կազմակերպությունները նույնպես պետք է համապատասխանեն 9.1-9.4 չափորոշիչներին:

520. Ներկայումս գործող պահանջը թերի է նաև հետևյալ առումներով.

1) «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից իրավական ակտերով հաշվետվություն տրամադրող անձանցից չի պահանջվում ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններն անմիջապես ստանալ երրորդ անձանցից՝ ինչպես պահանջվում է 9.1 չափորոշչով,

2) Հաշվետվություն տրամադրող անձանցից չի պահանջվում համարժեք քայլեր ձեռնարկել՝ համոզվելու, որ նույնականացման տվյալների և ՀՊՈՒ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից՝ ինչպես պահանջվում է 9.2 չափորոշչով,

3) Հաշվետվություն տրամադրող անձանցից չի պահանջվում հավաստիանալ, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում, և որ այն ունի Հ.5 և Հ.10 Հանձնարարականներով նախատեսված ՀՊՈՒ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ՝ ինչպես պահանջվում է 9.3 չափորոշչով,

4) Չկան տվյալներ այն մասին, որ իրավասու մարմինները պարզել են երրորդ անձի գտնվելու վայրի երկրների թույլատրելի ցանկը՝ ինչպես պահանջվում է 9.4 չափորոշչով,

5) Չի պահանջվում նշել, որ հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը շարունակում է կրել երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունը՝ ինչպես պահանջվում է 9.5 չափորոշչով,

6) Լիազոր մարմնի կողմից չի տրվել «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացության սահմանումը:

Մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց նկատմամբ կիրառվող միջոցառումները սահմանելու պարտավորությունը ներկայումս վերապահված է հաշվետվություն տրամադրող անձանց. փոխարենը, անհրաժեշտ է վերահսկող լիազորված մարմնից պահանջել սահմանել ընդհանուր չափանիշներ՝ ապահովելու դրանց հետևողական և արդյունավետ կիրառությունը հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

Արդյունավետության վերլուծություն.

521. Գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունները նշեցին, որ ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրեր իրականացնելու կամ բիզնեսը ներկայացնելու նպատակով իրենք ներկայումս չեն ներգրավում միջնորդների կամ այլ երրորդ անձանց: Բոլորը նշեցին, որ իրենց ՀՊՈՒ գործընթացն իրականացնում են իրենք:

3.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ֆինանսական հաստատությունների պարտավորությունը՝

  - Երրորդ անձից անմիջապես ստանալու ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրերի առնչվող անհրաժեշտ տեղեկությունները (չափորոշիչներ 5.3-5.6),

  - Համարժեք քայլեր ձեռնարկելու՝ համոզվելու համար, որ նույնականացման տվյալների և ՀՊՈՒ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից, և

  - Հավաստիանալու, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում (թիվ 23, 24 և 29 Հանձնարարականներին համապատասխան), և որ այն ունի Հ.5 և Հ.10 Հանձնարարականներով նախատեսված ՀՊՈՒ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ:

- Սահմանել «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունն այնպես, որ դա համահունչ լինի ՖԱԹՖ-ի ստանդարտին, մասնավորապես՝ պահանջը սահմանափակելով միայն այն «երրորդ անձանցով», որոնք ֆինանսական հաստատություններ են կամ ՆՈՖԳՏՄ-ներ՝ սահմանման մեջ չներառելով նաև «երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց»:

- ՀՊՈՒ գործընթացի իրականացման համար ներկայացվող պայմանները բավարարող երրորդ անձի գտնվելու վայրի երկրների թույլատրելի ցանկը պարզելիս իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն առկա տեղեկություններն այն մասին, թե արդյոք այդ երկրները համարժեքորեն կիրառում են ՖԱԹՖ-ի հանձնարարականները, և

- Սահմանել պահանջ, որի համաձայն հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը շարունակում է կրել երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունը:

3.3.3. Համապատասխանությունը թիվ 9 հանձնարարականին

	Գնահա-տականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.9	Չի համա-պատաս-խանում	• Ներկայումս չի պահանջվում. • Երրորդ անձից անմիջապես ստանալ ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրերի առնչվող անհրաժեշտ տեղեկությունները, • Համարժեք քայլեր ձեռնարկել՝ համոզվելու համար, որ նույնականացման տվյալների և ՀՊՈՒ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից, և • Հավաստիանալ, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում, և որ այն ունի ՀՊՈՒ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ: • Սահմանված չէ «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունը: • Երրորդ անձի գտնվելու վայրի երկրների կողմից ՖԱԹՖ-ի հանձնարարականների համարժեք կիրառության փաստը պարզելու մեխանիզմներ չկան: Չկա պահանջ, որի համաձայն հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը կշարունակի կրել երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունը:

3.4. Ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիությունը (Հ.4)

3.4.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

522. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք, «Բանկային գաղտնիքի մասին» օրենք, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք, քրեական դատավարության օրենսգիրք, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենք:

523. Ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիությունը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթներ կատարելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու՝ իրավասու մարմինների կարողությունը կարգավորող իրավական դաշտը Հայաստանում բավական խրթին է և հատվածական: Գործում է կոնկրետ օրենք՝ «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թ. հոկտեմբերի 14-ի ՀՕ-80 օրենքը՝ դրանում կատարված տարբեր փոփոխություններով և լրացումներով հանդերձ (վերջին անգամ փոփոխվել է 2008 թ. փետրվարին, հետայսու՝ ԲԳՕ), որը սահմանում է «բանկային գաղտնիք» կազմող տեղեկատվությունը և կարգավորում բանկային գաղտնիք համարվող տեղեկատվության տրամադրումը քրեական հետապնդում իրականացնող, դատական և հարկային մարմիններին (համապատասխանաբար 10-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածներ): Օրենքը նաև ներառում է դրույթ, որը վերաբերում է «բանկերի միջև բանկային գաղտնիքի շրջանառությանը» (14-րդ հոդված), ինչպես նաև կոնկրետ հոդված, որը վերնագրված է «հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների տրամադրումը» (13[1]-րդ հոդված):

524. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը նույնպես ներառում է բանկային գաղտնիքի վրա ազդող մի քանի դրույթներ. 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է հաշվետվություն տրամադրող անձանց պարտավորությունը՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով լիազոր մարմին ներկայացնելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ՝ սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված տեղեկությունները, «այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները»: Օրենքի 10-րդ հոդվածը լիազոր մարմնին վերապահում է բավական լայն լիազորություն՝ հաշվետվություն տրամադրող անձանցից և պետական մարմիններից պահանջելու տեղեկություններ, այդ թվում՝ գաղտնիք պարունակող տեղեկություններ (բացառությամբ մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկությունների, որոնք քննարկված են թիվ 26 Հանձնարարականի վերլուծության շրջանակում): 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն լիազոր մարմինը պարտավոր է քրեական հետապնդման մարմինների հարցման հիման վրա «տրամադրել իր տրամադրության տակ առկա, այդ թվում՝ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ», եթե հարցումը համապատասխանում է որոշակի պայմանների (այսինքն՝ պարունակում է «բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածի կամ դեպքի վերաբերյալ»): Օրենքի 14-րդ հոդվածը լիազոր մարմնին հնարավորություն է ընձեռում սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, փոխադարձության հիման վրա փոխանակել տեղեկատվություն (այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող) ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ՝ որոշակի պայմանների բավարարմամբ (ապահովել տեղեկատվության համարժեք գաղտնիությունը և այդ տեղեկատվության օգտագործումը միայն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով):

525. Ի լրումն վերոհիշյալ օրենքների, ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ ստանալու՝ իրավապահ մարմինների կարողության վերաբերյալ կոնկրետ նորմեր են նախատեսված քրեական դատավարության օրենսգրքում (ՔԴՕ) և, մասնավորապես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-223՝ ընդունված 2007 թ. հոկտեմբերի 22-ին, հետայսու՝ ՕՀԳՕ): Չնայած որ առաջին հայացքից կարող է թվալ, թե նշված օրենքների համաձայն իրավապահ մարմիններն իրավասու են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ ստանալ դատարանի որոշման հիման վրա, պարզ չէ, թե արդյոք այդ իրավասությունը կիրառելի է նաև նախքան քրեական գործ հարուցելը: Ավելին, պարզ չէ, թե ինչ պայմաններով կարող է ստացվել դատարանի որոշումը, քանի որ ակնհայտ հակասություն գոյություն ունի մի կողմից ՔԴՕ-ի և ՕՀԳՕ-ի, իսկ մյուս կողմից՝ ԲԳՕ-ի միջև: Այս խնդիրներն առավել մանրամասնորեն վերլուծված են ստորև:

526. Ի վերջո, իրավական դաշտի մաս են կազմում նաև փոխըմբռնման հուշագրերը, որոնք ՖԴԿ-ն ստորագրել է ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ), գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության և պետական եկամուտների կոմիտեի միջև: Փոխըմբռնման հուշագրերով կարգավորվում է տեղեկությունների, այդ թվում՝ ֆինանսական գաղտնիք պարունակող տեղեկությունների փոխանակումը:

<u>«Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների» և «երրորդ անձանց» սահմանումն ըստ ԲԳՕ-ի</u>

527. ԲԳՕ-ի 4-րդ հոդվածով նախատեսվում է, որ «բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ

մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ»: Ուստի, բանկային գաղտնիքի հասկացությունը շատ լայն է և ներառում է նաև ՀՊՈՒ կատարելու ընթացքում բանկի ձեռք բերած փաստաթղթերը և տեղեկությունները:

528. «Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ» հասկացությունը ներառում է նաև բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի և դրանց հաճախորդների վերաբերյալ ՀՀ ԿԲ-ին հայտնի դարձած տեղեկությունները. ԲԳՕ-ի իմաստով բանկերը համարվում են «Կենտրոնական բանկի հաճախորդներ» (ԲԳՕ-ի 4-րդ հոդվածի 2-րդ մաս):

529. ԲԳՕ-ի 5-րդ հոդվածի համաձայն, «երրորդ անձ են համարվում բացի տվյալ բանկից և իր հաճախորդից, բոլոր այլ անձինք, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, բանկերի և «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարկային կազմակերպությունների, ինչպես նաև Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամը[37] «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում:

ՖԱԹՖ-ի հանձնարարականների իմպլեմենտացման արգելակումը (է. 4.1).

<u>Տեղեկություններ ստանալու՝ իրավասու մարմինների կարողությունը. ՀՀ ԿԲ և ՖԴԿ</u>

530. Չկան ՖԱԹՖ-ի հանձնարարականների արդյունավետ իմպլեմենտացումը, մասնավորապես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով տեղեկություններ ստանալու՝ ՀՀ ԿԲ-ի և ՖԴԿ-ի կարողությունն արգելակող գործոններ: ՀՀ ԿԲ-ն, որպես ֆինանսական հատվածը վերահսկող լիազոր մարմին, կարող է ստանալ ֆինանսական հաստատությունների (հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պահպանվող ցանկացած փաստաթուղթ և տեղեկություն, որ նշված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդվածում:

531. Մասնավորապես, ֆինանսական գաղտնիքի մասին նորմերը չեն խոչընդոտում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների արդյունավետ կատարումը և չեն ազդում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրենց գործառույթները հավուր պատշաճի կատարելու համար իրենց անհրաժեշտ տեղեկությունները ստանալու՝ ՀՀ ԿԲ-ի կամ ՖԴԿ-ի կարողության վրա:

532. Ինչպես նշվեց, ԲԳՕ-ով հստակորեն նախատեսվում է, որ ֆինանսական գաղտնիքը չի կարող չտրամադրվել ՀՀ ԿԲ-ին, որը ԲԳՕ-ի իմաստով «երրորդ անձ» չի համարվում: Նշվածը տարածվում է նաև ՖԴԿ-ի նկատմամբ, որը ՀՀ ԿԲ-ի կառուցվածքային ստորաբաժանում է: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իմաստով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով հստակորեն նախատեսվում է հաշվետվություն տրամադրող անձանց պարտավորությունը՝ լիազոր մարմին (այսինքն՝ ՖԴԿ-ին) ներկայացնելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունները, «այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները»: Ավելին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն լիազոր մարմինը (այսինքն՝

[37] Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամը սահմանված է նշված օրենքի 17-րդ հոդվածով՝ որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ, որի հիմնադիրը Կենտրոնական բանկն է, և որը պատասխանատու է ավանդների պաշտպանության համար:

ՖԴԿ-ն) իրավասու է հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջելու այլ տեղեկություններ, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ:

533. Ինչ վերաբերում է, մասնավորապես, ապահովագրական գաղտնիքին, ապա «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով հստակորեն նախատեսվում է ՀՀ ԿԲ-ի իրավասությունը՝ ստանալու այդ տեղեկությունները. օրենքի 117-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ ՀՀ ԿԲ-ն իրավունք ունի ապահովագրողների, վերաապահովագրողների, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձանց վերահսկողության ընթացքում ստանալու և ծանոթանալու վերջիններիս հաճախորդների վերաբերյալ տեղեկություններին, թեկուզ դրանք ապահովագրական գաղտնիք կազմեն: Այդ դրույթից զատ, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 116-րդ հոդվածով սահմանվում է, որ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվությունը Կենտրոնական բանկի կողմից վերլուծվելու արդյունքում եթե պարզվում է, որ տեղի է ունեցել ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեպք կամ փորձ, Կենտրոնական բանկն ուղղակիորեն հաղորդում է ներկայացնում քրեական հետապնդում իրականացնող համապատասխան մարմին:

<u>Տեղեկություններ ստանալու՝ իրավասու մարմինների կարողությունը. իրավապահ մարմիններ</u>

534. Ֆինանսական տեղեկություններ ստանալու՝ իրավապահ մարմինների (այսինքն՝ դատախազության, ԱԱԾ-ի, ոստիկանության և հարկային մարմինների) իրավասությունների և կարողության հետ կապված իրադրությունն առավել բարդ է և ոչ լիովին հասկանալի: Իրավապահ մարմինները կարող են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկությունները ստանալ երկու հնարավոր ճանապարհներով. ա) նրանք կարող են այդ տեղեկությունները ստանալ ՖԴԿ-ից, եթե տեղեկություններն առնչվում են ՓԼ-ին/ԱՖ-ին, կամ բ) նրանք կարող են այդ տեղեկությունները ստանալ ուղղակիորեն բանկերից՝ ԲԳՕ-ով և ՔԴՕ-ով ու ՕՀԳՕ-ով նախատեսված (և, թերևս, միմյանցից տարբերվող) ընթացակարգերով՝ իրավապահ մարմինների հետաքննական կամ նախաքննական տարբեր լիազորությունների հաշվառմամբ (որպես ՔԴՕ-ի 56-րդ հոդվածով նախատեսված «հետաքննության մարմիններ», և որպես 189-րդ և 190-րդ հոդվածներով նախատեսված «նախաքննության մարմիններ»): Նշված տարբերակներից երկրորդով սահմանվում են ընթացակարգեր և պահանջներ, որոնք ոչ բոլոր իրավապահ մարմինների համար են նույնը, և կարծես պարունակում են որոշ հակասություններ կամ անհամապատասխանություններ, որոնք ներկայացվում են ստորև:

535. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ՖԴԿ-ն պարտավոր է քրեական հետապնդման մարմինների (այսինքն՝ վերը նշված բոլոր իրավապահ մարմինների) հարցման հիման վրա «տրամադրել իր տրամադրության տակ առկա, այդ թվում՝ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ», եթե հարցումը պարունակում է «բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածի կամ դեպքի վերաբերյալ»: Դա նշանակում է, որ եթե հետաքննության կամ նախաքննության ընթացքում իրավապահ մարմնին անհրաժեշտ է ստանալ ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկություններ, այն կարող է վերջիններս պահանջել ՖԴԿ-ից/ՀՀ ԿԲ-ից՝ պայմանով, որ հարցման մեջ հիմնավորված լինի ՓԼ/ԱՖ կասկածը կամ դեպքը:

536. Համեմատելով՝ հարկ է նշել, որ ԲԳՕ-ի 13[1]-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ԿԲ-ն «կարող է» ներկայացնել «բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ» կամ հաշվետվություն տրամադրող անձանցից իր ստացած տեղեկությունների վերլուծության արդյունքները տարածելիս (նման հաղորդումները ստանում է ԱԱԾ-ն), կամ «քրեական հետապնդման մարմիններից ստացված հարցման հիման վրա» (ՔԴՕ-ի 189-րդ հոդվածի համաձայն, դրանք բոլոր իրավապահ մարմիններն են): Հետևաբար, ի տարբերություն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի, ԲԳՕ-ով (1) նախատեսվում է, որ գաղտնի տեղեկությունների տրամադրումը կամավոր է, այլ ոչ՝ պարտադիր, և (2) չի պահանջվում, որպեսզի հարցում կատարող մարմինները հիմնավորեն կասկածը կամ ՓԼ կամ ԱՖ դեպքի առկայությունը: ԲԳՕ-ի 13[1]-րդ հոդվածի կամ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածի հիման վրա իրավապահ մարմիններին տրամադրվող տեղեկությունները, սակայն, պաշտոնապես ապացույց չեն համարվում և, հետևապես, չեն կարող օգտագործվել դատարանում:

537. ՖԴԿ-ն փոխըմբռնման հուշագրեր է կնքել իրավապահ մարմինների (գլխավոր դատախազություն, ԱԱԾ, ոստիկանություն և պետական եկամուտների կոմիտե), որոնց, ի թիվս այլ պայմանների, նախատեսվում են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների՝ ՖԴԿ-ի կողմից տրամադրման կանոնները: Այդ դրույթները կարծես ավելի բարձր չափանիշ են սահմանում, քան նախատեսված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով (որը «ՓԼ կամ ԱՖ դեպքից» զատ կարող է լինել նաև «բավարար հիմնավորում հիմնավորված կասկածի վերաբերյալ»), քանի որ դրանցով կարգավորվում է «անձի բանկային հաշվի կամ գործարքի վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաև բանկային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների» տրամադրումը «**կոնկրետ քրեական գործի կամ նյութերի** կապակցությամբ ներկայացված» հարցման հիման վրա (գլխավոր դատախազություն, ԱԱԾ, ոստիկանություն): Հետաքրքիր է, որ պահանջվող պայմաններն ավելի ցածր են միայն պետական եկամուտների կոմիտեի պարագայում, որին տեղեկությունների տրամադրումը պայմանավորվում է «ՓԼ/ԱՖ հանցագործության վերլուծություն կատարելու անհրաժեշտությամբ հիմնավորված» լինելով: Նման երկակի ստանդարտ սահմանելու պատճառը պարզ չէ, ընդ որում՝ այն չի հիմնավորվում ԱԱԾ-ի հետ կնքված փոխըմբռնման հուշագրով պահանջվող պայմանով՝ հաշվի առնելով, որ ՔԴՕ-ի 190-րդ հոդվածի համաձայն ՓԼ/ԱՖ հանցագործություններ քննելու լիազորությունը վերապահված է ԱԱԾ-ին, այլ ոչ՝ պետական եկամուտների կոմիտեին:

538. Իրավապահ այն մարմինները, որոնց հետ գնահատողները հարցազրույցներ անցկացրեցին, հաստատեցին, որ ՖԴԿ-ի հետ համագործակցությունն այս ոլորտում հաջողված է, և որ իրենք սովորաբար ՖԴԿ-ից ստանում են բանկային գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկությունները, չնայած որ նրանք նշեցին, որ ՖԴԿ-ի կողմից նման տեղեկությունների տրամադրումը նախաքննության փուլում կարող է դժվարանալ, քանի որ տրամադրվող համապատասխան տեղեկությունները հասանելի կդառնան նաև կասկածյալների/մեղադրյալների պաշտպաններին (և հնարավոր է, որ վերջիններս ԲԳՕ-ով նախատեսված գաղտնիության նորմերի խախտման վերաբերյալ հայցեր ներկայացնեն դատարան):

539. Ինչպես նշվեց, իրավապահ մարմինները հնարավորություն ունեն բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները ստանալ նաև ուղղակիորեն բանկերից՝ հիմնվելով ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի և ՔԴՕ-ով նախատեսված ընթացակարգերի վրա՝ ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածի համադրությամբ: Վերջիններս որոշակիորեն արգելակում են բանկային գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու՝ իրավապահ մարմինների արդյունավետ կարողությունը. ավվելին, դրանք որոշ դեպքերում իրարամերժ են:

540. ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ բանկերը քրեական գործով «**կասկածյալ**» (ՔԴՕ-ի 62-րդ հոդվածով սահմանվում է որպես այն անձը, «որը ձերբակալվել

է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով» կամ «որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված») կամ «**մեղադրյալ**» (ՔԴՕ-ի 64-րդ հոդվածով սահմանվում է որպես այն անձը, «որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին») ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա:

541. Ուստի, ԲԳՕ-ի 10-րդ հոդվածով նախատեսված իրավասությունները կիրառելի չեն նախքան պաշտոնապես քրեական գործ հարուցելը: Առնվազն հարուցված գործի և գործով կոնկրետ կասկածյալի առկայության պահանջի պատճառով Հայաստանի գործող իրավական դաշտը թույլ չի տալիս տեղեկություններ ստանալ իրավաբանական անձանց մասին, քանզի վերջիններս Հայաստանի օրենսդրության համաձայն չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության կամ ներգրավված լինել որպես կասկածյալ կամ մեղադրյալ վերոհիշյալ օրենքի 10-րդ հոդվածի իմաստով: Ավելին, այս դրույթով թույլատրվում է տեղեկություններ ստանալ միայն «կասկածյալի» կամ «մեղադրյալի» մասին, սակայն չի նախատեսվում գաղտնիք համարվող այնպիսի տեղեկություններ ստանալու հնարավորությունը, որոնք կարող են պահանջվել ապացուցման համար, սակայն վերաբերել «կասկածյալ» կամ «մեղադրյալ» չհանդիսացող անձի:

542. Պետական եկամուտների կոմիտեի (այն է՝ հարկային մարմնի) պարագայում ԲԳՕ-ի 13-րդ հոդվածով վերապահված իրավասություններն ավելի ընդգրկուն են, քանզի ԲԳՕ-ով նախատեսվում է, որ բանկն իր հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում է ՀՀ հարկային մարմիններին միայն դատարանի ընդունած որոշման հիման վրա, ինչպես նաև իր հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա, սակայն չի պահանջվում կոնկրետ կասկածյալի կամ մեղադրյալի առկայություն:

543. Վերոհիշյալ ընթացակարգերը նախատեսված չեն այլ իրավապահ մարմինների պարագայում: ԱԱԾ-ի և ոստիկանության մասով ՕՀԳՕ-ի 14-րդ հոդվածով («օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները») նախատեսվում է (ՔԴՕ-ի 55-րդ և 57-րդ հոդվածների համադրությամբ), որ ԱԱԾ-ն և ոստիկանությունն իրավասու են թե քրեական գործի հարուցումից առաջ, թե հետաքննության փուլում դատարանի որոշման հիման վրա (ՕՀԳՕ-ի 14-րդ հոդվածի 1(15)-րդ կետ և 2-րդ և 3-րդ մասեր՝ 34-րդ հոդվածի համադրությամբ) իրականացնել «ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում»:[38] Ի տարբերություն ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի, ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածը կարծես չի սահմանափակում տեղեկությունների ստացումը միայն «կասկածյալի» կամ «մեղադրյալի» վերաբերյալ տեղեկություններով: Հետաքրքրական է այն փաստը, որ պետական եկամուտների կոմիտեն (այն է՝ հարկային մարմինը) ուղղակիորեն ներառված չէ նման միջոցառումների կատարում պահանջելու իրավունքով օժտված իրավապահ մարմինների ցանկից, որը հակասում է ԲԳՕ-ի 12-րդ հոդվածին:

544. Իրավական դաշտի վերլուծությունն ամբողջացնելու համար հարկ է նշել, որ ահաբեկչության մասով ՕՀԳՕ-ով ուղղակիորեն նախատեսվում է, որ եթե ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածով օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող

[38] ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածով դա սահմանվում է հետևյալ կերպ. «Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները»:

է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, ապա միջոցառումներն իրականացվում են նույնիսկ առանց դատարանի որոշման: Այնուհանդերձ, նման իրավիճակներում պահանջվում է, որպեսզի դատարանը միջոցառման իրականացումից հետո 48 ժամվա ընթացքում կամ հաստատի այն, կամ որոշում կայացնի այն դադարեցնելու և ձեռք բերված բոլոր տեղեկությունները և նյութերը ոչնչացնելու մասին:

545. Չնայած որ կարող է թվալ, թե ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածն իրավապահ մարմիններին վերապահում է ավելի լայն իրավասություններ, քան ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը, այդ թվում, մասնավորապես, համապատասխան տեղեկությունները դեռ քրեական գործ հարուցելուց առաջ և հետաքննության փուլում ստանալու իրավասությունը, ընդ որում՝ նաև կասկածյալից կամ մեղադրյալից զատ նաև այլ անձանց վերաբերյալ, իրավապահ մարմինների այն ներկայացուցիչները, որոնց հետ գնահատողները հանդիպեցին, կարծիք հայտնեցին, թե իրականում այդպես չէ, քանի որ դատարանը ցանկացած գործով կիրառում է ԲԳՕ-ով նախատեսված առավել սահմանափակող նորմերը և որոշումը կայացնելու համար պահանջում, որպեսզի լինի «կասկածյալ» կամ «մեղադրյալ», նույնիսկ եթե այդպիսի որոշում կայացնելու վերաբերյալ միջնորդությունը դատարանին ներկայացվել է ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածի հիման վրա:

546. Նշված սահմանափակ մեկնաբանությունը՝ պայմանավորված ՕՀԳՕ-ի և ՔԴՕ-ի նորմերի և ԲԳՕ-ի դրույթների միջև առկա ակնհայտ հակասությամբ, ըստ էության իրավապահ մարմինների համար անհնար է դարձնում. (1) բանկային գաղտնիք համարվող տեղեկություններն ուղղակիորեն ստանալ ֆինանսական հաստատություններից նախքան քրեական գործ հարուցելը, կամ (2) բանկային գաղտնիք համարվող տեղեկություններն ուղղակիորեն ստանալ հետաքննության փուլում, կամ երբ գործով դեռևս չկա կոնկրետ «կասկածյալ» կամ «մեղադրյալ»:

547. Երբ հետաքննությունն ավարտվում է և սկսվում է նախաքննության փուլը, գաղտնի տեղեկություններն ուղղակիորեն կարող են ստացվել միայն ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի հիման վրա: Ընդ որում, այսկերպ կարող են ստացվել միայն կասկածյալին կամ մեղադրյալին, սակայն ոչ՝ որևէ այլ անձի առնչվող տեղեկությունները:

548. Գնահատողները կարծում են, որ նշվածը քրեական վարույթի բոլոր փուլերում լրջորեն ազդում է ՓԼ կամ ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների գործառույթները հավուր պատշաճի կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունները ստանալու կարողության վրա: Գնահատողների հետ հանդիպումներում իրավապահ մարմինների ներկայացուցիչները հաստատեցին, որ անցյալում դա պրոբլեմ է առաջացրել հատկապես ՓԼ գործերի կապակցությամբ, որոնց շրջանակում այդ տեղեկություններն անհրաժեշտ են եղել գործը նախապատրաստելու համար, կամ հետաքննության փուլում, երբ փորձել են տեղեկություններ ստանալ կասկածյալից կամ մեղադրյալից զատ որևէ այլ անձի վերաբերյալ, կամ երբ ՖԴԿ-ից տեղեկություններ ստանալու նպատակով անհրաժեշտ է եղել «հիմնավորել կասկածը»՝ վերը նշված երկրորդ հնարավոր տարբերակի կիրառությամբ:

549. Նշվեց, որ հետաքննության փուլում դատարանները նախկինում մերժել են տեղեկությունները տրամադրելու մասին դատական որոշում կայացնելու վերաբերյալ համապատասխան միջնորդությունները՝ ԲԳՕ-ի 10-րդ հոդվածով նախատեսված պայմանների չապահովման պատճառաբանությամբ: Իրավապահ մարմինները երբևէ չեն դիմել դատարան ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածի հիման վրա նախքան քրեական գործի հարուցումը համապատասխան դատական որոշում կայացնելու միջնորդությամբ. ուստի, դեռևս առիթ չի եղել՝ հստակեցնելու քրեական վարույթի այդ փուլում ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածի և ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի հարաբերակցությունը: Իշխանությունները, սակայն,

անհողդողդ կերպով պնդեցին, որ ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածը քրեական վարույթի ցանկացած փուլում գաղտնի տեղեկություններ ստանալու լրացուցիչ իրավասություններ է վերապահում իրավապահ մարմիններին:

Ներպետական կամ միջազգային մակարդակով տեղեկատվության փոխանակումն իրավասու մարմինների միջև

550. Ինչպես նշվեց, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածը լիազոր մարմնին իրավունք է վերապահում՝ քրեական հետապնդման մարմինների հարցման հիման վրա նրանց տրամադրելու «իր տրամադրության տակ առկա, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ», եթե հարցումը համապատասխանում է որոշակի պայմանների (այսինքն՝ պարունակում է «բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածի կամ դեպքի վերաբերյալ»): Օրենքի 14-րդ հոդվածը լիազոր մարմնին հնարավորություն է ընձեռում սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, փոխադարձության հիման վրա փոխանակել տեղեկատվություն (այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող) ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ՝ որոշակի պայմանների բավարարմամբ (ապահովել տեղեկատվության համարժեք գաղտնիությունը և այդ տեղեկատվության օգտագործումը միայն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով):

551. ԲԳՕ-ն նույնպես պարունակում է կոնկրետ դրույթ (քննարկվել է վերևում), որի համաձայն ՀՀ ԿԲ-ն «կարող է» ներկայացնել «բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ» կամ հաշվետվություն տրամադրող անձանցից իր ստացած տեղեկությունների վերլուծության արդյունքները տարածելիս (նման հաղորդումները ստանում է ԱԱԾ-ն), կամ «քրեական հետապնդման մարմիններից ստացված հարցման հիման վրա»: Այդ նորմով վերահաստատվում է ՀՀ ԿԲ-ի (այսինքն՝ լիազոր մարմնի, այն է՝ ՖԴԿ-ի) իրավասությունը՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա տրամադրելու օտարերկրյա ՖՀՄ-ներին:

Տեղեկատվության փոխանակումը ֆինանսական հաստատությունների միջև

552. ԲԳՕ-ի 14-րդ հոդվածով նախատեսվում է, որ բանկերը կարող են միմյանց, վարկային կազմակերպությունների հետ փոխանակել կամ միմյանց, ինչպես նաև վարկային կազմակերպություններին տրամադրել իրենց հաճախորդների մասին տեղեկություններ, թեկուզև դրանք բանկային գաղտնիք կազմեն, սակայն միմիայն «իրենց գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ ներդրումների վերադարձելիությունն ապահովելու նպատակով»: Այնուհանդերձ, ֆինանսական հաստատությունների միջև տեղեկություններ փոխանակելու այդ կարողությունը չի վերաբերում Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ. VII-ով պահանջվող տեղեկություններին:

3.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ.

- ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները,

- Ապահովել, որպեսզի ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու՝ իրավապահ մարմինների (հատկապես ԱԱԾ-ի) իրավասությունը պայմանավորված չլինի «կասկածյալի» կամ «մեղադրյալի» առկայությամբ, քանի որ այդ պայմանը վնասում է ԱԱԾ-ի՝ որպես ՓԼ/ԱՖ գործեր քննելու լիազորությամբ օժտված մարմնի կողմից իր գործառույթների պատշաճ կատարմանը, ինչպես նաև արգելակում նման տեղեկությունների ստացումն այն գործերով, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց, կամ երբ տեղեկությունները վերաբերում են «կասկածյալից» կամ «մեղադրյալից» զատ այլ անձի,
- Փոփոխել ԲԳՕ-ն՝ ֆինանսական հաստատություններին թույլատրելով ֆինանսական գաղտնիքի համարվող տեղեկություններ փոխանակել այն դեպքերում, երբ դա պահանջվում է Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ.VII-ով:

3.4.3. Համապատասխանությունը թիվ 4 հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.4	Մասամբ համապատասխանում է	• Իրավական և արդյունավետության խնդիրներն ազդում են ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկությունները ստանալու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, հատկապես նախքան կոնկրետ կասկածյալի ի հայտ բերելը, կամ երբ անհրաժեշտ տեղեկությունները վերաբերում են կասկածյալից զատ որևէ այլ անձի. ուստի, դա կարող է արգելակել արդյունավետ իմպլեմենտացումը: • Ֆինանսական գաղտնիքի մասին Հայաստանի օրենքները թույլ չեն տալիս ֆինանսական հաստատությունների միջև տեղեկություններ փոխանակել այն դեպքերում, երբ դա պահանջվում է Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ.VII-ով:

3.5. Տեղեկատվության պահպանումը և դրամական փոխանցումների վերաբերյալ կանոնները (Հ.10 և ՀՀ.VII)

3.5.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք

553. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածը վերաբերում է «տեղեկատվության պահպանման» պահանջներին: Այդ հոդվածի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձինք լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետք է պահպանեն առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները և գործարար թղթակցության տվյալները՝ գործարար հարաբերության ավարտից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար.

- գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները, որոնք հնարավորություն կտան վերականգնելու գործարքի (գործարար հարաբերության) իրական պատկերը՝ գործարքի կատարումից (գործարար հարաբերության դադարեցումից) հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար:

554. Օրենքի 20-րդ հոդվածում նշված՝ «լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերը» նկարագրված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 11-րդ հոդվածում, որով, ի թիվս այլ պահանջների, սահմանվում են նաև ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից փաստաթղթերի (տեղեկությունների) հաշվառմանն ու

պահպանմանը ներկայացվող նվազագույն կանոնները (««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը և «Գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ-ի 2009 թ. սեպտեմբերի 9-ի որոշում, հետայսու՝ «Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ»):

555. Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում վերահաստատվում է, որ ֆինանսական հաստատությունները պետք է հաշվառեն և պահեն «հաճախորդի նույնականացման տվյալները՝ օրենքով սահմանված կարգով» և «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները՝ օրենքով սահմանված կարգով» (44(1)(2) կետ):

556. Հաճախորդի նույնականացման տվյալները նկարագրվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում և ներառում են հետևյալը.

i) Ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթղթի, ինչպես նաև բացառապես լուսանկարով՝ պետական համապատասխան իրավասու մարմնի տված այլ վավեր պաշտոնական փաստաթղթերի հիման վրա պահանջվող տեղեկատվությունն առնվազն պետք է ներառի անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրը, ծննդյան ամսաթիվը, վայրը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ,

ii) իրավաբանական անձանց համար պահանջվող տեղեկատվությունը պետք է առնվազն ներառի իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

557. Ոչ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով, ոչ Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ չի սահմանվում «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների» հասկացությունը: Իշխանությունները բացատրեցին, որ այդ եզրույթը բխում է քաղաքացիական օրենսգրքից, մասնավորապես՝ 448-րդ հոդվածից, որում նշվում են պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ հիմնական դրույթները: Պարզ չէ, սակայն, թե այդ դրույթներն ինչքանով կարող են կիրառելի լինել պայմանագիր չհանդիսացող գործարքների դեպքում տեղեկատվության պահպանման նպատակով գործարքի պայմանները նույնականացնելու համար:

Տեղեկատվության պահպանումը և գործարքի մասին տեղեկատվության «վերականգնումը» (չ. 10.1 և 10.1.1).

558. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1(2)-րդ մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է տեղեկատվություն պահպանել «գործարքի հիմնական տվյալների վերաբերյալ» գործարքի կատարումից (գործարար հարաբերության դադարեցումից) հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար: Չնայած որ տվյալ հոդվածում այդպիսի բան ուղղակիորեն նշված չէ, իշխանությունները նշեցին, որ կոնկրետ հղման բացակայության դեպքում պահանջը տարածվում է բոլոր տեսակի՝ թե ներպետական, թե միջազգային գործարքների նկատմամբ:

Նույնականացման տվյալների, հաշիվների վերաբերյալ փաստաթղթերի և գործարար նամակագրության տեղեկատվության պահպանումը (չ. 10.2).

559. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1(1)-ին մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է տեղեկատվություն պահպանել հաճախորդի նույնականացման տվյալների վերաբերյալ: Դա ներառում է նաև հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները և գործարար թղթակցության տվյալները՝ գործարար հարաբերության ավարտից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար:

Տեղեկատվության ժամանակին տրամադրումն իրավասու մարմիններին (չ. 10.3).

560. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նաև սահմանվում է, որ այդ օրենքով պահանջվող և հաշվետվություն տրամադրող անձի կողմից պահպանվող տեղեկատվությունը պետք է բավարար լինի լիազոր մարմնի կողմից կամ օրենքով սահմանված դեպքերում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից հարցվող գործարքների (գործարար հարաբերությունների) վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տրամադրման համար: Այդ պարտավորությունը մասնավորեցվում է Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 39-րդ կետով, որով հստակեցվում է, որ հաշվառման և պահպանման ենթակա տեղեկատվությունը պետք է հավաքագրվի «այնպիսի եղանակով, որը կապահովի հետագայում դրա օգտագործումը որպես ապացույց»: Իշխանությունները հղում արեցին քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի այն նորմերին, որոնցով սահմանվում է, թե ինչը և ինչ տեսքով կարող է համարվել «ապացույց»:

Արդյունավետության վերլուծություն.

561. Գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունները տեղյակ էին «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից այլ իրավական ակտերով նախատեսված՝ տեղեկատվության պահպանման պարտավորություններին: Պաշտոնատար անձինք (բանկերի, արժեթղթերի ընկերությունների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների) նշեցին, որ պահպանվող փաստաթղթերը պրակտիկայում ներառում են հաճախորդի նույնականացման գործընթացում ստացված փաստաթղթերի կրկնօրինակները (ֆիզիկական անձանց դեպքում (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ)՝ հաշիվ բացելու մասին դիմումի, անձնագրի, զինվորական գրքույկի, սոցիալական ապահովության քարտի, բնակության վայրը և աշխատանքի վայրը հաստատող փաստաթղթերի, կոմունալ վճարումների ստացականների կրկնօրինակները, իսկ իրավաբանական անձանց դեպքում (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ)՝ հաշիվ բացելու մասին դիմումի, կանոնադրության, պետական գրանցման վկայականի, հիմնադիր պայմանագրի, նոտարական կարգով հաստատված փաստաթղթերի, լիազորված անձանց լիազորագրերի կրկնօրինակները, տեղեկություններ շահառուի (-ների), գլխավոր գործադիր տնօրենների և տնօրենների մասին՝ նրանց անձնագրերի և սոցիալական ապահովության քարտերի կրկնօրինակներով հանդերձ), գործարքների պատմության մասին տվյալներ, հաճախորդներին ուղարկած և հաճախորդներից ստացված նամակագրության (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի և ֆաքսի հաղորդագրությունների) կրկնօրինակները, գործարքի արժույթի վերաբերյալ տեղեկություններ և պայմանագրերի կրկնօրինակներ: Դրամական փոխանցումներ իրականացնողների և արտարժույթի փոխանակման կետերի պաշտոնատար անձինք նշեցին, որ հաշիվների վերաբերյալ իրենց կողմից պահպանվող փաստաթղթերից են միայն անձնագրերը, զինվորական գրքույկները և սոցիալական ապահովության քարտերը, քանի որ իրենք գործարար հարաբերություններ չունեն իրավաբանական անձանց հետ: Այդ հանդիպումներից և ստացված պատասխաններից տպավորություն է ստեղծվում, որ Հայաստանում ֆինանսական հաստատությունները բավարար չափով պահպանում են տեղեկատվություն:

562. Բացի այդ, պաշտոնատար անձինք նշեցին, որ ֆինանսական և ոչ ֆինանսական ողջ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԿԲ-ին, և որ վերջինս առանց սահմանափակումների կարող է ստանալ ցանկացած տեղեկատվություն և հանդիպել ցանկացած աշխատակցի հետ («Բանկային գաղտնիքի մասին» օրենքով պաշտպանված ֆինանսական տեղեկատվության ստացման վերաբերյալ վերլուծությունը տես Հ.4-ին նվիրված բաժնում): Ինչ վերաբերում է ՖԴԿ-ին, ապա ֆինանսական հաստատություններից տեղեկատվություն ստանալու անհրաժեշտության դեպքում հարցումը երբեմն ներկայացվում է ՀՀ ԿԲ-ի վերահսկողության վարչության միջոցով: ՀՀ ԿԲ-ից և ՖԴԿ-ից բացի այլ իրավասու մարմինները պարտավոր են տեղեկատվություն ստանալու համար ձեռք բերել և ներկայացնել դատարանի որոշում (այնուհանդերձ, ինչպես քննարկվում է Հ.4-ին նվիրված բաժնում, իրավապահ մարմինները կարող են ստանալ այդ տեղեկատվությունը ՖԴԿ-ի միջոցով՝ հիմնվելով առկա իրավական նորմերի և այնտեղ նկարագրված փոխըմբռնման հուշագրերի վրա: Այդ տեղեկությունները չեն կարող դատարանում օգտագործվել որպես ապացույց:)

VII հատուկ հանձնարարական

Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք

Դրամական փոխանցումը կատարողի վերաբերյալ տեղեկությունների ստացումը (չ. 5.2-ի և 5.3-ի կիրառությունը Հ.5-ի շրջանակում, չ.VII.1).

563. Ինչպես արդեն քննարկվել է սույն հաշվետվությունում, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է հաճախորդին նույնականացնելու՝ հաշվետվություն տրամադրող անձանց պարտավորությունը: Նախատեսվում է նաև, որ հաճախորդի հետ որևէ գործարար հարաբերություն կարող է հաստատվել կամ միանգամյա գործարք կնքվել միայն հաշվետվություն տրամադրող անձանց կողմից նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկությունները) ստանալուց և դրանց իսկությունն ստուգելուց հետո: Հաշվետվություն տրամադրող անձինք կարող են ձեռք բերել սույն օրենքով նույնականացման համար պահանջվող տեղեկությունները և ստուգել դրանց իսկությունը նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ ժամկետում, եթե արդյունավետորեն կանխարգելված է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը, և դա անհրաժեշտ է բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:

564. Բացի այդ, նույն հոդվածի 2(2)-րդ մասով, որը վերաբերում է դրամական փոխանցումներին, հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է նույնականացնել իրենց հաճախորդներին և ստուգել նրանց ինքնությունը՝ իրավասու աղբյուրներից ստացված արժանահավատ փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության հիման վրա, եթե կատարվում է միանգամյա գործարք, այդ թվում՝ ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկին համարժեք դրամը կամ արտարժույթը, եթե խստացնող այլ դրույթ սահմանված չէ այլ իրավական ակտերով (գնահատող առաքելության այցի դրությամբ այդ ցուցանիշը հավասար էր մոտ 1,000 եվրոյի): Այնուհանդերձ, հաշվի առնելով լողացող փոխարժեքը, սահմանված նվազագույն շեմը որոշ դեպքերում կարող է չհամապատասխանել ստանդարտին:

565. Բացի այդ, նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ Ֆինանսական հաստատությունները դրամական փոխանցումներ իրականացնելիս նույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով պետք է պարզեն և ստուգեն փոխանցումներ կատարողների ինքնությունը: Ինքնությունը պարզելու և ստուգելու նպատակով պետք է պահանջվեն և պահպանվեն փոխանցում կատարողի վերաբերյալ

հետևյալ տեղեկությունները. անունը, ազգանունը, հաշվի համարը (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը) և անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

Փոխանցումը կատարողի մասին տեղեկությունների ներառումն անդրսահմանային դրամական փոխանցման փաստաթղթերում (չ. VII.2), փոխանցումը կատարողի մասին տեղեկությունների ներառումը ներպետական դրամական փոխանցման փաստաթղթերում (չ. VII.3), փոխանցում կատարողի մասին տեղեկությունների պահպանումը (չ.VII.4).

566. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվությունը, ներառյալ՝ փոխանցումը կատարողի անունը, ազգանունը, հաշվի համարը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները, պետք է ներառվեն փոխանցմանն ուղեկցող վճարման հանձնարարականում: Պահանջը կիրառելի է և ներպետական, և անդրսահմանային դրամական փոխանցումների նկատմամբ: Օրենքը և հարակից այլ իրավական ակտերը չեն անդրադառնում փաթեթային փոխանցումների խնդրին, չնայած որ վերջիններիս համար վերոհիշյալ պահանջից բացառություններ նախատեսված չեն: Որոշ բացառություններ, սակայն, նախատեսված են նույն հոդվածի 5-րդ մասով, որի համաձայն այդ հոդվածով նախատեսված պարտավորությունները չեն կիրառվում. i) ֆինանսական հաստատությունների միջև իրենց անունից կատարվող փոխանցումների նկատմամբ (այսինքն, և ֆինանսական հաստատությունը և փոխանցումը կատարողն է, և ստացողը), և ii) կրեդիտային կամ դեբետային քարտերով իրականացվող գործարքների նկատմամբ, եթե գործարքի պայմաններում առկա է այդ քարտերի համարների վերաբերյալ տեղեկատվություն: Նշված բացառությունները համահունչ են Մեթոդաբանության մեջ թվարկված վճարումների տեսակներին, որոնց նկատմամբ կիրառելի չէ ՀՀ.VII-ը:

567. Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է պահպանել նույն հոդվածով սահմանված և նույնականացման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև հաշվի (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարի) վերաբերյալ տվյալներն ու գործարար նամակագրությունը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում (այսինքն՝ գործարար հարաբերության դադարեցումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար):

Ռիսկերի վրա հիմնված ընթացակարգեր այն դրամական փոխանցումների համար, որոնք չեն ուղեկցվում փոխանցումը կատարողի մասին տեղեկություններով (չ. VII.5).

568. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ դրամական փոխանցումներ իրականացնող հաշվետվություն տրամադրող անձինք պետք է մերժեն դրամական փոխանցման ցանկացած պահանջ, եթե բացակայում է փոխանցումը կատարողի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև պետք է մերժեն դրամական փոխանցման ստացումը, եթե դրամական փոխանցումը չի պարունակում օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով պահանջվող՝ փոխանցումը կատարողի վերաբերյալ տեղեկատվությունը: Այդ դեպքերի վերաբերյալ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է նաև կասկածելի գործարքի մասին հաշվետվություն տրամադրել լիազոր մարմնին:

Պահանջների բավարարման մոնիտորինգը (չ. VII.6) և պատժամիջոցների կիրառությունը (չ. VII.7. չ.17.1–17.4-ի կիրառությունը).

569. Սույն հանձնարարականի պահանջների բավարարմանն ուղղված օրենքների և այլ իրավական ակտերի կատարումը դիտարկվում է ՀՀ ԿԲ-ի տեղերում ստուգումների

միջոցով: Պատժամիջոցներ կարող են կիրառվել Հ.17-ին նվիրված բաժնում նկարագրված ընթացակարգերին համապատասխան:

Արդյունավետության վերլուծություն.

570. Հայաստանում դրամական փոխանցումներ իրականացնելու համար ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված ֆինանսական հաստատության միակ տեսակը բանկերն են: Բանկերի պաշտոնատար անձանց հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դրամական փոխանցումները կատարվում են անհատապես՝ փոխանցումների «ՍՎԻՖԹ» համակարգով: Ուստի, փաթեթային ֆայլերի հասկացությունը հայաստանյան համատեքստում կիրառելի չէ: «ՍՎԻՖԹ» համակարգում բանկերից պահանջվում է լրացնել բոլոր պարտադիր դաշտերը, ներառյալ փոխանցումը կատարողի մասին տեղեկությունները և վճարման հրահանգները: Պաշտոնատար անձինք նշեցին, որ դաշտերը դատարկ թողնելու կամ «ՍՎԻՖԹ» համակարգի հրահանգներին համապատասխան չլրացնելու դեպքում համակարգն ինքնաբերաբար հայտնաբերում է պակասող տեղեկությունները և մերժում փոխանցման կատարումը:

571. Բանկերի պաշտոնատար անձինք նշեցին, որ առանց փոխանցումը կատարողի մասին բավարար տեղեկատվության փոխանցում ստանալու դեպքում պրակտիկայում փոխանցումը մինչև մեկ ամիս ժամկետով կասեցվում է՝ մինչև լրացուցիչ տեղեկություններ ստանալը (այդ ընթացքում դրամական միջոցները չեն վճարվում ստացողին), իսկ այդ ժամկետում տեղեկությունները չստանալու դեպքում փոխանցումը մերժվում և հետ է ուղարկվում փոխանցումը կատարած հաստատությանը:

572. ՀՀ ԿԲ-ի բանկային վերահսկողության վարչության պաշտոնյաների հետ զրույցներից պարզ դարձավ նաև, որ դրամական փոխանցումների բնագավառը ստուգվում է տեղերում անցկացվող ստուգումների շրջանակում, և որ խնդիրներ չեն հայտնաբերվել:

Լրացուցիչ տարրը. նվազագույն շեմի պահանջների վերացումը (չ. VII.8 և չ. VII.9).

573. Չկա. սահմանված է նվազագույն շեմ:

3.5.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում կամ պարտադիր կատարման ենթակա այլ ուղենիշներում հստակեցնել «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» (որոնց նկատմամբ տարածվում են տեղեկություններ պահպանելու պահանջները) հասկացությունն այն դեպքի համար, երբ գործարքը պայմանագիր չէ,

- Օրենքով կամ այլ իրավական ակտերով պահանջել, որպեսզի հաճախորդի նույնականացման համար սահմանվող՝ դրամական փոխանցման նվազագույն շեմի գումարը համարժեք լինի 1,000 եվրոյի/ԱՄՆ դոլարի: Այդկերպ, հաշվի առնելով փոխարժեքի լողացող բնույթը, հաշվետվություն տրամադրող անձինք կարող են ապահովել նվազագույն շեմի համապատասխանությունը ստանդարտին:

3.5.3. Համապատասխանությունը թիվ 10 հանձնարարականին և VII հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.10	Հիմնականում համապատաս-	• Չկան ուղենիշներ, որոնցով «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» հասկացության կապակցությամբ կպարզաբանվեր, թե որ պայմանների նկատմամբ են տարածվում տեղեկությունների պահպանման պահանջները գործարքի՝ պայմանագիր չլինելու դեպքում:

	խանում է	
ՀՀ.VII	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• Դրամական փոխանցումների համար սահմանված նվազագույն շեմը չի համապատասխանում ստանդարտին (նվազագույն շեմը փոփոխվում է՝ կախված արտարժույթի փոխարժեքներից):

3.6. Գործարքների և հարաբերությունների մոնիտորինգը (Հ.11 և 21)

3.6.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

Առանձնակի ուշադրություն դարձնել բարդ, անսովոր մեծ գործարքներին (չ. 11.1).

574. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով հաշվետվություն տրամադրող բոլոր անձանցից, այդ թվում՝ ֆինանսական հաստատություններից, պահանջվում է լրացուցիչ դիտանցում իրականացնել բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:

Բարդ և անսովոր գործարքների ուսումնասիրությունը (չ. 11.2).

575. Չնայած այդ մասին հստակորեն և ուղղակիորեն ամրագրված նորմի բացակայությանը, իշխանությունները նշեցին, որ իրականացնելով բոլոր բարդ և անսովոր մեծ գումարով գործարքների լրացուցիչ դիտանցում, ինչպես պահանջվում է վերը նշված 8-րդ հոդվածով, ֆինանսական հաստատություններն անուղղակիորեն հնարավորին չափ ուսումնասիրում են այդ գործարքների նախադրյալները և նպատակը: Ստորև վերլուծված է բացահայտումները գրավոր ձևակերպելու՝ այս չափորոշչով նախատեսվող պահանջը:

Ուսումնասիրությունների բացահայտումները պահպանելը (չ. 11.3).

576. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձինք, այդ թվում՝ ֆինանսական հաստատությունները, պարտավորեցվում են գործարար հարաբերությունը դադարեցնելուց կամ գործարքը կատարելուց հետո առնվազն 5 տարի, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում ավելի երկար ժամկետով պահպանել բարդ և անսովոր մեծ գումարով գործարքների (գործարար հարաբերությունների), ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքների (գործարար հարաբերությունների) տվյալները: Իշխանությունները նշեցին, որ այդ պահանջը կիրառվում է վերոհիշյալ բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքների դիտանցման արդյունքում ստացվող տեղեկությունների և իրականացվող ուսումնասիրությունների նկատմամբ: Հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է այդ տվյալները լիազոր մարմնի հարցման հիման վրա տրամադրել վերջինիս, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տվյալների տրամադրումը հակասում է գաղտնիության վերաբերյալ պահանջներին: Այնուամենայնիվ, ամրագրված չէ հստակ և ուղղակի պահանջ, որի համաձայն ֆինանսական հաստատությունները պարտավոր կլինեին բացահայտումները պահպանել առնվազն հինգ տարի՝ անհրաժեշտության դեպքում աուդիտորներին տրամադրելու նպատակով:

Արդյունավետության վերլուծություն.

577. Օրենքով սահմանվում է հաշվետվություն տրամադրող անձանց, այդ թվում՝ ֆինանսական հաստատությունների ընդհանուր պարտավորությունը՝ ուշադրություն

դարձնելու բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն: Պրակտիկայում, սակայն, ոչ բանկային ֆինանսական հաստատությունների մեծ մասն իրենց ջանքերը հիմնականում կենտրոնացնում են մեծ գործարքների դիտանցման ուղղությամբ՝ սահմանված 20 կամ 50 միլիոն դրամի նվազագույն շեմը գերազանցող բոլոր գործարքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու իրենց պարտավորության կատարումն ապահովելու, բայց ոչ՝ սույն հանձնարարականի պահանջները բավարարելու նպատակով: Պաշտոնատար անձանցից մի քանիսը որպես այս պահանջի բավարարման հիմք ուղղակիորեն նշեցին «օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները» և ՀՀ ԿԲ-ի տրամադրած՝ «օֆշորային պետությունների ցանկը»: Բացառությամբ մեկ բանկի, բանկերի պաշտոնատար անձինք նշեցին, որ իրենց ներքին ակտերն արտացոլում են այս պահանջը և ամրագրում անսովոր այդ գործարքները հավուր պատշաճի հայտնաբերելու, վերլուծելու և փաստաթղթավորելու ուղղությամբ իրենց հաստատությունների կողմից իրականացվող գործընթացը: Պաշտոնատար անձանցից մի քանիսը նշեցին նաև «ՄԱԿ-ի հրապարակած ահաբեկիչների ցանկի» մասին՝ որպես լրացուցիչ գործիք այդ գործարքները հայտնաբերելու համար: Ըստ այդմ, տպավորություն է ստեղծվում, որ գնահատողների այցելած ոչ բանկային ֆինանսական հաստատությունների մեծ մասին անհրաժեշտ է լրացուցիչ ուղղորդում և վերապատրաստում այս ոլորտում նրանց գիտելիքների մակարդակը բարձրացնելու և անսովոր գործարքների հետ աշխատելու հմտությունները բարելավելու համար, քանի որ այս գործընթացը կարծես հիմնականում պայմանավորվում է նվազագույն շեմի պահանջների ցանկով, օֆշորային պետությունների ցանկով և ՄԱԿ-ի հրապարակած ահաբեկիչների ցանկով, բայց ոչ՝ հարաբերության համեմատ կամ կոնկրետ հաճախորդի ռիսկայնության մակարդակի համեմատ գործարքների նշանակությամբ:

Առանձնակի ուշադրություն դարձնել այն պետություններին, որոնք բավարար չափով չեն կիրառում ՖԱԹՖ-ի հանձնարարականները (չ. 21.1 և 21.1.1).

578. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է հաշվետվություն տրամադրող անձանց, այդ թվում՝ ֆինանսական հաստատությունների պարտավորությունը՝ հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու այն անձանց (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունների) հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ միանգամյա գործարք կնքելիս, որոնք բնակվում (գտնվում) են օտարերկրյա պետություններում կամ տարածքներում, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները:

579. Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 5-րդ գլխի համաձայն, վերոհիշյալ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն նույնականացված անձանց հետ գործարար հարաբերությունները և գործարքները համարվում են «բարձր ռիսկային»: Նույն գլխի 22-րդ կետով որպես այդպիսին սահմանվում են «բարձր ռիսկի չափանիշները և դրանց որոշման կարգը»: Մասնավորապես, նշվում է, որ բարձր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները. i) օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) իրավաբանական անձ կամ բնակվող ֆիզիկական անձ հաճախորդը, ii) հաճախորդի գործարար հարաբերության կամ միանգամյա գործարքի կապն այնպիսի պետությունների (տարածքների) հետ (ըստ լիազոր մարմնի և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող ցանկերի), որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից հրապարակված այն երկրների հետ, որոնց նկատմամբ կիրառվում են պատժամիջոցներ, և iii) հաճախորդի բնակվելը (գտնվելը) սույն կետի 2-րդ ենթակետում նշված պետություններում (տարածքներում): Վերը թվարկված

չափանիշների և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացնել հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրություն: Հավելյալ ուսումնասիրության խնդիրներին անդրադառնում է Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 8-րդ գլխի 34-րդ կետը: Մանրամասները ներկայացված են սույն հաշվետվությունում՝ թիվ 5 հանձնարարականի շրջանակում չ. 5.8-ին նվիրված բաժնում:

580. Ինչ վերաբերում է այնպիսի արդյունավետ մեխանիզմների առկայությանը, որոնք կապահովեն ֆինանսական հաստատությունների իրազեկումն այլ երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի թերությունների վերաբերյալ առկա մտահոգությունների մասին, ապա «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ լիազոր մարմինը սահմանում և թարմացնում է սույն հոդվածի 1-ին մասում նշված պետությունների կամ տարածքների ցանկը: Այս հոդվածով սահմանված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով ՖԴԿ-ն հրապարակում և իր հրապարակային դոմեյնում (կայքում) տեղադրում է հղումներ ՖԱԹՖ-ի թողարկած նախազգուշացումներին և ահաբեկչության հետ կապված անձանց և կազմակերպությունների ցանկին, որը հրապարակվում է UNCTC-ի կողմից: Գնահատողների այցելած ֆինանսական հաստատություններից շատերը նշեցին, որ իրենք կարողանում են ՖԴԿ-ի կայքից, մասնավորապես՝ «Օգնություն կազմակերպություններին» հղման միջոցով ձեռք բերել օֆշորային տարածքների ցանկերը, ինչպես նաև գտնել հղումները ՓԼ/ԱՖ կանխարգելմամբ զբաղվող այլ միջազգային կազմակերպությունների կայքերին: Վերոհիշյալ հղումները ֆինանսական հաստատություններին զգոնացնում են այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի վերաբերյալ առկա և սպասվող մտահոգությունների և թերությունների մասին: Հրապարակվել և ֆինանսական հաստատություններին ուղարկվել է նաև օֆշորային տարածքների ցանկը:

581. «Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցով» (հետայսու՝ «ՌՀՄ ուղեցույց») օրինակների տեսքով ներկայացվում են հետևյալ չորս գործոններ, որոնք կարող են ազդակ հանդիսանալ պետությունը բարձր ռիսկային համարելու համար.

- գործարքի մեջ ներգրավված է երկիր, որի նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի կողմից սահմանված արգելքներ, պատժամիջոցներ կամ նմանատիպ այլ միջոցառումներ,
- գործարքի մեջ ներգրավված է երկիր, որտեղ, հավաստի աղբյուրների կողմից (օրինակ՝ ՖԱԹՖ-ի, ԱՄՀ-ի, Համաշխարհային Բանկի և էգմոնտ խմբի) հրապարակված տվյալների համաձայն, ոչ պատշաճ մակարդակով են կազմակերպված կամ կիրառված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքները, ստանդարտները և կարգավորումը,
- գործարքի մեջ ներգրավված է երկիր, որտեղ, հավաստի աղբյուրների կողմից (օրինակ՝ Transparancy International, GRECO, Doing business, BEEPS և այլն) հրապարակված տվյալների համաձայն, կոռուպցիան և հանցավոր գործունեությունը հասնում են մեծ ծավալների,
- գործարքի մեջ ներգրավված է երկիր, որը, հավաստի աղբյուրների կողմից (օրինակ՝ տարբեր երկրների անվտանգության ծառայություններ, ՁԼՄ-երում հրապարակումներ) հրապարակված տեղեկությունների համաձայն, օժանդակում է ահաբեկչության ֆինանսավորմանը, կամ որտեղ առավել հաճախ են արձանագրվում ահաբեկչության դեպքերը:

582. Ուղեցույցի մեջ նաև նշվում է, որ յուրաքանչյուր ֆինանսական հաստատություն կարող է, ելնելով իր փորձից և գործառնական առանձնահատկություններից, որպես բարձր

ռիսկային դասակարգել այնպիսի երկիր կամ աշխարհագրական տարածք, որը ներառված չէ վերը թվարկված չափորոշիչների շարքում:

ՖԱԹՖ-ի հանձնարարականները բավարար չափով չկիրառող պետություններից կատարվող և ակնհայտ տնտեսական կամ տեսանելի օրինական նպատակ չհետապնդող գործարքների ուսումնասիրությունը (չ. 21.2).

583. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է ֆինանսական հաստատությունների ընդհանուր պարտավորությունը՝ հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու այն անձանց (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունների) հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ միանգամյա գործարք կնքելիս, որոնք բնակվում (գտնվում) են օտարերկրյա պետություններում կամ տարածքներում, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները: Բացի այդ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով ֆինանսական հաստատություններից պահանջվում է լրացուցիչ դիտանցում իրականացնել որոշակի գործարքների, այդ թվում՝ անսովոր պայմաններով գործարքների նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն: Այնուհանդերձ, այդ պահանջն ուղղակիորեն վերաբերում է բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքներին, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքներին, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն, բայց ոչ՝ ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքներին: Ընդհանուր պարտավորությամբ, որպես այդպիսին, ֆինանսական հաստատություններից չի պահանջվում. i) հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրել ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, ii) գրավոր փաստաթղթավորել բացահայտումները, և iii) արդյունքները գրավոր տրամադրել իրավասու մարմիններին և աուդիտորներին: Ուստի, օրենքն այդ առումներով թերի է:

ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կա ոչ բավարար չափով կիրառող պետությունների նկատմամբ սեփական նախաձեռնությամբ պատշաճ միջոցառումներ իրականացնելու կարողությունը (չ. 21.3).

584. Իշխանությունները ներդրել են պատշաճ միջոցառումներ, որոնք կարող են սեփական նախաձեռնությամբ իրականացնել այն դեպքում, երբ որևէ պետություն չի կիրառում կամ ոչ բավարար չափով է կիրառում ՖԱԹՖ-ի հանձնարարականները, այդ թվում՝ հաճախորդներին որպես բարձր ռիսկային ճանաչելը, որի դեպքում ֆինանսական հաստատությունները պարտավոր են նրանց նկատմամբ իրականացնել հավելյալ պատշաճ ուսումնասիրություն և դիտանցել այդպիսի պետություններից կատարվող գործարքները, ինչպես նաև՝ ֆինանսական հաստատություններին նախազգուշացման նամակներ ուղարկելն այն պետությունների մասին, որոնք ՖԱԹՖ-ի կողմից ճանաչվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում էական թերություններ ունեցող և մտահոգության տեղիք տվող պետություններ:

Արդյունավետության վերլուծություն.

585. Օրենքներով և այլ իրավական ակտերով բոլոր ֆինանսական հաստատություններից պահանջվում է հավելյալ ուսումնասիրություն իրականացնել այն անձանց, գործարար հարաբերությունների և գործարքների նկատմամբ, որոնք բնակվում (գտնվում) են ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ ոչ բավարար չափով կիրառող պետություններում: Ֆինանսական հաստատությունների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ

պրակտիկայում նրանք օգտագործում են «օֆշորային պետությունների» ցանկը, ահաբեկչական գործունեության հետ կապված անձանց կամ կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի կողմից հրապարակվող ցանկը, ինչպես նաև մտահոգության տեղիք տվող պետությունների (այդ թվում՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում հայտնաբերված թերություններ ունեցող պետությունների) վերաբերյալ ՖԴԿ-ից ստացվող նախազգուշական նամակները՝ որպես ՖԱԹՖ-ի կողմից նշված՝ նույնականացման գործիք և հնարավոր համընկնումների նկատմամբ հավելյալ պատշաճ ուսումնասիրություն անցկացնելու ազդակ:

3.6.2. Առաջարկություններ.

Իշխանություններին առաջարկվում է.

Հ.11

- Ֆինանսական հաստատությունների համար սահմանել հստակ և ուղղակի պահանջ՝ հնարավորինս ուսումնասիրելու բարդ, անսովոր մեծ գործարքների և տնտեսական կամ այլ իրավաչափ ակնհայտ նպատակ չունեցող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը՝ ինչպես պահանջվում է սույն հանձնարարականով,
- Սահմանել պահանջ, որի համաձայն բարդ և անսովոր մեծ գործարքների ուսումնասիրությունների բացահայտումները կպահպանվեն առնվազն հինգ տարի՝ անհրաժեշտության դեպքում նաև աուդիտորներին տրամադրելու համար,
- Իրականացնել լրացուցիչ վերապատրաստում, հատկապես ոչ բանկային ֆինանսական հաստատությունների համար, որպեսզի առանձնակի ուշադրություն դարձվի անսովոր, մեծ և բարդ համարվող բոլոր գործարքներին՝ անկախ օֆշորային ցանկերից և ՄԱԿ-ի հրապարակած ցանկերից:

Հ.21

- Ֆինանսական հաստատությունների համար սահմանել հետևյալ պահանջը. i) հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրել ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, ii) փաստաթղթավորել բացահայտումները, և iii) արդյունքները գրավոր տրամադրել իրավասու մարմիններին և աուդիտորներին:

3.6.3. Համապատասխանությունը թիվ 11 և 21 հանձնարարականներին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.11	Հիմնականում համապատասխանում է	• Ֆինանսական հաստատությունների համար սահմանված չէ հստակ և ուղղակի պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու բարդ, անսովոր մեծ գործարքների և տնտեսական կամ այլ իրավաչափ ակնհայտ նպատակ չունեցող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը: Նախատեսված չէ պահանջ՝ բարդ և անսովոր մեծ գործարքների ուսումնասիրությունների բացահայտումները պահպանվելու առնվազն հինգ տարի՝ անհրաժեշտության դեպքում նաև աուդիտորներին տրամադրելու համար:
Հ.21	Հիմնականում համապատասխանում է	• Չկան պահանջներ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, փաստաթղթավորելու բացահայտումները, և արդյունքները տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին:

3.7. Կասկածելի գործարքների մասին և այլ հաշվետվությունները (Հ.13-14, 19, 25 և ՀՀ.IV)

586. Իրավական դաշտը. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույց, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կանոնադրություն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ներքին ընթացակարգերի ձեռնարկ:

3.7.1. Նկարագրություն և վերլուծություն

587. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի (հետայսու՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք) համաձայն, «հաշվետվություն տրամադրող անձինք», այն է՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետում թվարկված մասնագիտական և այլ գործունեություն իրականացնող անձինք, ներառյալ ֆինանսական հաստատությունները, պարտավոր են հաշվետվություններ տրամադրել ՓԼ կամ ԱՖ հետ կապված կասկածելի գործարքների, ինչպես նաև դրամական նվազագույն շեմի հասնող գործարքների վերաբերյալ՝ անկախ այդ գործարքների կանխիկով կամ այլ միջոցով կատարված լինելու հանգամանքից:

588. Ի լրումն ֆինանսական հաստատությունների, նվազագույն շեմը գերազանցող գործարքների վերաբերյալ հաշվետվություններ և ԿԳՀ-ներ «տրամադրող անձինք» են համարվում երկու պետական մարմիններ՝ ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրը (որն իրականացնում է իրավաբանական անձանց պետական գրանցումը) և Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

589. ՆՇԳՀ տրամադրելու պահանջը կիրառելի է 20 միլիոն դրամը (գնահատողների այցի դրությամբ՝ 52,000 ԱՄՆ դոլարի համարժեքը) գերազանցելու դեպքում, բացառությամբ անշարժ գույքի գործարքների, որոնց համար սահմանված նվազագույն շեմը 50 միլիոն դրամ է (130,000 ԱՄՆ դոլար):

590. Ֆինանսական հաստատությունները կարող են ԿԳՀ-ներ և ՆՇԳՀ-ներ ներկայացնել ապահով էլեկտրոնային ցանցի միջոցով, որից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ ՖԴԿ-ի կողմից տրամադրվող և պահպանվող եզակի ծածկագիր: 2006 թվականից ստացված ԿԳՀ-ների և ՆՇԳՀ-ների վերաբերյալ իշխանությունների տրամադրած տվյալների հիման վրա պարզ է դառնում, որ ՖԴԿ-ի ստացած հաշվետվությունների ճնշող մեծամասնությունը ՆՇԳՀ-ներ են: ԿԳՀ-ներ տրամադրել են միայն բանկային հաստատությունները, ընդ որում՝ դրանք խիստ սակավաթիվ են: Բացի այդ, հաշվի առնելով տրամադրված ՆՇԳՀ-ների թվաքանակը ԿԳՀ-ների համեմատությամբ, առկա են մտահոգություններ, որ հաշվետվություն տրամադրող անձանցից ոմանք կարող են բավարար չափով չտարբերակել ԿԳՀ և ՆՇԳՀ ներկայացնելու պահանջները:

ՓԼ և ԱՖ վերաբերյալ ՖԴԿ-ին ԿԳՀ-ներ ներկայացնելու պահանջը (չ. 13.1 և IV.1).

591. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք 3-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսվում է «կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն» հասկացության սահմանումը, որի համաձայն դա այնպիսի գործարք է կամ գործարար հարաբերություն, որի դեպքում սույն օրենքով, լիազոր մարմնի ուղեցույցներով, հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով սահմանված կամ այլ դեպքերում կասկածվում է, կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ այդ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներառված գույքն ստացվել է հանցավոր ճանապարհով կամ այդ գույքը կապված է ահաբեկչության ֆինանսավորման հետ, ինչպես նաև եթե ֆինանսական միջոցները կամ այլ գույքը կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական

կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով»:

592. Ֆինանսական հաստատությունները պարտավոր են օրենքով, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով և հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով սահմանված կարգով միջոցառումներ ձեռնարկել կասկածելի հարաբերությունները կամ գործարքները կամ նման հարաբերություններ հաստատելու փորձերը բացահայտելու և կանխարգելելու ուղղությամբ:

593. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու՝ ֆինանսական հաստատությունների պարտավորությունն ամրագրված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1.3 կետում, որի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են ՖԴԿ-ին հաշվետվություն ներկայացնել ցանկացած կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ՝ անկախ գումարի չափից: Պարտավորությունը կիրառելի է և ՓԼ, և ԱՖ նկատմամբ:

594. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածում նշվում է, որ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հիմքերը կամ չափանիշները «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանվում են լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներով («Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույց») և ֆինանսական հաստատությունների ներքին իրավական ակտերով:

595. Բացի այդ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն նշվում են այնպիսի գործարքների օրինակներ, որոնք կարող են կասկածելի համարվել:

596. Ավելին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է հաշվետվություն տրամադրող անձանց ընդհանուր պարտավորությունը՝ ՖԴԿ-ին ներկայացնելու կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն անկախ այն բանից, թե արդյոք կասկածի հիմքերը նախատեսված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով, Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցով, թե հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով:

597. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն պետք է ներկայացնել, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարար հարաբերությունում կամ գործարքում ներգրավված են այնպիսի ֆինանսական միջոցներ կամ այլ գույք, որոնք կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով:

598. Ինչպես վերլուծված է սույն հաշվետվությունում թիվ 26 հանձնարարականի կապակցությամբ, ՖԴԿ-ն հանդես է գալիս որպես ԿԳՀ-ներ և ՓԼ կամ ԱՖ գործունեության կասկածների վերաբերյալ այլ տեղեկություններ ձեռք բերող, վերլուծող և տրամադրող ազգային կենտրոն: Ի թիվս ՖԴԿ-ի կողմից կատարվող տարաբնույթ գործառույթների, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածում ուղղակիորեն նշվում է հաշվետվություն տրամադրող անձանցից հաշվետվությունների ստացումը:

599. ԿԳՀ-ները և ՆՇԳՀ-ները կարող են ներկայացվել էլեկտրոնային տեսքով՝ անվտանգ համակարգի միջոցով, կամ թղթային տեսքով: Գնահատողների անցկացրած հարցազրույցների ընթացքում գործարարները նշեցին, որ իրենք ունեն չկրկնվող ծածկագիր՝ «բանալի», որի օգնությամբ կարողանում են մուտք գործել էլեկտրոնային տեսքով հաշվետվությունների ներկայացման համակարգի մեջ: Անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացվում են թղթային տեսքով:

600. ԿԳՀ-ների ներկայացման կանոնները և ԿԳՀ-ի բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես քննարկվել է սույն հաշվետվությունում թիվ 26 հանձնարարականին նվիրված բաժնում, սահմանված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 7-րդ հոդվածով և ՀՀ ԿԲ-ի խորհրդի 2008 թ. հուլիսի 31-ի թիվ 231-Ն որոշմամբ, որով հաստատվել է ֆինանսական հաստատությունների կողմից ԿԳՀ-ների կամ ՆՇԳՀ-ների տրամադրման և գործարքի կասեցման մասին տեղեկացման ձևի վերջին տարբերակը: Վերոհիշյալ որոշմամբ հաստատվել են նաև ձևերի լրացման և տրամադրման կարգը, ինչպես նաև տեղեկությունների տրամադրման ժամկետները: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով (6-րդ հոդվածի 1-ին մաս) նախատեսվում է, որ կասկածելի գործարքի հայտնաբերման դեպքում «անմիջապես» լիազոր մարմնին (այսինքն՝ ՖԴԿ-ին) է տրամադրվում հաշվետվություն: Որոշմամբ սահմանված ժամկետի համաձայն, ՆՇԳՀ-ն պետք է ներկայացվի ՖԴԿ-ին գործարքը կնքելուց հետո եռօրյա ժամկետում, իսկ ԿԳՀ-ն՝ միևնույն աշխատանքային օրը կամ, եթե դա հնարավոր չէ (կարգով սահմանված դեպքերում)՝ նախքան հաջորդ աշխատանքային օրվա կեսօրը:

601. Ինչ վերաբերում է ԱՖ-ին, ապա ՖԴԿ-ն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված՝ սառեցման միջոցառումներ իրականացնելու պարտավորության մասին հստակորեն տեղեկացնող ֆորմալ ուղենիշներ չի հրապարակել հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անձանց կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են խնդրո առարկա միջոցներ կամ այլ գույք ունենալ: Կասկածելի գործարքների վերաբերյալ ուղեցույցն ԱՖ-ին առնչվող կոնկրետ տիպաբանություններ չի պարունակում:

602. ՖԴԿ-ի ստացած ԿԳՀ-ները մանրամասնորեն ներկայացված են հետևյալ աղյուսակում: ԿԳՀ-ների թիվը փոքր է համարվում, հատկապես ՖԴԿ-ի ստացած ՆՇԳՀ-ների թվաքանակի համեմատությամբ:

Հաշվետվություն տրամադրող անձինք	2006 թ. ՖԴԿ-ին տրամադրված հաշվետվություններ		2007 թ. ՖԴԿ-ին տրամադրված հաշվետվություններ		2008 թ. ՖԴԿ-ին տրամադրված հաշվետվություններ	
	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություններ	Կասկածելի գործարքի հաշվետվություններ	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություններ	Կասկածելի գործարքի հաշվետվություններ	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություններ	Կասկածելի գործարքի հաշվետվություններ
Բանկեր	52,006	27	74,090	27	89,588	36
Վարկային կազմակերպություններ	112	-	382	-	498	-
Արտարժույթի առուվաճառք իրակա-նացնողներ	-	-	-	-	-	1
Արտարժույթի դիլեր-բրոքերներ	386	-	269	-	71	
Դրամական (փողի) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք	-	-	-	-	-	-
«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված կարգով ներդրումային ծառայություններ մատուցողներ	739	-	976	-	250	-
Կարգավորվող շուկայի արժեթղթերի Կենտրոնական	-	-	-	-	-	-

դեպոզիտարիա						
Ապահովագրական (ներառյալ վերա-ապահովագրական) ընկերություններ	16	-	69	-	167	-
Ապահովագրական (ներառյալ վերա-ապահովագրական) բրոքերներ	-	-	-	-	-	-
Գրավատներ	-	-	2	-	-	-
Ռիելտորներ (անշարժ գույքի գործակալներ)	-	-	-	-	-	-
Նոտարներ	148	-	1,546	-	1,232	-
Փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք	-	-	-	-	-	-
Անկախ աուդիտորներ և աուդիտորական ընկերություններ	-	-	-	-	-	-
Անկախ հաշվապահներ և հաշվապահական ընկերություններ	-	-	-	-	-	-
Թանկարժեք մետաղների դիլերներ	-	-	-	-	-	-
Թանկարժեք քարերի դիլերներ	-	-	-	-	-	-
Արվեստի գործերի դիլերներ	-	-	-	-	-	-
Սակար-կությունների կազմակերպիչներ	-	-	-	-	-	-
Շահումով խաղ կազմակերպող անձինք և խաղատներ	-	-	-	-	-	-
Վիճակախաղ կազմակերպող անձինք	-	-	1	-	-	-
Ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք	-	-	-	-	-	-
Հավատարմա-գրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք	-	-	-	-	-	-
Վարկային բյուրոներ	-	-	-	-	-	-

Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին	-	-	390	-	1,546	-
Իրավաբանական անձանց պետական գրանցումը կատարող մարմին (պետական ռեգիստր)	-	-	-	-	-	-
Բարեգործական կազմակեր-պություններ	1	-	5	-	5	-
Ընդամենը	**53,408**	**27**	**77,730**	**27**	**93,357**	**37**

Ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ԿԳՀ-ներ (չ. 13.2).

603. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության սահմանումը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 3-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն ներառում է նաև այն դեպքերը, երբ կասկածվում է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներառված գույքը, ֆինանսական միջոցները կամ այլ գույքը կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչության ֆինանսավորման նպատակով: Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1.3 կետի համաձայն չի սահմանափակվում միայն ՓԼ դեպքերով: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ գործարքը կամ գործարար հարաբերությունը պետք է համարել կասկածելի, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարար հարաբերությունում կամ գործարքում ներգրավված են այնպիսի ֆինանսական միջոցներ կամ այլ գույք, որոնք կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով:

ԿԳՀ-ներ ներկայացնելու պարտավորությունը՝ անկախ գործարքի գումարից (չ. 13.3).

604. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը՝ անկախ գործարքի գումարից, սահմանված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1.3 կետով: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նաև հստակեցվում է, որ կասկածը տարածվում է նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ գործարք կատարելու փորձի նկատմամբ:

605. ՀՀ ԿԲ-ն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն իրավասու է հաշվետվություն տրամադրող անձանց ազատել սահմանված գործարքների վերաբերյալ հաշվետվության տրամադրման պարտականությունից, սակայն հաշվետվություն տրամադրելու պարտականությունից ազատումը կարող է վերաբերել միայն ՆՇԳՀ-ներին:

ՓԼ և ԱՖ ԿԳՀ-ներ ներկայացնելու պահանջի կիրառելիությունը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք առկա են հարկային խնդիրներ (չ. 13.4, չ. IV.2).

606. Օրենքը և այլ իրավական ակտերը չեն նախատեսում հաշվետվություն ներկայացնելու պահանջի սահմանափակումներ այն հիմքով, որ գործարքը կարող է առնչություն ունենալ նաև հարկային խնդիրների հետ: Հարկերից խուսափելը, ինչպես

ներկայացված է սույն հաշվետվության 2-րդ բաժնում, համարվում է ՓԼ նախորդող հանցագործություն:

Լրացուցիչ տարրը. բոլոր հանցագործությունների դեպքում հաշվետվություն ներկայացնելու պահանջը (չ. 13.5).

607. Ֆինանսական հաստատություններից պահանջվում է հաշվետվություն ներկայացնել այն դեպքում, երբ առկա է կասկած, որ գործարքում ներգրավված գույքն ստացվել է հանցավոր ճանապարհով՝ համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսված՝ «կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության» սահմանման:

Արդյունավետության վերլուծություն

608. Հայաստանում ֆինանսական հաստատությունները պարտավոր են կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել ՖԴԿ-ին: Գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունների հետ հանդիպումներից պարզվեց, որ նրանց մեծ մասը բավարար չափով հասկանում է օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված՝ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը և կասկածելի գործարքի չափանիշները: Վերոհիշյալ հաստատությունների պաշտոնատար անձինք նշեցին նաև, որ ՖԴԿ-ն այս թեմայով և հնարավոր կասկածելի գործարքների հայտնաբերման համար անհրաժեշտ՝ տիպաբանությունների թեմայով կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ: Չնայած դրան, կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների (ԿԳՀ-ներ) թվաքանակը շատ ցածր է (2007 թ. տրամադրվել է 27 ԿԳՀ, իսկ 2008-ին՝ 37-ը, որոնք բոլորը տրամադրել են բանկերը. նվազագույն շեմը գերազանցող գործարքների վերաբերյալ հաշվետվությունների թվաքանակը 2007 և 2008 թվականներին կազմել է համապատասխանաբար 77,730 և 93,357), եթե հաշվի առնենք, որ Հայաստանի տնտեսությունը բնութագրվում է կանխիկով կատարվող գործառնությունների մեծ ծավալով և, իշխանությունների մեկնաբանությունների համաձայն, մեծ է «ստվերային» տնտեսության մասնաբաժինը: Հաշվետվությունների սակավաթվությունը կարող է մասամբ բացատրվել ՀՀ ԿԲ-ի կողմից հաճախակի և ընթացիկ վերահսկողության բացակայությամբ: Ինչ վերաբերում է ԱՖ հետ կապված գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրմանը, ապա իշխանությունները հղում արեցին ՄԱԿ-ի հրապարակած անհատ ահաբեկիչների և ահաբեկչության հետ կապված կազմակերպությունների ցանկին, որը տեղադրված է ՖԴԿ-ի կայքում: Սակավաթիվ էին այն հաստատությունները, որոնք չունեին ցանկը կամ վերջինիս նորագույն տարբերակը: Մինչ օրս ֆինանսական հաստատություններն իրենց գործունեության մեջ չեն հանդիպել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերի համաձայն հրապարակված ցանկերին համընկնող որևէ դեպքի: Բացառությամբ բանկերի, հաստատությունների մեծ մասը տեղյակ չէր բոլոր գործարքների, այդ թվում՝ գործարք կատարելու փորձերի և հարկային խնդիրներին առնչվող կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորությանը: Չնայած որ ՖԴԿ-ն կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ, անհրաժեշտ է լրացուցիչ ուսուցում՝ ապահովելու բոլոր հաստատությունների տեղեկացվածությունը ԿԳՀ-ներ տրամադրելու պարտավորություններին և վերջիններիս լիարժեք կատարումը նրանց կողմից:

Պաշտպանությունը ԿԳՀ-ներ տրամադրելու դեպքում (չ. 14.1).

609. Պաշտպանության մասին իրավական նորմերով, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, նախատեսվում է, որ հաշվետվություն տրամադրող անձը կամ նրա աշխատակիցները (ղեկավարները) չեն կարող ենթարկվել քրեական, վարչական, քաղաքացիական կամ այլ պատասխանատվության օրենքով նախատեսված իրենց պարտականությունների պատշաճ կատարման, այդ թվում՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի

մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների շրջանակում կասկածի դեպքերի վերաբերյալ ՖԴԿ-ին հաշվետվություններ տրամադրելու և տեղեկություններ ներկայացնելու համար:

Բացահայտելու (հայտնելու) արգելքը (չ. 14.2).

610. Բացահայտելու (հայտնելու) արգելքը նախատեսված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն հաշվետվություն տրամադրող անձին, նրա աշխատակիցներին ու ներկայացուցիչներին արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկատվություն է տրամադրվում ՖԴԿ-ին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկատվության տրամադրման փաստի մասին:

Լրացուցիչ տարրը. հաշվետվություններ ներկայացնող աշխատակիցների անձնական տվյալների գաղտնի պահպանումը (չ. 14.3).

611. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ՖԴԿ-ին արգելվում է հրապարակել կամ այլ կերպ տրամադրել որևէ տեղեկատվություն, որը կբացահայտի կամ կարող է նպաստել բացահայտմանը ցանկացած անձի, որը տրամադրել է կասկածելի գործարքի մասին հաշվետվությունը և (կամ) մասնակցել է դրա մասին ՖԴԿ-ին հաշվետվության տրամադրմանը:

Արդյունավետության վերլուծություն.

612. Գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունների պաշտոնատար անձինք տեղյակ էին ԿԳՀ նախապատրաստելու և ՖԴԿ-ին ներկայացնելու փաստի մասին տեղեկությունները գաղտնի պահպանելու և հաճախորդին չհայտնելու՝ օրենքով սահմանված պարտավորությունների մասին, ընդ որում՝ այս պատասխանը ձևակերպել կարողացան անգամ նրանք, ովքեր դեռևս հաշվետվություն չեն տրամադրել: Պաշտոնատար անձինք նաև տեղյակ էին նման հաշվետվություններ տրամադրողների համար օրենքով նախատեսված պաշտպանության մասին: Բանկերի պաշտոնատար անձինք նշեցին, որ մինչ օրս որևէ ԿԳՀ-ի առնչությամբ իրենց աշխատակիցների կամ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարման համար պատասխանատու աշխատակիցների անունների և անձնական տվյալների հրապարակման դեպքեր տեղի չեն ունեցել: Բոլոր հաստատությունները տեղյակ էին նաև այն փաստի մասին, որ ԿԳՀ-ի մասին տեղեկություններ բացահայտելու (հայտնելու) դեպքում ՀՀ ԿԲ-ն կարող է կիրառել պատժամիջոցներ:

Սահմանված նվազագույն շեմը գերազանցող արժութային գործարքների մասին հաշվետվություններ ներկայացնելու նպատակահարմարության դիտարկումը (չ. 19.1).

613. Ի լրումն կասկածելի գործարքի կամ հարաբերության մասին հաշվետվություն տրամադրելու պարտավորություններին, հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են նաև տրամադրել նվազագույն շեմը գերազանցող գործարքների մասին հաշվետվություններ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հաշվետվություն տրամադրելու պարտավորության շրջանակում հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են ՖԴԿ-ին հաշվետվություն տրամադրել հետևյալ գործարքներից ցանկացածի վերաբերյալ.

- Գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամի նվազագույն շեմը (գնահատման պահի դրությամբ՝ 52,000 ԱՄՆ դոլարի համարժեքը), բացառությամբ անշարժ գույքի գործարքների, և

- Անշարժ գույքի հետ կապված գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը (130,000 ԱՄՆ դոլարի համարժեքը):

614. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն, նվազագույն շեմը գերազանցող գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտականությունն իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների, հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ առաջանում է միայն օրենքով սահմանված կարգով լիցենզավորման պահանջների ամրագրումից հետո:

615. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, որով ՖԴԿ-ին թույլատրվում է հաշվետվություն տրամադրող անձին ազատել նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություն տրամադրելու պարտականությունից, նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություն տրամադրելու՝ անշարժ գույքի գործակալների պարտականությունը վերապահվել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն: Անշարժ գույքի գործակալներին նվազագույն շեմը գերազանցող գործարքի հաշվետվություն տրամադրելու պարտականությունից ազատելու մասին որոշումը ՀՀ ԿԲ-ի խորհուրդը կայացրել է 2009 թ. հունվարի 27-ին՝ նպատակ հետապնդելով թեթևացնել միևնույն գործարքի մասով կրկնակի վարչարարության բեռը:

616. Նվազագույն շեմը գերազանցող գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը կիրառելի է՝ անկախ գործարքի կանխիկով կամ անկանխիկ լինելու հանգամանքից: Ոլորտի ներկայացուցիչները գնահատողներին տեղեկացրեցին, որ իրենք տարբերակում չեն կիրառում, և որ նվազագույն շեմը գերազանցող գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պահանջները կիրառվում են՝ անկախ այդ հանգամանքից:

617. ՖԴԿ-ին տրամադրվող ՆՇԳՀ-ում պարունակվող տեղեկությունները պահպանվում են տվյալների կենտրոնացված էլեկտրոնային շտեմարանում, որը վարում է ՖԴԿ-ն: Այնուհանդերձ, ՖԴԿ-ի տրամադրած վիճակագրության հիման վրա տպավորություն ստեղծվեց, որ նման գործարքների վերաբերյալ ստացված տեղեկությունների հիման վրա խիստ հազվադեպ է բացվել կամ ընդհանրապես չի բացվել գործ, որը հետագայում հաղորդվել է իրավապահ մարմիններին քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Լրացուցիչ տարրը. նվազագույն շեմը գերազանցող արժութային գործարքների տվյալների պահպանումը համակարգչային շտեմարանում և հասանելիությունն իրավասու մարմիններին (չ. 19.2).

618. ՀՀ ԿԲ-ի ՖԴԿ-ի կանոնադրության 2-րդ գլխի համաձայն, ՖԴԿ-ն ստեղծել է տվյալների կենտրոնացված շտեմարան տվյալների, հարակից փաստաթղթերի, հարցումների և հաշվետվությունների ներհոսքը և արտահոսքը կառավարելու նպատակով: Տվյալների շտեմարանը թույլ կտա մշակել տեղեկությունների տրամաբանական ստուգման, միտումների վերլուծության, ՓԼ և ԱՖ հնարքների բացահայտման և տիպաբանությունների ուսումնասիրության ալգորիթմներ: Տվյալների մուտքագրման, մշակման և վերլուծության մանրակրկիտ ուղենիշներ են զետեղված ՖԴԿ-ի ներքին ընթացակարգերի ձեռնարկում:

619. ՀՀ ԿԲ-ի ՖԴԿ-ի ներքին ընթացակարգերի ձեռնարկով նախատեսվում է խմբավորված տեղեկությունների ստացումը. մասնավորապես, դրույթներից մեկի

համաձայն, վերլուծությունների արդյունքների վերաբերյալ տեղեկություններ կարող են տրամադրվել իրավասու, ներառյալ օրինակ՝ իրավապահ մարմիններին:

Լրացուցիչ տարրը. նվազագույն շեմը գերազանցող արժութային գործարքների վերաբերյալ հաշվետվություններով ներկայացվող տեղեկությունների պատշաճ օգտագործումը (չ. 19.3).

620. Չ. 19.2-ին նվիրված վերոհիշյալ բաժնում նշված՝ տվյալների կենտրոնացված շտեմարանը, որպես նվազագույն շեմը գերազանցող գործարքների մասին տեղեկությունների պահպանման կենտրոնացված շտեմարան, շահագործվում է ՖԴԿ-ի ներքին ընթացակարգերի ձեռնարկով նախատեսված խիստ պայմանների և երաշխիքների պահպանմամբ:

Արդյունավետության վերլուծություն.

621. Հայաստանում ֆինանսական հաստատությունները կատարում են հաշվետվություն տրամադրելու պարտավորությունն օրենքով նախատեսված նվազագույն շեմը գերազանցող բոլոր գործարքների մասով: Այդ հաշվետվություններն ուղարկվում են ՖԴԿ-ին: Համապատասխան հաստատությունների պաշտոնատար անձանց հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանք լիարժեքորեն հասկանում են պահանջի էությունը, և թե ուր պետք է ներկայացնել հաշվետվություն: Ակնհայտ է, որ ֆինանսական հաստատություններն իրենց ջանքերը կենտրոնացնում են այս պահանջի բավարարման ուղղությամբ, քանի որ հաշվետվություններ չտրամադրելու կամ ուշ տրամադրելու համար որոշ դեպքերում կիրառվել են պատժամիջոցներ: Ֆինանսական համակարգում գործարքների վերաբերյալ հաշվետվություններ տրամադրողները հիմնականում բանկերն են, որոնց հաջորդում են վարկային կազմակերպությունները և արժեթղթերի ընկերությունները: Այնուհանդերձ, հաշվի առնելով կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների խիստ սակավաթիվ լինելը, տպավորություն է առաջանում, որ ֆինանսական հաստատությունները չափազանց շատ են ուշադրություն դարձնում նվազագույն շեմը գերազանցող գործարքների վերաբերյալ հաշվետվություններ տրամադրելուն, որը բացասաբար է ազդում կասկածելի գործարքների հայտնաբերման վրա և կարող է սասանել հաշվետվություն տրամադրելու պարտավորության արդյունավետ կատարումը:

ԿԳՀ-ների և տրամադրվող այլ հաշվետվությունների վերաբերյալ հետադարձ արձագանքը ֆինանսական հաստատություններին և վերջիններիս ուղղորդումը (չ. 25.2) [Ծանոթագրություն. համապատասխանության այլ խնդիրներին առնչվող ուղենիշները վերլուծված են 3.10 բաժնում].

ԿԳՀ-ների և տրամադրվող այլ հաշվետվությունների վերաբերյալ հետադարձ արձագանքը ֆինանսական հաստատություններին (չ. 25.2).

622. Ինչ վերաբերում է լիազոր մարմնի կողմից տրամադրվող հետադարձ արձագանքին, ապա լիազոր մարմինը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1(13)-րդ կետի համաձայն պարտավոր է պարբերաբար տեղեկատվություն (հետադարձ կապ) տրամադրել հաշվետվություն տրամադրող անձանց վերջիններիս կողմից տրամադրված հաշվետվությունների վերաբերյալ: Դա արվում է բանավոր կամ գրավոր: Մասնավորապես, ՖԴԿ-ն հաստատում է հաշվետվությունների ստացման փաստը՝ ստացման հաստատում ուղարկելով հաշվետվություն տրամադրող անձանց:

623. ՖԴԿ-ն ընդունել է Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցը, Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցը և Տիպաբանությունների ուղեցույցը: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ն ֆինանսական հաստատությունների համար հաստատել է ուղենիշներ կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ 2008 թ. սեպտեմբերի 3-ի 1/886ա որոշմամբ, ինչպես նաև 2008 թ. սեպտեմբերի 11-ի 1/913ա

որոշմամբ, որոնցով նախատեսվում են ՓԼ, բայց ոչ՝ ԱՖ տիպաբանություններին նվիրված ուղենիշներ: ՆՈՖԳՏՄ-ների համար տիպաբանություններ չկան: ՖԴԿ-ն դեռևս չի ընդունել ֆորմալ ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն սառեցման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ:

3.7.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Իշխանություններին առաջարկվում է հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպել լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝ ապահովելու նրանց աշխատակիցների տեղեկացվածությունն օրենքով նախատեսվող պարտավորությունների մասին: Վերապատրաստումը պետք է, մասնավորապես, ներառի կասկածելի գործարքների հայտնաբերման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման թեմաները, անդրադառնա տիպաբանություններին և միտումներին (տարբերակված ըստ գործունեության տեսակի, հատկապես ՆՈՖԳՏՄ-ների համար):

- Իշխանությունները պետք է ընդունեն ուղեցույցներ սառեցման պարտավորությունների և ԱՖ հետ կապված տիպաբանությունների վերաբերյալ:

3.7.3. Համապատասխանությունը թիվ 13, 14, 19 և 25 հանձնարարականներին (չափորոշիչ 25.2), ինչպես նաև IV հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.13	Հիմնականում համապատասխանում է	Ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրվող՝ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունները սակավաթիվ են:
Հ.14	Համապատասխանում է	
Հ.19	Համապատասխանում է	
Հ.25	Համապատասխանում է	
ՀՀ.IV	Հիմնականում համապատասխանում է	Ուղեցույցների բացակայությունը խոչընդոտում է հաշվետվություն տրամադրելու պարտավորության արդյունավետ կատարումը:

<u>Ներքին հսկողության և այլ մեխանիզմները</u>

3.8. Ներքին հսկողության մեխանիզմները, համապատասխանությունը, աուդիտը և օտարերկրյա մասնաճյուղերը (Հ.15 և 22)

3.8.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ:

624. Քաղաքականություն և հսկողության մեխանիզմներ ձևավորելու, ստուգումների, վերապատրաստման և աուդիտի վերաբերյալ պահանջները կարգավորվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով (մասնավորապես, օրենքի 22-րդ հոդվածով, որով նախատեսվում է հաշվետվություն տրամադրող անձանց պարտավորությունը՝ ունենալու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմամբ զբաղվող ներքին դիտարկումների ստորաբաժանում կամ աշխատակից կամ այդ գործառույթները վերապահել մասնագիտացված գործունեություն իրականացնող համապատասխան անձանց (հետայսու՝ ներքին դիտարկումների մարմին)), ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից 2009 թ. սեպտեմբերի 9-ին ընդունված՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգով (մասնավորապես՝ կանոնակարգի 3-րդ գլխով) (հետայսու՝ «Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ»), որն ընդունվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 11-րդ հոդվածի հիման վրա («Լիազոր մարմնի կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը և ուղեցույցները»):

625. Օրենքի 11-րդ հոդվածով լիազոր մարմնից՝ ՀՀ ԿԲ-ից պահանջվում է ընդունել նորմատիվ իրավական ակտեր և ուղեցույցներ, որոնցով կսահմանվեն, ի թիվս այլոց.

- ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կառավարման մարմինների, այդ թվում՝ ներքին դիտարկումների մարմնի գործառույթների և դրանց իրականացման կարգի նվազագույն պահանջները,

- ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների գործունեության աուդիտին ներկայացվող նվազագույն կանոնները, և

- Ֆինանսական հաստատությունների՝ ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ընտրության, ուսուցման, որակավորման նվազագույն կանոնները:

626. Վերոհիշյալ նվազագույն պահանջներից զատ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է ունենալ ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտեր: Վերջիններս պետք է սահմանեն առնվազն՝

- Ներքին աուդիտի իրականացման կարգն ու պայմանները, ներքին դիտարկումների մարմնի գործունեության ընթացակարգը, ինչպես նաև ներքին դիտարկումների մարմնի կամ ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթներ իրականացնող այլ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ուսուցման և վերապատրաստման պահանջները (հատկապես ՀՊՈՒ և կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտականությունների մասով):

ՓԼ և ԱՖ կանխման ներքին հսկողական մեխանիզմների ստեղծումը և պահպանումը (չ. 15.1, 15.1.1 և 15.1.2).

15.1

627. Ավելին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է ներքին իրավական ակտերից մեկական օրինակ դրանց հաստատման, ինչպես նաև դրանցում լրացումներ և փոփոխություններ կատարելու դեպքում մեկշաբաթյա ժամկետում տրամադրել լիազոր մարմնին: Լիազոր մարմնի պահանջով հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր

են համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ներքին իրավական ակտերում:

628. Ինչպես նշվեց, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածով ֆինանսական հաստատություններից պահանջվում է ունենալ ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտեր (կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ): Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 4-րդ կետի համաձայն ֆինանսական հաստատության խորհուրդը գործադիր մարմինը պատասխանատու են ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման համար, և ապահովում են դրա ընթացիկ աշխատանքն ու վերահսկողությունը: Կանոնակարգի 8(1)-րդ կետում նշվում է նաև, որ խորհուրդը, ի թիվս այլ գործառույթների, սահմանում է «ֆինանսական հաստատության ՖԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունը»: Կանոնակարգի 9(2)-րդ կետի համաձայն, գործադիր մարմինը «պատասխանատվություն է կրում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականության արդյունավետ իրականացման համար»: Չնայած որ այս դրույթներում ուղղակիորեն չի նշվում, որ համապատասխան կարգերը, կանոնները կամ հսկողության մեխանիզմները պետք է ներառեն ՀՊՈՒ, տեղեկատվության պահպանում, անսովոր և կասկածելի գործարքների հայտնաբերում և հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն, այդ ոլորտները կարգավորված են Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի այլ դրույթներով:

15.1.1

629. Հաշետվություն տրամադրող անձինք «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտավոր են ունենալ ՓԼ և ԱՖ կանխարգելմամբ զբաղվող ներքին դիտարկումների ստորաբաժանում կամ աշխատակից կամ այդ գործառույթները վերապահել մասնագիտացված գործունեություն իրականացնող (ֆինանսական հաստատության աշխատակից չհանդիսացող) համապատասխան անձանց (հետայսու՝ «ներքին դիտարկումների մարմին»): «Ներքին դիտարկումների մարմինը» օրենքի 3-րդ հոդվածի 22-րդ կետով սահմանվում է որպես «ֆինանսական հաստատության ստորաբաժանում, աշխատակից կամ մասնագիտացված գործունեություն իրականացնող անձ, որն իրականացնում է ՓԼ և ԱՖ կանխարգելման գործառույթներ»: Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է նաև ապահովել, որպեսզի ներքին դիտարկումների մարմինն ունենա հաշվետվություն տրամադրող անձի ավագ ղեկավարության կարգավիճակ և լինի անկախ: Հայաստանի պարագայում ավագ ղեկավարության կարգավիճակ կարող է վերապահվել միայն ֆինանսական հաստատության աշխատակցին:

15.1.2

630. Ինչ վերաբերում է նրան, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատուն պետք է կարողանա ժամանակին ստանալ հաճախորդի նույնականացման տվյալները, ՀՊՈՒ այլ տեղեկությունները, գործարքների մասին տվյալները և վերաբերելի այլ տեղեկություններ, ապա Կանոնակարգի 15-րդ կետով նախատեսվում է, որ ներքին դիտարկումների մարմնին (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատու) պետք է անմիջականորեն հասանելի լինեն հաճախորդի հաշիվներին և կատարված գործարքներին վերաբերող բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ վարկային գործեր, աշխատանքային փաստաթղթեր, պայմանագրեր և այլն), և իրավունք վերապահվի գործարար հարաբերությունների (գործարքների), ինչպես նաև հաճախորդների, լիազորված անձանց և իրական շահառուների վերաբերյալ պարզաբանումներ պահանջել այլ ստորաբաժանումների ցանկացած աշխատակցից: Պրակտիկայում չկան տեղեկությունների ստացման իրավական սահմանափակումներ:

Գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունների հետ հանդիպումներում հաստատվեց, որ այդպիսիք իրոք չկան: Չնայած որ իրավական ակտերը չեն պարունակում կոնկրետ նորմեր, որոնցով ուղղակիորեն կնախատեսվեր ՀՊՈՒ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, գործարքի մասին տվյալները և վերաբերելի այլ տեղեկությունները ժամանակին ստանալու հնարավորությունը, իշխանությունները նշեցին, որ «անմիջականորեն հասանելի լինել» հասկացությունը ներառում է նաև ժամանակին ստանալու բաղադրիչը:

ՓԼ և ԱՖ կանխարգելման ներքին հսկողական մեխանիզմների անկախ աուդիտը (չ. 15.2).

631. Ֆինանսական հաստատությունների պարտավորությունը՝ ունենալու բավարար ռեսուրսներով և անկախությամբ օժտված աուդիտի գործառույթ, որը պետք է ստուգի պահանջների կատարումը, մասամբ արտացոլված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում, որով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտով սահմանված դեպքերում և հաճախականությամբ իրականացնել ներքին աուդիտ՝ օրենքով նախատեսված պարտականությունների պատշաճ իրականացումը վերստուգելու համար: 23-րդ հոդվածին փոխլրացնող է Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 11-րդ գլխի 50-րդ կետը, որով ներքին աուդիտից պահանջվում է տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ իրականացնել՝ հավաստիանալու, որ գործադիր մարմինը և ներքին դիտարկումների մարմինն ապահովում են ֆինանսական հաստատության լիարժեք համապատասխանությունն Օրենքով, Կանոնակարգով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին:

632. Նույն կետով նաև նախատեսվում է, որ այն դեպքերում, երբ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման (այսինքն՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության) գործառույթը վերապահված է ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ աշխատակցին, ապա ստուգումն իրականացվում է ֆինանսական հաստատության ներքին իրավական ակտերով սահմանված մարմնի (սա ներքին աուդիտորը չէ) կողմից և կարգով: Ավելին, Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 51-րդ կետով ներքին աուդիտից պահանջվում է խորհրդին և գործադիր մարմնին պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

633. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է հրավիրել արտաքին աուդիտ՝ վերստուգելու ՓԼ և ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետության մակարդակը: Չնայած որ այդ մասին հստակորեն նշված չէ, օրենքից կարծես անուղղակիորեն բխում է, որ հաշվետվություն տրամադրող անձինք պետք է ունենան աուդիտի գործառույթ: Իշխանությունները նշեցին, որ ներքին աուդիտի գործառույթ ստեղծելու՝ ֆինանսական հաստատությունների պարտավորությունն ամրագրված է «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1(գ) կետում, որի համաձայն ֆինանսական հաստատության խորհուրդը պարտավոր է ստեղծել ներքին հսկողության ստանդարտներ, ներառյալ՝ ներքին աուդիտի գործառույթ:

Աշխատակիցների ընթացիկ վերապատրաստումը ՓԼ/ԱՖ թեմաներով (չ. 15.3).

634. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1(7)-րդ մասով սահմանվում է, որ լիազոր մարմինն ընդունում է իրավական ակտերի, հաստատում ուղեցույցներ, հրապարակում տիպաբանություններ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով հաշվետվություն տրամադրող անձանց, վերահսկող և այլ մարմինների ու

կազմակերպությունների հետ: Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1(10) կետով նախատեսվում է, որ լիազոր մարմնի կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը սահմանում են ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ուսուցման նվազագույն կանոնները: Բացի այդ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1(7) կետի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով պետք է նախատեսվեն ներքին դիտարկումների մարմնի կամ սույն օրենքով սահմանված գործառույթներ իրականացնող այլ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ուսուցման և վերապատրաստման պահանջները՝ ՓԼ և ԱՖ դեմ պայքարի օրենսդրության, ինչպես նաև ՓԼ և ԱՖ առկա ռիսկերի և տիպաբանությունների վերաբերյալ: Բացի այդ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ 12-րդ գլխի 78-րդ կետով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է պարբերաբար ուսուցում կազմակերպել ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող բոլոր աշխատակիցների համար: Նոր աշխատակիցների ընդունման դեպքում ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ուսուցում պետք է կազմակերպվի առաջին երեք ամիսների ընթացքում:

635. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 80-րդ կետում նշվում է, որ ֆինանսական հաստատությունը պետք է սահմանի և իրականացնի ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իր աշխատակիցների պարբերական ուսուցման ծրագրեր: Այդ ծրագրերը պետք է նախատեսեն ուսուցում խորհրդի անդամների, գործադիր մարմնի աշխատակիցների, ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների, հաճախորդների սպասարկման և աուդիտի գործառույթներ իրականացնող աշխատակիցների համար: Այդ աշխատակիցների համար ուսուցումը և վերապատրաստումը պետք է հնարավորություն տա հավաստիանալու, որ նրանք ունեն ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների ու ընթացակարգերի վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, մասնավորապես՝ 1) բարձր և ցածր ռիսկի չափանիշների, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության առավել հաճախ հանդիպող հիմքերի և չափանիշների վերաբերյալ, այդ թվում՝ լիազոր մարմնի ուղեցույցներով տրամադրվող կասկածելի գործարքների տիպաբանությունների վերաբերյալ, և 2) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնակարգի, ներքին իրավական ակտերի դրույթների վերաբերյալ (որոնք ներառում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածով պահանջվող՝ հաճախորդի նույնականացման և պատշաճ ուսումնասիրության պահանջները): Ի վերջո, Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 81-րդ կետով պահանջվում է, որպեսզի ֆինանսական հաստատության կողմից իրականացվող ուսումնական ծրագրերը, դրանց վերաբերյալ բոլոր նյութերը, ինչպես նաև ուսուցման ծրագրերին մասնակցած անձանց անուններն ու ստորագրություններն առանձին հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 տարի:

Աշխատակիցների նախնական ստուգման ընթացակարգերը (չ. 15.4).

636. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածը վերաբերում է հաշվետվություն տրամադրող անձանց ներքին դիտարկումների ստորաբաժանմանը: Այդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ «ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները պետք է լիազոր մարմնի սահմանած կարգով և մասնագիտական համապատասխանության չափանիշների հիման վրա անցնեն որակավորում»: Բացի այդ, Կանոնակարգի 12-րդ գլխով նախատեսվում են ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ընտրության, ուսուցման և որակավորման նվազագույն կանոնները: Այնուհանդերձ, օրենքով և Կանոնակարգով սահմանված պահանջները հիմնականում վերաբերում են ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներին և այլ աշխատակիցներին, որոնց կարող են վերապահված լինել ՓԼ/ԱՖ կանխարգելման լիազորություններ. չկա ընդհանուր պահանջ՝ ունենալու նախնական ստուգման ընթացակարգեր՝ բոլոր դիմողներին աշխատանքի ընդունելիս ապահովելու բարձր

ստանդարտների կիրառությունը: Գործող պահանջները որպես այդպիսին սույն չափորոշչի առումով թերի են:

Արդյունավետության վերլուծություն.

637. Ֆինանսական հաստատություններից պահանջվում է սահմանել և ունենալ ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտեր՝ կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ: Նույն ներքին իրավական ակտերով պետք է նախատեսել և նշանակել ներքին դիտարկումների մարմին կամ աշխատակից, որը պետք է ունենա ավագ ղեկավարության կարգավիճակ, ինչպես նաև՝ տարին առնվազն մեկ անգամ իրականացնել ներքին աուդիտ, և անցկացնել աշխատակիցների վերապատրաստում: Ավելին, ֆինանսական հաստատություններից ուղղակիորեն պահանջվում է հրավիրել անկախ արտաքին աուդիտ՝ գնահատելու օրենսդրության ներդրման մակարդակը տվյալ հաստատությունում:

638. Ֆինանսական հաստատությունների մշակած և ընդունած ներքին իրավական ակտերը պրակտիկայում մեծ մասամբ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի դրույթների արտատպումներ են, և չեն արտացոլում ռիսկայնության գործոնները, հաստատությունների չափի, գործունեության բարդության, հաճախորդների, պրոդուկտների/ծառայությունների և սպասարկվող աշխարհագրական տարածքների առանձնահատկությունները: Ինչ վերաբերում է համապատասխանության կառավարման պատշաճ մեխանիզմների ստեղծմանը, գնահատողների այցելած բանկերը ղեկավարության մակարդակով ստեղծել էին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատու ստորաբաժանումներ և/կամ նշանակել համապատասխանության աշխատակցի: Այնուհանդերձ, այլ ֆինանսական հաստատություններում, օրինակ՝ վարկային կազմակերպություններում, արժեթղթերի ընկերություններում, ապահովագրական ընկերություններում, դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններում և արտարժույթի փոխանակման կետերում, պայմանավորված նրանց չափերով և առկա ռեսուրսներով, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության կառավարման մեխանիզմները և համապատասխանության պատասխանատուի պաշտոնները զբաղեցնողները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանությունից զատ միաժամանակ պատասխանատու էին նաև ընթացիկ գործունեության հարցերով: Նշված հաստատություններից մի քանիսում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատու էր նշանակվել ներքին աուդիտի բաժնի պետը, գլխավոր գործադիր տնօրենը կամ գործառնությունների բաժնի ղեկավարը:

639. Գնահատողների այցելությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ համարժեք ֆինանսական և կադրային ռեսուրսներով ապահովված ֆինանսական հաստատությունները (հիմնականում՝ բանկերը) ստեղծել էին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության և ներքին աուդիտի առանձին ստորաբաժանումներ: Ավելի քիչ ռեսուրսներով ապահովված հաստատությունները կիրառել էին Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 50-րդ կետը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության գործառույթը վերապահել իրենց ներքին աուդիտորին: Համապատասխանության այսպիսի մեխանիզմի գոյությունը հաստատվեց ոչ բանկային ֆինանսական հաստատություններից առնվազն երկուսում: Այնուհանդերձ, նրանցից ոչ մեկն անհրաժեշտ միջոցառումներ չէր իրականացրել՝ հավաստիանալու, որպեսզի օրենքի, այլ իրավական ակտերի և ներքին իրավական ակտերի պահանջների կատարման աուդիտն իրականացնող անձը (նա, ով իրականացնում է աուդիտը ներքին աուդիտորի փոխարեն) մնում է բավարար չափով անկախ, ապահովված է բավարար ռեսուրսներով, ունի պահանջվող որակավորումը և ստանում է աուդիտի նման պարտականություններ ստանձնելու համար անհրաժեշտ բավարար ուսուցում:

640. Ինչ վերաբերում է ուսուցման բնագավառին, ապա գնահատողների այցելած բանկերն ընդունել և ներդրել էին ՓԼ/ԱՖ խնդիրներին նվիրված ուսուցման ֆորմալ ծրագրեր: Այնուհանդերձ, այս ոլորտում ևս այլ ֆինանսական հաստատությունները, պայմանավորված իրենց չափերով և ռեսուրսների սահմանափակությամբ, չունեին աշխատակիցների ֆորմալ ուսուցման հաճախակի կամ ընթացիկ ծրագրեր: Ֆինանսական հաստատությունների ստացած ուսուցման մեծ մասը կազմակերպվել էր ՖԴԿ-ի կողմից՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր օրենքի ընդունման կապակցությամբ: Լրացուցիչ ուսուցում է անհրաժեշտ նաև Հ.11-ի պահանջներին համահունչ անսովոր գործարքների հայտնաբերման և վերլուծության ոլորտում:

641. Վերլուծելով ստուգումների հաշվետվությունները, որոնք տրամադրվել էին իշխանությունների կողմից, գնահատողները պարզեցին, որ ՀՀ ԿԲ-ի վերահսկողները բազմաթիվ էական թերություններ են հայտնաբերել բանկերում, վարկային կազմակերպություններում և ապահովագրական ընկերություններում, այդ թվում՝ համապատասխանության կառավարման մեխանիզմների բացակայությունը կամ անհամարժեքությունը, ներքին հսկողական համակարգերի անհամարժեքությունը, ներառյալ՝ համապատասխանության համար պատասխանատու աշխատակցի և ներքին աուդիտի ոչ բավարար անկախության խնդիրները: Ելնելով ստուգումների հաշվետվությունների հիման վրա բացահայտված այդ արդյունքներից՝ գնահատողները հարցականի տակ են առնում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սույն հանձնարարականի պահանջների առնչությամբ սահմանված պարտավորությունների՝ ֆինանսական հաստատությունների կողմից կատարման ընդհանուր արդյունավետությունը:

642. Ի վերջո, ֆինանսական հաստատությունների համար սահմանված չէ ուղղակի պահանջ՝ ներդնելու նախնական ստուգման ընթացակարգեր՝ դիմողներին աշխատանքի ընդունելիս ապահովելու բարձր ստանդարտների կիրառությունը: Պրակտիկայում որոշ հաստատություններ աշխատանքի ընդունելուց առաջ իրականացնում են դիմողների նախնական ստուգումներ, բայդ հետևողական իրականացումը գնահատողների այցելած հաստատություններում բացակայում է:

Լրացուցիչ տարրը. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատուի անկախությունը (չ. 15.5).

643. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ ներքին դիտարկումների մարմինն անկախ է և պետք է ունենա հաշվետվություն տրամադրող անձի ավագ ղեկավարության կարգավիճակ: «Ավագ ղեկավարությունը» օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ կետով սահմանվում է որպես «հաշվետվություն տրամադրող անձի մարմին կամ աշխատակից, որն իրավասու է հաշվետվություն տրամադրող անձի անունից ՓԼ և ԱՖ կանխարգելման հարցերով որոշումներ կայացնելու կամ մասնակցում է այդպիսի որոշումների կայացմանը»: Օրենքի 22-րդ հոդվածով նախատեսվում է նաև, որ ներքին դիտարկումների մարմինը պետք է իրավունք ունենա իր կառավարման բարձրագույն մարմնին (բանկերի դեպքում՝ խորհրդին) անմիջականորեն ներկայացնելու հաշվետվություն տրամադրող անձի՝ ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում ծագած խնդիրները:

ՓԼ/ԱՖ կանխարգելման միջոցառումների կիրառությունն օտարերկրյա մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների նկատմամբ (չ. 22.1, 22.1.1 և 22.1.2).

644. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է հանձնարարել օտարերկրյա պետություններում կամ տարածքներում (ներառյալ՝ այն պետություններում կամ տարածքներում, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ և ԱՖ դեմ պայքարի միջազգային

պահանջները) գտնվող իրենց մասնաճյուղերին և ներկայացուցչություններին կիրառել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի պահանջները, եթե այդ օրենքը և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերը սահմանում են ավելի խիստ նորմեր, քան մասնաճյուղի կամ ներկայացուցչության գտնվելու վայրի պետության օրենքներն ու իրավական այլ ակտերը:

Պահանջը՝ մայր ընկերության գործունեության վայրի երկրի վերահսկողին տեղեկացնելու այն դեպքերի մասին, երբ այլ երկրում գործող մասնաճյուղը կամ դուստր ձեռնարկությունն անկարող է պահպանել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխան պահանջները (չ. 22.2).

645. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ հոդվածի համաձայն, եթե մասնաճյուղի կամ ներկայացուցչության գտնվելու վայրի պետության օրենքներն ու իրավական այլ ակտերն արգելում են կամ հնարավորություն չեն տալիս կիրառելու «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի պահանջները, ապա մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը պետք է այդ մասին տեղեկացնի հաշվետվություն տրամադրող անձին, իսկ հաշվետվություն տրամադրող անձը՝ լիազոր մարմնին (այսինքն՝ ՀՀ ԿԲ-ին):

Արդյունավետության վերլուծություն.

646. Գնահատողների այցի դրությամբ հայաստանյան ֆինանսական հաստատությունները չունեին այլ երկրներում գործող մասնաճյուղեր կամ դուստր ձեռնարկություններ:

Լրացուցիչ տարրը. ՀՊՈՒ միջոցառումների հետևողականորեն կիրառությունը խմբի մակարդակով (չ. 22.3).

647. Իշխանությունները նշեցին, որ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէ ֆինանսական խմբերի հասկացությունը:

3.8.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

648. Իշխանություններին առաջարկվում է օրենքով կամ այլ իրավական ակտով ամրագրել հետևյալ պահանջները.

- Ֆինանսական հաստատություններից պահանջել՝ ապահովելու ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին ընթացակարգերի, կանոնակարգերի և հսկողական մեխանիզմների սահմանումը և պահպանումը՝ հաշվի առնելով ՓԼ և ԱՖ ռիսկը, ինչպես նաև նրանց գործարար գործունեության չափերը,
- Փոփոխել իրավական ակտերը՝ սահմանելու ուղղակի և կոնկրետ դրույթ, որով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության ստորաբաժանմանը/աշխատակցին հնարավորություն կընձեռվի ժամանակին ստանալու ՀՊՈՒ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, գործարքների մասին տվյալները և վերաբերելի այլ տեղեկություններ,
- Ներդնել ֆինանսական հաստատությունների կողմից բոլոր աշխատակիցների նախնական ստուգման ֆորմալ ընթացակարգեր, հատկապես այն աշխատակիցների, որոնց գործունեության ոլորտն առնչվում է ՓԼ/ԱՖ կանխարգելմանը: Ֆորմալ այդ ընթացակարգերը պետք է ուղղված լինեն աշխատակիցների աշխատանքի ընդունելիս բարձր չափանիշների ապահովմանը,
- Ապահովել ֆինանսական հաստատություններում ներքին աուդիտի անկախ և համարժեք ռեսուրսներով ապահովված գործառույթի պահպանումը, հատկապես երբ աուդիտի գործառույթը վերապահված/հանձնարարված է ներքին աուդիտորից բացի այլ աշխատակիցների,

- Աշխատակիցների լրացուցիչ ուսուցում իրականացնել ՓԼ/ԱՖ կանխարգելման բոլոր թեմաներով, մասնավորապես՝ Հ.11-ի պահանջների առնչությամբ,
- Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի պահանջների արդյունավետ կատարումը ֆինանսական հաստատությունների կողմից:

3.8.3. Համապատասխանությունը թիվ 15 և 22 հանձնարարականներին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.15	Մասամբ համապատասխանում է	• Ներքին իրավական ակտերը (ներքին ընթացակարգեր, կանոնակարգեր և հսկողական մեխանիզմներ) համարժեք չեն, քանի որ դրանցում հաշվի առնված չեն ՓԼ և ԱՖ ռիսկերը և գործարար գործունեության չափերը: • Աշխատանքի ընդունվող աշխատակիցների նախնական ստուգման ընթացակարգեր չկան, բացառությամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության ստորաբաժանման աշխատակիցների: • Ֆինանսական հաստատություններում աուդիտի անկախ և համարժեք ռեսուրսներով ապահովված գործառույթի պահպանումն ապահովող մեխանիզմներ չկան, հատկապես երբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության/ներքին համապատասխանության ստորաբաժանման գործառույթը վերապահված է ներքին աուդիտորին: • Ֆինանսական հաստատությունների աշխատակիցների ոչ բավարար ուսուցումը սասանում է պահանջների արդյունավետ կատարումը և համապատասխանությունը: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և դրանից բխող իրավական այլ ակտերով սահմանված պարտավորությունների՝ ֆինանսական հաստատությունների կողմից կատարման մակարդակը ցածր է:
Հ.22	Համապատասխանում է	

3.9. Կեղծ բանկերը (Հ.18)

3.9.1. Նկարագրություն և վերլուծություն

Կեղծ բանկեր ստեղծելու արգելքը (չ. 18.1).

649. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով ուղղակիորեն արգելվում է կեղծ բանկերի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 30-րդ կետով «կեղծ («շել») բանկը» սահմանվում է որպես «բանկ, որը գրանցված լինելով որևէ պետությունում, դրա տարածքում փաստացի գտնվելու կամ գործունեության վայր չունի, և որը փոխկապակցված չէ գործող այլ ֆինանսական հաստատությունների հետ»: Այնուհանդերձ, «գործող այլ ֆինանսական հաստատությունների հետ» փոխկապակցված չլինելու մասին նշումը չի համապատասխանում ՖԱԹՖ-ի պահանջին, որում նշվում է «փոխկապակցված չէ **կարգավորվող** ֆինանսական ծառայություններ մատուցող այնպիսի խմբի հետ, որը ենթարկվում է **արդյունավետ համախմբված վերահսկողության**»: Հայաստանյան սահմանման համաձայն, ուստի, բանկը «կեղծ բանկ» չի համարվի, եթե այն փոխկապակցված է կարգավորվող ծառայություններ մատուցող խմբի հետ, կամ եթե չի ենթարկվում արդյունավետ համախմբված վերահսկողության:

Կեղծ բանկերի հետ թղթակցային հարաբերությունների արգելքը (չ. 18.2) և պահանջը՝ հավաստիանալու, որ այլ երկրներում թղթակից ֆինանսական հաստատությունները չեն թույլատրում իրենց հաշիվների օգտագործումը կեղծ բանկերի կողմից (չ. 18.3).

650. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասով բանկերից պահանջվում է իրենց ներքին իրավական ակտերով սահմանել օտարերկրյա բանկերի թղթակցային հաշիվների բացման և վարման կարգը, ինչպես նաև օտարերկրյա բանկերում իրենց թղթակցային հաշիվների բացման և վարման առանձնահատկությունները, որպեսզի հավաստիանան, որ իրենք թղթակցային հարաբերություններ չեն հաստատել կեղծ բանկերի կամ այն բանկերի հետ, որոնք թույլատրում են կեղծ բանկերի կողմից իրենց հաշիվների օգտագործումը:

Արդյունավետության վերլուծություն.

Բանկերը, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի վերահսկողության վարչությունը նշեցին, որ Հայաստանում գործող կեղծ բանկեր չկան:

3.9.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Հստակեցնել «կեղծ բանկի» սահմանումն այնպես, որ համապատասխանի ՖԱԹՖ-ի ստանդարտին:

3.9.3. Համապատասխանությունը թիվ 18 հանձնարարականին

	Գնահա-տականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.18	Հիմնա-կանում համա-պատաս-խանում է	• «Կեղծ բանկի» սահմանումը Հայաստանի օրենսդրության մեջ չի համապատասխանում ՖԱԹՖ-ի ստանդարտին:

Կարգավորում, վերահսկողությունը, ուղղորդումը, մոնիտորինգը և պատժամիջոցները

3.10. Վերահսկողության և հսկողության համակարգը. իրավասու մարմինները և ԻԿԿ-ները: Դերը, գործառույթները, պարտականությունները և իրավասությունները (ներառյալ՝ պատժամիջոցները) (Հ. 23, 29, 17 և 25)

3.10.1. Նկարագրություն և վերլուծություն

651. Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենք, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենք, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենք, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք, «Վարկային կազմակերպությունների մասին» օրենք, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենք, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք, Կանոնակարգ 3/01, Կանոնակարգ 4/01, Կանոնակարգ 10, Կանոնակարգ 12, Կանոնակարգ 13:

Ֆինանսական հաստատությունների կարգավորումը և վերահսկողությունը (չ. 23.1).

652. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետն ընդգրկում է ՖԱԹՖ-ի «Մասնագիտական եզրույթների բացատրական բառարանում» թվարկված՝ ֆինանսական հատվածի բոլոր հաստատությունները: Վերջիններս բոլորը նորմատիվային պահանջների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների մասով ենթակա են կարգավորման և վերահսկողության ՀՀ ԿԲ-ի կողմից: Իրավական և կարգավորման դաշտի դրույթներով ֆինանսական հաստատություններից պահանջվում է կանխել, հայտնաբերել և

հաշվետվություններ ներկայացնել կասկածելի գործարքների մասին: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1(9)-րդ կետի համաձայն, ՀՀ ԿԲ-ն լիազորված է՝ վերահսկողություն իրականացնելու ֆինանսական հաստատությունների նկատմամբ: Բացի այդ, «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ԿԲ-ի խնդիրներից է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը:

653. ՀՀ ԿԲ-ն բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի, դրամական փոխանցումներ իրականացնողների և գրավատների նկատմամբ վերահսկողություն իրականացնող միասնական լիազոր մարմինն է: Գնահատողների այցի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից կարգավորվող և վերահսկվող ֆինանսական հաստատությունները 446-ն էին: Դրանց բոլորի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ԿԲ-ի ֆինանսական վերահսկողության վարչությունը:

Իրավասու մարմնի լիազորումը (չ. 23.2).

654. Ինչպես նշվեց, ՀՀ ԿԲ-ն այն իրավասու մարմինն է, որն լիազորված է՝ ապահովելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պարտավորությունների համարժեք կատարումը ֆինանսական հաստատությունների կողմից: «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ԿԲ-ն լիցենզավորում է բանկերին, ինչպես նաև այլ անձանց, կարգավորում և վերահսկում է նրանց գործունեությունը: «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 20-րդ հոդվածով ՀՀ ԿԲ-ի խորհրդին վերապահվում են ընդգրկուն իրավասություններ, որոնցից է, մասնավորապես, ՀՀ ԿԲ-ի նորմատիվ ակտերի ընդունման իրավասությունը («ե» կետ):

655. ՀՀ ԿԲ-ն վերահսկում է հետևյալ ֆինանսական հաստատություններին (հաշվետվություն տրամադրող անձանց).

Ֆինանսական հաստատություն	Թվաքանակը
Բանկեր	22
Վարկային կազմակերպություններ	25
Արտարժույթի դիլեր-բրոքերներ	2
Արտարժույթի փոխանակման կետեր	288
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	11
Արժեթղթերի/ներդրումային ընկերություններ	10
Կենտրոնական դեպոզիտարիա	1
Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններ	11
Ապահովագրական միջնորդներ	5
Գրավատներ	71
Ընդամենը.	446

656. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում դրանց շարքն են դասվում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 11-րդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը, որոնք սահմանում են նվազագույն իրավական պահանջները և կանոնները: ՀՀ ԿԲ-ի կողմից ստուգումներ անցկացնելու իրավասությունները նկարագրված են «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի

5-րդ գլխի 39.1-6 հոդվածներում: Այդ իրավասությունները ներառում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով նախատեսված պարտավորությունների՝ ֆինանսական հաստատությունների կողմից կատարման ստուգումների անցկացումը: 39.1-6-րդ հոդվածներով նախատեսվում են հետևյալ բաղադրիչները.

- Կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերահսկողությունը և ստուգումների անցկացումը,
- Ստուգման պայմանները,
- Վերստուգվող անձի պարտականությունները,
- Կենտրոնական բանկի պատասխանատվությունը,
- Վերստուգող խմբի իրավունքները և պարտականությունները,
- Ստուգումների ուղղությունները (ոլորտները) և ամփոփումը,
- Վերստուգվող անձի տարածքային ստորաբաժանումների ստուգումը:

«Պատշաճության և համապատասխանության» չափորոշիչները և հաստատությունների նկատմամբ հանցագործների հսկողության կանխարգելումը (չ. 23.3 և 23.3.1).

657. Կոնկրետ ոլորտային օրենքներով նախատեսվում են համապատասխան հաստատությունների լիցենզավորման հետևյալ պահանջները.

Ոլորտային օրենսդրություն	**Առանց ՀՀ ԿԲ-ի լիցենզիայի տվյալ գործունեությունն իրականացնելու արգելքը**	**Լիցենզավորման պահանջները**
«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք	4-րդ հոդվածի 2-րդ մաս	Գլուխ 3. Հոդված 23. Բանկային գործունեության լիցենզիան Հոդված 24. Լիցենզավորման փուլերը Հոդված 25. Լիցենզիա ստանալու նախնական հավանության համար անհրաժեշտ փաստաթղթերը Հոդված 26. Լիցենզիա ստանալու նախնական հավանությունը Հոդված 27. Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումը Հոդված 28. Մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը Հոդված 29. Լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները Հոդված 30. Գրանցման և լիցենզավորման հետ կապված վճարները Հոդված 31. Բանկերի գրանցումների մատյանը Հոդված 32. Լիցենզիայի անվավեր ճանաչումը և դրա իրավական հետևանքները Հոդված 33. Փոփոխությունների գրանցումը Հոդված 34. Գրանցումն անվավեր ճանաչելը
Կանոնակարգ 4/1, Գլուխ 4, ինչպես նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք	5-րդ հոդված՝ «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենք	Հոդված 38. Ապահովագրական գործունեության լիցենզիան Հոդված 39. Ապահովագրական գործունեության լիցենզիայի գործողությունը Հոդված 40. Ընկերության գրանցումը և լիցենզավորումը Հոդված 41. Գրանցման և լիցենզավորման մասին որոշումը

		Հոդված 42. Գրանցման և լիցենզավորման դիմումի մերժման հիմքերը
«Վարկային կազմակերպությունների մասին» օրենք	5-րդ հոդվածի 1-ին մաս	Հոդված 5. Վարկային կազմակերպության պետական գրանցումն ու լիցենզավորումը, վարկավորում իրականացնող իրավաբանական անձանց վերագրանցումը
«Արժեթղթերի շուկայի մասին» օրենք	33-րդ հոդվածի 1-ին մաս	Հոդված 33. Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան Հոդված 34. Լիցենզիայի գործողության շրջանակը Հոդված 35. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցումը Հոդված 36. Ներդրումային ընկերության գրանցումը և լիցենզավորումը Հոդված 37. Գրանցման և լիցենզավորման մասին որոշումը Հոդված 38. Գրանցման և լիցենզավորման դիմումի մերժման հիմքերը
Արտարժույթի մասին՝ կանոնակարգ 10	Գլուխ 1, կետ 1	Գլուխ 2. Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը

«Պատշաճության և համապատասխանության» պահանջները.

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքը

658. «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 22-րդ հոդվածով նախատեսվում են բանկերի ղեկավարներին ներկայացվող պահանջները և նրանց որակավորման գնահատումը: Նշված հոդվածի համաձայն, «բանկի ղեկավարներ» են համարվում բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրինության անդամները, ինչպես նաև բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ բանկի դեպարտամենտի, վարչության, բաժնի, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կարծիքով որևէ կերպ բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները:

659. Վերոհիշյալ անձինք բանկի ղեկավար չեն կարող լինել, եթե.

- Նրանք ունեն դատավածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար,
- Դատարանի կողմից զրկված են ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
- Սնանկ են ճանաչված և ունեն չմարված (չներված) պարտավորություններ,
- Նրանց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում ՀՀ ԿԲ-ի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին,
- անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ

տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը,

- Նրանք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

660. ՀՀ ԿԲ-ն նաև իրավունք ունի սահմանելու բանկի ղեկավարների որակավորման կարգ և մասնագիտական համապատասխանության չափանիշներ: Վերոհիշյալ հոդվածով նաև նախատեսվում է, որ բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե տվյալ բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

661. Նմանապես, բանկի գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, տնօրինության անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք

662. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 18-րդ հոդվածով նախատեսվում է, որ ՀՀ ԿԲ-ի խորհուրդը կարող է մերժել ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումը, եթե՝

- նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածությունն օրենքով սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

- նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը չի հիմնավորել մասնակցության ձեռքբերման համար ներդրվող միջոցների օրինականությունը.

- նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձն օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական կամ իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

- անձը ճանաչվել է սնանկ և ունի չմարված (չներված) պարտավորություններ.

- նշանակալից մասնակցության ձեռքբերման գործարքն ուղղված է կամ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը.

- նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձն անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ

անձի՝ որպես Ընկերության բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի գործողությունները կարող են հանգեցնել Ընկերության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

- նշանակալից մասնակցության ձեռքբերման գործարքի հետևանքով Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված ՀՀ ԿԲ-ի խորհրդի կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից մասնակցի, կամ նրա հետ փոխկապակցված անձի ֆինանսական վիճակը կարող է պատճառ հանդիսանալ Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման, կամ Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի գործունեությունը կամ Ընկերության հետ նրա փոխհարաբերությունների բնույթը ՀՀ ԿԲ-ի խորհրդի հիմնավորված կարծիքով կարող է խոչընդոտել ՀՀ ԿԲ-ի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտել կամ արդյունավետ կառավարել Ընկերության ռիսկերը.

- փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումներով, կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, ինչպես նաև եթե այդ փաստաթղթերը կեղծ են կամ թերի են:

663. Օրենքի 22-րդ հոդվածն անդրադառնում է ղեկավարների մասնագիտական համապատասխանությանը և որակավորմանը: Այդ հոդվածի համաձայն, ՀՀ ԿԲ-ն սահմանում է ապահովագրական և վերաապահովագրական ընկերության, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց ղեկավարներին (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, ինչպես նաև մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը: Նախատեսվում է նաև, որ մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին ընկերության ղեկավարների համապատասխանությունը կարող է ստուգվել ՀՀ ԿԲ-ում, եթե նման բան սահմանված է ՀՀ ՀԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով:

664. Ինչ վերաբերում է ղեկավարների «պատշաճության և համապատասխանության» չափորոշիչներին, օրենքի 23-րդ հոդվածով նախատեսվում է, որ ընկերության ղեկավար կարող է լինել ցանկացած գործունակ անձ, որը՝

1) համապատասխանում է ՀՀ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին.

2) դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն.

3) դատավճռով զրկված չէ ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

4) ճանաչված չէ սնանկ և չունի չմարված (չներված) պարտավորություններ.

5) անցյալում չի կատարել այնպիսի արարք, որը ՀՀ ԿԲ-ի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ ՀՀ ԿԲ-ի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես Ընկերության ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել Ընկերության գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել Ընկերության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

6) քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

665. Նշվում է նաև, որ Ընկերության խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ Ընկերության գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ Ընկերության խորհրդի նախագահ կամ անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ այն դեպքերի, երբ երկու Ընկերություններից մեկը մյուսի դուստր կամ մայր ընկերությունն է:

666. «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի նման, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով նույնպես նախատեսվում է, որ Ընկերության գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, տնօրինության անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ անդամները չեն կարող միևնույն Ընկերությունում զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ Ընկերությունում լինել ղեկավար կամ այլ աշխատակից:

«Վարկային կազմակերպությունների մասին» օրենք

667. «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածն անդրադառնում է վարկային կազմակերպության ղեկավարներին, նրանց մասնագիտական չափանիշներին ու որակավորման կարգին: Հոդվածի 1-ին մասում նշվում է, որ վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալը, վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը և վերստուգիչ հանձնաժողովի անդամները: 2-րդ մասում նշվում է, որ վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.

բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.

գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.

դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին.

ե) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք:

668. Հոդվածի 3-րդ մասն անդրադառնում է վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշներին և կարգին, որը սահմանում է ՀՀ ԿԲ-ն:

«Արժեթղթերի շուկայի մասին» օրենք

669. Օրենքի 58-րդ հոդվածը նվիրված է ղեկավարների նկատմամբ պահանջներին: Հոդվածի 1-ին մասի համաձայն, ներդրումային ընկերության ղեկավարներն են ներդրումային ընկերության տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահը և անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, ինչպես նաև տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: 2-րդ մասով նախատեսվում է, որ ներդրումային ընկերության ղեկավար չի կարող լինել այն անձը, որը՝

1) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) չունի սույն օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան մասնագիտական որակավորում.

3) դատավճռով զրկված է ֆինանսական, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից՝ դրա մասին դատավճռում ուղղակի նշված լինելու դեպքում.

4) ճանաչված է սնանկ կամ ունի չմարված (չներված) պարտավորություններ.

5) անցյալում կատարել է այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը ՀՀ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ ՀՀ ԿԲ-ի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես ներդրումային ընկերության ղեկավար, չի կարող պատշաճ կերպով կառավարել ներդրումային ընկերության գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել ներդրումային ընկերության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

Արտարժույթի փոխանակման կետեր

670. Թիվ 4/3 կանոնակարգի 3-րդ գլխով սահմանվում են փոխանակման կետերի աշխատակիցներին ներկայացվող մասնագիտական որակավորման չափանիշները և նրանց քննելու կարգը: Նշվում է, որ փոխանակման կետի աշխատակիցը պետք է ունենա Կենտրոնական բանկի կողմից տրված մասնագիտական որակավորման վկայական, որը ստանալու համար պետք է բավարարի հետևյալ մասնագիտական չափանիշներին.

ա) Հայաստանի Հանրապետության արժութային օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն,

բ) իր կողմից իրականացվող արժութային գործառնությունների իմացություն:

671. Նույն գլուխն անդրադառնում է նաև սահմանված չափանիշները բավարարող թեկնածուների գնահատմանը, որը կատարում է ՀՀ ԿԲ-ի լիցենզավորման և

վերահսկողության հանձնաժողովը (հետայսու՝ «Հանձնաժողով»)՝ տեստային եղանակով, համակարգչի միջոցով: Գրավոր քննության տեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը մշակվում է Կենտրոնական բանկի կողմից: Հարցերը, ինչպես նաև դրանցում կատարվող լրացումները և փոփոխությունները հաստատվում են ՀՀ ԿԲ-ի նախագահի կողմից: Քննության մասնակցելու համար ՀՀ ԿԲ դիմող անձինք ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) քննությանը մասնակցելու հայտ (ձև 8),

բ) քննությանը մասնակցելու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը,

գ) տեղեկանք աշխատակցի մասին (ձև 4), և

դ) անձնագրի պատճենը:

Նորմատիվային կարգավորման կիրառությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նկատմամբ (չ. 23.4).

672. ՀՀ ԿԲ-ի կարգավորման և վերահսկողության դաշտում գործող բոլոր ֆինանսական հաստատությունների նկատմամբ տարածվում է նաև նորմատիվային վերահսկողությունը: Նշված հաստատությունները պետք է ունենան ռիսկի կառավարման համարժեք համակարգեր, ներքին հսկողության արդյունավետ կառուցվածք, տեղեկատվության պահպանման համարժեք համակարգեր և գործելակերպ, ինչպես նաև ներքին աուդիտի անկախ գործառույթ՝ ստուգելու կոնկրետ ոլորտային օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից այլ իրավական ակտերով նախատեսված պահանջների բավարարումը: Սահմանված է նաև ամենամյա արտաքին աուդիտի պահանջ: Հայաստանում գործող ֆինանսական խմբեր չկան:

Արժեքների փոխանցման/փոխանակման ծառայությունների լիցենզավորումը կամ գրանցումը (չ. 23.5), արժեքների փոխանցման/փոխանակման ծառայությունների մոնիտորինգը և վերահսկողությունը (չ. 23.6), այլ ֆինանսական հաստատությունների լիցենզավորումը և վերահսկողությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համատեքստում (չ. 23.7).

673. Դրամական փոխանցումներ իրականացնողները և արտարժույթի փոխանակման կետերը լիցենզավորվում, կարգավորվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: Նրանք, որպես այդպիսին, կրում են ՀՀ ԿԲ-ի սահմանած՝ իրավական և կարգավորման բոլոր պարտավորությունները, ներառյալ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով նախատեսվածները: Արժույթի/արժեքների փոխանցման ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ զետեղված են ՀՀ.VI-ին նվիրված բաժնում:

Արդյունավետության վերլուծություն.

674. Կոնկրետ ոլորտային օրենքներով սահմանվում է ֆինանսական հաստատությունների լիցենզավորման իրավական դաշտը, հաստատություններում ղեկավարի կամ ավելի բարձր պաշտոն զբաղեցնող անձանց որակավորման կարգը, ինչպես նաև՝ կիրառելի «պատշաճության և համապատասխանության» չափորոշիչները: Հաստատությունների տարբեր տեսակների համար սահմանված պահանջները շատ նման են միմյանց: ՀՀ ԿԲ-ի իրավաբանական վարչության լիցենզավորման բաժինը ստանում, ուսումնասիրում և գնահատում է դիմումներին կից ներկայացվող տեղեկությունների համարժեքությունը, պարզում դիմողների միջոցների և հարստության աղբյուրները, և ուսումնասիրում բիզնես-պլանները:

675. Ինչպես նշվեց, Հայաստանի ֆինանսական համակարգը վերահսկում է ՀՀ ԿԲ-ն: ՀՀ ԿԲ-ի իրավաբանական վարչության լիցենզավորման բաժինը ձեռք է բերում տեղեկություններ, գնահատում և առաջարկություններ ներկայացնում ֆինանսական հաստատություններին լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների սեփականության և ներդրումների նկատմամբ հսկողության վերաբերյալ:

676. Կարգավորվող բոլոր ֆինանսական հաստատությունները պարտավոր են Հայաստանում գործելու համար ստանալ թույլտվություն ՀՀ ԿԲ-ից: Կոնկրետ ոլորտային օրենքների համաձայն (տես «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 18-րդ հոդվածը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 17-րդ և 18-րդ հոդվածները, «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 54-րդ և 55-րդ հոդվածները, և «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 7-րդ հոդվածը), նշված հաստատությունների նկատմամբ տարածվում են լիցենզավորման խիստ պահանջներ, ներառյալ սեփականատերերի, տնօրենների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատուների տեխնիկական գիտելիքների, վճարունակության և ազնվության ստուգումները: Լիցենզավորման բաժնի աշխատակիցները նշեցին, որ իրականացվում են խիստ և ընդգրկուն ստուգումներ, ներառյալ բանկերից և անձանցից երաշխավորությունների, ֆինանսական կարողությունը և ազնվությունը հաստատող ապացույցների, որակավորման փաստը հաստատող հիմքերի, իրական շահառուների հայտարարությունների, մասնագիտական փորձի վերաբերյալ տեղեկությունների և նախկին դատվածության մասին (թե ներպետական, թե միջազգային իրավապահ մարմիններից) տվյալների ստացումը: Նման ընթացակարգեր/ստուգումներ իրականացվում են բանկային գործունեության, վարկային կազմակերպության, արժեթղթերի ընկերության, ապահովագրական ընկերության, դրամական փոխանցումներ իրականացնողների և արտարժույթի փոխանակման կետերի գործունեության համար լիցենզիա ներկայացնող բոլոր անձանց նկատմամբ: Գործընթացը նույնն է դիմող ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար. միակ տարբերությունն այն է, որ ոչ ռեզիդենտների պարագայում լիցենզավորման բաժինը հարցումներ է կատարում նաև ինտերնետով, ինչպես նաև՝ դիմելով օտարերկրյա իրավասու վերահսկող մարմիններին:

677. Նախնական ստուգումներից զատ, բոլոր ապագա սեփականատերերը, տնօրենները, կառավարիչները և կարևոր պաշտոն զբաղեցնող այլ անձինք պարտավոր են ներկայացնել հայտարարություն, որում կհավաստիացնեն, ի մասնավորի, որ՝ i) դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունեն, ii) դատավճռով կամ դատարանի որոշմամբ չեն զրկվել ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական կամ իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից, iii) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության չեն ենթարկվել հանցագործության համար, և iv) այլ պետությունների քրեական օրենքներով սահմանված կարգով պատասխանատվության չեն ենթարկվել հանցագործության համար:

678. Վերոհիշյալ հայտարարությունը լրացնում և ստորագրում են ապագա սեփականատերերը՝ հասկանալով, որ փաստաթղթերի կամ փաստերի կեղծ հայտարարությունն առաջացնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվություն: Ստորագրելով հայտարարությունը՝ անձինք նաև պարտավորվում են ՀՀ ԿԲ-ին ծանուցել տրամադրվող տեղեկատվության ցանկացած փոփոխության մասին: Դիմելու գործընթացն ավարտելուց հետո լիցենզիա տրամադրելու կամ լիցենզիայի տրամադրումը մերժելու մասին որոշումը կայացնելու վերջնական իրավասությունը վերապահված է ՀՀ ԿԲ-ի խորհրդին:

679. ՀՀ ԿԲ-ի լիցենզավորման բաժնից ստացված հետևյալ տեղեկություններն արտացոլում են 2006-2008 թթ. ընթացքում ՀՀ ԿԲ-ի կողմից ստացված դիմումների թիվը (աղյուսակ 1), բավարարված դիմումների թիվը (աղյուսակ 2), հետ վերցված դիմումների թիվը (աղյուսակ 3), մերժված դիմումների թիվը (աղյուսակ 4) և ուժը կորցրած ճանաչված լիցենզիաների թիվը (աղյուսակ 5):

Աղյուսակ 1.

Ստացված դիմումների թիվը			
Ֆինանսական հաստատություններ	2006	2007	2008
Բանկեր	0	1	2
Վարկային կազմակերպություններ	8	5	5
Ապահովագրական ընկերություններ	0	1	13*
Ապահովագրական բրոքերներ	0	2	7
Ներդրումային ընկերություններ	5	5	10
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	3	8	4
Վճարահաշվարկային ընկերություններ	0	5	2
Գրավատներ	23	11	12
Արտարժույթի դիլերներ	1	4	1
Արտարժույթի փոխանակման կետեր	96	26	28

* Երկու ընկերություններ դիմել են նաև վերաապահովագրության լիցենզիա ստանալու համար:

Աղյուսակ 2.

Տրամադրված լիցենզիաների թիվը			
Ֆինանսական հաստատություններ	2006	2007	2008
Բանկեր	0	1	0
Վարկային կազմակերպություններ	7	4	4
Ապահովագրական ընկերություններ	0	1	8 ընկերություններ վերալիցենզավորվել են, 5-ը՝*

			լիցենզավորվել
Ապահովագրական բրոքերներ	0	0	6
Ներդրումային ընկերություններ	5	5	9 ընկերություններ վերալիցենավորվել են, 1-ը՝ լիցենզավորվել
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	2	5	3
Վճարահաշվարկային ընկերություններ	0	3	2
Գրավատներ	16	9	10
Արտարժույթի դիլերներ	0	2	1
Արտարժույթի փոխանակման կետեր	65	21	25

Աղյուսակ 3.

Հետ վերցված դիմումների թիվը			
Ֆինանսական հաստատություններ	2006	2007	2008
Բանկեր	0	0	0
Վարկային կազմակերպություններ	0	0	1
Ապահովագրական ընկերություններ	0	0	0
Ապահովագրական բրոքերներ	0	0	1
Ներդրումային ընկերություններ	0	0	0
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	0	1	0
Վճարահաշվարկային ընկերություններ	0	0	0
Գրավատներ	0	0	0
Արտարժույթի դիլերներ	0	0	0

Արտարժույթի փոխանակման կետեր	0	0	0

Աղյուսակ 4.

Մերժված դիմումների թիվը			
Ֆինանսական հաստատություններ	2006	2007	2008
Բանկեր	0	0	0
Վարկային կազմակերպություններ	1	1	0
Ապահովագրական ընկերություններ	0	0	0
Ապահովագրական բրոքերներ	0	2	0
Ներդրումային ընկերություններ	0	0	0
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	01	2	1
Վճարահաշվարկային ընկերություններ	0	2	0
Գրավատներ	7	2	2
Արտարժույթի դիլերներ	1	2	0
Արտարժույթի փոխանակման կետեր	31	5	3

Աղյուսակ 5.

Ուժը կորցրած ճանաչված լիցենզիաների թիվը			
Ֆինանսական հաստատություններ	2006	2007	2008
Բանկեր	0	0	
Վարկային կազմակերպություններ	0	0	
Ապահովագրական ընկերություններ	12*[1]	8*[2]	1*[3]
Ապահովագրական բրոքերներ	1	1	2

Ներդրումային ընկերություններ	1	9	8
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	0	1	0
Վճարահաշվարկային ընկերություններ	0	0	0
Գրավատներ	12	8	3
Արտարժույթի դիլերներ	0	4	4
Արտարժույթի փոխանակման կետեր	118	31	23

*[1] Վեց լիցենզիաներ ուժը կորցրած են ճանաչվել ընկերությունների ներկայացրած դիմումների հիման վրա:
*[2] Վեց լիցենզիաներ ուժը կորցրած են ճանաչվել ընկերությունների ներկայացրած դիմումների հիման վրա:
*[3] Մեկ լիցենզիա ուժը կորցրած է ճանաչվել ընկերության ներկայացրած դիմումի հիման վրա:

680. ՀՀ ԿԲ-ն ֆինանսական վերահսկողության վարչության միջոցով նորմատիվային վերահսկողության շրջանակներում իրականացնում է ֆինանսական հաստատությունների կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման միջոցառումների վերահսկողություն: ՀՀ ԿԲ-ի ղեկավար մարմինները 2008 թվականին ընդունեցին և ներդրեցին նորմատիվային և ՓԼ/ԱՖ կանխարգելման նպատակով բանկերի՝ ռիսկայնության վրա հիմնված վերահսկողության իրականացման մեթոդաբանությունը: Ռիսկայնության վրա հիմնված մոտեցումը «Բանկային ռիսկերի գնահատման համակարգի» մաս է կազմում, որը տեղերում (տեսչական) և փաստաթղթային ստուգումների վերահսկողական գործիք է: Վերջինիս նպատակը բանկերի ռիսկայնության մակարդակի գնահատումը և դասակարգումն է ռիսկերի և դրանց կառավարման արդյունավետության վերլուծության և բանկային ռիսկերի բաղադրյալ ցուցիչ (որում հաշվի են առնվում բանկի հետ կապված զուտ ռիսկերը և դրանք կառավարելու՝ բանկի կարողությունը) կազմելու միջոցով: Բանկերի վերահսկողությունը կազմակերպվում է ըստ գործարար գործունեության ուղղությունների և գործառույթների: Իշխանությունները նշեցին, որ ՓԼ/ԱՖ կանխարգելման մոտեցումը հիմնվում է օրենքով, այլ իրավական ակտերով և պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներով սահմանված տարաբնույթ պահանջների բավարարման ուսումնասիրության վրա:

681. Համալիր ստուգումների ընդհանուր գործընթացը, որն անդրադառնում է նաև ՓԼ/ԱՖ կանխարգելման խնդիրներին, որպես կանոն ներառում է պլանավորումը՝ փաստաթղթային ստուգումների արդյունքների հիման վրա, տեսչական այցելությունները, այցելության արդյունքներն արձանագրող զեկույցների նախապատրաստումը, հայտնաբերված խնդիրները լուծելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները և պատժամիջոցները (անհրաժեշտության դեպքում): Չնայած որ ՀՀ ԿԲ-ն ընդունել և մշակել է ռիսկայնության վրա հիմնված վերահսկողության մոտեցում, տեղերում անցկացվող ստուգումները պրակտիկայում նախկինի պես հիմնականում կենտրոնանում են իրավական համապատասխանության ուղղությամբ (հիմնականում շեշտադրվում է կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրումը և սահմանված նվազագույն շեմը գերազանցող գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրումը)՝ հաշվի առնելով, որ ներկայումս կիրառվող ստուգման ընթացակարգերը դեռևս չեն թարմացվել՝ արտացոլելու ռիսկայնության վրա հիմնված մոտեցումը և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թվականի) օրենքի պահանջները:

682. Գնահատողներն ուսումնասիրեցին մեկ (1) բանկի, մեկ (1) վարկային կազմակերպության, մեկ (1) ապահովագրական ընկերության և երեք (3) արտարժույթի փոխանակման կետերի ստուգումների հաշվետվությունների կրկնօրինակները (քաղվածքներ)՝ տրամադրված իշխանությունների կողմից: Բանկի, վարկային կազմակերպության և ապահովագրական ընկերության վերաբերյալ քաղվածքների վերլուծությամբ բացահայտվեց, որ ՀՀ ԿԲ-ի վերահսկողների այցելած և ստուգած ֆինանսական հաստատություններում հայտնաբերվել են բազմաթիվ էական թերություններ, ներառյալ՝ ֆիզիկական և իրավաբանական ոչ ռեզիդենտ անձանց հետ գործ ունենալիս ՀՊՈՒ միջոցառումների բացակայությունը, ինչպես նաև առանց առերես շփման և նոր տեխնոլոգիաների հիման վրա հաճախորդի հետ գործ ունենալիս համարժեք միջոցառումների բացակայությունը, համապատասխանության կառավարման մեխանիզմների բացակայությունը կամ անհամարժեքությունը և ներքին հսկողության համակարգերի անհամարժեքությունը, ներառյալ համապատասխանության պատասխանատուների և ներքին աուդիտի ոչ բավարար անկախության խնդիրները: Արտարժույթի փոխանակման կետերի վերաբերյալ իշխանությունների կողմից գնահատողներին տրամադրված հաշվետվությունները հիմնականում նվիրված էին «արտարժույթի փոխանակման գործառնությունների լիցենզավորման և կարգավորման», ինչպես նաև «մասնագիտացված անձի կողմից արտարժույթի առուվաճառքի գործարքի հաստատումների տրամադրման կարգի» մասին ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերի և որոշումների պահանջների չկատարմանը: Այդ արդյունքների հիման վրա գնահատողները հարցականի տակ են առնում ֆինանսական հաստատությունների կողմից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների համարժեք կատարման (կանխարգելիչ միջոցառումների) ընդհանուր արդյունավետությունը: Հաշվետվությունները բավարար տեղեկություններ չէին պարունակում, որպեսզի գնահատողները կարողանային հավաստիանալ, թե արդյոք հայտնաբերված խախտումների հիման վրա պահանջների չկատարման համար հաստատությունների նկատմամբ փաստացի կիրառվել են պատժամիջոցներ: Ուսումնասիրությունների արդյունքները հաստատեցին գնահատողների այցելած ֆինանսական հաստատությունների հետ հանդիպումների հիման վրա գնահատողների մոտ ձևավորված մտահոգություններն առ այն, որ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ գիտելիքների և իրազեկության մակարդակն ընդհանուր առմամբ ցածր է, հատկապես այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են վարկային կազմակերպությունները, ապահովագրական և արժեթղթերի ընկերությունները, արտարժույթի փոխանակման կետերը և դրամական փոխանցումներ իրականացնողները:

683. Կարևոր է նաև հիշատակել, որ գնահատողներին չտրամադրվեցին արժեթղթերի/ներդրումային ընկերությունների ստուգումների հաշվետվությունների կրկնօրինակներ: Իշխանությունները նշեցին, սակայն, որ ՀՀ ԿԲ-ն որոշում է կայացրել 2008 թ. հունվարի 1-ից մինչև 2009 թ. հունվարի 6-ն ընկած ժամանակահատվածում այդ ոլորտում չիրականացնել տեղերում (տեսչական) ստուգումներ: Այդ որոշումը հիմնավորվել է երկու հիմնական գործոններով. 1) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով (որում կատարվել են փոփոխություններ 2007 թ. հոկտեմբերի 11-ին, որոնք ուժի մեջ են մտել 2008 թ. փետրվարի 28-ին) արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայություններ մատուցող ընկերություններից պահանջվել է նախքան 2008 թ. հունիսի 30-ը վերագրանցվել և վերալիցենզավորվել որպես ներդրումային ընկերություններ, և 2) չկար ստուգումների ձեռնարկ (վերջինիս մշակումը ներառվել է Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչության 2009 թ. աշխատանքային ծրագրում, որը հաստատվել է ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից 2009 թ. հունվարի 13-ին):

Գնահատողներն ուսումնասիրեցին նաև ՀՀ ԿԲ-ի ՖՎՎ-ի վերահսկողների խմբի կողմից ներկայումս կիրառվող ստուգումների ձեռնարկները և արձանագրեցին հետևյալը.

Ոլորտ	Փաստաթղթային	Փաստաթղթային	Տեղերում	Տեղերում (տեսչական)

	գործունեություն. առկա՞ է ձեռնարկ	գործունեությունը ներառու՞մ է ՓԼ/ԱՖ կանխարգելման խնդիրների ուսումնասիրության ընթացակարգեր	(տեսչական) ստուգումներ. առկա՞ է ձեռնարկ	ստուգումների ձեռնարկը ներառու՞մ է ՓԼ/ԱՖ կանխարգելման խնդիրների ուսումնասիրության ընթացակարգեր
Բանկեր	Այո	Ոչ	Այո	Այո. այդ ընթացակարգերը, սակայն, համահունչ էին «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2004 թ. օրենքին, այսինքն՝ ընթացակարգերը հնացած էին:
Վարկային կազմակերպություններ	Ծանոթագրություն. ՀՀ ԿԲ-ի ղեկավար մարմինները նշեցին, որ բանկերի ստուգումների ձեռնարկն օգտագործվում է/կիրառելի է նաև այս ոլորտում:	Ոչ	Տես ծանոթագրությունը:	Տես ծանոթագրությունը:
Ապահովագրական ընկերություններ	Այո	Ոչ	Այո	Ոչ
Արժեթղթերի/ ներդրումային ընկերություններ	Իշխանությունների կողմից չտրամադրվեց:	Հնարավոր չեղավ պարզել:	Ոչ. իշխանությունները տրամադրեցին ձեռնարկի նախագիծը, որը ՀՀ ԿԲ-ի վարչությանն է ներկայացվել 2009 թ. հուլիսի 7-ին՝ գնահատողների այցից մոտ 5 ամիս անց:	Այո. ձեռնարկի նախագիծը ներառում է ՓԼ/ԱՖ կանխարգելման միջոցառումներին նվիրված ընթացակարգեր: Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ այն միայն վերջերս է ներկայացվել վարչությանը, դեռևս վաղաժամ է դրա արդյունավետ կատարումը գնահատելու համար:
Արտարժույթի փոխանակման կետեր	Իշխանությունների կողմից չտրամադրվեց:	Հնարավոր չեղավ պարզել:	Այո	Ոչ. ընդամենը ընդհանուր բնույթի ձևակերպում, որի համաձայն գործարքներն ուսումնասիրվում են՝ գնահատելու համար դրանց համապատասխանությունը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի» օրենքին և կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցի, ինչպես նաև այլ իրավական ակտերի դրույթներին:
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	Իշխանությունների կողմից չտրամադրվեց:	Հնարավոր չեղավ պարզել:	Իշխանությունների կողմից չտրամադրվեց:	Հնարավոր չեղավ պարզել:

684. Հաշվի առնելով վերոհիշյալ աղյուսակում զետեղված տեղեկատվությունը, գնահատողների համար դժվար է պարզել ՓԼ/ԱՖ կանխարգելման առնչությամբ համարժեք և արդյունավետ հսկողության և տեղերում (տեսչական) ստուգումների անցկացման հարցում ՀՀ ԿԲ-ի ՖՎՎ-ի արդյունավետության մակարդակը: Ակնհայտ է նաև, որ բանկերի և ապահովագրական ընկերությունների ստուգումների ձեռնարկներն անհրաժեշտ է անհապաղ թարմացնել, որպեսզի դրանցում ներառվեն 2008 թվականի օրենքից և հարակից

իրավական ակտերից բխող՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ընթացակարգեր: Այլ դեպքերում, օրինակ՝ վարկային կազմակերպությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների պարագայում, անհրաժեշտ են ստուգումների ձեռնարկներ:

Ուղեցույցներ ֆինանսական հաստատությունների համար (չ. 25.1).

685. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1(7) կետի համաձայն լիազոր մարմնի՝ ՀՀ ԿԲ-ի լիազորություններից է ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրավական ակտերի ընդունումը, ուղեցույցների հաստատումը, տիպաբանությունների հրապարակումը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով հաշվետվություն տրամադրող անձանց, վերահսկող և այլ մարմինների ու կազմակերպությունների հետ: Այդ պարտավորության շրջանակներում ՀՀ ԿԲ-ն ընդունել է «Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցը»: Վերջինս բաղկացած է երկու մասերից. I մասը պարունակում է 4 գլուխներ, որոնք նվիրված են՝ 1) երկրի կամ աշխարհագրական ռիսկին, 2) հաճախորդի ռիսկին, 3) ապրանքի/ծառայության ռիսկին, և 4) ռիսկերի ենթադրվող մակարդակի որոշման վրա ազդող գործոններին: II մասը պարունակում է երկու գլուխներ, որոնք նվիրված են՝ 1) հաճախորդների պատշաճ ուսումնասիրությանը, և 2) ռիսկերի մակարդակի վերլուծությանը և վերահսկողությանը:

Արդյունավետության վերլուծություն.

686. Ֆինանսական հաստատությունները տեղեկացված էին ՀՀ ԿԲ-ի հաստատած ուղեցույցի մասին: Այնուհանդերձ, այլ հանձնարարականներ դիտարկելիս ակնհայտ դարձավ, որ ֆինանսական հաստատություններին անհրաժեշտ են լրացուցիչ ուղենիշներ/ուղղորդում, մասնավորապես՝ հետևյալ ոլորտներում.

- Սահմանել հաճախորդների վերաբերյալ տվյալների կամ տեղեկությունների թարմացման համապատասխան ժամկետ՝ Հ.5-ին համահունչ (չ. 5.7),

- ՀՊՈՒ միջոցառումների իրականացումը ֆինանսական հաստատությունների կողմից ՀՊՈՒ պարզեցված կամ նվազեցված միջոցառումներ կիրառելիս՝ Հ.5-ին համահունչ (չ. 5.12),

- Սովորական հաճախորդների հետ գործարար հարաբերությունների ընթացքում անընդհատ պատշաճ ուսումնասիրության իրականացում (Հ. 5.7.1-ին համահունչ) և ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերությունների հավելյալ անընդհատ դիտազննում (Հ. 6-ին համահունչ (չ. 6.4)):

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարման մոնիտորինգ իրականացնելու՝ վերահսկողների իրավասությունը (չ. 29.1).

687. Հայաստանում ֆինանսական հաստատությունների (բանկեր, օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր, վարկային կազմակերպություններ, վճարահաշվարկային կազմակերպություններ, արժեթղթերի շուկայի մասնակիցներ, ներդրումային ընկերություններ, գրավատներ և ֆինանսական ոլորտում գործունեություն իրականացնելու համար լիցենզավորված այլ անձինք) գործունեությունը կարգավորող միասնական մարմինը[39] ՀՀ ԿԲ-ն է: ՀՀ ԿԲ-ի իրավասություններն ամրագրված են «ՀՀ ԿԲ-ի մասին»

[39] ՀՀ ԿԲ-ն լիազորված է նաև գրավատների լիցենզավորման, գործունեության կարգավորման և վերահսկողության մասով:

օրենքի 2-րդ հոդվածով: Նույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում են ՀՀ ԿԲ-ի խնդիրները, որոնք ներառում են, ի թիվս այլոց.

- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը (5-րդ հոդվածի 1(դ) կետ),
- Բանկերի, ինչպես նաև այլ անցանձ լիցենզավորումը և նրանց գործունեության կարգավորումն ու վերահսկողությունը (5-րդ հոդվածի 2(գ) կետ), և
- վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն, գործունեության կարգավորումը և վերահսկողությունը (5-րդ հոդվածի 2(ե) կետ):

688. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով ֆինանսական հաստատություններից պահանջվում է բավարարել հաճախորդների նույնականացման պահանջները, իրականացնել անընդհատ և հավելյալ պատշաճ ուսումնասիրություն, կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ տրամադրել ՖԴԿ-ին, հաշվետվություններ տրամադրել նվազագույնը շեմը գերազանցող գործարքների վերաբերյալ, պահպանել տեղեկատվություն, մշակել, ընդունել և ի կատար ածել ներքին իրավական ակտեր, ստուգել գործարքները, գործ ունենալ դրամական փոխանցումների հետ և ստեղծեն ներքին համապատասխանության ստորաբաժանումներ: Օրենքով և կանոնակարգերով նախատեսվում են նաև պատժամիջոցներ պահանջների չկատարման համար: Այս առումով ՀՀ ԿԲ-ն լիազորված է իրականացնել մոնիտորինգ և ապահովել համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին:

689. Ի լրումն «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքով ՀՀ ԿԲ-ին վերապահված վերահսկողական լիազորություններից, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1(9) կետով նախատեսվում է, որ լիազոր մարմինը (օրենքի 3-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն դա Կենտրոնական բանկին է) «օժանդակում է հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողությանը»: Գործող իրավական կարգավորման դաշտն ընդհանուր առմամբ ՀՀ ԿԲ-ին ընձեռում է ֆինանսական հաստատությունների վերահսկողության համապարփակ իրավասություններ:

Վերահսկողների իրավասությունը՝ անցկացնելու ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության ստուգումներ (չ. 29.2).

690. «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 5-րդ գլխի նորմերով սահմանվում է ստուգումներ, վերահսկողություն և ուսումնասիրություններ անցկացնելու՝ ՀՀ ԿԲ-ի իրավասությունների հետևյալ շրջանակը.

Գլուխ 5. 39-րդ հոդված	Հոդվածով նախատեսված գործունեությունը	Պատասխանատու վարչությունը
Հոդված 39[1]	Կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերահսկողությունը և ստուգումների անցկացումը	Վերահսկողության վարչություն[40]
Հոդված 39[2]	Ստուգման պայմանները	Վերահսկողության վարչություն

[40] Օրենքի 39[1]-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ ստուգումներն իրականացնում է Կենտրոնական բանկի՝ ստուգումների համար լիազորված ստորաբաժանումը (հետայսու՝ վերստուգող ստորաբաժանում):

Հոդված 39[3]	Վերստուգվող անձի պարտականությունները: Կենտրոնական բանկի պատասխանատվությունը	Վերահսկողության վարչություն
Հոդված 39[4]	Վերստուգող խմբի իրավունքները և պարտականությունները	Վերահսկողության վարչություն
Հոդված 39[5]	Ստուգումների ուղղությունները (ոլորտները) և ամփոփումը	Վերահսկողության վարչություն
Հոդված 39[6]	Վերստուգվող անձի տարածքային ստորաբաժանումների ստուգումը	Վերահսկողության վարչություն

691. Օրենքի 39[1] հոդվածով ՀՀ ԿԲ-ին նաև իրավունք է վերապահվում՝ իրականացնելու վերստուգվող անձանց գործունեության ամենօրյա հեռակա վերահսկողություն՝ վերստուգվող անձանց կողմից օրենքով, Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով և դրանց հիման վրա Կենտրոնական բանկի խորհրդի, նախագահի կամ վերստուգող ստորաբաժանման կողմից պահանջվող՝ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, ինչպես նաև սույն գլխով նախատեսված այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման միջոցով:

692. Ֆինանսական հաստատությունների վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ԿԲ-ի ֆինանսական վերահսկողության վարչությունը (ՖՎՎ)՝ հետևյալ բաժինների միջոցով.

- ՖՎՎ 1, 2 և 3. պատասխանատու են բանկերի մասով.
- ՖՎՎ 4 և 5. պատասխանատու են ապահովագրական ընկերությունների մասով,
- ՖՎՎ 6. պատասխանատու է արժեթղթերի/ներդրումային ընկերությունների և Կենտրոնական դեպոզիտարիայի մասով,
- ՖՎՎ. պատասխանատու է տեղեկատվական համակարգերի և դրամական փոխանցումներ իրականացնողների մասով,
- ՖՎՎ. պատասխանատու է վարկային կազմակերպությունների և գրավատների մասով, և
- ՖՎՎ. պատասխանատու է արտարժույթի փոխանակման կետերի մասով:

693. Հետևյալ աղյուսակում արտացոլված են համապատասխան ժամկետներում ՀՀ ԿԲ-ի կողմից տեղերում անցկացված (տեսչական) ստուգումների ցուցանիշները:

Ֆինանսական հաստատություն[41]	**Թիվը**	**2006**	**2007**	**2008**
Բանկեր	22	5	3	6ա
Վարկային կազմակերպություններ	25	4	4	5բ
Արտարժույթի դիլերներ-բրոքերներ	2	3	3	0

[41] Կենտրոնական դեպոզիտարիայում ստուգումներ անցկացվել են 2006 և 2007 թվականներին, սակայն դրանք այդ ստուգումների ընթացքում չի ուսումնասիրվել համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությանը, քանի որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2004 թվականի օրենքի համաձայն կենտրոնական դեպոզիտարիան չէր հանդիսանում հաշվետվություն տրամադրող անձ, և այդպիսին դարձավ միայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» 2008 թվականի օրենքի ուժով:

Արտարժույթի փոխանակման կետեր	288	529	399	191զ
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	11	0	3	3
Արժեթղթերի/ներդրումային ընկերություններ	10	3	9	1դ
Կենտրոնական դեպոզիտարիա	1	[1]	[1]	0
Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններ	11	3	3	3գ
Ապահովագրական միջնորդներ	5	2	2	0
Գրավատներ	71	26	30	24ե
Ընդամենը.	446			

ա. Որոնցից 5-ը ստուգվել են 2004 թ. օրենքի, 1-ը՝ 2008 թ. օրենքի հիման վրա
բ. Որոնցից 3-ը ստուգվել են 2004 թ. օրենքի, 2-ը՝ 2008 թ. օրենքի հիման վրա
գ. Որոնցից 1-ը ստուգվել է 2004 թ. օրենքի, 2-ը՝ 2008 թ. օրենքի հիման վրա
դ. Ընկերությունը ստուգվել է 2008 թ. օրենքի հիման վրա
ե. Որոնցից 18-ը ստուգվել են 2004 թ. օրենքի, 6-ը՝ 2008 թ. օրենքի հիման վրա
զ. Որոնցից 64-ը ստուգվել են 2004 թ. օրենքի, 127-ը՝ 2008 թ. օրենքի հիման վրա

694. ՀՀ ԿԲ-ի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները նշեցին, որ տարեկան ստուգումների ծրագիրը պրակտիկայում ներառում է բոլոր հաստատությունների ստուգումը տարեկան առնվազն մեկ անգամ (արտարժույթի փոխանակման կետերն այցելվում են ավելի հաճախակի): Այնուհանդերձ, վերոհիշյալ աղյուսակի հիման վրա տպավորություն է առաջանում, որ յուրաքանչյուր տարի ստուգվող հաստատությունների թիվը համահունչ չէ իշխանությունների մատնանշած պրակտիկային: Այդ տեղեկություններով առաջնորդվելու դեպքում ՀՀ ԿԲ-ից կպահանջվեր մոտ չորս տարի բոլոր բանկերը, վարկային կազմակերպությունները, դրամական փոխանցումներ իրականացնողները և ապահովագրական ընկերությունները և միջնորդները ստուգելու համար: Անցկացված ստուգումների վերաբերյալ իշխանությունները նշեցին, որ բանկը ստուգվում է միջինը չորսից վեց, վարկային կազմակերպությունը՝ երեք, ապահովագրական ընկերությունը՝ չորսից վեց, ներդրումային ընկերությունը՝ երկու, գրավատունը՝ երկու, և դրամական փոխանցումներ իրականացնողը և արտարժույթի փոխանակման կետը՝ երկու վերստուգողի կողմից:

Փաստաթղթեր և տեղեկատվություն պահանջելու և ստանալու՝ վերահսկողների իրավասությունը (չ. 29.3 և 29.3.1).

695. ՀՀ ԿԲ-ն, որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի խնդիրների վերահսկողության լիազոր մարմին, ունի համարժեք իրավասություն՝ պահանջելու և ստանալու «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից իրավական ակտերով նախատեսված պարտավորությունների բավարարման մոնիտորինգին առնչվող բոլոր մատյանները, գրառումները և այլ տեղեկությունները: Բացի այդ, «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 39^3-րդ հոդվածով նախատեսվում է, որ վերստուգվող անձը պարտավոր է կատարել վերստուգող խմբի ղեկավարի և անդամների օրինական պահանջները, ինչպես նաև վերստուգող խմբի ղեկավարին և անդամներին ներկայացնել գրավոր և բանավոր բացատրություններ, տեղեկություններ և պարզաբանումներ ստուգման ենթակա փաստաթղթերի և տեղեկատվության վերաբերյալ:

39[4]-րդ հոդվածով նախատեսվում է, որ վերստուգող խումբն իրավասու է վերստուգվող անձից, նրա ղեկավարներից և իրավասու աշխատակիցներից պահանջել ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթեր, թեկուզ և դրանք պարունակեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկություններ: ՀՀ ԿԲ-ի վերստուգող խումբը կարող է տեղեկատվությունը որպես այդպիսին ստանալ առանց դատարանի որոշման:

Պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու իրավասությունը (չ. 29.4).

696. ՓԼ և ԱՖ դեմ պայքարի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև նրանց տնօրենների և ավագ ղեկավարության նկատմամբ պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու իրավասությունը նախատեսված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն պատիժները նշանակվում են ֆինանսական հաստատությունների կոնկրետ ոլորտային գործունեությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան՝ հետևյալ կերպ.

Ֆինանսական հաստատություններ	Օրենսդրություն	Հնարավոր պատիժները
Բանկեր և օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ	«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք. 60-րդից 65-րդ հոդվածներ	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանք - որակավորման վկայականից զրկում - լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Վարկային կազմակերպություններ, ներառյալ վարկային միություններ, խնայողական միություններ, լիզինգային և ֆակտորինգային կազմակերպություններ և այլ վարկային կազմակերպություններ	«Վարկային կազմակերպությունների մասին» օրենք. 18-րդ և 19-րդ հոդվածներ	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանք - որակազրկում և ղեկավարի որակավորման վկայականից զրկում - լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Արժութային գործառնություններ կատարող անձինք	«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենք. 10-րդ հոդված	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանք - գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Վճարահաշվարկային համակարգեր (ՎՀՀ) և վճարահաշվարկային կազմակերպություններ (ՎՀԿ)	«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենք. 26-րդ և 27-րդ հոդվածներ	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքների նշանակում ՎՀԿ-ի կամ դրա ղեկավարի նկատմամբ - ՎՀԿ-ի ղեկավարի որակավորման

		վկայականից զրկում - լիցենզիայի գործողության կասեցում - լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Արժեթղթեր թողարկող և արժեթղթերում ներդրումներ իրականացնող անձինք, արժեթղթերի կարգավորվող շուկաներ, չկարգավորվող առևտրի ոլորտ և Կենտրոնական դեպոզիտարիա	«Արժեթղթերի շուկայի մասին» օրենք. 209-րդ հոդված	- նախազգուշացում՝ խախտումն ուղղելու հանձնարարականով - տուգանք - լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում - մասնագիտական որակավորումից զրկում
Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններ, ապահովագրական և վերաապահովագրական միջնորդներ և ապահովագրության հետ կապված այլ հարաբերություններ	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք. 145-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - Տուգանք - ղեկավարին կամ պատասխանատու անձին որակավորման վկայականից զրկում - լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում

Արդյունավետության վերլուծություն.

697. ՀՀ ԿԲ-ն լիազորված է՝ վերահսկելու ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցառումների իրականացումն իր իրավասության դաշտում գործող ֆինանսական հաստատությունների կողմից, ինչպես նաև՝ պահանջելու և ստանալու վերահսկողական լիազորությունների կատարման համար իր կողմից անհրաժեշտ համարվող տեղեկատվությունը: Ակնհայտ է, որ 2006 թվականից ի վեր ՀՀ ԿԲ-ի ֆինանսական վերահսկողության վարչությունը ջանքերը և ռեսուրսները կենտրոնացրել է արտարժույթի փոխանակման կետերի տեղերում (տեսչական) ստուգումներն առավել հաճախակի անցկացնելու ուղղությամբ. այնուհանդերձ, նույն ժամանակահատվածում բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնողների և արժեթղթերի/ներդրումային ընկերությունների ստուգումների հաճախականությունը հարցականի տակ է դնում իրականացման արդյունավետությունը:

698. Գնահատողներն ուսումնասիրեցին նաև բանկային գործունեության ստուգումների ձեռնարկը և պարզեցին, որ դրանում ամրագրված ընթացակարգերն ընդունվել են 2007 թվականին և, ըստ երևույթին, համապատասխանում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նախորդ (2004 թ.) օրենքի պահանջներին: Իշխանությունները նշեցին, որ նույն ձեռնարկն օգտագործվել է նաև վարկային կազմակերպությունների վերստուգելիս: Իշխանությունները տրամադրեցին արժեթղթերի շուկայի ընկերությունների, դրամական փոխանցումներ իրականացնողների, ապահովագրական ընկերությունների և արտարժույթի փոխանակման կետերի ստուգումների ձեռնարկները (հայերեն տարբերակները): Այնուհանդերձ, ձեռնարկների առավել մանրակրկիտ վերլուծությամբ բացահայտվեց, որ բացառությամբ բանկային գործունեության ստուգումների ձեռնարկի (որն օգտագործվում է նաև վարկային կազմակերպությունների համար), չկան ապահովագրական, արժեթղթերի, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների ոլորտների

կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցառումների իրականացման և տեղերում (տեսչական), և փաստաթղթային ստուգումները նախատեսող ընթացակարգեր:

Հանձնարարական թիվ 17

699. Իրավական դաշտը. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք, «Կենտրոնական բանկի մասին» օրենք, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք, «Վարկային կազմակերպությունների մասին» օրենք, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենք, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենք, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենք, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք:

Արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների առկայությունը (չ. 17.1) և պատժամիջոցների տեսակները՝ շրջանակը և համաչափությունը (չ. 17.4).

700. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման համար կիրառելի վարչական պատիժների ռեժիմը: Վերջինս տարբերակված է ըստ հաշվետվություն տրամադրող անձի տեսակի. եթե հաշվետվություն տրամադրող անձը ֆինանսական հաստատություն է, ապա «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների խախտումն առաջացնում է նրանց գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ՝ ոլորտային այդ օրենսդրությամբ սահմանված կարգով (27-րդ հոդվածի 2-րդ մաս): Եթե խախտումը կատարել է իրավաբանական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատություն («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված իմաստով), ապա կիրառվում է օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով ուղղակիորեն ամրագրված պատասխանատվության միջոցը: Ի վերջո, ֆիզիկական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց կողմից պահանջների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված պատասխանատվություն:

701. Այսպես, ֆինանսական հաստատությունների պարագայում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով ամրագրված պարտավորությունների չկատարման համար պատասխանատվության միջոցները սահմանված են հետևյալ օրենքներով.

Ոլորտ	Օրենսդրություն	Պատժամիջոց
	«Կենտրոնական բանկի մասին» օրենք. 39-րդ հոդված	
Բանկեր և օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ	«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք. 60-րդից 65-րդ հոդվածներ	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքի նշանակում հաստատության և/կամ ղեկավարի նկատմամբ - ղեկավարի որակավորման վկայականից զրկում - հաստատության լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Վարկային	«Վարկային	- նախազգուշացում և

կազմակերպություններ, ներառյալ վարկային միություններ, խնայողական միություններ, լիզինգային և ֆակտորինգային կազմակերպություններ և այլ վարկային կազմակերպություններ	կազմակերպությունների մասին» օրենք. 18-րդ և 19-րդ հոդվածներ	խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքի նշանակում հաստատության և/կամ ղեկավարի նկատմամբ - ղեկավարի որակավորման վկայականից զրկում - հաստատության լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Արժութային գործառնություններ կատարող անձինք	«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենք. 10-րդ հոդված	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքի նշանակում հաստատության և/կամ ղեկավարի նկատմամբ - հաստատության լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Վճարահաշվարկային համակարգեր (ՎՀՀ) և վճարահաշվարկային կազմակերպություններ (ՎՀԿ)	«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենք. 26-րդ և 27-րդ հոդվածներ	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքի նշանակում հաստատության և/կամ ղեկավարի նկատմամբ - ղեկավարի որակավորման վկայականից զրկում - հաստատության լիցենզիայի գործողության կասեցում - հաստատության լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
Արժեթղթեր թողարկող և արժեթղթերում ներդրումներ իրականացնող անձինք, արժեթղթերի կարգավորվող շուկաներ, չկարգավորվող առևտրի ոլորտ և Կենտրոնական դեպոզիտարիա	«Արժեթղթերի շուկայի մասին» օրենք. 209-րդ հոդված	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքի նշանակում հաստատության և/կամ ղեկավարի նկատմամբ - հաստատության լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում - ղեկավարի որակավորման վկայականից զրկում
Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններ, ապահովագրական և վերաապահովագրական միջնորդներ և	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք. 145-րդ հոդված	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքի նշանակում հաստատության և/կամ ղեկավարի նկատմամբ

ապահովագրության հետ կապված այլ հարաբերություններ		- ղեկավարի որակավորման վկայականից զրկում - հաստատության լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում

702. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանվում է իրավաբանական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների պատասխանատվությունը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման համար: 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, իրավաբանական անձ հանդիսացող ֆինանսական հաստատությունների կողմից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման համար կիրառվում են պատասխանատվության հետևյալ միջոցները.

Խախտվող նորմը	Կիրառելի պատիժը	Պատիժը կիրառող մարմինը
«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս (1 և 2)	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
5-րդ հոդվածի 1(3)-րդ մաս	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 1,000-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
5-րդ հոդվածի 3-րդ մաս	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
10-րդ հոդվածի 1-ին մաս (4-րդ և 6-րդ կետեր)	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
15-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
16-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
19-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
20-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ	ՀՀ ԿԲ

	- Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-ապատիկի չափով	
21-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
22-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 800-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
23-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
24-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 700-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ
25-րդ հոդված	- Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական, և/կամ - Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով	ՀՀ ԿԲ

703. Ի վերջո, ֆիզիկական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց կողմից պահանջների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված պատասխանատվություն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 165-րդ հոդվածի 9-րդ մասով խախտումների համար նախատեսվում են նույն պատիժները, ինչ թվարկված է վերը:

704. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխանաբար 27-րդ հոդվածի 8-րդ մասով և 165.9-րդ հոդվածով նախատեսվում է, որ պետական մարմինների պաշտոնատար անձանց կողմից պահանջների խախտումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով: Իշխանությունները նշեցին, որ պատիժների հաշվարկման իմաստով սահմանված նվազագույն աշխատավարձը 1,000 դրամ է (մոտ 3.25 ԱՄՆ դոլարի համարժեքը):

Պատժամիջոցներ կիրառող պետական մարմնի լիազորումը (չ. 17.2).

705. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1(11)-րդ մասով և 3-րդ մասով լիազոր մարմնին վերապահված գործառույթների և լիազորությունների շրջանակում ՀՀ ԿԲ-ի խորհուրդը լիազորված է՝ ֆինանսական հաստատությունների և իրավաբանական անձանց նկատմամբ կիրառել նույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները, ինչպես նաև նույն օրենքով սահմանված դեպքերում հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ պատասխանատվություն կիրառելու միջնորդություն ներկայացնել:

706. Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ «հաստատությունների կամ անձանց» նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցներ կիրառելու համար լիազորված է այդ հաստատություններին կամ անձանց լիցենզավորող համապատասխան մարմինը: Վերահսկողական լիազորությունը սահմանված է՝ հղում անելով այդ հաստատություններին կամ անձանց լիցենզավորելու կամ նշանակելու իրավասության վրա: Այնուհանդերձ,

«վերահսկող մարմիններ» հասկացության սահմանումը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն (3-րդ հոդվածի 1(7) կետ) ավելի ընդգրկուն է:

707. Որևէ վերահսկող մարմնի կողմից չլիցենզավորվող (չնշանակվող) ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց նկատմամբ, որպես այդպիսին, պատասխանատվության միջոցները կիրառվում են ՀՀ ԿԲ-ի ավագ ղեկավարության կողմից (6-րդ մաս):

Ֆինանսական հաստատությունների տնօրենների և ավագ ղեկավարների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հնարավորությունը (չ. 17.3).

708. Եվ իրավաբանական, և ֆիզիկական անձանց (ներառյալ ղեկավարների, տնօրենների, ավագ/գործադիր ղեկավարության և հաշվետվություն տրամադրող անձի այլ պաշտոնատար անձանց) համար պատժամիջոցներ նախատեսված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, ինչպես նաև ոլորտային գործունեությունը կարգավորող կոնկրետ օրենքներով, այդ թվում՝ «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 7-րդ մասով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ մասով, «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 10-րդ հոդվածով, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 213-րդ հոդվածով և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 145-րդ հոդվածի 3-րդ մասով:

Իրագործման պրակտիկայի վերլուծությունը.

709. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն ՀՀ ԿԲ-ն լիազորված է՝ օրենքի և հարակից այլ իրավական ակտերի պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցներ կիրառելու ֆինանսական հաստատությունների, դրանց աշխատակիցների, ղեկավարների, պատասխանատուների և ավագ պաշտոնատար անձանց նկատմամբ: Կիրառելի պատժամիջոցները կարգավորվում են ոլորտային գործունեությունը կարգավորող կոնկրետ օրենքներով: ՀՀ ԿԲ-ն՝ որպես միասնական լիազորված մարմին, իրավասու է կիրառել տարատեսակ պատժամիջոցներ, այդ թվում՝ նախազգուշացումներ, տուգանքներ, որակավորման վկայականից զրկում և լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում, որոնք համարվում են համաչափ պատժամիջոցներ: Չնայած որ պատժամիջոցների այս տեսականին կարող է որոշ առումով սահմանափակ թվալ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակում խախտումներին անդրադառնալիս ՀՀ ԿԲ-ն պրակտիկայում խախտումը գնահատում է նորմատիվային կարգավորման դաշտում և յուրաքանչյուր դեպքում կայացնում առանձին որոշում՝ հաշվի առնելով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի խախտումների ծանրությունը և կրկնության հանգամանքը:

710. ՀՀ ԿԲ-ն պատիժներ կիրառելու վերոհիշյալ լիազորությունից օգտվել է մի քանի անգամ՝ և նորմատիվային պահանջների, և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների խախտումների դեպքերում, ընդ որում՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների չկատարման համար նշանակված տուգանքները տատանվել են 50,000-ից մինչև 17,500,000 դրամի միջակայքում, որը համարվում է նաև համաչափ և տարհամոզիչ:

711. Չնայած որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և հարակից այլ իրավական ակտերի խախտումների համար կոնկրետ քրեաիրավական պատիժներ նախատեսված չեն, ֆիզիկական անձի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների դիտավորյալ չկատարումը կարող է պատժվել ՔՕ-ի հիման վրա, եթե գործունեությունն իրենից ներկայացնում է, օրինակ, ՓԼ-ին կամ ԱՖ-ին օժանդակություն կամ աջակցություն (ներառյալ հանցափորձը):

712. Հետևյալ աղյուսակում զետեղված են ՓԼ/ԱՖ կանխարգելման միջոցառումները չկատարելու համար ՀՀ ԿԲ-ի կողմից ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառված բազմաթիվ պատիժներից մի քանիսը:

Պատասխանատվության ենթարկված ֆինանսական հաստատության տեսակը	Ամսաթիվ	Կիրառված միջոցը	Տուգանքի գումարը (դրամ)
Ապահովագրական ընկերություն	12/30/08	Նախազգուշացում և ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական	0
Վարկային կազմակերպություն	11/10/08	Տուգանք, նախազգուշացում և ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական	100,000
Վարկային կազմակերպություն	10/29/08	Նախազգուշացում և ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական	0
Բանկ	12/25/07	Տուգանք	200,000
Բանկ	12/26/07	Նախազգուշացում և ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական	0
Բանկ	10/30/07	Տուգանք	200,000
Վարկային կազմակերպություն	9/11/07	Նախազգուշացում և ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական	0

Բանկ	8/21/07	Տուգանք	200,000

713. Ըստ իշխանությունների տրամադրած տեղեկություններից, ՀՀ ԿԲ-ն ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառել է հետևյալ պատժամիջոցները.

Պատասխանատվության ենթարկված ֆինանսական հաստատության տեսակը	Ամսաթիվ	Կիրառված միջոցը	Կիրառված տուգանքների ընդհանուր գումարը (դրամ)
13 բանկ	2008	Նախազգուշացումներ և տուգանքներ	300,000
12 բանկ	2007	Նախազգուշացումներ և տուգանքներ	650,000
1 բանկ	2006	Տուգանքներ	18,500,000
2 վարկային կազմակերպություն	2008	Նախազգուշացումներ և տուգանքներ	100,000
1 վարկային կազմակերպություն	2007	Նախազգուշացում	0
3 ապահովագրական ընկերություն	2008	Նախազգուշացումներ	0

3.10.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Կատարելագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերահսկողությունը՝ վերահսկողության ընդհանուր շրջափուլի մեջ ներառելով ռիսկայնության վրա հիմնված բաղկացուցիչներ, ինչպես նաև, մասնավորապես, թարմացնել վերահսկողական ստուգումների ընթացակարգերը՝ դրանցում արտացոլելու ռիսկայնության վրա հիմնված վերահսկողության մոտեցումը և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջները,

- Ապահովել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պահանջների համարժեք բավարարումը ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների կողմից,

- Իրականացնել բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնողների և արժեթղթերի/ներդրումային ընկերությունների կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների բավարարման հաճախակի և անընդհատ ստուգումներ,

- Թարմացնել բոլոր ոլորտների ՓԼ/ԱՖ կանխարգելման վերստուգման ընթացակարգերը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջներին համահունչ,

- Լրացուցիչ ուղեցույցներ/ուղղորդում տրամադրել ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ հետևյալ ոլորտներում.

- Հաճախորդների տվյալների կամ տեղեկատվության թարմացման պատշաճ ժամկետների սահմանում, և

- Սովորական հաճախորդների հետ գործարար հարաբերությունների ընթացքում անընդհատ պատշաճ ուսումնասիրության իրականացում և ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերությունների հավելյալ անընդհատ դիտազննում:

3.10.3. Համապատասխանությունը թիվ 17, 23, 25 և 29 հանձնարարականներին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.17	Համապատասխանում է	
Հ.23	Հիմնականում համապատասխանում է	• Համակարգում ցածր է ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումների համապատասխանության և արդյունավետության մակարդակը: • Բոլոր ոլորտներում ստուգումների գործող ընթացակարգերը հնացել են և չեն արտացոլում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջները:
Հ.25	Հիմնականում համապատասխանում է	• Չեն ընդունվել ուղեցույցներ, որոնք ֆինանսական հաստատություններին կաջակցեին հաճախորդների վերաբերյալ տվյալների/տեղեկատվության հետ կապված պարտավորությունների արդյունավետ կատարման, սովորական հաճախորդների անընդհատ պատշաճ ուսումնասիրության իրականացման, ինչպես նաև ՔԱՈՒԱ-ների հետ հարաբերությունների հավելյալ անընդհատ դիտազննման հարցերում: • Չկան կոնկրետ ուղեցույցներ՝ նվիրված ԱՖ տիպաբանություններին կամ սառեցման պարտավորություններին:
Հ.29	Հիմնականում համապատասխանում է	• Բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնողների և արժեթղթերի/ներդրումային ընկերությունների՝ օրենքով նախատեսված ստուգումները մասնակիորեն են իրագործվում: • Չկան վերահսկողական ստուգումների թարմացված և արդյունավետ ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեին «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջների վրա:

3.11. Փողի կամ արժեքների փոխանցման ծառայությունները (ՀՀ.VI)

3.11.1. Նկարագրություն և վերլուծություն (համառոտագիր)

Իրավական դաշտը. «Կենտրոնական բանկի մասին» օրենք, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենք, Կանոնակարգ 16

Գրանցող կամ լիցենզավորող մարմինների լիազորումը (չ. VI.1), ՖԱԹՖ-ի հանձնարարականների կիրառությունը (Հ.4-11-ի, 13-15-ի և 21-23-ի, ինչպես նաև ՀՀ.VII-ի կիրառությունը)(չ. VI.2), և պատժամիջոցները (չ. 17.1-17.4-ի կիրառությունը Հ.17-ի շրջանակում)(չ. VI.5).

714. «Կենտրոնական բանկի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2(գ) և 2(ե) կետերով նախատեսվում է, որ ՀՀ ԿԲ-ն լիցենզավորում, կարգավորում և վերահսկում է (այդ թվում՝ լիցենզավորման պայմանների կատարման առումով) փողի կամ արժեքների փոխանցման (ՓԱՓ) ծառայություններ մատուցողների գործունեությունը: Այդ անձինք Հայաստանում գործում են որպես դրամական փոխանցումներ իրականացնողներ: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ի թիվ 16 կանոնակարգով նախատեսվում են դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման պահանջները, որոնք նկարագրված են Հ.23-ին նվիրված բաժնում:

715. ՓԱՓ/դրամական փոխանցումներ իրականացնողները «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4(դ) կետում թվարկված են որպես հաշվետվություն տրամադրող անձինք և կրում են այդ օրենքով նախատեսված բոլոր պարտավորությունները, ներառյալ.

- Հաճախորդների նույնականացում (15-րդ հոդված),
- Հաճախորդների անընդհատ և հավելյալ պատշաճ ուսումնասիրությունները (համապատասխանաբար 16-րդ և 19-րդ հոդվածներ),
- Կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրումը ՖԴԿ-ին (5-րդ հոդված),
- Նվազագույն շեմը գերազանցող գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրումը (5-րդ հոդված),
- Տեղեկատվության պահպանումը (20-րդ հոդված),
- Ներքին իրավական ակտերը (21-րդ հոդված),
- Գործարքների դիտանցումը (8-րդ հոդված),
- Դրամական փոխանցումները (18-րդ հոդված),
- Պատասխանատվությունը խախտումների համար (27-րդ հոդված),
- Ներքին դիտարկումների ստորաբաժանումը (22-րդ հոդված), և
- Անսովոր և բարդ գործարքներին ուշադրություն դարձնելը:

716. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքով նախատեսվում են երկու տեսակի անձինք՝ 1) վճարահաշվարկային համակարգեր (ՎՀՀ), և 2) վճարահաշվարկային կազմակերպություններ (ՎՀԿ): Անձանց այդ երկու տեսակները սահմանվում են հետևյալ կերպ.

- ՎՀՀ. վճարային գործիքների, քլիրինգի իրականացման, միջոցների փոխանցման և վերջնահաշվարկի կատարման ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների ամբողջությունը (ընդհանրությունը), որի միջոցով ապահովվում է վճարման կատարումը շահառուին: ՎՀՀ-ների գործունեության կանոնները հանդիսանում են ՎՀՀ-ի գործունեության կանոնակարգի բաղկացուցիչ մասը, որը հաստատում է ՎՀՀ-ի օպերատորի կառավարման իրավասու մարմինը, և

- ՎՀԿ-ն վերոհիշյալ օրենքի 19-րդ հոդվածում նշված անձ է, այսինքն՝ այդ օրենքով Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստացած իրավաբանական անձ:

717. Գնահատողների այցի դրությամբ Հայաստանում գործում էին դրամական փոխանցումներ իրականացնող ութ լիցենզավորված անձինք: Դրամական փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձանց ցուցակը վարում են ՀՀ ԿԲ-ի իրավաբանական վարչության լիցենզավորման բաժինը և ֆինանսական վերահսկողության վարչությունը, որը պատասխանատու է նրանց կարգավորման և վերահսկողության համար: Մասնավոր զրույցներից ստացված տեղեկություններից պարզ դարձավ, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանում կարծես առանց լիցենզիայի գործում է դրամական փոխանցումներ իրականացնող մեկ անձ, որը ենթակա չէ ՀՀ ԿԲ-ի կարգավորմանը և վերահսկողությանը: ՀՀ ԿԲ-ի պաշտոնատար անձինք նշեցին, որ իրենք տեղյակ չեն Հայաստանում գործող դրամական փոխանցումներ իրականացնող նման անձի մասին:

Արժեքների փոխանցման ծառայություններ մատուցողների մոնիտորինգը (չ. VI.3).

718. Ինչպես նշվեց, ՀՀ ԿԲ-ն իրականացնում է դրամական փոխանցումներ իրականացնողների (որոնք Հայաստանի համակարգում ներառված են հաշվետվություն տրամադրող անձանց ցուցակում) վերահսկողություն, մասնավորապես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով նախատեսված պարտավորությունների կատարման մասով: Բացի այդ, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածն անդրադառնում է ՎՀԿ-ների գործունեության նկատմամբ վերահսկողությանը՝ ամրագրելով, որ ՎՀԿ-ների նկատմամբ վճարահաշվարկային ծառայությունների մատուցման գծով վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ ԿԲ-ին: «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ ՀՀ ԿԲ-ն այդ վերահսկողությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով և ՀՀ ԿԲ-ի իրավական ակտերով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասում նշվում է նաև, որ ՀՀ ԿԲ-ի ծառայողները վճարահաշվարկային կազմակերպություններում ստուգումներն ու վերստուգումները կատարում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով և ՀՀ ԿԲ-ի սահմանած կարգով, ժամկետներում, դեպքերում և հաճախականությամբ:

Գործակալների ցանկը (չ. VI.4).

719. Դրամական փոխանցում իրականացնողներից չի պահանջվում վարել իրենց գործակալների թարմ ցանկ, և չի պահանջվում, որպեսզի այդ ցանկը հասանելի լինի լիազորված իրավասու մարմնին (որը տվյալ պարագայում ՀՀ ԿԲ-ն է): Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ դրամական փոխանցումներ իրականացնողներից և գործակալներից պահանջվում է գործունեություն իրականացնելու համար գրանցվել ՀՀ ԿԲ-ում և ստանալ վերջինիս թույլտվությունը, ՀՀ ԿԲ-ն վարում է նրանց ցանկը:

Պատժամիջոցները (չ. 17.1-17.4-ի կիրառությունը Հ.17-ի շրջանակում) (չ. VI.5).

720. Ինչպես նկարագրված է Հ.17-ին նվիրված բաժնում, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանվում է օրենքով և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում դրամական փոխանցումներ իրականացնողների նկատմամբ կիրառելի պատժամիջոցների ռեժիմը: 27-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ եթե

հաշվետվություն տրամադրող անձը ֆինանսական հաստատություն է, ապա նրա կողմից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների խախտումն առաջացնում է իր գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ, իսկ դրամական փոխանցումներ իրականացնողների պարագայում նրանց գործունեությունը կարգավորող օրենսդրությունը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքն է: Հետևյալ աղյուսակում ներկայացված են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքով նախատեսված տարբեր պատժամիջոցները:

Վճարահաշվարկային համակարգեր (ՎՀՀ-ներ) և վճարահաշվարկային կազմակերպություններ (ՎՀԿ-ներ)	«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենք. 26-րդ և 27-րդ հոդվածներ	- նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական - տուգանքների նշանակում ՎՀԿ-ի կամ դրա ղեկավարի նկատմամբ - ՎՀԿ-ի ղեկավարի որակավորման վկայականից զրկում - լիցենզիայի գործողության կասեցում - լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում

721. Չնայած որ վերոհիշյալ պատժամիջոցները կիրառելի են նորմատիվային պահանջների խախտումների դեպքում, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի խախտումներն առաջացնում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ (պատասխանատվության միջոցների ռեժիմի մանրակրկիտ նկարագրության համար տես Հ.17-ին նվիրված վերլուծությունը):

722. Դրամական փոխանցումներ իրականացնողները կրում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված բոլոր պարտավորությունները: ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված լինելու բերումով՝ նրանց ենթակա են նաև կարգավորման և վերահսկողության ՀՀ ԿԲ-ի վերահսկողության վարչության կողմից: Դրամական փոխանցումներ իրականացնողներից չի պահանջվում վարել իրենց գործակալների թարմ ցանկ, և չի պահանջվում, որպեսզի այդ ցանկը հասանելի լինի լիազորված իրավասու մարմնին (որը տվյալ պարագայում ՀՀ ԿԲ-ն է):

Արդյունավետության վերլուծություն.

723. Դրամական փոխանցումներ իրականացնողները համարվում են հաշվետվություն տրամադրող անձինք, և նրանց նկատմամբ տարածվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով (Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով) սահմանված բոլոր, այդ թվում՝ պատասխանատվության միջոցներին վերաբերող դրույթները: ՀՀ ԿԲ-ն վարում է համակարգում գործող՝ դրամական փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձանց ցանկ, որը ներառում է դրամական փոխանցումներ իրականացնողների գործակալների և ենթագործակալների ցանկը: Դրամական փոխանցումներ իրականացնող այն անձինք, որոնց այցելեցին գնահատողները, պրակտիկայում գործում են որպես ենթագործակալներ, որոնք վարում են իրենց գործակալների՝ ՀՀ ԿԲ-ի վերահսկողության և կարգավորման դաշտում գործող հիմնական երկու բանկերի ցանկը: Ինչ վերաբերում է նրանց գործունեությանը, ապա դրամական փոխանցումներ իրականացնողների

գործունեությունը սահմանափակվում է միայն ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումների իրականացման ծառայություններ մատուցելով: ՀՀ ԿԲ-ի լիցենզիան նրանց թույլ չի տալիս գործարքներ կատարել իրավաբանական անձանց հետ կամ գործել որպես արտարժույթի փոխանակման կետ, որի համար պահանջվում է առանձին լիցենզիա:

Լրացուցիչ տարրը. Լավագույն փորձի փաստաթղթով VI Հատուկ հանձնարարականի մասով նախատեսված միջոցառումների իրականացումը (չ. VI.6).

724. Իշխանություններն իրագործել են Լավագույն փորձի փաստաթղթով ՀՀ.VI-ի մասով նախատեսված մի շարք միջոցառումներ, ներառյալ.

- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով սահմանված բոլոր պարտավորությունների տարածումը նաև դրամական փոխանցումներ իրականացնողների նկատմամբ, որոնք համարվում են հաշվետվություն տրամադրող անձինք,
- Դրամական փոխանցումներ իրականացնողները պարտավոր են լիցենզավորվել ՀՀ ԿԲ-ի կողմից և ենթակա են ՀՀ ԿԲ-ի կողմից կարգավորման և վերահսկողության,
- Դրամական փոխանցումներ իրականացնողները պարտավոր են լիցենզավորման գործընթացում ՀՀ ԿԲ-ին ներկայացնել իրենց գործարար գործունեության հասցեն,
- Դրամական փոխանցումներ իրականացնողների նկատմամբ կիրառելի են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի պահանջների չկատարման համար սահմանված պատասխանատվության միջոցները:

3.11.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Իշխանություններին առաջարկվում է հետամուտ լինել դրամական փոխանցումներ իրականացնող այն անձի գործունեությանը, որն ըստ երևույթին ոչ ֆորմալ կարգով գործում է ֆինանսական համակարգում՝ առանց ՀՀ ԿԲ-ի գրանցման և հաստատման:

3.11.3. Համապատասխանությունը VI հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
ՀՀ.VI	Հիմնականում համապատասխանում է	• Ֆինանսական համակարգում ոչ ֆորմալ կարգով, առանց թույլտվության գործող՝ դրամական փոխանցումներ իրականացնող անձի կողմից չարաշահումների հնարավորությունը:

4. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը և տեղեկատվության պահպանումը (Հ.12)

4.1.1. Նկարագրություն և վերլուծություն

725. Բոլոր ՆՈՖԳՏՄ-ները, ՖԱԹՖ-ի մասնագիտական եզրույթների բացատրական բառարանում տրված՝ «նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների» սահմանմանը համահունչ, նախատեսված են որպես «ոչ

ֆինանսական հաստատություններ կամ անձինք», որոնք համարվում են «հաշվետվություն տրամադրող անձինք»՝ համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի, և նրանց նկատմամբ տարածվում են այդ հոդվածով նախատեսվող՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանվող պարտավորությունների և պահանջների կիրառության շրջանակը տարբերվում է՝ կախված ՆՈՖԳՏՄ-ների տեսակից:

726. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասում (*թ-ժթ* ենթակետեր) հետևյալ ՆՈՖԳՏՄ-ները թվարկված են որպես «հաշվետվություն տրամադրող անձինք».

- ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք,
- նոտարներ,
- փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք,
- անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,
- անհատ ձեռնարկատեր աուդիտորներ և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,
- թանկարժեք մետաղների դիլերներ,
- թանկարժեք քարերի դիլերներ,
- շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատներ, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք,
- հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք:

727. ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ կիրառելի չեն այն լրացուցիչ կանոնակարգերը (Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ) և ուղեցույցները (Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույց), որոնք ֆինանսական հաստատությունների պարագայում ընդունվել են՝ ի կատարումն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի: 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չեն տարածվում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված որոշ պարտավորություններ, ինչպիսին է, օրինակ, «ներքին ակտեր» («կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ») ունենալու պահանջը (21-րդ հոդված) կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետության մակարդակը գնահատելու նպատակով արտաքին աուդիտ հրավիրելու պահանջը (23-րդ հոդվածի 2-րդ մաս): Անկախ աշխատակիցների թվից՝ մնում են ռիսկեր, և իշխանությունները չեն իրականացրել ռիսկերի կամ այս առումով դրանց ազդեցության որևէ գնահատում:

728. ՆՈՖԳՏՄ-ների մի շարք տեսակների մասնագիտական լիցենզավորումը և գործունեությունը կարգավորվում են կոնկրետ օրենքներով, չնայած որ վերջիններս չեն պարունակում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի լրացուցիչ պարտավորություններ: Ի լրումն, որևէ ԻԿԿ չի ընդունել ուղղակիորեն ՓԼ-ին կամ ԱՖ-ին առնչվող պահանջներ, բացառությամբ անդամների համար սահմանված վարքագծի կանոնագրքի:

729. **Իրավական դաշտը.** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

Սահմանված որոշակի դեպքերում ՀՊՈՒ միջոցառումների իրականացումը ՆՈՖԳՏՄ-ների կողմից (չ. 5.1-5.18-ի կիրառությունը Հ. 5-ի շրջանակում ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ) (չ. 12.1).

730. ՆՈՖԳՏՄ-ների կողմից ՀՊՈՒ միջոցառումներ իրականացնելու պահանջն ամրագրված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ մասում, ընդ որում՝ այն տարբերակված է ըստ ՆՈՖԳՏՄ-ի տեսակի և գործարքի տեսակի/մեծության՝ հետևյալ կերպ.

- <u>Ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք</u> պարտավոր են ՀՊՈՒ կատարել միայն այն գործարքների մասով, որոնք կապված են հաճախորդի համար անշարժ գույքի առուվաճառքի հետ,

- Նոտարները, փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անձինք, անհատ ձեռնարկատեր աուդիտորները և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, ինվեստիցիոն ընկերությունները պարտավոր են ՀՊՈՒ կատարել միայն հաճախորդի համար նախապատրաստվող կամ իրականացվող հետևյալ գործարքների մասով՝

    - Անշարժ գույքի առուվաճառք,

    - Հաճախորդի դրամական միջոցների, արժեթղթերի կամ այլ գույքի կառավարում,

    - Բանկային հաշիվների կառավարում,

    - Իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման համար դրամական միջոցների կամ այլ գույքի տրամադրում

    - Իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման գործառույթների իրականացում, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալի 75 տոկոսը գերազանցող բաժնի առուվաճառք, կամ իրավաբանական անձանց՝ 20 միլիոն դրամը (գնահատման պահի դրությամբ՝ 52,000 ԱՄՆ դոլար) գերազանցող անվանական կամ շուկայական արժեքով բաժնետոմսերի առուվաճառք:

731. Պահանջները չեն տարածվում բանկային, խնայողական կամ արժեթղթային հաշիվների կառավարման նկատմամբ:

732. Թանկարժեք մետաղների դիլերները և թանկարժեք քարերի դիլերները (ներառյալ՝ արվեստի գործերի դիլերները և սակարկությունների կազմակերպիչները) պարտավոր են ՀՊՈՒ կատարել միայն հաճախորդի հետ 5 միլիոն դրամը (13,000 ԱՄՆ դոլար) գերազանցող կանխիկ գործարքների մասով:

733. Խաղատները և շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք պարտավոր են ՀՊՈՒ կատարել միայն հաճախորդի կողմից կատարվող գործարքների (խաղանիշերի գնման, խաղադրույքների կատարման կամ շահումների) մասով՝ եթե գործարքի գումարը գերազանցում է 1 միլիոն դրամը (2,600 ԱՄՆ դոլար): Չկան հատուկ նորմեր, որոնցով կկարգավորվեին սահմանված նվազագույն դրամական շեմին հասնող կամ այն գերազանցող կուտակային կամ համախառն գործարքները: Այնուամենայնիվ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3(5)-րդ մասի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձը պետք է զգուշանա այն դեպքում, երբ հաճախորդը սահմանված նվազագույն շեմից ցածր է պահում գործարքների արժեքը, որպեսզի խուսափի նույնականացվելուց: Այս ոլորտի ներկայացուցիչները գնահատողներին տեղեկացրեցին, որ 1 միլիոն դրամը գերազանցող գործարքները նշանակալից չեն, չնայած որ նրանք բոլորը տեղյակ էին սահմանված նվազագույն շեմին և օրենքով ամրագրված պահանջներին. այնուհանդերձ, նրանց կողմից 6-րդ հոդվածի դրույթների ընկալման մակարդակը շատ ցածր էր, և դրանք չէին կիրառվում կուտակային կամ համախառն գործարքների նկատմամբ:

734. Հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք պարտավոր են ՀՊՈՒ կատարել այն դեպքում, երբ իրենք հանդես են գալիս որպես հիմնադրող գործակալ (ներկայացուցիչ) իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցելիս, հանդես են գալիս (վերապահում են այլ անձի հանդես գալու) որպես ընկերության տնօրեն (գործադիր մարմին), ընկերակցության մասնակից կամ իրականացնում են իրավաբանական անձի կառավարման համանման գործառույթներ, իրավաբանական անձի համար տրամադրում են գտնվելու (գործունեության, թղթակցության կամ վարչական) վայր, հանդես են գալիս (վերապահում են այլ անձի հանդես գալու) որպես կողմերի համաձայնությամբ ձևավորված ֆինանսական միջոցների հավատարմագրային կառավարիչ, կամ հանդես են գալիս (վերապահում են այլ անձի հանդես գալու) որպես այլ իրավաբանական անձի անվանատեր:

Անանուն հաշիվների արգելքը (չ. 5.1).

735. Օրենքներով, կանոններով կամ կանոնակարգերով ՆՈՖԳՏՄ-ներին թույլատրված չէ բացել կամ վարել անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, կամ հաճախորդների անունից բացել կամ վարել անանուն կամ այլ հաշիվներ: Գնահատողների անցկացրած հարցազրույցների մասնակցած ՆՈՖԳՏՄ-ները հաստատեցին, որ իրենք նման տեսակի հաշիվներ չեն վարում:

Երբ է պահանջվում ՀՊՈՒ կատարել (չ. 5.2).

736. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով ֆինանսական հաստատությունների համար սահմանված ՀՊՈՒ պահանջների վերլուծությունը, որը զետեղված է 3-րդ բաժնում, կիրառելի է նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ, ներառյալ, մասնավորապես, հաճախորդի նույնականացման պարտավորությունը:

Նույնականացման միջոցառումները և ստուգման աղբյուրները (չ. 5.3).

737. Նույնականացման միջոցառումների և ստուգման աղբյուրների մասով ՆՈՖԳՏՄ-ները պարտավոր են, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, նույնականացնել հաճախորդներին և ստուգել նրանց ինքնությունը՝ հիմնվելով արժանահավատ փաստաթղթերի վրա, որոնց մանրամասն անդրադարձ կա 3.2 բաժնում:

Պահանջը կիրառելի է՝ անկախ հաճախորդի հետ գործարար հարաբերության մշտական կամ միանգամյա լինելու հանգամանքից:

Իրավաբանական անձ կամ իրավաբանական կազմավորում հանդիսացող հաճախորդների նույնականացումը (չ. 5.4).

738. Սույն հաշվետվության 3.2 բաժնում զետեղված վերլուծությունը հավասարապես կիրառելի է ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Իրավաբանական անձանց կամ այլ կազմավորումների դեպքում նոտարները և աուդիտորները հիմք են ընդունում Պետական ռեգիստրի տրամադրած պետական գրանցման վկայականը, իսկ որոշ դեպքերում՝ նույնականացման և ստուգման նպատակով օգտագործում են հարկ վճարողի հերթական համարը: «Նոտարիատի մասին» օրենքի 40-րդ հոդվածի համաձայն, նոտարները պարտավոր են ստուգել իրավաբանական անձի ներկայացուցչի ինքնությունը: Ֆիզիկական անձի նույնականացման և ինքնության ստուգման համար օգտագործվող փաստաթուղթը հիմնականում անձնագրի կամ զինվորական գրքույկի բնօրինակն է, իսկ օտարերկրացիների դեպքում՝ անձնագիրը և կացության թույլտվությունը:

Իրական շահառուների նույնականացումը (չ. 5.5, 5.5.1 և 5.5.2).

739. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն իրական շահառուների նույնականացումը, որը վերլուծված է սույն հաշվետվության 3.2 բաժնում, հավասարապես կիրառելի է ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Մի շարք աուդիտորներ պրակտիկայում իրական շահառուներին նույնականացնում են նախքան նոր հաճախորդի հետ հարաբերություն հաստատելը՝ առաջնորդվելով նոր հաճախորդներ ստանձնելու վերաբերյալ իրենց ներքին ընթացակարգերով և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքով սահմանված պարտավորություններով, որի համաձայն նրանք պարտավոր են տեղեկատվություն ստանալ սեփականության կառուցվածքի մասին:

Տեղեկությունները գործարար հարաբերության նպատակի և բնույթի մասին (չ. 5.6).

740. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով հաշվետվություն տրամադրող անձանցից չի պահանջվում տեղեկություններ ստանալ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին: Ավելին, այս չափորոշչի կապակցությամբ ՆՈՖԳՏՄ-ների համար կանոնակարգեր, կանոններ կամ ուղեցույցներ ընդունված չեն, և այս չափորոշչի պահանջը որպես այդպիսին բավարարված չէ:

Գործարար հարաբերության անընդհատ պատշաճ ուսումնասիրությունը (չ. 5.7, 5.7.1 և 5.7.2).

741. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 16-րդ հոդվածով ՆՈՖԳՏՄ-ներից պահանջվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնել անընդհատ պատշաճ ուսումնասիրություն, ներառյալ հաճախորդի հետ գործարքների մոնիթորինգ, որպեսզի հավաստիանան հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկատվության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ եկամուտների աղբյուրի իսկության հարցում: Վերոհիշյալ երկու նորմերն անհրաժեշտ է մանրամասնել ուղեցույցների միջոցով (քանի որ դրանք, մասնավորապես, չեն ամրագրում հաճախականության պահանջները կամ ուսումնասիրության անցկացման դեպքերը):

742. ՆՈՖԳՏՄ-ներից պահանջվում է թարմացնել գործարար հարաբերության շրջանակում հաճախորդի նույնականացման համար ստացված տեղեկատվությունը, ընդ որում՝ թարմացման հաճախականությունը որոշում է ինքը՝ հաշվետվություն տրամադրող անձը, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան: Այնուամենայնիվ, տեղեկատվությունը թարմացնելու հաճախականության մասով ներկայումս սահմանված պահանջը չափազանց ընդհանրական է: Այդ պահանջները ՆՈՖԳՏՄ-ների

համար կոնկրետ պարտավորությունների վերաածող լրացուցիչ օրենքներ, կանոնակարգեր կամ կանոններ չկան:

743. Գնահատողների անցկացրած հարցազրույցներին մասնակցած աուդիտորները տեղեկացրեցին, որ իրենք անընդհատ պատշաճ ուսումնասիրությունը պրակտիկայում կատարում են՝ առաջնորդվելով իրենց ներքին ընթացակարգերով և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքով սահմանված պահանջներով: Մյուս ՆՈՖԳՏՄ-ներն ակտիկորեն չէին իրականացնում անընդհատ պատշաճ ուսումնասիրություն և տեղյակ չէին այդ ոլորտում իրենց պարտավորությունների մասին:

Ռիսկ. հավելյալ պատշաճ ուսումնասիրությունն ավելի բարձր ռիսկային հաճախորդների մասով (չ. 5.8).

744. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասում նշվում է, որ «բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում» հաշվետվություն տրամադրող անձը պետք է ձեռնարկի ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ռիսկերին համարժեք միջոցներ: Նույն մասով նախատեսված մյուս պարտավորությունները, որոնք կիրառելի են միայն ֆինանսական հաստատությունների նկատմամբ, վերաբերում են ներքին իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարման ընթացակարգեր ունենալուն՝ պարզելու համար, թե արդյոք հաճախորդը հանդիսանում է ՔԱՈՒԱ կամ նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ փոխկապակցված այլ անձ, կամ առկա է բարձր ռիսկի այլ չափանիշ: Այնուհետ, նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսվում է, որ բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում «ֆինանսական հաստատությունը» պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն: Ուստի, այդ դրույթը կիրառելի չէ ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ, և հավելյալ պատշաճ ուսումնասիրության մասով ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանված պարտավորությունները թերի են:

745. ՆՈՖԳՏՄ-ներն իրականացնում են գործարքներ ոչ ռեզիդենտ հաճախորդների հետ և նրանց անունից: Իրավաբանները, հաշվապահները, աուդիտորները, նոտարները և ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք պարբերաբար իրականացնում են գործարքներ իրավաբանական անձանց հետ: Այնուհանդերձ, ՆՈՖԳՏՄ-ները բավարար չափով չեն ընկալում հավելյալ պատշաճ ուսումնասիրության գաղափարը:

746. Ավելին, իշխանությունները ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ կիրառելի օրենքի, կանոնների, կանոնակարգերի կամ ուղեցույցների տեսքով չեն հաստատել լրացուցիչ չափորոշիչներ հավելյալ պատշաճ ուսումնասիրության կիրառության վերաբերյալ, և ավելի բարձր ռիսկային հաճախորդների, գործարար հարաբերությունների կամ գործարքների նկատմամբ հավելյալ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու՝ սույն չափորոշչով նախատեսված պահանջը բավարարված չէ:

Ռիսկ. ՀՊՈՒ նվազեցված/պարզեցված միջոցառումների կիրառությունը համապատասխան դեպքերում (չ. 5.9).

747. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով ՆՈՖԳՏՄ-ներին հնարավորություն է ընձեռվում ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացնել հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն՝ սույն հաշվետվության 3.2 բաժնում մանրամասնորեն նկարագրված կարգով: Այս մոտեցումը կիրառելու հարցում ՆՈՖԳՏՄ-ներին աջակցող լրացուցիչ ուղեցույցներ չկան, և չի իրականացվել ուսուցում:

748. ՆՈՖԳՏՄ-ները չէին ընկալում նվազեցված պատշաճ ուսումնասիրության գաղափարը. նրանք նշեցին, որ իրենք բոլոր հաճախորդների և գործարքների նկատմամբ կիրառում են օրենքի պահանջները:

Ռիսկ. ՀՊՈՒ նվազեցված/պարզեցված միջոցառումների կիրառությունը մեկ այլ երկրի ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների նկատմամբ (չ. 5.10).

749. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսվում են ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում ՀՊՈՒ պարզեցված միջոցառումների կիրառության պահանջները՝ ինչպես նկարագրված է սույն հաշվետվության 3.2 բաժնում: Այնուհանդերձ, սահմանված նորմերի մեջ նշված չէ, թե արդյոք Հայաստանում գտնվող հաշվետվություն տրամադրող անձանց (ներառյալ ՆՈՖԳՏՄ-ներին) թույլատրվում է կիրառել ՀՊՈՒ պարզեցված կամ նվազեցված միջոցառումներ մեկ այլ երկրի ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների նկատմամբ, և եթե թույլատրվում է, ապա՝ արդյոք այդ պրակտիկան սահմանափակվում է այն երկրներով, որոնք, առաջին երկրի (Հայաստանի) համոզմամբ, համապատասխանում են ՖԱԹՖ-ի Հանձնարարականներին և արդյունավետորեն իրականացնում դրանք:

Ռիսկ. ՀՊՈՒ նվազեցված/պարզեցված միջոցառումների կիրառելիության բացառումը ՓԼ/ԱՖ կասկածի կամ ավելի բարձր ռիսկի այլ կոնկրետ սցենարների առկայության դեպքում (չ. 5.11).

750. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի՝ ՀՊՈՒ նվազեցված միջոցառումների վերաբերյալ նորմերի մեջ ուղղակիորեն չի նշվում, որ այդ միջոցառումները չի կարելի կիրառել բարձր ռիսկի սցենարների կամ ՓԼ/ԱՖ կասկածների առկայության դեպքում: Ի տարբերություն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի այլ դրույթների, մասնավորապես՝ 15-րդ հոդվածի 7-րդ մասի, որի համաձայն հաշվետվություն տրամադրող անձը պետք է «ձեռնարկի ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ռիսկերին համարժեք միջոցներ»՝ բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում, ՆՈՖԳՏՄ-ների մասով ավելի բարձր ռիսկի սցենարների գոյության դեպքում ՀՊՈՒ նվազեցված կամ պարզեցված միջոցառումների անթույլատրելիությունն ուղղակիորեն ամրագրված չէ:

Ռիսկի հիման վրա որոշվող ՀՊՈՒ միջոցառումների շրջանակի համապատասխանությունն ուղեցույցներին (չ. 5.12).

751. Ռիսկի հիման վրա որոշվող ՀՊՈՒ միջոցառումների կիրառության վերաբերյալ ուղեցույցներ ՆՈՖԳՏՄ-ների համար չեն ընդունվել իշխանությունների կողմից: Հետևաբար, 5.12 չափորոշչի պահանջը ՆՈՖԳՏՄ-ների մասով բավարարված չէ:

Ինքնության ստուգման ժամկետները՝ ընդհանուր կանոնը (չ. 5.13) և ինքնության ստուգման ժամկետը՝ բացառիկ հանգամանքների պարագան (չ. 5.14 և 5.14.1).

752. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի՝ հաճախորդի ինքնության ստուգման ժամկետի վերաբերյալ դրույթների վերլուծությունը, որը զետեղված է սույն հաշվետվության 3.2 բաժնում, հավասարապես կիրառելի է ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ գործարար հարաբերություն հաստատելիս հաճախորդի ինքնության ստուգման «ողջամիտ ժամկետ» հասկացությունն օրենքով սահմանված չէ: ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունված չեն որևէ ուղեցույցներ առ այն, թե ինչը կարելի է համարել ողջամիտ ժամկետ:

753. ՆՈՖԳՏՄ-ներից չի պահանջվում ընդունել ռիսկի կառավարման ընթացակարգեր՝ կարգավորելու այն պայմանները, որոնց պահպանմամբ հաճախորդին կարող է թույլատրվել օգտագործել գործարար հարաբերությունը նախքան սույն չափորոշչով պահանջվող ստուգումն ավարտին հասցնելը:

Նախքան գործարար հարաբերությունը սկսելը ՀՊՈՒ-ն չավարտելը (չ. 5.15) և գործարար հարաբերությունը սկսելուց հետո ՀՊՈՒ-ն չավարտելը (չ. 5.16).

754. Այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձինք (ներառյալ ՆՈՖԳՏՄ-ները) ի վիճակի չեն կիրառել ՀՊՈՒ պահանջվող միջոցառումները, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նրանցից պահանջվում է մերժել գործարար հարաբերության կամ գործարքի իրականացումը՝ չհաստատել կամ չիրականացնել

գործարար հարաբերություն կամ չկնքել գործարք կամ դադարեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքի կատարումը, կամ եթե հնարավոր չի լինում կատարել հաճախորդների նույնականացումը: Նույն հոդվածի 6-րդ մասով հաշվետվություն տրամադրող անձից պահանջվում է գործարար հարաբերության կամ գործարքի իրականացումը մերժելու դեպքում քննարկել կասկածելի գործարքի մասին լիազոր մարմին հաշվետվություն ներկայացնելու հարցը:

755. ՆՈՖԳՏՄ-ների հետ հարցազրույցներում չբացահայտվեցին գործարքի մերժման կամ գործարար հարաբերության դադարեցման դեպքեր՝ պայմանավորված առկա հաճախորդի կողմից իր և իրական շահառուի մասին «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով պահանջվող տեղեկությունների չտրամադրմամբ:

ՀՊՈՒ պահանջների տարածումն առկա հաճախորդների նկատմամբ (չ. 5.17).

756. Հաշվետվություն տրամադրող անձանցից (ներառյալ՝ ՆՈՖԳՏՄ-ները) չի պահանջվում ՀՊՈՒ միջոցառումներ իրականացնել առկա հաճախորդների նկատմամբ՝ էականության և ռիսկայնության հիման վրա, և անհրաժեշտության դեպքում իրականացնել նմանատիպ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություն:

ՀՊՈՒ պահանջների տարածումն անանուն հաշիվներ ունեցող առկա հաճախորդների նկատմամբ (չ. 5.18).

757. Ինչպես քննարկվեց, օրենքներով, կանոններով կամ կանոնակարգերով ՆՈՖԳՏՄ-ներին չի թույլատրվում բացել կամ վարել անանուն հաշիվներ:

Արդյունավետությունը.

758. Չնայած որ ՆՈՖԳՏՄ-ների կողմից ՀՊՈՒ իրականացնելու ընդհանուր իրավական կարգավորումը նախատեսված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով, և ՆՈՖԳՏՄ-ներն ընկալում են տարրական պահանջները, նրանց կողմից չի կիրառվում ռիսկայնության վրա հիմնված մոտեցում կամ ավելի բարձր կամ ավելի ցածր ռիսկի չափանիշներ: ՆՈՖԳՏՄ-ի կողմից անընդհատ պատշաճ ուսումնասիրության պրակտիկ իրականացման մասին վկայող նշաններ ի հայտ չեկան: Մասնավորապես, խաղատները չեն դիտարկում ՀՊՈՒ պահանջների «համախառն» կիրառության նպատակահարմարությունը: Գնահատողների անցկացրած հարցազրույցներին մասնակցած ՆՈՖԳՏՄ-ները ՀՊՈՒ-ի իրականացմանը վերաբերվում են ինչպես օրենքով սահմանված պահանջի՝ չդրսևորելով պահանջների բուն նպատակի որևիցե ընկալում:

759. Հաշվի առնելով, որ ՆՈՖԳՏՄ-ներից շատերը ներկայումս գործում են առանց լիցենզավորման, այսինքն՝ վերահսկողությունից դուրս, նրանց կողմից պահանջների ընկալման աստիճանը խիստ ցածր է՝ պայմանավորված իրազեկության բարձրացման միջոցառումների բացակայությամբ: Ավելին, վերահսկողության դաշտում գործող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չի կիրառվում վերահսկողական խիստ ռեժիմ՝ տեղերում (տեսչական) ստուգումների կամ այլ ստուգումների տեսքով, որոնց միջոցով ուշադրություն կդարձվեր ՓԼ և ԱՖ կանխարգելման միջոցառումներին. հնարավոր է, որ դա ՀՊՈՒ պարտավորությունների վերաբերյալ ՆՈՖԳՏՄ-ների գիտելիքների խիստ ցածր մակարդակի արտացոլումն է: Բացի այդ, իշխանությունները ՆՈՖԳՏՄ-ների համար չեն ընդունել ուղեցույցներ կամ լրացուցիչ օրենքներ և կանոններ, որոնցում կմանրամասնեցվեին և կընդլայնվեին ՀՊՈՒ վերաբերյալ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունները: Բացառությամբ աուդիտորական մեկ ընկերության, որը պարտավոր էր առաջնորդվել միջազգային աուդիտորական խմբի ներքին ստանդարտներով, ՆՈՖԳՏՄ-ներից ոչ մեկը չէր կիրառում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսվածներից զատ որևէ այլ ՀՊՈՒ միջոցառումներ:

760. Թանկարժեք մետաղների կամ քարերի դիլերներից ոչ մեկն այցի ժամանակ չկարողացավ հանդիպել գնահատողներին, և ֆինանսների նախարարությունը տեղեկացրեց գնահատողներին, որ իրազեկման բարձրացման աշխատանքների և լիցենզավորման բացակայության պայմաններում պարտավորությունների վերաբերյալ ՆՈՖԳՏՄ այս խմբի ներկայացուցիչների պատկերացումները, թերևս, սահմանափակ են:

Սահմանված որոշակի դեպքերում ՀՊՈՒ միջոցառումների իրականացումը ՆՈՖԳՏՄ-ների կողմից (Հ. 6-ի և 8-11-ի չափորոշիչների կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ) (չ.12.2).

Օտարերկրյա ՔԱՈՒԱ-ներ. նույնականացման պահանջները (չ. 6.1), ռիսկի կառավարումը (չ. 6.2, 6.2.1), հարստության և միջոցների աղբյուրները պարզելու պահանջները (չ. 6.3), անընդհատ մոնիտորինգը (չ. 6.4).

761. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով ՔԱՈՒԱ-ների վերաբերյալ նախատեսված պահանջները կիրառելի են միայն ֆինանսական հաստատությունների, բայց ոչ՝ ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: ՔԱՈՒԱ-ների վերաբերյալ ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունված լրացուցիչ օրենքներ կամ այլ իրավական ակտեր չկան: Հետևաբար, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով ՆՈՖԳՏՄ-ներից ուղղակիորեն չի պահանջվում նույնականացնել ՔԱՈՒԱ-ներին: Ավելին, իշխանությունները ՆՈՖԳՏՄ-ների համար չեն ընդունել լրացուցիչ իրավական ակտեր կամ ուղեցույցներ՝ նվիրված մասնավորապես ՓԼ կամ ԱՖ կանխարգելմանը կամ ՔԱՈՒԱ-ների նույնականացմանը և նրանց հետ աշխատանքին:

762. ՆՈՖԳՏՄ-ները չէին ընկալում ՔԱՈՒԱ-ի հասկացությունը, և ՓԼ/ԱՖ ռիսկերի առումով բոլոր գործարքների և գործարար հարաբերությունների նկատմամբ դրսևորում էին միևնույն վերաբերմունքը:

Առաջավոր տեխնոլոգիաների չարաշահումը ՓԼ/ԱՖ մեջ (չ. 8.1), առանց առերես շփման գործարար հարաբերությունների ռիսկերը (չ. 8.2 և 8.2.1).

763. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտավորությունները՝ նախատեսելու և կիրառելու նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ ՓԼ կամ ԱՖ ռիսկերին հակազդելու համապատասխան միջոցներ, կրում են միայն ֆինանսական հաստատությունները: ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ այդ պահանջները չեն տարածվում:

ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրեր երրորդ անձից անմիջապես ստանալու պահանջը (չ. 9.1), նույնականացման տվյալների ստացումը երրորդ անձանցից (չ. 9.2), երրորդ անձանց գործունեության կարգավորումը և վերահսկողությունը (Հ.23-ի, Հ.24-ի և Հ.29-ի կիրառությունը, չ. 9.3), ՖԱԹՖ-ի հանձնարարականների համարժեք կիրառությունը (չ. 9.4), ՀՊՈՒ-ի վերջնական պատասխանատվությունը (չ. 9.5).

764. Հ.9-ին նվիրված բաժնում զետեղված վերլուծությունը և բացահայտումները հավասարապես կիրառելի են ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: ՀՊՈՒ գործընթացը երրորդ անձանց միջոցով կատարելու պայմանների/ընթացակարգերի որոշումն օրենքը թողնում է հաշվետվություն տրամադրող անձանց՝ սահմանելով, որ դա կարող է արվել «միայն հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով»: Այնուհանդերձ, նման իրավական ակտեր պահանջվում են միայն այն ՆՈՖԳՏՄ-ներից, որոնք ունեն 10-ից ավելի աշխատակից. ուստի, դրանց արդյունավետությունը սահմանափակ է:

765. **Արդյունավետությունը.** ՆՈՖԳՏՄ-ներից ոչ մեկը տեղեկություններ չներկայացրեց առ այն, որ ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրեր կատարել է երրորդ անձանց միջոցով, չնայած որ կարելի էր ակնկալել, որ նման գործընթաց կարող է կիրառված լինել փաստաբանների, հաշվապահների և աուդիտորների կողմից այն դեպքերում, երբ, օրինակ, հաճախորդը ոչ

ռեզիդենտ իրավաբանական անձ է: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դաշտում են գործում նաև հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք, և եթե այդ ոլորտներում գործող անձանց թիվն ավելանա, կամ այլ ՆՈՖԳՏՄ-ների գործարար գործունեությունը բարդանա, ապա անհրաժեշտ կլինի սահմանել տեղեկությունները և փաստաթղթերը երրորդ անձից անմիջապես ստանալու վերաբերյալ պահանջները և հստակեցնել երրորդ անձի որոշ ներկայացուցիչների եզրութաբանությունը: Այս խնդիրների վերաբերյալ ՆՈՖԳՏՄ-ների պատկերացումների մակարդակը շատ ցածր էր:

Տեղեկատվության պահպանումը և գործարքի մասին տեղեկատվության «վերականգնումը» (չ. 10.1 և 10.1.1).

766. Ինչպես մանրամասնորեն ներկայացված է սույն հաշվետվության 3.2 բաժնում, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում են «տեղեկատվության պահպանման» նվազագույն պահանջները: Լիազոր մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերով (Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգով) սահմանված՝ պահպանման լրացուցիչ պահանջները չեն տարածվում ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ:

Նույնականացման տվյալների, հաշիվների վերաբերյալ փաստաթղթերի և գործարար նամակագրության տեղեկատվության պահպանումը (չ. 10.2).

767. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1(2)-րդ մասով ՆՈՖԳՏՄ-ներից պահանջվում է «գործարքի հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները» պահպանել գործարքի կատարումից (գործարար հարաբերության դադարեցումից) հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար:

Տեղեկատվության ժամանակին տրամադրումն իրավասու մարմիններին (չ. 10.3).

768. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նաև սահմանվում է, որ այդ օրենքով պահանջվող և հաշվետվություն տրամադրող անձի կողմից պահպանվող տեղեկատվությունը (ներառյալ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը) պետք է բավարար լինի լիազոր մարմնի կողմից կամ օրենքով սահմանված դեպքերում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից հարցվող գործարքների (գործարար հարաբերությունների) վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տրամադրման համար:

Արդյունավետությունը.

769. Բոլոր ՆՈՖԳՏՄ-ները գիտեին տեղեկատվության պահպանման պահանջների մասին, չնայած որ մի շարք փոքր ՆՈՖԳՏՄ-ների, այդ թվում՝ խաղատների մոտ տեղեկատվության պահպանման պատշաճ պրակտիկա չդրսևորվեց:

Առանձնակի ուշադրություն դարձնել բարդ, անսովոր մեծ գործարքներին (չ. 11.1).

770. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով ՆՈՖԳՏՄ-ներից պահանջվում է լրացուցիչ դիտանցում իրականացնել բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:

Բարդ և անսովոր գործարքների ուսումնասիրությունը (չ. 11.2).

771. ՆՈՖԳՏՄ-ներից պահանջվում է լրացուցիչ դիտանցում իրականացնել բոլոր բարդ և անսովոր մեծ գումարով գործարքների (գործարար հարաբերությունների), ինչպես նաև անսովոր պայմաններով այնպիսի գործարքների նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն՝ ինչպես պահանջվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածով և վերլուծված է Հ.11-ին նվիրված բաժնում: Այդ դրույթով ՆՈՖԳՏՄ-ներից անուղղակիորեն պահանջվում է հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրել այդպիսի գործարքների նախադրյալները և նպատակը: Բացի այդ, Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցի մեջ (Հիմք 2) նշվում է, որ ցանկացած անսովոր գործարք ենթակա է լրացուցիչ դիտանցման. այնուհանդերձ, ՆՈՖԳՏՄ-ներից որևէ մեկը չդրսևորեց Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցի մասին տեղեկացվածություն: Ի հակադրություն տվյալ չափորոշչի՝ սահմանված չէ նորմ, որով ՆՈՖԳՏՄ-ներից կպահանջվեր նման ուսումնասիրության բացահայտումներն արձանագրել գրավոր:

Ուսումնասիրությունների բացահայտումները պահպանելը (չ. 11.3).

772. Սույն հաշվետվությունում՝ Հ.11-ին նվիրված բաժնում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների վերաբերյալ զետեղված քննադատությունը կիրառելի է ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ, և հաշվետվություն տրամադրող այլ անձանց նման, ՆՈՖԳՏՄ-ներից նույնպես պահանջվում է լիազոր մարմնի հարցման հիման վրա այդ տվյալները տրամադրել վերջինիս, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տվյալների տրամադրումը հակասում է գաղտնիության վերաբերյալ պահանջներին: Բացառությունը կիրառելի է միայն նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ: Այդ մասնագիտությունների գործունեությունը կարգավորող օրենքները պարունակում են մասնագիտական գաղտնիքի վերաբերյալ նորմեր՝ բավական լայն ձևակերպմամբ, որի համաձայն նրանք կրում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտավորությունները: Չնայած որ համապատասխան ՆՈՖԳՏՄ-ներից ոչ մեկը մասնագիտական գաղտնիքը չի համարել խոչընդոտ, հարցը չի ծագել այն դեպքերում, երբ իշխանությունները «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի նորմերի համաձայն նրանցից պահանջել են վերհանել պահպանված տեղեկատվությունը:

773. **Արդյունավետությունը.** չնայած որ չափորոշչի պահանջներից մի քանիսը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքում բացակայում են, ՆՈՖԳՏՄ-ները պատշաճ վերաբերմունք չէին ցուցաբերում բարդ կամ անսովոր գործարքների նկատմամբ և բոլոր դեպքերում կիրառում էին միևնույն մոտեցումը, բացառությամբ երբ գործարքն իրենց պրակտիկայում համարվում էր խոշոր գործարք, չնայած որ խոշոր գործարքներից մեկի կապակցությամբ արտահայտված հետաքրքրությունն առնչություն չէր ունեցել ՓԼ կամ ԱՖ ռիսկերի հետ: Ավելին, ՆՈՖԳՏՄ-ները տեղեկացված չէին նոր միտումներին կամ ՓԼ կամ ԱՖ գործունեության մեջ օգտագործվող մեխանիզմների մասշտաբին և բարդությանը: Ավելին, իշխանությունների հրապարակած տիպաբանությունների մեջ արտացոլված չէին կոնկրետ ոլորտները, որոնք ՆՈՖԳՏՄ-ները պետք է ընկալեն, կամ կոնկրետ մոտեցումները, որոնք նրանք պետք է կիրառեն բարդ կամ անսովոր գործարքների նկատմամբ:

4.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

Իշխանություններին առաջարկվում է.

- Վերացնել այն նվազագույն շեմը, որով բաժնետոմսերի առուվաճառքի պարագայում սահմանափակվում է ՀՊՈՒ-ն նոտարների, փաստաբանների, իրավաբանական

ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ,

- Ներդնել ուղեցույցներ խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար՝ ապահովելու ՀՊՈՒ պահանջների կիրառությունն այն գործարքների նկատմամբ, որոնց համախառն արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն,

- ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ստանալու տեղեկություններ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին՝ անկախ գործարքը բարձր ռիսկային համարելու կամ չհամարելու հանգամանքից,

- ՆՈՖԳՏՄ-ների համար ներդնել ուղեցույցներ՝ ապահովելու հաճախորդի պատշաճ ուսումնասիրության անցկացման հետևողական համակարգի առկայությունը՝ հաշվի առնելով ՆՈՖԳՏՄ-ների գործունեության բնույթով, շրջանակով և էությամբ պայմանավորված վտանգները և խոցելիությունը, ինչպես նաև սահմանել հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների թարմացման հաճախականությունը,

- Սահմանել բարձր ռիսկային հաճախորդների, գործարար հարաբերությունների կամ գործարքների հավելյալ ուսումնասիրության անցկացման, ինչպես նաև ցածր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ հաճախորդների նկատմամբ պարզեցված/նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառության պահանջներ և ուղենիշներ,

- Ուղղակիորեն արգելել նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառությունը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության կամ բարձր ռիսկային սցենարների դեպքում,

- Ներդնել ուղեցույցներ, որոնք ՆՈՖԳՏՄ-ներին կօգնել պարզել, թե գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ հաճախորդի ինքնությունը պարզելիս ինչն է համարվում «ողջամիտ ժամկետ»,

- Սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների պայմանների վերաբերյալ, որոնց առկայության դեպքում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը,

- Սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ,

- Օրենքով, կանոններով կամ պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներով նախատեսել գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ և հարաբերության ողջ ընթացքում ՀՊՈՒ պահանջների կիրառությունը ՔԱՈՒԱ-ների նկատմամբ,

- Սահմանել պահանջներ՝ ապահովելու բարդ կամ անսովոր մեծ գործարքների, ինչպես նաև ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալների և նպատակի

ուսումնասիրությունների բացահայտումների գրավոր մանրակրկիտ ձևակերպումը և տվյալ ոլորտի մասնակիցների իրազեկության բարձրացման արդյունավետ և պատշաճ միջոցառումների իրականացումը՝ ՓԼ և ԱՖ միտումների փոփոխությունների վերաբերյալ տիպաբանությունների հրապարակմամբ կամ այլ կերպ,

- Սահմանել կոնկրետ պայմաններ, որոնց պահպանմամբ ՆՈՖԳՏՄ-ներն իրավասու են ՀՊՈՒ միջոցառումները կատարել երրորդ անձանց կամ միջնորդների միջոցով,

- Իրականացնել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածը (ներքին իրավական ակտեր) և 23-րդ հոդվածի 2-րդ մասը (ՓԼ և ԱՖ դեմ պայքարի համակարգերի և հսկողության մեխանիզմների համապատասխանության արտաքին աուդիտ) 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չտարածելու հետ կապված ռիսկերի և հետևանքների վերլուծություն,

- Կատարելագործել տեղեկատվության պահպանման ոլորտում ՆՈՖԳՏՄ-ներին ներկայացվող պահանջները և նրանց պրակտիկան՝ արդյունավետությունը և հիմնավորվածությունն ապահովելու, ինչպես նաև կիրառության մեջ քննության շահերին չվնասելու նպատակով, քանի որ, հաշվի առնելով գործարար հարաբերությունների և գործարքների հետ կապված տեղեկատվության կարևորությունը, իշխանություններին անհրաժեշտ է տեղեկատվության պահպանման ստանդարտների և որակի հարցերին անդրադառնալ ռիսկերը նվազեցնելու տեսակետից՝ միաժամանակ փորձելով իրավապահ մարմիններին և վերահսկող մարմիններին բավարար չափով տրամադրել ՓԼ/ԱՖ գործերի քննության մեջ օգտագործվելիք արժանահավատ տվյալներ:

4.1.3. Համապատասխանությունը թիվ 12 հանձնարարականին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.4.1-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.12	Չի համապատասխանում	• Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց պարագայում ՀՊՈՒ պահանջների մեջ հաշվի առնված չեն այն գործարքները, որոնց համախառն արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն: • Հետևյալ ոլորտներում ՆՈՖԳՏՄ-ների համար օրենքով և պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներով նախատեսված չեն կատարման պահանջներ, չկան ուղեցույցներ, և չի իրականացվում ուսուցում. • Գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին տեղեկատվության ստացում, • Գործարար հարաբերության անընդհատ պատշաճ ուսումնասիրության արդյունավետ միջոցառումների իրականացում էականության և ռիսկայնության հիման վրա, ինչպես նաև առկա գործարար հարաբերությունների պատշաճ ուսումնասիրության իրականացումը համապատասխան պարբերականությամբ, ներառյալ հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության թարմացման հաճախականության սահմանումը, • Ավելի բարձր ռիսկային հաճախորդների, գործարար հարաբերությունների կամ գործարքների հավելյալ պատշաճ ուսումնասիրությունների անցկացում, • Ցածր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ օտարերկրյա ռեզիդենտների նկատմամբ պարզեցված/նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների իրականացում, • ՀՊՈՒ նվազեցված միջոցառումների կիրառելիության արգելում ՓԼ/ԱՖ կասկածների կամ ավելի բարձր ռիսկի սցենարների առկայության դեպքում,

		• ՀՊՈՒ միջոցառումների կիրառությունը ռիսկի նկատմամբ զգայունության մոտեցումների պահպանմամբ, • Ռիսկի կառավարման ընթացակարգերի ընդունում՝ կարգավորելու այն պայմանները, որոնց պահպանմամբ հաճախորդին թույլատրվում է օգտագործել գործարար հարաբերությունը նախքան ստուգումը, • Առկա հաճախորդների նկատմամբ ՀՊՈՒ միջոցառումների իրականացում էականության և ռիսկայնության հիման վրա, ինչպես նաև առկա գործարար հարաբերությունների պատշաճ ուսումնասիրության իրականացումը համապատասխան պարբերականությամբ, • ՀՊՈՒ միջոցառումների իրականացում ՔԱՈՒԱ-ների նկատմամբ հարաբերությունը հաստատելիս, ինչպես նաև անընդհատ մոնիտորինգ հարաբերության հաստատումից հետո, • Պայմաններ, որոնց պահպանմամբ ՀՊՈՒ միջոցառումները թույլատրվում է կատարել երրորդ անձանց կամ միջնորդների միջոցով, • Բարդ կամ անսովոր գործարքների, ինչպես նաև ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալների և նպատակի հնարավորին չափ ուսումնասիրություն: • Ուղեցույցներով ՆՈՖԳՏՄ-ների համար հստակեցված չէ, թե ինչպես պարզել այն «ողջամիջ ժամկետը», որը պետք է պահպանել գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում հաճախորդին նույնականացնելիս: • Սահմանված է նվազագույն շեմ, որն անհարկիորեն սահմանափակում է ՀՊՈՒ իրականացումը բաժնետոմսերի առուվաճառքի նկատմամբ. սահմանված նվազագույն շեմը չգերազանցող գործարար գործարքներն ազատված են ՀՊՈՒ պահանջներից: • Տեղեկատվության պահպանման փաստացի պրակտիկայում առկա են թերություններ: • Ներքին իրավական ակտերի կամ արտաքին աուդիտի վերաբերյալ պահանջները 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չտարածելու փաստով պայմանավորված ռիսկերը չեն գնահատվել: • Առկա են արդյունավետ ներդրման և գործելակերպի հիմնախնդիրներ:

4.2. Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունները (Հ.16)

Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունները (Հ.16)

4.2.1. Նկարագրություն և վերլուծություն

774. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով «հաշվետվություն տրամադրող անձանցից» պահանջվում է հաշվետվություն տրամադրել ՓԼ կամ ԱՖ հետ կապված կասկածելի գործարքների (ԿԳ), ինչպես նաև դրամական նվազագույն շեմի հասնող գործարքների վերաբերյալ՝ անկախ այդ գործարքների կանխիկով կամ այլ միջոցով կատարված լինելու հանգամանքից:

775. ԿԳ վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը, ինչպես նաև նվազագույն շեմի հասնող գործարքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը, որը վերլուծված է նաև Հ.19-ին նվիրված բաժնում, տարբերակված է ըստ ՆՈՖԳՏՄ-ների տարբեր տեսակների: Մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ, այդ թվում՝ անկախ իրավաբանները, իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունները, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, թանկարժեք մետաղների դիլերները, թանկարժեք քարերի

դիլերները և հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք պարտավոր չեն հաշվետվություն տրամադրել նվազագույն շեմի հասնող գործարքների վերաբերյալ:

ՓԼ և ԱՖ վերաբերյալ ՖԴԿ-ին ԿԳՀ-ներ ներկայացնելու պահանջը (չ. 13.1-ի և IV.1-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

776. Ինչպես արդեն վերլուծվել է սույն հաշվետվությունում, «կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն» հասկացության սահմանումը նախատեսվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենք 3-րդ հոդվածի 12-րդ կետով, որի համաձայն դա այնպիսի գործարք է կամ գործարար հարաբերություն, որի դեպքում կասկածվում է, որ այդ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներառված գույքն ստացվել է հանցավոր ճանապարհով կամ այդ գույքը կապված է ահաբեկչության ֆինանսավորման հետ, ինչպես նաև եթե ֆինանսական միջոցները կամ այլ գույքը կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով: Ուստի, հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը տարածվում է և ՓԼ, և ԱՖ դեպքերի նկատմամբ:

777. ՓԼ և ԱՖ կասկած առաջացնող գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու՝ հաշվետվություն տրամադրող անձանց պարտավորությունն ամրագրված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1.3 կետում, որի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են ՖԴԿ-ին հաշվետվություն ներկայացնել ցանկացած կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ՝ անկախ գումարի չափից:

778. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի (2)-(4)-րդ և (6)-րդ ենթակետերի համաձայն, հաշվետվություն տրամադրելու պահանջները (թե ԿԳՀ, թե ՆՇԳՀ) տարբերակվում են ըստ ՆՈՖԳՏՄ-ների տեսակների.

- Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք, խաղատները, ինչպես նաև ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք պարտավոր են բոլոր դեպքերում հաշվետվություն տրամադրել ԿԳ-ների վերաբերյալ՝ անկախ նվազագույն շեմից,

- Նոտարները, փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անձինք, անհատ ձեռնարկատեր աուդիտորները և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք պարտավոր են հաշվետվություն տրամադրել բոլոր ԿԳ-ների վերաբերյալ միայն հաճախորդի համար նախապատրաստվող կամ իրականացվող հետևյալ գործարքների մասով՝

    - անշարժ գույքի առուվաճառքի,

    - հաճախորդի դրամական միջոցների, արժեթղթերի կամ այլ գույքի կառավարման,

    - բանկային և արժեթղթային հաշիվների կառավարման,

    - իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման համար դրամական միջոցների կամ այլ գույքի տրամադրման,

- իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման գործառույթների իրականացման, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում և այլն) մասնակցության, փայի և այլնի օտարման (ձեռքբերման), կամ իրավաբանական անձանց անվանական կամ շուկայական արժեքով բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) օտարման (ձեռքբերման):

779. Փաստաբանների, նոտարների և իրավաբանական այլ մասնագիտությունների համար նախատեսված իրավական պաշտպանության վերաբերյալ ամրագրված են դրույթներ (վերլուծված են սույն բաժնում՝ ստորև), որոնք կարող են ազդել ԿԳ-ների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորության վրա:

780. <u>Թանկարժեք մետաղների դիլերները և թանկարժեք քարերի դիլերները</u> պարտավոր են ԿԳ-ների վերաբերյալ հաշվետվություն տրամադրել միայն հաճախորդի հետ կանխիկ գործարքների մասով:

781. <u>Հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք</u> (չնայած որ նման անձինք Հայաստանում ներկայումս չկան) պարտավոր են ԿԳ-ների վերաբերյալ հաշվետվություն տրամադրել միայն այնպիսի գործարքների դեպքում, երբ այդ անձինք.

- հանդես են գալիս որպես հիմնադրող գործակալ (ներկայացուցիչ) իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցելիս,

- հանդես են գալիս (վերապահում են այլ անձի հանդես գալ) որպես ընկերության տնօրեն (գործադիր մարմին), ընկերակցության մասնակից կամ իրականացնում են իրավաբանական անձի կառավարման համանման գործառույթներ,

- իրավաբանական անձին տրամադրում են գտնվելու (գործունեության, թղթակցության կամ վարչական) վայր,

- հանդես են գալիս (վերապահում են այլ անձի հանդես գալ) որպես կողմերի համաձայնությամբ ձևավորված ֆինանսական միջոցների հավատարմագրային կառավարիչ,

- հանդես են գալիս (վերապահում են այլ անձի հանդես գալ) որպես այլ իրավաբանական անձի անվանատեր:

782. 2008 թվականի սեպտեմբերից մինչև 2009 թվականի մարտ ընկած ժամանակահատվածում ուժի մեջ են մտել ՀՀ ԿԲ-ի մի շարք որոշումներ[42], որոնցով հաստատվել են ԿԳ վերաբերյալ հաշվետվական ձևը և հաշվետվական ձևերի լրացման և ներկայացման ուղենիշները: Ավելին, ՀՀ ԿԲ-ի որոշումներ են ընդունվել նոտարների,

[42] ՀՀ ԿԲ-ի որոշումներով հաստատվել են Կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների մասին պարտադիր հաշվետվության ներկայացման հաշվետվական ձևերը և դրանց լրացման և ներկայացման կարգը.

(ա) շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, ներառյալ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց համար՝ ուժի մեջ է մտել 2008 թ. սեպտեմբերի 6-ին,

(բ) Նոտարների համար՝ ուժի մեջ է մտել 2008 թ. հոկտեմբերի 10-ին,

(գ) Փաստաբանների, անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անշարժ գույքի գործակալների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համար՝ ուժի մեջ է մտել 2009 թ. մարտի 12-ին:

փաստաբանների, անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անշարժ գույքի գործակալների, Պետական ռեգիստրի, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, ինչպես նաև խաղատների մասով: Թանկարժեք մետաղների կամ քարերի դիլերների համար հաշվետվական ձևեր կամ լրացման և տրամադրման կարգեր չեն հաստատվել:

Նախատեսված իրավական պաշտպանությունը

783. Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների՝ իրավասու մարմինների կողմից համապատասխան անձանցից ստանալու կարգը և հարակից խնդիրները վերլուծված են թիվ 4 հանձնարարականին նվիրված բաժնում: Մասնագիտական գործունեությունը կարգավորող օրենքներով սահմանված՝ մասնագիտական գաղտնիք համարվող տեղեկությունների ստացման վերաբերյալ դրույթների և հարակից խնդիրների վերլուծությունը զետեղված է թիվ 26 հանձնարարականին (չափորոշիչ 26.4) և թիվ 28 հանձնարարականին նվիրված բաժիններում:

Ահաբեկչության և դրա ֆինանսավորման հետ կապված ԿԳՀ-ներ (չ. 13.2-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

784. Ինչպես նշվեց, կասկածելի գործարքի կամ հարաբերության սահմանումը ներառում է գույք, ֆինանսական կամ այլ միջոցներ, որոնք կապված են ահաբեկչության ֆինանսավորման հետ, կամ որոնք նախատեսվում է օգտագործել ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

785. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է նաև, որ գործարար հարաբերությունը կամ գործարքը ճանաչվում է կասկածելի, եթե կասկածվում է, որ այդ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներառված գույքն ստացվել է հանցավոր ճանապարհով կամ այդ գույքը կապված է ահաբեկչության ֆինանսավորման հետ, ինչպես նաև եթե ֆինանսական միջոցները կամ այլ գույքը կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով: Դա տարածվում է նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ:

ԿԳՀ-ներ ներկայացնելու պարտավորությունը՝ անկախ գործարքի գումարից (չ. 13.3-ի և IV.2-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

786. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը՝ անկախ գործարքի գումարից, սահմանված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1.3 կետով: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նաև հստակեցվում է, որ կասկածը տարածվում է նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ գործարք կատարելու փորձի նկատմամբ:

ՓԼ և ԱՖ ԿԳՀ-ներ ներկայացնելու պահանջի կիրառելիությունը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք առկա են հարկային խնդիրներ (չ. 13.4-ի և չ. IV.2-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

787. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու պահանջը, այդ թվում՝ ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ, կիրառելի է՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք գործարքը համարվում է հարկերից խուսափելու հետ կապված գործարք: Հարկերից խուսափելը, ինչպես ներկայացված է սույն հաշվետվության 2-րդ բաժնում, համարվում է ՓԼ նախորդող հանցագործություն:

Ներդրվածությունը և արդյունավետությունը

788. Լուրջ խնդիրներ կարող են առաջ քաշվել ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանված՝ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պահանջների արդյունավետ կատարման առնչությամբ: Չնայած որ որոշ ՆՈՖԳՏՄ-ների պարագայում այդ պահանջները նախատեսված էին նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նախկին օրենքով (որն ուժի մեջ էր մտել 2005 թվականին), ՆՈՖԳՏՄ-ներից որևէ մեկը երբևէ չի տրամադրել ԿԳ վերաբերյալ հաշվետվություն:

789. Դա կարող է մասամբ պայմանավորված լինել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքում առկա հակասություններով և բացերով: ԿԳՀ/ՆՇԳՀ ձևերի և դրանց լրացման և ներկայացման կարգերի վերաբերյալ ՀՀ ԿԲ-ի որոշումները միայն վերջերս են տարածվել նոտարների և խաղատների նկատմամբ (մյուսների մասով որոշումներն ուժի մեջ են մտել 2009 թ. մարտի 12-ին), և դրանց արդյունավետությունը ներկայումս նվազագույն մակարդակի վրա է, քանի որ ՆՈՖԳՏՄ-ների տեսակներից որևէ մեկի ներկայացուցիչները տեղյակ չէին նման որոշումների կամ կարգերի վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ի որոշումները չեն տարածվում թանկարժեք մետաղների կամ քարերի դիլերների նկատմամբ, և այդ մասնագիտությունների համար փաստացի չկան հաշվետվությունների հաստատված ձևեր կամ լրացման և ներկայացման կարգեր:

790. ՖԴԿ-ն ընդունել է «Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցը», սակայն վերջինս շատ փոքր մասով է վերաբերում ՆՈՖԳՏՄ-ներին: Ավելին, ՆՈՖԳՏՄ-ների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանք տեղեկացված չեն այդ ուղեցույցի մասին և ի վիճակի չեն ՖԴԿ-ի ինտերնետային կայքից ստանալ ուղեցույցը և հաշվետվական ձևերը:

791. Մտահոգություն կա, որ անկախ իրավաբանները, իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունները, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, թանկարժեք մետաղների դիլերները և թանկարժեք քարերի դիլերները կարող են ոչ լիովին տեղյակ լինել կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ տրամադրելու իրենց պարտավորություններին, քանի որ լիցենզավորման և վերահսկողության գործընթացներում ներկայումս չկան համապատասխան գիտելիքների առկայության վերաբերյալ պահանջներ, և նշված պարտավորությունների մասին նրանց պատկերացումները և ընկալումները կասկածահարույց են: Նույնպիսի պահանջներ սահմանված չեն նաև հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձանց համար, սակայն գնահատման պահի դրությամբ Հայաստանում նման գործունեություն չէր իրականացվում:

792. Գնահատողների անցկացրած հարցազրույցներին մասնակցած մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ քաջատեղյակ էին ՆՇԳՀ տրամադրելու պահանջներին, սակայն նույնչափ տեղեկացված չէին այն մասին, որ ԿԳՀ-ի տրամադրումը կախված չէ նվազագույն շեմի գործոնից: Առկա է նաև մտահոգություն, որ հաշվետվություն տրամադրող անձանցից ոմանք կարող են բավարար չափով չտարբերակել ԿԳՀ և ՆՇԳՀ ներկայացնելու պահանջները:

793. Հարցազրույցներին մասնակցած բոլոր ՆՈՖԳՏՄ-ները որոշ չափով գիտեին ՄԱԿ-ի հրապարակած անհատ ահաբեկիչների և ահաբեկչության հետ կապված կազմակերպությունների ցանկի մասին, սակայն առկա էին նշված ցանկը ստանալու եղանակի և աղբյուրի (մասնավորապես՝ ցանկը կարելի է ստանալ ՖԴԿ-ի ինտերնետային կայքից), ցանկի կիրառելիության և ցանկի վերջին տարբերակն օգտագործելու անհրաժեշտության մասին տեղեկացվածության աստիճանի տարբերություններ:

794. ՆՈՖԳՏՄ-ների մեծ մասը տեղյակ չէր բոլոր գործարքների, այդ թվում՝ գործարքներ կատարելու փորձերի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորության մասին:

795. Հարցազրույցների մասնակցած ՆՈՖԳՏՄ-ները նշեցին, որ ՖԴԿ-ն իրականացրել է ուսուցում՝ կազմակերպելով նշված թեմային նվիրված սեմինար, որում ներկայացվել են նաև հնարավոր կասկածելի գործարքների հայտնաբերման նպատակով կիրառվող տիպաբանությունները: Անհրաժեշտ են լրացուցիչ ուսուցումներ և իրազեկվածության բարձրացման աշխատանքներ՝ ապահովելու բոլոր ՆՈՖԳՏՄ-ների տեղեկացվածությունը ԿԳՀ ներկայացնելու պարտավորություններին և վերջիններիս կատարումը նրանց կողմից:

796. ՆՈՖԳՏՄ-ների կողմից առաջ չքաշվեցին խնդիրներ ոչ գաղտնիության պահանջների առնչությամբ, ոչ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների կատարման նպատակով համապատասխան օրենքներով նախատեսված պահանջները չկիրառելու՝ իրենց կարողության առնչությամբ: Բոլոր ՆՈՖԳՏՄ-ները մեկնաբանում են այդ դրույթը հետևյալ կերպ. գաղտնիության պահանջից արվում է բացառություն՝ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված այլ պարտավորությունները կատարելու նպատակով: Այնուհանդերձ, ՆՈՖԳՏՄ-ներից որևէ մեկը մինչ օրս ԿԳՀ չի ներկայացրել, այսինքն՝ պրակտիկայում գաղտնիության խնդիր չի ծագել: Գնահատողների այցի շրջանակում կազմակերպված հարցազրույցներին մասնակցած բոլոր ՆՈՖԳՏՄ-ները հասկանում էին, որ գաղտնիության պահանջն օրենքի համաձայն չի կիրառվում այն դեպքում, երբ անհրաժեշտ է որոշակի տեղեկություններ տրամադրել իրավասու մարմնին, ինչպես նաև՝ համապատասխան նորմերի իմաստը և նպատակը, սակայն գաղտնիության ռեժիմի մեջ առկա են թերություններ, որոնք ներկայացված են սույն հաշվետվության այլ մասերում:

Պաշտպանությունը ԿԳՀ-ներ տրամադրելու դեպքում (չ. 14.1-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

797. Նախատեսվում է հետևյալ պաշտպանությունը. «հաշվետվություն տրամադրող անձը կամ նրա աշխատակիցները (ղեկավարները) չեն կարող ենթարկվել քրեական, վարչական, քաղաքացիական կամ այլ պատասխանատվության» «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները հավուր պատշաճի կատարելու համար: Դրույթը կիրառելի է նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ:

Բացահայտելու (հայտնելու) արգելքը (չ. 14.2-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

798. Սույն հաշվետվության 3-րդ բաժնում քննարկված՝ բացահայտելու (հայտնելու) մասին դրույթները հավասարապես կիրառելի են նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Չևակերպումն ընդգրկուն է և ներառում է «հաշվետվություն տրամադրող անձին, նրա աշխատակիցներին ու ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց»:

Արդյունավետությունը.

799. Հարցազրույցներին մասնակցած ՆՈՖԳՏՄ-ները գիտեին տեղեկատվության գաղտնիության առնչությամբ իրենց վրա դրված պարտավորությունների մասին: Մասնավորապես, նրանք գիտեին, որ արգելվում է հաճախորդին տեղեկացնել վերջինիս վերաբերյալ ԿԳՀ կազմելու և ՖԴԿ-ին ներկայացնելու փաստի մասին, չնայած որ հաշվետվություն տրամադրելու համար օրենքով նախատեսված պաշտպանության մասին նրանց իրազեկվածությունը սահմանափակ էր:

ՓԼ և ԱՖ կանխման ներքին հսկողական մեխանիզմների ստեղծումը և պահպանումը (չ. 15.1-ի, 15.1.1-ի և 15.1.2-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

800. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով ամրագրված դրույթների վերաբերյալ թիվ 15 հանձնարարականին նվիրված բաժնում զետեղված վերլուծությունը և եզրակացությունները հավասարապես կիրառելի են ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածով նախատեսվող պարտավորությունների շրջանակում պահանջվում է ունենալ ՓԼ և ԱՖ դեմ պայքարի համապատասխանության գործառույթ, սակայն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատուին հնարավորություն չի ընձեռվում ժամանակին և անարգել ստանալ ՀՊՈՒ տեղեկությունները կամ գործարքների մասին տվյալները և այլ տեղեկությունները: Ավելին, չներկայացվեցին ռիսկերի կառավարման կոնկրետ գործելակերպեր, որոնցով հնարավոր կլիներ համապատասխանության գործառույթի կատարման և ՆՈՖԳՏՄ-ի աշխատանքներում ընթացիկ գործառույթների կատարման պարտականությունները տարանջատել և կառավարել շահերի բախումները:

801. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, ՓԼ և ԱՖ կանխման նպատակ հետապնդող «ներքին ակտեր» («կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ») ստեղծելու և պահպանելու պահանջը չի տարածվում 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: 10-ից ավելի աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ կիրառվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածը, որով սահմանվում է ՀՊՈՒ-ի, տեղեկատվության պահպանման, կասկածելի գործարքների հայտնաբերման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև հարակից այլ պարտավորությունների վերաբերյալ «ներքին իրավական ակտեր» ունենալու պահանջները:

802. Մտահոգություն կա «ներքին իրավական ակտերի» կապակցությամբ՝ առ այն, որ որոշ դեպքերում այդ ակտերում կարող են պարզապես արտատպված լինել օրենքի համապատասխան դրույթների պահանջները՝ հաշվի չառնելով կոնկրետ գործունեության մեջ համապատասխան պահանջների կատարման առանձնահատկությունները:

ՓԼ և ԱՖ կանխարգելման ներքին հսկողական մեխանիզմների անկախ աուդիտը (չ. 15.2-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

803. Ինչպես քննարկվեց Հ.15-ին նվիրված բաժնում, 10-ից ավելի աշխատակից ունեցող հաշվետվություն տրամադրող անձանցից պահանջվում է իրենց նախաձեռնությամբ կամ լիազոր մարմնի պահանջով հրավիրել արտաքին աուդիտ՝ վերստուգելու ՓԼ և ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետության մակարդակը: ՆՈՖԳՏՄ-ների մասով չկան այլ իրավական ակտեր կամ ուղենիշներ, որոնցով կհստակեցվեր նման աուդիտի անցկացման հաճախականությունը: Իշխանությունները գնահատողներին տեղեկացրեցին, որ ՆՈՖԳՏՄ-ներում նման ուսումնասիրություններ անցկացնելու նպատակով արտաքին աուդիտ չի հրավիրվել:

Աշխատակիցների ընթացիկ վերապատրաստումը ՓԼ/ԱՖ թեմաներով (չ. 15.3-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

804. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածում ամրագրված դրույթների առնչությամբ Հ.15-ին նվիրված բաժնում ներկայացված վերլուծությունը և եզրակացությունները հավասարապես կիրառելի են նաև 10-ից ավելի աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Հաշվետվություն տրամադրող անձինք ներքին իրավական ակտերով պետք է նախատեսեն ներքին դիտարկումների մարմնի կամ սույն օրենքով սահմանված գործառույթներ իրականացնող այլ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ուսուցման և վերապատրաստման պահանջները՝ ՓԼ և ԱՖ դեմ պայքարի օրենսդրության, ինչպես նաև ՓԼ և ԱՖ առկա ռիսկերի և տիպաբանությունների վերաբերյալ: ՆՈՖԳՏՄ-ների մասով չկան այլ իրավական ակտեր կամ ուղեցույցներ, որոնք կհստակեցնեին աշխատակիցների ուսուցման հաճախականությունը, ժամկետները կամ

շրջանակը, կամ ուսուցանվող միտումների, մեթոդաբանությունների կամ հարակից այլ խնդիրները:

Աշխատակիցների նախնական ստուգման ընթացակարգերը (չ. 15.4-ի կիրառությունը ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ).

805. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված՝ աշխատակիցների նախնական ստուգման պարտավորությունների վերաբերյալ Հ.15-ին նվիրված բաժնում ներկայացված վերլուծությունը և եզրակացությունները հավասարապես կիրառելի են նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Մասնավորապես, օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ «ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները պետք է լիազոր մարմնի սահմանած կարգով և մասնագիտական համապատասխանության չափանիշների հիման վրա անցնեն որակավորում»: Այնուհանդերձ, պահանջները հիմնականում վերաբերում են ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներին և այլ աշխատակիցներին, որոնց վրա կարող են դրվել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտականություններ, սակայն չկա ընդհանուր պահանջ՝ նախնական ստուգումների միջոցով ապահովելու բարձր ստանդարտներ ցանկացած աշխատակցի աշխատանքի ընդունելիս:

Արդյունավետությունը.

806. 10-ից ավելի աշխատակից ունենալու պահանջի հետևանքով սահմանափակ է այն ՆՈՖԳՏՄ-ների թիվը, որոնք պարտավոր են իրենց ներքին իրավական ակտերով սահմանել և պահպանել ՓԼ և ԱՖ կանխման նպատակ հետապնդող ներքին կարգեր, կանոններ, ընթացակարգեր, հրահանգներ կամ կանոնակարգեր: Բացի այդ, նման ՆՈՖԳՏՄ-ների ընդունած ներքին իրավական ակտերում հիմնականում արտատպված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի նորմերը, սակայն արտացոլված չեն գործունեության տարբեր տեսակների գործառնական առանձնահատկությունները, ներառյալ գործունեության բնույթի, ծավալների, շրջանակի և մասնագիտության բնորոշ ռիսկերի կիրառությունը: Գնահատողների հանդիպած ՆՈՖԳՏՄ-ներից որևէ մեկը չնշեց համապատասխանության ստուգման գործառույթը հատուկ ծառայություններ մատուցող արտաքին անձի պատվիրելու մասին: ՆՈՖԳՏՄ-ների համար կազմակերպված ուսուցումը սահմանափակվել է ՀՀ ԿԲ-ի անցկացրած մեկ սեմինարով, և կասկած կա, որ ոչ բոլոր դեպքերում են սեմինարին մասնակցել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության պատասխանատուները, քանի որ մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ նշեցին, որ սեմինարին մասնակցել է մեկ այլ աշխատակից, ում վերապահված չեն եղել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթներ: Նախնական կամ ընթացիկ ուսուցման ֆորմալ ծրագրեր չկան: ՓԼ և ԱՖ ռիսկերի առնչությամբ աշխատակիցների նախնական ստուգումներ չեն իրականացվում նրանց աշխատանքի ընդունելուց առաջ: Ինքնակարգավորվող կազմակերպություններից ոչ մեկը ներկայումս չի կազմակերպում ՓԼ և ԱՖ թեմաներով ուսուցում և հավաստագրում: Աշխատակիցների աշխատանքի ընդունելիս, այդ թվում՝ այնպիսի կարևոր պաշտոնների համար, ինչպիսիք են համապատասխանության պատասխանատուները և ավագ ղեկավարությունը, ՆՈՖԳՏՄ-ների կողմից բարձր ստանդարտներ ապահովելու նկատառումով չեն իրականացվում «պատշաճության և համապատասխանության» կամ այլ նախնական ստուգումներ:

807. Իրավաբանների, հաշվապահների, աուդիտորների և փաստաբանների առևտրային և մասնագիտական գաղտնիքի վերաբերյալ նրանց գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքների դրույթների և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի նորմերի միջև առկա են անհամապատասխանություններ: Հաշվի առնելով, որ ՆՈՖԳՏՄ-ներից որևէ մեկը ԿԳՀ չի ներկայացրել, օրենքների դրույթների անորոշությունը պրակտիկայում փորձության չի առնվել:

Առանձնակի ուշադրություն դարձնել այն պետություններին, որոնք բավարար չափով չեն կիրառում ՖԱԹՖ-ի հանձնարարականները (չ. 21.1 և 21.1.1).

808. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների վերաբերյալ սույն հաշվետվության՝ Հ.21-ին նվիրված բաժնում ներկայացված վերլուծությունը և եզրակացությունները հավասարապես կիրառելի են նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: ՖԴԿ-ն հրապարակում և իր կայքում հրապարակայնորեն տեղադրում է օֆշորային տարածքների հետ կապված ցանկերը, ՖԱԹՖ-ի և ՄԱՆԻՎԱԼ-ի փաստաթղթերը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի թերությունների հետ կապված այլ տեղեկություններ: Այնուհանդերձ, ՆՈՖԳՏՄ-ներից ոչ մեկը տեղյակ չէր այդ ցանկերին և հրապարակված այլ փաստաթղթերի կամ ՖԴԿ-ի կայքում դրանց հասանելիության փաստի մասին:

ՖԱԹՖ-ի հանձնարարականները բավարար չափով չկիրառող պետություններից կատարվող և ակնհայտ տնտեսական կամ տեսանելի օրինական նպատակ չհետապնդող գործարքների ուսումնասիրությունը (չ. 21.2).

809. Սույն հաշվետվությունում Հ.21-ին նվիրված բաժնում ներկայացված վերլուծությունը և բացերը հավասարապես կիրառելի են նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Լրացուցիչ դիտանցում իրականացնելու պահանջ է կիրառվում որոշակի գործարքների, այդ թվում՝ անսովոր պայմաններով գործարքների նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մաս): Այնուհանդերձ, պահանջը չի տարածվում ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նկատմամբ: Բացի այդ, օրենքով սահմանված չեն հետևյալ պահանջները. i) հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրել ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, ii) գրավոր փաստաթղթավորել բացահայտումները, և iii) արդյունքները գրավոր տրամադրել իրավասու մարմիններին և աուդիտորներին: Ուստի, պահանջներն այդ առումներով թերի են:

ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կա ոչ բավարար չափով կիրառող պետությունների նկատմամբ սեփական նախաձեռնությամբ պատշաճ միջոցառումներ իրականացնելու կարողությունը (չ. 21.3).

810. Սույն հաշվետվության 3-րդ բաժնում Հ.21.3-ի վերաբերյալ ներկայացված վերլուծությունը և բացերը հավասարապես կիրառելի են նաև ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ: Այնուհանդերձ, ի տարբերություն ֆինանսական հաստատությունների, որոնց ուղարկվում են նախազգուշացման նամակներ, ՆՈՖԳՏՄ-ներին չեն տրվում նախազգուշացումներ այն պետությունների մասին, որոնք ՖԱԹՖ-ի կողմից ճանաչվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում էական թերություններ ունեցող և մտահոգության տեղիք տվող պետություններ:

4.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

811. Իշխանությունները պետք է դիտարկեն հետևյալի հնարավորությունը.

- Հստակեցնել գաղտնիության և պաշտպանության մասին նորմերի անհամապատասխանությունները նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և աուդիտորների, ինչպես նաև հաշվապահական և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով՝ բացառելու սույն հաշվետվության այլ մասերում նշված կամայականության հնարավորությունը, մասնավորապես՝

լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու պարտավորության մասով, ինչպես նաև՝ սահմանել համակարգված ստուգումների միջոցառումներ, որոնց միջոցով կփարատվեն համապատասխան օրենքների անորոշությունից բխող մտահոգությունները,

- Ներդնել աշխատակիցների նախնական ստուգման, այդ թվում՝ «պատշաճության և համապատասխանության» պահանջներ,

- Հաստատել թանկարժեք քարերի կամ մետաղների դիլերների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը և կասկածելի գործարքների համապատասխան տիպաբանությունները ՆՈՖԳՏՄ-ների համար,

- Վերահսկողության, ուսուցման և այլ միջոցներով իրականացնել իրազեկության բարձրացման ծրագրեր՝ ապահովելու ԿԳՀ-ներ և ՆՇԳՀ-ներ տրամադրելու պարտավորությունների հստակ տարբերակումը, մասնավորապես՝ հասկանալի դարձնելով ԿԳՀ տրամադրելու պարտավորության կիրառելիությունն անկախ նվազագույն շեմից, գործարք կատարելու փորձի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ նույնպես ԿԳՀ տրամադրելու պարտավորությունը,

- Նպաստել ՆՈՖԳՏՄ-ների, այդ թվում՝ համապատասխանության պատասխանատուների ուսուցմանը՝ կազմակերպելով ուղղակի կամ հավաստագրված դասընթացներ համապատասխան ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ ԻԿԿ-ների միջոցով, ինչպես նաև ապահովել ընթացիկ վերապատրաստման պահանջների արտացոլումն օրենքում, կանոններում կամ կանոնակարգերում,

- Ներդնել ռիսկերի կառավարման հսկողական մեխանիզմներ՝ ապահովելու համապատասխանության գործառույթի կատարման բավարար չափով ապահովվածությունն աշխատակիցներով, և հաղթահարելու համապատասխանության պատասխանատուի մոտ համապատասխանության գործառույթի և ընթացիկ աշխատանքային այլ գործառույթների միջև ծագող հակասությունները,

- Բարձրացնել ՆՈՖԳՏՄ-ների իրազեկությունն օֆշորային տարածքների հրապարակված գործող ցանկի վերաբերյալ, ինչպես նաև ներդնել միջոցառումներ, որոնցով ՆՈՖԳՏՄ-ները կտեղեկացվեն այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի թերությունների շուրջ առկա մտահոգությունների մասին,

- Սահմանել պահանջներ ՆՈՖԳՏՄ-ների համար՝ ապահովելու նրանց ներքին իրավական ակտերի վերաբերելիությունը համապատասխանության համակարգերին և հսկողական մեխանիզմներին՝ պարզապես «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դրույթներն արտատպելու փոխարեն,

- ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, գրավոր փաստաթղթավորելու բացահայտումները և արդյունքները գրավոր տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին:

4.2.3. Համապատասխանությունը թիվ 16 հանձնարարականին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.4.2-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.16	Մասամբ համապատասխանում է	• ՆՈՖԳՏՄ-ների տեսակներից ոչ մեկը դեռևս չի տրամադրել որևէ ԿԳՀ: • ԿԳՀ-ների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունների մասին իրազեկության ընդհանուր մակարդակը ցածր է, հատկապես ԿԳՀ-ներ և ՆՇԳՀ-ներ տրամադրելու պարտավորությունների ոչ բավարար ընկալման առումով: Բացի այդ, բավարար չափով չի ընկալվում կասկածելի գործարք կատարելու փորձի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ նույնպես ԿԳՀ տրամադրելու պահանջը: • Ներքին իրավական ակտերում հիմնականում արտատպված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դրույթները՝ չանդրադառնալով ՆՈՖԳՏՄ գործունեության կոնկրետ տեսակի բնույթով, ծավալներով կամ շրջանակով պայմանավորված ռիսկերը: • Համապատասխանության գործառույթը հիմնականում կատարվում է ընթացիկ աշխատանքային գործունեության մեջ ներգրավված աշխատակիցների կողմից: Չարձանագրվեց պարտականությունների տարանջատում, շահերի բախումների կառավարում և համապատասխանության խորը ընկալում: • Սահմանված չէ ընթացիկ վերապատրաստման պահանջ: Ծառայություններ մատուցողների կողմից չեն կազմակերպվում վերապատրաստման դասընթացներ: • Սահմանված չէ ուղղակի պահանջ՝ ուսումնասիրելու բարդ, անսովոր մեծ գործարքների և տնտեսական կամ այլ իրավաչափ ակնհայտ նպատակ չունեցող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը, կամ փաստաթղթավորելու բացահայտումները: • Չկան արդյունավետ միջոցառումներ, որոնց միջոցով ՆՈՖԳՏՄ-ները կտեղեկացվեն այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում առկա թերությունների մասին: • Սահմանված չէ պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու գործարքների նախադրյալները և նպատակը, գրավոր փաստաթղթավորելու բացահայտումները և արդյունքները գրավոր տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին: • ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ ոչ բավարար չափով կիրառող պետությունների նկատմամբ սեփական նախաձեռնությամբ պատշաճ միջոցառումներ իրականացնելու հնարավորությունը նախատեսված չէ: • Նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և աուդիտորների, ինչպես նաև հաշվապահական և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով առկա են մտահոգություններ գաղտնիության և պաշտպանության մասին նորմերի արդյունավետության շուրջ: • Առկա են համակարգի արդյունավետության հիմնախնդիրներ:

4.3. Կարգավորումը, վերահսկողությունը և մոնիտորինգը (Հ.24-25)

4.3.1. Նկարագրություն և վերլուծություն

812. Հետևյալ աղյուսակում ներկայացված են ՆՈՖԳՏՄ-ների տեսակները՝ ըստ մասնագիտության կամ գործունեության տեսակի, ինչպես նաև համապատասխան վերահսկող մարմինները: Վերահսկող մարմինը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանվում է որպես «հաշվետվություն տրամադրող անձանց լիցենզավորող (նշանակող, որակավորում տվող կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրող և վերահսկողություն իրականացնող) իրավասու մարմին»:

ՆՈՖԳՏՄ	Լիցենզավորված անձանց թիվը	Վերահսկող մարմինը
Նոտարներ	70	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
Փաստաբաններ	855	Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ

Անկախ աուդիտորներ և աուդիտորական ընկերություններ	29[43]	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատներ, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք	131[44]	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
Անշարժ գույքի գործակալներ	215[45]	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
Անկախ իրավաբաններ և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություններ	Անհայտ է	Չկա
Թանկարժեք մետաղների դիլերներ և թանկարժեք քարերի դիլերներ	Անհայտ է	Չկա
Անկախ հաշվապահներ և հաշվապահական ընկերություններ	Անհայտ է	Չկա
Հավատարմագրային կառավարման ծառայություններ մատուցող անձինք	Չկա	Չկա
Իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք	Չկա	Չկա

813. ՆՈՖԳՏՄ-ների վերահսկողության մակարդակները տարբերվում են. մի շարք ՆՈՖԳՏՄ-ներ, ներառյալ անկախ իրավաբանները, իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունները, անկախ հաշվապահները, հաշվապահական ընկերությունները, թանկարժեք մետաղների դիլերները և թանկարժեք քարերի դիլերները լիցենզավորման կարգերի բացակայության պատճառով ենթակա չեն որևէ վերահսկողության:

814. Ավելի քան 10 աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ներից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետով պահանջվում է ունենալ «ներքին իրավական ակտեր» («կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ»): Իշխանությունները տեղեկացրեցին գնահատողներին, որ պրակտիկայում ներքին իրավական ակտերի ներկայացումը ՖԴԿ-ին և վերանայումը վերջինիս կողմից միայն վերջերս է սկսվել, և որ անհրաժեշտության դեպքում ՖԴԿ-ն ներքին իրավական ակտերի բովանդակության մասին կտեղեկացնի համապատասխան վերահսկող մարմիններին:

815. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված պարտավորությունների խախտման համար ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ կիրառելի են պատասխանատվության միջոցներ, որոնք Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի

[43] 24 իրավաբանական և 5 ֆիզիկական անձ:

[44] 14 խաղատներ և շահումով խաղերի 117 կազմակերպիչներ:

[45] 2009 թ. ապրիլի դրությամբ:

27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նշանակվում են ֆիզիկական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց նկատմամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցները նույնն են, ինչ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված և Հ.17-ին նվիրված բաժնում մանրամասնորեն ներկայացված պատժամիջոցները: ՓԼ/ԱՖ առնչությամբ որևէ ՆՈՖԳՏՄ-ի նկատմամբ պատժամիջոցներ չեն կիրառվել:

Խաղատների գործունեության կարգավորումը և վերահսկողությունը (չ. 24.1, 24.1.1, 24.1.2 և 24.1.3).

816. Շահումով խաղ կազմակերպող անձինք և խաղատները (հետայսու՝ «խաղատներ») լիցենզավորվում և վերահսկվում են իրավասու մարմնի՝ ֆինանսների նախարարության կողմից, ՀՀ կառավարության 2004 թ. հուլիսի 29-ի թիվ 1164-Ն որոշման համաձայն: Իշխանությունները տեղեկացրեցին գնահատողներին, որ գնահատման պահի դրությամբ չկային գործող ինտերնետային խաղատներ կամ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք, և որ նման խաղատներից կամ անձանցից դիմումներ չէին ստացվել: Խաղատների լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» օրենքով և «Շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքով սահմանված պարտավորություններին համապատասխան, որոնցով կարգավորվում են, ի թիվս այլ հարաբերությունների, լիցենզիայի սկզբունքները, նպատակները, վավերականությունը, դիմելու գործընթացը, ներառյալ հիմնավորող փաստաթղթերը, լիցենզիայի փոփոխությունները և ուժը կորցրած ճանաչելը, լիցենզիայի դիմումի մերժումը և մերժման բողոքարկման կարգը: Չնայած որ «Լիցենզավորման մասին» օրենքն ուղղակիորեն չի անդրադառնում ՓԼ կամ ԱՖ դեմ պայքարի հարցերին, «Շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածով խաղատներից պահանջվում է ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների կատարումը:

817. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են վերահսկող մարմինները (տվյալ դեպքում՝ ֆինանսների նախարարությունը), և որ «լիազոր մարմնի» (այսինքն՝ ՀՀ ԿԲ-ի) առաջարկով վերահսկող մարմինը (ֆինանսների նախարարությունը) իրականացնում է հաշվետվություն տրամադրող անձի մոտ ստուգումներ՝ ՓԼ կամ ԱՖ հետ կապված տեղեկությունների հիման վրա: Խաղատների նկատմամբ վերահսկողության, այդ մասին՝ տեղում ստուգումների կամ փաստաթղթային վերահսկողության վերաբերյալ դրույթներն ամրագրված են «Շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 9-րդ հոդվածում, չնայած որ ՓԼ և ԱՖ վերաբերյալ կոնկրետ գործընթացներ կամ ընթացակարգեր նախատեսված չեն:

818. ՖՆ-ի համապատասխան ստորաբաժանումը, որը պատասխանատու է խաղատների լիցենզավորման և վերահսկողության մասով, համալրված է երեք աշխատակիցներով, որոնք պատասխանատու են նաև իրավական ակտերի փոփոխությունների և լրացումների համար:

819. Տեղերում վերահսկողությունն իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի («Ստուգումների մասին» օրենք) դրույթներին համապատասխան, որի 2-րդ հոդվածում «ստուգումներ իրականացնող պետական մարմինների» թվարկումը ներառում է նաև ՖՆ-ն: Տեղերում ստուգումների ընթացակարգը, որը մանրամասնորեն նախատեսված է «Ստուգումների մասին» օրենք 7-րդ հոդվածում, ներառում է, մասնավորապես, ստուգումն իրականացնող անձի իրավունքը՝ ստուգվողի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործելու ստուգվողի տարածք, պահանջելու փաստաթղթեր և այլ տեղեկություններ, ներառյալ տեղեկանքներ, սահմանելու ժամկետներ՝ բացահայտված այն թերությունների և խախտումների վերացման համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն,

առաջարկություններ ներկայացնելու ՖՆ «ղեկավարությանը»՝ վարչական կամ քրեական պատասխանատվություն առաջացնող բացահայտված չարաշահումների և այլ խախտումների կապակցությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, և ստուգվող սուբյեկտի կողմից դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով իրականացնելու գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակաց՝ միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումներ:

820. Յուրաքանչյուր խաղատուն տեղերում ստուգումների շրջափուլի համաձայն ստուգվում է տարին մեկ անգամ, բացառությամբ երբ ծագում են խնդիրներ, որոնց առնչությամբ պահանջվում է լրացուցիչ ուշադրություն դարձնել կոնկրետ անձին: Խաղատների տեղերում ստուգումների միջին տևողությունը երկու օր է, շահումով խաղ կազմակերպող անձանց դեպքում՝ մեկ օր: Ավելին, գնահատողները տեղեկացվեցին, որ ՖՆ-ի աշխատակիցները մասնակցել են խաղատների վերահսկողության թեմայով ՀՀ ԿԲ-ի կազմակերպած վերապատրաստումներին:

821. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ «ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց» նկատմամբ պատասխանատվության միջոցները կիրառվում են համապատասխան լիցենզավորող (նշանակող) մարմնի կողմից՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով (244.12 հոդվածով) սահմանված կարգով: Խաղատների կողմից «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների խախտումների դեպքում վարչական պատասխանատվության միջոցները կիրառող համապատասխան մարմինը ՖՆ-ն է:

822. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդվածում մանրամասնորեն ամրագրվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների խախտումների դեպքում կիրառվող վարչական պատասխանատվության միջոցները: Վերջիններս տարբեր են՝ ըստ հաշվետվություն տրամադրող անձի տեսակի: Մասնավորապես, իրավաբանական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց (համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանման) կողմից օրենքի պահանջների խախտման դեպքում ՖՆ-ի կողմից կիրառվում են Հ.17-ին նվիրված բաժնում մանրամասնորեն ներկայացված պատժամիջոցները:

823. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջները խախտելու կամ պարտավորությունները չկատարելու համար մինչ օրս չեն կիրառվել պատասխանատվության միջոցներ: Պատասխանատվության միջոցների փաստացի կիրառության դեպքերն առնչություն չեն ունեցել ՓԼ և ԱՖ խնդիրներին. օրինակ, պատասխանատվության միջոց է կիրառվել մի խաղատան նկատմամբ, որի խաղային մեքենաների թիվը գերազանցել է լիցենզիայով թույլատրված սահմանը, կամ՝ խաղատանը տեղադրված մեքենաների արտադրական համարները չեն համապատասխանել ՖՆ-ի ունեցած տվյալների:

824. Խաղատների ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» ստուգումներ չեն անցկացվում: Ավելին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը, «Լիցենզավորման մասին» օրենքը և «Շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքը չեն պարունակում պահանջներ, որոնք կկանխեին խաղատան սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան օպերատոր լինելը: Հարցազրույցների մասնակցած խաղատներից ոչ մեկը չէր իրականացրել սեփականատերերի կամ փաստացի հսկողություն իրականացնողների «պատշաճության և համապատասխանության» ստուգումներ կամ նախնական ստուգումներ:

Այլ ՆՈՖԳՏՄ-ների մոնիտորինգի համակարգերը (չ. 24.2 և 24.2.1).

Փաստաբաններ

825. Փաստաբանները գրանցվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում («Փաստաբանների պալատ»)՝ «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն: «Փաստաբանության մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, փաստաբան է համարվում այն անձը, որը «սույն օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում»: «Փաստաբանը համարվում է իրավական հարցերով անկախ խորհրդատու»: «Փաստաբանության մասին» օրենքի 28-րդ և 29-րդ հոդվածներով սահմանվում են համապատասխանաբար Փաստաբանների պալատից փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար ներկայացվող պահանջները և փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու կարգը:

826. Այնուհանդերձ, Փաստաբանների պալատին վերապահված չեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված պարտավորությունների կատարման առումով փաստաբաններին վերահսկելու լիազորություններ, և Փաստաբանների պալատի պաշտոնատար անձինք հայտնեցին, որ պալատում համապատասխանության նման վերահսկողություն իրականացնելու համար չկան համակարգեր, ընթացակարգեր կամ մասնագիտացած կամ փորձառու աշխատակիցներ: Բացի այդ, «Ստուգումների մասին» օրենքով նախատեսված՝ «ստուգումներ իրականացնող պետական մարմինների» թվարկումը չի ներառում ԻԿԿ-ներին:

827. Հաշվի առնելով, որ պալատին իրավասություններ վերապահված չեն, պատասխանատվության միջոցները կիրառում է լիազոր մարմինը՝ ՖԴԿ-ն, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն:

Նոտարներ

828. Նոտարները «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի (ժ) կետի համաձայն ներառված են հաշվետվություն տրամադրող անձանց ցուցակում: Նրանց լիցենզավորում և նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառում է արդարադատության նախարարությունը՝ ՀՀ կառավարության թիվ 274 որոշմամբ արդարադատության նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակում: «Նոտարիատի մասին» օրենքի 19-րդ հոդվածով կարգավորվում է նոտարի գործունեության նկատմամբ վերահսկողությունը: Տեղերում ստուգումներն անցկացվում են «Ստուգումների մասին» օրենքի համաձայն, ընդ որում՝ արդարադատության նախարարությունը «Ստուգումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն ներառված է «ստուգումներ իրականացնող պետական մարմինների» թվարկման մեջ: Իշխանությունները յոթ ստուգում են անցկացրել 2007 թվականին, մեկը 2008-ին, իսկ 2009 թվականի ընթացքում նախատեսվում է անցկացնել 12-ը: Արդարադատության նախարարությունը 2008 թվականից ի վեր ունի ժամանակացույց, որի համաձայն 4-5-ամյա յուրաքանչյուր շրջափուլի ընթացքում ստուգվում են բոլոր նոտարները:

829. Նոտարիատի վարչությունը, որը պատասխանատու է նոտարների լիցենզավորման և վերահսկողության համար, համալրված է 3 աշխատակիցներով, ովքեր 2008 թվականի ընթացքում մասնակցել են ՀՀ ԿԲ-ի կազմակերպած երկու սեմինարների:

Անշարժ գույքի գործակալներ

830. Անշարժ գույքի գործակալներին լիցենզավորում, վերահսկում և նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե («Կադաստրի

կոմիտե»)՝ ՀՀ կառավարության թիվ 895 որոշման համաձայն, որով կադաստրին նաև իրավունք է վերապահվում՝ լիցենզավորելու գնահատողների, հողի չափագրումներ և տեղագրական քարտեզագրում իրականացնողների գործունեությունը: Տեղերում ստուգումներն անցկացվում են «Ստուգումների մասին» օրենքի համաձայն, ընդ որում՝ Կադաստրի կոմիտեն անուղղակիորեն է ներառված «ստուգումներ իրականացնող պետական մարմինների» թվարկման մեջ, քանի որ օրենքի 2-րդ հոդվածում, ի թիվս այլ մարմինների, նշվում են նաև «լիցենզավորող պետական մարմինները»: Իշխանությունները տեղեկացրեցին գնահատողներին, որ ՓԼ կամ ԱՖ կոնկրետ ստուգումներ չեն անցկացրել, չնայած որ ինը անդամից բաղկացած հատուկ հանձնաժողովի կողմից անցկացվել են մոտ 20-24 ընդհանուր ստուգումներ:

<u>Աուդիտորի մասնագիտական գործունեությունը</u>

831. Անհատ ձեռնարկատեր աուդիտորները և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք (հետայսու՝ «աուդիտորներ») լիցենզավորվում և վերահսկվում են ՖՆ-ի կողմից: Լիցենզավորման պահանջները և լիցենզավորման լիազորությունների վերապահումը ֆինանսների նախարարությանը կարգավորվում են «Լիցենզավորման մասին» օրենքի 24-րդ հոդվածով:

832. Տեղերում ստուգումներն անցկացվում են «Ստուգումների մասին» օրենքի համաձայն, ընդ որում՝ ՖՆ-ն «Ստուգումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն ներառված է «ստուգումներ իրականացնող պետական մարմինների» թվարկման մեջ: Ստուգումների վերաբերյալ լրացուցիչ դրույթներ նախատեսված են «Աուդիտորական գործունեության մասին» օրենքում, որի համաձայն ՖՆ-ն, որպես լիազորված մարմին, իրականացնում է հսկողություն՝ աուդիտորների կողմից աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև աուդիտորների վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ:

833. ՖՆ-ի համապատասխան ստորաբաժանումը, որը պատասխանատու է աուդիտորների լիցենզավորման և վերահսկողության մասով, համալրված է 5 աշխատակիցներով, որոնք պատասխանատու են նաև աուդիտորական գործունեության մասին օրենքների մշակման և փոփոխման, հավաստագրման գործընթացների և ընթացակարգերի համար:

<u>Հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք</u>

834. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չեն գործում հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք: Չկա նման անձանց լիցենզավորման կամ վերահսկողության իրավական դաշտ:

<u>Անկախ իրավաբաններ և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություններ, անկախ հաշվապահներ և հաշվապահական ընկերություններ, թանկարժեք մետաղների դիլերներ, թանկարժեք քարերի դիլերներ</u>

835. Որևէ օրենքով սահմանված չեն լիցենզավորման պահանջներ: Հետևաբար, չեն իրականացվում նաև վերահսկողական աշխատանքներ:

Արդյունավետությունը.

836. Չնայած որ տարբեր ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ վերահսկողության աստիճանի տարբերություններ կան, վերահսկողական գործառույթներից ոչ մեկը նպատակաուղղված չէ կոնկրետ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով ՆՈՖԳՏՄ-ների վրա դրված պարտավորությունների կատարմանը կամ կոնկրետ մասնագիտության կամ

գործունեության հետ կապված ՓԼ/ԱՖ կոնկրետ ռիսկերին: Փաստաբանների և մի շարք ՆՈՖԳՏՄ-ների՝ անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների գործունեության լիցենզավորման պահանջների բացակայության պայմաններում նրանց նկատմամբ որևէ վերահսկողություն նախատեսված չէ և չի իրականացվում: Իրավասու բոլոր մարմինները հարցազրույցների ընթացքում նշեցին, որ տեխնիկական ռեսուրսների (աշխատակիցներ և հմտություններ) անբավարարությունը խոչընդոտում է ՓԼ և ԱՖ դեմ պայքարի ոլորտում արդյունավետ տեղերում (տեսչական) վերահսկողության իրականացումը:

837. Առանձնակի մտահոգություն է պատճառում այն հանգամանքը, որ խաղատների ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» ստուգումներ չեն անցկացվում, և հնարավոր չէ կանխել խաղատան սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան օպերատոր լինելը:

Ուղեցույցներ ՆՈՖԳՏՄ-ների համար (չ. 25.1-ի կիրառությունը).

838. Բացառությամբ որոշ ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունված՝ ԿԳՀ-ների ձևերի լրացման և ներկայացման կարգերի[46] և դրանց առնչվող՝ Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցի, վերահսկող մարմինները կամ ԻԿԿ-ները չեն ընդունել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՆՈՖԳՏՄ-ների պարտավորությունների ներդրման և կատարման վերաբերյալ կոնկրետ ուղեցույցներ:

Հետադարձ արձագանքը (չ. 25.2-ի կիրառությունը).

839. Ինչպես նշվեց 3-րդ բաժնում՝ Հ.25.2-ի վերլուծության մեջ, լիազոր մարմինը «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1(13)-րդ կետի համաձայն պարտավոր է պարբերաբար տեղեկատվություն (հետադարձ կապ) տրամադրել հաշվետվություն տրամադրող անձանց վերջիններիս կողմից տրամադրված հաշվետվությունների վերաբերյալ: Ավելին, ՖԴԿ-ն հաստատում է հաշվետվությունների ստացման փաստը՝ ստացման հաստատում ուղարկելով հաշվետվություն տրամադրող անձանց: Փաստացի պրակտիկայում նման հետադարձ արձագանք չի տրվել, քանի որ ՆՈՖԳՏՄ-ների կողմից ԿԳՀ-ներ մինչ օրս չեն տրամադրվել:

840. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ տիպաբանությունների ուղեցույցը, որն ընդունվել է ՖԴԿ-ի կողմից, գրեթե չի անդրադառնում ՆՈՖԳՏՄ-ներին: Ավելին, ՆՈՖԳՏՄ-ներից ոչ մեկը որևէ տեղեկություն չուներ տիպաբանությունների ուղեցույցի ընդունման փաստի կամ այն մասին, թե որտեղից կարելի է այն ստանալ:

4.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

841. Իշխանություններին առաջարկվում է դիտարկել հետևյալի նպատակահարմարությունը.

[46] Ինչպես նշվել է Հ.16-ին նվիրված բաժնում, ՀՀ ԿԲ-ի ընդունած որոշումներով հաստատվել են ԿԳ հաշվետվական ձևերը և դրանց լրացման և ներկայացման կարգերը: Սակայն, նմանատիպ որոշումներ չեն ընդունվել թանկարժեք քարերի կամ մետաղների դիլերների համար:

- Արդյունավետ մոնիտորինգ և ռիսկերի նկատմամբ զգայունության վրա հիմնված համապատասխանություն ապահովելու նպատակով անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների մասով իրավասու մարմիններին կամ ԻԿԿ-ներին լիազորել՝ իրականացնելու մոնիտորինգ և ստուգելու նրանց համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին,
- Ներդնել փաստաբանների գործունեության նկատմամբ վերահսկողության ռեժիմ,
- Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար ներդնել ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» ստուգումներ: Ավելին, օրենքով, կանոններով կամ կանոնակարգերով սահմանել պահանջներ, որոնցով կկանխվի խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի օպերատոր լինելը,
- Վերահսկողություն իրականացնող մարմիններում ապահովել ՓԼ և ԱՖ հարցերով զբաղվող բավարար կադրերի և տեխնիկական կարողությունների առկայությունը,
- ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունել ուղեցույցներ, որոնք կօգնեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների լիարժեք ներդրման և կատարման հարցում,
- Մշակել հետադարձ արձագանքի պատշաճ գործընթացներ՝ հաշվի առնելով բացահայտումների թվաքանակը և արդյունքները, նորագույն հնարքները, մեթոդները և միտումները, ինչպես նաև ՆՈՖԳՏՄ-ների պարագայում հնարավոր փողերի լվացման գործերի առանձնահատկությունները:

4.3.3. Համապատասխանությունը թիվ 24 և 25 հանձնարարականներին (չափորոշիչ 25.1, ՆՈՖԳՏՄ-ներ)

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.4.3-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.24	Չի համապատասխանում	• Անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարման մոնիտորինգն իրականացնող և այդ պահանջներին նրանց համապատասխանությունն ապահովող իրավասու մարմիններ չկան: • Փաստաբանների նկատմամբ վերահսկողության ռեժիմ չկա: • Խաղատների ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» պահանջներ չկան: • Չկան իրավական կամ կանոնակարգման պահանջներ, որոնցով կկանխվի խաղատան սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան օպերատոր լինելը: • Աշխատակիցների թիվը, իսկ որոշ դեպքերում՝ կոնկրետ հմտությունները բավարար չեն ՓԼ և ԱՖ դեմ պայքարի արդյունավետ վերահսկողություն ներդնելու և իրականացնելու համար: • Համապատասխանությունը վերահսկելու արդյունավետ համակարգեր չկան:
Հ.25	Մասամբ	• «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների լիարժեք

	համա-պատաս-խանում է	կատարումը և պահանջների բավարարումն ապահովելու համար ՆՈՖԳՏՄ-ների մասով ընդունված ուղեցույցները չափազանց քիչ են: • Համապատասխան հնարքների, ոլորտի խոցելի կետերի, մեթոդների կամ միտումների վերաբերյալ ՆՈՖԳՏՄ-ների իրազեկության բարձրացման աշխատանքներ չեն տարվում:

4.4. Ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակներ և մասնագիտություններ. գործարքների իրականացման ժամանակակից և ապահով մեթոդները (Հ.20)

4.4.1. Նկարագրություն և վերլուծություն

842. Հայաստանյան իշխանությունները «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի որոշ դրույթներ տարածել են մի շարք այլ գործունեության տեսակների և մասնագիտությունների նկատմամբ՝ հաշվետվություն տրամադրող անձ համարելով նաև վիճակախաղ կազմակերպող անձանց, արվեստի գործերի դիլերներին և սակարկությունների կազմակերպիչներին: Գրավատները և ներդրումային խորհրդատվական ծառայություններ մատուցողները լիցենզավորվում, կարգավորվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից և ներառված են սույն հաշվետվության 3-րդ բաժնում («Կանխարգելիչ միջոցներ. ֆինանսական հաստատություններ»):

843. Նորմեր սահմանված չեն բարձրարժեք և շքեղ ապրանքների դիլերների համար, բացառությամբ արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների և թանկարժեք մետաղների և քարերի դիլերների, որոնց անդրադառնում են սույն հաշվետվության այլ մասեր:

844. Վիճակախաղ կազմակերպող անձանց, սակարկությունների կազմակերպիչների և արվեստի գործերի դիլերների համար «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունները նույնն են, ինչ ՆՈՖԳՏՄ-ների պարագայում, և 4-րդ բաժնում զետեղված վերլուծությունը և եզրակացությունները հավասարապես կիրառելի են հաշվետվություն տրամադրող այդ անձանց նկատմամբ:

Գործունեության այլ տեսակներ և մասնագիտություններ	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով հաշվետվություն տրամադրող անձ լինելու հանգամանքը[47]	Իրավասու մարմինը
Ներդրումային խորհրդատվական ծառայություններ մատուցողներ	Այո	ՀՀ ԿԲ
Գրավատներ	Այո	ՀՀ ԿԲ
Սակարկությունների կազմակերպիչներ	Այո	Չկա

[47] «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդված:

Արվեստի գործերի դիլերներ	Այո	Չկա
Վիճակախաղ կազմակերպող անձինք	Այո	Ֆինանսների նախարարություն
Բարձրարժեք և շքեղ ապրանքների այլ դիլերներ	Ոչ	Չկա

Խոցելի այլ ՆՈՖԳՏՄ-ներ (Հ. 5-ի, 6-ի, 8-11-ի, 13-15-ի, 17-ի և 21-ի կիրառությունը, չ. 20.1).

845. Ոչ ֆինանսական գործունեության խոցելի այլ տեսակների և մասնագիտությունների պարագայում, ինչպիսիք են վիճակախաղ կազմակերպող անձինք, արվեստի գործերի դիլերները և սակարկությունների կազմակերպիչները, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով սահմանվում են նմանատիպ պարտավորություններ, ինչ ՆՈՖԳՏՄ-ների համար՝ ինչպես ներկայացված է սույն հաշվետվության 4-րդ բաժնում թիվ 12 հանձնարարականի մասով:

846. Գործունեության նշված այլ տեսակների և մասնագիտությունների նկատմամբ կիրառելի են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված հետևյալ պահանջները. կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվության տրամադրում (5-րդ հոդված), ԿԳՀ տրամադրելու դեպքում պաշտպանությունը/չբացահայտումը (12-րդ հոդված), ներքին իրավական ակտեր ունենալու պահանջը (21-րդ հոդված), ներքին դիտարկումների մարմին ունենալու պահանջը (22-րդ հոդված), խախտումների դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները (27-րդ հոդված) և ՓԼ և ԱՖ դեմ պայքարի միջազգային ստանդարտները բավականաչափ չկիրառող օտար պետություններում կամ տարածքներում գտնվող անձանց հետ գործարքների պարագայում հավելյալ պատշաճ ուսումնասիրության պահանջը (19-րդ հոդված): Օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված՝ «ներքին իրավական ակտեր» («կարգ, կանոն, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ») ունենալու պարտավորությունները «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն տարածվում են 10 կամ ավելի աշխատակից ունեցող ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների նկատմամբ:

847. Ինչ վերաբերում է թիվ 5 հանձնարարականին, ապա «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների վերլուծությունը և եզրակացությունները, որոնք զետեղված են սույն հաշվետվությունում Հ.5 հանձնարարականին (3-րդ բաժին) և Հ.12 հանձնարարականին (4-րդ բաժին) կապակցությամբ, կիրառելի են նաև գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների նկատմամբ: ՀՊՈՒ միջոցառումներ իրականացնելու պահանջը կիրառելի է հաճախորդի հետ 5 միլիոն դրամը (գնահատման պահին՝ 13,000 ԱՄՆ դոլար) գերազանցող կանխիկ գործարքների մասով, իսկ վիճակախաղ կազմակերպող անձանց դեպքում՝ երբ գործարքի գումարը գերազանցում է 1 միլիոն դրամը (2,600 ԱՄՆ դոլար): «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով հաշվետվություն տրամադրող այս անձանցից չի պահանջվում տեղեկություններ ստանալ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:

848. ՆՈՖԳՏՄ-ներին վերաբերող հանձնարարականների արդյունավետության նկարագրությունը և վերլուծությունը, որոնք մանրամասնորեն ներկայացված են սույն հաշվետվության նախորդ՝ 4-րդ բաժնում, հավասարապես կիրառելի են վիճակախաղ կազմակերպող անձանց, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների նկատմամբ:

Ֆինանսական գործարքների իրականացման արդիականացումը (չ. 20.2).

849. Հայաստանի տնտեսությունը բնութագրվում է կանխիկով կատարվող գործառնությունների մեծ ծավալով, որի կրճատման նպատակով ներկայացվել է համապատասխան օրինագիծ: Սույն գնահատման մեջ այն հաշվի առնված չէ: Գնահատողները տեղեկացվեցին, որ վիճակախաղերի և գրավատների հետ գործարքների մեծ մասը, եթե ոչ՝ բոլոր գործարքները, կատարվում են կանխիկով:

850. **Արդյունավետությունը.** արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների և վիճակախաղ կազմակերպող անձանց իրազեկության բարձրացման ծրագրեր չկան, որի պատճառով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների՝ նրանց կողմից ընկալման մակարդակը կարող է համարվել չափազանց ցածր: Արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների և վիճակախաղ կազմակերպող անձանց նկատմամբ սահմանափակ է չափորոշչի որոշ բաղկացուցիչների կիրառությունը, ինչպիսիք են այլ տարածքներում, մասնավորապես՝ ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող տարածքներում գտնվող հաճախորդների հետ գործարքների իրականացումը:

4.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

Իշխանություններին առաջարկվում է դիտարկել հետևյալի նպատակահարմարությունը.

- Իրականացնել ռիսկերի գնահատում՝ պարզելու, թե արդյոք ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների պարագայում առկա է ՓԼ կամ ԱՖ նպատակով դրանց չարաշահման ռիսկ:

- Միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու կանխիկի գործածությունը տնտեսության մեջ և խրախուսելու ավելի մեծ ծավալով գործառնությունների իրականացումը տնտեսության ֆորմալ հատվածում:

4.4.3. Համապատասխանությունը թիվ 20 հանձնարարականին

	Գնահա-տականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.20	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• ՓԼ կամ ԱՖ նպատակով ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների չարաշահման ռիսկերը չեն գնահատվում: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորություններ կրող ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների համար իրազեկության բարձրացման ծրագրեր չեն իրականացվում: • Միջոցներ չեն ձեռնարկվում՝ մշակելու և կիրառելու ֆինանսական գործարքների իրականացման ժամանակակից և ապահով մեթոդներ, որոնք պակաս խոցելի են փողերի լվացման նկատմամբ:

5. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Իրավաբանական անձինք. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիությունը (Հ.33)

5.1.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

851. Իրավաբանական անձանց, այդ թվում՝ նրանց գրանցման վերաբերյալ իրավական նորմեր ամրագրված են քաղաքացիական օրենսգրքում, «Հիմնադրամների մասին» օրենքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքում, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում և «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքում:

Իրավաբանական անձանց անօրինական օգտագործումը կանխելու միջոցները (չ. 33.1).

852. Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրը գործում է որպես արդարադատության նախարարության առանձին գործակալություն, որը ֆինանսավորվում է արդարադատության նախարարության ընդհանուր բյուջեի միջոցով: Պետական ռեգիստրն ունի 49 տարածքային ստորաբաժանում, որոնք հիմնականում պատասխանատու են առևտրային կազմակերպություններին ըստ գործունեության վայրի գրանցելու համար, ինչպես նաև մեկ կենտրոնական գրասենյակ, որը պատասխանատու է բոլոր հիմնադրամների գրանցման հարցերով:

853. Տարածքային ստորաբաժանումներում հավաքվող բոլոր տվյալները ստացման պահից 10 օրվա ընթացքում փոխանցվում են կենտրոնական գրասենյակ: Տվյալները փոխանցվում են թղթային տեսքով, որից հետո օպերատորը դրանք մուտքագրում է կենտրոնական գրասենյակում վարվող տվյալների էլեկտրոնային շտեմարանի մեջ: Տարածքային ստորաբաժանումներն ուղղակի կապով միացած չեն տվյալների շտեմարանին և չեն կարող օգտվել դրանից: Ուստի, տվյալների հարցումները, այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումներից տվյալներ ստանալու նպատակով կատարվող հարցումները, պետք է ներկայացվեն կենտրոնական գրասենյակ:

854. Քաղաքացիական օրենսգրքի 52(4) և 56(3) հոդվածներով, ինչպես նաև «Հիմնադրամների մասին» օրենքի 3-րդ հոդվածով, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 3-րդ հոդվածի համադրությամբ, նախատեսվում է, որ իրավաբանական անձն իրավունակություն է ձեռք բերում Պետական ռեգիստրում գրանցման պահից: Ինչ վերաբերում է հիմնադրամներին, ապա «Հիմնադրամների մասին» օրենքի 16-րդ հոդվածով պահանջվում է պետական գրանցում ձեռք բերել հիմնադրամի ստեղծման որոշման ընդունման օրվանից ոչ ուշ, քան 2 ամսվա ընթացքում:

855. Իրավաբանական անձանց իրական շահառուների մասին տեղեկություններ ապահովելու հիմնական մեխանիզմն ամրագրված է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23.1 հոդվածում, որի համաձայն ցանկացած իրավաբանական անձ գրանցման կամ կանոնադրական կապիտալի փոփոխության դեպքում պարտավոր է Պետական ռեգիստր ներկայացնել հայտարարություն իր իրական շահառուների վերաբերյալ: Հայտարարության պատճենը պահանջի դեպքում տրամադրում է Կենտրոնական բանկին:

856. Օրենքի 23.1 հոդվածում տրված չէ «իրական շահառու» եզրույթի սահմանումը: Այնուհանդերձ, ՀՀ ԿԲ-ի խորհրդի 2009 թ. հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատվել է

օրինակելի ձև, որը 23.1 հոդվածի պահանջների կատարումն ապահովելու նպատակով լրացվում է գրանցումն իրականացնող մարմինների կողմից: Այդ որոշմամբ նախատեսվում է, որ «իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի (գործարար հարաբերության) նկատմամբ և (կամ) ի շահ որի իրականացվում է գործարար հարաբերությունը կամ գործարքը»: Ուստի, սահմանումն ունի ընդհանուր եզրեր ՖԱԹՖ-ի ստանդարտով նախատեսված՝ «իրական շահառու» եզրույթի սահմանման հետ, սակայն ոչ ամբողջությամբ է համընկնում դրան. ՖԱԹՖ-ի ստանդարտով նախատեսված սահմանումը ներառում է ոչ միայն իրավաբանական անձի նկատմամբ հսկողություն իրականացնող ֆիզիկական անձին և անձանց, որոնց ի շահ իրականացվում է գործարքը կամ հարաբերությունը, այլ նաև՝ այն «ֆիզիկական անձին (անձանց), ով վերջին հաշվով հանդիսանում է հաճախորդի և/կամ այն անձի սեփականատերը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնողը, ում անունից իրականացվում է գործարք»: Այնուհանդերձ, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի մյուս դրույթները՝ ինչպես ներկայացվում է ստորև, ապահովում են սեփականատերերի մասին տվյալների տրամադրումը Պետական ռեգիստրին:

857. Ի լրումն օրինակելի ձևին, ՀՀ ԿԲ-ն Խորհրդի վերոհիշյալ որոշմամբ հաստատվել է նաև «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները», որոնցով իրավաբանական անձից պահանջվում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարությունը ներկայացնել պետական գրանցման դիմումը ներկայացնելուց կամ կանոնադրական կապիտալի, հիմնադիրների, մասնակիցների, անդամների, փայատերերի կամ բաժնետերերի կազմի փոփոխությունից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

858. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.1 հոդվածն ուժի մեջ է մտել միայն 2008 թ. մայիսին, իսկ օրինակելի ձևը, կարգը և ժամկետները հաստատվել են ՀՀ ԿԲ-ի կողմից 2009 թ. հունվարին: Ուստի, գնահատողները չկարողացան պարզել, թե արդյոք դրույթներն իրագործվում են արդյունավետորեն:

859. Նույնիսկ նախքան 2008 թ. մայիսը, սակայն, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքը ներառում էր մի շարք դրույթներ, որոնցով կարող էր ապահովվել իրավաբանական անձանց իրական շահառուների մասին տվյալների տրամադրումը Պետական ռեգիստրին:

860. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 21-րդ հոդվածով պահանջվում է ներկայացնել իրավաբանական անձի հիմնադիրների լիազորված անձի դիմումը, հիմնադիր ժողովի արձանագրությունը կամ հիմնադիր մեկ անձի որոշումը կամ համատեղ հիմնադրողների գրավոր պայմանագիրը, կամ իրավաբանական անձ հիմնադրող հիմնադրամի հիմնադրի կամարտահայտությունը և իրավաբանական անձի կանոնադրության առնվազն երկու օրինակ, ինչպես նաև պետական տուրքի վճարման անդորրագիրը:

861. Քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածով, որը տարածվում է բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ, նախատեսվում են այն տվյալները, որոնք պետք է պարունակի հիմնադիր փաստաթուղթը: Այդ նորմի համաձայն, կանոնադրության մեջ պետք է նշված լինի իրավաբանական անձի անվանումը, նրա գտնվելու վայրը (սահմանվում է որպես նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայր), իրավաբանական անձի կառավարման կարգը, ինչպես նաև, ոչ առևտրային կազմակերպության դեպքում, գործունեության առարկան և նպատակները: Համապատասխան տեսակի իրավաբանական անձանց համար նախատեսված նորմերով պահանջվում է, որպեսզի կանոնադրությունը պարունակի հետևյալ լրացուցիչ տեղեկությունները:

862. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 20-րդ հոդվածով նաև պահանջվում է Պետական ռեգիստր ներկայացնել նաև տեղեկություններ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնակատարի մասին (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները): Ուստի, պետական ռեգիստրում պահպանվում են տեղեկություններ բոլոր իրավաբանական անձանց ղեկավարության մասին:

863. 78-րդ, 91-րդ, 97-րդ և 110-րդ հոդվածներով առևտրային կազմակերպությունների մասով նախատեսվում է, որ կանոնադրությունը պետք է պարունակի տեղեկություններ կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի չափի և կազմի, դրանում մասնակիցներից կամ ընկերներից յուրաքանչյուրի բաժնեմասի չափի, բաժնեհավաք կապիտալում մասնակիցների բաժնեմասի փոփոխման կարգի, ինչպես նաև ավանդներ ներդնելու պարտականությունները խախտելու համար մասնակիցների պատասխանատվության մասին: Ուստի, բացառությամբ բաժնետիրական ընկերությունների, այլ իրավաբանական անձանց կապիտալի կազմի մասին տվյալներ պահպանվում են Պետական ռեգիստրում, և ցանկացած օտարում օրինական ուժ ստանում է միայն նոր սեփականատիրոջ գրանցման պահից: Բացի այդ, բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունը պետք է տեղեկություններ պարունակի թողարկվելիք բաժնետոմսերի տեսակների, դրանց անվանական արժեքի ու քանակի մասին:

864. Հիմնադրամների կանոնադրությունը պետք է նաև պարունակի հիմնադիր ֆիզիկական անձի անունը, անձնագրային տվյալները և բնակության հասցեն, ինչպես նաև հիմնադիր իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը և տնօրենի կամ ներկայացուցչի անունը: Ավելին, պետք է նշված լինի հիմնադրամի գույքի արժեքը և շահառուների խմբերը: Կանոնադրությունը պետք է պարունակի տեղեկություններ հիմնադրամի մարմինների, աշխատակիցների թվաքանակի և իրավասությունների, ինչպես նաև որոշումների կայացման կարգերի մասին: Պետք է տրված լինի շահառուների նկարագրությունը, սակայն պարտադիր չէ նշել կոնկրետ շահառուների անունները կամ նրանց մասին այլ տվյալներ: 2008 թվականից ի վեր, սակայն, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.1 հոդվածով պահանջվում է բացահայտել հիմնադրամի շահառուներին:

865. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 12-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսվում է իրավաբանական անձանց ընդհանուր պարտավորությունը՝ գրանցված տեղեկությունների փոփոխությունները ներկայացնելու Պետական ռեգիստր: Չնայած որ չի նախատեսվում փոփոխված տեղեկությունների ներկայացման ժամկետը, իրավաբանական անձանց մասին տարբեր օրենքների նորմերով (օրինակ, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածով) նախատեսվում է, որ կանոնադրությունում կատարված փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում նրանց պետական գրանցման պահից:

866. Ամփոփելով, կարելի է նշել, որ Պետական ռեգիստրում պահպանվում են տեղեկություններ իրավաբանական անձանց սեփականատերերի մասին, բացառությամբ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև տեղեկություններ հիմնադրամների հիմնադիրների և բոլոր իրավաբանական անձանց ղեկավարների մասին: Հայաստանում գրանցված բոլոր բաժնետիրական ընկերությունների մոտ 25%-ի մասով Կենտրոնական դեպոզիտարիայում պահպանվում են անվանական և փաստացի բաժնետերերի անունները: Մնացած 75%-ի դեպքում ռեեստրը վարվում է կոնկրետ ընկերության կողմից:

867. Բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեցող իրավաբանական անձի միակ տեսակը բաժնետիրական ընկերությունն է: Չնայած որ «Բաժնետիրական ընկերությունների

մասին» օրենքի 39-րդ հոդվածով պահանջվում է բաժնետոմսերի հավաստագրերը տրամադրել դրանց սեփականատիրոջ անունով՝ այդկերպ փաստացի արգելելով ըստ ներկայացնողի բաժնետոմսերի թողարկումը, քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսվում է, որ բաժնետոմսերը «կարող են լինել՝ ըստ ներկայացնողի կամ անվանական, ազատ շրջանառու կամ սահմանափակ շրջանառու, հասարակ կամ արտոնյալ»: Այնուհանդերձ, ինչպես վերլուծվեց Հ. 33.3-ին նվիրված բաժնում, իշխանությունները նշել են, որ օրենքների ընդունման ժամանակային հերթականության վերաբերյալ սահմանված սկզբունքների շնորհիվ օրենսդրական նորմերի միջև հակասություն չկա:

868. Թե «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքը (3-րդ հոդված), թե «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը (52-րդ հոդված) թույլատրում են անվանատերերը, որը ոչ թե բաժնետոմսի փաստացի սեփականատերն է, այլև՝ անվանատեր: «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածով նախատեսվող սահմանմամբ, «անվանատեր» է համարվում այն անձը, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, ընկերության բաժնետերերի ռեեստրում հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը: Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով «անվանատերերի» չարաշահումը կանխելու նպատակով ՀՀ ԿԲ-ի խորհուրդը 2007 թ. փետրվարի 6-ի թիվ 33-Ն որոշմամբ նախատեսել է, որ որպես արժեթղթերի բաժնետերեր կարող են հանդես գալ միայն ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունները, որոնք «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն պարտավոր են ձեռք բերել, ստուգել և պահպանել տեղեկություններ իրական շահառուների մասին:

869. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 51-րդ հոդվածով հայաստանյան բոլոր բաժնետիրական ընկերություններից պահանջվում է վարել բաժնետերերի ռեեստր: Բացի այդ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 195-րդ հոդվածի համաձայն, բաժնետոմսերը պարտադիր ենթակա են ռեեստրավարման Կենտրոնական դեպոզիտարիայում: Այնուհանդերձ, 195-րդ հոդվածի պահանջները խախտելու համար պատժամիջոցներ սահմանված չլինելու պատճառով պրակտիկայում Հայաստանի օրենսդրության հիման վրա գրանցված 4,139 բաժնետիրական ընկերություններից միայն 1,200-ն են իրենց բաժնետոմսերը գրանցել Կենտրոնական դեպոզիտարիայում:

Իրավաբանական անձանց իրական շահառուների մասին տեղեկությունների հասանելիությունը (չ. 33.2).

870. Պետական ռեգիստրում պահպանվող բոլոր փաստաթղթերը հասանելի են՝ որպես հրապարակային տեղեկություններ (քաղաքացիական օրենսգրքի 56-րդ հոդված և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 12-րդ հոդված):

871. Կառավարության 2001 թ. հուլիսի 25-ի որոշմամբ (թիվ 674) առավել մանրամասնորեն կարգավորվել է Պետական ռեգիստրում պահվող տեղեկությունների ստացման կարգը: Այդ որոշման համաձայն, Պետական ռեգիստրում պահվող տեղեկությունները բաց են հանրության համար, կարող են օգտագործվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից, և կարող են ստացվել ուղղակիորեն Պետական ռեգիստրի կենտրոնական գրասենյակից կամ փոստի միջոցով:

872. Այնուհանդերձ, անհրաժեշտ տեղեկությունները ստանալու համար կիրառվող գործընթացը կարծես բավական ժամանակատար է: Տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է գրավոր դիմում ներկայացնել կենտրոնական գրասենյակ կամ տարածքային ստորաբաժանում՝ նշելով պահանջվող տեղեկությունների ցանկը: Տեղեկությունները պետք է տրամադրվեն գրավոր տեսքով դիմումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:

Իշխանությունները նշեցին, որ պրակտիկայում ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների հարցումների պատասխաններն ուղարկվում են 2-3 օրվա ընթացքում:

«Ըստ ներկայացնողի» բաժնետոմսերի չարաշահման կանխումը (չ. 33.3).

873. Ինչպես նշվեց, բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեցող իրավաբանական անձի միակ տեսակը բաժնետիրական ընկերությունն է: Չնայած որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 39-րդ հոդվածով պահանջվում է բաժնետոմսերի հավաստագրերը տրամադրել դրանց սեփականատիրոջ անունով՝ այդկերպ փաստացի արգելելով ըստ ներկայացնողի բաժնետոմսերի թողարկումը, քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսվում է, որ բաժնետոմսերը «կարող են լինել՝ ըստ ներկայացնողի կամ անվանական, ազատ շրջանառու կամ սահմանափակ շրջանառու, հասարակ կամ արտոնյալ»:

874. Իշխանությունները նշեցին, որ օրենքների ընդունման ժամանակային հերթականության վերաբերյալ սահմանված սկզբունքների շնորհիվ օրենսդրական նորմերի միջև հակասություն չկա: Այնուհանդերձ, դա այնքան էլ պարզ չէր՝ հաշվի առնելով, որ ընդունվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի նոր տարբերակ:

875. Մատնանշվեց նաև, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով պահանջվում է վարել բաժնետերերի ռեեստր, գրանցել ցանկացած օտարում կամ բաժնետիրոջ անվան ցանկացած փոփոխություն, և նոր սեփականատիրոջ անունով թողարկել նոր բաժնետոմս:

876. Չնայած որ «Իրավական ակտերի մասին» օրենքի նորմերի հիման վրա կարծես թույլատրված չեն ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, և իշխանությունները նշել են, որ պրակտիկայում այդպիսիք չկան, գնահատողներն այնուամենայնիվ կարևոր են համարում քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածից հանել «ըստ ներկայացնողի» բաժնետոմսերի վերաբերյալ նշումը:

Լրացուցիչ տարրը. իրավաբանական անձանց իրական շահառուների մասին տեղեկությունների հասանելիությունը ֆինանսական հաստատություններին (չ. 33.4).

877. Պետական ռեգիստրում պահպանվող բոլոր տեղեկությունները հասանելի են հանրությանը, այդ թվում՝ ֆինանսական հաստատություններին:

5.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Ապահովել «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.1 հոդվածի արդյունավետ իրագործումը:
- Փոփոխություններ կատարել քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածում՝ վերացնելով «ըստ ներկայացնողի» բաժնետոմսերի վերաբերյալ նշումը,
- Իշխանությունները պետք է դիտարկեն Պետական ռեգիստրի բոլոր տարածքային ստորաբաժանումները կապակցող, «ուղիղ ժամանակի» ռեժիմով աշխատող էլեկտրոնային շտեմարանի ստեղծման նպատակահարմարությունը, որը հանրությունը, ինչպես նաև ֆինանսական հաստատություններին և իրավապահ մարմիններին հնարավորություն կընձեռի արագորեն ստանալ ռեգիստրում պահպանվող բոլոր տեղեկությունները:

5.1.3. Համապատասխանությունը թիվ 33 հանձնարարականին

	Գնահա-տականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.33	Հիմնա-կանում համա-	• Հաշվի առնելով, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.1 հոդվածը վերջերս է ուժի մեջ մտել, գնահատողները չկարողացան պարզել, թե արդյոք այն

	պատաս-խանում է	իրագործվում է արդյունավետորեն: • Ռեգիստրում պահպանվող տեղեկությունների ստացումը կարող է ժամանակատար լինել՝ հաշվի առնելով, որ Պետական ռեգիստրի կենտրոնական գրասենյակը և տարածքային ստորաբաժանումները միմյանց հետ կապակցված չեն, և հնարավոր չէ կատարել դրանց կողմից պահպանվող տեղեկությունների էլեկտրոնային որոնումներ:

5.2. Իրավաբանական կազմավորումները. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիությունը (Հ.34)

5.2.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

878. Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չեն տրաստերը և իրավաբանական կազմավորումների այլ ձևերը: Ավելին, Հայաստանը չի ստորագրել Տրաստերի նկատմամբ կիրառելի օրենքների և տրաստերի ճանաչման մասին Հաագայի կոնվենցիան: Մասնավոր հատվածի հետ քննարկումներում հաստատվեց, որ Հայաստանում իրավաբանների կողմից չեն մատուցվում տրաստերի ստեղծման և կառավարման ծառայություններ:

879. Ուստի, տվյալ հանձնարարականը կիրառելի չէ Հայաստանի համատեքստում:

Իրավաբանական կազմավորումների անօրինական օգտագործումը կանխելու միջոցները (չ. 34.1).

880. Տվյալ չափորոշիչը Հայաստանի համատեքստում կիրառելի չէ:

Իրավաբանական կազմավորումների իրական շահառուների մասին տեղեկությունների հասանելիությունը (չ. 34.2).

881. Տվյալ չափորոշիչը Հայաստանի համատեքստում կիրառելի չէ:

Լրացուցիչ տարրը. իրավաբանական կազմավորումների իրական շահառուների մասին տեղեկությունների հասանելիությունը ֆինանսական հաստատություններին (չ. 34.3).

882. Տվյալ չափորոշիչը Հայաստանի համատեքստում կիրառելի չէ:

5.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

883. Չկան:

5.2.3. Համապատասխանությունը թիվ 34 հանձնարարականին

	Գնահա-տականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.34	Չկա	• Հանձնարարականը Հայաստանի համատեքստում կիրառելի չէ:

5.3. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները (ՀՀ.VIII)

5.3.1. Նկարագրություն և վերլուծություն

884. Քաղաքացիական օրենսգրքում նկարագրվում է, թե ինչն է համարվում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն (ՇՆՉԿ): «Հասարակական միավորում» եզրույթը սահմանված է քաղաքացիական օրենսգրքի 122-րդ հոդվածում՝ որպես «քաղաքացիների կամավոր միավորում, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ

պահանջմունքները բավարարելու համար»: Քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածով նախատեսվում է, որ հիմնադրամը «քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ»: Քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում է, որ ՇՆՉԿ-ն պետք է լինի իրավաբանական անձ, և որ բոլոր իրավաբանական անձինք ենթակա են պետական գրանցման պետական գրանցում իրականացնող մարմնում, այն է՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում («Պետական ռեգիստր»)՝ Օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն:

885. ՇՆՉԿ-ները ենթակա են գրանցման Պետական ռեգիստրում «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: ՇՆՉԿ-ների գրանցման իրավասու մարմինն արդարադատության նախարարությունն է՝ ի դեմս պետական գրանցման հատուկ գործակալության՝ Պետական ռեգիստրի: Կախված գործունեության տեսակից, ՇՆՉԿ-ների նկատմամբ տարածվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի, «Հիմնադրամների մասին» օրենքի, «Բարեգործության մասին» օրենքի դրույթները, որոնք նախատեսում են, ի թիվս այլ դրույթների, գրանցման, կանոնադրության և հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ պահանջներ, չնայած որ նշված օրենքները չեն պարունակում ՓԼ կամ ԱՖ վերաբերյալ կոնկրետ դրույթներ:

886. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը նույնպես (26-րդ հոդված) պարունակում է որոշ դրույթներ ՇՆՉԿ-ների վերաբերյալ. մասնավորապես, նրանք պարտավոր են առնվազն 5 տարի պահպանել ղեկավարների նույնականացման տվյալները (նույն կարգով, ինչ նախատեսված է օրենքի 15-րդ հոդվածով և վերլուծված է սույն հաշվետվությունում 5-րդ չափորոշչին նվիրված և այլ բաժիններում), հիմնադրման փաստաթղթերը և ղեկավար մարմինների որոշումները, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը:

887. Լիազոր մարմնի առաջարկով, արդարադատության նախարարությունն իր համապատասխան գործակալության՝ պետական ռեգիստրի միջոցով, որը վերահսկում է ՇՆՉԿ-ների գործունեությունը, միջոցներ է ձեռնարկում՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված կարգով կանխելու ՇՆՉԿ-ների ներգրավումն ԱՖ մեջ կամ դրանց չարաշահումն ԱՖ նպատակով:

888. Իշխանությունները տեղեկացրեցին, որ գնահատման պահի դրությամբ Պետական ռեգիստրում գրանցված էին ավելի քան 5,500 ՇՆՉԿ-ներ, որոնցից 5,287-ը հասարակական կազմակերպություններ էին, 464-ը՝ բարեգործական կազմակերպություններ, իսկ 273-ը՝ հիմնադրամներ: ՇՆՉԿ-ների կազմում կան բարեգործական կազմակերպություններ և հիմնադրամներ, ընդ որում՝ հասարակական կազմակերպությունների մեծ մասը զբաղվում է դպրոցների և մանկապարտեզների համար ֆինանսավորման հայթայթմամբ: Կան նաև սպորտային ակումբների և միությունների գործունեությանն օժանդակող կազմակերպություններ, նախասիրությունների ակումբներ, երիտասարդական ակումբներ և այլն: Պետական ռեգիստրում գրանցված այլ՝ բարեգործական կազմակերպություն և հիմնադրամ չհանդիսացող կազմակերպություններից են քաղաքական կուսակցությունները, աշխատողների և գործատուների միությունները և առևտրի պալատը:

ՇՆՉԿ-ներին առնչվող ներպետական օրենքների և այլ իրավական ակտերի համարժեքության ուսումնասիրությունը (չ. VIII.1).

889. 2007 թվականին անցկացվել է ՇՆՉԿ-ներին առնչվող ներպետական օրենքների ուսումնասիրություն, որի արդյունքում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքում կատարվել և

2008 թվականից ուժի մեջ են մտել որոշ փոփոխություններ: Ուսումնասիրությունն իրականացվել է Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակում, որի կազմում ներկայացված է նաև արդարադատության նախարարությունը: Միջգերատեսչական հանձնաժողովի խնդիրներից է քաղաքականության մշակումը և ուղղորդումը, ռազմավարությունների և իրավական կարգավորման արդյունավետության գնահատումը, միտումների և մեթոդաբանությունների մասին տեղեկատվության փոխանակումը և ՓԼ և ԱՖ հետ կապված ուսումնական ծրագրերի իրականացումը: ԱՖ նկատմամբ ՇՆՉ հատվածի խոցելիության ապագա ուսումնասիրությունների ժամանակացույց չկա: Հնարավոր խոցելիության կամ ՇՆՉԿ-ների գործունեության, չափերի և առանձնահատկությունների վերաբերյալ նոր տեղեկությունների հիման վրա ուսումնասիրություն անցկացնելու նպատակահարմարությունը դիտարկող հայեցակարգ գոյություն չունի:

890. ՇՆՉԿ-ների առանձնահատկությունները և տեսակը պարզելու նպատակով գրանցման ֆորմալ գործընթացի շրջանակում Պետական ռեգիստրը ստանում է տեղեկություններ ՇՆՉԿ-ների գործունեության, չափերի և այլ կարևոր առանձնահատկությունների վերաբերյալ: Այնուհանդերձ, որևէ կերպ չի հիմնավորվել, որ գրանցման փուլում ստացվող այդ տեղեկություններն օգտագործվում են ՇՆՉԿ-ների վերահսկողության նպատակով, մասնավորապես՝ ԱՖ առնչությամբ: Յուրաքանչյուր ՇՆՉԿ պարտավոր է Պետական ռեգիստրում գրանցման ներկայացնել տարաբնույթ փաստաթղթեր, ներառյալ հիմնադիր փաստաթղթի, օրինակ՝ կանոնադրության կրկնօրինակը, քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, որը պետք է պարունակի, ի թիվս այլ տեղեկությունների, նպատակները, բնույթը, առարկան և շրջանակը, ինչպես նաև քվեարկության իրավունքները: Բացի այդ, կանոնադրության մեջ փոփոխությունները նույնպես ենթակա են գրանցման Պետական ռեգիստրում: Լրացուցիչ տեղեկություններ ստացվում են ՇՆՉԿ-ների հրապարակած տարեկան հաշվետվություններից, որոնք պետք է ներառեն եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, իսկ հիմնադրամների դեպքում՝ նաև հաշվետվություն գործունեության, այդ թվում՝ ֆինանսավորման աղբյուրների մասին: Բարեգործական կազմակերպությունների պարագայում հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություններ բարեգործական ծրագրերի իրականացման ընթացքի մասին:

891. Տեղեկություններ ստացվում են նաև Միջգերատեսչական հանձնաժողովի միջոցով՝ միտումների և մեթոդաբանությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ընդ որում՝ արդարադատության նախարարությունը ներկայացված է Միջգերատեսչական հանձնաժողովի կազմում:

ՇՆՉ հատվածն ահաբեկչության ֆինանսավորման կապակցությամբ հնարավոր չարաշահումներից պաշտպանելու նպատակով այդ հատվածի հետ տարվող աշխատանքները (չ. VIII.2).

892. ՇՆՉ հատվածի հետ տարվող՝ իրազեկության բարձրացման աշխատանքների համապարփակ ծրագիր չկա: Ավելին, չկան ՇՆՉԿ-ների չարաշահման հնարավոր շրջանակի և մեթոդների, ԱՖ նոր միտումների և պաշտպանական նոր մեխանիզմների, լավագույն փորձի կամ խորհրդակցական փաստաթղթերի կամ նմանօրինակ այլ ռեսուրսների վերաբերյալ քննարկումներ: Բացի այդ, ԱՖ նկատմամբ ՇՆՉԿ-ների խոցելիության և առկա ռիսկերի վերաբերյալ հաստատված կոնկրետ ուղեցույցներ չկան:

Այն ՇՆՉԿ-ների վերահսկողությունը կամ մոնիտորինգը, որոնց բաժին է ընկնում հատվածի ռեսուրսների կամ հատվածի միջազգային գործունեության զգալի մասնաբաժինը (չ. VIII.3).

893. Մոնիտորինգի և վերահսկողության հնարավորություն ընձեռող նորմեր նախատեսվում են «Բարեգործության մասին» օրենքի 18-րդ հոդվածով, որի համաձայն օրենքների պահանջներին բարեգործական կազմակերպության գործունեության

համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է լիազորված մարմինը: «Հիմնադրամների մասին» օրենքի 38-րդ հոդվածով նախատեսվում է, որ հիմնադրամի կողմից այդ օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, իսկ «օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան»: Բացի այդ, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածով նախատեսվում է, որ լիազոր մարմնի առաջարկով, արդարադատության նախարարությունը՝ որպես ՇՆՉԿ-ների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին, միջոցներ է ձեռնարկում՝ կանխելու ՇՆՉԿ-ների ներգրավումն ԱՖ մեջ կամ դրանց չարաշահումն ԱՖ նպատակով:

894. Պետական ռեգիստրը տեղերում մոնիտորինգ չի իրականացնում՝ որպես արդարադատության նախարարությունում ՇՆՉԿ-ների գրանցման համար պատասխանատու գործակալություն: Նախարարի հրամանով, նման ստուգումներ անցկացվում են ստացված բողոքների հիման վրա: Պետական ռեգիստրն իրականացնում է գրանցման համար դիմող ՇՆՉԿ-ների կանոնադրության և նպատակների փաստաթղթային վերահսկողություն՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխանում են ՇՆՉԿ-ների վերաբերյալ Հայաստանի բոլոր օրենքների պահանջներին: Այնուհանդերձ, իշխանությունները նշեցին, որ այդ համատեքստում հատուկ ուշադրություն չի դարձվում ԱՖ խնդիրներին: Օտարերկրյա ՇՆՉԿ-ների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ՀՀ-ում գործունեություն իրականացնելու համար պարտավոր են ներկայացնել մայր ՇՆՉԿ-ի կանոնադրությունը և գրանցման փաստաթղթերը, ինչպես նաև իրենց կանոնադրությունը՝ հաստատված մայր ՇՆՉԿ-ի կողմից: Մասնաճյուղի կանոնադրությունը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությանը: Այն ուսումնասիրվում է Պետական ռեգիստրի կողմից, չնայած որ կոնկրետ անդրադարձ չկա ԱՖ-ին՝ ինչպես և ներպետական ՇՆՉԿ-ների պարագայում:

895. Ինչպես ներկայացվեց, ՇՆՉԿ-ները պարտավոր են զանգվածային լրատվամիջոցներում հրապարակել տարեկան հաշվետվություն, ներառյալ եկամուտների և ծախսերի հաշվետվությունը: Հիմնադրամների տարեկան հաշվետվությունը ենթակա է հրապարակման ֆինանսական տարվա ավարտից հետո ամենաուշը վեց ամսվա ընթացքում: Գործունեության մասին հաշվետվությունը, ներառյալ ֆինանսավորման աղբյուրների մասին տեղեկությունները և հրապարակված հաշվետվության պատճենը, ներկայացվում են Պետական ռեգիստրին «Հիմնադրամների մասին» օրենքի 39-րդ հոդվածի համաձայն: Բարեգործական կազմակերպությունները պարտավոր են իրենց տարեկան հաշվետվությունը հրապարակել ֆինանսական տարվա ավարտից հետո ամենաուշը երեք ամսվա ընթացքում, ինչպես նաև հրապարակել տեղեկություններ բարեգործական ծրագրերի իրականացման ընթացքի մասին՝ «Բարեգործության մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն:

896. «Հիմնադրամների մասին» օրենքի 39-րդ հոդվածի համաձայն, հիմնադրամները պարտավոր են ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ստանալ աուդիտորի եզրակացություն, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը (գնահատման պահի դրությամբ՝ 26,000 ԱՄՆ դոլար): Աուդիտի պահանջը տարածվում է տարեկան ֆինանսական հաշվետվության եզրակացությունների նկատմամբ, սակայն չի պահանջվում, որպեսզի աուդիտը կոնկրետ անդրադառնա ԱՖ խնդիրներին, ընդ որում՝ այլ ՇՆՉԿ-ների նկատմամբ աուդիտի պահանջները չեն տարածվում: Պետական ռեգիստրը կարող է ՇՆՉԿ-ների վերաբերյալ տվյալներ ստանալ հրապարակվող տարեկան հաշվետվություններից, որոնց բաժին է ընկնում հատվածի կողմից տնօրինվող ֆինանսական ռեսուրսների մի զգալի մասնաբաժինը: Այնուհանդերձ, իշխանությունները

գնահատողներին տեղեկացրեցին, որ ԱՖ նկատմամբ խոցելիության կամ հարակից գործունեության տեսակետից տվյալները չեն վերլուծվում:

897. Չկան ընթացակարգեր, որոնցով ՇՆՉԿ-ների նկատմամբ վերահսկողությունը կամ մոնիտորինգը կտարբերակվեր՝ ըստ ֆինանսական ռեսուրսների կամ ըստ հատվածի միջազգային գործունեության մեջ ունեցած զգալի մասնաբաժնի: Իշխանությունները գնահատողներին տեղեկացրեցին, որ աշխատակիցների թվաքանակի և ՇՆՉԿ-ների թվի հարաբերակցությունն այնպիսին է, որ ապագայում չի նախատեսվում անցկացնել տեղերում մոնիտորինգ կամ էապես փոխել փաստաթղթային ուսումնասիրության մոտեցումը:

ՇՆՉԿ-ների կողմից վարվող տեղեկությունները և դրանց հասանելիությունը հանրությանը (չ. VIII.3.1).

898. Ինչպես քննարկվեց, ՇՆՉԿ-ներից պահանջվում է տարեկան հաշվետվություն հրապարակել, որը կներառի տեղեկություններ ֆինանսական գործունեության, ֆինանսավորման աղբյուրների և իրականացված ծրագրերի մասին: Ավելին, յուրաքանչյուր ՇՆՉԿ պարտավոր է վարել և Պետական ռեգիստրում գրանցել տարաբնույթ փաստաթղթեր, ներառյալ հիմնադիր փաստաթղթի, օրինակ՝ կանոնադրության կրկնօրինակը, քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, որը պետք է պարունակի, ի թիվս այլ տեղեկությունների, նպատակների, քվեարկության իրավունքների մասին և այլ տեղեկություններ: ՇՆՉԿ-ների գործունեությանն անմիջականորեն վերաբերող օրենքները, ինչպիսիք են, օրինակ, «Բարեգործության մասին» օրենքը և «Հիմնադրամների մասին» օրենքը, պարունակում են առավել մանրակրկիտ դրույթներ կանոնադրության պարունակությանը ներկայացվող պահանջների, ղեկավար մարմնի անդամների («Բարեգործության մասին» օրենքի 18.3 հոդված), «Հիմնադրամների մասին» օրենքով (21-րդ հոդված) նախատեսված՝ հոգաբարձուների խորհրդի կամ հիմնադրամի կառավարման այլ մարմնի անդամների և հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարող անձի՝ կառավարչի (27-րդ հոդված) կամ գործադիր տնօրենի (21-րդ հոդված) պարտավորությունների և պատասխանատվության մասին: Հրապարակվող տեղեկությունների ճշգրտությունն Արդարադատության նախարարության կողմից չի ուսումնասիրվում:

899. Ինչպես նշվեց, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածով նախատեսվում է, որ ՇՆՉԿ-ները պարտավոր են առնվազն 5 տարի պահպանել ղեկավարների նույնականացման տվյալները, հիմնադրման փաստաթղթերը (ինչպիսին է, օրինակ, կանոնադրությունը) և ղեկավար մարմինների որոշումները, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը:

900. Որոշ տեղեկություններ հասանելի են հանրությանը Պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկությունների միջոցով, որը վարում է Պետական ռեգիստրը «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն: Պետական միասնական գրանցամատյանը պարունակում է տվյալներ Հայաստանում գրանցված բոլոր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասին: Այն արդիականացվում է ոչ ուշ, քան 10 օրը մեկ անգամ: «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 20-րդ հոդվածի (3-րդ գլուխ) համաձայն, Պետական միասնական գրանցամատյանը ներառում է, ի թիվս այլ տեղեկությունների, տեղեկություններ հիմնադրման եղանակի, հիմնադրման տարվա, իրավաբանական անձի գտնվելու վայրի վերաբերյալ, ինչպես նաև «հիմնադիրների (մասնակիցների, անդամների, գործընկերների, բաժնետերերի) կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ»: 20-րդ հոդվածում նաև նշվում է, որ Պետական միասնական գրանցամատյանը ներառում է իրավաբանական անձի (ինչպիսիք հանդիսանում են ՇՆՉԿ-ները) պետական գրանցման վկայականի տվյալները: Այնուհանդերձ, «Իրավաբանական

անձանց պետական գրանցման մասին» օրենքի 18-րդ հոդվածում, որում նկարագրվում է պետական վկայականի բովանդակությունը, չեն նշվում իրական հսկողություն իրականացնողները, տնօրենները և այլն: Ի լրումն Պետական միասնական գրանցամատյանի միջոցով հասանելի տեղեկություններին, հիմնադրամները «Հիմնադրամների մասին» օրենքի 39-րդ հոդվածի համաձայն պարտավոր են տարին մեկ անգամ հրապարակել հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի «միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում»: Բացի այդ, պետական գրանցման վկայականը, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, պարունակում է տեղեկություններ ՇՆՉԿ-ի ղեկավարության մասին:

Վերահսկողության կանոնները խախտող ՇՆՉԿ-ներին պատժելու համար անհրաժեշտ մեխանիզմների առկայությունը (չ. VIII.3.2).

901. Ինչպես քննարկվել է սույն հաշվետվության 2-րդ բաժնում, Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, սակայն առկա են վարչական պատասխանատվության միջոցներ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները վերաբերում են ՓԼ կամ ԱՖ մեջ ներգրավվածության համար իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվությանը: Ավելին, 1-ին և 3-րդ մասերն ուղղակիորեն կիրառելի են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով հաշվետվություն տրամադրող անձ չհանդիսացող իրավաբանական անձի ներգրավվածության դեպքին: Պատասխանատվության միջոցները ներառում են հանցավոր ճանապարհով ստացված գույքին համարժեք տուգանքի նշանակումը՝ ՔՕ-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով, սակայն փողերի լվացման մեջ ներգրավված լինելու դեպքում այն չի կարող պակաս լինել մոտավորապես 5,200 ԱՄՆ դոլարից (գնահատման պահի դրությամբ): Ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավված լինելու համար նախատեսված պատասխանատվության միջոցները ներառում են ԱՖ-ին ուղղված գույքին համարժեք տուգանքի նշանակումը՝ ՔՕ-ի 55-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով, սակայն մոտավորապես 26,000 ԱՄՆ դոլարից ոչ պակաս (գնահատման պահի դրությամբ): Պատասխանատվության վերոհիշյալ երկու միջոցներին զուգահեռ հայց է ներկայացվում դատարան՝ օրենքով սահմանված կարգով այդ իրավաբանական անձին լուծարելու պահանջով: Պատասխանատվության միջոցները կիրառվում են արդարադատության նախարարության կողմից, որը համապատասխան վերահսկող մարմինն է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

902. Բացի այդ, Պետական ռեգիստրն իրավասու է վարչական պատասխանատվության միջոցներ կիրառել՝ ՇՆՉԿ-ի կոնկրետ տեսակին վերաբերող օրենքների խախտումների վերաբերյալ գրավոր նախազգուշացում ուղարկել, ինչպես նաև գրավոր նախազգուշացում ուղարկելուց հետո խախտումը չվերացնելու դեպքում դիմել դատարան խախտումը վերացնելու կամ ՇՆՉԿ-ն լուծարելու պահանջով:[48] Դա չի բացառում ՇՆՉԿ-ների կամ նրանց

[48] «Հիմնադրամների մասին» օրենքի 34-րդ հոդվածով համապատասխան մարմնին (այն է՝ արդարադատության նախարարությանը) թույլատրվում է դիմել դատարան այնպիսի խախտումների համար հիմնադրամը լուծարելու հարցով, ինչպիսիք են, ի թիվս այլոց, «օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումները» հիմնադրամի կողմից, կամ «իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն» պարբերաբար իրականացնելը, կամ հիմնադրամը ստեղծելիս հիմնադրի թույլ տված՝ «օրենքի էական խախտումները կամ կեղծիքները»: Ավելին, «Հիմնադրամների մասին» օրենքի 38-րդ հոդվածով Պետական ռեգիստրին թույլատրվում է «Հիմնադրամների մասին» օրենքի պահանջների խախտումներ (օրինակ, եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունը չի

(continued)

անունից գործող անձանց նկատմամբ լրացուցիչ քաղաքացիական կամ վարչական վարույթների հնարավորությունը, եթե Պետական ռեգիստրը ցանկություն ունենա հետամուտ լինել խնդիրներին դատական կարգով:

903. Անհամապատասխանության կապակցությամբ իշխանությունների ձեռնարկած միջոցառումներից ոչ մեկն ԱՖ-ին չի առնչվել. դրանք կապված են եղել ֆինանսական հաշվետվությունները չհրապարակելու կամ ուշացմամբ հրապարակելու, ինչպես նաև այլ տեղեկություններ հրապարակելու, հաշվետվություններ ներկայացնելու կամ կանոնադրության մեջ նախատեսվող փոփոխությունը գրանցման չներկայացնելու դեպքերի հետ:

ՇՆՉԿ-ների լիցենզավորումը կամ գրանցումը, և այդ մասին տեղեկությունների հասանելիությունը (չ. VIII.3.3).

904. Ինչպես քննարկվեց վերը՝ VIII 3.1-ին նվիրված մասում, ՇՆՉԿ-ները պարտավոր են գրանցվել Պետական ռեգիստրում, որն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի համաձայն գրանցումն իրականացնող պետական գործակալությունն է: Ի լրումն Պետական ռեգիստրում գրանցման, ՇՆՉԿ-ները պետք է հաշվառվվեն Պետական եկամուտների կոմիտեում (հարկային մարմին), որին պահանջվում է ներկայացնել ՇՆՉԿ-ի վերաբերյալ նույն տեղեկությունները, ինչ Պետական ռեգիստրին, այն է՝ կանոնադրությունը, ղեկավար մարմինների անդամների տվյալները, նպատակը և մտադրությունը, ինչպես նաև հարկերից ազատվող կոնկրետ ծրագրերի մասին տեղեկություններ:

905. Վերոհիշյալ տեղեկությունները ՖԴԿ-ն կարող է ստանալ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ Պետական ռեգիստրին հարցում ներկայացնելու միջոցով:

Տեղեկատվության պահպանումը ՇՆՉԿ-ների կողմից, հասանելիությունը համապատասխան մարմիններին (չ. VIII. 3.4).

906. Տեղեկատվության պահպանումը կարգավորվում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածով, որի համաձայն ՇՆՉԿ-ները պարտավոր են առնվազն 5 տարի պահպանել ղեկավարների նույնականացման տվյալները, հիմնադրման փաստաթղթերը և ղեկավար մարմինների որոշումները, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը:

907. Հարկային խնդիրների առնչությամբ լիազոր մարմնի և համապատասխան մարմինների միջև իրականացվում է տեղեկատվության փոխանակում:

Տեղեկատվությունը հավաքելու և ուսումնասիրելու արդյունավետության ապահովման միջոցները (չ. VIII.4).

հրապարակվում ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում) հայտնաբերելու դեպքում հիմնադրամ ուղարկել գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով վերացնել խախտումները, ընդ որում՝ Պետական ռեգիստրը կարող է դիմել դատարան՝ խախտումը չվերացնելու հիմքով հիմնադրամը լուծարելու պահանջով: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետում նշվում է, որ «անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունն ու նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն»: «Բարեգործության մասին» օրենքի 19-րդ հոդվածով լիազորված մարմնին թույլատրվում է բարեգործական կազմակերպության կողմից «Բարեգործության մասին» օրենքի նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու դեպքում նրան գրավոր զգուշացնել, ինչպես նաև «չեղյալ ճանաչել տվյալ կազմակերպության բարեգործական ծրագրի՝ որպես բարեգործական որակումը և գրանցումը» բարեգործական ծրագրի կատարման ընթացքում օրենքի պահանջների էական խախտումների դեպքում:

908. Ինչպես քննարկվել է սույն հաշվետվության 2-րդ բաժնում, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսված չէ, և ՇՆՉԿ-ի՝ որպես իրավաբանական անձի նկատմամբ քննություն իրականացնելու դեպքում անհնար է խուսափել այլ իրավաբանական անձանց պարագայում հանդիպող խոչընդոտներից: Այնուհանդերձ, եթե քննությունը վերաբերում է ՇՆՉԿ-ի հետ որևէ առնչություն ունեցող ֆիզիկական անձի, ապա կիրառելի են ՔԴՕ-ով նախատեսված քննչական իրավասությունները:

909. Հաշվի առնելով վերը նշված խոչընդոտները, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվել է, որ լիազոր մարմինը (այսինքն՝ ՖԴԿ-ն), իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ մարմիններ, կարող են ՇՆՉԿ-ներից կամ դրանց գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններից (ՇՆՉԿ-ների պարագայում դա ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրն է) պահանջել ՓԼ կամ ԱՖ հետ կապված տեղեկություններ:

ՇՆՉԿ-ներին վերաբերող ներպետական համագործակցությունը, համակարգումը և տեղեկատվության փոխանակումը (չ. VIII.4.1).

910. Առկա են համագործակցության և տեղեկատվության փոխանակման մի շարք մեխանիզմներ, որոնցից է Միջգերատեսչական հանձնաժողովը: Վերջինս փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում ստեղծված միջկառավարական հանձնաժողով է, որի կազմում ներկայացված է նաև արդարադատության նախարարությունը, և որի լիազորությունների շրջանակը ներառում է պետական և ոչ պետական մարմինների հետ համապատասխան աշխատանքներ տանելը, միտումների և խոցելի կետերի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելը և քաղաքականություն սահմանելը:

911. Բացի այդ, ՖԴԿ-ի և Պետական եկամուտների կոմիտեի միջև կնքվել է Փոխըմբռնման երկկողմ հուշագիր: Պահանջների կիրառությունը ՇՆՉԿ-ների նկատմամբ կապակցված է հարկային մարմիններում հաշվառվելու՝ ՇՆՉԿ-ների պարտավորության հետ:

912. Ավելին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածը լիազոր մարմնին, այն է՝ ՖԴԿ-ին, թույլատրում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ իրականացման նպատակով համագործակցել այլ մարմինների, ներառյալ՝ վերահսկող ու քրեական հետապնդման մարմինների հետ՝ կնքելով երկկողմ համաձայնագրեր կամ առանց դրանց:

ՇՆՉԿ-ների կառավարման և ղեկավարման մասին տեղեկատվության ստացումն ուսումնասիրությունների ընթացքում (չ. VIII.4.2).

913. Սույն հաշվետվության 2-րդ բաժնում, ինչպես նաև 4-րդ չափորոշչին նվիրված վերոհիշյալ հատվածում զետեղված վերլուծությունը՝ հետաքննության միջոցների մասով, ներառյալ իրավաբանական անձանց նկատմամբ իրականացվող հետաքննություններում առկա սահմանափակումները և տեղեկատվության ստացման խնդիրները, հավասարապես կիրառելի է ՇՆՉԿ-ների նկատմամբ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ ՖԴԿ-ն իրավասու է ՇՆՉԿ-ներից կամ դրանց գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններից պահանջել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված տեղեկություններ: Ավելին, «Բարեգործության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ բարեգործական կազմակերպության կառուցվածքի, դրամական և այլ մուտքերի, գույքի, ծախսերի, աշխատողների թվաքանակի, նրանց աշխատանքի վարձատրության և կամավորների ներգրավման մասին տեղեկությունները չեն կարող համարվել առևտրային գաղտնիք:

Տեղեկատվության փոխանակումը, կանխարգելիչ և հետաքննական միջոցառումները և իրավասություններն այն դեպքերում, երբ կասկած կա, որ ՇՆՉԿ-ն շահագործվում է ահաբեկչության ֆինանսավորման նպատակով (չ. VIII.4.3).

914. Ի լրումն VIII 4.1-ում նշված մեխանիզմների, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ ՖԴԿ-ն իրավասու է ՇՆՉԿ-ներից կամ դրանց գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններից պահանջել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված տեղեկություններ: Ինչպես վերլուծվել է սույն հաշվետվության 2-րդ բաժնում, հետաքննական միջոցառումները և իրավասությունները վերապահված են իրավապահ մարմիններին:

ՇՆՉԿ-ների վերաբերյալ միջազգային հարցումներին տրվող պատասխանները. հատուկ լիազորված անձինք և ընթացակարգերը (չ. VIII.5).

915. Օգնության ֆորմալ հարցումները ներկայացվում են ՖԴԿ-ի միջոցով՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, ինչպես քննարկված է սույն հաշվետվության 2-րդ բաժնում:

Արդյունավետությունը.

916. Իշխանություններն ընդունեցին, որ ՇՆՉ հատվածի իրազեկության բարձրացման աշխատանքներ չեն տարվում, չկան ՇՆՉԿ-ների անընդհատ վերահսկողությամբ զբաղվող հատուկ աշխատակիցներ, և որ վերահսկողություն կամ մոնիտորինգ իրականացվում է միայն այն ժամանակ, երբ ստացվում է հիմնադրված կազմակերպության կամ, օրինակ, կանոնադրության փոփոխությունների գրանցման մասին դիմում: Չկան ընթացակարգեր, որոնցով ՇՆՉԿ-ների նկատմամբ վերահսկողությունը կամ մոնիտորինգը կտարբերակվեր՝ ըստ ֆինանսական ռեսուրսների կամ ըստ հատվածի միջազգային գործունեության մեջ ունեցած զգալի մասնաբաժնի: Աշխատակիցների թվաքանակի և ՇՆՉԿ-ների թվի հարաբերակցությունն արգելակում է հատվածի ռիսկերի արդյունավետ վերլուծության անցկացումը:

917. Այնուամենայնիվ, ՇՆՉԿ-ների նկատմամբ կիրառելի՝ ՖԱԹՖ-ի նպատակներին և ընդհանուր սկզբունքներին համահունչ, ՇՆՉԿ-ներից պահանջվում է պահպանել իրենց գործունեության հայտարարված նպատակների և առարկայի մասին տեղեկատվություն, ինչպես նաև կառավարման մարմնի անդամների տվյալները, որոնք բոլորը հրապարակային են: Թե ներպետական, թե օտարերկրյա ՇՆՉԿ-ների համար ներդրված է գրանցման համակարգ, որի շրջանակներում պահանջվում է հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվություններ, և ֆինանսական միջոցները ծախսել ՇՆՉԿ-ների գործունեության հայտարարված ուղղություններին համապատասխան: Ամրագրված են տեղեկատվություն պահպանելու պարտավորությունները, այդ թվում՝ ֆինանսական գործունեությունը փաստաթղթավորելու պահանջը, որը, սակայն, ուղղակիորեն չի վերաբերում ֆինանսական միջոցները կանոնադրության մեջ նշված նպատակներին համապատասխան ծախսելու փաստի ստուգմանը:

5.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

Իշխանությունները պետք է դիտարկեն հետևյալի նպատակահարմարությունը.

- Ապահովել պարբերական գնահատումների անցկացումը՝ ուսումնասիրելով ահաբեկչական գործունեության նկատմամբ ոլորտի հնարավոր խոցելի կետերի մասին ի հայտ եկող նոր տեղեկությունները,

- Ներդնել ԱՖ նպատակով ՇՆՉԿ-ների չարաշահման ռիսկերի և դրանցից պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ ՇՆՉԿ-ների իրազեկության բարձրացման ծրագրեր,
- Պատշաճ ռեսուրսներ և տեխնիկական կարողություններ ուղղորդել դեպի ՇՆՉ հատված՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ԱՖ ռիսկերին:

5.3.3. Համապատասխանությունը VIII հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
ՀՀ.VIII	Մասամբ համապատասխանում է	• Միջգերատեսչական հանձնաժողովի կամ այլ մեխանիզմների միջոցով իրականացվող պարբերական գնահատումների հաճախականություն նախատեսված կամ սահմանված չէ: Ավելին, նախատեսված չէ, թե միտումների կամ մեթոդաբանությունների վերաբերյալ լրացուցիչ կամ նոր ինչպիսի տեղեկությունների ստացման դեպքում է պահանջվում նման գնահատում անցկացնել: • Ներկայումս իշխանությունների կողմից չի իրականացվում ՇՆՉ հատվածի իրազեկության բարձրացման ծրագիր: • ՇՆՉ հատվածում ԱՖ ռիսկերը հաղթահարելու համար չեն բավականացնում ռեսուրսները և տեխնիկական հմտությունները: Ներկայումս առանձնակի ուշադրություն չի դարձվում ռիսկերին:

6. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Ներպետական համագործակցությունը և համակարգումը (Հ.31)

918. Իրավական դաշտը. 1) Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման մասին կարգադրություն, 2) Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կանոնակարգը, 3) Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջև, 4) Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջև, 5) Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության միջև, 6) Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջև:

6.1.1. Նկարագրություն և վերլուծություն

919. Առկա են համագործակցության և համակարգման մեխանիզմներ, այդ թվում՝ միջգերատեսչական հանձնաժողովը, որը ստեղծվել է ֆինանսական հանցավորության, այդ թվում, սակայն՝ ոչ միայն, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխման նպատակով: Բացի այդ, փոխըմբռնման մի շարք ներպետական հուշագրեր են կնքվել ՖԴԿ-ի և տարբեր պետական մարմինների, մասնավորապես՝ իրավապահ մարմինների, ազգային անվտանգության ծառայության, գլխավոր դատախազության և պետական եկամուտների կոմիտեի միջև:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներպետական համագործակցության և համակարգման մեխանիզմները (չ. 31.1).

920. Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը (հետայսու՝ «Միջգերատեսչական հանձնաժողով») ստեղծվել է Հանրապետության Նախագահի 2002 թ. մարտի ՆԿ-1075 կարգադրությամբ: Հանձնաժողովը կազմված է Կենտրոնական բանկի, գլխավոր դատախազության, ֆինանսների նախարարության, արտաքին գործերի նախարարության, ազգային անվտանգության ծառայության, պետական եկամուտների կոմիտեի (և հարկային, և մաքսային ծառայությունների), Հայաստանում ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի, Հայաստանի բանկերի միության, վճռաբեկ դատարանի քրեական պալատի, ֆինանսական դիտարկումների կենտրոնի բարձրաստիճան ներկայացուցիչներից և Հանրապետության Նախագահի օգնականից: Կարևոր դեր կատարող որոշ մարմիններ, ինչպիսիք են, օրինակ, ԻԿԿ-ները, ներկայացված չեն Միջգերատեսչական հանձնաժողովում: Վերջինիս լիազորությունների շրջանակը ներառում է, ի թիվս այլ լիազորությունների, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացվող քաղաքականության և ծրագրերի արդյունավետության վերահսկողությունը և գնահատումը, միտումների և մեթոդաբանությունների մասին տեղեկատվության փոխանակումը և ուսումնական ծրագրերի իրականացումը:

921. Միջգերատեսչական հանձնաժողովն իր գործունեության կանոնակարգի 4(11) կետի համաձայն լիազորված է նիստեր գումարել առնվազն տարին երկու անգամ և արդյունքների մասին զեկուցել ՀՀ Նախագահին: Պրակտիկայում Միջգերատեսչական հանձնաժողովի նիստեր գումարվում են տարեկան միջինը 2-3 անգամ: Հանձնաժողովին օժանդակում են աշխատանքային խմբերը:

922. Միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ներկայացված ցանկացած մարմին կամ գերատեսչություն իրավասու է հաջորդ նիստում քննարկվման համար հարցեր առաջարկել: Նիստի օրակարգը և նյութերը նախապատրաստում է Հանձնաժողովի քարտուղարությունը, որի գործառույթները ստանձնել է ՖԴԿ-ն: ՖԴԿ-ն նաև Հանձնաժողովի որոշումների իրագործման քարտուղարության և վերահսկող մեխանիզմի դեր է կատարում՝ պատրաստելով և անդամ կառույցներին ուղարկելով նիստի օրակարգը, նամակներ՝ նրանց տեղեկացնելով համաձայնեցված որոշումների հիման վրա նրանց առաջարկվող գործողությունների մասին, իսկ համապատասխան դեպքերում քարտուղարությունը նաև խնդրում է կառույցներին հետադարձ արձագանք ուղարկել իրականացված գործողությունների վերաբերյալ: ՖԴԿ-ի ղեկավարը, կատարելով Հանձնաժողովի քարտուղարության գործառույթը, Հանձնաժողովին տեղեկացնում է ընթացիկ կամ չլուծված խնդիրների մասին:

923. Միջգերատեսչական հանձնաժողովը վերջին շրջանում իրականացրել է տարաբնույթ աշխատանքներ, որոնց մի մասն արտացոլվել է քաղաքականության վերաբերյալ որոշումներում, օրինակ.

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ուսուցման քաղաքականության մշակում (2006 թ.),
- ՖԴԿ-ի և ազգային շահագրգիռ կողմերի միջև ՓՀ-ների կնքում (2006-2008 թթ.),
- ՄԱՆԻՎԱԼ-ի պահանջների բավարարման բարելավման ընթացակարգ (2006 թ.),
- Եվրասիական խմբում Հայաստանի դիտորդի կարգավիճակի և «էգմոնտ» խմբում անդամակցության ապահովում (2006-2007 թթ.),
- Հայաստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական դաշտի բարեփոխում (2007-2008 թթ.),
- Նախատեսված հաստատություններում իրականացված տեխնիկական աջակցության ծրագրերի առնչությամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետության վերանայում (2007-2008 թթ.),
- ՖԴԿ-ի կողմից իրավապահ մարմիններին ուղարկված հաղորդումների հիման վրա բացված գործերի ընթացիկ վիճակի և արդյունավետության պարզում (2008 թ.),
- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում ՖԴԿ-ի և այլ կառույցների գործունեության տարեկան արդյունքների ուսումնասիրություն (2007-2008 թթ.),
- ՖԱԹՖ-ի տարբեր պահանջների (օրինակ, ՀՀ VIII, IX, Հ.30) առնչությամբ Հայաստանի համապատասխանության վիճակի և հետագա գործողությունների քննարկում (2007-2008 թթ.)
- ՓԼ միտումների և տիպաբանությունների վերանայում, համակարգված գործողություններ դրանք խափանելու ուղղությամբ (2007-2008 թթ.)

- Հայաստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատման 3-րդ շրջափուլի նախապատրաստական աշխատանքների վերանայում (2008-2009 թթ.):

924. Ինչպես նշվեց, ՖԴԿ-ն փոխըմբռնման չորս երկկողմ հուշագրեր է կնքել, մասնավորապես՝ ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, պետական եկամուտների կոմիտեի և գլխավոր դատախազության հետ: Դրանք ստորագրվել են 2006-ին և երկարաձգվել 2008-ին: ՓՀ-ները նվիրված են կոնկրետ ՓԼ և ԱՖ դեմ պայքարին. բոլոր ՓՀ-ներով նախատեսված են համագործակցության միևնույն սկզբունքները ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերաբերյալ համատեղ քննարկումների, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնների, ուղեցույցների և մեթոդաբանական այլ նյութերի մշակման գործընթացում փոխադարձ օգնության, գործերի վերաբերյալ վիճակագրության վարման և տիպաբանությունների մշակման համատեղ գործունեության, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում ուսուցման, վերապատրաստման և խորհրդատվության համատեղ ծրագրերի իրագործման վերաբերյալ:

925. ՓՀ-ների շրջանակում ներկայացված հարցումների և հարցումների հիման վրա փոխանակված տեղեկատվության վերաբերյալ թվային ցուցանիշներ են բերված ստորև.

Մարմինը	*2007*		*2008*		*2009 (առ 01.04.2009)*	
	ՖԴԿ-ի ուղարկած	ՖԴԿ-ի ստացած	ՖԴԿ-ի ուղարկած	ՖԴԿ-ի ստացած	ՖԴԿ-ի ուղարկած	ՖԴԿ-ի ստացած
Գլխավոր դատախազություն	5	5	4	5	0	2
Ազգային անվտանգության ծառայություն	1	3	9	12	2	6
Ոստիկանություն	2	3	6	2	1	1
Պետական եկամուտների կոմիտե	4	2	4	2	1	1

926. Համագործակցության և համակարգման գործող մեխանիզմները կարծես համարժեք են, սակայն հարկ է գնահատել իրագործման արդյունավետությունը և պարզել, թե ինչ առումներով է անհրաժեշտ բարելավել իրականացվող աշխատանքները: Կարելի է կատարելագործել կարգավորվող հաստատությունների և ԻԿԿ-ների հետ իրականացվող խորհրդափոխանակությունը և իրազեկման բարձրացման աշխատանքները: Միջգերատեսչական հանձնաժողովի համար արդյունավետ կլիներ Հայաստանում ՓԼ/ԱՖ ռիսկերի ընթացիկ վերլուծության անցկացումը (պարզելու խոցելի կետերը, ռիսկային հատվածները, Հայաստանում կատարվող եկամտաբեր նախորդող հանցագործությունների տեսակները), որի հիման վրա պետք է կատարելագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարությունը և արդեն իսկ տարվող աշխատանքները:

Լրացուցիչ տարրը. իրավասու մարմինների և կարգավորվող հաստատությունների միջև խորհրդակցությունների կազմակերպման և անցկացման մեխանիզմները (չ. 31.2).

927. Չնայած որ իրավասու մարմինների և Հայաստանի բանկերի միության միջև գոյություն ունի Միջգերատեսչական հանձնաժողովի մեխանիզմներով միջնորդավորվող երկխոսություն, ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների հետ խորհրդակցության այլ ֆորմալ համակարգեր չկան:

Վիճակագրությունը (Հ.32-ի կիրառությունը).

6.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

Իշխանությունները պետք է դիտարկեն հետևյալի նպատակահարմարությունը.

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարության հստակեցման նպատակով իրականացնել ՓԼ/ԱՖ ռիսկերի ընթացիկ վերլուծություն,
- Կարգավորվող հաստատությունների հետ խորհրդակցությունների և իրազեկության բարձրացման լրացուցիչ կամ այլընտրանքային մեխանիզմներ՝ կամ ներկայումս գոյություն ունեցող, կամ այլ միջոցներով,
- Կայացված որոշումների արդյունավետության և դրանցից բխող քաղաքականության լիարժեք իրագործման վերահսկում:

6.1.3. Համապատասխանությունը թիվ 31 հանձնարարականին

	Գնահա-տականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.31	Հիմնա-կանում համա-պատաս-խանում է	• ՓԼ կամ ԱՖ ռիսկերի առնչությամբ տարբեր ոլորտների ռիսկերի գնահատումը բավարար չէ: • Կարգավորվող հաստատությունների հետ խորհրդակցությունների մեխանիզմները սահմանափակվում են Հայաստանի բանկերի միությամբ, որը ներկայացված է Միջգերատեսչական հանձնաժողովի կազմում:

6.2. Կոնվենցիաները և ՄԱԿ-ի հատուկ բանաձևերը (Հ.35 և ՀՀ.I)

6.2.1. Նկարագրություն և վերլուծություն

ՓԼ դեմ պայքարին առնչվող ՄԱԿ-ի կոնվենցիաների վավերացումը (չ. 35.1).

928. Հայաստանը 2003 թ. հուլիսի 1-ին վավերացրել է Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան («Պալերմոյի կոնվենցիա»), իսկ 1993 թ. սեպտեմբերի 13-ին՝ Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան («Վիեննայի կոնվենցիա»):

ԱՖ դեմ պայքարին առնչվող ՄԱԿ-ի կոնվենցիաների վավերացումը (չ. I.1).

929. Հայաստանը 2004 թ. մարտի 16-ին վավերացրել է Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիան («ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիա») և ահաբեկչության դեմ պայքարի մասին 15 այլ միջազգային կոնվենցիաներից և արձանագրություններից 12-ը: Հայաստանը չի ստորագրել Միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիայի փոփոխությունները, Ծովագնացության անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին կոնվենցիայի արձանագրությունը, ինչպես նաև Մայրցամաքային ելուզակներին գտնվող ֆիքսված հարթակների անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին արձանագրությունը:

Վիեննայի կոնվենցիայի իմպլեմենտացումը (հոդվածներ 3-11, 15, 17 և 19, չ. 35.1).

930. Հայաստանի օրենսդրությամբ իմպլեմենտացվել է Վիեննայի կոնվենցիայի դրույթների մեծ մասը:

931. Վիեննայի կոնվենցիայով նախատեսված բոլոր հանցագործությունների նկատմամբ կիրառելի են բռնագրավման մեխանիզմները: Նախատեսված է նաև առգրավման իրավասություն, որը, սակայն, չի տարածվում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքի, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների նկատմամբ: Ավելին, ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են այն գույքը հայտնաբերելու և հետապնդելու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, որը բռնագրավման ենթակա է կամ կարող է այդպիսին դառնալ, հատկապես երբ դա տեղի է ունենում կասկածյալի նույնականացումից առաջ, կամ երբ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է ոչ թե կասկածյալին, այլ՝ ուրիշ որևէ անձի: Ներկայանալու ծանուցման և առգրավման մասին որոշման բացակայության պարագայում հայաստանյան օրենսդրությամբ իրավապահ մարմիններին կամ դատարաններին կարող են ֆինանսական փաստաթղթեր ներկայացնելու պարտադրել միայն քրեական գործով տուժողին կամ նրա օրինական ներկայացուցչին, հայցվորին, կասկածյալին կամ մեղադրյալին:

932. Հայաստանի Հանրապետությունը կարող է թմրադեղերի հետ կապված ՓԼ հանցագործությունների առնչությամբ ընդգրկուն փոխադարձ իրավական օգնություն ցուցաբերել, և գնահատողները չեն հայտնաբերել նմանօրինակ օգնության տրամադրման անհամաչափ կամ անհարկի սահմանափակումներ: Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է, որ փոխադարձ իրավական օգնության հարցումները կատարվում են ՔԴՕ-ի 1-53-րդ գլուխների հիման վրա՝ այդկերպ հայաստանյան իշխանություններին թույլ տալով մեկ այլ պետության անունից իրականացնել ՔԴՕ-ով նախատեսված ցանկացած իրավասություն ներպետական քննության կամ քրեական հետապնդման առնչությամբ: Այնուհանդերձ, դա նշանակում է, որ հայտնաբերման և առգրավման ներպետական իրավասությունների կապակցությամբ մատնանշված թերություններն առկա են նաև նման միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ ՓԻՕ հարցումների պարագայում: Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է անձի հանձնում թմրադեղերի հետ կապված ՓԼ հանցագործության համար:

933. Արժույթի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգը Հայաստանում կիրառելի է միայն փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող անդրսահմանային ներգնա, սակայն ոչ՝ արտագնա տեղափոխման դեպքերի նկատմամբ:

934. Հայաստանի ՕՀԳՕ-ով նախատեսվում է քննչական հատուկ հնարքների լայն շրջանակ, ներառյալ՝ հսկվող առաքումները: Չնայած որ իրավապահ մարմինների մեծ մասի ներկայացուցիչները մասնակցել են ՓԼ քննության և քրեական հետապնդման թեմաներով ուսումնական սեմինարների և դասընթացների, ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստումների չեն մասնակցել, որը զարմանալի է՝ հաշվի առնելով, որ փողերի լվացման գործերի քննության բացառիկ իրավասությունը վերապահված է ԱԱԾ-ին:

Պալերմոյի կոնվենցիայի իմպլեմենտացումը (հոդվածներ 5-7, 10-16, 18-20, 24-27, 29-31 և 34, չ. 35.1).

935. Հայաստանի օրենսդրությամբ իմպլեմենտացվել է Պալերմոյի կոնվենցիայի դրույթների մեծ մասը: Այնուհանդերձ, Հայաստանի օրենսդրությամբ չի նախատեսվում

իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, և դեռևս պարզ չէ, թե արդյոք գույքի հանցավոր ծագումն ապացուցելու համար պահանջվում է մեղադրական դատավճիռ նախորդող հանցագործության համար:

936. Բռնագրավման միջոցառումներ նախատեսված են Պալերմոյի կոնվենցիայով սահմանված հանցագործությունների մի մասի, սակայն ոչ՝ բոլորի համար: Առգրավման ընդհանուր իրավասություն նախատեսված է բոլոր հանցագործությունների համար, սակայն միջոցառումը չի տարածվում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքի, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների նկատմամբ: Ավելին, ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են այն գույքը հայտնաբերելու և հետապնդելու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, որը բռնագրավման ենթակա է կամ կարող է այդպիսին դառնալ, հատկապես երբ դա տեղի է ունենում կասկածյալի նույնականացումից առաջ, կամ երբ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է ոչ թե կասկածյալին, այլ՝ ուրիշ որևէ անձի: Ներկայանալու ծանուցման և առգրավման մասին որոշման բացակայության պարագայում հայաստանյան օրենսդրությամբ իրավապահ մարմիններին կամ դատարանները կարող են ֆինանսական փաստաթղթեր ներկայացնելու պարտադրել միայն քրեական գործով տուժողին կամ նրա օրինական ներկայացուցչին, հայցվորին, կասկածյալին կամ մեղադրյալին:

937. Հայաստանը կարող է ընդգրկուն փոխադարձ իրավական օգնություն ցուցաբերել, և գնահատողները չեն հայտնաբերել նմանօրինակ օգնության տրամադրման անհամաչափ կամ անհարկի սահմանափակումներ: Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է, որ փոխադարձ իրավական օգնության հարցումները կատարվում են ՔԴՕ-ի 1-53-րդ գլուխների հիման վրա՝ այդկերպ հայաստանյան իշխանություններին թույլ տալով մեկ այլ պետության անունից իրականացնել ՔԴՕ-ով նախատեսված ցանկացած իրավասություն ներպետական քննության կամ քրեական հետապնդման առնչությամբ: Այնուհանդերձ, դա նշանակում է, որ հայտնաբերման և առգրավման ներպետական իրավասությունների կապակցությամբ մատնանշված թերություններն առկա են նաև նման միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ ՓԻՕ հարցումների պարագայում: Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է անձի հանձնում թմրադեղերի հետ կապված ՓԼ հանցագործության համար:

938. Հայաստանի ՕՀԳՕ-ով նախատեսվում է քննչական հատուկ հնարքների լայն շրջանակ, ներառյալ՝ հսկվող առաքումները: Չնայած որ իրավապահ մարմինների մեծ մասի ներկայացուցիչները մասնակցել են ՓԼ քննության և քրեական հետապնդման թեմաներով ուսումնական սեմինարների և դասընթացների, ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստումների չեն մասնակցել, որը զարմանալի է՝ հաշվի առնելով, որ փողերի լվացման գործերի քննության բացառիկ իրավասությունը վերապահված է ԱԱԾ-ին:

Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայի իմպլեմենտացումը (հոդվածներ 2-18, չ. 35.1 և չ. I.1).

939. Հայաստանում ահաբեկչության ֆինանսավորումը քրեականացված է՝ հիմնականում Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կոնվենցիայի նորմերին համահունչ: Այնուհանդերձ, հայտնաբերվել են որոշ թերություններ, որոնք նշվել են ՀՀ.II-ին նվիրված բաժնում: Հիմնական բացն այն է, որ ՔՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված՝ ահաբեկչության հանցակազմի սահմանման մեջ պահանջվում է հատուկ մտադրության առկայություն, որի պատճառով ԱՖ մասին նորմը կիրառելի չէ ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված հանցակազմերի մեծ մասի դեպքում: Բացի այդ, ԱՖ մասին դրույթի մեջ

«ահաբեկչության» սահմանումը չի պարունակում հղում «միջազգային կազմակերպություններ» հասկացությանը՝ ինչպես պահանջվում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով: ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի 1-ին մասում («ֆինանսական միջոցներ») և 3-րդ մասում («ահաբեկչության ֆինանսավորման առարկա») եզրույթների ոչ միատեսակ կիրառության պատճառով պարզ չէ, թե արդյոք ահաբեկչության ֆինանսավորման հանցագործության սահմանումը տարածվում է Կոնվենցիայով նախատեսված «միջոցներ» հասկացության նկատմամբ: Ավելին, իրավաբանական անձանց նկատմամբ Հայաստանի օրենսդրության համաձայն չի կարող կիրառվել քրեական պատասխանատվություն:

940. ԱՖ մասով բռնագրավման և առգրավման մասին դրույթների կապակցությամբ հայտնաբերված հիմնախնդիրներին կարելի է ծանոթանալ Հ.3-ին և ՀՀ.III-ին նվիրված բաժիններում զետեղված վերլուծության մեջ:

941. Հայաստանը կարող է ընդգրկուն փոխադարձ իրավական օգնություն ցուցաբերել, և գնահատողները չեն հայտնաբերել նմանօրինակ օգնության տրամադրման անհամաչափ կամ անհարկի սահմանափակումներ: Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է անձի հանձնում ԱՖ հանցագործության համար:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ ԱՖ կանխարգելմանը և վերացմանն առնչվող բանաձևերի իմպլեմենտացումը (չ. I.2)

Ինչպես մանրամասնորեն ներկայացվեց ՀՀ.III-ին նվիրված բաժնում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 բանաձևի կապակցությամբ Հայաստանի ձեռնարկած միջոցառումները համարժեք չեն, և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1373 բանաձևով նախատեսված պահանջներից շատերը ոչ լիովին են կատարվում: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի իմպլեմենտացումը Հայաստանն իրականացնում է քրեական իրավունքի ներպետական նորմերի հիման վրա, սակայն չկան բոլոր դեպքերում միջոցներն անմիջապես սառեցնելու մեխանիզմ՝ անկախ ահաբեկչական հանցագործության համար քրեական գործ հարուցելու կամ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունից կամ անհնարինությունից:

Լրացուցիչ տարրը. համապատասխան այլ միջազգային կոնվենցիաների վավերացումը կամ իմպլեմենտացումը (չ. 35.2).

942. Հայաստանը 2007 թ. մարտի 8-ին վավերացրել է Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիան (Մերիդայի կոնվենցիա), 2003 թ. հոկտեմբերի 8-ին՝ Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, խուզարկության, առգրավման և բռնագրավման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստրասբուրգի կոնվենցիա), և 2008 թ. հունիսի 2-ին՝ Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, խուզարկության, առգրավման և բռնագրավման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Վարշավայի կոնվենցիա):

943. Հայաստանը վավերացրել է նաև Ահաբեկչության դեմ պայքարի մասին եվրոպական կոնվենցիան, Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական և քաղաքացիական իրավունքի մասին կոնվենցիաները, ինչպես նաև Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների մասին Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) համաձայնագիրը:

6.2.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն,

- Բռնագրավման իրավասությունը սահմանել Պալերմոյի կոնվենցիայով սահմանված բոլոր հանցագործությունների համար,
- Նախատեսել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքի, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների առգրավման հնարավորությունը՝ ինչպես սահմանված է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով,
- Իրավապահ մարմիններին կամ դատարաններին վերապահել ընդհանուր իրավասություն՝ պարտադրել ներկայացնելու ֆինանսական փաստաթղթեր, այդ թվում՝ այն գործերով, որոնց համար տեղեկատվություն է պահանջվում վկայից կամ այլ՝ տուժող, հայցվոր, կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանցից,
- ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմինները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի,
- Արժույթի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգի գործողությունը տարածել նաև փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա տեղափոխման նկատմամբ,
- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով լրացուցիչ կոնկրետ ուսուցում կազմակերպել ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության աշխատակիցների համար,
- ԱՖ հանցակազմը սահմանել Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված սահմանմանը համահունչ,
- Ներդնել համարժեք մեխանիզմներ, որոնց միջոցով կապահովվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի պահանջների բավարարումը:

6.2.3. Համապատասխանությունը թիվ 35 հանձնարարականին և I հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.35	Մասամբ համապատասխանում է	• Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը: • Բռնագրավման միջոցները Պալերմոյի կոնվենցիայով սահմանված ոչ բոլոր հանցագործությունների նկատմամբ են տարածվում: • Հնարավոր չէ առգրավել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքը, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները՝ ինչպես սահմանված է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով: • Ներկայանալու ծանուցման և առգրավման մասին որոշման բացակայության պարագայում ՔԴՕ-ի դրույթները բավականաչափ ընդգրկուն չեն, որպեսզի իրավապահ մարմիններին

		կամ դատարաններին հնարավորություն ընձեռեն պարտադրել՝ ցանկացած գործով ներկայացնելու փաստաթղթեր և տեղեկություններ: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • Արժույթի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգի գործողությունը չի տարածվում փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա տեղափոխման նկատմամբ: • ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում չի կազմակերպվում ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության աշխատակիցների համար:
ՀՀ.I	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• ԱՖ հանցակազմը սահմանված չէ Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված սահմանմանը համահունչ: • ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի պահանջների կապակցությամբ Հայաստանի կողմից ձեռնարկվող միջոցառումները համարժեք չեն:

6.3. Փոխադարձ իրավական օգնությունը (Հ.36-38, ՀՀ.V)

6.3.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

944. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով թույլատրվում է քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն տրամադրել թե երկկողմ կամ միջազգային համաձայնագրի հիման վրա, թե կոնկրետ գործով՝ փոխադարձության կարգով: Կոնկրետ գործով ներկայացվող բոլոր հարցումները պետք է կատարվեն ԱԳՆ-ի միջոցով:

945. Հայաստանը քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրման վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր է կնքել տաս պետությունների, մասնավորապես՝ Բուլղարիայի, Ռումինիայի, Ուկրաինայի, Իրանի, Վրաստանի, Հունաստանի, ՄԱԷ-ի, Լիտվայի, Եգիպտոսի և Լիբանանի հետ: Հայաստանը նաև միացել է քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրմանն առնչվող մի շարք միջազգային համաձայնագրերի, այդ թվում՝ Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներին, Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիային, Մերիդայի կոնվենցիային և Ստրասբուրգի և Վարշավայի կոնվենցիաներին, որոնց անդրադարձ է արվել վերևում: Երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի հիման վրա կատարվող հարցումը կարող է ուղղակիորեն ներկայացվել Հայաստանի համապատասխան մարմնին, եթե այդ հնարավորությունը նախատեսված է համաձայնագրում:

946. ՔԴՕ-ի 474-րդ հոդվածով նախատեսվում է, որ հարցումները կատարվում են ՔԴՕ-ով նախատեսված ժամկետներում, եթե համապատասխան միջազգային պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ: Ուստի, հաշվետվության այս բաժնում չեն տարբերակվի միջազգային համաձայնագրերի հիման վրա և փոխադարձության կարգով կատարվող՝ փոխադարձ իրավական օգնության հարցումների նկատմամբ կիրառելի ընթացակարգերը:

947. ՔԴՕ-ի համապատասխան դրույթները սահմանված են ՔԴՕ-ի 474-499-րդ հոդվածներով: Փոխադարձ իրավական օգնության տրամադրման, այդ թվում՝ հանձնման վերաբերյալ բոլոր դրույթները հավասարապես կիրառելի են բոլոր հանցագործությունների, այդ թվում՝ նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նկատմամբ:

Փոխադարձ իրավական օգնության ցուցաբերումը հնարավորին չափ լայն շրջանակներում (չ. 36.1).

948. ՔԴՕ-ի 482-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ օտարերկրյա պետությունների հարցումները կատարվում են գլխավոր դատախազության կողմից, եթե հարցումն առնչվում է մինչդատական վարույթում գտնվող գործի, կամ արդարադատության նախարարության կողմից, եթե հարցումն առնչվում է օտարերկրյա պետության դատական վարույթում գտնվող գործի:

949. Բոլոր դեպքերում պահանջվում է փոխադարձություն: Փոխադարձություն ցուցաբերելու մասին որոշումը կայացնում են համապատասխանաբար արդարադատության նախարարությունը կամ գլխավոր դատախազությունը՝ հիմնվելով հարցում կատարող պետության հետ նախկին հարաբերությունների վրա: Եթե Հայաստանը հարցում կատարող պետության հետ նախկին հարաբերությունների փորձ չունի, ապա իշխանությունները փոխադարձ իրավական օգնությունը տրամադրում են բարի կամքի հիման վրա: Երբ պարզվել է, որ պետությունը փոխադարձության հիմունքներով Հայաստանին տրամադրելու է փոխադարձ իրավական օգնություն, փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը շարունակվում է մինչև պայմանավորվածությունը վերացնելը կամ կիրառելի երկկողմ կամ միջազգային համաձայնությամբ փոխարինվելը:

950. Արդարադատության նախարարությունը կամ գլխավոր դատախազությունը պետք է հարցում կատարող պետությանը տրամադրեն ՔԴՕ-ի 482-րդ հոդվածի թարգմանված տեքստը: ՓԻՕ հարցումն ընդհանուր առմամբ պետք է պարունակի տեղեկություններ հանցագործության, հարցվող օգնության տեսակը, հարցում կատարող պետության քրեական օրենսգրքից քաղվածք և, եթե հարցումն առնչվում է դատարանի որոշման, ապա վերջինիս պատճենը: Ֆորմալ պահանջները ստուգվում են համապատասխանաբար գլխավոր դատախազության և արդարադատության նախարարության կողմից:

951. ՔԴՕ-ի 484-րդ հոդվածով նախատեսվում է, որ փոխադարձ իրավական օգնության հարցումները կատարվում են ՔԴՕ-ի 1-53-րդ գլուխների հիման վրա՝ այդկերպ հայաստանյան իշխանություններին թույլ տալով մեկ այլ պետության անունից իրականացնել ՔԴՕ-ով նախատեսված ցանկացած իրավասություն ներպետական քննության կամ քրեական հետապնդման առնչությամբ: Այնուհանդերձ, դա նշանակում է, որ հայտնաբերման և առգրավման ներպետական իրավասությունների կապակցությամբ թիվ 3 հանձնարարականի վերլուծության մեջ մատնանշված թերություններն առկա են նաև նման միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ ՓԻՕ հարցումների պարագայում: Բացի այդ, հաշվի առնելով «կրկնակի քրեականացման» գործնական կիրառությունը, ՓԼ և ԱՖ հանցագործությունների առնչությամբ հայտնաբերված թերությունները կարող են սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը, օրինակ, այնպիսի իրավիճակներում, որոնցում քրեական վարույթը վերաբերում է իրավաբանական անձի, կամ երբ հարցումը վերաբերում է իրավաբանական անձի կամ ահաբեկչության ֆինանսավորման այնպիսի գործողության, որը ներառված չէ ԱՖ հանցակազմի՝ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված սահմանման մեջ:

952. ՕՀԳՕ-ով նախատեսված միջոցառումները սահմանված հղման համաձայն (ՔԴՕ-ի 53(4) հոդված) կարող են իրականացվել նաև օտարերկրյա պետության հարցման հիման վրա: Մասնավորապես, կարող են ցուցաբերվել փոխադարձ իրավական օգնության հետևյալ ձևերը.

Տեղեկությունների, փաստաթղթերի կամ ապացույցների (ներառյալ՝ ֆինանսական տվյալների) տրամադրումը, խուզարկությունը և առգրավումը ֆինանսական հաստատություններից կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից.

953. ՔԴՕ-ի 225-րդ և 226-րդ հոդվածներով թույլատրվում է տարածքների խուզարկությունը և փաստաթղթերի, ապացույցների և այլ գույքի առգրավումը՝ ինչպես մանրամասնորեն ներկայացված է թիվ 28 հանձնարարականին նվիրված բաժնում:

954. Ինչ վերաբերում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հասանելիությանը, ապա ներպետական իրավապահ մարմինները կարող են այդ տեղեկությունները ստանալ դատարանի որոշման հիման վրա՝ ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածի համաձայն: Այնուհանդերձ, ինչպես մանրամասնորեն վերլուծված է թիվ 4 հանձնարարականին նվիրված բաժնում, դատարանները, կարծես, բոլոր դեպքերում, ներառյալ՝ այն իրավիճակներում, որոնցում փորձ է արվում դատարանի որոշումը ստանալ օտարերկրյա պետություններից ստացված՝ փոխադարձ իրավական օգնության հարցումների հիման վրա, կիրառում են «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջները, որոնք ավելի խիստ են: Ուստի, տպավորություն է առաջանում, որ տեղեկությունները ստանալու իրավունք կընձեռվի միայն այն դեպքում, երբ (1) հայտնաբերվել է կասկածյալ, և (2) տեղեկությունները վերաբերում են կասկածյալին, բայց ոչ՝ որևէ այլ անձի: Պրակտիկայում նման իրավիճակ երբևէ չի ծագել, քանի որ որևէ օտարերկրյա պետություն երբևէ չի դիմել Հայաստանին՝ խնդրելով տրամադրել բանկային գաղտնիք համարվող տեղեկություններ: Ինչպես ներկայացվել է թիվ 4 հանձնարարականին նվիրված բաժնում, ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունները կարող են ստացվել նաև ՖԴԿ-ի միջոցով, սակայն անուղղակի ճանապարհով տեղեկությունները ստանալու վերաբերյալ իրավական նորմերի միջև առկա հակասություններն անդրադառնում են համապատասխան իրավասություններն արդյունավետորեն օգտագործելու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, այդ թվում՝ նաև այն դեպքերում, երբ տեղեկությունները պահանջվում են ՓԻՕ հարցման հիման վրա:

955. Մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման իրավասությունների վերլուծության համար տես թիվ 26 և 28 հանձնարարականներին նվիրված բաժինները և դրանցում նշված խնդիրները:

956. Չնայած որ փոխադարձ իրավական օգնության տրամադրման համար «կրկնակի քրեականացում» չի պահանջվում, իշխանությունները նշեցին, որ պրակտիկայում հարցումները չեն կատարվում, եթե ապահովված չէ «կրկնակի քրեականացում»: Ուստի, չի կարելի համոզված լինել, որ իրավաբանական անձանց նկատմամբ վարույթների հետ կապված տեղեկությունների հարցումները կկատարվեն, քանի որ Հայաստանի օրենսդրությամբ չի նախատեսվում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:

957. Իշխանությունները նշեցին, որ պրակտիկայում չեն ստացվել գաղտնի տեղեկություններ կամ իրավաբանական անձի կողմից տնօրինվող տեղեկություններ տրամադրելու մասին հարցումներ:

Անձանցից ցուցմունքներ կամ բացատրություններ վերցնելը, հարցում կատարող երկրի տարածքում տեղեկություններ կամ ցուցմունքներ տրամադրելու նպատակով անձանց կամավոր ներկայանալուն նպաստելը.

958. ՕՀԳՕ-ի 14(1) հոդվածով նախատեսվում է օպերատիվ հարցման ինստիտուտը, որը կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով: Տվյալ միջոցառումը կարող է ձեռնարկվել թե նախքան քրեական գործի հարուցումը, թե դրանից հետո: Իշխանությունները նշեցին, որ պրակտիկայում օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա բազմիցս վերցվել են վկաների ցուցմունքներ, բայց ոչ՝ ՓԼ/ԱՖ գործերի առնչությամբ:

Համապատասխան փաստաթղթերի և տվյալների բնօրինակներ կամ կրկնօրինակներ, ինչպես նաև այլ տեղեկատվություն և ապացույցներ տրամադրելը հարցում կատարող պետությանը.

959. Չնայած որ ՔԴՕ-ն չի պարունակում կոնկրետ դրույթներ փաստաթղթերը, ապացույցները և տվյալներն օտարերկրյա պետություններին տրամադրելու վերաբերյալ, և գլխավոր դատախազության, և արդարադատության նախարարության ներկայացուցիչները նշեցին, որ պրակտիկայում իրենք պատրաստ են հարցում կատարող պետությանը տրամադրել, և նախկինում միշտ էլ փաստացի տրամադրել են հարցվող փաստաթղթերի բնօրինակները կամ կրկնօրինակները, ինչպես նաև ապացույցները:

Դատական փաստաթղթերի առաքում կատարելը.

960. Չնայած որ ՔԴՕ-ն չի պարունակում կոնկրետ դրույթներ օտարերկրյա դատական փաստաթղթերի առաքում կատարելու վերաբերյալ, արդարադատության նախարարության և գլխավոր դատախազության ներկայացուցիչները նշեցին, որ նախկինում օգնության այս տեսակը բազմիցս տրամադրվել է այլ, սակայն ոչ՝ ՓԼ կամ ԱՖ գործերով: Օտարերկրյա դատական փաստաթուղթ ստանալու դեպքում իշխանություններն այն տանում են հարցվողի մոտ, ստորագրել տալիս, ապա՝ ստորագրված փաստաթուղթն ուղարկում հարցում կատարող պետությանը:

Լվացված կամ լվացման համար նախատեսվող գույքը, ՓԼ-ից ստացված եկամուտը և ԱՖ նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքը, ինչպես նաև նման հանցագործությունների գործիքները և դրանց համարժեք այլ գույք նույնականացնելը, սառեցնելը, առգրավելը կամ բռնագրավելը.

961. Հիմնվելով ՔՕ-ի 55-րդ հոդվածով նախատեսված՝ բռնագրավման մասին դրույթների վրա, ինչպես մանրամասնորեն ներկայացված է թիվ 3 հանձնարարականին նվիրված բաժնում, վերոհիշյալ բոլոր միջոցները կարող են բռնագրավվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման համար կայացված մեղադրական դատավճռի հիման վրա: Իշխանությունները նշեցին, որ «քաղաքացիական բռնագրավում» նախատեսող պետություններում կայացված՝ բռնագրավման մասին որոշումները Հայաստանում չեն կատարվի:

962. Օտարերկրյա պետության հարցման հիման վրա կարող են ձեռնարկվել նաև ՔԴՕ-ի 232-րդ և 233-րդ հոդվածներով նախատեսված՝ կալանադրման միջոցառումներ: Դրանք կիրառելու համար դատարանի որոշում չի պահանջվում: Այնուհանդերձ, ՔԴՕ-ի 233-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում այն օրինական գույքի նկատմամբ, որը համարժեք է ՓԼ կամ ԱՖ հանցագործությունների կատարումից ստացված եկամտին կամ դրանց համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին:

963. Իշխանությունները նշեցին, որ առգրավման կամ բռնագրավման միջոցառումներ երբևէ չեն կիրառվել օտարերկրյա պետության հարցման հիման վրա, և որ նման հարցում Հայաստանը երբևէ չի ստացել:

Օգնության ցուցաբերումը ժամանակին, կառուցողաբար և արդյունավետորեն (չ. 36.1.1).

964. ՔԴՕ-ով չեն նախատեսվում ՓԻՕ հարցումների կատարման հստակ ժամկետներ: Հաշվի առնելով, որ ՓԼ և ԱՖ հարցումներ չեն ստացվել, հնարավոր չէ պարզել, թե սովորաբար որքան կտևի դրանց պատասխանելը:

965. Այլ գործերի շրջանակում ստացված՝ ՓԻՕ հարցումների առնչությամբ գլխավոր դատախազության ներկայացուցիչները նշեցին, որ հարցմանը պատասխանելու համար պահանջվում է միջինը մոտ մեկ ամիս՝ կախված հարցման շրջանակից: Այնուհանդերձ, ֆորմալ ժամկետներ սահմանված չեն: Գլխավոր դատախազության ներկայացուցիչները նշեցին, որ հարցումը կատարելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու մասին այլ մարմիններին կարգադրելիս իրենք, որպես կանոն, պահանջում են պատասխանել 15-20 օրվա ընթացքում: Ներպետական իրավասու մարմիններից պատասխանը ստանալուց հետո

գլխավոր դատախազությունը ծանուցում է ուղարկում հարցում կատարող պետությանը՝ տեղեկացնելով նրանց ձեռնարկված միջոցառումների և ստացված արդյունքների մասին:

966. Այլ գործերի շրջանակում ստացված՝ ՓԻՕ հարցումների առնչությամբ արդարադատության նախարարության ներկայացուցիչները նշեցին, որ հարցմանը պատասխանելու համար պահանջվում է միջինը մոտ երկու ամիս՝ կախված հարցման բարդությունից: Նշվեց նաև, որ ՓԻՕ հարցումներով զբաղվում է արդարադատության նախարարության հատուկ ստորաբաժանումը, որում աշխատում են երկու մասնագետներ: Ստուգվում է հարցումների ձևի համապատասխանությունը, որից հետո դրանք ուղարկվում են համապատասխան իրավասու մարմնին՝ խնդրելով պատասխանել մեկ ամսվա ընթացքում, սակայն այդ ժամկետը պարտադիր չէ: Իրավասու մարմնի պատասխանը ստանալուց հետո արդարադատության նախարարությունը վավերականացնում է պատասխանը և արդյունքներն ուղարկում հարցում կատարող երկրին կամ ԱԳՆ-ի միջոցով, կամ ուղղակիորեն՝ կիրառելի համաձայնագրի առկայության դեպքում:

967. Եվ գլխավոր դատախազության, և արդարադատության նախարարության ներկայացուցիչները նշեցին, որ ձևին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հարցումները վերադարձվում են հարցում կատարող պետությանը՝ խնդրելով տրամադրել լրացուցիչ տեղեկություններ կամ շտկել սխալը:

Փոխադարձ իրավական օգնությունն անհամաչափ կամ անհարկի սահմանափակումներով չպայմանավորելը (չ. 36.2).

968. ՔԴՕ-ի 484-րդ հոդվածով նախատեսվում է, որ ՓԻՕ հարցումը կարող է մերժվել, եթե դրա կատարումը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության անկախությունը, սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը կամ անվտանգությունը կամ հակասել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Նման դեպքերում պարտադիր չէ հարցում կատարող պետությանը վերադարձնել ուղարկված փաստաթղթերը:

969. Չնայած որ օրենքը նման պահանջ չի սահմանում, իշխանությունները նշեցին, որ պրակտիկայում ՓԻՕ չի տրամադրվում, եթե ապահովված չէ «կրկնակի քրեականացում»: Բացի այդ, օգնությունը կարող է մերժվել, եթե հարցում կատարող պետությունը փոխադարձության հիմունքներով նույն հնարավորությունները չի ընձեռում Հայաստանին: Բոլոր այլ դեպքերում, բացառությամբ ՔԴՕ-ի 484-րդ հոդվածով նախատեսվածների, հարցում կատարող պետության տրամադրած փաստաթղթերը վերադարձվում են՝ հարցումը մերժելու պատճառների մասին տեղեկանքի հետ միասին:

970. Վերոհիշյալ հիմքերով հարցում մերժելու կամ չմերժելու մասին որոշումը կայացնում են համապատասխանաբար արդարադատության նախարարությունը և գլխավոր դատախազությունը:

971. Հայաստանը չի ստացել ՓԼ կամ ԱՖ առնչվող հարցումներ. ուստի, վերոհիշյալ պատճառներից որևէ մեկի հիման վրա հարցման մերժում երբևէ տեղի չի ունեցել:

972. Հայաստանի օրենքներն ընդհանուր առմամբ կարծես անհամաչափորեն կամ անհարկիորեն չեն սահմանափակում փոխադարձ իրավական օգնության տրամադրումը:

Գործընթացների արդյունավետությունը (չ. 36.3).

973. Ոչ գլխավոր դատախազությունը, ոչ արդարադատության նախարարությունը չունեն ՓԻՕ հարցումները ժամանակին և առանց անհարկի ձգձգումների կատարելու ֆորմալացված ժամկետներ: Այնուհանդերձ, իշխանությունների հետ քննարկումներից տպավորություն առաջացավ, որ պրակտիկայում հարցումները կատարվում են ողջամիտ ժամկետում՝ մեկից երկու ամսում: Իշխանությունների այդ պնդումը հիմնավորող վիճակագրական տվյալներ չեն տրամադրվել:

Օգնության տրամադրումը՝ անկախ հնարավոր հարկաբյուջետային խնդիրներից (չ. 36.4).

974. ՔԴՕ-ով չի նախատեսվում, որ հարցումը կարող է մերժվել միայն այն հիմքով, որ հանցագործությունը համարվում է նաև հարկաբյուջետային խնդիրներին առնչվող հանցագործություն: Իշխանությունները նշեցին, որ հարցումները չեն մերժվի և նախկինում էլ երբևէ չեն մերժվել միայն այն հիմքով, որ համապատասխան հանցագործությունն առնչվում է հարկաբյուջետային խնդիրներին:

Օգնության տրամադրումը՝ անկախ գաղտնիության մասին պահանջներ սահմանող օրենքների առկայությունից (չ. 36.5).

975. Բանկային և մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման վերաբերյալ տես 36.1. չափորոշչին, ինչպես նաև թիվ 4, 26 և 28 հանձնարարականներին նվիրված վերլուծությունը:

Իրավասու մարմիններին վերապահված իրավասությունները (Հ.28-ի կիրառությունը, չ. 36.6).

976. Ինչպես նշվեց, ՔԴՕ-ի 484-րդ հոդվածի համաձայն, ՕՀԳՕ-ով և ՔԴՕ-ով նախատեսված բոլոր միջոցառումները, ներառյալ՝ համապատասխան դրույթներով իրավապահ մարմիններին վերապահված իրավասությունները, կարող են օգտագործվել նաև ՓԻՕ հարցումներ կատարելիս:

Իրավասության բախումներից խուսափելը (չ. 36.7).

977. Հայաստանը երբևէ չի հայտնվել այնպիսի իրավիճակում, որում կպահանջվեր համակարգում այլ պետությունների հետ՝ ընտրելու մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու լավագույն վայրն այնպիսի դեպքերում, երբ գործի նկատմամբ իրավասություն ստանձնում են և Հայաստանը, և օտարերկրյա որևէ պետություն: Այնուհանդերձ, իշխանությունները նշեցին, որ նման համակարգում կարող է իրականացվել այլ պետության հետ կնքվող փոխըմբռնման հուշագրի հիման վրա:

Լրացուցիչ տարրը. Հ.28-ով պահանջվող իրավասություններից օգտվելու՝ իրավասու մարմինների հնարավորությունը (չ. 36.8).

978. ՓԻՕ ուղղակի հարցումները կարող են ներկայացվել ինտերպոլի միջոցով կամ օտարերկրյա պետության համապատասխան իրավասու մարմնի հետ կնքված երկկողմ համաձայնագրի հիման վրա: Նման դեպքերում իրավասությունները սահմանված են համաձայնագրի կոնկրետ նորմերով:

Միջազգային համագործակցությունը՝ ՀՀ.V-ի համաձայն (չ. 36.1-36.6-ի կիրառությունը Հ. 36-ի շրջանակում, չ. V.1).

979. Թիվ 36 հանձնարարականի վերաբերյալ շարադրված դրույթները կիրառելի են հանցագործության ցանկացած տեսակի, ներառյալ՝ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների նկատմամբ:

Լրացուցիչ տարրը՝ ՀՀ.V-ի համաձայն (չ. 36.7-ի և 36.8-ի կիրառությունը Հ.36-ի շրջանակում, չ. V.6).

980. Թիվ 36 հանձնարարականի վերաբերյալ շարադրված դրույթները կիրառելի են հանցագործության ցանկացած տեսակի, ներառյալ՝ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների նկատմամբ:

«Կրկնակի քրեականացումը» և փոխադարձ օգնությունը (չ. 37.1 և 37.2), միջազգային համագործակցությունը՝ ՀՀ.V-ի համաձայն (չ. 37.1-37.2-ի կիրառությունը Հ. 37-ի շրջանակում, չ. V.2).

981. ՔԴՕ-ի 482-րդ հոդվածի համաձայն, փոխադարձ իրավական օգնություն տրամադրվում է բոլոր հանցագործությունների դեպքում՝ անկախ հանցագործությունից: «Կրկնակի քրեականացում» ուղղակիորեն պահանջվում է միայն ՔԴՕ-ի 499[9]-րդ հոդվածով նախատեսված միջոցի պարագայում, որով թուլատրվում է օտարերկրյա պետության դատարանի՝ քրեական գործով կայացված դատավճիռը մերժել, եթե արարքը, որի համար անձը դատապարտվել է, Հայաստանի Հանրապետության օրենքով քրեորեն պատժելի չէ: Օգնության բոլոր այլ ձևերի տրամադրման համար Հայաստանի օրենսդրությամբ որպես նախապայման չի պահանջվում «կրկնակի քրեականացման» առկայություն: Այնուհանդերձ, գլխավոր դատախազության և արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ մանրակրկիտ քննարկումներում նշվեց, որ պրակտիկայում որևէ հարցում չի կատարվում «կրկնակի քրեականացման» բացակայության պայմաններում՝ անկախ հարցվող միջոցից:

982. Իշխանությունները նաև նշեցին, որ «կրկնակի քրեականացման» առկայության պահանջը համարվում է բավարարված, եթե նախատեսված են հանցակազմի բոլոր տարրերը, և եթե հարցման մեջ նշված արարքը համապատասխանում է Հայաստանի օրենսդրության կոնկրետ նորմի պահանջներին: Տեխնիկական տարբերությունները հաշվի չեն առնվում:

983. Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ ՓԼ և ԱՖ հանցագործությունների առնչվող հարցումներ չեն ստացվել, հնարավոր չեղավ պարզել, թե արդյոք «կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը կարող է բացասաբար անդրադառնալ փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողության վրա, և եթե այո, ապա՝ որքանով:

Կանխարգելիչ միջոցների, ներառյալ՝ բռնագրավման վերաբերյալ հարցումներին ժամանակին պատասխանելը (չ. 38.1), համարժեք գույքը (չ. 38.2).

984. Ինչպես արդեն նշվեց, ելնելով «կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունից, ՓԼ և ԱՖ հանցագործությունների առնչությամբ հայտնաբերված թերությունները կարող են սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը, օրինակ՝ այնպիսի իրավիճակներում, որոնցում քրեական վարույթը վերաբերում է իրավաբանական անձի, կամ երբ հարցումն առնչվում է ահաբեկչության ֆինանսավորման այնպիսի արարքի, որը ներառված չէ ԱՖ մասին Հայաստանի օրենսդրական նորմի մեջ:

Բռնագրավման կամ սահմանափակման մասին օտարերկրյա պետությունների որոշումների կատարումը Հայաստանում.

985. ՔԴՕ-ի 499[8]-րդ հոդվածով նախատեսվում է, որ կիրառելի համաձայնագրերի շրջանակից դուրս, օտարերկրյա պետությունների դատավճիռները, այդ թվում՝ առգրավման մասին որոշումները, կարող են ուղղակիորեն կատարվել Հայաստանում, եթե դրանք ճանաչել է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանը: Ճանաչումից հետո դատավճիռը կարող է ի կատար ածվել ՔԴՕ-ին համապատասխան: 499[9]-րդ հոդվածով նաև նախատեսվում է, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը կարող է մերժվել, եթե արարքը, որի համար անձը դատապարտվել է, Հայաստանի Հանրապետության օրենքով քրեորեն պատժելի չէ, կամ եթե դատավճռով որպես պատիժ նախատեսված է մահապատիժ:

986. Ինչպես արդեն նշվեց թիվ 3 հանձնարարականին նվիրված բաժնում, Հայաստանի ՔԴՕ-ով թույլատրվում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների կատարման արդյունքում ձեռք բերված գույքի, ինչպես նաև դրանց կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, ինչպես նաև դրանց համարժեք այլ՝ օրինական գույքի բռնագրավումը: Այնուհանդերձ, բռնագրավման մասին Հայաստանի իրավական նորմերը տարածվում են ՖԱԹՖ-ի ստանդարտներով նախատեսված ոչ բոլոր նախորդող հանցագործությունների նկատմամբ:

987. Իշխանությունները հաստատեցին, որ օտարերկրյա պետության բռնագրավման մասին որոշումները կարող են Հայաստանում կատարվել միայն այն դեպքում, եթե դրանք հիմնված են մեղադրական դատավճռի վրա: Հետևաբար, չեն ճանաչվում «քաղաքացիական բռնագրավման» մասին որոշումները:

Սառեցման կամ բռնագրավման մասին որոշումները՝ օտարերկրյա պետության հարցման հիման վրա.

988. Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի իշխանություններն իրավասու են մեկ այլ պետության անունից ձեռնարկել այն միջոցառումները, որոնք կարող են իրականացվել ներպետական վարույթի շրջանակներում: Ըստ այդմ, պետությունները կարող են խնդրել Հայաստանի իշխանություններին՝ ՔԴՕ-ի 13-րդ կամ 233-րդ հոդվածների համաձայն ձեռնարկելու կանխարգելիչ միջոցներ այն գույքի նկատմամբ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել կամ ձեռք է բերվել ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, ինչպես նաև այդ հանցավոր արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները: Առգրավվել կարող է թե մեղադրյալին, թե երրորդ անձի պատկանող գույքը: Այնուհանդերձ, ինչպես արդեն նշվեց թիվ 3 հանձնարարականին նվիրված բաժնում, ՔԴՕ-ի 233-րդ հոդվածով չի նախատեսվում ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ձեռք բերված գույքին, ինչպես նաև դրանց կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք այլ՝ օրինական գույքի առգրավումը:

989. Եթե առկա են հիմքեր՝ կասկածելու, որ գույքը կամավոր չի հանձնվի առգրավման մասին որոշման հիման վրա,դատախազը կարող է դիմել դատարան՝ ստանալու խուզարկության մասին որոշում, որը կնպաստի առգրավման մասին որոշման ի կատար ածմանը:

Առգրավման և բռնագրավման գործողությունների համակարգումը (չ. 38.3).

990. Չկան ֆորմալ մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ այլ պետությունների հետ համակարգել առգրավման և բռնագրավման գործողությունները: Այնուհանդերձ, իշխանությունները նշեցին, որ նման մեխանիզմներ կարող են ներդրվել կոնկրետ դեպքերում, եթե առաջանա նման անհրաժեշտություն:

Միջազգային համագործակցությունը՝ ՀՀ.V-ի համաձայն (չ. 38.1-38.3-ի կիրառությունը Հ.38-ի շրջանակում, չ. V.3).

991. Թիվ 38 հանձնարարականի վերաբերյալ շարադրված դրույթները կիրառելի են հանցագործության ցանկացած տեսակի, ներառյալ՝ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների նկատմամբ:

Բռնագրավված գույքի հիմնադրամը (չ. 38.4).

992. Հայաստանի Միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է բռնագրավված գույքի հիմնադրամ ստեղծելու նպատակահարմարությունը: Այնուհանդերձ, որոշվել է ձեռնպահ մնալ նման գործողություն կատարելուց՝ հաշվի առնելով ֆինանսաբյուջետային և քրեաիրավական համակարգի առանձնահատկությունները: Բռնագրավված գույքը փոխանցվում է ՀՀ պետական բյուջե, ապա՝ ծախսվում ըստ կարիքների:

Բռնագրավված գույքի բաշխումը (չ. 38.5).

993. Միջգերատեսչական հանձնաժողովը դիտարկել է բռնագրավված գույքն այլ պետությունների հետ բաշխելու իրավունք սահմանելու նպատակահարմարությունը: Որոշվել է, որ հարցը լրացուցիչ քննարկման կարժանանա, երբ օտարերկրյա պետությունից ստացվի գույքի բաշխման վերաբերյալ հարցում:

Լրացուցիչ տարրը (Հ.38). օտարերկրյա պետությունների հետևյալ որոշումների ճանաչումը. ա) այն կազմակերպությունների գույքի բռնագրավումը, որոնք իրենց բնույթով ճանաչվում են հիմնականում քրեական կազմակերպություններ, բ) «քաղաքացիական բռնագրավումը», և գ) գույքի այնպիսի բռնագրավումը, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը (չ. 3.7-ի կիրառությունը Հ.3-ի շրջանակում, չ. 38.6).

994. Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէ «քաղաքացիական բռնագրավման» մասին օտարերկրյա պետությունների որոշումների ճանաչումը և կատարումը: Չկան դրույթներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ բռնագրավել այն կազմակերպությունների գույքը, որոնք իրենց բնույթով հիմնականում քրեական կազմակերպություններ են, կամ՝ գույքի այնպիսի բռնագրավումը, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը:

Լրացուցիչ տարրը՝ ՀՀ.V-ի համաձայն (չ. 38.4-38.6-ի կիրառությունը Հ.38-ի շրջանակում, չ. V.7).

995. Թիվ 38 հանձնարարականի վերաբերյալ շարադրված դրույթները կիրառելի են հանցագործության ցանկացած տեսակի, ներառյալ՝ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների նկատմամբ:

Վիճակագրությունը (Հ.32-ի կիրառությունը).

996. Փոխադարձ իրավական օգնության մասին վիճակագրություն վարում են գլխավոր դատախազությունը (մինչդատական վարույթում գտնվող գործերի վերաբերյալ հարցումների մասով) և արդարադատության նախարարությունը (օտարերկրյա պետության դատական վարույթում գտնվող գործերի վերաբերյալ հարցումների մասով): Այնուհանդերձ, 2004 թվականից ի վեր գլխավոր դատախազությունը չի ստացել կամ կատարել ՓԼ կամ ԱՖ առնչվող փոխադարձ իրավական օգնության որևէ հարցում:

6.3.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

- Կանխարգելիչ և բռնագրավման միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները պետք է վերացվեն, քանի որ դրանք կարող են սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: Օրինակ, իշխանությունները պետք է հնարավորություն ունենան բռնագրավել ցանկացած նախորդող հանցագործության կատարման արդյունքում ձեռք բերված գույքը, կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև՝ առգրավել ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ձեռք բերված գույքին կամ կատարման համար

օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք այլ գույք,

- ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, ինչպես նաև՝ ապահովելու նման տվյալներ ստանալու վերաբերյալ փոխադարձ իրավական օգնության հարցումների լիարժեք կատարման հնարավորությունը,
- Հստակեցնել, թե արդյոք փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու համար պահանջվում է «կրկնակի քրեականացում»՝ պարզելու համար, թե արդյոք ՓԼ և ԱՖ հանցագործությունների կապակցությամբ թիվ 1 և 2 հանձնարարականների, ինչպես նաև II հատուկ հանձնարարականի վերլուծությունների մեջ նշված թերությունները կարող են սահմանափակել որոշակի իրավիճակներում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը, ներառյալ, մասնավորապես, իրավաբանական անձանց դեմ իրականացվող վարույթներում փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու կարողությունը:

6.3.3. Համապատասխանությունը թիվ 36 - 38 հանձնարարականներին և V հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.6.3-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.36	Մասամբ համապատասխանում է	• Կանխարգելիչ և բռնագրավման միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները կարող են նաև սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու հարցում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • «Կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը կարող է սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը՝ հաշվի առնելով, որ ՓԼ հանցագործությունների մասով թերություններ են հայտնաբերվել իրավաբանական անձանց ներգրավմամբ իրականացվող քրեական վարույթների շրջանակում կատարվող հարցումների առնչությամբ:
Հ.37	Հիմնականում համապատասխանում է	• Չնայած որ օրենքով նման պահանջ չի նախատեսվում, ՓԻՕ ցանկացած տեսակ պրակտիկայում կարող է տրամադրվել միայն «կրկնակի քրեականացման» առկայության դեպքում: (Բաղադրյալ գնահատական)
Հ.38	Մասամբ համապատասխանում է	• Կանխարգելիչ և բռնագրավման միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները կարող են նաև սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու հարցում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • «Կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը կարող է սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը՝ հաշվի առնելով, որ ՓԼ հանցագործությունների մասով թերություններ են հայտնաբերվել իրավաբանական անձանց ներգրավմամբ իրականացվող քրեական վարույթների շրջանակում կատարվող հարցումների առնչությամբ:

ՀՀ.V	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• Կանխարգելիչ միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները կարող են նաև սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու հարցում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • «Կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը կարող է սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը՝ հաշվի առնելով ԱՖ հանցագործությունների մասով հայտնաբերված թերությունները: (Բաղադրյալ գնահատական)

6.4. Անձի հանձնումը (Հ.37, 39, ՀՀ.V)

6.4.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

997. Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է անձի հանձնում երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա, ինչպես նաև կոնկրետ դեպքերում՝ ըստ հայեցողության:

998. Հանձնման գործընթացը կանոնակարգվում է ՔԴՕ-ի 479-րդ և 487-499-րդ, ինչպես նաև ՔՕ-ի 16-րդ հոդվածով: Հանձնման վերաբերյալ բոլոր դրույթները հավասարապես կիրառելի են բոլոր հանցագործությունների, ներառյալ՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նկատմամբ:

«Կրկնակի քրեականացումը» և հանձնումը (չ. 37.1 և 37.2)

999. Քրեական դատավարության օրենսգրքի 487-րդ հոդվածով նախատեսվում է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով: Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար անձը դատապարտվել է ազատազրկման վեց ամսից ոչ պակաս ժամկետով:

1000. Ուստի, հանձնման համար պահանջվում է «կրկնակի քրեականացում»: Որպեսզի իշխանությունները կարողանան պարզել «կրկնակի քրեականացման» առկայությունը, քրեական դատավարության օրենսգրքի 489-րդ հոդվածով օտարերկրյա պետությունից պահանջվում է ներկայացնել արարքի փաստական հանգամանքների նկարագրությունը և խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքի բնագիր տեքստը, որի հիման վրա այդ արարքը համարվում է հանցագործություն: Եթե դատապարտյալն արդեն իսկ կրել է պատժի մի մասը, ապա օտարերկրյա պետության խնդրանքը պետք է տվյալներ պարունակի նաև դրա մասին:

1001. Ինչպես և ՓԻՕ այլ խնդրանքների դեպքում, հանձնման խնդրանքներն ԱԳՆ-ի կողմից ուղարկվում են արդարադատության նախարարությանը, եթե խնդրանքը վերաբերում է դատական քննության փուլում գտնվող կամ արդեն դատապարտված անձի, կամ գլխավոր դատախազությանը, եթե հանձնման խնդրանք է ներկայացվել համապատասխան օտարերկրյա պետությունում քրեական հետապնդման ենթարկվող անձի վերաբերյալ: Երկու դեպքերում էլ կայացվող որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ դատարան:

1002. Եվ արդարադատության նախարարության, և գլխավոր դատախազության ներկայացուցիչները նշեցին, որ «կրկնակի քրեականացման» առկայության պահանջի բավարարված լինելը որոշելիս հաշվի են առնվում հանցակազմի տարրերը: Այնուհանդերձ, օտարերկրյա պետության և Հայաստանի օրենքների մեջ հանցագործության անվանման/դասակարգման տեխնիկական տարբերությունները չեն կարող խոչընդոտել անձի հանձնումը:

Փողերի լվացման հանցագործության համար անձի հանձնում նախատեսելը (չ. 39.1).

1003. Քրեական դատավարության օրենսգրքի 487-րդ հոդվածով հանցագործությունների տարբեր տեսակները տարբերակված չեն: «Կրկնակի քրեականացման» առկայության դեպքում քրեական բոլոր հանցագործությունների, ներառյալ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համար նախատեսված է անձի հանձնում:

1004. ՔԴՕ-ի 488-րդ հոդվածի համաձայն, հանձնման մասին խնդրանքը ենթակա է մերժման, եթե այն ստանալու պահին.

- Խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության տարածքում քրեական հետապնդում չի կարող հարուցվել, կամ դատավճիռը չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով,

- Խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը: Իշխանությունները նշեցին, որ նախկինում հանձնման խնդրանքները մերժելու հիմնական պատճառը հենց սա է եղել,

- Հանձնման դեպքում, տվյալ օտարերկրյա պետության օրենքներին համապատասխան, կարող է նշանակվել մահապատիժ, և այդ պետությունը բավարար երաշխիքներ չի տալիս առ այն, որ հանձնելու դեպքում այդպիսի պատիժ չի նշանակվի և չի կիրառվի:

1005. Ավելին, Հայաստանը կարող է սեփական հայեցողությամբ մերժել հանձնումը, եթե անձը, որի հանձնելը հայցվում է, Հայաստանում ձեռք է բերել քաղաքական ապաստանի իրավունք, հանձնել հայցող պետության կողմից հետապնդվում է քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով, հետապնդվում է խաղաղ ժամանակ զինվորական հանցագործություն կատարելու համար, կամ տվյալ հանցագործությունը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

1006. ՔՕ-ի 16-րդ հոդվածում վերստին ընդգծվում են ՔԴՕ-ի 488-րդ հոդվածի որոշ դրույթներ՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն այլ պետության չեն հանձնվում, և որ ոչ ոք չպետք է հանձնվի օտարերկրյա այն պետությանը, որտեղ լուրջ վտանգ կա, որ նրան կարող են սպառնալ խոշտանգումներ կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ:

1007. ՔԴՕ-ի 489-րդ հոդվածում նշվում են այն տվյալները, որոնք պետք է պարունակի հանձնման մասին խնդրանքը, ներառյալ հանձնման համար հայցվող անձի անունը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կոնկրետ արարքի փաստական հանգամանքների նկարագրությունը, անձի կալանավորման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման հաստատված պատճենը, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասի չափը: Նախատեսված է խնդրանքի մեջ առկա ձևական թերությունները շտկելու հնարավորություն: Խնդրանքի համապատասխանությունը ձևական պահանջներին վերանայում են, ըստ ենթակայության, արդարադատության նախարարությունը կամ գլխավոր դատախազությունը:

1008. Հանձնման կոնկրետ խնդրանքի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո ՔԴՕ-ի 495-րդ հոդվածով պահանջվում է համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնին, որի հանձնման մասին խնդրանքը բավարարվել է, տեղյակ պահել անձի փաստացի հանձնման ժամանակի և տեղի մասին: Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմինը հանձնման ենթակա անձին չի ընդունում ծանուցմամբ սահմանված ժամկետից հետո՝ 15 օրվա ընթացքում, ապա այդ անձը, եթե նա մինչ այդ կալանավորված է եղել, ազատվում է կալանքից:

1009. ՔՕ-ի 16-րդ և ՔԴՕ-ի 490-րդ հոդվածների համաձայն, հանցանք կատարած անձին հանձնելուց հրաժարվելու դեպքում օտարերկրյա պետության տարածքում կատարված

հանցագործությունների համար քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

1010. ՔԴՕ-ով թույլատրվում է անձին կալանքի վերցնելու մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի կայացրած որոշման հիման վրա կալանավորել անձին հանձնման նպատակով (491-րդ հոդված), իսկ սահմանափակ դեպքերում՝ նույնիսկ նման որոշման բացակայության պարագայում (492-րդ հոդված): Ավելին, օրենսգիրքը պարունակում է նորմեր հանձնելու մասին մի քանի պետություններից ստացված խնդրանքների մասին (494-րդ հոդված), կրկնակի հանձնելու մասին (496-րդ հոդված), ինչպես նաև հանձնումը հետաձգելու և ժամանակավոր հանձնելու մասին (493-րդ հոդված):

Սեփական քաղաքացիներին հանձնելը (չ. 39.2).

1011. Եվ ՔՕ-ի 16-րդ, և ՔԴՕ-ի 488-րդ հոդվածներով արգելվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին այլ պետության հանձնելը:

1012. Ինչպես և բոլոր այլ դեպքերում, երբ հանձնումը մերժվում է հայցվող անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու հիմքով, ՔՕ-ի 16-րդ, և ՔԴՕ-ի 488-րդ հոդվածներով պահանջվում է հանձնելուց հրաժարվելու դեպքում օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցագործությունների համար քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Արդարադատության նախարարության ներկայացուցիչները նշեցին, որ նախկինում, երբ իրենք քաղաքացիության հիմքով մերժել են հանձնման խնդրանքները, իշխանությունները միշտ կամք են դրսևորել՝ ներպետական վարույթի կարգով քրեական հետապնդման ենթարկելու անձին: Շատ դեպքերում խնդրանքը ներկայացրած օտարերկրյա պետությունը Հայաստանի իշխանություններին տրամադրել է գործի նյութերը, և Հայաստանում հարուցվել է քրեական հետապնդում:

Համագործակցությունը սեփական քաղաքացիների քրեական հետապնդման շրջանակներում (չ. 39.2(բ)-ի կիրառությունը, չ. 39.3).

1013. Իշխանությունները նշեցին, որ այն դեպքերում, երբ Հայաստանի կողմից խնդրանքը վերոհիշյալ կարգով մերժելու դեպքում գործի նյութերը տրամադրվել են Հայաստանին, Հայաստանը համապատասխան օտարերկրյա պետությունից հայցել է ՓԻՕ՝ ապահովելու անձի քրեական հետապնդումը ներպետական մակարդակով:

Հանձնման գործընթացի իրականացումն առանց անհարկի ձգձգումների (չ. 39.4).

1014. Չկան ֆորմալ ընթացակարգեր, որոնք կապահովեին հանձնման մասին ստացվող խնդրանքները բավարարել արդյունավետորեն և առանց ձգձգումների: Այնուհանդերձ, իշխանությունները նշեցին, որ պրակտիկայում հանձնման մասին խնդրանքները քննարկվում և լուծվում են ստացման պահից հետո մեկ ամսվա ընթացքում:

Լրացուցիչ տարրը (Հ.39). հանձնման պարզեցված ընթացակարգերի գոյությունը (չ. 39.5), լրացուցիչը տարրը՝ ՀՀ.V-ի համաձայն (չ. 39.5-ի կիրառությունը Հ.39-ի շրջանակում, չ.V.8)

1015. Չկան հանձնման պարզեցված ընթացակարգեր, որոնցով կթույլատրվեր հանձնման դիմումների ուղղակի փոխանցումը նախարարությունից համապատասխան նախարարություն: Գոյություն չունեն հանձնելուն չառարկող անձանց հանձնման պարզեցված ընթացակարգեր այն դեպքերի համար, որոնցում այդ անձինք չեն պահանջում իրենց նկատմամբ կիրառել հանձնման ֆորմալ ընթացակարգեր: Հայաստանի օրենսդրության համաձայն, հնարավոր չէ անձին հանձնել բացառապես ձերբակալման որոշման կամ դատավճռի հիման վրա:

Արդյունավետությունը.

1016. Հայաստանը ՓԼ կամ ԱՖ առնչվող հանձնման խնդրանքներ չի ստացել կամ ուղարկել:

6.4.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

1017. Վերացնել ԱՖ հանցագործությունների սահմանումների թերությունները, որպեսզի «կրկնակի քրեականացման» պահանջը չսահմանափակի ԱՖ գործերով անձանց հանձնելու՝ Հայաստանի կարողությունը:

6.4.3. Համապատասխանությունը թիվ 37 և 39 հանձնարարականներին, ինչպես նաև V հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.6.4-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.39	Համապատասխանում է	
Հ.37	Հիմնականում համապատասխանում է	(Բաղադրյալ գնահատական)
ՀՀ.V	Մասամբ համապատասխանում է	• Հաշվի առնելով հանձնման համար նախատեսված՝ «կրկնակի քրեականացման» պահանջը, ԱՖ հանցագործության առնչությամբ արձանագրված թերությունները, որոնք ներկայացվել են II հատուկ հանձնարարականին նվիրված բաժնում, կարող են սահմանափակել որոշակի իրավիճակներում անձանց հանձնելու՝ Հայաստանի կարողությունը: (Բաղադրյալ գնահատական)

6.5. Միջազգային համագործակցության այլ ձևերը (Հ.40 և ՀՀ.V)

Միջազգային համագործակցության հնարավորինս լայն շրջանակը (չ. 40.1)

6.5.1. Նկարագրություն և վերլուծություն

Իրավական դաշտը.

1018. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ լիազոր մարմինը (ՖԴԿ-ն) և պետական մարմինները համագործակցում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար իրականացնող միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների (այդ թվում՝ ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների) հետ միջազգային պայմանագրերի շրջանակներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային պրակտիկայում ընդունված կարգով:

Միջազգային համագործակցության հնարավորինս լայն շրջանակը (չ. 40.1), օգնության ցուցաբերումն արագորեն, կառուցողաբար և արդյունավետորեն (չ. 40.1.1), տեղեկատվության փոխանակման հստակ և արդյունավետ ուղիները (չ. 40.2).

ՖԴԿ

1019. ՖԴԿ-ն՝ որպես «Էգմոնտ» խմբի ակտիվ անդամ, համագործակցում է օտարերկրյա ՖՀՄ-ների հետ: Չնայած այն փաստին, որ ՖԴԿ-ի և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև համագործակցության համար «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածով համագործակցության համաձայնագրերի առկայություն չի պահանջվում, ՖԴԿ-ն 2008 թվականից նախաձեռնել է նման համաձայնագրերի կնքման գործընթաց: 2008 թվականի առաջին 10 ամիսների ընթացքում նման համաձայնագրեր են կնքվել Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի և Վրաստանի ՖՀՄ-ների հետ: 2008 թվականին ՖԴԿ-ն ՀՀ կառավարության որոշմամբ նշանակվել է որպես Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, խուզարկության, առգրավման և բռնագրավման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով (Վարշավայի կոնվենցիա) նախատեսված կենտրոնական մարմին, որը Կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն պատասխանատու է Կոնվենցիայի շրջանակներում հարցումներ ստանալու և դրանց պատասխանելու համար:

1020. «Էգմոնտ» խմբին անդամակցելուց հետո (2007 թ. մայիս) աճել է ՖԴԿ-ի և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև փոխանակվող տեղեկատվության ծավալը: Հետևյալ աղյուսակը պարունակում է մանրակրկիտ վիճակագրություն փոխանակվող տեղեկատվության վերաբերյալ.

	Ստացված հարցումների թիվը	Պատասխանված հարցումների թիվը	Ուղարկված հարցումների թիվը
2007	18[49]	18	17[50]
2008 (առաջին 10 ամիսներ)	18[51]	18	15[52]

[49] Հարցումները ստացվել են Ուկրաինայից, Ռուսաստանի Դաշնությունից, Լյուքսեմբուրգից, Վենեսուելայից, Լիբանանից, Լիբիայից, Խորվաթիայից, Մակեդոնիայից, Գվատեմալայից և Լիտվայից:

[50] Հարցումները ստացվել են Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Հունգարիայից, ԱՄՆ-ից, Գվատեմալայից, Ալբանիայից, Մակեդոնիայից, Ֆրանսիայից, Սերբիայից, Քատարից և Թայլանդից:

[51] Հարցումներն ուղարկվել են Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Լյուքսեմբուրգ, Կանադա, Էստոնիա և Լիտվա:

1021. Իշխանությունները նշեցին, որ տեղեկատվության հարցումները պատասխանվել են միջինը եռօրյա ժամկետում, եթե հարցմանը պատասխանելու համար չի պահանջվել լրացուցիչ հարցումներ ուղարկել ներպետական կամ այլ իրավասու մարմիններին: Նշված լրացուցիչ հարցումների կատարման համար պահանջվել է միջինը մեկամսյա ժամկետ: ՖԴԿ-ում առկա փաստաթղթերի ընտրանքային ստուգմամբ այդ փաստը հաստատվեց:

Վերահսկող մարմինները

1022. ՀՀ ԿԲ-ն՝ որպես ֆինանսական հատվածի միասնական վերահսկող, ի վիճակի է կնքված հուշագրերի և համաձայնագրերի հիման վրա օտարերկրյա գործընկեր մարմիններին տրամադրել միջազգային համագործակցության հնարավորինս լայն շրջանակ:

1023. «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 5-րդ հոդվածով ՀՀ ԿԲ-ի խնդիրների թվարկման մեջ նախատեսվում է, որ ՀՀ ԿԲ-ն «իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին»: «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 8-րդ հոդվածով նախատեսվում է նաև, որ ՀՀ ԿԲ-ն իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային ֆինանսական կազմակերպություններում, միջազգային և օտարերկրյա բանկերում, ինչպես նաև այլ երկրների կենտրոնական և այլ բանկերի հետ հարաբերություններում, օրենքով սահմանված կարգով կնքում է միջազգային պայմանագրեր:

1024. Նույն հոդվածով նախատեսվում է նաև, որ ՀՀ ԿԲ-ն իրավունք ունի համագործակցելու արժեթղթերի շուկայի օտարերկրյա կարգավորողների հետ: Այդ համագործակցությունը ներառում է կարգավորման առարկային վերաբերող տեղեկություններ հայթայթելն ու փոխանակելը, ինչպես նաև նման տեղեկություններ ստանալուն աջակցելը: ՀՀ ԿԲ-ն իրավունք ունի օրինական հիմքով իր տիրապետմանն անցած տեղեկությունները փոխանցելու այդ մարմիններին՝ պայմանով, որ դրանց փոխանցումն օրենքին չի հակասում, փոխանցումից հետո կպահպանվի դրանց՝ օրենքով սահմանված գաղտնիության ռեժիմը, և այդ տեղեկությունները կօգտագործվեն բացառապես օրենքի խախտումները կանխելու կամ հետապնդելու նպատակով: Նման համագործակցության նպատակով ՀՀ ԿԲ-ն իրավունք ունի ստեղծելու տեղեկատվության փոխանակման համակարգեր կամ իր անունից մասնակցելու դրանց, մասնավորապես, ստորագրելու հուշագրեր և այլ համաձայնագրեր, որոնք ընդամենը կսահմանեն փոխանակման ենթակա տեղեկությունների կազմը, դրանց փոխանակման կարգն ու պայմանները:

1025. ՀՀ ԿԲ-ի իրավասու ստորաբաժանումները նշեցին, որ համագործակցության հուշագրեր ստորագրել են հետևյալ կենտրոնական բանկերի հետ.

Կենտրոնական բանկ	Փոխըմբռնման հուշագրի ստորագրման ամսաթիվը	Հուշագիրը նախատեսում է համագործակցություն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հարցերով	Հուշագիրը նախատեսում է համագործակցություն բանկային գործունեության ոլորտում	Հուշագիրը նախատեսում է համագործակցություն արժեթղթերի ոլորտում*	Հուշագիրը նախատեսում է համագործակցություն ապահովագրական ոլորտում

[52] Հարցումներն ուղարկվել են Լիտվա, Էստոնիա, ԱՄՆ, Բելառուս, Ուկրաինա, Հունգարիա, Թայլանդ, Դանիա, Գերմանիա, Բելգիա, Բրիտանիայի Վիրգինյան Կղզիներ, Հարավային Աֆրիկայի Հանրապետություն և Ավստրալիա:

Եգիպտոս	2002 թ. հոկտ.	-	√	-	-
Լիբանան	2002 թ. դեկտ.	-	√	-	-
Ռուսաստան	2003 թ.		√	-	
Վրաստան	2004 թ. սեպտ.	√	√	-	-
Ուկրաինա	2004 թ.	-	√	-	-
Կիպրոս	2006 թ. ապրիլ	-	√	-	-
Իրան	2008 թ. օգոստ. և 2009 թ. ապրիլ	√	√	√	√

* Իշխանությունները նշեցին, որ 2004 թվականին Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովը դարձել է Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության սովորական անդամ: Այնուհետ, «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» օրենքի համաձայն, արժեթղթերի շուկայի նկատմամբ վերահսկողության՝ Արժեթղթերի հանձնաժողովի լիազորությունները ՀՀ ԿԲ-ին փոխանցելու արդյունքում, ՀՀ ԿԲ-ն համարվում է Արժեթղթերի հանձնաժողովի իրավահաջորդը: Ուստի, Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության սովորական անդամի կարգավիճակ այժմ ունի ՀՀ ԿԲ-ն:

1026. Իշխանությունների տրամադրած փոխըմբռնման հուշագրերի տեքստերի ուսումնասիրությամբ բացահայտվեց, որ այդ հուշագրերի մեծ մասը պարունակում է ընդհանուր բնույթի ձևակերպումներ՝ հիմնականում ուշադրություն դարձնելով բանկային գործունեության ոլորտում գործընկեր կառույցների հետ տեղեկատվության փոխանակմանը և համագործակցության խորացմանը, այդ թվում՝ լիցենզավորման, վերահսկողության և թղթակցային հաշիվների բացման գործընթացներում: Միայն Վրաստանի և Իրանի կենտրոնական բանկերի հետ կնքված փոխըմբռնման հուշագրերն են ուղղակիորեն անդրադառնում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկողական տեղեկատվության փոխանակմանը: Այնուամենայնիվ, Վրաստանի պարագայում «վերահսկողական տեղեկատվությունը» չի ներառում հաճախորդների գործարքների, հաշիվների և ավանդների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև պետական կամ բանկային գաղտնիք կազմող այլ տեղեկատվությունը: Իրանի պարագայում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկողական տեղեկատվության փոխանակումը կապված է անդրսահմանային հաստատությունների գործունեության հետ: Այնուհանդերձ, ՀՀ ԿԲ-ի պաշտոնատար անձինք տրամադրեցին մի շարք դեպքերի վիճակագրական տվյալներ (տես աղյուսակը՝ ստորև), որոնց շրջանակում ՀՀ ԿԲ-ն պատասխանել է օտարերկրյա իրավասու մարմինների ներկայացրած՝ օգնության հարցումներին (չնայած որ գնահատողներին չտրամադրվեցին օտարերկրյա գործընկեր կառույցներին ուղարկված տեղեկությունների փաստացի մանրամասները):

1027. 2006, 2007 և 2008 թվականների ընթացքում ՀՀ ԿԲ-ն ստացել է տեղեկատվության տարբեր հարցումներ մի շարք պետություններից, որոնք ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Տարի	Ստացված հարցումների թիվը	Ոլորտ (բանկային գործունեություն, արժեթղթեր, ապահովագրություն, այլ ոլորտ)	Հարցման/ տեղեկատվության տեսակը	Չեռնարկված միջոցառումը
2008	3	Բանկեր	Հաճախորդի մասին տեղեկություններ	Չեռնարկված միջոցառման վերաբերյալ տվյալներ չկան
2007	2	Բանկեր	Կոնկրետ հաճախորդի մասին տեղեկություններ	Չեռնարկված միջոցառման վերաբերյալ տվյալներ չկան
2006	3	Բանկեր	Ստուգվել են թղթակցային հաշիվների մնացորդները, միջբանկային վարկավորման	Չեռնարկված միջոցառման վերաբերյալ տվյալներ չկան

			գործունեությունը	

Իրավապահ մարմիններ

Պետական եկամուտների կոմիտե

1028. Մաքսային ծառայություն. փոխադարձ իրավական օգնության ֆորմալ շրջանակից դուրս, Հայաստանի մաքսային մարմինները կարող են իրենց օտարերկրյա գործընկերների հետ համագործակցել փոխըմբռնման հուշագրերի հիման վրա: Գնահատողների այցի դրությամբ օտարերկրյա գործընկեր կառույցների հետ կնքվել էին փոխըմբռնման 13 երկկողմ հուշագրեր, որոնցից բոլորով նախատեսվում էր տեղեկատվության ուղղակի փոխանակման հնարավորությունը:

1029. Հարկային ծառայություն. Հայաստանի հարկային մարմինը 30 պետությունների հետ կնքել է կրկնակի հարկման մասին համաձայնագրեր, որոնց հիման վրա կարող է իրականացվել տեղեկատվության ուղղակի փոխանակում: Բացի այդ, հարկային մարմինը փոխըմբռնման մի շարք երկկողմ հուշագրեր է կնքել այլ պետությունների հետ, որոնց հիման վրա կարող է իրականացվել տեղեկատվության փոխանակում իր իրավասությանը վերաբերող օպերատիվ գործունեության կամ հանցագործությունների քննության ընթացքում:

Ոստիկանություն

1030. Փոխադարձ իրավական օգնության ֆորմալ համակարգից զատ, Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն Ինտերպոլի միջազգային կապի ցանցի միջոցով ուղղակիորեն ներկայացնում է հարցումներ և տրամադրում տեղեկատվություն օտարերկրյա գործընկերներին: Իշխանությունները նշեցին, որ ցանցը նախկինում օգտագործվել է փողերի լվացման գործերին առնչվող տեղեկատվության ուղղակի փոխանակման նպատակով:

1031. Ստորև բերվում է Ինտերպոլի Հայաստանի բյուրոյի միջոցով փոխանակված տեղեկատվության վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Պատասխանները տրվել են միջինը 10 օրվա ընթացքում (հրատապ դեպքերում՝ 1 օրվա):

	Ստացված հարցումների թիվը	Պատասխանված հարցումների թիվը	Ուղարկված հարցումների թիվը
2005	0	0	2
2006	5	5	4
2007	3	3	0
2008 (առաջին 10 ամիսներ)	1	1	0

Տեղեկատվության փոխանակումը սեփական նախաձեռնությամբ (չ. 40.3).

ՖԴԿ

1032. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ լիազոր մարմինը (ՖԴԿ) փոխադարձության հիման վրա, սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, փոխանակում է տեղեկատվություն ՓԼ/ԱՖ կասկածելի դեպքերի, ինչպես նաև նախորդող հանցագործությունների վերաբերյալ:

Վերահսկող մարմիններ

1033. Պաշտոնատար անձինք նշեցին, որ ՀՀ ԿԲ-ն իրավասու է տեղեկատվություն փոխանակել թե սեփական նախաձեռնությամբ, թե հարցման հիման վրա: Ըստ երևույթին, օտարերկրյա գործընկերների հետ տեղեկատվության փոխանակման ճանապարհին էական

խոչընդոտներ/մարտահրավերներ չկան: Տրամադրված վիճակագրական տվյալները վկայում են, որ 2006 թվականից ի վեր համագործակցության մի քանի ծրագրեր են իրականացվել, չնայած որ ՀՀ ԿԲ-ի իրավասու ստորաբաժանումները նշեցին, որ ՓԼ/ԱՖ հետ կապված խնդիրները սովորաբար ուղղորդվել են ՖԴԿ-ի միջոցով և ուղարկվել Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից, եթե համակարգի ֆինանսական հաստատություններից պահանջվել են փաստաթղթեր:

Իրավապահ մարմիններ

1034. Թե ոստիկանությունը, թե մաքսային և հարկային մարմինները կարող են սեփական նախաձեռնությամբ տեղեկատվություն փոխանակել իրենց գործընկերների հետ:

Օտարերկրյա գործընկերների անունից արվող հարցումները (չ. 40.4), օտարերկրյա գործընկերների անունից հարցումներ անելու՝ ՖՀՄ-ի իրավասությունը (չ. 40.4.1).

1035. Չնայած որ չկա կոնկրետ նորմ, որը ՖԴԿ-ին իրավունք կվերապահեր հարցումներ անել օտարերկրյա գործընկերների անունից, նման լիազորություն բխում է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածից, որով սահմանվում են օտարերկրյա գործընկերների հետ տեղեկատվություն, ներառյալ՝ գաղտնիք համարվող տեղեկատվություն փոխանակելու՝ ՖԴԿ-ի լիազորությունները: ՖԴԿ-ն կարող է օտարերկրյա գործընկերոջ անունից որոնում կատարել տվյալների իր շտեմարանում, ինչպես նաև՝ իրեն հասանելի այլ շտեմարաններում (նկարագրված են թիվ 26 հանձնարարականի վերլուծության շրջանակում):

1036. «ՀՀ ԿԲ-ի մասին» օրենքի 5-րդ հոդվածը (որը կարելի է տարածել նաև ՖԴԿ-ի նկատմամբ, քանի որ վերջինս ՀՀ ԿԲ-ի մաս է կազմում) ՀՀ ԿԲ-ին իրավունք է վերապահում՝ հարցումներ անելու օտարերկրյա գործընկերների անունից:

Օտարերկրյա մարմինների անունից քրեական հետապնդում իրականացնելը (չ. 40.5).

1037. Ինտերպոլի ուղիներով այլ պետությունների ոստիկանական մարմինների կողմից ՀՀ ոստիկանությանը հասցեագրված հարցումները հնարավորություն են ընձեռում տեղեկատվություն կամ օպերատիվ տվյալներ փոխանակել, սակայն ոչ՝ քննչական կամ հարկադրանքի գործողություններ կատարել: Նմանօրինակ գործողություններ կարող են կատարվել միայն ՓԻՕ հարցումների հիման վրա:

1038. ՔԴՕ-ի 474-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության դատարանների, դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների հանձնարարությամբ կամ խնդրանքով (այսուհետ՝ հարցումով) օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և ՔԴՕ-ով նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումը, ինչպես նաև օտարերկրյա պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում ՔԴՕ-ով նախատեսված դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այդ պայմանագրերով և ՔԴՕ-ով սահմանված կարգով: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համագործակցել միջազգային իրավապահ կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների հետ:

Տեղեկատվության փոխանակման նկատմամբ անհամաչափ կամ անհարկի սահմանափակումների կիրառության բացառումը (չ. 40.6).

Տեղեկատվության փոխանակումը, որը կանոնակարգվում է օրենքով (ՖԴԿ-ի պարագայում՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդված, ԱԱԾ-ի պարագայում՝ «Կենտրոնական բանկի մասին» օրենքի 8-րդ հոդված և «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 18-րդ հոդված) չի նախապայմանավորվում անհամաչափ կամ անհարկի սահմանափակումներով:

Օգնության տրամադրումը՝ անկախ հարկաբյուջետային խնդիրների հնարավոր առկայությունից (չ. 40.7).

1039. Հայաստանի օրենսդրությամբ չի բացառվում կամ արգելվում տեղեկատվության տրամադրումը հարկային խնդիրների առկայության դեպքում: Օգնության նկարագրված ձևերը կարող են տրամադրվել, և նախկինում փաստացի տրամադրվել են Հայաստանի իշխանությունների կողմից նույնիսկ հարկաբյուջետային խնդիրների առկայության պարագայում:

Օգնության տրամադրումը՝ անկախ գաղտնիության և կոնֆիդենցիալության մասին օրենքների գոյությունից (չ. 40.8).

1040. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ՖԴԿ-ն կարող է փոխադարձության կարգով տրամադրել նաև գաղտնիք պարունակող տեղեկություններ: Այնուհանդերձ, մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկությունների առնչությամբ արձանագրված թերությունները կարող են սահմանափակել նման տեղեկություններ տրամադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը: Բացի այդ, ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ ստանալու՝ իրավապահ մարմինների կարողության վերաբերյալ նշված թերությունները (տես թիվ 3 և 28 հանձնարարականներին նվիրված բաժինները) կարող են սահմանափակել այդպիսի տեղեկություններ տրամադրելու՝ իրավապահ մարմինների կարողությունը:

Փոխանակված տեղեկատվության օգտագործման հետ կապված երաշխիքները (չ. 40.9).

1041. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, լիազոր մարմինը (ՖԴԿ) իրավասու չէ որևէ երրորդ անձի բացահայտելու, ինչպես նաև քրեական հետապնդման, վարչական կամ դատական նպատակներով օգտագործելու կամ տրամադրելու ստացված տեղեկատվությունն առանց տեղեկատվությունը տրամադրած օտարերկրյա մարմնի նախնական համաձայնության:

1042. Իրավապահ մարմինների նկատմամբ նույնպես տարածվում են տեղեկատվության օգտագործման նկատմամբ կիրառելի գաղտնիության պահանջները:

Լրացուցիչ տարրը. ոչ նույնաբնույթ մարմինների միջև տեղեկատվության փոխանակումը (չ. 40.10 և չ. 40.10.1).

Լրացուցիչ տարրը. օտարերկրյա ՖՀՄ-ի հարցման համաձայն տեղեկատվության տրամադրումը ՖՀՄ-ին այլ իրավասու մարմինների կողմից (չ. 40.11)

1043. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածով ՖԴԿ-ին իրավունք է վերապահվում՝ պետական, այդ թվում՝ վերահսկող և քրեական հետապնդման մարմիններից պահանջելու տեղեկություններ, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ: Նշված իրավունքը կարող է օգտագործվել օտարերկրյա ՖՀՄ-ի հարցման համաձայն անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով:

Լրացուցիչ տարրը՝ ՀՀ.V-ի համաձայն (չ. 40.10-40.11-ի կիրառությունը Հ.40-ի շրջանակում, չ. V.9).

1044. Վերը նկարագրված իրավական դրույթները և լիազորությունները կիրառելի են նաև ԱՖ պարագայում:

6.5.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

1045. Իշխանություններին առաջարկվում է.

- Հստակեցնել մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը, որոնք կարող են սահմանափակել տեղեկություններ ստանալու կամ տեղեկությունների տրամադրում պարտադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը,

- ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմինները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:

6.5.3. Համապատասխանությունը թիվ 40 հանձնարարականին և V հատուկ հանձնարարականին

	Գնահատականը	Ընդհանուր գնահատականը պայմանավորող և չ.6.5-ին առնչվող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.40	Հիմնականում համապատասխանում է	• Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերը սահմանափակում են տեղեկություններ տրամադրելու՝ իրավապահ մարմինների կարողությունը: • Մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը կարող են սահմանափակել տեղեկություններ տրամադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը:
ՀՀ.V	Մասամբ համապատասխանում է	• Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • Մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը կարող են սահմանափակել տեղեկություններ տրամադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը: (Բաղադրյալ գնահատական)

7. ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

7.1. Ռեսուրսներ և վիճակագրություն

1046. Թիվ 30 և 32 հանձնարարականների գործոնները և բաղադրյալ գնահատականները ներկայացված են ստորև:

7.1.1. Նկարագրություն և վերլուծություն

Ռեսուրսները

1047. ՖՀՄ-ի ռեսուրսների վերլուծության վերաբերյալ տես թիվ 26 հանձնարարականի վերլուծությունը:

Իրավապահ մարմիններ

1048. Ինչպես ներկայացվեց սույն հաշվետվության 1.12. բաժնում, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննությանը և քրեական հետապնդմանը մասնակից բոլոր իրավապահ մարմինները (ոստիկանություն, պետական եկամուտների կոմիտե, ազգային անվտանգության ծառայություն, գլխավոր դատախազություն) կարծես ապահովված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրենց լիազորությունները լիարժեքորեն և արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ կադրային և տեխնիկական ռեսուրսներով: Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ներկայացվում են անաչառության բարձր պահանջներ, և իրավապահ մարմինների մեծ մասի համար անցկացվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով ուսուցման դասընթացներ, այդ թվում՝ նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Այնուհանդերձ, ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության աշխատակիցները կոնկրետ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով ուսուցումների, սեմինարների կամ վերապատրաստման դասընթացների չեն մասնակցել, որը զարմանալի է՝ հաշվի առնելով, որ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունները քննելու բացառիկ իրավասությունը վերապահված է ԱԱԾ-ին: Ավելին, մաքսային մարմնի հետաքննության և նախաքննության վարչության աշխատակիցներին անհրաժեշտ են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կոնկրետ թեմաներով վերապատրաստումներ:

1049. Մաքսային մարմնի ռեսուրսները համարվում են բավարար, սակայն արժույթի և վճարային արժեթղթերի անդրսահմանային տեղափոխման մոնիտորինգի և հայտնաբերման վերաբերյալ գիտելիքները և պրակտիկան համարվում են խիստ թերի, որի մասին են վկայում հայտարարագրերի թվաքանակը և կանոնների խախտումների համար ձեռնարկված միջոցները: Ավելին, ՓԼ և ԱՖ առնչությամբ ստացված տվյալների արդյունավետ վերլուծություն իրականացնելու համար կարող է պահանջվել մաքսային մարմնի վերլուծական վարչության աշխատակիցների մասնագիտական գիտելիքների հետագա կատարելագործում:

Ֆինանսական վերահսկողներ.

1050. ՀՀ ԿԲ-ի ֆինանսական վերահսկողության վարչությունում ներկայումս աշխատում է 75 վերահսկող, ներառյալ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների 2 վերահսկողներ: Բոլոր վերահսկողները մասնակցել են ՓԼ դեմ պայքարի թեմայով ՖԴԿ-ի կազմակերպած դասընթացների: Վերահսկողներից ոմանք մասնակցել են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ԱՄՆ-ի դեսպանատան և ՖԱԹՖ-ի/ՖՏՏՄ-ների հովանավորությամբ անցկացված այլ սեմինարների և դասընթացների: ՀՀ ԿԲ-ի բոլոր աշխատակիցների նկատմամբ տարածվում են և օրենքով, և նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերով նախատեսված գաղտնիության ստանդարտները:

1051. Հետևյալ աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի վերահսկողության վարչության վերահսկողների թիվը և նրանց կողմից վերահսկվող տարբեր ֆինանսական հաստատությունների թվաքանակը.

Ֆինանսական հաստատության տեսակ	Վերահսկողների թիվը
Բանկեր	37
Արժեթղթերի ընկերություններ	9

Ապահովագրական ընկերություններ	8
Վարկային կազմակերպություններ	12
Գրավատներ	0
Արտարժույթի փոխանակման կետեր	6
Դրամական փոխանցումներ իրականացնողներ	3
Ընդամենը	75

Ծանոթագրություն. ՀՀ ԿԲ-ի ՖՎՎ-ն պատասխանատու է նաև գրավատների նկատմամբ վերահսկողության համար:

1052. Հաշվի առնելով ՀՀ ԿԲ-ի վերահսկողության վարչության պատասխանատվության ներքո գործող ֆինանսական հաստատությունների թիվը, տպավորություն է ստեղծվում, որ անհրաժեշտ են լրացուցիչ կադրային ռեսուրսներ, հատկապես վարկային կազմակերպությունների, արտարժույթի փոխանակման կետերի, դրամական փոխանցումներ իրականացնողների և ապահովագրական ընկերությունների մասով պատասխանատու վերահսկողների թվի առումով:

ՆՈՖԳՏՄ-ներ վերահսկողներ.

1053. ՆՈՖԳՏՄ-ներ լիցենզավորող և վերահսկող իրավասու մարմինների ռեսուրսները համարվում են անբավարար: Կադրային ապահովման մակարդակը ցածր է, իսկ որոշ դեպքերում անհրաժեշտ է կատարելագործել ՓԼ և ԱՖ դեմ պայքարին առնչվող տեխնիկական գիտելիքները և հմտությունները: Փաստաբանները գրանցվում են Փաստաբանների պալատում, սակայն վերջինիս վերապահված չեն լիազորություններ՝ վերահսկելու «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների կատարումը փաստաբանների կողմից, և պալատում չկան համապատասխանության նմանօրինակ վերահսկողության համար անհրաժեշտ համակարգեր, ընթացակարգեր կամ հատուկ այդ խնդիրներով զբաղվող փորձառու աշխատակիցներ:

Վիճակագրություն

1054. ՖԴԿ-ն վարում է համապարփակ վիճակագրական տվյալներ ստացված ԿԳՀ-ների և ՆՇԳՀ-ների վերաբերյալ՝ ըստ ֆինանսական հաստատությունների և ՆՈՖԳՏՄ-ների, ինչպես նաև տվյալներ վերլուծված և տրամադրված ԿԳՀ-ների մասին:

1055. Ընդհանուր առմամբ զգացվում է ֆինանսական հատվածում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետության վերաբերյալ ամբողջական և հիմնավոր վիճակագրական տվյալների անբավարարությունը: Մասնավորապես, չկան ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում անցկացվող վերստուգումների թվի և ստացված արդյունքների վերաբերյալ տվյալներ, հատկապես ՀՀ ԿԲ-ի վերահսկողության վարչությունում: Վիճակագրական որոշ տվյալներ, հատկապես՝ անցկացված վերստուգումների թվի վերաբերյալ տվյալները, կազմվել են գնահատողների խնդրանքով :

1056. Իշխանությունները չեն վարում ՓԼ գործեր հարուցելու իրավասությամբ օժտված տարբեր մարմինների կողմից ԱԱԾ-ին ուղարկված գործերի թվաքանակի վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ վիճակագրական տվյալներ, որը դժվարացնում է ՓԼ քրեական

հետապնդում իրականացնելու կապակցությամբ իրավապահ մարմինների արդյունավետ գործունեության գնահատումը: Այնուհանդերձ, ոստիկանության տեղեկատվական կենտրոնը վարում է ճշգրիտ և լիարժեք վիճակագրություն հարուցված, քննված և դատարան ուղարկված ՓԼ գործերի թվաքանակի վերաբերյալ: Առգրավումներին և բռնագրավումներին առնչվող համապարփակ վիճակագրություն վարում է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը: Մաքսային մարմինը վարում է մանրակրկիտ վիճակագրական տվյալներ և շահագործում է ՀՀ բոլոր մաքսակետերն իրար միացնող ավտոմատացված համակարգ: Ավելին, հավաքվող տվյալները վերլուծելու նպատակով մաքսային մարմինը վերջերս ստեղծել է հատուկ վարչություն, սակայն չկան ՓԼ և ԱՖ գործերին կամ առկա համակարգերի և հսկողական մեխանիզմների արդյունավետությանն առնչվող կոնկրետ վիճակագրական տվյալներ:

1057. ՆՈՖԳՏՄ ոլորտը վերահսկող իրավասու մարմինները նվազագույն վիճակագրական տեղեկություններ են վարում: Տվյալների հավաքման հարցում նրանք կարծես ավելի շատ հենվում են ՖԴԿ-ի վրա, սակայն ՖԴԿ-ից ստացվող տեղեկությունները սահմանափակվում են միայն ԿԳՀ-ների և ՆՇԳՀ-ների թվաքանակի մասին տվյալներով: Հարցազրույցների ընթացքում պարզ դարձավ, որ իրավասու մարմինները տեղյակ չեն ՓԼ կամ ԱՖ գործերով հետաքննությունների, քրեական հետապնդումների կամ մեղադրական դատավճիռների թվաքանակի, առգրավված կամ բռնագրավված գույքի, կամ համագործակցության միջազգային հարցումների մասին: Հաշվի առնելով, որ ՆՈՖԳՏՄ ոլորտի մեծ մասը կամ չի լիցենզավորվում, կամ չի վերահսկվում, ոլորտի մնացած մասի վերաբերյալ վիճակագրական տվյալներ չկան:

7.1.2. Առաջարկություններ և մեկնաբանություններ

Իշխանություններին առաջարկվում է.

- Գտնել և ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ, որոնց միջոցով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակում կապահովվի թե տեղերում անցկացվող ստուգումների, թե փաստաթղթային վերահսկողության համարժեք մակարդակ,

- Դիտարկել ՖԴԿ-ին լրացուցիչ ռեսուրսներ տրամադրելու նպատակահարմարությունը,

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում իրականացնել ԱԱԾ-ի քննչական վարչության պաշտոնատար անձանց, ինչպես նաև մաքսային մարմնի հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցների համար,

- Վարել ճշգրիտ վիճակագրություն:

7.1.3. Համապատասխանություն թիվ 30 և 32 հանձնարարականներին

	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը
Հ.30	**Մասամբ համապատասխանում է**	• ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերահսկողության համարժեք մակարդակ ապահովելու նպատակով վարկային կազմակերպությունների, արտարժույթի փոխանակման կետերի, դրամական փոխանցումներ իրականացնողների և ապահովագրական ընկերությունների մասով անհրաժեշտ են լրացուցիչ կադրային ռեսուրսներ (վերահսկողներ): • ՖԴԿ-ի ապահովված չէ բավարար թվով աշխատակիցներով: • ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում չի իրականացվում ԱԱԾ-ի քննչական վարչության պաշտոնատար անձանց, ինչպես նաև մաքսային մարմնի հետաքննության և

		նախաքննության վարչությունների աշխատակիցների համար:
Հ.32	Չի համապատասխանում	• Լիարժեք և ճշգրիտ վիճակագրական տվյալներ չեն վարվում իրավապահ մարմինների հարուցած կամ ԱԱԾ-ին ուղարկված ՓԼ գործերի թվաքանակի, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից մերժված՝ ՓԼ գործերի թվաքանակի վերաբերյալ: • Ֆինանսական հատվածում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետության վերաբերյալ ամբողջական և հիմնավոր վիճակագրական տվյալներ չկան:

Աղյուսակ 1. ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանության գնահատականները

Քառասուն հանձնարարականները	Գնահատականը	Գնահատականը պայմանավորող գործոնների համառոտ նկարագրությունը[53]
Իրավական համակարգեր		
1. ՓԼ քրեականացումը	**Հիմնականում համապատասխանում է**	• Դեռևս պարզ չէ, թե արդյոք նախորդող հանցագործության համար կայացված մեղադրական դատավճռի առկայությունը պարտադիր պահանջ է գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելն ապացուցելու համար: • ՓԼ քրեական գործերի սակավաթվությունը եկամտաբեր հանցագործությունների հատկանիշներով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվի համեմատ, ինչպես նաև գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար դատարանների կողմից կիրառվող ապացուցման բարձր չափանիշը վկայում են ՓԼ վերաբերյալ քրեաիրավական նորմի կիրառման արդյունավետության խնդրի առկայության մասին:
2. ՓԼ հանցագործությունը. սուբյեկտիվ տարրը և իրավաբանական անձանց պատասխանատվությունը	**Հիմնականում համապատասխանում է**	• Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսված չէ: • Մեղադրական դատավճիռների սահմանափակ թվի պատճառով գնահատողները չկարողացան պարզել, թե արդյոք պատիժները կիրառվում են արդյունավետորեն:
3. Բռնագրավումը և կանխարգելիչ միջոցները	**Մասամբ համապատասխանում է**	• Բռնագրավման մասին դրույթները տարածվում են ՖԱԹՖ-ի նախատեսած նախորդող հանցագործությունների մի մասի, սակայն ոչ բոլորի նկատմամբ: • ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով չի թույլատրվում դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսացող կամ նրանց կողմից տիրապետվող գույքի բռնագրավումը: • ՔԴՕ-ի 233 (1.1.)-րդ հոդվածով չի նախատեսվում ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ դրանց կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք գույքի առգրավման հնարավորությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն սահմանափակում են իրավապահ մարմինների կարողությունը՝ արդյունավետորեն հայտնաբերելու և հետապնդելու այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման, հատկապես նախքան կոնկրետ կասկածյալի ի հայտ գալը, կամ երբ անհրաժեշտ տվյալները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի: • Բռնագրավման մասին դրույթները և կանխարգելիչ միջոցներն ըստ երևույթին արդյունավետորեն չեն իրագործվում այն գույքի նկատմամբ, որը կարող է ենթակա դառնալ բռնագրավման:
Կանխարգելիչ միջոցներ		
4. Գաղտնիության մասին օրենքների համապատասխանությունը Հանձնարարականներին	**Մասամբ համապատասխանում է**	• Իրավական և արդյունավետության խնդիրներն ազդում են ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկությունները ստանալու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, հատկապես նախքան կոնկրետ կասկածյալի ի հայտ բերելը, կամ երբ անհրաժեշտ տեղեկությունները վերաբերում են կասկածյալից զատ որևէ այլ անձի. ուստի, դա կարող է արգելակել

[53] Այս գործոնները շարադրել պահանջվում է միայն այն դեպքում, երբ գնահատականը ցածր է «համապատասխանում է» գնահատականից:

			արդյունավետ իմպլեմենտացումը: • Ֆինանսական գաղտնիքի մասին Հայաստանի օրենքները թույլ չեն տալիս ֆինանսական հաստատությունների միջև տեղեկություններ փոխանակել այն դեպքերում, երբ դա պահանջվում է Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ.VII-ով:
5.	Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը	**Մասամբ համապատասխանում է**	• Ըստ ներկայացնողի (վճարային) ֆինանսական գործիքների առկայությունը, որոնք որոշ դեպքերում նմանվում են անանուն հաշիվների: • Ֆինանսական հաստատություններից չի պահանջվում. • Ընդունել ռիսկերի արդյունավետ կառավարման ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, և • ՀՊՈՒ միջոցառումներն էականության և ռիսկի հիման վրա կիրառել առկա հաճախորդների նկատմամբ և համապատասխան պարբերականությամբ իրականացնել առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություններ: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից այլ իրավական ակտերով նախատեսված պարտավորությունների ոչ բավարար/ոչ արդյունավետ կատարումը ֆինանսական հաստատությունների (հատկապես վարկային կազմակերպությունների և ոչ բանկային այլ ֆինանսական հաստատությունների) կողմից:
6.	Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք	**Հիմնականում համապատասխանում է**	• Գնահատողների հանդիպած ֆինանսական հաստատությունների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի ընկերություններ և դրամական փոխանցումներ իրականացնողների) ոչ բավարար տեղեկացվածությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերություն հաստատելիս ՀՊՈՒ (հավելյալ) կիրառելի միջոցառումների մասին:
7.	Թղթակցային բանկային հարաբերությունները	**Համապատասխանում է**	
8.	Առաջավոր տեխնոլոգիաները և առանց առերես շփման գործարար հարաբերությունները	**Հիմնականում համապատասխանում է**	• Արժեթղթերի ընկերություններից մեկում ապահովված չեն առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելու և բացելու դեպքում կիրառելի միջոցառումները:
9.	Երրորդ անձինք և ներկայացված բիզնեսը	**Չի համապատասխանում**	• Ներկայումս չի պահանջվում. • Երրորդ անձից անմիջապես ստանալ ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրերի առնչվող անհրաժեշտ տեղեկությունները, • Համարժեք քայլեր ձեռնարկել՝ համոզվելու համար, որ նույնականացման տվյալների և ՀՊՈՒ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից, և • Հավաստիանալ, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում, և որ այն ունի ՀՊՈՒ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ: • Սահմանված չէ «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունը: • Երրորդ անձի գտնվելու վայրի երկրների կողմից ՖԱԹՖ-ի հանձնարարականների համարժեք կիրառության փաստը պարզելու մեխանիզմներ չկան: Չկա պահանջ, որի համաձայն հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը կշարունակի կրել երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունը:
10.	Տեղեկատվության պահպանումը	**Հիմնա-**	• Չկան ուղեցույցներ, որոնցով «գործարքի (գործարար

	կանում համա-պատաս-խանում է	հարաբերության) հիմնական պայմաններ» հասկացության կապակցությամբ կպարզաբանվեր, թե որ պայմանների նկատմամբ են տարածվում տեղեկությունների պահպանման պահանջները գործարքի՝ պայմանագիր չլինելու դեպքում:
11. Անսովոր գործարքները	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• Ֆինանսական հաստատությունների համար սահմանված չէ հստակ և ուղղակի պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու բարդ, անսովոր մեծ գործարքների և տնտեսական կամ այլ իրավաչափ ակնհայտ նպատակ չունեցող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը: Նախատեսված չէ պահանջ՝ բարդ և անսովոր մեծ գործարքների ուսումնասիրությունների բացահայտումները պահպանվելու առնվազն հինգ տարի՝ անհրաժեշտության դեպքում նաև աուդիտորներին տրամադրելու համար:
12. ՆՈՖԳՏՄ-ներ. Հ.5, 6, 8–11	**Չի համա-պատաս-խանում**	• Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց պարագայում ՀՊՈՒ պահանջների մեջ հաշվի առնված չեն այն գործարքները, որոնց համախառն արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն: • Հետևյալ ոլորտներում ՆՈՖԳՏՄ-ների համար օրենքով և պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներով նախատեսված չեն կատարման պահանջներ, չկան ուղեցույցներ, և չի իրականացվում ուսուցում. • Գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին տեղեկատվության ստացում, • Գործարար հարաբերության անընդհատ պատշաճ ուսումնասիրության արդյունավետ միջոցառումների իրականացում էականության և ռիսկայնության հիման վրա, ինչպես նաև առկա գործարար հարաբերությունների պատշաճ ուսումնասիրության իրականացումը համապատասխան պարբերականությամբ, ներառյալ հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության թարմացման հաճախականության սահմանումը, • Ավելի բարձր ռիսկային հաճախորդների, գործարար հարաբերությունների կամ գործարքների հավելյալ պատշաճ ուսումնասիրությունների անցկացում, • Ցածր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ օտարերկրյա ռեզիդենտների նկատմամբ պարզեցված/նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների իրականացում, • ՀՊՈՒ նվազեցված միջոցառումների կիրառելիության արգելում ՓԼ/ԱՖ կասկածների կամ ավելի բարձր ռիսկի սցենարների առկայության դեպքում, • ՀՊՈՒ միջոցառումների կիրառությունը ռիսկի նկատմամբ զգայունության մոտեցումների պահպանմամբ, • Ռիսկի կառավարման ընթացակարգերի ընդունում՝ կարգավորելու այն պայմանները, որոնց պահպանմամբ հաճախորդին թույլատրվում է օգտագործել գործարար հարաբերությունը նախքան ստուգումը, • Առկա հաճախորդների նկատմամբ ՀՊՈՒ միջոցառումների իրականացում էականության և ռիսկայնության հիման վրա, ինչպես նաև առկա գործարար հարաբերությունների պատշաճ ուսումնասիրության իրականացումը համապատասխան պարբերականությամբ, • ՀՊՈՒ միջոցառումների իրականացում ՔԱՈՒԱ-ների նկատմամբ հարաբերությունը հաստատելիս, ինչպես նաև անընդհատ մոնիտորինգ հարաբերության հաստատումից հետո, • Պայմաններ, որոնց պահպանմամբ ՀՊՈՒ միջոցառումները թույլատրվում է կատարել

			երրորդ անձանց կամ միջնորդների միջոցով, • Բարդ կամ անսովոր գործարքների, ինչպես նաև ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալների և նպատակի հնարավորին չափ ուսումնասիրություն: • Ուղեցույցներով ՆՈՖԳՏՄ-ների համար հստակեցված չէ, թե ինչպես պարզել այն «ողջամիջ ժամկետը», որը պետք է պահպանել գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում հաճախորդին նույնականացնելիս: • Սահմանված է նվազագույն շեմ, որն անհարկիորեն սահմանափակում է ՀՊՈՒ իրականացումը բաժնետոմսերի առուվաճառքի նկատմամբ. սահմանված նվազագույն շեմը չգերազանցող գործարար գործարքներն ազատված են ՀՊՈՒ պահանջներից: • Տեղեկատվության պահպանման փաստացի պրակտիկայում առկա են թերություններ: • Ներքին իրավական ակտերի կամ արտաքին աուդիտի վերաբերյալ պահանջները 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չտարածելու փաստով պայմանավորված ռիսկերը չեն գնահատվել: • Առկա են արդյունավետ ներդրման և գործելակերպի հիմնախնդիրներ:
13.	Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունները	**Հիմնականում համապատասխանում է**	• Ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրվող՝ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունները սակավաթիվ են:
14.	Պաշտպանությունը և բացահայտելու (հայտնելու) արգելքը	**Համապատասխանում է**	
15.	Ներքին հսկողության մեխանիզմները, համապատասխանությունը և աուդիտը	**Մասամբ համապատասխանում է**	• Ներքին իրավական ակտերը (ներքին ընթացակարգեր, կանոնակարգեր և հսկողական մեխանիզմներ) համարժեք չեն, քանի որ դրանցում հաշվի առնված չեն ՓԼ և ԱՖ ռիսկերը և գործարար գործունեության չափերը: • Աշխատանքի ընդունվող աշխատակիցների նախնական ստուգման ընթացակարգեր չկան, բացառությամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության ստորաբաժանման աշխատակիցների: • Ֆինանսական հաստատություններում աուդիտի անկախ և համարժեք ռեսուրսներով ապահովված գործառույթի պահպանումն ապահովող մեխանիզմներ չկան, հատկապես երբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության/ներքին համապատասխանության ստորաբաժանման գործառույթը վերապահված է ներքին աուդիտորին: • Ֆինանսական հաստատությունների աշխատակիցների ոչ բավարար ուսուցումը սասանում է պահանջների արդյունավետ կատարումը և համապատասխանությունը: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և դրանից բխող իրավական այլ ակտերով սահմանված պարտավորությունների՝ ֆինանսական հաստատությունների կողմից կատարման մակարդակը ցածր է:
16.	ՆՈՖԳՏՄ-ներ. Հ.13–15 և Հ.21	**Մասամբ համապատասխանում է**	• ՆՈՖԳՏՄ-ների տեսակներից ոչ մեկը դեռևս չի տրամադրել որևէ ԿԳՀ: • ԿԳՀ-ների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտավորությունների մասին իրազեկության ընդհանուր մակարդակը ցածր է, հատկապես ԿԳՀ-ներ և ՆՇԳՀ-ներ տրամադրելու պարտավորությունների ոչ բավարար ընկալման առումով: Բացի այդ, բավարար չափով չի ընկալվում կասկածելի գործարք կատարելու փորձի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ նույնպես ԿԳՀ տրամադրելու պահանջը: • Ներքին իրավական ակտերում հիմնականում արտատպված են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դրույթները՝ չանդրադառնալով ՆՈՖԳՏՄ գործունեության

			կոնկրետ տեսակի բնույթով, ծավալներով կամ շրջանակով պայմանավորված ռիսկերը: • Համապատասխանության գործառույթը հիմնականում կատարվում է ընթացիկ աշխատանքային գործունեության մեջ ներգրավված աշխատակիցների կողմից: Չարձանագրվեց պարտականությունների տարանջատում, շահերի բախումների կառավարում և համապատասխանության խորը ընկալում: • Սահմանված չէ ընթացիկ վերապատրաստման պահանջ: Ծառայություններ մատուցողների կողմից չեն կազմակերպվում վերապատրաստման դասընթացներ: • Սահմանված չէ ուղղակի պահանջ՝ ուսումնասիրելու բարդ, անսովոր մեծ գործարքների և տնտեսական կամ այլ իրավաչափ ակնհայտ նպատակ չունեցող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը, կամ փաստաթղթավորելու բացահայտումները: • Չկան արդյունավետ միջոցառումներ, որոնց միջոցով ՆՈՖԳՏՄ-ները կտեղեկացվեն այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում առկա թերությունների մասին: • Սահմանված չէ պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու գործարքների նախադրյալները և նպատակը, գրավոր փաստաթղթավորելու բացահայտումները և արդյունքները գրավոր տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին: • ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ ոչ բավարար չափով կիրառող պետությունների նկատմամբ սեփական նախաձեռնությամբ պատշաճ միջոցառումներ իրականացնելու հնարավորությունը նախատեսված չէ: • Նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և աուդիտորների, ինչպես նաև հաշվապահական և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով առկա են մտահոգություններ գաղտնիության և պաշտպանության մասին նորմերի արդյունավետության շուրջ: • Առկա են համակարգի արդյունավետության հիմնախնդիրներ:
17.	Պատժամիջոցները	**Համա-պատաս-խանում է**	
18.	Կեղծ բանկերը	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• «Կեղծ բանկի» սահմանումը Հայաստանի օրենսդրության մեջ չի համապատասխանում ՖԱԹՖ-ի ստանդարտին:
19.	Հաշվետվությունների այլ ձևերը	**Համա-պատաս-խանում է**	
20.	Այլ ՆՈՖԳՏՄ-ներ և գործարքների իրականացման ապահով մեթոդները	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• ՓԼ կամ ԱՖ նպատակով ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների չարաշահման ռիսկերը չեն գնահատվում: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորություններ կրող ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների համար իրազեկության բարձրացման ծրագրեր չեն իրականացվում: • Միջոցներ չեն ձեռնարկվում՝ մշակելու և կիրառելու ֆինանսական գործարքների իրականացման ժամանակակից և ապահով մեթոդներ, որոնք պակաս խոցելի են փողերի լվացման նկատմամբ:
21.	Առանձնակի ուշադրություն դարձնել ավելի բարձր ռիսկային պետություններին	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• Չկան պահանջներ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, փաստաթղթավորելու բացահայտումները, և արդյունքները տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին:

22.	Օտարերկրյա մասնաճյուղերը և դուստր ձեռնարկությունները	**Համա-պատաս-խանում է**	
23.	Կարգավորումը, վերահսկողությունը և մոնիտորինգը	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• Համակարգում ցածր է ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումների համապատասխանության և արդյունավետության մակարդակը: • Բոլոր ոլորտներում ստուգումների գործող ընթացակարգերը հնացել են և չեն արտացոլում «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջները:
24.	ՆՈՖԳՏՄ-ներ. կարգավորումը, վերահսկողությունը և մոնիտորինգը	**Չի համա-պատաս-խանում**	• Անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարման մոնիտորինգն իրականացնող և այդ պահանջներին նրանց համապատասխանությունն ապահովող իրավասու մարմիններ չկան: • Փաստաբանների նկատմամբ վերահսկողության ռեժիմ չկա: • Խաղատների ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» պահանջներ չկան: • Չկան իրավական կամ կանոնակարգման պահանջներ, որոնցով կկանխվի խաղատան սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան օպերատոր լինելը: • Աշխատակիցների թիվը, իսկ որոշ դեպքերում՝ կոնկրետ հմտությունները բավարար չեն ՓԼ և ԱՖ դեմ պայքարի արդյունավետ վերահսկողություն ներդնելու և իրականացնելու համար: • Համապատասխանությունը վերահսկելու արդյունավետ համակարգեր չկան:
25.	Ուղեցույցներ և հետադարձ արձագանք	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• Չեն ընդունվել ուղեցույցներ, որոնք ֆինանսական հաստատություններին կաջակցեին հաճախորդների վերաբերյալ տվյալների/տեղեկատվության հետ կապված պարտավորությունների արդյունավետ կատարման, սովորական հաճախորդների անընդհատ պատշաճ ուսումնասիրության իրականացման, ինչպես նաև ՔԱՈՒԱ-ների հետ հարաբերությունների հավելյալ անընդհատ դիտազննման հարցերում: • Չկան կոնկրետ ուղեցույցներ՝ նվիրված ԱՖ տիպաբանություններին կամ սառեցման պարտավորություններին: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների լիարժեք կատարումը և պահանջների բավարարումն ապահովելու համար ՆՈՖԳՏՄ-ների մասով ընդունված ուղեցույցները չափազանց քիչ են: • Համապատասխան հնարքների, ոլորտի խոցելի կետերի, մեթոդների կամ միտումների վերաբերյալ ՆՈՖԳՏՄ-ների իրազեկության բարձրացման աշխատանքներ չեն տարվում:
Ինստիտուցիոնալ և այլ միջոցառումներ			
26.	ՖԴԿ	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և մասնագիտական գաղտնիքի մասին (իրավաբանների, հաշվապահների և աուդիտորների պարագայում) նորմերի փոխհարաբերության պարզ չլինելը կարող է ազդել լրացուցիչ տեղեկություններ պահանջելու՝ ՖԴԿ-ի կարողության վրա: • Թանկարժեք մետաղների և քարերի դիլերների կողմից

			հաշվետվությունների ներկայացման կարգի վերաբերյալ ուղեցույցներ չկան: • ՖԴԿ-ի հաստիքների անբավարարությունն ազդում է ՖԴԿ-ի կողմից իր պարտականությունների կատարման արդյունավետության վրա, հատկապես ֆինանսական վերլուծության մասով, ինչպես նաև՝ կարող է ազդել ՖԴԿ-ի գործառնական անկախության վրա:
27.	Իրավապահ մարմիններ	**Հիմնականում համապատասխանում է**	• ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցների համար ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստումների բացակայությունը և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման կապակցությամբ արծարծված իրավական և արդյունավետության հիմնախնդիրներն ազդում են ՓԼ և ԱՖ գործերի քննության արդյունավետության վրա:
28.	Իրավասու մարմինների իրավասությունները	**Մասամբ համապատասխանում է**	• Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման կապակցությամբ արծարծված իրավական և արդյունավետության հիմնախնդիրներն ազդում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու՝ իրավապահ մ արմինների կարողության վրա, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի: • «Ոստիկանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի հիման վրա ներկայանալու ծանուցման և առգրավման մասին որոշման բացակայության պարագայում ՔԴՕ-ի նորմերը բավականաչափ ընդգրկուն չեն, որպեսզի իրավապահ մարմիններին կամ դատարաններին հնարավորություն ընձեռեն բոլոր գործերով պարտադրել ներկայացնելու փաստաթղթեր և տեղեկություններ: • ԱԱԾ-ին ուղարկված կամ իրավապահ մարմինների կողմից հարուցված ՓԼ գործերի թվաքանակի, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից կայացված՝ գործի հարուցումը մերժելու մասին որոշումների թվաքանակի վերաբերյալ լիարժեք և ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում դժվար է գնահատել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը:
29.	Վերահսկողներ	**Հիմնականում համապատասխանում է**	• Բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնողների և արժեթղթերի/ներդրումային ընկերությունների՝ օրենքով նախատեսված ստուգումները մասնակիորեն են իրագործվում: • Չկան վերահսկողական ստուգումների թարմացված և արդյունավետ ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեին «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջների վրա:
30.	Ռեսուրսներ, անաչառություն և վերապատրաստում	**Մասամբ համապատասխանում է**	• ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերահսկողության համարժեք մակարդակ ապահովելու նպատակով վարկային կազմակերպությունների, արտարժույթի փոխանակման կետերի, դրամական փոխանցումներ իրականացնողների և ապահովագրական ընկերությունների մասով անհրաժեշտ են լրացուցիչ կադրային ռեսուրսներ (վերահսկողներ): • ՖԴԿ-ի ապահովված չէ բավարար թվով աշխատակիցներով: • ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում չի իրականացվում ԱԱԾ-ի քննչական վարչության պաշտոնատար անձանց, ինչպես նաև մաքսային մարմնի հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցների համար:
31.	Ներպետական համակարգում	**Հիմնականում համապատասխանում է**	• ՓԼ կամ ԱՖ ռիսկերի առնչությամբ տարբեր ոլորտների ռիսկերի գնահատումը բավարար չէ: • Կարգավորվող հաստատությունների հետ խորհրդակցությունների մեխանիզմները սահմանափակվում են Հայաստանի բանկերի միությամբ, որը ներկայացված է Միջգերատեսչական հանձնաժողովի

		կազմում:
32. Վիճակագրություն	**Չի համապատասխանում**	• Լիարժեք և ճշգրիտ վիճակագրական տվյալներ չեն վարվում իրավապահ մարմինների հարուցած կամ ԱԱԾ-ին ուղարկված ՓԼ գործերի թվաքանակի, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից մերժված՝ ՓԼ գործերի թվաքանակի վերաբերյալ: • Ֆինանսական հատվածում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետության վերաբերյալ ամբողջական և հիմնավոր վիճակագրական տվյալներ չկան:
33. Իրավաբանական անձանց իրական շահառուներ	**Հիմնականում համապատասխանում է**	• Հաշվի առնելով, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.1 հոդվածը վերջերս է ուժի մեջ մտել, գնահատողները չկարողացան պարզել, թե արդյոք այն իրագործվում է արդյունավետորեն: • Ռեգիստրում պահպանվող տեղեկությունների ստացումը կարող է ժամանակատար լինել՝ հաշվի առնելով, որ Պետական ռեգիստրի կենտրոնական գրասենյակը և տարածքային ստորաբաժանումները միմյանց հետ կապակցված չեն, և հնարավոր չէ կատարել դրանց կողմից պահպանվող տեղեկությունների էլեկտրոնային որոնումներ:
34. Իրավաբանական կազմավորումների իրական շահառուներ	**Չկա**	• Հանձնարարականը Հայաստանի համատեքստում կիրառելի չէ:
Միջազգային համագործակցություն		
35. Կոնվենցիաներ	**Մասամբ համապատասխանում է**	• Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը: • Բռնագրավման միջոցները Պալերմոյի կոնվենցիայով սահմանված ոչ բոլոր հանցագործությունների նկատմամբ են տարածվում, • Հնարավոր չէ առգրավել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքը, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները՝ ինչպես սահմանված է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով: • Ներկայանալու ծանուցման և առգրավման մասին որոշման բացակայության պարագայում ՔԴՕ-ի դրույթները բավականաչափ ընդգրկուն չեն, որպեսզի իրավապահ մարմիններին կամ դատարաններին հնարավորություն ընձեռեն պարտադրել՝ ցանկացած գործով ներկայացնելու փաստաթղթեր և տեղեկություններ: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու՝ իրավապահ մարմինների կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • Արժույթի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգի գործողությունը չի տարածվում փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա տեղափոխման նկատմամբ: • ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում չի կազմակերպվում ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության աշխատակիցների համար:
36. Փոխադարձ իրավական օգնություն (ՓԻՕ)	**Մասամբ համապատասխանում է**	• Կանխարգելիչ և բռնագրավման միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները կարող են նաև սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող

		տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու հարցում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • «Կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը կարող է սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը՝ հաշվի առնելով, որ ՓԼ հանցագործությունների մասով թերություններ են հայտնաբերվել իրավաբանական անձանց ներգրավմամբ իրականացվող քրեական վարույթների շրջանակում կատարվող հարցումների առնչությամբ:
37. Կրկնակի քրեականացում	**Հիմնականում համապատասխանում է**	• Չնայած որ օրենքով նման պահանջ չի նախատեսվում, ՓԻՕ ցանկացած տեսակ պրակտիկայում կարող է տրամադրվել միայն «կրկնակի քրեականացման» առկայության դեպքում:
38. ՓԻՕ բռնագրավման և սառեցման առնչությամբ	**Մասամբ համապատասխանում է**	• Կանխարգելիչ և բռնագրավման միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները կարող են նաև սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու հարցում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • «Կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը կարող է սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը՝ հաշվի առնելով, որ ՓԼ հանցագործությունների մասով թերություններ են հայտնաբերվել իրավաբանական անձանց ներգրավմամբ իրականացվող քրեական վարույթների շրջանակում կատարվող հարցումների առնչությամբ:
39. Անձի հանձնում	**Համապատասխանում է**	
40. Համագործակցության այլ ձևեր	**Հիմնականում համապատասխանում է**	• Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերը սահմանափակում են տեղեկություններ տրամադրելու՝ իրավապահ մարմինների կարողությունը: • Մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը կարող են սահմանափակել տեղեկություններ տրամադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը:
Ինը հատուկ հանձնարարականներ		
ՀՀ.I ՄԱԿ-ի գործիքների իմպլեմենտացում	**Մասամբ համապատասխանում է**	• ԱՖ հանցակազմը սահմանված չէ Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված սահմանմանը համահունչ: • ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի պահանջների կապակցությամբ Հայաստանի կողմից ձեռնարկվող միջոցառումները համարժեք չեն:
ՀՀ.II Ահաբեկչության ֆինանսավորման քրեականացում	**Մասամբ համապատասխանում է**	• ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի համաձայն, ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորումը չի քրեականացվում այն իրավիճակներում, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են՝ չունենալով մտադրություն կամ իմացություն, որ գույքը կամ ֆինանսական միջոցներն օգտագործվելու են ահաբեկչական կոնկրետ

			գործողություն կատարելու համար՝ ինչպես պահանջվում է ՀՀ.II-ով: • Հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթների անհամապատասխանության պատճառով («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա») պարզ չէ, թե արդյոք ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը կիրառելի է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով սահմանված բոլոր «միջոցների» նկատմամբ: • ԱՖ մասին դրույթի մեջ օգտագործված՝ «ահաբեկչության» սահմանումը չի պարունակում հղում «միջազգային կազմակերպություններին»՝ ինչպես պահանջվում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով: • ՔՕ-ի 217-րդ հոդվածով («ահաբեկչություն») պահանջվող դիտավորության տարրն անհարկիորեն սահմանափակում է ԱՖ մասին դրույթի կիրառությունն ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված ահաբեկչական հանցագործությունների մեծ մասի նկատմամբ: • Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն գոյություն չունի:
ՀՀ.III	Ահաբեկիչների միջոցների սառեցում և բռնագրավում	**Չի համա-պատաս-խանում**	• «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմները համահունչ չեն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերից բխող սառեցման պարտավորություններին և չեն համապատասխանում ՀՀ.III-ին, քանի որ այդ մեխանիզմների կիրառությունը կախված է ներպետական մակարդակով քրեական գործի հարուցումից, ընդ որում՝ մեղադրական դատավճռի բացակայության պայմաններում դրանք ունենում են զուտ ժամանակավոր բնույթ: • Հայաստանում չկա մեխանիզմ, որը հնարավորություն կընձեռեր այլ պետությունների սառեցման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված սառեցման գործողությունների ժամկետը երկարաձգել ներկայումս օրենքով սահմանված սկզբնական 15-օրյա ժամկետի ավարտից հետո: • Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության բացակայության պայմաններում իրավաբանական անձանց միջոցները և այլ գույքը չեն կարող սառեցված մնալ սկզբնական 15-օրյա ժամկետի ավարտից հետո: • Սառեցման մեխանիզմները կիրառելի չեն միջոցներից զատ այլ ֆինանսական գույքի և այլ գույքի նկատմամբ: • Սառեցման մեխանիզմները ոչ բոլոր դեպքերում են կիրառելի նախատեսված անձի կամ կազմակերպության համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի, ինչպես նաև այն միջոցների նկատմամբ, որոնք նախատեսված անձին կամ կազմակերպությանը չեն պատկանում սեփականության իրավունքով, սակայն վերահսկվում են նրանց կողմից: • Չկան ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1373 բանաձևի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն սառեցման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ: • Չկա ուղեցույց կամ ընթացակարգ, որով կնախատեսվեր, թե ինչպես կարող են ՀՀ ԿԲ-ի կողմից «ահաբեկչության հետ կապված անձանց» ցանկում ներառված անձինք կամ կազմակերպությունները բողոքարկել համապատասխան որոշումը և դիմել ցանկից իրենց հանելու համար, եթե առաջանա նման իրավիճակ: • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով չեն նախատեսվում սառեցման սկզբնական գործընթացի մեջ հայտնված բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթներ:
ՀՀ.IV	Կասկածելի գործարքների մասին	**Հիմնա-**	• Ուղեցույցների բացակայությունը խոչընդոտում է

	հաշվետվություններ	**կանում համա-պատաս-խանում է**	հաշվետվություն տրամադրելու պարտավորության արդյունավետ կատարումը:
ՀՀ.V	Միջազգային համագործակցություն	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• Կանխարգելիչ միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները կարող են նաև սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: • Ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տվյալների հասանելիության կապակցությամբ նշված իրավական և արդյունավետության խնդիրներն անդրադառնում են ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանվող տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու հարցում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողության վրա, հատկապես նախքան կասկածյալի նույնականացումը, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի այլ անձի: • «Կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը կարող է սահմանափակել օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը՝ հաշվի առնելով ԱՖ հանցագործությունների մասով հայտնաբերված թերությունները: • «Կրկնակի քրեականացման» սկզբունքի գործնական կիրառությունը փոխադարձ իրավական օգնության բնագավառում և հանձնման համար նախատեսված՝ «կրկնակի քրեականացման» պահանջը կարող են որոշակի իրավիճակներում սահմանափակել օգնություն տրամադրելու կամ անձին հանձնելու՝ Հայաստանի կարողությունը՝ հաշվի առնելով ԱՖ հանցագործության առնչությամբ արձանագրված թերությունները, որոնք ներկայացվել են II հատուկ հանձնարարականին նվիրված բաժնում: • Մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը կարող են սահմանափակել տեղեկություններ տրամադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը:
ՀՀ.VI	Փողի/արժեքների փոխանցման ծառայություններին ներկայացվող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• Ֆինանսական համակարգում ոչ ֆորմալ կարգով, առանց թույլտվության գործող՝ դրամական փոխանցումներ իրականացնող անձի կողմից չարաշահումների հնարավորությունը:
ՀՀ.VII	Դրամական փոխանցումների կանոններ	**Հիմնա-կանում համա-պատաս-խանում է**	• Դրամական փոխանցումների համար սահմանված նվազագույն շեմը չի համապատասխանում ստանդարտին (նվազագույն շեմը փոփոխվում է՝ կախված արտարժույթի փոխարժեքներից):
ՀՀ.VIII	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• Միջգերատեսչական հանձնաժողովի կամ այլ մեխանիզմների միջոցով իրականացվող պարբերական գնահատումների հաճախականություն նախատեսված կամ սահմանված չէ: Ավելին, նախատեսված չէ, թե միտումների կամ մեթոդաբանությունների վերաբերյալ լրացուցիչ կամ նոր ինչպիսի տեղեկությունների ստացման դեպքում է պահանջվում նման գնահատում անցկացնել: • Ներկայումս իշխանությունների կողմից չի իրականացվում ՇՆՉ հատվածի իրազեկության բարձրացման ծրագիր: • ՇՆՉ հատվածում ԱՖ ռիսկերը հաղթահարելու համար չեն բավականացնում ռեսուրսները և տեխնիկական հմտությունները: Ներկայումս առանձնակի ուշադրություն չի դարձվում ռիսկերին:
ՀՀ.IX	Անդրսահմանային հայտարարագրումը և բացահայտումը	**Մասամբ համա-պատաս-խանում է**	• Հայտարարագրման պահանջները չեն տարածվում փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա փոխադրումների նկատմամբ: • Նախատեսված չէ ՓԼ կամ ԱՖ կասկածի առկայության դեպքում արժույթի շարժը կասեցնելու կամ սահմանափակելու իրավասությունը: • Բռնագրավման և առգրավման՝ մաքսային մարմնի իրավասությունները սահմանափակ են: • ՀՀ.III-ով և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով

		նախատեսված սառեցման պահանջները կիրառելի չեն այն անձանց դեպքում, որոնք իրականացնում են ԱՖ-ին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում: • Օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցների մեծ մասը չափազանց մեղմ է: Վիճակագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել, թե արդյոք պատիժներն արդյունավետ են, համաչափ և տարհամոզիչ: • Առկա են արդյունավետության հիմնախնդիրներ:

Աղյուսակ 2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի բարելավման ուղղությամբ առաջարկվող միջոցառումների ծրագիր

ՖԱԹՖ-ի 40+9 հանձնարարականներ	Առաջարկվող միջոցառումը (յուրաքանչյուր բաժնի վերաբերյալ՝ առաջնահերթության կարգով)
1. Ընդհանուր	
2. Իրավական համակարգ և հարակից ինստիտուցիոնալ միջոցառումներ	
2.1 Փողերի լվացման քրեականացում (Հ.1 և 2)	• Իրականացնել պատշաճ նախաձեռնություններ (օրինակ՝ իրազեկության բարձրացում կամ ուսուցում) փողերի լվացման գործերի քննության, քրեական հետապնդման և դատական գործընթացին մասնակից բոլոր իրավասու մարմինների համար, որպեսզի. (1) պարզվի, թե ինչ խոչընդոտներ կան ՓԼ քրեական հետապնդման ճանապարհին, օրինակ՝ թե միայն փողերի լվացման համար մեղադրական դատավճիռ ստանալուն որքանով է խոչընդոտում գույքի՝ նախորդող կոնկրետ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար կիրառվող ապացուցման չափանիշը, և (2) շարունակել բարձրացնել իրազեկությունը ՓԼ վերաբերյալ օրենսդրական պահանջների մասին, • Փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ և նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը:
2.2 Ահաբեկչության ֆինանսավորման քրեականացում (ՀՀ.II)	• Փոփոխել ՔՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված՝ «ահաբեկչության» սահմանումը, որպեսզի այն (1) ներառի ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը համաձայնագրերում և արձանագրություններով նախատեսված ահաբեկչության բոլոր հանցագործությունները, և (2) ներառի հղում «միջազգային կազմակերպություններ» հասկացությանը՝ ինչպես պահանջվում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածով, • Փոփոխել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը, որպեսզի դրա նորմը տարածվի բոլոր այն իրավիճակների նկատմամբ, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից օգտագործման համար ընդհանրապես, երբ բացակայում է ֆինանսական միջոցները կամ գույքն ահաբեկչության կոնկրետ գործողություն կատարելու մեջ օգտագործելու մտադրությունը կամ իմացությունը, • Ներդաշնակեցնել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթները («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա»), որպեսզի հստակեցվի, որ ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը տարածվում է ԱՖ դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված բոլոր «միջոցների» նկատմամբ, • Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ նախատեսելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը:

2.3 Հանցավոր ճանապարհով ստացված եկամտի բռնագրավում, սառեցում և առգրավում (Հ.3)	• ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածով չնախատեսված բոլոր նախորդող հանցագործությունների վերաբերյալ պետք է սահմանել համապատասխան նորմեր, որոնք հնարավորություն կընձեռեն բռնագրավել հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտները կամ հանցագործությունների կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև այդ գույքին համարժեք այլ՝ օրինական ծագում ունեցող գույքը, • ՔՕ-ի 55(3)-րդ հոդվածը պետք է փոփոխել՝ թույլատրելու գույքի բռնագրավումն անկախ դրա՝ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, • Միջոցներ ձեռնարկել՝ նախատեսելու ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ դրանց կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք օրինական ծագում ունեցող գույքի առգրավման հնարավորությունը, • ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմինները հնարավորություն ունենան արդյունավետորեն հայտնաբերել և հետապնդել այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու մեջ, այդ թվում՝ նաև այն դեպքերում, որոնցում դեռևս չկա կոնկրետ «կասկածյալ», • Իրավապահ մարմինները պետք է ՓԼ և ԱՖ հետաքննությունների/նախաքննությունների համատեքստում ապահովեն կանխարգելիչ միջոցների արդյունավետ իրագործումն այն գույքի նկատմամբ, որը կարող է ենթակա դառնալ բռնագրավման, • Հայաստանյան իշխանությունները պետք է վերանայեն բռնագրավման նկատմամբ իրենց մոտեցումը՝ նպատակ հետապնդելով ավելացնել բռնագրավման գործողությունների թիվը և խրախուսել բռնագրավման մասին դրույթների առավել հաճախակի կիրառությունը, • Իշխանությունները պետք է դիտարկեն քրեաիրավական դաշտի գնահատման նպատակահարմարությունը՝ պարզելու համար, թե արդյոք ճիշտ կլինի ներդնել քաղաքացիական բռնագրավման ինստիտուտ կամ գույքի այնպիսի բռնագրավման ինստիտուտ, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը, կամ՝ քրեական կազմակերպությունների գույքի բռնագրավման ինստիտուտը՝ չսահմանափակվելով միայն այն կազմակերպություններով, որոնք ուղղակիորեն կապված են մեղադրական դատավճռի հիմքում ընկած հանցագործությունների հետ:
2.4 Ահաբեկչության ֆինանսավորման նպատակով օգտագործվող միջոցների սառեցումը (ՀՀ.III)	• Հայաստանը պետք է վերանայի «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմները, որոնք նպատակաուղղված են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի, ինչպես նաև ՀՀ.III-ի պահանջների կատարմանը: Մասնավորապես, Հայաստանի օրենսդրությամբ պետք է նախատեսել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված՝ նախատեսման և սառեցման պարտավորությունների կատարումը բոլոր դեպքերում՝ անկախ այն հանգամանքից, թե հնարավոր է արդյոք քրեական գործ կամ քրեական հետապնդում հարուցել ահաբեկչական հանցագործության հատկանիշներով: Պետք է նախատեսել անժամկետ սառեցման մեխանիզմ, որը հնարավոր կլինի կիրառել՝ անկախ ներպետական մակարդակով քրեական

	գործի հարուցումից կամ դրա արդյունքից, միաժամանակ նաև բացառելով սառեցման հարցում հայեցողությունը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ցանկերի հետ համընկնող անունների հայտնաբերման դեպքում, • Ներդնել մեխանիզմ, որով այլ պետությունների սառեցման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված սառեցման գործողությունները Հայաստանում կգործեն ներկայումս օրենքով սահմանված 10-օրյա ժամկետի ավարտից հետո: Սառեցման մեխանիզմները պետք է բոլոր փուլերում կիրառելի լինեն նախատեսված անձի կամ կազմակերպության համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի, ինչպես նաև այն միջոցների նկատմամբ, որոնք նախատեսված անձին կամ կազմակերպությանը չեն պատկանում սեփականության իրավունքով, սակայն վերահսկվում են նրանց կողմից, • Սառեցման մեխանիզմները պետք է տարածվեն ոչ միայն ֆինանսական միջոցների, այլ նաև՝ ֆինանսական գույքի և ցանկացած տեսակի գույքի նկատմամբ, ինչպես նախատեսված է ՖԱԹՖ-ի ստանդարտով և III Հատուկ հանձնարարականի Բացատրական մեկնաբանությամբ, • ՖԴԿ-ն պետք է ընդունի ֆորմալ ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1373 բանաձևի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն սառեցման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ, • ՖԴԿ-ն պետք է ընդունի ուղեցույց կամ ընթացակարգ, որով կնախատեսվի, թե ինչպես կարող են ՀՀ ԿԲ-ի կողմից «ահաբեկչության հետ կապված անձանց» ցանկում ներառված անձինք կամ կազմակերպությունները բողոքարկել համապատասխան որոշումը և դիմել ցանկից իրենց հանելու համար, եթե առաջանա նման իրավիճակ, • «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով պետք է նախատեսել սառեցման սկզբնական գործընթացի մեջ հայտնված բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթներ:
2.5 Ֆինանսական հետախուզության մարմինը, դրա գործառույթները (Հ.26)	• Փոփոխել ՖԴԿ-ի կանոնադրությունը՝ արտացոլելու «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր օրենքով նախատեսված՝ ՖԴԿ-ի նոր լիազորությունները, • Ավելացնել հաստիքների թիվը, հատկապես վերլուծությունների բաժնում, • Դիտարկել ՆՇԳՀ-ների վերլուծությամբ զբաղվող հատուկ ստորաբաժանում (կամ վերլուծության բաժնի կազմում ենթաբաժին) ստեղծելու նպատակահարմարությունը, • Բարձրացնել մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված ՆՈՖԳՏՄ-ների (հատկապես իրավաբանների, հաշվապահների և աուդիտորների) իրազեկությունը՝ նրանց պարզաբանելով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության շրջանակը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում փոփոխել օրենքի տեքստը՝ երաշխավորելու, որպեսզի մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը չնսեմացնեն լրացուցիչ տեղեկություններ պահանջելու՝ ՖԴԿ-ի կարողությունը, • Թանկարժեք մետաղների և քարերի դիլերների (ինչպես նաև արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների) համար տրամադրել ուղեցույցներ և հաշվետվությունների ձևեր:
2.6 Իրավապահ, քրեական հետապնդման և այլ իրավասու մարմինները (Հ.27 և 28)	• ՔԴՕ-ում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ նախատեսելու ՓԼ և ԱՖ գործերով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացում պարտադրելու՝ իրավապահ մարմինների կամ դատարանների ընդհանուր իրավասությունը, այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ տեղեկություններ են

	պահանջվում ոչ թե տուժողից, հայցվորից, կասկածյալից կամ մեղադրյալից, այլև՝ վկայից կամ այլ անձանցից: • ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, իսկ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման մասով դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմիններին արդյունավետ հնարավորություն ընձեռվի՝ ստանալու և պարտադրելու ներկայացնել տեղեկություններ, գործարքների փաստաթղթեր, հաշիվների փաստաթղթեր և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված այլ փաստաթղթեր և տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի: • ԱԱԾ-ի քննչական վարչության, ինչպես նաև մաքսային ծառայության հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցները պետք է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստում անցնեն, որպեսզի ապահովվի ՓԼ/ԱՖ գործերի քննության արդյունավետությունը:
2.7 Անդրսահմանային հայտարարագրումը և բացահայտումը (ՀՀ.IX)	• Հայտարարագրման պահանջները տարածել փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա փոխադրումների նկատմամբ, • Մաքսային մարմիններին իրավասություն վերապահել՝ կասեցնելու կամ սահմանափակելու արժույթի շարժը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում, • Խստացնել պատժամիջոցները, • Ներդնել ՀՀ.III-ով և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով նախատեսված սառեցման պահանջներն այն անձանց դեպքում, որոնք իրականացնում են ԱՖ-ին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում, • Բարձրացնել հանրության իրազեկությունը սահմանված շեմը գերազանցող գումարով կանխիկի և վճարային արժեթղթերի ներմուծումը և արտահանումը հայտարարագրելու անհրաժեշտության մասին, • Ճշգրտել օգտագործվող հայտարարագրերում ներմուծման և արտահանման հայտարարագրման պահանջների բացատրությունները, որպեսզի դրանք միանշանակորեն տարածվեն նաև վճարային արժեթղթերի նկատմամբ, • Հայտարարագրումը խրախուսելու նպատակով բարձրացնել գործող պատժամիջոցների արդյունավետությունը և նախատեսել կոնկրետ պատժամիջոցներ ՓԼ և ԱՖ համար, • Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսել մաքսային մարմնի իրավասությունը՝ պահանջելու տեղեկություններ արժույթի կամ վճարային արժեթղթերի ծագման և օգտագործման մտադրության մասին, • Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսել ոսկու, թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի անսովոր անդրսահմանային շարժի մասին այլ երկրների իրավասու մարմինների ծանուցումը, • Հայտարարագրման պահանջների հիման վրա հավաքագրված տեղեկությունները վերլուծելու միջոցով ձևավորել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օպերատիվ տվյալներ:
3. Կանխարգելիչ միջոցներ. ֆինանսական հաստատություններ	
3.1 Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը	

3.2 Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը, ներառյալ հավելյալ կամ նվազեցված միջոցառումները (Հ.5–8)	• Արգելել ըստ ներկայացնողի բանկային գրքույկները և ավանդային սերտիֆիկատները, ինչպես նաև ըստ ներկայացնողի այլ արժեթղթերը՝ ուժը կորցրած ճանաչելով/փոփոխելով համապատասխան հոդվածները քաղաքացիական օրենսգրքում և բոլոր այլ իրավական ակտերում, որոնցով նախատեսվում կամ կարգավորվում են ըստ ներկայացնողի (վճարային) գործիքները, • Ֆինանսական հաստատությունների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետների մասով՝ ապահովելու հետևողական և արդյունավետ իրագործումը, • Ներդնել լրացուցիչ ուղեցույցներ՝ մասնավորեցնելով այն ողջամիտ ժամկետը, որը ֆինանսական հաստատությունները պետք է պահպանեն գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում նույնականացման տեղեկություններ ձեռք բերելիս և այդ տեղեկությունների իսկությունը ստուգելիս, • Ֆինանսական հաստատությունների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, • Ֆինանսական հաստատությունների համար սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ, • Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից իրավական ակտերով ՀՊՈՒ միջոցառումների մասով նախատեսված պարտավորությունների առավել արդյունավետ կատարումը ֆինանսական հաստատությունների կողմից՝ վերապատրաստումների կամ իրազեկության բարձրացման այլ նախաձեռնությունների միջոցով, • Ֆինանսական հաստատությունների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ/իրականացնել լրացուցիչ վերապատրաստումներ ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերություն հաստատելիս օրենքով պահանջվող՝ հավելյալ անընդհատ մոնիտորինգի ընթացակարգերի վերաբերյալ, • Իրավական ակտերով կամ ուղեցույցներով նախատեսել գործարար հարաբերություն հաստատելիս անձի ֆիզիկապես ներկա լինելու պահանջը: Բացի այդ, ի հավելումն ներկայումս սահմանված երկու լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրել Հաճախորդների պատշաճ ուսումնասիրության մասին Բազելյան կոմիտեի փաստաթղթի 2.2.6 բաժինը՝ նվիրված «Առանց առերես շփման հաճախորդներին», որով նախատեսվում են ռիսկը մեղմելու լրացուցիչ միջոցառումներ, որոնք ֆինանսական հաստատությունները կարող են դիտարկել առանց առերես շփման հաճախորդների հետ գործարար հարաբերություններ հաստատելիս:
3.3 Երրորդ անձինք և ներկայացված բիզնեսը (Հ.9)	• Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ֆինանսական հաստատությունների պարտավորությունը՝ • Երրորդ անձից անմիջապես ստանալու ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրերի առնչվող անհրաժեշտ տեղեկությունները (չափորոշիչներ 5.3-5.6), • Համարժեք քայլեր ձեռնարկելու՝ համոզվելու համար, որ նույնականացման տվյալների և ՀՊՈՒ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից, և • Հավաստիանալու, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում (թիվ 23, 24 և 29

	Հանձնարարականներին համապատասխան), և որ այն ունի Հ.5 և Հ.10 Հանձնարարականներով նախատեսված ՀՊՈՒ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ: • Սահմանել «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունն այնպես, որ դա համահունչ լինի ՖԱԹՖ-ի ստանդարտին, մասնավորապես՝ պահանջը սահմանափակելով միայն այն «երրորդ անձանցով», որոնք ֆինանսական հաստատություններ են կամ ՆՈՖԳՏՄ-ներ՝ սահմանման մեջ չներառելով նաև «երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց»: • ՀՊՈՒ գործընթացի իրականացման համար ներկայացվող պայմանները բավարարող երրորդ անձի գտնվելու վայրի երկրների թույլատրելի ցանկը պարզելիս իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն առկա տեղեկություններն այն մասին, թե արդյոք այդ երկրները համարժեքորեն կիրառում են ՖԱԹՖ-ի հանձնարարականները, և սահմանել պահանջ, որի համաձայն հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը շարունակում է կրել երրորդ անձի միջոցով գործող ֆինանսական հաստատությունը:
3.4 Ֆինանսական հաստատությունների գործունեության գաղտնիությունը (Հ.4)	• ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, • Ապահովել, որպեսզի ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու՝ իրավապահ մարմինների (հատկապես ԱԱԾ-ի) իրավասությունը պայմանավորված չլինի «կասկածյալի» կամ «մեղադրյալի» առկայությամբ, քանի որ այդ պայմանը վնասում է ԱԱԾ-ի՝ որպես ՓԼ/ԱՖ գործեր քննելու լիազորությամբ օժտված մարմնի կողմից իր գործառույթների պատշաճ կատարմանը, ինչպես նաև արգելակում նման տեղեկությունների ստացումն այն գործերով, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց, կամ երբ տեղեկությունները վերաբերում են «կասկածյալից» կամ «մեղադրյալից» զատ այլ անձի, • Փոփոխել ԲԳՕ-ն՝ ֆինանսական հաստատություններին թույլատրելով ֆինանսական գաղտնիքի համարվող տեղեկություններ փոխանակել այն դեպքերում, երբ դա պահանջվում է Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ.VII-ով:
3.5 Տեղեկատվության պահպանումը և դրամական փոխանցումների վերաբերյալ կանոնները (Հ.10 և ՀՀ.VII)	• Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում կամ պարտադիր կատարման ենթակա այլ ուղենիշներում հստակեցնել «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» (որոնց նկատմամբ տարածվում են տեղեկություններ պահպանելու պահանջները) հասկացությունն այն դեպքի համար, երբ գործարքը պայմանագիր չէ, • Օրենքով կամ այլ իրավական ակտերով պահանջել, որպեսզի հաճախորդի նույնականացման համար սահմանվող՝ դրամական փոխանցման նվազագույն շեմի գումարը համարժեք լինի 1,000 եվրոյի/ԱՄՆ դոլարի: Այդկերպ, հաշվի առնելով փոխարժեքի լողացող բնույթը, հաշվետվություն տրամադրող անձինք կարող են ապահովել նվազագույն շեմի համապատասխանությունը ստանդարտին:
3.6 Գործարքների և հարաբերությունների մոնիտորինգը (Հ.11 և 21)	• Ֆինանսական հաստատությունների համար սահմանել հստակ և ուղղակի պահանջ՝ հնարավորինս ուսումնասիրելու բարդ, անսովոր մեծ գործարքների և տնտեսական կամ այլ իրավաչափ ակնհայտ նպատակ չունեցող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը՝ ինչպես պահանջվում է սույն հանձնարարականով, • Սահմանել պահանջ, որի համաձայն բարդ և անսովոր մեծ

	գործարքների ուսումնասիրությունների բացահայտումները կպահպանվեն առնվազն հինգ տարի՝ անհրաժեշտության դեպքում նաև աուդիտորներին տրամադրելու համար, • Իրականացնել լրացուցիչ վերապատրաստում, հատկապես ոչ բանկային ֆինանսական հաստատությունների համար, որպեսզի առանձնակի ուշադրություն դարձվի անսովոր, մեծ և բարդ համարվող բոլոր գործարքներին՝ անկախ օֆշորային ցանկերից և ՄԱԿ-ի հրապարակած ցանկերից: • Ֆինանսական հաստատությունների համար սահմանել հետևյալ պահանջը. i) հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրել ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, ii) փաստաթղթավորել բացահայտումները, և iii) արդյունքները գրավոր տրամադրել իրավասու մարմիններին և աուդիտորներին:
3.7 Կասկածելի գործարքների մասին և այլ հաշվետվությունները (Հ.13, 14, 19, 25, և ՀՀ.IV)	• Հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպել լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝ ապահովելու նրանց աշխատակիցների տեղեկացվածությունն օրենքով նախատեսվող պարտավորությունների մասին: Վերապատրաստումը պետք է, մասնավորապես, ներառի կասկածելի գործարքների հայտնաբերման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման թեմաները, անդրադառնա տիպաբանություններին և միտումներին (տարբերակված ըստ գործունեության տեսակի, հատկապես ՆՈՖԳՏՄ-ների համար), • Իշխանությունները պետք է ընդունեն ուղեցույցներ սառեցման պարտավորությունների և ԱՖ հետ կապված տիպաբանությունների վերաբերյալ:
3.8 Ներքին հսկողության մեխանիզմներ, համապատասխանություն, աուդիտ և օտարերկրյա մասնաճյուղեր (Հ.15 և 22)	• Ֆինանսական հաստատություններից պահանջել՝ ապահովելու ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին ընթացակարգերի, կանոնակարգերի և հսկողական մեխանիզմների սահմանումը և պահպանումը՝ հաշվի առնելով ՓԼ և ԱՖ ռիսկը, ինչպես նաև նրանց գործարար գործունեության չափերը, • Փոփոխել իրավական ակտերը՝ սահմանելու ուղղակի և կոնկրետ դրույթ, որով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության ստորաբաժանմանը/աշխատակցին հնարավորություն կընձեռվի ժամանակին ստանալու ՀՊՈՒ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, գործարքների մասին տվյալները և վերաբերելի այլ տեղեկություններ, • Ներդնել ֆինանսական հաստատությունների կողմից բոլոր աշխատակիցների նախնական ստուգման ֆորմալ ընթացակարգեր, հատկապես այն աշխատակիցների, որոնց գործունեության ոլորտն առնչվում է ՓԼ/ԱՖ կանխարգելմանը: Ֆորմալ այդ ընթացակարգերը պետք է ուղղված լինեն աշխատակիցների աշխատանքի ընդունելիս բարձր չափանիշների ապահովմանը, • Ապահովել ֆինանսական հաստատություններում ներքին աուդիտի անկախ և համարժեք ռեսուրսներով ապահովված գործառույթի պահպանումը, հատկապես երբ աուդիտի գործառույթը վերապահված/հանձնարարված է ներքին աուդիտորից բացի այլ աշխատակիցների, • Աշխատակիցների լրացուցիչ ուսուցում իրականացնել ՓԼ/ԱՖ կանխարգելման բոլոր թեմաներով, մասնավորապես՝ Հ.11-ի պահանջների առնչությամբ, • Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի պահանջների արդյունավետ կատարումը ֆինանսական հաստատությունների կողմից:
3.9 Կեղծ բանկեր (Հ.18)	• Հստակեցնել «կեղծ բանկի» սահմանումն այնպես, որ համապատասխանի ՖԱԹՖ-ի ստանդարտին:
3.10 Վերահսկողության և հսկողության համակարգը. իրավասու մարմիններ և ԻԿԿ-	• Կատարելագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերահսկողությունը՝ վերահսկողության ընդհանուր շրջափուլի մեջ ներառելով ռիսկայնության վրա հիմնված բաղկացուցիչներ, ինչպես նաև,

ներ: Դերը, գործառույթները, պարտականությունները և իրավասությունները (ներառյալ՝ պատժամիջոցները) Հ.23, 29, 17 և 25)	մասնավորապես, թարմացնել վերահսկողական ստուգումների ընթացակարգերը՝ դրանցում արտացոլելու ռիսկայնության վրա հիմնված վերահսկողության մոտեցումը և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջները, • Ապահովել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պահանջների համարժեք բավարարումը ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների կողմից, • Իրականացնել բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնողների և արժեթղթերի/ներդրումային ընկերությունների կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների բավարարման հաճախակի և անընդհատ ստուգումներ, • Թարմացնել բոլոր ոլորտների ՓԼ/ԱՖ կանխարգելման վերստուգման ընթացակարգերը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջներին համահունչ, • Լրացուցիչ ուղեցույցներ/ուղղորդում տրամադրել ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ հետևյալ ոլորտներում. • Հաճախորդների տվյալների կամ տեղեկատվության թարմացման պատշաճ ժամկետների սահմանում, և • Սովորական հաճախորդների հետ գործարար հարաբերությունների ընթացքում անընդհատ պատշաճ ուսումնասիրության իրականացում և ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերությունների հավելյալ անընդհատ դիտազննում:
3.11 Փողի կամ արժեքների փոխանցման ծառայություններ (ՀՀ.VI)	• Հետամուտ լինել դրամական փոխանցումներ իրականացնող այն անձի գործունեությանը, որն ըստ երևույթին ոչ ֆորմալ կարգով գործում է ֆինանսական համակարգում՝ առանց ՀՀ ԿԲ-ի գրանցման և հաստատման:
4. Կանխարգելիչ միջոցներ. նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ	
4.1 Հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը և տեղեկատվության պահպանումը (Հ.12)	• Վերացնել այն նվազագույն շեմը, որով բաժնետոմսերի առուվաճառքի պարագայում սահմանափակվում է ՀՊՈՒ-ն նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ, • Ներդնել ուղեցույցներ խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար՝ ապահովելու ՀՊՈՒ պահանջների կիրառությունն այն գործարքների նկատմամբ, որոնց համախառն արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն, • ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ստանալու տեղեկություններ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին՝ անկախ գործարքը բարձր ռիսկային համարելու կամ չհամարելու հանգամանքից, • ՆՈՖԳՏՄ-ների համար ներդնել ուղեցույցներ՝ ապահովելու հաճախորդի պատշաճ ուսումնասիրության անցկացման հետևողական համակարգի առկայությունը՝ հաշվի առնելով ՆՈՖԳՏՄ-ների գործունեության բնույթով, շրջանակով և էությամբ պայմանավորված վտանգները և խոցելիությունը, ինչպես նաև սահմանել հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների թարմացման հաճախականությունը, • Սահմանել բարձր ռիսկային հաճախորդների, գործարար

	հարաբերությունների կամ գործարքների հավելյալ ուսումնասիրության անցկացման, ինչպես նաև ցածր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ հաճախորդների նկատմամբ պարզեցված/նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառության պահանջներ և ուղենիշներ, • Ուղղակիորեն արգելել նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառությունը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության կամ բարձր ռիսկային սցենարների դեպքում, • Ներդնել ուղեցույցներ, որոնք ՆՈՖԳՏՄ-ներին կօգնել պարզել, թե գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ հաճախորդի ինքնությունը պարզելիս ինչն է համարվում «ողջամիտ ժամկետ», • Սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների պայմանների վերաբերյալ, որոնց առկայության դեպքում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, • Սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ, • Օրենքով, կանոններով կամ պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներով նախատեսել գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ և հարաբերության ողջ ընթացքում ՀՊՈՒ պահանջների կիրառությունը ՔԱՈՒԱ-ների նկատմամբ, • Սահմանել պահանջներ՝ ապահովելու բարդ կամ անսովոր մեծ գործարքների, ինչպես նաև ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալների և նպատակի ուսումնասիրությունների բացահայտումների գրավոր մանրակրկիտ ձևակերպումը և տվյալ ոլորտի մասնակիցների իրազեկության բարձրացման արդյունավետ և պատշաճ միջոցառումների իրականացումը՝ ՓԼ և ԱՖ միտումների փոփոխությունների վերաբերյալ տիպաբանությունների հրապարակմամբ կամ այլ կերպ, • Սահմանել կոնկրետ պայմաններ, որոնց պահպանմամբ ՆՈՖԳՏՄ-ներն իրավասու են ՀՊՈՒ միջոցառումները կատարել երրորդ անձանց կամ միջնորդների միջոցով, • Իրականացնել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածը (ներքին իրավական ակտեր) և 23-րդ հոդվածի 2-րդ մասը (ՓԼ և ԱՖ դեմ պայքարի համակարգերի և հսկողության մեխանիզմների համապատասխանության արտաքին աուդիտ) 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չտարածելու հետ կապված ռիսկերի և հետևանքների վերլուծություն, • Կատարելագործել տեղեկատվության պահպանման ոլորտում ՆՈՖԳՏՄ-ներին ներկայացվող պահանջները և նրանց պրակտիկան՝ արդյունավետությունը և հիմնավորվածությունն ապահովելու, ինչպես նաև կիրառության մեջ քննության շահերին չվնասելու նպատակով, քանի որ, հաշվի առնելով գործարար հարաբերությունների և գործարքների հետ կապված տեղեկատվության կարևորությունը, իշխանություններին անհրաժեշտ է տեղեկատվության պահպանման ստանդարտների և որակի հարցերին անդրադառնալ ռիսկերը նվազեցնելու տեսակետից՝ միաժամանակ փորձելով իրավապահ մարմիններին և վերահսկող մարմիններին բավարար չափով տրամադրել ՓԼ/ԱՖ գործերի քննության մեջ օգտագործվելիք արժանահավատ տվյալներ:
4.2 Կասկածելի գործարքների մասին հաշվետվությունները (Հ.16)	• Հստակեցնել գաղտնիության և պաշտպանության մասին նորմերի անհամապատասխանությունները նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և աուդիտորների, ինչպես նաև

	հաշվապահական և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով՝ բացառելու սույն հաշվետվության այլ մասերում նշված կամայականության հնարավորությունը, մասնավորապես՝ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու պարտավորության մասով, ինչպես նաև՝ սահմանել համակարգված ստուգումների միջոցառումներ, որոնց միջոցով կփարատվեն համապատասխան օրենքների անորոշությունից բխող մտահոգությունները, • Ներդնել աշխատակիցների նախնական ստուգման, այդ թվում՝ «պատշաճության և համապատասխանության» պահանջներ, • Հաստատել թանկարժեք քարերի կամ մետաղների դիլերների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը և կասկածելի գործարքների համապատասխան տիպաբանությունները ՆՈՖԳՏՄ-ների համար, • Վերահսկողության, ուսուցման և այլ միջոցներով իրականացնել իրազեկության բարձրացման ծրագրեր՝ ապահովելու ԿԳՀ-ներ և ՆԾԳՀ-ներ տրամադրելու պարտավորությունների հստակ տարբերակումը, մասնավորապես՝ հասկանալի դարձնելով ԿԳՀ տրամադրելու պարտավորության կիրառելիությունն անկախ նվազագույն շեմից, գործարք կատարելու փորձի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ նույնպես ԿԳՀ տրամադրելու պարտավորությունը, • Նպաստել ՆՈՖԳՏՄ-ների, այդ թվում՝ համապատասխանության պատասխանատուների ուսուցմանը՝ կազմակերպելով ուղղակի կամ հավաստագրված դասընթացներ համապատասխան ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ ԻԿԿ-ների միջոցով, ինչպես նաև ապահովել ընթացիկ վերապատրաստման պահանջների արտացոլումն օրենքում, կանոններում կամ կանոնակարգերում, • Ներդնել ռիսկերի կառավարման հսկողական մեխանիզմներ՝ ապահովելու համապատասխանության գործառույթի կատարման բավարար չափով ապահովվածությունն աշխատակիցներով, և հաղթահարելու համապատասխանության պատասխանատուի մոտ համապատասխանության գործառույթի և ընթացիկ աշխատանքային այլ գործառույթների միջև ծագող հակասությունները, • Բարձրացնել ՆՈՖԳՏՄ-ների իրազեկությունն օֆշորային տարածքների հրապարակված գործող ցանկի վերաբերյալ, ինչպես նաև ներդնել միջոցառումներ, որոնցով ՆՈՖԳՏՄ-ները կտեղեկացվեն այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի թերությունների շուրջ առկա մտահոգությունների մասին, • Սահմանել պահանջներ ՆՈՖԳՏՄ-ների համար՝ ապահովելու նրանց ներքին իրավական ակտերի վերաբերելիությունը համապատասխանության համակարգերին և հսկողական մեխանիզմներին՝ պարզապես «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դրույթներն արտատպելու փոխարեն, • ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, գրավոր փաստաթղթավորելու բացահայտումները և արդյունքները գրավոր տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին:
4.3 Կարգավորում, վերահսկողություն, մոնիտորինգ և պատժամիջոցներ (Հ.17, 24, և 25)	• Արդյունավետ մոնիտորինգ և ռիսկերի նկատմամբ զգայունության վրա հիմնված համապատասխանություն ապահովելու նպատակով անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների մասով իրավասու մարմիններին կամ ԻԿԿ-ներին

	լիազորել՝ իրականացնելու մոնիտորինգ և ստուգելու նրանց համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին, • Ներդնել փաստաբանների գործունեության նկատմամբ վերահսկողության ռեժիմ, • Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար ներդնել ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» ստուգումներ: Ավելին, օրենքով, կանոններով կամ կանոնակարգերով սահմանել պահանջներ, որոնցով կկանխվի խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի օպերատոր լինելը, • Վերահսկողություն իրականացնող մարմիններում ապահովել ՓԼ և ԱՖ հարցերով զբաղվող բավարար կադրերի և տեխնիկական կարողությունների առկայությունը, • ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունել ուղեցույցներ, որոնք կօգնեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների լիարժեք ներդրման և կատարման հարցում, • Մշակել հետադարձ արձագանքի պատշաճ գործընթացներ՝ հաշվի առնելով բացահայտումների թվաքանակը և արդյունքները, նորագույն հնարքները, մեթոդները և միտումները, ինչպես նաև ՆՈՖԳՏՄ-ների պարագայում հնարավոր փողերի լվացման գործերի առանձնահատկությունները:
4.4 Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակներ և մասնագիտություններ (Հ.20)	• Իրականացնել ռիսկերի գնահատում՝ պարզելու, թե արդյոք ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների պարագայում առկա է ՓԼ կամ ԱՖ նպատակով դրանց չարաշահման ռիսկ, • Միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու կանխիկի գործածությունը տնտեսության մեջ և խրախուսելու ավելի մեծ ծավալով գործառնությունների իրականացումը տնտեսության ֆորմալ հատվածում:
5. Իրավաբանական անձինք և կազմավորումներ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ	
5.1 Իրավաբանական անձինք. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիությունը (Հ.33)	• Ապահովել «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.1 հոդվածի արդյունավետ իրագործումը, • Փոփոխություններ կատարել քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածում՝ վերացնելով «ըստ ներկայացնողի» բաժնետոմսերի վերաբերյալ նշումը, • Իշխանությունները պետք է դիտարկեն Պետական ռեգիստրի բոլոր տարածքային ստորաբաժանումները կապակցող, «ուղիղ ժամանակի» ռեժիմով աշխատող էլեկտրոնային շտեմարանի ստեղծման նպատակահարմարությունը, որը հանրությունը, ինչպես նաև ֆինանսական հաստատություններին և իրավապահ մարմիններին հնարավորություն կընձեռի արագորեն ստանալ ռեգիստրում պահպանվող բոլոր տեղեկությունները:
5.2 Իրավաբանական կազմավորումներ. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիությունը (Հ.34)	*Չկան*
5.3 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ (ՀՀ.VIII)	• Ապահովել պարբերական գնահատումների անցկացումը՝ ուսումնասիրելով ահաբեկչական գործունեության նկատմամբ ոլորտի հնարավոր խոցելի կետերի մասին ի հայտ եկող նոր տեղեկությունները, • Ներդնել ԱՖ նպատակով ՇՆՉԿ-ների չարաշահման ռիսկերի և

	դրանցից պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ ՇՆՉԿ-ների իրազեկության բարձրացման ծրագրեր, • Պատշաճ ռեսուրսներ և տեխնիկական կարողություններ ուղղորդել դեպի ՇՆՉ հատված՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ԱՖ ռիսկերին:
6. Ներպետական և միջազգային համագործակցություն	
6.1 Ներպետական համագործակցություն և համակարգում (Հ.31)	• ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարության հստակեցման նպատակով իրականացնել ՓԼ/ԱՖ ռիսկերի ընթացիկ վերլուծություն, • Կարգավորվող հաստատությունների հետ խորհրդակցությունների և իրազեկության բարձրացման լրացուցիչ կամ այլընտրանքային մեխանիզմներ՝ կամ ներկայումս գոյություն ունեցող, կամ այլ միջոցներով, • Կայացված որոշումների արդյունավետության և դրանցից բխող քաղաքականության լիարժեք իրագործման վերահսկում:
6.2 Կոնվենցիաները և ՄԱԿ-ի հատուկ բանաձևերը (Հ.35 և ՀՀ.I)	• Նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, • Բռնագրավման իրավասությունը սահմանել Պալերմոյի կոնվենցիայով սահմանված բոլոր հանցագործությունների համար, • Նախատեսել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքի, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների առգրավման հնարավորությունը՝ ինչպես սահմանված է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով, • Իրավապահ մարմիններին կամ դատարաններին վերապահել ընդհանուր իրավասություն՝ պարտադրել ներկայացնելու ֆինանսական փաստաթղթեր, այդ թվում՝ այն գործերով, որոնց համար տեղեկատվություն է պահանջվում վկայից կամ այլ՝ տուժող, հայցվոր, կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանցից, • ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմինները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի, • Արժույթի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգի գործողությունը տարածել նաև փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա տեղափոխման նկատմամբ, • ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով լրացուցիչ կոնկրետ ուսուցում կազմակերպել ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության աշխատակիցների համար, • ԱՖ հանցակազմը սահմանել Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված սահմանմանը համահունչ, • Ներդնել համարժեք մեխանիզմներ, որոնց միջոցով կապահովվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի պահանջների բավարարումը:
6.3 Փոխադարձ իրավական օգնություն (Հ.36, 37, 38 և ՀՀ.V)	• Կանխարգելիչ և բռնագրավման միջոցների կապակցությամբ Հայաստանի օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները

	պետք է վերացվեն, քանի որ դրանք կարող են սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ Հայաստանի կարողությունը: Օրինակ, իշխանությունները պետք է հնարավորություն ունենան բռնագրավել ցանկացած նախորդող հանցագործության կատարման արդյունքում ձեռք բերված գույքը, կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև՝ առգրավել ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ձեռք բերված գույքին կամ կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք այլ գույք, • ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, ինչպես նաև՝ ապահովելու նման տվյալներ ստանալու վերաբերյալ փոխադարձ իրավական օգնության հարցումների լիարժեք կատարման հնարավորությունը, • Հստակեցնել, թե արդյոք փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու համար պահանջվում է «կրկնակի քրեականացում»՝ պարզելու համար, թե արդյոք ՓԼ և ԱՖ հանցագործությունների կապակցությամբ թիվ 1 և 2 հանձնարարականների, ինչպես նաև II հատուկ հանձնարարականի վերլուծությունների մեջ նշված թերությունները կարող են սահմանափակել որոշակի իրավիճակներում օգնություն տրամադրելու՝ Հայաստանի կարողությունը, ներառյալ, մասնավորապես, իրավաբանական անձանց դեմ իրականացվող վարույթներում փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու կարողությունը:
6.4 Անձի հանձնում (Հ.39, 37 և ՀՀ.V)	• Վերացնել ԱՖ հանցագործությունների սահմանումների թերությունները, որպեսզի «կրկնակի քրեականացման» պահանջը չսահմանափակի ԱՖ գործերով անձանց հանձնելու՝ Հայաստանի կարողությունը:
6.5 Համագործակցության այլ ձևեր (Հ.40 և ՀՀ.V)	• Հստակեցնել մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը, որոնք կարող են սահմանափակել տեղեկություններ ստանալու կամ տեղեկությունների տրամադրում պարտադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը, • ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի իրավապահ մարմինները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:
7. Այլ խնդիրներ	
7.1 Ռեսուրսներ և վիճակագրություն (Հ.30 և 32)	• Գտնել և ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ, որոնց միջոցով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակում կապահովվի թե տեղերում անցկացվող ստուգումների, թե փաստաթղթային վերահսկողության համարժեք մակարդակ, • Դիտարկել ՖԴԿ-ին լրացուցիչ ռեսուրսներ տրամադրելու նպատակահարմարությունը, • ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում իրականացնել ԱԱԾ-ի քննչական վարչության պաշտոնատար

	անձանց, ինչպես նաև մաքսային մարմնի հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցների համար, • Վարել ճշգրիտ վիճակագրություն:
7.2 ՓԼ/ԱՖ դեմ պայքարի այլ կարևոր միջոցառումներ կամ խնդիրներ	
7.3 Ընդհանուր համակարգ. կառուցվածքային խնդիրներ	